ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

# ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

Աշխատասիրությամբ
Կ. Ա. ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1961

*XIII դարի հայ նշանավոր պատմագիր Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմությունը» Հայաստանի, Մերձավոր Արևելքի և մոնղոլների միջին դարերի պատմության ամենահիմնական սկզբնաղբյուրներից մեկն է։ Կիրակոսի «Պատմության» ներկա գիտական-քննական բնագիրը պատրաստված է Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ—«Մատենադարանում» պահպանվող շուրջ 30 ձեռագրերի և տպագիրների բաղդատության հիման վրա։*

*Աշխատությունն ունի ընդարձակ «Առաջաբան», որտեղ ներկայացված են Կիրակոս Գանձակեցու կյանքն ու գործունեությունը և պատմական-բանասիրական մանրամասն վերլուծության է ենթարկված նրա «Պատմությունը»։*

*Գիրքը նախատեսված է պատմությամբ զբաղվող գիտնականների, հայագետների և մոնղոլագետների համար։*

НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИЙ ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР —
«МАТЕНАДАРАН»

# КИРАКОС ГАНДЗАКЕЦИ

## ИСТОРИЯ АРМЕНИИ

Текст подготовил и снабдил предисловием

К. А. МЕЛИК-ОГАНДЖАНЯН

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1961

# ՑԱՆԿ ԳԼԽՈՑ


էջ

1 Առաջաբան . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . Ե
*ա. Կիրակոս Գանձակեցու կյանքը և գրական-հասարակական գործունեությունը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . Ե*
*բ. Կիրակոս Գանձակեցու գրական ժառանգությունը և Հայոց պատմության հորինվածքի ու ամբողջականության հարցը . . . . . . . . ԻԸ*
*գ. Կիրակոս Գանձակեցու Պատմության աղբյուրները . . . . . . . . . Խ*
*դ. Կիրակոս Գանձակեցու Պատմությունը որպես ԺԳ դարի մյուս պատմագիրների երկերի սկզբնաղբյուր . . . . . . . . . . . . . . . ԾԹ*
*ե. Կիրակոս Գանձակեցու Պատմության գրական-գեղարվեստական արժեքը . ԿԶ*
*զ. Կիրակոս Գանձակեցու Պատմության պատմագիտական արժեքը . . . ՀԶ*
2. Կիրակոս Գանձակեցու Պատմության տպագիրներն ու ձեռագրերը . . . . . ՂԲ
*ա. Տպագիրներ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . ՂԲ*
*բ. Ձեռագրեր . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . ՂԴ*
3. Կիրակոս Գանձակեցու ձեռագրերի ու գործածած տառանշանների համառոտ ցանկ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . ՃԻԱ
4. Մատենագիտություն . . . . . . . . . . . . . . . . . . . . . ՃԻԲ
5. Համառոտ պատմութիւն ժամանակաց ի սրբոյն Գրիգորէ մինչև ցյետին աւուրս բևացեալ. արարեալ Կիրակոսի վարդապետի ի մեծահռչակ ուխտն Գետկայ 3
*Ա. Համառօտ պատմութիւն և ցոյցք անուանց սրբոյն Գրիգորի և որք յետ նորա յաջորդեցին զաթոռ նորա . . . . . . . . . . . . . . . . . 10*
*Բ. Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ . . . . . . . 121*
*Գ. Վասն թագաւորութեանն Լևոնի, որ ի կողմանս Արևմտից . . . . . . . 154*
*Դ. Վասն իշխանացն, որ յԱրևելս Հայաստանեայց Զաքարէին և Իւանէի եղբօր նորին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 162*
*Ե. Վասն ժողովոյն, զոր արար Զաքարիա վասն խնդրոյ ինչ իրաց . . . . . . . 166*
*Զ. Վասն կաթողիկոսին Աղուանից գալոյ առ մեծ իշխանն՝ նեղեալ յայլազգեացն 178*
*Է. Վասն վարդապետացն երևելեաց որք էին ի կողմանս Վասպուրականի . . . . 183*
*Ը. Վասն մահուան Զաքարէի զօրավարի . . . . . . . . . . . . . . . . 185*
*Թ. Վասն Լևոնի արքային և վախճանի նորա . . . . . . . . . . . . . . 187*
*Ժ. Համառօտ հիւսուածք պատմութեանց կողմանցն Աղուանից, ընդ նմին ըստ ժամանակագրութեան . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 192*
*ԺԱ. Վասն ելանելոյ թաթար զօրուն և փախստական առնելոյ զթագաւորն Վրաց . 201*
*ԺԲ. Վասն որ ի սահմանս Գանձակայ անկումն եղև զօրացն . . . . . . . . . 204*
*ԺԳ. Վասն վարդապետին Մխիթարայ, թէ ուստի էր և կամ որպիսի ոք . . . . . . 207*
*ԺԴ. Վասն շինութեան վանիցն Նորն Գետկայ . . . . . . . . . . . . . . 211*
*ԺԵ Թէ ո՛յք էին, որք երևելիք յաշակերտսն նորա . . . . . . . . . . . . 217*
*ԺԶ. Վասն վախճանի մեծ վարդապետին Մխիթարայ՝ որ Գոշն կոչի . . . . . . . 219*
*ԺԷ. Վասն որք յետ նորա կալան զառաջնորդութիւն վանիցն . . . . . . . . 221*
*ԺԸ Վասն սուլտանին Ջալալադնին և կոտորելոյն զզօրսն վրաց ի վեց հարիւր եօթանասուն և չորս թուին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 224*
*ԺԹ. Վասն կորստեան սուլտանին Ջալալադնի և բառնալոյ նորա յերկրէ . . . . . 228*

Ի. Թէ ո՛րպէս ել Թաթարն ապականել զաշխարհս ամենայն · · · · · 231
ԻԱ. Վասն աւերման քաղաքին Գանձակայ · · · · · 235
ԻԲ. Վասն աւերածոյ աշխարհիս Հայոց և Վրաց ի նոյն զօրացն · · · · · 237
ԻԳ. Վասն առման քաղաքին Շամքորոյ · · · · · 241
ԻԴ. Վասն գերութեան վարդապետին Վանականայ և որոց ընդ նմա · · · · · 243
ԻԵ. Վասն աւերման քաղաքին Լոռոյ · · · · · 255
ԻԶ. Վասն անկանելոյ ի ձեռս նոցա իշխանին Աւագին · · · · · 254
ԻԷ. Վասն քաղաքին Անւոյ, թէ որպէս մատնեաց տէր ի ձեռս նոցա · · · · · 258
ԻԸ. Վասն աւերածին Կարուց · · · · · 260
ԻԹ. Վասն յուղարկելոյ զիշխանն Աւագ առ խաղանն յԱրևելս · · · · · 262
Լ. Վասն կոտորածին որ ի կողմանս Խաչենոյ, և վասն բարեպաշտի իշխանին Ջալալին · · · · · 267
ԼԱ. Վասն եկեղեցւոյն զոր շինեաց · · · · · 269
ԼԲ. Վասն ցուցման կերպարանաց թաթարին բացայայտութիւն սակաւուք · · · · · 271
ԼԳ. Վասն Ռաբանին Ասորւոյ · · · · · 276
ԼԴ. Վասն աւերման Թէոդուպօլեայ · · · · · 278
ԼԵ. Վասն պատերազմին որ եղև ընդ սուլտանն և ընդ թաթարն · · · · · 281
ԼԶ. Վասն թագաւորին Հայոց Հեթմոյ և զոր ինչ գործեցաւ · · · · · 284
ԼԷ. Վասն Կոստանդեայ իշխանին Լամբրոնին, և զոր ինչ գործեաց նա ընդ աշխարհն կիլիկեցւոց · · · · · 286
ԼԸ. Վասն թագաւորութեանն Դաւթի · · · · · 288
ԼԹ. Վասն կոչելոյն ի մեծ դուռն զկաթողիկոսն Աղուանից զտէր Ներսէս · · · · · 290
Խ. Վասն ասպատակելոյ նոցա ընդ կողմանս Վասպուրականի ի վերայ բազում գաւառաց · · · · · 292
ԽԱ. Վասն կանոնական հրամանաց կաթողիկոսին Հայոց Կոստանդնի · · · · · 293
ԽԲ. Թուղթ տեառն Կոստանդեայ շրջաբերական · · · · · 295
ԽԳ. Սահմանք կանոնականք տեառն Կոստանդեայ Հայոց կաթողիկոսի · · · · · 301
ԽԴ. Վասն հարկահանացն, որք եկին ի ղանէն · · · · · 312
ԽԵ. Վասն թագաւորաց Վրաց երթալոյ առ ղանն · · · · · 314
ԽԶ. Վասն երթալոյ առ ղանն Սմբատայ զօրավարին Հայոց և որդւոյ Պիաթաղին սուլտանին · · · · · 317
ԽԷ. Վասն կոտորածին զոր արար զօրն թաթար յաշխարհին Վրաց · · · · · 318
ԽԸ. Վասն Դաւթի Մոլորեցուցչի · · · · · 321
ԽԹ. Վասն զիւին՝ որ ի կերպարանս կնոջ լեալ, խառնակէր ընդ այր մի · · · · · 328
Ծ. Վասն խնդրոյն, որ եղև ի մէջ քրիստոնէից վասն սուրբ հոգւոյն աստուծոյ, թէ ի հօրէ միայն պարտ է ասել, թէ ի հօրէ և յորդւոյ · · · · · 329
ԾԱ. Խոստովանութիւն ճշմարիտ հաւատոյ ուղղափառաց · · · · · 333
ԾԲ. Խրատ դաւանութեան Վանական վարդապետին · · · · · 338
ԾԳ. Վասն վախճանի սուրբ վարդապետին Վանականայ · · · · · 344
ԾԴ. Վասն Յովհաննիսի Գառնեցւոյ · · · · · 348
ԾԵ. Վասն Սարթախին որդւոյ Բաթուին · · · · · 356
ԾԶ. Վասն մարախին որ եկեր զաշխարհս · · · · · 359
ԾԷ. Վասն աշխարհագրին որ եղև հրամանաւ Մանգու ղանին · · · · · 361
ԾԸ. Վասն երթալոյն բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթմոյ առ Բաթոյն և Մանգու ղանն · · · · · 364
ԾԹ. Վասն կոտորածին յերկրին Հոռոմոց · · · · · 372
Կ. Վասն աւերածոյն Բաղդատայ · · · · · 377
ԿԱ. Վասն աւերածին Մարտիրոսաց քաղաքին · · · · · 584
ԿԲ. Վասն որ ինչ գործեցաւ ի կողմանս Միջագետաց և Խորին Ասորւոց · · · · · 387
ԿԳ. Վասն մահուան բարեպաշտ իշխանին Ջալալին · · · · · 389
ԿԴ. Վասն մահուան իշխանին Շահնշահի և որդւոյ նորա Զաքարէի · · · · · 393
ԿԵ. Վասն մեծ պատերազմին որ եղև ընդ միմեանս Հուլաւուին և Բերքային · · · · · 394

6. Ժամանակագրական տախտակներ · · · · · 401
7. Ցանկ անուանց · · · · · 407

# ԱՌԱՋԱԲԱՆ

## Ա

## ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՐԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

*Մեր հին ու միջնադարյան հեղինակներից, մասնավորապես պատմագիրներից, շատ քչերն են, որ ինքնակենսագրական տեղեկություններ են հաղորդում իրենց երկերում։ Այս սակավաթիվ հեղինակների շարքին է պատկանում նաև Կիրակոս Գանձակեցին։*

*Ինքնակենսագրական այդ վկայությունները հեղինակի կողմից նախօրոք ծրագրված և սիստեմի վերածված տեղեկություններ չեն, որոնք գալիս են ներկայացնելու նրա կյանքի զանազան փուլերն ու դրվագները, այլ ի միջի այլոց ասված, ընդհանուր շարադրանքի մեջ անցողակի «լեզվից փախցրած» խոստովանություններ, որոնցով նա, կարծես, ընթերցողի հետ խաղաղ զրուցելով՝ ցանկանում է իր կյանքի օրինակով այս կամ այն իրադարձության տարեթիվը ճշտել, կամ ցույց տալ իր մասնակցությունը, կամ կատարած դերը տվյալ ժամանակամիջոցում։*

*Ի մի հավաքելով այդ թռուցիկ խոստովանությունները, ակնարկությունները, ինչպես և ժամանակակիցների վկայությունները նրա մասին, կարելի է ընդհանուր գծերով հյուսել մեր պատմագրի կյանքի վազքը՝ մանկությունից սկսած մինչև խոր ծերություն։ Կիրակոսի մեր հյուսած կենսագրականը, խոստովանում ենք, դեռևս շատ թերի է և կարոտ է նորանոր փաստերի, վկայությունների և ճշտումների, մի բան, որ հնարավոր կլինի ստուգել, ճշգրտել և լրացնել միայն հետագայում, երբ լույս աշխարհ հանվեն և հանրության սեփականություն դառնան աշխարհիս բոլոր խոշոր կենտրոններում, զանազան մատենադարաններում կուտակված մեր հարուստ հողևոր ժառանգության գրական-կուլտուրական հուշարձանները։*

*Մեր պատմագրի «Գանձակեցի» մականունը մատնում է նրա ծննդավայրը։ Նա «Գանձակեցի» է։ Սակայն «Գանձակեցի» ասելով՝ չպետք է անպայման հասկանանք Գանձակ քաղաքը։ Կիրակոսը, ինչպես և Հովհաննես Սարկավագը, Ալավկա որդի Դավիթը և Թոքակերի որդի Գրիգորը ոչ թե բնիկ Գանձակ քաղաքից են, այլ «յաշխարհէն Գանձակայ», այսինքն՝ Գանձակի «աշխարհից»՝ երկրից կամ գավառից։ Եվ իսկապես, խոսելով Մխիթար Գոշի և Արքայություն քահանայի ծննդավայրի մասին, Կիրակոսն ասում է՝ «Հռչակաւոր այրն (իմա՝ Մխիթար Գոշը)... էր* ի քաղաքէն Գանձակայ», *մինչդեռ պատմելով վերը հիշված*

ոչ նվազ հռչակ ունեցող վարդապետների մասին՝ նա շեշտում է, որ «սոքա երեքեանս էին յաշխարհէն Գանձակայ, ուստի և ես»,—ավելացնում է նա։ Մեր կարծիքով, եթե Կիրակոսը Գանձակեցի, իմա՛ բնիկ Գանձակ քաղաքից լիներ, ապա նա «ուստի և ես» նախադասությունը կկցեր այն պարբերությանը, որտեղ խոսում է Մխիթար Գոշի և Սրբայության քահանայի ծննդավայր Գանձակ քաղաքի մասին։

Մեր այս ենթադրությունն ամրապնդվում է և ավելի հաստատուն, անառարկելի դառնում այն պատմական իրադրությամբ, որ մեր «մեծիմաստ» և «հանճարեղ» Հովհաննես Սարկավագը, որին Կիրակոսը համարում է «յաշխարհէն Գանձակայ», ըստ Վարդան Արևելցու վկայության՝ «ի գաւառէն Փառիսոսոյ» է*, կամ ինչպես հաղորդված է նրա կենսագրության մեջ, «սա (իմա՛ Հովհաննես Սարկավագը,— Կ. Մ.-Օ.) ...գաւառաւ ի Փառիսոսոյ»**։

---

* Մեծին Վարդանայ... Պատմութիւն տիեզերական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 159։

** Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 19—20։

Կենսագրության մեջ այս պարբերությունը ճիշտ տպագրելով («Հանդէս բանի վասն երանեալ առն Աստուծոյ Սարկաւագին կենաց և մահուն», անդ, էջ 119), սխալ է բացատրել պրոֆ. Ա. Աբրահամյանը՝ համարելով «գաւառաւ ի Փառիսոսոյ» ոչ թե Հովհաննես Սարկավագի համար ասված, այլ նրա քեռու, քեռին էլ, դարձյալ ըստ Ա. Աբրահամյանի բացատրության՝ նույնացվել է Ուռճացի վարդապետի հետ (անդ, էջ 20—21), սա էլ իր հերթին նրա «ուսուցիչն է հանդիսացել» Հաղբատում և «հաւանական է, այդ միաբանության անդամ է հանդիսացել»,—ավելացնում է Ա. Աբրահամյանը, մեջ բերելով կենսագրականի հետևյալ խոսքը՝ «...սնեալ և դաստիարակեալ (Յովհաննէսն) առ քեռւոյն իւրոյ ի վանսն Հաղբատ» (անդ, էջ 23)։ Կենսագրականի մեջ պարզ ասված է՝ «սա (իմա՛ Հովհաննեսը)՝ ի մանկական տիոց և ի խանձարրոց... սնեալ և դաստիարակեալ առ սրբասնունդ քեռւոյն իւրոյ ի վանսն Հաղբատ՝ գաւառաւ ի Փառիսոսոյ», այսինքն՝ Հովհաննեսը ծնընդյամբ Փառիսոսի գավառից է և դաստիարակվել է իր քեռու մոտ Հաղբատում։ Քեռու անունն անհայտ է։

Սկզբնապես Հովհաննեսը «տուաւ ի վարժս երաժշտական հոգևոր ուսմանց և ապա յերևման մեծին ի նմա ծածկելոյ գանձին, աւանդեցաւ և յանձնարարաւ ի քեռւոյն իւրմէ Ուռճացի վարդապետին» (անդ, էջ 119)։ Ուրեմն, Հովհաննեսի առաջին ուսուցիչներից մեկն է եղել Հաղբատում նրա հարազատ քեռին (անունն անհայտ), հետագայում նա իր քեռու կողմից հանձնարարվում է Ուռճացի վարդապետին։ Այս պարզ, մեկնաբանություն ոչ կարոտ բնագիրը Ա. Աբրահամյանի գրչի տակ մեծապես մթագնվել է։

Ո՞վ է Հովհաննես Սարկավագի ուսուցիչ Ուռճացի վարդապետը։

Ուռճացի վարդապետը, ամենայն հավանականությամբ, Գեորգ վարդապետ Ուռճացին է, որի մասին մեծ գովասանքով են խոսում Վարդան Արևելցին և մանավանդ Մատթեոս Ուռհայեցին։ «Ի հինգ հարիւր քառասուն թուին (1091 թ.) մեռաւ... սուրբ և մեծ գիտնական Գէորգ վարդապետն Հայոց, և թաղեցաւ ի Կամրջաձոր առ Սամուէլ վարդապետի»,—ասում է Վարդան Արևելցին (էջ 142—143)։ «Դարձեալ յայսմ ամի (ՇԽԲ=1093 թ.) մեռանէր վարդապետն Հայոց Գէորգ, որ կոչեցաւ Ուռճեցի, որ էր լուսաւորիչ տանս Հայոց և աղբիւր մշտնջենաւորուղխ վտակաց և լեզու հրեղէն հոգւոյն Ներկեալ. սա ուսմամբ և աստուածային շնորհօքն էր հաւասարեալ գիտութեամբն իւրով առաջին աստուածախօս սուրբ վարդապետացն յունաց... սա սքանչելի վարուք կատարեաց զընթացս իւր. և էր ամաց հարիւրից, և թաղեցաւ ի մեծ անապատն Կարմնջաձոր, մօտ ի գերեզմանն Սամուէլի վարդապետին և Խաչկայ, որ էր երաժիշտ ի վերայ ձայնաւոր եղանակաց. և եղև սուգ ի վերայ ամենայն երկիւղածացն Աստուծոյ, զի զրկեալ եղեն յայնպիսի լուսաւոր վարդապետէն» (էջ 244—245)։

Ո՞րտեղ է գտնվում Ուռճը. ինձ հայտնի չէ։ Գուցե դա Ո՞ւրծն է, որն ըստ Մ. Չամչյանի «գաւառ փոքր յերկրին Բաղաց»։ Այդ դեպքում ենթակա է սրբագրության՝ «Ուրծացի»։ Գեորգ վարդապետ Ուռճացին թաղված է 10-րդ դարի առաջին կեսին Արշարու-

*Բայց Հովհաննես Սարկավագը համարվել է նաև Հաղբատացի, որովհետև նա այնտեղ «սնաւ և վարժեցաւ»*, կամ Անեցի, զի, ըստ կենսագրի՝ նա ամենուրեք շահմարանած դիտությունը* «բերէր ի քաղաք իւր և տեղի սննդեան՝ ի քաղաքամայրս Անի»**։ *«Ընդգծված բառերից,—ասում է Մ. Աբեղյանը,—կարելի է հետևցնել, որ Սարկավագ վարդապետն Անեցի է եղել։ Բայց նրա ծնողները կարող էին Փառիսոս գավառից լինել և Հովհաննեսի մատաղ մանկության ժամանակ Անի տեղափոխված, և Հովհաննեսն այստեղ մեծացած ու սնված, ուստի և Անին նրա համար կարող էր համարվել «քաղաք իւր և տեղի սննդեան»***։ Նա նույնպես հավանական է համարում, «որ գանձակեցիները (ո՞ր գանձակեցիները,— Կ. Մ.-Օ.) նշանավոր վարդապետներին տեղական փառասիրությամբ կապած լինին իրենց կողմերի հետ»****։ Մ. Աբեղյանի այս «հավանական» կարծիքը մենք անհավանական ենք համարում, որովհետև չի կարելի մի շարք աղբյուրների վկայությունները միմիայն գանձակեցիների փառասիրությամբ բացատրել։ Մի այլ տեղ հենց ինքը՝ Մ. Աբեղյանը, կարծես, ենթարկվում է գանձակեցիների այդ «տեղական փառասիրության»— սնափառ զգացմունքներին, երբ՝ խոսելով Վարդանի «Արևելցի» մականվան մասին, գրում է՝ «նրա (իմա՝ Վարդանի) Արևելցի կոչումից երևում է, որ նա* Արևելյան Հայաստանից է եղել, հավանորեն Գանձակ քաղաքից կամ նրա շրջականերից»*****։ *Մ. Աբեղյանի վերջին ենթադրությունը շատ հավանական է։ Հակառակ դեպքում ինքնաբերաբար հարց է առաջանում, թե ինչու այդ «փառասեր» գանձակեցիները գանձակեցի չեն անվանում Թոքակերի որդի Գրիգորից կամ Ալավկա որդի Դավթից ոչ պակաս նշանավոր վարդապետ Վանականին, որն իր հիմնադրած Խորանաշատ վանքով, վանական դպրոցով և աշակերտներով մեծ հռչակ է վայելած եղել այն դարաշրջանում։ Ըստ Մ. Աբեղյանի պետք է Վանականն էլ՝ արևելցիների-գանձակեցիների կողմից այնքան մեծարված՝ «համբաւատենչ և արդիւնական, փառաւորեալ» (Վարդան), «աստուածահաճոյ», «բազում որդիս ի փառս ածեալ», «մեծիմաստ և առատամիտ» (Կիրակոս), «իբրև զարեգակն» (Գրիգոր Ականցի) փայլող Վանական վարդապետը նույնպես Գանձակեցի հորջորջվեր։ Նման հորջորջումներ այդ վարդապետի մասին, հարկավ, մենք չենք գտնում մեր մատենագրության մեջ։*

*Հայ հին մատենագրության մեջ Հովհաննես Սարկավագ վարդապետը միակ հեղինակը չէ, որ մի քանի հորջորջումներ ունի՝ Փառիսոսցի, Գանձակեցի, Հաղ-*

---

*նիքում (Երասխաձոր) հիմնարկված կամրջաձոր վանքում, այսինքն՝ դարձյալ Մեծ կամ Արևելյան Հայքում։ Գեորգ վարդապետ Ոսնացին մեծահռչակ գիտնական և ուսուցիչ է եղել։ Ապրելով համարյա մի դար, մինչև 1091—1093 թթ.՝ նա մանկավարժական-վարդապետական եռանդուն գործունեություն է ծավալել Արևելյան Հայաստանում, ուստի զարմանալու բան չկա, եթե նրան աշակերտած լինի մեծիմաստ Հովհաննես Սարկավագը, որը վարդապետից 40—45 տարով փոքր եղած պիտի լինի։*

* Ա. Աբրահամյան, *Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 21, 124։ Տե՛ս նաև Գ. Հովսեփյան, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 307։*

** *Նույն տեղում, էջ 20, 120։*

*** Մ. Աբեղյան, *Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Երևան, 1946, էջ 533։ «Ի քաղաք իւր և տեղի սննդեան» պետք է հասկանալ ոչ թե ծննդավայր և սննդավայր, այլ միայն և միայն սննդավայր, այսինքն՝ «ի քաղաք և տեղի սննդեան իւր»։*

**** Մ. Աբեղյան, *անդ, էջ 533։*

***** Մ. Աբեղյան, *անդ, էջ 200։ (Ընդգծումը մերն է,—*Կ. Մ.-Օ.)։

քատացի կամ Հաղբատցի, կամ Անեցի: Կան նաև ուրիշները, որոնք երկու-երեք և ավելի մականուններ ունեն, օրինակ, Վարդան Մեծը, որը բացի այդ մակդիրից՝ չնայած նրա ծննդավայրի անհայտ լինելուն, կոչվում է՝ «Վարդան Արևելցի», որ ներկայումս ընդունված է, «Վարդան վարդապետ Աղուանից», կամ «Վարդան վարդապետ Գանձակեցի» և այլն: Նա կարող էր կոչվել և, հավանորեն, կոչվել է թե՛ «Անդրեցի», քանի որ նա մի շարք տարիներ այդտեղ է բնակվել, իր հիմնարկած դպրոցը ղեկավարել՝ գիտություն ավանդելով բազմաթիվ աշակերտների և գրելով իր աշխատություններից մի քանիսը, և թե՛ այլ մենաստանների անուններով, որտեղ նա անց է կացրել իր կյանքի այս կամ այն շրջանը և մեծ հռչակ վաստակել իր գիտության համեմատ: Մխիթար Գոշն էլ մի քանի հորջորջումներ ունի՝ Գետիկցի, Արևելցի, Գանձակեցի և այլն:

Եթե վերոհիշյալ տեսագծով քննության առնելու լինենք Կիրակոսի մականվան հարցը, ապա պիտի կանգնած մնայինք մի շարք բարդությունների առաջ: Այստեղ մեզ օգնության է հասնում ինքը հեղինակը՝ Կիրակոսը, որը ճշտում է իր ծննդավայրը՝ «յաշխարհէն Գանձակայ, ուստի և ես»: Բայց ի՞նչ է նշանակում այդ. ինչպե՞ս բացատրենք «յաշխարհէն Գանձակայ» և ի՞նչ են ասում Պատմության ձեռագիր օրինակները:

Եթե Կիրակոսի մականվան հարցը քննելու և ճշտելու լինենք ըստ Պատմության ձեռագիր օրինակների, ապա պիտի ասենք, որ 1. Ոչ մի տեղ չի հիշատակված նրա Գանձակեցի մականունը. ընդհանրապես նա հիշվում է որպես Կիրակոս՝ առանց մականվան և 2. Ձեռագրերի մեծագույն մասը (շուրջ 25 ձեռագիր) ունի հետևյալ վերնագիրը՝ «Համառօտ պատմութիւն ժամանակաց ի սրբոյն Գրիգորէ մինչև ցյետին աւուրս թևացեալ. արարեալ (նաև որոշ ՁՁ-ների մեջ՝ թուացեալ. ասացեալ) Կիրակոսի (bejqv Կիւրակոսի) ընտրեալ վարդապետի ի մեծահռչակ ուխտն Գետկայ»*: Եթե Պատմության խորագրի մասին դատելու լինենք ըստ ձեռագրական տվյալների, որն, անշուշտ, կազմված պիտի լինի Կիրակոսից հետո, քանի որ դժվար թե նա իր մասին գրեր «ընտրեալ» կամ ինչպես stv ումեն «մեծ և ընտրեալ», ապա Կիրակոսի անունն ու գործը անմիջականորեն կապվում է Գետկա վանքի, քան «Գանձակի աշխարհի» հետ: Հետևաբար նա ամենայն իրավունքով կարող էր հետագա սերունդների կողմից կոչվել Գետիկցի, կամ Գետկացի կամ Գետակեցի (տ. Գ. Սրվանձտյանց, Թորոս Աղբար, Բ, 448), ինչպես և իսկապես կոչվել է, մանավանդ եթե նկատի ունենանք այն, որ Նոր Գետիկի արձանագրություններում մի երկու անգամ հիշվում է Կիրակոս վարդապետի անունը՝ մեկ դեպքում իբրև նվիրատու, երկրորդում՝ իբրև միջնորդ ժողովրդին աթոռահարկից ազատելու համար**: Բայց Կիրակոսը կարող էր հորջորջվել նաև Արևելցի, ինչպես Կիրակոսի սնընդակից «իմաստուն և հանճարեղ» Վարդան Արևելցին, նախ՝ այն պատճառով, որ «աշխարհն Գանձակայ», իրոք, գտնվում է Հայաստանի արևելքում ու սահմանակցում է Աղվանքին և երկրորդ՝ Արևմտյան Հայքի կամ Հայաստանի հայ ազգաբնակության համար Մեծ Հայքն՝ ներառյալ Աղվանից տան սահմանակից հայաբնակ վայրերը կոչվում էին «Արևելից

---

* Տես մանրամասն էջ Լ—ԼԱ:

** Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ, Երևան, 1944, վկայակոչելով Գոշավանքի—Գետիկի վանքի այդ արձանագրությունը, թվագրում է այն 1211 թ. փոխանակ 1260 թ.: Նրա շփոթության աղբյուրն է եղել «Ազգագրական հանդես», Ժ., էջ 24:

աշխարհ»*, «կողմանք Արևելից»**, կամ սոսկ «Արևելք»*** («Եկեալ վարդապետն Վարդան... յԱրևելս, և շրջեալ ընդ գաւառս Հայոց», «եկեղեցիք Արևելից», «իշխանք Արևելից»)։ Կիրակոսն իր գործունեությունը ծավալել է գլխավորապես «Արևելքում», համարվել է «Արևելից եկեղեցւո» վարդապետ, ապա ուրեմն նա բնականաբար և տրամաբանորեն կարող էր նաև Կիրակոս Արևելցի կոչվել։

ԺԲ և ԺԳ դարերի մեր մատենագրության, ինչպես և վիմական տարեգրության մեջ հիշվում են Կիրակոս անձնանունը կրող մի շարք վարդապետներ։ Սակայն նրանցից մի երկուսի տարեգրությունները մոտավոր ճշտությամբ այնպես են զուգադիպում իրար, որ աներևակայելի է դառնում կամ նրանց տարբեր անձնավորություններ — հեղինակներ լինելը, կամ կասկածի տակ են առնվում նրանց մասին հաղորդված թվագրությունները։ Այսպես, օրինակ, «Արևելցի» է կոչվել և Կիրակոս Երզնկացին, ԺԳ դարի մատենագիրը, որն իր կյանքը մեծ մասամբ անց է կացրել Կիլիկիայում և այնտեղ էլ մեռել է (1272 թ.) բայց Հակոբ Կարնեցին ասում է, թե գերեզմանը գտնվում է Երզնկայի մի եկեղեցում)։ «Ըստ Նշշ. էջ ԽԱ սա կոչվում է նաև Արևելցի»...****։ Ահա այս Կիրակոս Երզնկացուն—Արևելցուն վերագրում են նաև «Յայսմաւուրքը», որ սա հորինած պիտի լինի ՉԺԸ. (1269) թվականին։ Սակայն այդ միևնույն «Յայսմաւուրքի» հորինումը վերագրում են նաև Կիրակոս Արևելցի-Գանձակեցի պատմագրին։ Եվ դա միանգամայն հավանական են համարում Ղ. Ալիշանը և այլ բանասերներ, որոնք հենվում են Կիրակոս Արևելցու «Յայսմաւուրքի» հիշատակարանի վրա, որը նույնությամբ մեջ ենք բերում. «Յուսովն աստուծոյ և սիրով սրբոց նորա, նուաստ ոգի Կիրակոս վարդապետ Արևելցի, ի միասին հաւաքեցի զտօն սրբոցս աստուծոյ՝ ըստ իւրաքանչիւր յիշատակի աւուրց։ Գրեցի և պատմութիւնս նոցա, որոց ոչ էր եղեալ ի գիրս Յայսմաւուրացն***** և խառնեցի ընդ նախակարգսն։ Եւ աղաչեմ զտօնողսդ և զգրողսդ՝ գրել և զայս յիշատակ բանիս... Եւ եղև իրակութիւնս այս ի թուիս ՉԺԸ, յաշխարհիս Կիլիկեցւոց ի Սիս մայրաքաղաքի, ի թագաւորութեան Հեթմոյ, և յառաջին ամի իշխանորդւոյ նորին Լևոնի. ԿԶ (66) ամի կենաց պանդխտութեան մերոյ, յորում ասարտն եղև ի փառս աստուծոյ, յաւիտեանս. ամէն։

Եւ ճառք որ յաւելաք մեք ընդ հինն խառնեալ՝ հարիւր և եօթանասուն...»******։

«Յայսմաւուրքի» մի այլ ձեռագրի մեջ կա հետևյալ հիշատակագրությունը՝ «ԶԿիրակոս վարդապետ Արևելցի ի վանից Գետկցի զյարմարիչ և զնուսաւորիչ այսմ կտակիս»*******։

---

* Կիրակոս, էջ 302։

** Կիրակոս, էջ 366 կամ «զբեցին ի կողմանս Արևելից ի Մեծ Հայք». անդ, էջ 315, 330 և այլուր։

*** Կիրակոս, անդ, էջ 168—170, 311 և այլուր։

**** Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Բ, Երևան, 1944, էջ 624—625։ Տե՛ս անդ նաև համապատասխան վկայությունները, որոնք անհրաժեշտ է զտել և վերագրումները ճշտել։

***** «Իրմէ առաջ գրված Յայսմաւուրաց մեջ» Ղ. Ա.։ Թվում է, այստեղ խոսքը վերաբերում է այն «Յայսմաւուրք»-ին, որ կազմել է նույն Վանական վարդապետի աշակերտ տեր Իսրայելը։

****** Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 472։

******* Մ. Ավգերյան, Լիակատար վրք. սրբ., ԺԱ, էջ ՀԶ. որի հիշած անծանոթ «Յայսմաւուրքը» Վիեննայի № 219 ձեռագիրն է։ Տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 559—567, «Յայսմաւուրք», ՌԽ— 1591 թ.։

Եթե սկզբնապես թվում էր, թե Կիրակոս վարդապետ Երզնկացին է «Յայսմաւուրքի» հեղինակը, ապա նախորդ հիշատակարանի համաձայն՝ նա արդեն համարվում է «Արևելցի», իսկ վերջին հիշատակագրության մեջ ավելի է կոնկրետանում նրա արևելցի լինելու հանգամանքը, երբ այնտեղ ընդգծվում է, որ նա «Արևելցի ի վանաց Գետկցի» է, այսինքն՝ հաստատվում է վերը հիշածս հորջորջումը և Կիրակոսի Պատմության խորագիրն ըստ ձեռագրների՝ «Համառօտ Պատմութիւն... Կիրակոսի վարդապետի... արարեալ ի հռչակաւոր ուխտն Գետկայ»։ Այլ խոսքով ասած՝ այս հիշատակագրությամբ էլ կրկին հաստատվում է Կիրակոսի Գետիկցի հորջորջումը։

Հիշատակարանիս պատկանելը Կիրակոս Գանձակեցու-Արևելցու-Գետիկցու գրչին կողմնակի կերպով հաստատվում է նաև հիշատակարանի և Պատմության ոճերի ու դարձվածքների համեմատությամբ և նույնությամբ։ Այսպես, օրինակ՝

| Հիշատակարան | Պատմություն |
| --- | --- |
| ...«Նուաստ ոգի Կիրակոս» | «յոգիս Կիրակոսի» (333) |
| ...«Եւ աղաչեմ զամենեսեան և ըզ-գրողսդ՝ գրել և զայս յիշատակ բանի, զի և դուք գրեսջիք ի գիրն կենաց...»։ | ...«Աղաչեմք զկնի եկեալսդ ոչ արտաքսել զաշխատութիւնս մեր ...և ձեզ թողուլ յիշատակ ապագայիցն» (էջ 10)։ |

Կիրակոս Գանձակեցին սիրում է իր ընթերցողներին տեղեկություններ հաղորդել իր գրական երկի մասին, թե երբ է սկսել գրել, կամ ավարտել, կամ քանի տարեկան է եղել նա երկը ձեռնարկելու կամ ավարտելու ժամանակ։ Նույն այդ գրական եղանն է կիրառում նաև հիշատակարանի հեղինակը։

| Հիշատակարան | Պատմություն |
| --- | --- |
| «Եւ եղև իրակութիւնս այս ի թուին ՉԺԸ, յաշխարհիս Կիլիկեցւոց ի Սիս մայրաքաղաքի, ի թագաւորութեան Հեթմոյ, և յառաջին ամի իշխանորդւոյ նորին Լևոնի. ԿԶ (66) ամի պանդխտութեան մերոյ, յորում աւարտն եղև ի փառս աստուծոյ»։ | «Եւ յորժամ եղև այս գծագրութիւնն, որ յայսմ վայրի ի ՈԴ թուականին, ի Հայոց թագաւորութեանն, որ ի կողմանս Կիլիկեցւոց, Հեթմոյ բարեպաշտի և ի զօրավարութեանն եղբօր իւրոյ Սմբատայ քաջի... և ի ժամանակի կենաց մերոց ամս քառասուն պակաս կամ աւելի» (էջ 278)։ |

Ինչպես տեսնում ենք, զուգադրվող աղբյուրների հեղինակների ժամանակագրական եղանը միևնույնն է. երկուսն էլ պատմական-գրական իրականությունը կապում են իրենց կյանքի, հասակի հետ։ Դա մի գրական եղան է, որ շատ սակավ է հանդիպում մեր հին մատենագրության մեջ (համմտ. Գրիգոր Նարեկացի)։ Այս գրական հուշարձանների մեջ ոչինչ չի փոխվում այն բանից, որ մի դեպքում աշխատությունն ավարտելու տարին է կապում իր հասակի հետ, մյուս դեպքում՝ աշխատությունն սկսելու տարին։

«Յայսմաւուրքի» հավելման-լրացման աշխատանքը երկար ժամանակ է խլել Կիրակոսից։ Ղ. Ալիշանի հրատարակած հիշատակարաններից մեկի մեջ ասված է. «Համարձակեալ ես նուաստ ծառայ ծառայիցն Քրիստոսի Կիրակոս վարդապետ ի թուականին Հայոց ՉԲ աշխատեալ յաւելի ի նախակարգեալ Տօնապատճառս համառօտս հարիւր և երկոտասան (այլ օր. հարիւր եօթանասուն),

հաւաքեալ յաստուածաշունչ գրոց, ի պայծառութիւն կաթողիկէ եկեղեցւոյ և մեզ տօնողացս ի բարեխօսութիւն... Ջիղձս և զփափագ արտասանութեան այսմ (երկու) սուրբ վարդապետք լցին՝ Վահրամ և Ստեփաննոս, զի գրեսցեն ի գիրն կենաց, զոր սկսաք ի վանքն Կողայ»*։

Այս զույգ հիշատակարանները, ասես, իրար լրացնում են. մեկով Կիրակոսը հայտնում է, թե երբ է սկսել իր աշխատանքը, այն է՝ «ի թուականին հայոց ՉԲ», մյուսով, թե երբ է ավարտել «Յայսմաւուրքը» լրացնելու աշխատանքը, այն է՝ «ի թուին ՉԺԸ», հետևաբար նա անհրաժեշտ նյութը հավաքել է «յաստուածաշունչ գրոց» մոտ 16 տարի, ամենայն հավանականությամբ, բավականաչափ տևական ընդմիջումներով։

Վկայակոչածս հիշատակարանների մեջ առկա է մի կարծեցյալ հակասություն, այն է՝ մեկի մեջ խոսվում է «Տօնապատճառ» լրացնելու մասին, մյուսի՝ «Յայսմաւուրք»։ Այս հակասությունն էլ հմտորեն վերացնում է բազմիմաց Ղ. Ալիշանը։ «Յայսմաւուրաց» ձևանալեն և անվանելեն առաջ հարմար էր այդպիսի հավաքումը կոչել հնագույն կարգաւորյալ գրոց անվամբ մի՝ Տոնական, Տոնանամակ, Տոնապատճառ, Տոնական և այլն»**։

Եզրափակենք մեր խոսքը։

Մեզ թվում է, որ մեր ճշտումներից և քննարկությունից հետո կարելի է ապացուցված համարել հետևյալը՝ ա) Կիրակոս Գանձակեցին, Կիրակոս Գետիկցին և Կիրակոս Արևելցին միևնույն անձնավորությունն են, այսինքն՝ Կիրակոս պատմագիրը, և բ) մականունների տարբերությունը, այսինքն՝ տարբեր հորջորջումները արդյունք են Կիրակոս պատմագրի իրական կյանքի այլևայլ փուլերի։ Գանձակեցի է հորջորջվել, որովհետև «յաշխարհէն Գանձակայ» է, Գետիկցի՝ որովհետև Նոր Գետիկում, կամ նրա դպրոցում է ուսանել, դաստիարակվել, ապա երկար ու ձիգ տարիներ ապրել և գործել, Արևելցի՝ որովհետև նրա քաղաքական, եկեղեցական-վարդապետական և գրական-պատմագրական գործունեությունը գլխավորապես ծավալվել է «ի կողմանս Արևելից»։ Ալիշանի արծարծած և մեր միջոցներով վերաքննված ու հիմնավորված այս կարծիքը հնարավոր է էլ ավելի ամրապնդել, եթե ուսումնասիրության ենթարկվի Իսրայելյան «Յայսմաւուրքի» նախնական բնագիրը, երևան բերվի Արևելցու մուծած հավելումները, ապա կատարվի «Արևելցու» հավելվածների և «Գանձակեցու» Պատմության բնագրագիտական մանրամասն բաղդատությունը ոճաբանության գծով։

Վերը բերված մեր պրպտումներից հետո դժվար է պնդել, որ Կիրակոսի ծննդավայրի հարցը վերջնականապես լուծված է և կարիք չկա նոր քննություններ կատարելու։ Մենք կարողացանք լոկ պարզել մի բան, որ նա ծննդյամբ ոչ թե Գանձակ քաղաքից է (այս իմաստով՝ Գանձակեցի), այլ «յաշխարհէն Գանձակայ» այնպես, ինչպես Հովհաննես Սարկավագը, Ալավկա որդի Դավիթը, Թոքակերի որդի Գրիգորը, որոնք երբեմն կոչվում են նաև Արևելցի, ինչպես Կիրակոսն ու Վարդանը, որը երբեմն կոչվում է նաև Գանձակեցի։ Իսկ այդ «աշխարհ Գանձակայ»-ն ներառյալ նաև Փառիսոսը և ընդհանրապես Մեծ Հայքի հյուսիս-արևելյան կողմերը ԺԲ—ԺԳ դդ. կազմում էին «աշխարհ Արևելից», «կողմանք Արևելից» աշխարհագրական-տերիտորյալ և քաղաքական-վարչական հասկացության բաղադրիչ մասերը։

* Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 107։

** Անդ, էջ 108։

* * *

ԺԱ դարի երկրորդ կեսից սկսած՝ հայկական զանազան «թագավորությունները» մեկը մյուսի ետևից կորցնում էին իրենց քաղաքական անկախությունը՝ երկիրը թողնելով Միջին Ասիայի տափաստաններից հրոսող թուրք-թաթարական ցեղախմբերին կամ սրանց ճնշման տակ՝ իրենց հողն ու ջուրը և իշխանությունը վիճելով բյուզանդական նենգ կայսրներին։ Այս ընդհանուր ավերածությունից որոշ չափով զերծ էր մնացել հյուսիս-արևելյան Հայաստանը, որի փոքրիկ կիսանկախ «թագավորներն» ու իշխանավորները՝ իրենց թիկունքում ունենալով հզորացող վրաց թագավորությունը և նրա հետ դաշնակցած, հաջողությամբ դիմադրություն էին ցույց տալիս և հաճախ իրենց երկրից վանում թուրք-թաթարական հրոսակախմբերին։ Հայ-վրացական դաշնակցության հետևանքով ստեղծված հարաբերաբար խաղաղ պայմաններում այս «Արևելից աշխարհում»՝ ներառյալ և «Գանձակի աշխարհը», ավելի ճիշտ սրա հարավ-արևմտյան մասը, սկսում է բարգավաճել հայկական կուլտուրան։ Հինավուրց ու նորակառույց վանքերում և մենաստաններում բավականաչափ մեծ թվով զարգանում են վանական դպրոցները, վարդապետարանները, համալսարանները և գիտությունն ու գրականությունը։ Սանահինն ու Հաղբատը, Նոր Գետիկն ու Խորանաշատը, Հաղարծինն ու Կեչառիսը, Հավուց թառն ու Այրիվանքը, «մեծափառ» Անին և այլ վայրեր դառնում են հայկական ծվատված կուլտուրայի խոշոր կենտրոններ, որտեղ դժվարին պայմաններում բոցկլտում են հայ ժողովրդի ստեղծագործ ոգու կայծերը։

Վերը նկարագրած պայմաններում անբնական ոչինչ չկա, ընդհակառակն, մենք կասենք՝ շատ բնական է ու օրինաչափ, որ ԺԱ դարի երկրորդ կեսից մինչև ԺԳ դ. հայ կուլտուրայի անխոնջ մշակների մեջ թե՛ քանակով և թե՛ իրենց որակով աչքի ընկնեին «Գանձակեցի», «Փառիսոսցի», «Գետիկցի», «Արևելցի», մի խոսքով «յաշխարհէն Գանձակայ», «ի կողմանց Արևելից», գրական-գիտական, եկեղեցական-հասարակական, դպրոցական-ուսուցչական գործիչները. հիշենք, օրինակ՝ Գեորգ վարդապետ Ուռճացին, սրա աշակերտ՝ Հովհաննես Սարկավագ Վարդապետը, ապա թերևս Ալավկա որդի Դավիթն ու Թոքակերի որդի Գրիգորը, ամենայն հավանականությամբ, Սարկավագի աշակերտ Հովհաննես վարդապետ Տավուշեցին, սրա աշակերտ Մխիթար Գոշը, սրա աշակերտ Վանական վարդապետը, սրա աշակերտներ՝ Կիրակոսն ու Վարդանը, Գրիգորն ու Պողոսը, Մարկոսն ու Սոսթենեսը և շատ-շատերը։

Անցնենք այժմ Կիրակոս պատմագրի ծննդյան տարեթվի հարցի քննությանը։

«Եւ յորժամ եղև այս գծագրութիւնն, որ յայսմ վայրի ի ՈՂ (1241 թ.) թուականին, ի Հայոց թագաւորութեանն, որ ի կողմանս Կիլիկեցւոց. Հեթմոյ բարեպաշտի... և ի ժամանակի կենաց մերոց ամս քառասուն պակաս կամ աւելի»*,—գրում է Պատմագիրը՝ իր երկի շարադրանքը կապելով իր անձնական կյանքի, իր տարիքի հետ։

«Յայսմաւուրքի» հիշատակարանի մեջ նույն Կիրակոս վարդապետը հաղորդում է, որ «Յայսմաւուրքը» լրացրել և ավարտել է «ի թուիս ՉԺԸ (1269 թ.), յաշխարհին Կիլիկեցւոց ի Սիս մայրաքաղաքի, ի թագաւորութեան Հեթմոյ և

* Կիրակոս, անդ, էջ 278։

յառաջին ամի իշխանորդւոյ Նորին Լևոնի. ԿԶ (66) ամի կենաց պանդխտութեան մերոյ»*։

Եթե այս երկրորդ վկայությանը նայելու լինենք, ապա պիտի ամենայն վստահությամբ ասենք, որ հարցը լուծված է՝ նա ծնվել է 1203 թ., ինչպես կարծում է Ղ. Ալիշանը**, իսկ եթե Պատմության մեջ եղածով առաջնորդվենք, ապա պիտի ընդունենք 1200—1201 թթ., ինչպես ընդունելիս է եղել նաև Ալիշանը 1865 թ. վենետիկյան հրատարակության Առաջաբանում՝ «ի սկիզբն ԺԳ դարու»։ Այս երկու վկայություններից ավելի հավանական ենք համարում Պատմության մեջ եղածը, որովհետև, եթե ընդունելու լինենք հիշատակարանի կասկած չվերցնող, աներկբայելի տարեթիվը, պիտի նաև ընդունենք, որ նա հաստատապես գիտեր իր ծննդյան տարեթիվը։ Այս դեպքում էլ միանգամայն իմաստազրկվում է նրա տատանումը, երկմտությունը Պատմության մեջ՝ երբ գրում է «ամս քառասուն պակաս կամ աւելի»։ Սա նշանակում է, որ նա հաստատ չգիտե իր ծննդյան տարեթիվը, այլ միայն մոտավոր ձևով է տալիս։ Դարձյալ, եթե ընդունելու լինենք, որ 1241 թ. նա 40 տարեկան է եղել, ապա ուրեմն նա ծնված պիտի լինի 1201 թ., եթե 40-ից պակաս՝ ապա 1202 թ., եթե քառասունն անց՝ «աւելի», ապա այդ դեպքում կունենանք՝ 1200—1201 թթ.։ 1203 թ. իբրև Կիրակոսի ծննդյան տարեթիվ նվազ հավանական է, որովհետև այդ դեպքում նա 1241 թ. կլիներ 38 տարեկան, մի բան, որ չի սազում, չի համարվում մեր հասկացողությանը՝ «ավելի» կարճ ժամանակամիջոց ընդգրկող տարեթվերի մասին։ Հարցի լուծումից խուսափում է Հ. Ոսկյանը գրելով՝ «ծնունդը պետք է դնել 1200—1210-ի միջոցները»***։

Մեջ բերելով բանասերների տարբեր կարծիքները Կիրակոսի ծննդյան տարեթվի մասին և քննարկելով դրանք, մենք իրականության ավելի մոտ ենք համարում 1200—1202 թթ. որպես նրա ծննդյան մոտավոր թվական։

Կիրակոսի սոցիալական ծագման մասին մենք նմանապես տեղեկություն չունենք։ Սակայն զանազան հասարակական խավերի մասին Պատմության մեջ սփռված համակրական և հակակրական արտահայտություններից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ նրա համակրանքը աշխատավոր ժողովրդի կողմն է և որ նա բարյացակամ չէ տրամադրված նույն այդ աշխատավոր ժողովրդին կեղեքող, նրա շահի աղբյուրը կտրող «պարսաւադէտ», «առանձնապահ» իշխանավորների, ազնվականների հանդեպ ****։ Այդ է վկայում նաև Նոր Գետիկի 1260 թ. արձանագրությունը*****։

Մատենագրական աղբյուրների մեջ վկայություններ չկան Կիրակոսի մանկության, ինչպես և նախնական կրթության մասին։ Այնուամենայնիվ ակներև է մի բան, որ նա մինչև 1220-ական թվականների առաջին կեսը ապրել է Նոր Գետիկի հանրահռչակ մենաստանում, որտեղ շարունակում էին զարգանալ մեծ և բազմաշնորհ Մխիթար Գոշի քաղաքական, հասարակական-եկեղեցական և գրական-գիտական-դպրոցական ավանդները։

Նոր Գետիկը դարձել էր ԺԲ դարի վերջին քառորդում և ԺԳ դարի առաջին կեսին «աշխարհ Արևելից»՝ Մեծ Հայքի խոշորագույն կրթական և հասարակա-

* Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 472։

** Անդ, էջ 216։ Ար. Ղազինյան, Հայ գրականության պատմություն, Ա մաս, Նոր-Նախիջևան, էջ 203։

*** Հ. Ոսկյան, Հովհաննես Վանական..., էջ 93։

**** Կիրակոս, անդ, էջ 362։

***** Հո. Ջանփոլադյան. Մ. Գոշը և Նոր Գետիկի վանքը, էջ 160—161։

կան-գրական կենտրոններից մեկը։ «Եւ բազում եղբարք ժողովեցան վասն հռչականուն տեղւոյն, և բազմաց եղև տեղի սննդեան և ուսման. որ և մեք իսկ սնեալ և ուսեալ եղաք ի նոյն վանս»,—գրում է մեր Պատմագիրը*։

Ընդունելով այն, որ Կիրակոսը տղայական և պատանեկական հասակում սնվել ու սովորել է Նոր Գետիկում, հարց է առաջանում՝ արդյոք չի՞ աշակերտել նա Մխիթար Գոշին։ Այս հարցին, ըստ իս, պետք է բացասական պատասխան տալ։ Եթե նա, ինչպես և նրա մյուս համշիրակները, մասնավորապես Վարդան Արևելցին և Գրիգոր Ակնեցին, աշակերտած լինեին Գոշին, ապա նրանք, որ այնքան ջերմ սիրով կապված էին իրենց ուսուցիչների հետ, անպայման որևէ մի տեղ այդ մասին ակնարկած կլինեին։ Բայց այդպիսի վկայություններ չկան ոչ Կիրակոսի Պատմության մեջ, ոչ Վարդանի երկերում և ոչ էլ մյուս աշակերտակիցների գրական գործերում, որոնց մեջ նրանք առիթ չեն փախցնում խոսելու թե իրենց ուսուցիչ Վանական վարդապետի և թե սրընդակիցների մասին։ Նրանք տղայական հասակում, հարկավ, կարող էին տեսած լինել ծերունազարդ Վարդապետին և նույնիսկ մի երկու իմաստունխրատ լսած, բայց երբեք չէին կարող նրան աշակերտած լինել։ Մխիթար Գոշը վախճանվել է 1213 թ., իսկ այդ ժամանակ վերոհիշյալ մատենագիրները դեռևս իրենց տղայական հասակից դուրս չէին եկած, կլինեին 10—12 տարեկան երեխաներ, հետևաբար նրանք դեռ տարրական գիտելիքներ էին կուտակում, ուր մնաց թե ունկնդրեին մեծ Վարդապետին։

Մենք նույնպես չգիտենք, թե սկզբնական շրջանում որ միաբանին կամ վարդապետին է նա աշակերտել, բայց շուտով նա ջերմ սիրով և սրտաբուխ ակնածանքով կապվում է իր բարեկամ և ուսուցիչ Վանական վարդապետի հետ, որի մտավոր ու բարոյական նկարագիրը տալու համար նա խոսք չի գտնում իր սովորական բառապաշարի մեջ. «Այր սուրբ և պարկեշտ և յամենայն գործս բարիս յառաջադէմ, ողջախոհ և զգաստ յամենայնի և վարդապետական բանիւ քան զամենեսին, որ ի ժամանակին էին, գերազանցեալ ծննդական մտօք և յարմար բանիւք։ Վասն որոյ բազումք դեգերէին առ նա ուսման աղագաւ ո՛չ միայն վարդապետական բանի, այլ ամենայն կեանք նորա և շարժումն անգիր օրէնք էին տեսողացն։ Եւ զայս ոչ թէ ականջալուր միայն ասեմ, այլ և ականատես, զի բազում ժամանակս կացաք մեք առ նմա ի վարժս կրթութեան ի սահմանս Տաւուշ բերդոյ, յանապատի անդ, զոր ստացաւ իւր բնակութիւն և աղբիւրաբար արբուցանէր ամենեցուն զբանն վարդապետական»**։

Վարդապետի և աշակերտի այդ մտերմությունը տևել է մինչև Վանականի մահը (1251)։ Նա երբեք կամովին չի հեռացել իր ուսուցչից։ Բախտը կապելով Վանական վարդապետի հետ՝ նա վերջինիս հետ հեռանում է Նոր Գետիկի վանքից և գնում Տավուշ, որտեղ Վանականը հիմնարկում է հռչակավոր Խորանաշատ մենաստանը՝ «հանդէպ Նոր Գետիկի վանքից բերդին և ի թիկանց Գարդմանայ»։ Խորանաշատի հիմնարկումը տեղի է ունեցած հավանաբար 1215—1220 թ., ինչպես ճիշտ տրամաբանելով՝ եզրակացնում է Հ. Ոսկյանը***։

Այստեղ Խորանաշատի մեջ Վանականը շարունակում է իր վարդապետա-

* Կիրակոս, անդ, էջ 222։

** Կիրակոս, անդ, էջ 218—219, տե՛ս նաև «Վասն վախճանի սուրբ վարդապետին Վանականայ» (էջ 344—348) և այլուր քանիցս Պատմության մեջ։

*** Հ. Ոսկյան, Հովհաննես Վանական..., էջ 7—11։

կան պարապմունքներն իր աշակերտների հետ, որոնց թվումն էին՝ Կիրակոսը, Վարդանը, Առաքելը, Հովսեփը, Մարկոսը, Սոսթենեսը, Գրիգորիսը, Պողոսը և շատ ուրիշներ, որոնք նրանից էլ ընդունել են վարդապետական գավազան, և բազմաթիվ քահանաներ։

Երկար չի տևում, սակայն, Վանականի խաղաղ վարդապետական՝ գրական և դպրոցական գործունեությունը Խորանաշատի անդորր մենաստանում։ 1225 թ. սուլթան Ջալալ-էդ-դինի հրոսակախմբերը՝ պարտության մատնելով վրացիներին ու հայերին և ասպատակ սփռելով երկրում, ավերում են նաև Խորանաշատը։ Վանականն ստիպված ընդհատում է իր գրական-կրթական գործը, հեռանում Տավուշ բերդի հարավային կողմերը, փորում մի քարայր «ի կատարս բարձրագոյն քարի միոյ, որ կայ հանդէպ գեղջն, որ Լորուտն կոչի», «անդ դադարէր գաղտուկեամբ» և «ժողովեալ բազում գրեանս», շարունակում է իր վարդապետական գործունեությունը՝ նորից իր շուրջը հավաքելով բազմաթիվ աշակերտներ, ապա իջնում է քարայրից «առ ստորոտ քարին», մի եկեղեցի ու սենյակ է շինում և այնտեղ դադար առնում։

Այս անցուդարձերի ժամանակ Վանական վարդապետի հետ է լինում նաև նրա մտերիմ աշակերտ Կիրակոսը։ Սակայն այս նոր հանդրվանում էլ Վանականն ու իր աշակերտները չեն կարողանում երկար ապրել։ Շուտով Վանականի մեղվաջան աշխատանքն ընդհատվում է՝ այս անգամ ծանր տառապանքներ և դաժանագույն գերություն բերելով թե՛ իրեն և իր սիրասուն աշակերտներին և թե՛ շուրջը բոլորած և նրա խնամքին աչք հառած սարսափահար ժողովրդին*։

1235 թ. Մոլար-նուինի այրյացավեր ու ապականիչ բանակը՝ մորեխի նման, անհարկու՝ հրոսով տարածվեց Մուղանի դաշտում և մի քանի ամիս անց՝ 1236 թ. գարնանը, հորձանք տվեց Արևելյան Հայքի վրա։ Մոլար-նուինն իր հրոսակախմբերով ասպատակում է Տավուշը, գրավում Լորուտը և շրջակա մյուս գյուղերը, ապա պաշարում այն քարայրները, որտեղ մեծ արհավիրքից ապաստան էին գտել Վանականը, իր աշակերտները և անհամար ժողովուրդը։ Սկիզբն է առնում ժողովրդի անասելի տառապանքը, որի քստմնեցուցիչ նկարագրությունն է տալիս Կիրակոսը. «Եկն Մոլար-նուինն յայն սահմանս, բնակիչք գեղջիցն այնոցիկ յայր անդր դիմեցին և լցաւ արամբք և կանամբք և մանկտօք։ Եւ եկեալ թաթարն պաշարեաց զնոսա յայրի անդր և նոքա ոչ համբարս ունէին և ոչ ջուր։ Եւ էր եղանակն ամառնային, և էր տօթ յոյժ. և սկսան տապիլ յարգելարանի անդ՝ իբր ի բանտի, և մանկունքն պապակէին ի ծարաւոյ և մերձ էին ի մեռանել։ Եւ թշնամիքն ձայնէին արտաքուստ, թէ՝ «Ընդէր մեռանիք, ելէ՛ք առ մեզ, և տացուք ձեզ վերակացուս և թողցուք զձեզ ի տեղւոջս ձերում»**։

Գրավված թաթարների խոստումներով, ժողովուրդը թախանձում է Վանականին՝ «Գնե՛ա զարիւն մեր ամենեցուն, և էջ առ նոսա, և արա սէր ընդ նոսա»։ Վանականը ընդառաջում է ժողովրդի ցանկությանը և իջնում է թաթարների մոտ, ինչպես հաղորդում է Կիրակոսը, որը ներկա է եղել՝ «զի անդ էաք մեք ի վարժս կրթութեան գրոց սրբոց ընդ աւուրսն ընդ այնոցիկ»։

Ընդունելության պատշաճ ծիսակատարություններով թաթարները ներկայացնում են Վանականին և նրան ընկերակցող Մարկոս և Սոսթենես քահանա-

* Կիրակոս, անդ, էջ 243 և հտ.։ Հ. Ոսկյան, անդ, էջ 13 և հտ.։
** Կիրակոս, անդ, էջ 244։

ներին մոնղոլների զորավար Մոլար-Նուինին։ Տեղի է ունենում Վարդապետի և զորավարի միջև արևելյան գունագեղ առակներով համեմված մի զրույց, որից հետո մոնղոլն առաջարկում է ժողովրդին աներկյուղ դուրս բերել քարայրից և խոստանում է՝ «Իւրաքանչիւր յիւրում տեղւոջ կեալ փոյթ վերակացուք և յանուն նորա շինել զգիւղն և զագարակսն»*։

Հավատալով մոնղոլների առաջնորդի խոստմանը՝ ժողովուրդն իջնում է քարայրից։ «Եւ տարան զմեզ ի փոքրագոյն աղբիւր մի, որ կայր ի մէջ վանիցն, և ետուն մեզ ջուր, զի յոյժ ծարաւի էաք զաւուրս երիս,—գրում է Կիրակոսը։— Եւ ապա տարան արկին զմեզ ի տեղի ինչ արգելանի և զաշխարհականսն ի գաւիթս եկեղեցւոյն։ Եւ ինքեանք շուրջ զմեօք պահէին զմեզ զգիշերն, զի ընդ երեկս էր օրն**»։ Հետևյալ օրը հանում են բոլորին, խուզարկում, գրավում այն ամենը, ինչ պետք էր նրանց, և, ընտրելով գերիների մեջ այնպիսիներին, որոնք կարող էին նրանց հետ շրջագայել, մյուսներին հրամայում են տանել «ի վանսն և ի գիւղ անդր»։ Վանականն էլ է միանում շրջագայողներին։

Այդ շրջագայության հետ կապված տանջալից տառապանքների և նեղությունների անմիջական տպավորության տակ՝ Կիրակոսը նկարագրում է. «Եւ շրջեցուցանէր զմեզ զկնի իւր աւուրս բազումս՝ նեղութեամբ և տառապանօք, հետի և բոկ ես։ Եւ որք կարգեալ էին պահել զմեզ... նոքա առաւել կեղէին զկեանս մեր ամենայն տառապանօք, յուղեգնացութեան այնքան ստիպով տանէին զմեզ, որպէս զերիվարս յապատակի։ Եւ թէ դէպ լինէր ումեք վասն տկարութեան մարմնոյ, կամ խեղութեան սակաւ մի կասել ի գնացիցն, անխընայ ջարդէին զկառափունս, և ծեծէին զմարմինսն գանալից, մինչև զի զփուշս անգամ ոչ կարէին հանել յոտիցն՝ թէ եկանէր ընդ նա, և ոչ ջուր ըմպել որք կարէր վասն ստիպողացն։

Եւ իբրև իջանէին, լնուին զմեզ ի տունս նեղս, և ինքեանք շուրջ նստեալ պահէին և ոչ տային թոյլ ումեք ելանել արտաքս ի պէտս կարեաց մարմնոյ, այլ ի տունսն անցուցանէին զպէտսն, և ի նմին ագանէին զյոլով աւուրս։ Վասն որոյ,—սրտնեղում է Պատմագիրը,—ոչ կարեմ ընդ գրով արկանել զամենայն նեղութիւնսն, որ անցին ընդ մեզ»***։

Կիրակոսը, ճիշտ է, ծանր տառապանքներ է կրում, բայց և այնպես, նա կարծես հաշտ ու հանգիստ է, քանի դեռ իր սիրելի վարդապետի հետ է, հարազատ միջավայրում։ Սակայն շուտով նա այդ քիչ թե շատ տանելի կացությունից էլ զրկվում է՝ հարկադրաբար անջատվելով իր ընկերներից. «Ապա առին,—գրում է նա,—և զիս յընկերաց իմոց զկնի իւրեանց ի պէտս դպրութեան՝ գրել թուղթ և ընթեռնուլ. զօրն զկնի իւրեանց շրջեցուցանէին և երեկոյին հասելոյ բերէին, տային զմեզ ի վարդապետն երաշխաւորութեամբ և դարձեալ գային առնուին. հետի կամ մերկ ի վերայ կրմուզ գրաստոյ և այսպէս առնէին զաւուրս բազումս»****։

Այս դեպքերը տեղի են ունենում 1236 թ. գարնան և ամռան ամիսներին, և ոչ թե 1238 թ., ինչպես դնում է Մ. Չամչյանը*****։ 1236 թ. աշնանը, երբ թաթարները պատրաստվում էին հեռանալ «ի ծանօթ աշխարհէն մերմէ ի հե-

* Կիրակոս, էջ 246-247։

** Անդ, էջ 247։

*** Անդ էջ 249։

**** Անդ, էջ 249։

***** Մ. վ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Գ, էջ 209—210։

տաւոր օտարութիւն», գերիներից շատերը փախչում են և ազատվում։ Վարդապետն ու Կիրակոսը չեն դիմում այդ քայլին, այլ որոշում են մնալ գերության մեջ «մինչև ինքն (այսինքն՝ աստված) այց արասցէ մեզ, որպէս և կամի»*։

Վարդապետի և աշակերտի գերությունը երկար չի տևում։ Շուտով առիթ է ներկայանում հանդիպելու Ջուչու ղանին, և սա Վանականին վարդապետից ծանր փրկանք («ութսուն», իսկ ըստ Վարդանի՝ «յիսուն» դահեկան) է պահանջում և, ստանալով այդ գումարը Գագ բերդի բնակիչներից՝ ազատ է արձակում նրան, հավանորեն 1236 թ., ինչպես կարելի է եզրակացնել Վարդան Արևելցու հետևյալ խոսքերից՝ «Յետ որոյ (իմա՛ ազատութեան,— Կ. Մ. -Օ.) կեցեալ ամս հընգետասան ի փառս աստուծոյ և յօգուտ բազմաց՝ հանգչի ի Քրիստոս... ի մարտի ամսեանն ի տասն և ութ, ի տասն արեգ ամսոյ հին զուգին, յատուր շաբաթու յաղուհացուն... յեօթն հարիւր թուին յանժամանակն գնացեալ յաւիտեան»**։

Կիրակոսն էլ արձանագրում է Վանականի մահը 700 թ.՝ «Եւ այս եղև ի թուին Չ» (1251)***։ Սակայն Վարդանը նշում է նաև մահվան օրը և այն, որ նա գերությունից ազատվելուց հետո՝ ապրել է «ամս հնգետասան»։ Արդ, եթե նա մեռել է 1251 թ., ապա պարզ է, որ գերությունից ազատված պիտի լինի 1236 թ.։

Արձակելով Վանականին՝ Մոլար-նուինը չի ցանկանում մի այդպիսի դրամական գործարք կատարել նաև Կիրակոսի նկատմամբ, որովհետև, ինչպես ասում է նա, «սա ի պէտք է մեզ թուղթ գրելոյ և ընթերցման, թէպէտ բազում գինս տայք, ոչ տամք զսա»։ Կիրակոսն ստիպված մնում է։ Նույնիսկ Մոլար-նուինն աշխատում է սփոփել, սիրտ տալ նրան՝ ասելով. «Մի՛ տրտմիր ընդ գնալ մեծ երիցուն. զքեզ վասն այնորիկ ոչ թողաք ընդ նմա, զի պիտանի ես մեզ. մեծացուցից զքեզ իբրև զմի ի մեծաց իմոց. և թէ կայ քո կին, բերից զնա առ քեզ, և թէ ոչ՝ ի մէնջ տաց քեզ կին»։ Եւ առժամայն ետ մեզ վրան մի և երկուս պատանիս սպասաւոր մեզ, և ասէ. «Ի վաղիւն տաց քեզ ձի և ուրախ արարից զքեզ, միամիտ կացջիր»****։

Ապարդյուն են անցնում Մոլար-նուինի բարյացակամ վերաբերմունքն ու առատ խոստումները, որովհետև Կիրակոսի ուշն ու միտքը հեռանալն է թաթար բանակից։ «Պատահեաց մեզ ի նմին գիշերի գաղտագնաց լինել ի նոցանէ,—գրում է նա,—և եկաք ի տեղի սննդեան մերոյ ի վանքն, որ կոչի Գետիկ..., և անդ դադարեցաք»*****։

Այսպիսով Կիրակոսը Վանականի ազատման օրը գիշերով փախչում է գերությունից։ Դա տեղի է ունեցել 1236 թվականի աշնանը։

Ինչո՞վ բացատրել այն, որ նա մյուս գերիների համեմատությամբ՝ առանձին ուշադրության է արժանանում թաթար իշխանավորների կողմից և առաջ է քաշվում գրագրության համար։

Այս հարցին Հ. Ոսկյանը պատասխանում է՝ «Որովհետև Կիրակոս հմուտ էր թաթար կամ տաճիկ լեզվին»******։ Մ. Աբեղյանն անընդունելի է համարում

* Կիրակոս, անդ, էջ 250։

** Վարդան, անդ, Մոսկվայի հրատ., էջ 191—192։

*** Կիրակոս, անդ, էջ 348։

**** Անդ, էջ 252։

***** Անդ, էջ 252։

****** Հ. Ոսկյան, անդ, էջ 94։

այս բացատրությունը հետևյալ պատճառաբանությամբ՝ «Թաթարների լեզվի մի շարք բառեր բերելիս՝ Կիրակոսը գրում է. «Այլ և խօսք նոցա խժականք և անծանօթք ի մէնջ... Եւ զայլ այսպիսի խժական անուանս, զոր ի բազմաց մեզ անծանօթ, իսկ այժմ ակամայ ծանուցեալք»։—Կիրակոսը միայն գերության ժամանակ կարող էր սակավ ինչ սովորել թաթարերեն։ Նա գրագրությունը չպիտի անպատճառ տաճիկ (=արաբերեն)* լեզվով աներ, և ոչ թե հայերեն, քանի որ Հայաստանում էին գտնվում թաթարները և գործ ունեին հայերի ու հայ իշխանների հետ»**։

Արդարացի է Մ. Աբեղյանը, որ Կիրակոսը թաթարերեն-մոնղոլերեն սակավ ինչ կարող էր սովորել միայն գերության ժամանակ, բայց նա իրավացի չէ, երբ պնդում է, թե մեր պատմագիրը մոնղոլների համար գրագրությունը չպիտի անպատճառ տաճկերեն (=արաբերեն), կամ մի այլ լեզվով աներ և ոչ թե հայերեն, քանի որ՝ Հայաստանում գտնվելով, նրանք գործ ունեին հայերի հետ։ Այս գրելու պահին, երևի, բազմավաստակ գիտնականը մոռացության էր տվել մեր ժողովրդի բազմադարյան անցյալը, երբ Հայաստանը կարճատև կամ երկարատև նվաճող օտար բռնակալները հայերի հետ գրագրությունը միշտ վարել են իրենց պետական լեզվով (ապացույց՝ Պետական Մատենադարանում պահվող և հետզհետե լույս ընծայվող պարսկերեն ֆերմանները և բազմաթիվ վավերագրերը թուրքերեն, արաբերեն և այլն)։ Հայերն էլ իրենց հերթին օտար նվաճողների հետ գրավոր և բանավոր բանակցությունները, գրագրությունը վարել են տիրողների պետական լեզվով կամ տիրողների ու հպատակ հայերի համար հասկանալի մի այլ լեզվով։ Դեռ ոչ հեռու անցյալում հայ գյուղացիները ռուս չինովնիկների-պաշտոնյաների հետ հաղորդակցում էին ադրբեջաներեն։ Մ. Աբեղյանն ընդունում է, որ «նրանք անպայման ունեցել են իրենց թարգմանները հայերի հետ հարաբերության ժամանակ»։ Մեր կարծիքով, այդ թարգմաններն առաջին հերթին պետք է հայեր եղած լինեին, որոնք՝ քաջ տիրապետելով մայրենի լեզվին, գիտեին նաև տիրողների լեզուն, կամ նրանց համար հասկանալի մի այլ օտար լեզու։ Այդ օտար լեզուն կարող էր լինել և՛ սելջուկ-թուրքերենը, որ թաթարերենի հետ միևնույն լեզվախմբին է պատկանում, և՛ պարսկերենը, որն այն ժամանակ միջազգային լեզու էր համարվում Առաջավոր Ասիայում, և՛ արաբերենը, որ համատարած մահմեդական աշխարհում կրոնի և գիտության միակ լեզուն էր։

Կիրակոսի Պատմության մեջ մենք որոշ ակնարկումներ ունենք այն մասին, որ ինքը գոնե պարսկերեն գիտեր։ Այսպես, նա մեկ-մեկ պարսկերեն բառեր-անուններ հիշատակելիս՝ իսկույն ավելացնում է. «Զոր Խոյախանայ բերդ կոչէին, ըստ պարսկական բարբառոյն»***, կամ «ծառ մի սօսի, զոր ճանդարին կոչէին»****, կամ արաբերեն բառ ուտճ բերելիս՝ անմիջապես թարգմանում է հայերեն, օրինակ՝ «խալիֆա»—«զի խալիֆայն յետնամնաց ասի», կամ «խալիֆայն անուանէին, այսինքն՝ յետնամնաց ի Մահմետէ»*****, և նման այլևայլ

---

* Հայ միջնադարում տաճիկ չի նշանակում միայն արաբերեն, այլ ընդհանրապես օտար մահմեդական լեզու.— Կ. Մ.-Օ.։

** Մ. Աբեղյան, Հայոց հին գրակ. պատմ., գիրք երկրորդ, էջ 196 ծանոթ.։

*** Կիրակոս, անդ, էջ 313։

**** Անդ, էջ 235։

***** Կիրակոս, անդ, էջ 376, 378։ Տե՛ս նաև Վարդան Արևելցի՝ «Զի խալիֆայն յետնամնաց ասի ազգին Մահմետի», էջ 197։

բառեր ու դարձվածքներ։ Այս բառերի, դարձվածքների, ինչպես և անունների մի մասի նշանակությունը նա կարող էր՝ չիմանալով պարսկերենը, թուրքերենը կամ արաբերենը, փոխ առնել, գրավոր կամ բանավոր եղանակով ստանալ այլ հեղինակներից, գիտակ մարդկանցից, բայց կա մի հանգամանք, որ անպայման պիտի նկատի ունենալ այս հարցի պատասխանը տալիս։ Կիրակոսը «յաշխարհէն Գանձակայ» է, այսինքն՝ մի երկրամասի ծնունդ, որտեղ գոնե թուրքերենի և պարսկերենի բավարար գիտությունը անհրաժեշտ պիտի համարվեր ամեն մի հասարակական գործչի համար։ Եվ իսկապես, այս ժամանակաշրջանում իշխանության ղեկը գտնվում էր մահմեդական իշխանավորների ձեռքին, իսկ բնակչության մի ստվար մասը կազմված էր գլխավորապես պարսիկներից. «այս քաղաք (=Գանձակ,—Կ. Մ.-Օ.) բազմամբոխ լցեալ պարսկօք», որոնք հայերի հետ կողք կողքի էին ապրում։

ԺԱ—ԺԳ դդ. Փոքր Ասիայի, մասնավորապես Հայաստանի և Աղվանքի էթնիկական, ինչպես և քաղաքական-հասարակական պատկերը բավականաչափ փոփոխության էր ենթարկվել։ Բագրատունիների, Արծրունիների, Սյունյաց և այլ «անկախ» թագավորությունները տեղի էին տվել նորանոր էթնիկական կազմ ունեցող ժողովուրդների, որոնք այդ նույն տերիտորիայի վրա հիմնել էին իրենց նոր պետությունները։ Սելջուկների, Շահի Արմենների և այլ անկախ ու կիսանկախ պետություններում պետական-պաշտոնական, վարչական-դիվանական լեզուն գլխավորապես պարսկերենն էր, ապա «Ջիմրիի» ապստամբությունից հետո՝ թուրքերենը*։

ԺԳ դարում Փոքր Ասիայում, մասնավորապես Հայաստանում և Աղվանքում, թաթարական տիրապետության շրջանում պետական ամբողջ գրագրությունը նվաճողների և հպատակ ժողովուրդների ներկայացուցիչների հետ կատարվում էր թաթարերեն (պաշտոնական «յարլըխներ», «փայզաներ»), ապա պարսկերեն և թուրքերեն։ Եվ դա միանգամայն բնական է և օրինաչափական։ Թաթար-մոնղոլները մանավանդ էլխանության ժամանակաշրջանում՝ շատ տասնյակ տարիներ տիրելով Իրանին և շփվելով իրենցից կուլտուրապես շատ ավելի բարձր իրանցիների հետ, խաղաղ ճանապարհով ենթարկվել էին նրանց ազդեցությանը, յուրացրել նրանց «դիվանական» սիստեմն ու լեզուն, որը շուտով թաթարերենի հետ հավասար չափով, եթե ոչ ավելի, սկսում է գործադրվել Առաջավոր և Միջին Ասիայի բոլոր նվաճված երկրներում։ Այս առնչությամբ չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ էլխանների մեծ պետությունն իրականում մի պարսկական պետություն էր, որն ի մի էր հավաքել իրանցիներին և պարսկության զարգացման և իրանական կուլտուրայի հետագա բարգավաճման համար մեծ դեր էր կատարել։**

Թաթար-մոնղոլների զորքերի ոչ աննշան մասը կազմում էին թուրքերն ու պարսիկները։ Սրանք էին, գլխավորապես, հսկում Վանական վարդապետի, Կիրակոսի, սրա ընկերների և ընդհանրապես բոլոր գերիների վրա («արք պար-

---

* *Вл. Гордлевский,* Государство сельджуков Малой Азии, Москва, 1941, **էջ 139, 163 և այլուր. տե՛ս նաև** Сиасет - Намэ — Книга о правлении вазира XI столетия Низам-ал-Мулька, перев., введение в изучение памятника и примечания проф Б. Н. Заходера, Москва, **1949, էջ 242 հտ.. Այստեղ արաբերենն իշխում էր գլխավորապես կրոնի բնագավառում։**

** Bertold Spuler, Die Mongolen in Iran (Politik, Verwaltung und Kultur der Ilchanenzeit), 1220—1350, Berlin, **1955, էջ 59 և հտ., և այլուր։**

սիկք էին» և այլն), սրանք էին, որ՝ստանալով Թաթար իշխանավորների հրամանները, կարգադրում էին Կիրակոսին ի կատար ածել*։

Այս ամենը հիմք է տալիս մեզ կարծելու, որ Կիրակոսը՝ լինելով «յաշխարհէն Գանձակայ», պետք է բավարար չափով տիրապետեր պարսկերեն, հավանաբար նաև ադրբեջաներեն-Թուրքերեն լեզուներին։ Հակառակ դեպքում դժվարանում ենք բացատրել, Թե ինչու Թաթարների ընտրությունը կանգ է առել Կիրակոսի և ոչ Թե, ասենք, Մարկոս կամ Սոսթենես քահանաների վրա, որոնք Վանական վարդապետի հետ ավելի առաջ էին ներկայացել Մոլար-Նուինին։ Նախապատվությունը տվել են Կիրակոսին հենց այն բանի համար, որ սա հասկանում էր տիրողների գործածական լեզուները՝ պարսկերենն ու Թուրքերենը, և կարող էր նրանց օգտակար լինել «ի պէտս դպրութեան՝ գրել Թուղթ և ընթեռնուլ»։

Այս առնչությամբ մի հետաքրքրական հարց է առաջանում. Կիրակոսը՝ ամենայն մանրամասնությամբ նկարագրելով Թաթար-մոնղոլների նիստ ու կացը, հավատալիքները, Հայաստանից մինչև մոնղոլների կենտրոնը՝ Ղարաղորում, երկարաձգվող երԹուղին, ինչպես նաև տալով նրանց լեզվի բառաձևերի նմուշները, եղե՞լ է արդյոք անձամբ ԲաԹուի կամ Մանգու խանի, կամ Թեկուզ Հուլավու խանի մոտ, ասենք, Սմբատ զորավարի դեսպանագնացության ժամանակ, կամ ՀեԹում Թագավորի շքախմբում, կամ այլ առիԹով։

Ուշադիր հետևելով Կիրակոսի շարադրանքին՝ հաստատապես գալիս ենք այն եզրակացության, որ նա Թաթար-մոնղոլներին ճանաչել, դիտել և ուսումնասիրել է հայկական միջավայրում, իսկ երԹուղու, ինչպես և հեռավոր երկրների ժողովուրդների նիստ ու կացի մասին նա իր տեղեկությունները քաղել է ականատեսների բանավոր, Թերևս և գրավոր պատմածներից։ Եվ նա այդ ամենը չի ծածկում, այլ անկեղծությամբ խոստովանում է և հաճախակի հայտնում նույնիսկ իր աղբյուրը, օրինակ՝ Գրիգոր իշխան Մամիկոնյանը, ՀեԹում Թագավորը, «իշխանն Հասան, զոր Պռօշն անուանէին» և այլն։ Մինչդեռ եԹե ինքը՝ Կիրակոսը գնացած լիներ Մոնղոլիա և տեսած մեծ խաներին, նա չէր հապաղի և անպայման կհիշատակեր, ինչպես այդ անում է, երբ ասում է՝ «Եկին անցին ընդ դուռն Դարբանդայ յայսկոյս... արք մեծամեծք և գլխաւորք իշխանութեամբ, որոց անուանքն էին՝ Բալախա, Տուտհար, Ղուլի, զորս մեք իսկ տեսաք, Թոռունք Չանգըզ ղանին»**, կամ երբ ՀեԹում Թագավորը վերադարձի ճանապարհին գալիս է Վարդենիս գյուղը՝ «բազում իրս զարմանալիս և անծանօԹս պատմէր մեզ զբարբարոս ազգացն, զոր տեսեալ էր և լուեալ» կամ «բազում և այլ ինչ պատմէր Թագաւորն իմաստասէր ի խժական ազգացն, զոր բողաք մեք...»***։

Կիրակոսը քանիցս հիշատակում է այն հոգևորականների՝ վարդապետների, եպիսկոպոսների և քահանաների անունները, որոնք այս կամ այն հանձնարարությամբ կամ սոսկ որպես ՀեԹում Թագավորի, կամ նրա դեսպան Սմբատ զորավարի շքախմբի անդամներ, գնացած են եղել խանի մոտ****։ Սրանք Կիլիկիայից են գնացել։

---

* Մոնղոլ-Թաթար զորքերի էթնիկական կազմի, ինչպես նաև մոնղոլ-Թաթար պետության մեջ գործածվող լեզուների մասին տե՛ս Bertold Spuler, էջ 450—458 և այլուր. Б. Я. Владимирцов. Общественный строй монголов, Ленинград, 1934.

** Կիրակոս, անդ, էջ 374։

*** Անդ, էջ 371—372։

**** Անդ, էջ 369—370։

Արևելյան Հայաստանից էլ սակավ չեն եղել նման երթևեկությունները։ Այսպես, Բաթուի և Սարթախի մոտ են մեկնել նաև «մեծ իշխանն Խաչենոյ և կողմանցն Արցախու Հասան, զոր Ջալալն կոչէին գգուանօք... Եւ մեծարանօք ընկալաւ զնա և զոր ընդ նմա էին՝ զիշխանն Գրիգոր... զԴեսում իշխանն... և զվարդապետն Մարկոս*, և զեպիսկոպոսն Գրիգոր**, և տարեալ առ հայր իւր (իմա՝ Բաթու) մեծապատիւ, և ետ ի նա (իմա՝ Հասան,—Կ. Մ.-Օ.) զհայրենիքն իւր զՉարաբերդ և զԱկանայ**, և զԿառկառ, զոր հանեալ էին յառաջագոյն ի նմանէ՝ ազգն Թուրքաց և վրաց»***։

Կիրակոսի անունը ոչ մի դեսպանության մեջ չի հիշատակված, հակառակ դեպքում, ըստ իր սովորության, նա կարձանագրեր այդ փաստը։

Գերությունից ազատվելուց հետո Կիրակոսը, ինչպես վերը հիշեցինք, գալիս է Նոր Գետիկի վանքը, որ այրյացավեր էր դարձել թաթարների ասպատակությունից։ Թե որքան ժամանակ է մնում և աշխատում նա Նոր Գետիկում կամ ինչ հարաբերության մեջ է եղել փրկանքի միջոցով ազատագրված իր վարդապետի՝ Վանականի հետ, այդ ամենը մեզ հայտնի չէ։ Մենք միայն մի բան հաստատ գիտենք, որ նա մինչև իր կյանքի վերջը պաշտել է իր Վարդապետին և, հավանորեն, նաև անձնական հաղորդակցություն ունեցել նրա հետ։ Վանական վարդապետի մահն ու թաղումը նա նկարագրում է այնպիսի մանրամասնությամբ, որ թվում է, թե ինքն ականատես ու մասնակից է եղել և ապա մեծ շնչով և անմիջական զգացմունքով հորինված մի գունագեղ ներբողյան

---

* Անդ, էջ 358—359։ Արդյոք սա Վանականի աշակերտ և Կիրակոսի ընկերակից Մարկոս քահանան չէ՞, որ հետագայում ստանում է «զպատիւ վարդապետական ի նմանէ» (էջ 245)։ Ամենայն հավանականությամբ՝ նա է։ Վանականի ազատվելուց հետո՝ նա, երևի, մի առժամանակ էլ է մնում թաթարների մեջ, ապա ազատվում, գալիս է իր վարդապետի մոտ և սրանից վարդապետական կոչում ստանում։ Մարկոս վարդապետը՝ թաթար-մոնղոլների հետ շփվելով, անշուշտ, սովորած պիտի լինի նվաճողների լեզուն։ Անհավանական չէ, որ հենց այդ առավելության համար էլ Հասան Ջալալը կցում է նրան իր շքախմբին Բաթու խանի մոտ գնալիս։

**«Պատմութիւն վասն ազգին նետողաց» պատմագրական հուշարձանի հեղինակի հարցը լուծելիս՝ պետք է մեր կարծիքով՝ նկատի ունենալ նաև Հասան Ջալալի շքախմբի անդամ Գրիգոր եպիսկոպոսին, որը, թերևս, Ջալալի հայրենիք՝ Ականայիցն է (էջ 359—բե՞րդ է, գյուղ, թե՞ մենաստան-վանք), ինչպես և Վանականի աշակերտ և ազգական Գրիգորիս վարդապետին (էջ 348), որ, հավանաբար, նախորդի հետ միևնույն անձն է։ Զարմանալի զուգադիպությամբ Վանականի աշակերտ-ազգական Գրիգոր-Գրիգորիս վարդապետի անունը կապվում է Խաչենի Ականայ (գուցե Ականա՞ց—Ակա՞նց) վայրի, իսկ Վանականի աշակերտ «Գրիգոր գրչի»՝ «Վասն ազգին նետողաց»-ի հեղինակի անունը՝ Ականց անապատի հետ... Սկզբնաղբյուրներում այս վայրը կոչվում է Ականց (թերևս—Ականա՞յ). անբացատրելի է մնում, թե ինչու է Մ. Օրմանյանը «Ակներցի» է կոչում նրան, իսկ մյուս բանասերները «Ականց» նշելիս՝ փակագծերի մեջ անհապաղ գրում են՝ Կիլիկիա, որպեսզի նույնացնեն Ակներ վանքի հետ։ Այս միտումը նկատվում է նաև Հ. Ժամկոչյանի «Պատմութիւն վասն ազգին նետողաց» երկի հեղինակը» հետաքրքրական հոդվածի մեջ (Պետ. համալսարանի հրատ., Երևան, 1946)։ Ընդունելով, որ «Պատմ. վասն ազգին նետ.» հեղինակը Գրիգորն է, որ Երուսաղեմի ձեռագիրը հեղինակի ինքնագիրն է և գրված է 1273թ. Ականց անապատում, նա, Մ. Օրմանյանի օրինակին հետևելով՝ հիշյալ հուշարձանի հեղինակին հորջորջում է Ակներցի, բայց ոչ Մաղաքիա, այլ Գրիգոր։ «Ակներ»—«Ակներցի»—«Ականց» հորջորջումը, ըստ երևույթին, ծագում է Միխայել Ասորու «Յաղագս քահանայութեան» աշխատության հիշատակարանից, որտեղ ասված է՝ «Ստեփաննոս հայր Ականց անապատիս», իսկ հետևյալ պարբերության մեջ՝ «Ողորմեսցի հօր Ստեփաննոսի առաջնորդի սուրբ ուխտին Ակներոյ»...։ Ըստ իս՝ ավելի մոտ կլինի իրականությանը, եթե «Պատմութիւն վասն ազգին նետողաց» պատմագրական սկզբնաղբյուրի հեղինակի մականունը ոչ թե Ակներցի, այլ Ականացի կամ Ականցի հորջորջենք, կապելով այն Ջալալի «հայրենիք» Ականայի հետ։

*** Կիրակոս, անդ, էջ 359։

նվիրել իր «աստուածահաճոյ և մեծ վարդապետին», որը նման էր «անօսրաթև թռչնոցն մեղուի, որ թռչելով ի վերայ բազում և ազգի ազգի ծաղկանց ժողովէ ի նոցանէն զպիտանին և զօգտակարն ի պէտս ինքեանց, և ի կերակուր, և ի բժշկութիւն թագաւորաց և ռամկաց»*։

Կիրակոս վարդապետը ջերմ սիրով, խորին ակնածանքով և անհուն երախտագիտությամբ կապված էր ոչ միայն իր դաստիարակի, «հանճարեղ» վարդապետի հետ, այլև այն ամենի հետ, ինչ հիշեցնում էր վարդապետին, Նոր Գետիկը, սրա միաբաններին և մանավանդ սնընդակից, համշիրակ աշակերտակիցներին, իսկ սրանց մեջ առանձնապես «զիմաստուն և զհանճարեղ վարդապետն զՎարդան», «զարդիւնական վարդապետդ զՎարդան», «սուրբ հարազատն մեր և սքանչելի վարդապետն Վարդան»։ Սրանք ջերմագին սիրով կապված ընկերներ են եղել, որոնք ոչ միայն մտերմական հարաբերության մեջ են եղել միևնույն հարկի տակ, ոչ միայն իրար օգնել են ինչպես, օրինակ՝ Վարդանը տեղեկություններ է հաղորդել Կիրակոսին Հովհաննես Գառնեցու մասին (էջ 349), և նրա «բանքն արժանի էին հաւատարմութեան», ավելացնում է Պատմագիրը, այլև իրարից անջատված լինելով՝ թղթակցել են իրար հետ։ Կիրակոսն իր հերթին գրական պատվեր է տալիս Վարդանին՝ խնդրելով սրանից Երգ Երգոցի մեկնությունը, որը սա կատարում է 1265 թ.։ Վարդանն այդ մասին խոսում է իր Մեկնության առաջաբանի մեջ։

Նկատի ունենալով այդ առաջաբանի մեծ նշանակությունը որպես դարաշրջանի մտածելակերպ, գրական էտիկան պատկերող մի վավերագիր, և որպես սնընդակից ընկերների մտերմական կապերի ցայտուն արտահայտություն, հարկ ենք համարում փոքրիկ կրճատումներով մեջ բերել այդ վավերագիրը.

«Նման է արքայութիւնն աստուծոյ գանձի ծածկելոյ յագարակի, առ էտէրն գանձուն և արքայութեանն, զոր գտանէ խնդրողն և տալով զոր ունի և գնէ զագարակն, զոր ասել է և ընդ այլ ինչ զամենայն առակաւոր իմաստս, որ յամենայն աստուածաշունչ գիրս, որ է տէրունի, յորմէ ցանկացողն գնէ զիւրն՝ տալով զբոլոր գոյսն, որ է հաւատն, զի այն է մեր ամենայն։ Յորոց և դու նմանչես տէրունական** իր և անուն, հարազատ եղբայրն մեր Կիւրակոս, րաբունեաց պետ և բաղցուայնի կիրք մեր և մեծ մասն յուսոյն ի սուրբ եկեղեցի։ Որ և քում ըղձիցն կցորդել հրամայեցեր ի բան և գիր շարս՛ զհաւատն տեառն տալով՝ շնորհօք նորա հարել մեզ զմնացեալն յԵրգոց յԵրգոյն ի Գրիգորէ Նիւսացւոյ, որ մեծն է աղբիւր եկեղեցւոյ լնուլ առաջնորդութեամբ Որոգինեայ, համառօտել և զԳրիգորին ի սկզբանէ, տր ի վեր գտանի քան զկար մեր յոյժ. աստուծոյ միայն կարելի և քումդ աղօթից և յուսոյ, որ ի փշոյ և յապառաժ անապատէ, ի ծերունւոյ և յանապատ մտաց խնդրես պտուղ, ի ձեռն ոչ սակաւ վաստակոց, զոր առաք յանձն, ի մեծն յոյս վստահութեամբ, չարչարիլ մարմնով և արդարանալ հոգւով, ի քեզ տալ զգիր պարտուցն մեր, կրել միշտ առաջի աստուծոյ, և ջնջել անսպիապէս։ Եւ դու նմանեալ տանուտեառն, ճոխացիս աշակերտութեամբ արքայութեան, հանելով ի գանձէն հին ճաշակ, որ քաղցրագոյնն է, ո գիտէ և նոր ինչ...։

Իսկ դու մշակդ մորենեաց և աղտաղտ անբուսաբեր վայրաց, անոյշ մեզ ճաշակ յարաժամ և յոյս յաստուած, վարդապետդ Կիրակոս, որ հարկեցուցիչ

* Կիրակոս, անդ, էջ 345։

** «Կ'ակնարկէ Κυριακος անվանն ստուգաբանությունը, այն է, «տէրունական» (ծանոթություն Ղ. Ալիշանի)։

հրամանաւ և զուժիւն մահու՝ քեզ ասել զմերն մեծակայ, մուծեր զմեզ ի տուն գինւոյ և իւղոյ, խնձորոյ և նռնենեաց դրախտի...։ Եւ մեք քեզ շնորհ ունելով ջատ գոհութեամբ ձեռնարկեցաք ի յիղձս բաղձանաց հարցմանն քո, *զձեռն յուսոյն ի Քրիստոս տալով* մտաք յանհուն խորս և ելաք երէ բերաք ի վեր ինչ քեզ ցանկալի իրս, *որ գտանիմ յայսպիսի ծովուս, չունիմ ինչ ասել, տէր, գիտէ տուողն, որում երկրպագեսցես յանունյն ինչ և* զխալանսն ինչ համարեալ ուղղեսցես, օժանդակդ ինձ յամենայնի...»*։

*Այս վավերագիրը, նախ՝ լավագույն արտահայտությունն է երկու մտերիմ, իրար ամբողջ սրտով նվիրված ընկերների անկեղծ զգացմունքների և, երկրորդ՝ մի ցայտուն ապացույց այն հեղինակության, որ վայելում էր Կիրակոս վարդապետը ժամանակակիցների շրջանում, որպես* «ռաբունեաց պետ և բաղցուայնի կիրք մեր և մեծ մասն յուսոյն ի սուրբ եկեղեցի»։ *Սա քաղաքավարական արտահայտության մի սոսկ ձև չէ, այլ իրականության համապատասխան գնահատություն, որն իրավունք է տալիս պատմագիր վարդապետին պատվերներ տալու, «հրամայելու»։ Վարդանն ընդունում է «մշակի»—Կիրակոսի «հրամանը», և «գոհութեամբ ձեռնարկեցաք,—գրում է նա,—ի յիղձս բաղձանաց հարցմանն քո», բայց համեստորեն խնդրում է իր ընկերոջը՝ «զխալանսն ինձ համարեալ՝ ուղղեսցես, օժանդակդ ինձ յամենայնի»։*

*Թե ինչ հարաբերության մեջ է եղել մեր Պատմագիրը մյուս սննդակից ընկերների հետ, դժվարանում ենք բնորոշել համապատասխան վավերագրերի բացակայության պատճառով, բայց կարող ենք մի բան ասել, որ նա առիթ լինելիս միշտ էլ հիշատակել է նրանց՝ կցելով այս կամ այն դրվատական ածականը։*

* * *

*Որ Նոր Գետիկը Կիրակոսի մշտական կայանն է եղել, դրա լավագույն ապացույցը տալիս է մեզ հենց նրա Պատմությունը, որի մեջ բավականաչափ մանրամասն նկարագրված է այդ մենաստանի շինարարությունը և ներկայացված է վանահայրերի հաջորդականությունը։ Վանքի հիմնարկների վիմագիր արձանագրություններից մի երկուսը պատմում են մեզ նաև Կիրակոսի մասին։ Արձանագրություններից մեկը, որի մասին մենք արդեն խոսել ենք, թվագրված է ՉԹ (1260)։ Դա նշանակում է, որ այդ թվականին Կիրակոսն ապրելիս է եղել Նոր Գետիկում։ Հիմք ընդունելով այն, որ Հովհաննես Արմանեցին ազատագրում է «ի խնդրո Կիրակոս վարդապետին» «զԳետկա ժողովուրդս ի հարկէ որ տարին յաթոռն»**, կարծում են, որ «Կիրակոսը եղել է վանքի հեղինակավոր անձնավորություններից։ Թերևս նա էլ Մխիթարի նման ղեկավարում էր վանքի դպրոցի կյանքը»***։ Եթե անգամ այս ենթադրությունը լրիվ համապատասխան չլինի իրական-պատմական եղելությանը, այնուամենայնիվ ակներև է մի բան, որ նա երկար տարիներ ապրել է Նոր Գետիկում և մեծ հարգանք վայելել վանականների միջավայրում։*

---

* Ղ. Ալիշան, *Հայապատում, Բ, էջ 535—537։ Հ. Ոսկյան, Հովհաննես Վանական և յուր դպրոցը, էջ 97—99։*

** Հռիփսիմէ Ջանփոլադյան, *Մխիթար Գոշ և Նոր Գետիկի վանքը, նույն տեղում, էջ 160—161։*

*** *Անդ, էջ 143։*

Կարծողներ կան, որ Կիրակոսը՝ ազդեցիկ վարդապետ լինելով հանդերձ, վարած է եղել նաև հոգևոր բարձր պաշտոններ։ Այսպես, Ղ. Ալիշանը՝ անդրադառնալով այդ հարցին, գրում է. «Կոչիլն ի Վարդանայ՝ րաբունեաց պետ, և բանք ինչ իւր վասն գրելոյ գիր զգուշութեան ընդդէմ Դաւթի Մոլորեցուցչի, որպէս գրէրն և Վանական, տան կարծել, եթէ և ինքն Կիրակոս առաջնորդ կամ տեսուչ կարգեալ էր ուխտի ուրեք վանաց կամ եկեղեցւոյ, զի իշխանութեամբ իմն գրէր սաստիւ և բանադրանօք. նոյն դարձեալ նշմարի և ի բանէ պատասխանատուութեան արևելեան վարդապետաց առ արևմտեայս՝ վասն խնդրոյ հաւատոյ հարցելոյ ի Հռովմայ։ Հաւանագոյն թուի ի միում վանօրէից Աղուանից հռչակելոցն անդ յայնմ դարու՝ կեցեալ զվերջին ամս կենացն, մանաւանդ թէ յանապատ տեղիս. և զայս կարծեցուցանէ միւս բան Վարդանայ առ նա ինքն Կիրակոս գրեալ ի վերջաբանի մեկնութեան Երգոց Երգոյն յամի 1265, կոչելով զուսումնակիցն «մշակ մորենեաց և աղտաղտ անբուսաբեր վայրաց»*։

Այստեղից աներկբա է մի պատմական իրողություն, որ Կիրակոսն իր մասնակցությունն է հանդես բերել հայ եկեղեցական կյանքը զբաղեցնող, խանգարող կամ վրդովող բազմաթիվ դեպքերի մեջ։ Այսպես՝ «Վասն խնդրոյն, որ եղև ի մէջ քրիստոնէից վասն հոգւոյն սրբոյ» բռնկած հակաճառության մեջ Կիրակոսը կողմնակից է Մեծ Հայքի և Արևելյան վարդապետների՝ Վանականի, Վարդան վարդապետի, Հովսեփ վարդապետի և ուրիշների ձևակերպման՝ «Այսպիսի խոստովանութիւնս ընդունելի է յեկեղեցիս Հայաստանեայց, և յոգիս Կիրակոսի, և համարձակ արժան է քարոզել՝ զհոգի ի հօրէ ելեալ, և յորդւոյ երևեալ։ Զայս պատասխանեցաք թղթոյն Արևմտից, և մեք ի սոյն հաւատացեալ կամք շնորհօք երրորդութեանն սրբոյ, որում փառք յաւիտեանս, ամէն»**։

Այս դեպքը տեղի է ունեցել 1251 թ., երբ Կոստանդին կաթողիկոսը՝ ստանալով Ինոկենտիոս Հռոմի պապի թուղթը, ժողով է գումարում Սիս քաղաքում, ապա դիմում է «ի կողմանս Արևելից ի Մեծ Հայք, և առ գիտնական վարդապետն Վանական... առ Վարդան վարդապետն (իմա՝ Արևելցին,—Կ. Մ.-Օ.) և առ Յովսեփ, և առ այլս» և խնդրում է նրանց պատասխանը։ Այստեղ բնորոշն այն է, որ՝ նախ, այդ երևելի վարդապետները՝ Վանականն ու նրա սիրած աշակերտներն են՝ ներառյալ և Կիրակոսը, և երկրորդ՝ անուններով թվարկած հոգևորականների մեջ չեն հիշվում եպիսկոպոսներ, առաջնորդներ կամ վանահայրեր, այլ սոսկ վարդապետներ,«գիտնական և երևելի» վարդապետներ, որոնք կրոնա-դավանաբանական հարցերում շատ ավելի ազդեցիկ և հեղինակավոր էին քան եկեղեցական բարձրաստիճան պաշտոնյաները։ Հետևաբար Ղ. Ալիշանի այն փաստարկը, որ այս պատասխանը, ինչպես և Դավիթ Մոլորեցուցչի դեմ «սաստիւ և բանադրանօք» գրած թուղթը, «տան կարծել, եթէ և ինքն Կիրակոս առաջնորդ կամ տեսուչ կարգեալ էր յուխտի ուրեք վանաց կամ եկեղեցւոյ», չի կարող ծանրակշիռ համարվել և լուսավորել պատմագիր վարդապետի կյանքի այս մութ հատվածը։

1250 թ. Վանական վարդապետը բանադրում է Դավիթ Մոլորեցուցչին։ Վանականին միանում է նաև նրա աշակերտ Կիրակոս վարդապետը, որը՝ իր վարդապետից անկախ, նույնպես բանադրում է չրաղացպան աղանդավորին՝

* Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ Համառօտ պատմութիւն, Վենետիկ, 1865, Յառաջաբան, էջ Գ։

** Կիրակոս, անդ, էջ 333։

«գրեցաք և մեք նմանապէս նովին սաստիւ, և բանադրանօք,—գրում է նա,—և առաքեցաք ի յոլով տեղիս»*։

Այս ժամանակաշրջանում (1250—1251) Կիրակոսը դեռևս Նոր Գետիկի մենաստանում էր հաստատված։

1255 թ. վերադարձի ճանապարհին՝ Հեթում թագավորն իջևանում է իր նախկին հյուրընկալ Քուրդ իշխանի հարկի տակ Վարդենիս գյուղում (Արագածոտն—«հանդէպ լերին Արայի»)։ Այստեղ է, որ Կիրակոս վարդապետը տեսակցում է Հեթում թագավորի հետ, լսում նրա պատմությունը՝ «Բազում իրս զարմանալիս և անծանօթս պատմէր մեզ զբարբարոս ազգաց, զոր տեսեալ էր և լուեալ»... (էջ 371) «Բազում և այլ ինչ պատմէր թագաւորն իմաստասէր ի խժական ազգացն, զոր թողաք մեք, զի մի յաւելորդ համարեսցի»**։ Այս տեսակցության ժամանակ Կիրակոսը, ամենայն հավանականությամբ, ստացած պիտի լինի Հեթում թագավորի կամ Կիլիկեցի մի այլ ազդեցիկ մարդու՝ աշխարհականի կամ հոգևորականի, հրավերը Կիլիկիա գնալու. կամ գուցե մի այլ առաքելությամբ է Կիլիկիա մեկնել։ Այդ ամենը մթության քողով ծածկված է։ Մենք միայն մի բան հաստատ գիտենք. Կիրակոս վարդապետը 1260 թ. դեռևս Նոր Գետիկումն է աշխատում։ Դրա ապացույցը վերոհիշյալ արձանագրությունն է ժողովրդին աթոռահարկից ազատելու մասին։ Բացի սրանից՝ նրա 60-ական թվականների հասարակական-եկեղեցական գործունեության մասին մենք այլ տեղեկություն չունենք։

* * *

Որոշ տեղեկություններ են պահպանվել Կիրակոսի Պատմության, ինչպես և այլ գրական հուշարձանների մեջ մեր պատմագրի գրական աշխատանքների մասին։ Այսպես, Կիրակոսն իր Պատմությունը գրել է սկսում ՈՂ—1241 թ. մայիսի 19-ին, Հոգեգալստյան տոնի օրը, ինչպես ճշտել է Ղ. Ալիշանը***, իսկ թե երբ է ավարտել իր երկի շարադրանքը, դժվար է նույնպիսի կոնկրետությամբ որոշել։ Պարզ է միայն մի բան, որ նա 1241 թ. սկսած՝ շուրջ մի քառորդ դար պրպտել է, ուսումնասիրել մեր պատմական անցյալի գրավոր սկզբնաղբյուրները, ինչպես նաև իրեն ժամանակակից քաղաքական-հասարակական կյանքի իրադարձությունները և գրել մեզ ժառանգություն մնացած պատմագրական արժեքավոր երկասիրությունը։

Գրական-եկեղեցական մի այլ հուշարձանից մենք իմանում ենք, որ «նուաստ ոգի Կիրակոս վարդապետ Արևելցին», որ մեր իսկ Պատմագիրն է ուրիշ հորջորջմամբ, հավաքել է նորանոր նյութեր և լրացրել մինչ այդ հայտնի «Յայսմաւուրք»-ը։ Ահա թե ինչ է ասված այդտեղ. «Եւ եղև իրակութիւնս այս ի թուիս ՉԺԸ (1268/69), յաշխարհիս Կիլիկեցւոց, ի Սիս մայրաքաղաքի, ի թագաւորութեան Հեթմոյ և յառաջին ամի իշխանորդւոյ նորին Լևոնի. ԿԶ (66)

---

* Կիրակոս, անդ, էջ 327։ Դավթի դեմ պայքարի են դուրս գալիս նաև Հաղբատի եպիսկոպոս Համազասպը, Դաղիվանքի եպ. Գրիգորիսը, ինչպես և «վարդապետն Վարդան զոր Յօժար որդին կոչէին»։ Սա արդյոք Վարդան Արևելցին չէ՞։ Հավանաբար նա է։ Մ. Չամչյանն այդպես էլ կարծում է, գրելով՝ «Մեծն Վարդան Բարձրբերդցին (իմա՝ Արևելցին,—Կ. Մ.-Օ.), որ նստէր ի վանս որ Անդրէի, ելեալ գնացին առ նա (իմա՝ Դավիթ, —Կ. Մ.-Օ.)» ...Մ. Չամչյան, Պատմութիւն, հտ. Գ, էջ 233։

** Կիրակոս, անդ, էջ 372։

*** Կիրակոս, անդ, էջ 10, 69, 278. Ղ. Ալիշան, Վենետիկի հրատ., Յառաջաբան, էջ Ե։

ամի կենաց պանդխտութեան մերոյ, յորում աւարտն եղև...»*։ Հետևաբար նա եղել է Սիս մայրաքաղաքում, ինչպես տեսանք վերը, շարունակել է գրական աշխատանքով զբաղվել, լրացրել է «Յայսմաւուրք»-ը՝ ավելացնելով «ի նախակարգեալ Տօնապատճառս», («Յայսմաւուրք»,—ըստ Ղ. Ալիշանի)՝ 112 (այլ օր. 170) ճառ և ավարտել է 1268/9 թ.։ Այս աշխատանքի հետ կապված է նաև մի այլ տարեթիվ, այն է՝ «ի թուականին հայոց ՉԲ (1253) աշխատեալ յաւելի»։ Արդյոք ճի՞շտ է ընդօրինակել և հրապարակել բազմավաստակ Ղ. Ալիշանը՝ «ի թուականին ՉԲ»․ եթե ճիշտ է, այդ դեպքում իմաստազրկվում է առաջին հիշատակարանի ՉԺԸ (գուցե ՉԺԷ) թվականը։ Մի աշխատություն չի կարող մեկ ավարտվել ՉԲ թվին, մեկ՝ ՉԺԸ։ Մենք տրամադիր ենք կարծելու, որ երկրորդ հիշատակարանում պետք է կարդալ՝ «ի թուականէն ՉԲ», որով հիշատակարանները միմյանց կլրացնեն և կիմաստավորվեն, այն է՝ «Յայսմաւուրքի» նյութերը Կիրակոսը ձեռնարկել է լրացնել ՉԲ (1253) թվականին և ավարտել է ՉԺԸ (ՉԺԷ) թ., այսինքն՝ մոտ 15—16 տարի ընդմիջումներով շարունակել է նյութեր հավաքել եկեղեցական ամենօրյա գործածության համար շատ կարևոր այդ մատյանը լրացնելու։ Երկարատև են թվում թե՛ Պատմության և թե՛ «Յայսմաւուրքի» գծով կատարած աշխատանքները, բայց դա, մեր կարծիքով, բացատրվում է այն հանգամանքով, որ Կիրակոսը թերևս գերազանցապես վարդապետական-մանկավարժական գործունեությամբ է զբաղված եղել։

* * *

Հնարավորության սահմաններում մենք կարողացանք ճշտել Կիրակոս վարդապետի զանազան տորչորչումները, հայրենիքը—ծննդավայրը, ինչպես և ծննդյան մոտավոր թվականը, նշեցինք նրա կյանքի տարեգրությունը՝ ուսումնառության տարիները, դպրոցները, ո՛ր վարդապետի ղեկավարությամբ է վարժվել, որքան ժամանակ, գերության և ազատագրության տարիները, ինչպես և քաղաքական-հասարակական-գրական գործունեության զանազան թվականները։ Մեզ հայտնի վերջին տարեթիվը 1268/9 թվականն է, երբ նա ավարտում է «Յայսմաւուրքի» լրացումները։ Ամենայն հավանականությամբ՝ նա այդ թվականին կամ փոքր ինչ ուշ վերադառնում է իր վանական օջախը, ինչպես արել էր անցյալում իր աստանդական կյանքի ընթացքում։ Իր մահկանացուն Կիրակոսը կնքել է 1271 թվականին, ինչպես հաղորդում է իր դասընկեր Գրիգոր Ականցին. «Ի թուականին հայոց Չ և Ի փոխեցան ի Քրիստոս փառաւոր վարդապետն հայոց Վարդան և Կիրակոս»**,—գրում է նա։ Դա միակ վկայությունն է Կիրակոսի մահվան մասին։

Մ. Չամչյանը՝ հիմք ընդունելով վերոհիշյալ վկայությունը, գրում է. «Վախճանեցաւ ընդ աւուրս ընդ այնոսիկ ի թուին հայոց ՉԻ աշակերտն Վանականի Կիրակոս վարդապետ Գանձակեցի, որ բնակէր ի վանս Գետկայ»***։ Վկայակոչելով Մ. Չամչյանի այս խոսքերը, Հ. Ոսկյանը եզրակացնում է՝ «Հ. Չամչյան Գանձակեցի պատմագրին ցուրտ շիրիմը կփնտռէ Գետիկ վանքին մէջ»****։ Նման եզրակացության համար հիմք չի տալիս Մ. Չամչյանի աղբյուրը։

* Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 472։

** «Պատմութիւն վասն ազգին նետողաց», ի լոյս ընծայեաց Ք. Պ., Պետերբուրգ, 1870, էջ 52։

*** Մ. Չամչյան, Պատմութիւն հայոց, հատ. Գ, էջ 271։

**** Հ. Ոսկյան, Հովհաննես Վանական և այլն, էջ 101։

Կիրակոսի մահվան տարեթիվը Ղ. Ալիշանը համարում է «զուգաթիւ ընդ Վարդանայ՝ յամի 1272 (ՉԻԱ), անցեալ զեօթանասունամենիւք»*։ Ղ. Ալիշանի կարծիքին միանում է Ք. Պատկանյանը, որը՝ նկատի ունենալով այն, որ Կիրակոսի Պատմությունը հանկարծ ընդհատվում է Աբաղայի և Բերքայի պատերազմը նկարագրելիս՝ հավանական է համարում, որ մահը կամ մի այլ աղետ թույլ չեն տվել նրան ավարտելու ձեռնարկած աշխատությունը։ «Վերջին դեպքում հարկ կլինի փոքր ինչ կրճատել նրա կյանքի տևողությունը»**։ Ինչո՞ւ. չի բացատրված։

Ղ. Ալիշանի կարծիքին են միանում նաև Հ. Աճառյանը***, Հռ. Ջանփոլադյանը**** և այլք, սակայն առաջինը՝ մեր արդյունաշատ հայկաբանը, ինձ անհայտ աղբյուրից ավելացնում է՝ «Վարդան վարդապետից 50 օր հետո»։ Հ. Ոսկյանն ընդհակառակը՝ կարծում է, որ Կիրակոսը Վարդանից շուտ է մեռել։ Նրա այս եզրահանգմանը հիմք են տվել Երգ Երգոցի մեկնությանը կցված՝ Վարդանի առաջաբանում առկա «մի քանի ակնարկությունները» այն մասին, որ «յուր հարազատն ավելի կանուխ մեռած է քան 1271 թ.։ Դարձյալ նկատի կրնա առնվել այն պարագան,—գրում է նա,—որ Գանձակեցին հանկարծ յուր պատմության թելը կկտրե»*****, ինչպես ենթադրում էր նաև Ք. Պատկանյանը։

Հ. Ոսկյանի այս կռահումները թռուցիկ տպավորության արդյունք են։ Նախ՝ Վարդանն Արևելցին իր «Յառաջաբանը—ձօնը» գրելիս՝ միանգամայն համոզված էր, որ իր սննդակից ընկերը ողջ և առողջ է, քանի որ կատարելով նրա «Հրամանը», խնդրում է նրան «զխալանսն ինձ համարեալ՝ ուղղեսցես, օժանդակդ ինձ յամենայնի»։ Հանգուցյալին բնականաբար Վարդանը չէր կարող դիմել այսպիսի խնդիրքով։ Երկրորդ՝ ճիշտ է, Գանձակեցին հանկարծակի է կտրում իր Պատմության թելը, բայց «հանկարծակի» նա կարող էր այդ թելը կտրել և շատ ավելի ուշ... Չէ՞ որ Պատմագիրը օրը օրին չէ գրանցել պատմական իրադարձությունները, այսինքն՝ նստել և այսօրվա դեպքերը այսօր գրել, իսկ վաղվանը՝ վաղը... Գանձակեցու Պատմությունը հեղինակի օրագիրը չէ, այլ մի պատմագրական երկասիրություն, որը բովանդակում է մոտ մի հազար տարվա պատմություն։ Ապրելով ԺԳ դարի վերջին տասնամյակներում՝ նա կարող էր «հանկարծամահ» լինել, ասենք, պավեշտական Զոմզոմայի և Հովհաննես Սարկավագի զվարճալի միջադեպը պատմելիս և այլն։ Հետևաբար Պատմության շարադրանքի անսպասելի ընդհատումը չի կարող որպես հիմք ճանաչվել նրա կյանքի վերջին տարին ճշտորոշելու հարցում։ Այս հարցը վերջնականա-

* Կիրակոս, Վենետ. հրատ., Յառաջաբան, էջ Բ։

** История монголов по армянским источникам, вып. II,—Киракос Гандзакеци. Перевод и объяснения К. П. Патканова, СПБ, 1874, էջ III—IV. Հ. Ոսկյանը՝ մեջ բերելով Ք. Պատկանյանի այս տողերը, ավելացնում է իր կողմից՝ առնելով նմանապես ընդհանուր չակերտների մեջ՝ «այսինքն թե 1271-էն ավելի կանուխ մեռած է»։ Հույժ յուրովի մեկնաբանություն Հ. Ոսկյանի կողմից, որ ոչ մի կերպ չի նպաստում հարցի լուծմանը։

*** Հր. Աճառյան, Անձնանունների բառարան, հատ. Բ, էջ 625։ Ի դեպ Հ. Աճառյանի Անձնանունների բառարանի (հատ. Բ) մեջ շփոթված են 13-րդ դ. ապրող Կիրակոսները՝ Գոշավանքցին, Երզնկացին, որ նմանապես մեռել է 1272 թ. (այլ տեղեկությամբ դերեզմանը գտնվում է Երզնկայի մի եկեղեցում), բայց սա, ինչպես տեսանք, ըստ Նղչ. կոչվում է նաև «Արևելցի», Գանձակեցին, որը նույնպես «մեռել է 1272 թ.»։

**** Հռ. Ջանփոլադյան, Մխիթար Գոշ և այլն, նույն տեղում, էջ 143։

***** Հ. Ոսկյան, անդ, էջ 101։

պես կլուսաբանվի, երբ նոր աղբյուրներ, թարմ տվյալներ երևան գան։ Մինչ այդ՝ մենք ընդունում ենք Գրիգոր Ականցու (Ակներցու) վկայությունը որպես իրականության համապատասխանող, այսինքն՝ Կիրակոսն ու Վարդանը կնքել են իրենց մահկանացուն 1271 թ.։

---

# Բ

# ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՈՐԻՆՎԱԾՔԻ ՈՒ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

## ա. ԳՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ

*Կիրակոս Գանձակեցու գրական վաստակը քանակապես մեծ չէ եղած։ Ինչպես Պատմագրի, այնպես էլ ժամանակակիցների վկայությամբ՝ նա գրել է իր Հայոց պատմությունը և մի շարք թղթակցություններ է ունեցել Վարդապետի և սնդակիցների (օրինակ՝ Վարդան Արևելցու) հետ, ապա հորինել ու տարածել է իր Թուղթ-բանադրանքը Դավիթ Ծարեցու դեմ*։ Սրանք վեճի առարկա չեն կարող լինել և անառարկելիորեն պատկանում են Պատմագրի գրչին։*

*Բանասիրական պրպտումներում, սակայն, մեր ԺԳ դարի գրական հուշարձաններից մի երկուսը վերագրվում են պատմագիր Կիրակոսին՝ նույնացնելով նրան Կիրակոս Արևելցու կամ Կիրակոս Գետիկցու—«Կիրակոս վարդապետ Արևելցի ի վանաց Գետկայ»—հետ**։ Մենք միանգամայն համակարծիք ենք այդ բանասերներին և նոր իրական փաստերով ու փաստարկումներով հիմնավորել ենք մեր նախորդների առաջ քաշած վարկածը, միաժամանակ անհրաժեշտ ենք համարել քննության ենթարկելու այդ երկու կարծեցյալ հեղինակների ոճերը, ըստ այդ գրվածքների***։ Ոճի նմանությունն ու հարազատությունն առավել ևս կհաստատի բանասերների ենթադրությունը հիշյալ երկու հեղինակի նույնության մասին։*

*Կիրակոս Արևելցուն վերագրվում են****.*

---

* Վարդան, *Պատմութիւն, էջ 192. Երգ Երգոցի առաջաբան.* Կիրակոս, *Պատմ., էջ* **327**։

** *Տես* Ղ. Ալիշան, *Հայապատում։ Մինչդեռ Պատմ. Վենետ. հրատ.* Յառաջաբանի *մեջ՝ խոսելով Արևելցու «Յայսմաւուրքի» մասին, Ալիշանը Գանձակեցուն և Արևելցուն չի նույնացնում. «Ես գի ոչ այլ ոք և ոչ մեք ասեմք Գանձակեցւոյն զգործս զայս. այլ առ հանդիպակցութեան անուանն և ժամանակին և աշխարհին՝ ոչ խղճեցաք յիշումն առնել առ տեղեաւս. մինչև ապագայն ցուցցէ մեզ ստուգիւ զվարս Արևելցւոյդ, յորոյ անուն գտանին և բանք խրատականք և Թուղթք» (էջ Ժ.)*։

*** *Տես էջ Թ—ԺԱ, ԻԵ—ԻԶ*։

**** *Անհրաժեշտ է պրպտումներ կատարել զանազան մատենադարաններում, թերևս ի հայտ բերվեն այլևայլ երգեր, գանձեր, որոնք նույնպես վերագրվում են Կիրակոս Արևելցուն կամ Գետիկցուն*։

*ա.* Տոնապատճառ-Տոնացույց (=«Յայսմաւուրք»), *որի մասին խոսել ենք վերը**, *ուստի հարկ չենք համարում կրկնել ասածներս, մանավանդ որ Կիրակոս վարդ. Արևելցու վաստակը* «Յայսմաւուրք» *կազմելու գործում ճանաչված է****։*

*բ. Այս* Տոնացույցի — «Յայսմաւուրք»-ի *մեջ զետեղված է Պողոս եպիսկոպոսի վարքը՝* «Յայսմ աւուր յիշատակ է Պաւղոսի եպիսկոպոսի», *որը վերջանում է հետևյալով. «ԶԿիրակոս վարդապետ Արևելցի ի վանաց Գետկցի զյարմարիչ և զլուսաւորիչ այսմ կտակիս»*****։*

*գ.* «Աստվածածնի վերափոխման պատմական շարականը», *այբուբենի թվով տուն ունի, իսկ ամենավերջին հատվածը հոգում է՝* «Կիրակոս վարդա*պետ»******։*

*Արդ՝ ի մի ամփոփենք Կիրակոս Գանձակեցու հավաստի, ինչպես և բանասիրության կողմից նրան վերագրվող գրական երկերը.*

*1. Հայոց Պատմություն.*

*2. Բանադրական թուղթ ընդդեմ Դավիթ Ծարեցու.*

*3. Թղթեր Վանական վարդապետին, Վարդան Արևելցուն և այլ ժամանակիցներին (չեն պահպանվել).*

*4. Տոնապատճառ-Տոնացույց=«Յայսմաւուրք», որը լրացրել և համարբերել է.*

*5. Պողոս եպիսկոպոսի վարքը և*

*6. Աստվածածնի վերափոխման պատմական շարականը։*

*Կիրակոսի երկերի այս ցանկի մեջ պատմագրական տեսակետից նվազարժեք են վերջին՝* 4, 5 և 6 գործերը: *Սրանք «հետևակ պարզ ոճով» գրված, բովանդակությամբ էլ կաղապարային գրական հուշարձաններ են, որոնց նմանները անչափ շատ են մեր միջնադարյան գրականության մեջ։*

**Թղթերը,** *անշուշտ, կարևոր կրոնական-հասարակական, ինչպես և գրական արժեք են ներկայացրել, եթե նրանց մասին դատելու լինենք այն հակիրճ ու կցկտուր ակնարկություններից, որոնք առկա են Կիրակոսի Պատմության և Երզ. Երզնցի Վարդան Արևելցու մեկնության առաջաբանի մեջ*******։ Դժբախտաբար այդ թղթերից և ոչ մեկը ցարդ երևան չէ հանված, որպեսզի գաղափար կազմենք այդ ժանրի երկեր հորինելու Կիրակոսի ձիրք ու արվեստի մասին։*

*Կիրակոսի հեղինակային շնորհքի և կարողության մասին մենք կարող ենք հիմնականում դատողություններ անել՝ մանրամասն քննության առնելով միայն ու միայն նրա մեծարժեք պատմագրական երկը՝ Հայոց Պատմությունը։ Այս երկեի պատմագրական հուշարձանի արժեքն ու նշանակությունը մենք քննության ենք առել ներկա աշխատության հատուկ գլուխներում։ Այստեղ կցանկանայինք միայն հնարավորության սահմաններում համառոտակի լուսաբանել Պատմության հորինվածքի, ինչպես և ամբողջականության հարցը։*

---

* *Տես էջ Թ—ԺԱ.*

** *Յայսմաւուրք ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յայսմաւուրաց Տէր Իսրայէլի, Կ. Պոլիս, 1834, Գրիգոր դպիր Փեշտըմալճյանի «Յառաջաբանից»:*

*** Հ. Տաշյան, *Ցուցակ, № 219 (հին թիվ՝ 7, 1591 թ.), էջ 564։*

**** *Շարական հոգևոր երգոց եկեղեցւոյս Հայաստանեայց յօրինեալ, Էջմիածին, 1861 թ., էջ 747—753:* Ղ. Ալիշան, *Հայապատում, էջ 108։*

***** Ղ. Ալիշան, *Հայապատում, Բ, էջ 535—537,* Հ. Ոսկյան, *Հովհաննես Վանական, էջ 97—100, տես նաև մեր Առաջաբանը էջ ԻԲ—ԻԳ։*

*I,*

*Այս կապակցությամբ կարևոր հարցերից մեկն է, թե ինչ խորագիր է ունեցել Կիրակոսի սույն մեծարժեք երկասիրությունը։ Մեր գրական-գիտական հասարակայնության մեջ ընդհանուր տարածում է գտել հետևյալ խորագիրը՝* Կիրակոս Գանձակեցու Հայոց Պատմություն *կամ* «Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», *ինչպես վերնագրել է պատմության առաջին հրատարակիչ Ոսկան Տեր-Հովհաննիսյանն Երևանցին, կամ* «Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ Համառօտ պատմութիւն ի սրբոյն Գրիգորէ ցաւուրս իւր յուսաբանեալ», *ըստ Վենետիկյան հրատարակության (Ղ. Ալիշան)։*

*Կիրակոսի Պատմության այս խորագիրը գալիս է հետին դարերից, թերևս հրատարակիչներից, քանի որ շուրջ չորս տասնյակ ձեռագրերից և ոչ մեկը նման վերնագիր չունի։ Տեսնենք, ինչ են ասում ձեռագրական տվյալները։ Պատմության խորագիրը ըստ բաղդատության հետևյալ պատկերն է ներկայացնում.* abcdefghii$^1$jklmnopqstuvw Համառօտ *(*dj *համառաւտ,* g *համառ[օտ],* l *համառօտք)* պատմութիւն *(*stv *Վ. պատմութիւնք)* ժամանակաց ի սրբոյն *(*d *ի սրբոյ)* Գրիգորէ մինչև ցյետին *(*dftvw *յետին, Վh ի յետին,* u *յետինս փխ յետին աւուրս)* աւուրս *(*ii$^1$jpq *աւուրն,* w *ժամանակիս)* թևացեալ, *(*o *թուեցեալ),* stu *թըւացեալ,* v*Վ. թուացեալ)* արարեալ *(*stv *ասացեալ)* Կիրակոսի *(*bejqv *Կիւրակոսի)* ընտրեալ *(*stv *մեծ և ընտրեալ)* վարդապետի ի մեծահռչակ ուխտն *(*ii$^1$jpq *մեծահռչակ ուխտին,* stv *ի մեծահռչակ սբ ուխտն,* u *ուխտէն)* Գետկայ *(*o *Գետարգել)*։*

*Բաղդատական տախտակը հաստատապես վկայում է, որ, նախ՝ Կիրակոսի երկը երբեք չի կոչվել Հայոց պատմություն, երկրորդ՝ Կիրակոսը երբեք չի հորջորջվել Գանձակեցի, երրորդ՝ Պատմությունը Կիրակոսը գրել է «ի մեծահռչակ ուխտն Գետկայ»։ Ձեռագրերում պահպանված Պատմության խորագրից պետք է անպայման հանել, որպես հետին դարերի միջարկություններ՝ «ընտրեալ», կամ «մեծ և ընտրեալ» հորջորջումները, որովհետև հազիվ թե նա ինքը նման անհամեստ հավակնություններ ունեցած լինի։ Մնացած բոլոր տարբերությունները կրում են ձեռագրական այլընթերցվածների բնույթ։*

*Ձեռագրական տվյալների բաղդատության հիման վրա մեր կատարած դիտողությունները մեզ բերում են այն եզրակացության, որ ԺԳ դարի այս պատմագրական հուշարձանը, ամենայն հավանականությամբ, սկզբնապես, թերևս հենց հեղինակի գրչի տակ, կոչվել է՝* «Համառօտ պատմութիւն ժամանակաց ի սրբոյն Գրիգորէ մինչև ցյետին աւուրս թևացեալ. արարեալ Կիւրակոսի** վարդապետի ի մեծահռչակ ուխտն Գետկայ»: *Այս խորագիրը շատ ավելի հարազատ ու համապատասխան է Պատմության բովանդակությանը, քանի որ Պատմության երկրորդ մասը՝ Լևոնի թագավորությունից սկսած և մանավանդ Զաքարյանների շրջանում, ոչ միայն Պատմություն Հայոց է, այլ ամբողջ Առաջավոր Ասիայի և Անդրկովկասի՝ Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի բավականաչափ հետաքրքրական պատմությունը։*

---

* *Հ.* Ոսկյանը *գրում է. «Պատմագրութիւնս լավագույն ձեռագիրներու մեջ կկրե հետևյալ խորագիրը՝ «Համառօտ պատմութիւնք. ժամանակաց ի սրբոյն Գրիգորէ մինչև ի յետին աւուրս* տուեցեալ, *արարեալ Կիւրակոսի ընտրեալ վարդապետի ի մեծահռչակ ուխտէն Գետկայ» (էջ 104)։*

*Մոտ քառասուն ձեռագիրներ ենք տեսել կամ նրանց նկարագրությունը կարդացել, բայց ոչ մի տեղ չենք հանդիպել «*տուեցեալ*» փխ թևացեալ, թուացեալ։ Եվ ինչ է նշանակում «տուեցեալ»։*

** *Հետագայում ավելի ընդունված՝ Կիրակոսի։*

Ելնելով վերը բերված փաստարկներից՝ մենք հակամետ կլինեինք Պատմությունը վերնագրել այսպես.

«ԿԻՐԱԿՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ի սրբոյն Գրիգորէ մինչև ցյետին աւուրս բևացեալ», *իսկ իրորդ էջի վրա տալ ըստ ձեռագրական տվյալների կազմած Պատմության ընդարձակ խորագիրը։*

*Պատմության խորագրի հարցը պարզելուց հետո անցնենք Պատմության գլխակարգությանը, կամ Պատմության գլուխների վերնագրերի հարցին։*

*Այս հարցում էլ ձեռագրական տվյալները համերաշխ չեն։ Ձեռագրերի մի մասը չի համարակալում գլուխները, մյուսը՝ համարակալում է, ընդ որում բաժանում է նաև ըստ հատվածների, բայց կան և այնպիսիները, որոնք Պատմության սկզբին տալիս են «Ցանկը»՝ համարակալած գլխակարգությունը։ Ցանկի ձեռագրական տվյալների բազմազանությունը մեզ հեռու կտաներ, մանավանդ եթե նկատի ունենանք, որ Պատմության ձեռագիր օրինակների ամբողջականությունն էլ հաճախ տատանվում է՝ մերթ այս, մերթ այն գլուխն է հապաված, կամ Պատմությունից հանված, կամ նրանից առաջ դասավորված, ուստի և գլուխների համարակալումը, նրանց հերթականությունը հաճախ փոփոխվում է։ Այնուամենայնիվ, մեր հրատարակության մեջ պահպանում ենք համարակալության կարգը, ելնելով հետևյալից։*

*Կիրակոսն իր Պատմությունը բաժանում է* Յառաջաբանի *և երկու հիմնական մասի՝ ա.* Մինչ-Լևոնյան շրջանի, *որ ինքը հավաքել է «ի նախագրելոց» և բ.* Իր ժամանակների պատմությունը՝ *«է որ ականջալուր, և է որ ականատես»։ Ի նախագրելոց հավաքած մինչ-լևոնյան շրջանի պատմության մասի մեջ նա զետեղել է նաև Ներսես Շնորհալու հանրածանոթ «Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ»-ն, իսկ երկրորդ մասում զետեղված են մի շարք այլ վավերագրեր (գլխ. ԽԱ, ԽԲ, ԽԳ, Ծ, ԾԱ, ԾԲ), որոնք լրացնում և լուսաբանում են Պատմության մեջ շարադրած իրադարձությունները։ Նկատի ունենալով այն, որ վերոհիշյալ վավերագրերն էլ ունեն համարակալում իր Պատմության ընդհանուր գլխակարգության մեջ, մենք «Գիրն» էլ համարակալում ենք իբրև Բ գլուխ։ Այս եղանակով Պատմությունը կունենա. «Յառաջաբան» և Ա—ԿԵ գլուխները։*

*Ինչպես ասացինք, Կիրակոսի Պատմության գլխակարգությունը հաճախ փոփոխության է ենթարկվում։ Դա առաջանում է նրանից, որ Պատմությունից մի երկու գլուխ կամ լրիվ բացակայում են, կամ նախորդում Պատմության շարադրանքին, որպես ինքնուրույն հուշարձաններ։ Այսպես, Պատմությանը նախորդում են* bcdii[1]jpq, *Վիեն. № 574, Լոնդոնի № 5260—№ 119, Երուսաղեմի № 483 ձեռագրերում հետևյալ գլ. գլ. ԽԱ.* «Վասն կանոնական հրամանաց», *ԽԲ.* «Թուղթ» *և ԽԳ.* «Սահմանք կանոնականք»-ը *կամ* gno *չեն ընդօրինակված գլ. գլ. Ծ.* «Վասն խնդրոյն, որ եղև ի մէջ քրիստոնէից վասն հոգւոյն աստուծոյ», ԾԱ. «Խոստովանութիւն ճշմարիտ հաւատոյ ուղղափառաց» *և ԾԲ.* «Խրատ դաւանութեան Վանական վարդապետին», *կամ հանված է* «Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ»:

*Այստեղից էլ առաջ է քաշվում Կիրակոսի Պատմության ամբողջականության հարցը, այսինքն՝ լրիվ և ավարտվա՞ծ է հասել մեզ այդ Պատմությունը, թե՞ թերի։*

*Ինչպես հայտնի է, Կիրակոսի Պատմության մեր ձեռքը հասած խմբագրությունը սկսում է Գրիգոր Լուսավորչից և հասնում է մինչև Աբաղայի և Բերքեի*

*պատերազմը ներառյալ՝ «և հարին զբանակս իւրեանց առ ափն Կուր գետոյ, և կալան սոքա աստի և նոքա անտի՝ ամրացուցեալ զեզր գետոյն ցանկով և փոսիւք խորագունիւք»։ Այսպիսով պատերազմող կողմերը համապատասխան դիրքեր են գրավում։ Ստեղծվում է մի այնպիսի կացություն՝ որ ժամ առ ժամ սպասում ես հարձակման, կամ զորքերը, ասես, համաձայնության եկած՝ նահանջում են։ Բնականաբար այդ նկարագրությունից հետո հարց է առաջանում՝ ինչո՞վ վերջացավ այդ պատերազմը, կամ թերևս պատերազմը վերջացել է, բայց պակասում է համապատասխան նկարագրությունը։ Այդպես է խորհրդածում Ղ. Ալիշանը, երբ գրում է, թե պատմությունը կամ գրքի հեղինակը հասցրել է մինչև 1265 թ. «առանց նշանակի վերջաբանութեան.* կամ զի եղեալ էր ի մտի նշանակել *և զոր յետ այնր դէպս՝ եթէ յերկարակեաց լինէր՝ և գտանէր պատեհ ժամանակի և հանգստեան, և կամ թէ և գրեաց ինչ աւարտաբանութիւն և չեհաս առ մեզ»*։ Հետևաբար, ըստ Ղ. Ալիշանի, Կիրակոսի Պատմությունը չի ավարտված, թերի է։ Պատմագիրը մտադիր է եղած Պատմությունն ավարտել, կամ նույնիսկ գրել է «ավարտաբանությունը», բայց դա մեզ չի հասել։ Ղ. Ալիշանին համակարծիք է նաև Ք. Պատկանյանը, երբ գրում է.* «Рассказ же свой он прерывает неожиданно на событиях 1265 года, не кончив начатого повествования о войне хана Апага с Беркаем и не предварив читателя о конце труда, как это делают другие писатели. Можно полагать, что труд его не во всей целости дошел до нас, или, что гораздо вероятнее, смерть или другая катастрофа не дала ему кончить начатого сочинения»**.

*Վերը հիշված բանասերներից միանգամայն տարբեր տեսակետ է զարգացնում Հ. Ոսկյանը, սակայն նրա փաստարկումները համոզիչ չեն, հակասական են ու անստույգ տվյալների վրա հիմնած։ Վերցնենք հենց նրա առաջին պնդումը։ Կիրակոսը որպես ականատես ցանկանում է սերունդներին պատմել թաթարների ապստամբությունների մասին, «թեև իրեն (իմա՛ Կիրակոսին,— Կ. Մ.-Օ.) ծանոթ եղած է թե այս մասին Հովհ. Վանական և Վարդան գրած են պատմական աշխատություններ...»****։

*Ապա Հ. Ոսկյանը՝ հետևելով Ղ. Ալիշանին, ընդունում է բազմահմուտ բանասերի սրամիտ բացատրությունը այն մասին, թե երբ է սկսել Կիրակոսը շարադրել իր Պատմությունը, այն է՝ 1241 թ. (ըստ Ոսկյանի՝ 1240/1241) մայիսի 19-ին։ Այս հանգույցը լուծված համարելով՝ նա ջանք է թափում բացատրելու, թե մինչև ո՞ր թվականն է հասցրել Կիրակոսն իր Պատմությունը։ Նա նույնպես ընդունում է, որ Կիրակոսը 1265 թ. Աբաղա և Բերքե խաների պատերազմի պատմությամբ «կզոցե ընդարձակածավալ Թատերաբեմին վարագույրը՝ այլևս չբանալու համար... Հանկարծակի կկտրի յուր թելը, վասն զի կիսկատար կմնայ Ապաղայի և Բերքայի կռվույն հետևությունը և վերջաբան մը կպակսի, որ հառաջաբանը նկատելով պատշաճավոր կերևա»։ Ուրեմն, պակասավո՞ր, թերի է Պատմությունը, «տարակուսում է» նա։ «Իմ պատասխանս ի ճպաստ ամբողջու-*

---

* *Վենետ. տպ., Յառաջաբան, էջ Ե։*

** История монголов по армянским источникам, вып. второй, заключающий в себе извлечения из истории *Киракоса Гандзакеци.* Перевод и объяснения К. П. Патканова. С.-Петербург, 1874, стр. 3–4.

*** *Այդ մասին տես մեր այս աշխատության մեջ։*

թյան է։ Կիրակոս յուր վերջակետն դրած է հոն, ուր կավարտի այժմ յուր պատմությունը»։ Ապա իր այս ենթադրությունը հիմնավորելու համար վկայակոչում է Վարդան Արևելցու քանիցս հիշված խոսքերը՝ «Ի ՈՁԵ (1236) թուականին Հայոց մինչև ի ՉԺԴ (1265), յորում եմքս, զոր ինչ արարին ազգ նետողաց... գրեալ են... Վանական... և հարազատն մեր Կիրակոս...» և Կիրակոսի «Յառաջաբանի» հետևյալ խոսքերը՝ «Ի նմանէ (իմա՛ ի Գրիգորէ,—Կ. Մ.-Օ.) սկսեալ մինչև առ մեզ, յորում են թուականն մեր ՉԺԴ, սուղ ինչ համառօտիւք» (էջ 104)։

Նախ, պիտի ասենք, որ ընդգծածս «յորում են թուականն մեր ՉԺԴ» բառերն առկա են միայն Վիեն. Մխ. № 124 ձեռագրի մեջ, մյուսները չունին։ Ամենայն հավանականությամբ դրանք միջարկություններ են Վարդանի այս հատվածի ազդեցությամբ, և երկրորդ՝ Վարդանի այս վկայությունն էլ պարզորոշություն չի մտցնում հարցի լուծման մեջ։

Ընդունենք, որ Կիրակոսը Պատմության շարադրանքը ընդհատել է այդ տարիներ տեղը պատերազմի պատմությամբ, բայց ե՞րբ, պատերազմի ո՞ր շրջանում, 1265 թ. ո՞ր ամիսներին... Այդ հարցը կարոտ է մնում լուսաբանության։ Դարձյալ, եթե այդ էլ համարենք լուծված, հարց է առաջանում, Կիրակոսի Պատմությունն ունեցե՞լ է վերջաբան։

Պատմության զարգացման ընթացքի անսպասելի ընդհատումը և վերջաբանի բացակայությունը տարակուսանքի առիթ է տվել և՛ արդի մեր բանասերներին, և՛ Պատմության գրիչներից շատերին։ Այսպես, ԺԷ դարի գրիչներ՝ Հովսեփ աբեղան (ì—№ 1768), Հակոբ քահանան (ì[1]—№ 1769), Զաքարեն ու տեր Գրիգոր Վաղարշապատցին (բ—№ 3071) և Սարգիսը (Լոնդ. Or. № 5260—№ 119) իրենց տարակուսանքը հայտնում են «փոսիւք խորագունիւք»-ին կցված հետ. հիշատակագրությամբ. «Բայց ո՛վ եղբայր այն ինչ զոր մինչ աստ վարեցաւ զպատմութիւն թաթարին և այլ ոչ ևս, զի ոչ կայր յօրինակի իմում վասն այն ոչ կարացի իմանալ զկատարածն թէ որպէս էր՝ և Քր. մարդասիրի փառք յաւիտեանս. ամէն»։

ԺԷ դ. գրիչների մի այլ խումբ «փոսիւք խորագունիւք»-ից հետո հիշատակագրում է. «Ով եղբայրք է թուղթ պարապ թողի զի օրինակն չկայր, ապա թէ զօրինակն գտանես զպակասն լցուցանես, բայց աղէկ հաշուես զի պարապար գայ և թուղթն պարապ չթողուս և մեղաւորս յիշես։ Գտի եղի տեղն» (?)։ Ղ. Ալիշանը, հավանաբար այս ձեռագիրը կամ սրանից ընդօրինակածը, կամ սրա մայր օրինակն է նկատի ունեցել՝ գրելով Յառաջաբանի էջ Ե ծանոթությունը։

Երուսաղեմի Մատենադարանի № 493 ձեռ. (1778—1780) գրիչ Եղիա քահանան հիշատակագրում է. «Ով եղբայր, զի է թուղթ պարապ թողի, զի օրինակն Բերքային չկայր։ Ապա թէ զօրինակն գտանես, զպակասն լցուսցես։

Ո՛վ պատուական հայր և եղբարք իմ. զի օրինակն պակաս էր. միք թողաք, եթէ առ ում գտանիցի, նա լցուսցէ զսորա պակասն»։

Տ—№ 1899 (1676 թ.) գրիչ Պողոս Գավառացին Պատմության վերջում մի քանի թերթ «պարապ» է թողել շարունակելու համար։

Վերոհիշյալ գրիչների վկայությունները ցույց են տալիս, որ տարակուսողների թիվը ավելանում է, բայց հարցի լուծումը մի քայլ էլ առաջ չի գնում։

Մեր կարծիքով տարակուսանքը որոշ չափով կվերանա և հարցը փոքր ինչ կլուսաբանվի, եթե մենք դիմենք հենց սկզբնաղբյուրների օգնության։ Այստեղ մենք նկատի ունենք Կիրակոս Գանձակեցուն, Վարդան Արևելցուն և Ռաշիդ-ադդինին։

Վարդան Արևելցին՝ գծելով Կիրակոսի Պատմության մեջ նետողաց ազգին վերաբերող ժամանակագրական շրջանակները, գրում է. «Արդ ի վեց հարիւր ութսուն և հինգ թուականէն հայոց մինչև յեօթն հարիւր չորեքտասանս, յորում եմք մեք, զոր ինչ արարին ազգն նետողաց... ընդ Պարսս և ընդ Աղուանս, ընդ Հայս և ընդ Վիրս, և ընդ աշխարհն Հոռոմոց կոչեցեալ... գրեալ են... Վանականն վարդապետ, և հարազատն մեր՝ Կիրակոս վարդապետն...»*։

Վարդանի վկայությունն են սովորաբար հիմք ընդունում Կիրակոսի Պատմության մեջ նկարագրված քաղաքական իրադարձությունների վերջին թվականը որոշելու համար (Ալիշան, Պատկանյան, Ոսկյան)։ Սակայն, Վարդանի հենց առաջին թվականը (1236) անընդունելի է, քանի որ Կիրակոսը սկսում է թաթարների մասին պատմել ոչ թե 1236 թ., այլ 1220 թ.։ Ահա թե ինչ է գրում նա «Վասն ելանելոյ թաթար զօրուն» գլխում. «Ի վեց հարիւր վաթսուն և ինն թուականին, մինչդեռ հպարտացեալ էին վիրք յաղթութեամբն, զոր յաղթեցին տաճկաց՝ յինքեանս կորզելով բազում գաւառս Հայոց ի նոցանէ, յանկարծակի յեղակարծ ժամու յոլով գունդս զօրու ծանու՝ ամենայն կազմութեամբ, ելեալ ընդ դուռն Դարբանդայ ուժգին դիմեցմամբ և եկեալ յաշխարհն Աղուանից, գալ անցանել յաշխարհս Հայոց և Վրաց...»** 1220—1225 թվականներին թաթար-մոնղոլները Սաբատա Բահատուրի (Sübütäi), Ջարմաղունի առաջնորդությամբ երեք անգամ ասպատակել են Անդրկովկասը։

Այս քաղաքական-ռազմական իրադարձության մասին տեղյակ է և ինքը՝ Վարդանը, երբ գրում է. «Իսկ թաթարն կոչեցեալ, որ եկեալ էր յառաջագոյն սակաւուք ի վեց հարիւր վաթսուն և ինն թուին՝ կամեցաւ դառնալ ի վեց հարիւր եօթանասուն և մի, և ոչ վստահացաւ։ Յաւելեալ յինքն անհուն բազմութիւնըն՝ առաջնորդ ունելով զՋարմըղանն կոչեցեալ զօրապետ, գայ ի Գանձակ Շահաստան»***։

Ինչպես տեսնում ենք, Վարդանն այստեղ էլ, ըստ իր սովորության, համառոտում է Կիրակոսի ընդարձակ նկարագրությունը՝ հարանելով մի փոքրիկ պարբերությամբ։ Հետևաբար Վարդանի վկայությունն այն մասին, թե նետողաց ազգի արարքները 1236 թ. սկսած մանրամասն գրել են Վանականն ու Կիրակոսը, չի կարող վերաբերել վերջինիս, քանի որ սա թաթարների-նետողների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ է հաղորդում դեռևս 1220 թվականից։ Նույն չափով Վարդանի վկայության երկրորդ մասը, այն է մինչև ի ՉԺԴ (1265) չի պատշաճում Վանականին, քանի որ սա վախճանվել էր դեռևս 1251 թ., իսկ Կիրակոսի նկատմամբ այդ տարեթիվը հենց Վարդանի վկայությամբ կարոտ է վերանայման։ Սակայն այդ մասին փոքր ինչ հետո։

Մոնղոլների արշավանքներն ու նվաճումները Առաջավոր Ասիայում և Անդրկովկասում բավականաչափ մանրապատում նկարագրել է ԺԳ—ԺԴ դարի ականավոր պատմագիր Ռաշիդ-ադ-դինը****։ Հետաքրքրականն այն է, որ պար-

---

* Վարդան, անդ, էջ 192։

** Կիրակոս, անդ, էջ 201։

*** Վարդան, անդ, էջ 189։

**** Մենք օգտվում ենք ռուսերեն նորագույն թարգմանությունից՝ Рашид-ад-дин. Сборник летописей, т. III перевод с персидского А. К. Арендса, под редакцией *А. А. Ромаскевича, Е. Э. Бертельса и А. Ю. Якубовского.* Издательство Акад. Наук, Москва — Ленинград, 1946.

Ռաշիդ-ադ-դինը ծն. մոտ. 1247 թ., մեռ. 1318 թ. հուլիսի 17-ին։

սին պատմագիրն իր վկայություններով գալիս է կամ հաստատելու Կիրակոսի պատմածը, կամ լրացնելու նրա ակնարկությունները։ Այս տեսագծով նրա տվյալները հնարավորություն են տալիս մեզ ճշտելու նաև Կիրակոսի Պատմության վերջին թվականը, որ այնքան տարակուսանքների առիթ է տվել մեր բանասերներին ու պատմաբաններին։

Մանգու խանի մահվանից հետո (1259 թ. սեպտեմբեր)՝ մոնղոլական աշխարհակալության մեջ ծայր են առնում կատաղի գահակալական կռիվներ Մանգու խանի եղբայրների՝ Ղուբիլայի (Qubilai) և Արիք Բուղայի (Aryq Boga) միջև։ Հուլավուն անցնում է Ղուբիլայի, իսկ Բերքեն (Ոսկի Հորդա) Արիք Բուղայի կողմը։

Այս ներքին պատերազմը միայն գահակալական չէր. նա երկու տարբեր կուլտուրաների, տարբեր տնտեսակարգերի հակամարտության բնույթ էր կրում, ընդ որում Ղուբիլան և Հուլավուն հին կուլտուրական նստակյաց ժողովուրդների (Չինաստան, Իրան, Առաջավոր Ասիա), իսկ Արիք Բուղան և Բերքեն՝ աստանդական-վաչկատուն-քոչվորական ցեղերի (Միջին Ասիա) ներկայացուցիչներ էին հանդիսանում։ Բերքեն ընդունել էր մահմեդականություն և սերտ հարաբերության մեջ էր մահմեդական Եգիպտոսի, ինչպես և խալիֆի հետ ու ամեն կերպ ցանկանում էր Հուլավուին, որպես իր կրտսեր եղբորը ստորադասել իրեն. մինչդեռ Հուլավուն՝ պահպանելով հայրենի հեթանոսական հավատքը, բարյացակամ էր տրամադրված դեպի քրիստոնյաները և սերտ հարաբերության մեջ էր Բյուզանդիայի Միխայել 8-րդ կայսրի հետ. միաժամանակ գրավելով Բաղդադը և սպանելով խալիֆին (1259), վերացրել էր խալիֆաթը։ Նա ոչնչացրել էր նաև Բերքեի ազգական զորավարներին՝ Ղուլին, Բալախային (Bulqaï), Տուտհարին և ուրիշներին, որոնք գտնվում էին Հուլավուի զորքերի մեջ։

1261 թ. Բերքեի զորագնդերը Դերբենդի վրայով արշավում են Հուլավուի վրա, ներխուժելով Անդրկովկաս՝ Վրաստան, Աղվանք և Հայաստան։ Ընդհարումներով կռիվները տևում են 5 տարի շարունակ, ընդ որում ընդհարումները հաճախ տեղի էին ունենում ձմռան ամիսներին, «զի յամառայինն ոչ կարէին վասն տօթոյն և գետայարոյց լինելոյն»*։ Այսպես. 1262/3 թթ. ձմռան ամիսներին Հուլավուի զորքերն անցնում են Թերեքը, փախուստի մատնում Նողայի զորագնդին և գրավում նրանց ամբողջ ունեցվածքը, կանանց ու երեխաներին։ Բերքեն բազմաթիվ ուժերով օգնության է գալիս, վանում հակառակորդին։ Շատերը ոչնչանում են ցրտից, ոչ պակաս թվով մարդիկ խեղդվում, որովհետև սառույցը կոտրվել էր**։

1263 թ. Հուլավուն զբաղվում է իր երկրի բարեկարգությամբ և շինարարու-

* Կիրակոս, անդ, էջ 396։

** «Եւ ել ընդդէմ նորա Բերքայն... և եղև խառնուրդ պատերազմին առ մեծի գետոյն (խմա Թեր[ե]՚քն Եթիլ,— Կ. Մ.-Օ.), և բազումք անկան յերկոցունց կողմանցն։ Եւս առաւել ի կողմանէ Հուլաւուին, զի պաղեցան ի սաստկութենէ ձեռնն և ցրտին» (Կիրակոս, էջ 395)։

Բերքեն հարձակվում է Հուլավուի զորաբանակի վրա... „На берегу реки Терека они от зари до конца дня бились жестоким боем... Наша (խմա՛ Հուլավուի) рать обратилась вспять. Река Терек замерзла, и стали переправляться через нее. Вдруг [лед] проломился и множество войска утонуло“. Рашид, III, էջ 60։

*թյամբ (քաղաք, ապարանք, կրատուն), միաժամանակ զորքեր է հավաքում ու զինվում Բերքեի դեմ ելնելու**։*

*1265 թ. մեռնում է Հուլավուն (ըստ Ռաշիդի՝ 1265 թ. փետրվարի 8-ին)***։*

*1265 թ. մեռնում է Տողուս խաթունը (ըստ Ռաշիդի՝ 1265 թ. հունիսի 17-ին)։*

*1265 թ. (ըստ Ռաշիդի՝ 1265 թ. հունիսի 19-ին)****, *ըստ այլոց հունիս-հուլիս ամիսներին, գահ է բարձրանում Աբաղա խանը։*

*Ռաշիդ-ադ-դինի վկայության համաձայն, Աբաղա-խանը ձմեռել է Մազանդարանում և միայն 1265 թ. գարնանը եկել Թավրիզ մայրաքաղաքը*****։*

*1265 թ. (ամռան կամ աշնան ամիսներին) Աբաղա-խանն ամուսնանում է բյուզանդական կայսր Միխայել VIII դուստր Դեսպինայի****** Δέσποινα *(Մարիա) հետ, որին մեծ պատվով բերում է մի պատգամավորություն Անտիոքի պատրիարքի գլխավորությամբ։*

*Ինչպես տեսնում ենք, մինչև այստեղ Կիրակոսի և Ռաշիդի վկայությունները բավականաչափ համերաշխ են։ Սրանից հետո Կիրակոսի հաղորդումը շատ սեղմ է, ուստի կիսատ-պռատի կամ եղծվածի տպավորություն է թողնում, մինչդեռ այս վերջին պարբերությունն էլ համապատասխանում է Ռաշիդի վկայությանը։*

*Աբաղայի գահակալության հենց սկզբներին Բերքեի կարգադրությամբ՝ Նողայը Դերբենդի վրայով նորից հարձակվում է Իլխանի զորամասերի վրա Տուտհարի արյան վրեժն առնելու։ Նրա դեմ է ելնում Հուլավուի կրտսեր որդի Յուշումութը (ըստ Վարդանի՝ Իսմութ)։ Կուր գետի ափին կատաղի կռիվ է սկսվում։ Նողայը՝ կորցնելով մի աչքը, նահանջում է Շիրվան։ Աբաղան անցնում է գետը, մյուս կողմից ահագին զորքով վրա է հասնում Բերքեն. Աբաղան վերադառնում է գետի այս ափը և հրամայում է գետանցը կտրել—ոչնչացնել։ Չկարողանալով գետն անցնել՝ Բերքեն շարժվում է Թիֆլիսի վրա, որպեսզի այնտեղից անցնի, բայց ճանապարհին հիվանդանում է և մեռնում. դիակը տանում են Բաթուի մայրաքաղաք Սարայը և այնտեղ թաղում։*

«В 664 году [1265/66] Абага-хан приказал.—*շարունակում է Ռաշիդ-ադ-դինը,*—чтобы по ту сторону реки Куры от Далан-наура до степи Курдман, смежной с рекой Курой, построили вал и вырыли глубокие рвы. На защиту их назначили отряд монголов и мусульман, и с обеих сторон стали ходить туда и обратно караваны»******.

*Ռազմական գործերը վերջացնելուց հետո՝ Աբաղան 1266/67 թթ. ձմեռն անց է կացնում Մազանդարանում և Գուրգանում։*

*Այս միևնույն իրադարձության մասին հաղորդում է նաև Վարդան Արևելցին. «Ի մտանել թուին* եօթն հարիւր հնգետասան *(1266) կողմնակալն հիւսիսի՝ կոչեցեալն Բարքայ... լուեալ զմահուանէ մեծի Հուլաւուին՝ գայ բազմութեամբ*

---

* Կիրակոս, *անդ, էջ 396—397։* Рашид-ад-дин, III, *էջ 61։ (Ըստ Ռաշիդի՝ նա կառուցում է Մարաղայում նաև մի աստղադիտարան)։*

** Կիրակոս, *անդ, 398։* Рашид, III *էջ 61—62։*

*** Рашид, III, *էջ 64։*

**** Рашид, III *էջ 67։*

***** *Ռաշիդ-ադ-դինը, (հ. III էջ 65) սխալմամբ համարում է նրան Տրապիզոնդի թագավորի աղջիկը։* B. Spuler, *էջ 65—67։*

****** Рашид, III, *էջ 68։*

առ Կուր գետով և ցուցանէ զինքն յայսմ կողմանէ կացեալ զօրացն Ապաղային և եղբօր իւրոյ Իսմուտին՝ իբր թէ կենդանի է յետ մահու հօր նոցա (տպ. իւրոյ)։ Եւ զայս կոխէ զնոսա... յորմէ զարհուրեալ յայսմ կողմանէ կացեալցն՝ ցանկեն զերկայնութիւն գետոյն աստի, զոր Շիբարն կոչէին՝ և զգուշացան ամենայն պատրաստութեամբ զատուրս ձմերայնոյն»*։ Ապա Վարդանը հաղորդում է, որ նույն տարվա ամառը Բերքեն «վճարէ զկեանս»։

Ինչպես տեսնում ենք, ԺԳ դարի մեր այս պատմագիրները համերաշխորեն միմյանց լրացնում են, անգամ տեղ-տեղ գործածելով միևնույն դեպքի համար նույն բառերն ու դարձվածքները, օրինակ՝ Կիրակոսը գրում է՝ «Ամրացուցեալ զեզր գետոյն ցանկով և փոսիւք խորագունիւք», Վարդանը՝ «Ցանկեն զերկայնութիւն գետոյն աստի» և Ռաշիդ-ադ-դինը՝ «построили вал и вырыли глубокие рвы».

Այս իրադարձությունը տեղի է ունեցել՝ ըստ Ռաշիդ-ադ-դինի, 1265/66 թ., ըստ Վարդանի՝ 1265/1266 թթ., և ըստ Կիրակոսի՝ Մոսկվայի տպ. և մի շարք ձեռագրերի համեմատ ՉԺԴ թուականին հայոց, ըստ Վենետ. տպ. և մի այլ խումբ ձեռագրերի՝ յՉԺԵ—«յեօթն հարիւր և հնգետասան թւին հայոց»—1265/66 թ.։

Այսպիսով, մենք կարծում ենք, որ Կիրակոսի Պատմության վերջին թվականը պիտի լինի 715 թ. հ. (1266), հետևաբար Կիրակոսի բնագիրը պիտի վերականգնել ըստ վենետիկյան խմբի ձեռագրերի, այն է՝ «մինչ յՉԺԵ թուականն հայոց»։

Կիրակոսի Պատմությունը վերջաբան ունեցե՞լ է, թե ոչ։ Մեր պատմագիրների սովորության նայած՝ գուցե, ունեցել է, բայց կարող է գրած էլ չլինել։ Վերջին իրադարձության նկարագրության մեջ Կիրակոսին ոչ պատշաճ հապճեպություն ենք նկատում. բացակայում է նրա ծավալուն, հանգամանային, շըրջագետ նկարագրությունը... Տապալողականությունն առաջացած կարող է լինել կամ հեղինակի վատառողջության, կամ մի այլ անակնկալ դիպվածի հետեվանքով...

* * *

Եթե Կիրակոսի Պատմության վերջաբանի հարցը դեռևս կարող է հատուկ քննության առարկա դառնալ և թեր ու դեմ կարծիքներ առաջացնել, ապա այդ հուշարձանի մեջ առկա են մի երկու ոչ նվազ կարևոր ակնարկումներ, որոնց հիման վրա կարելի է ասել, որ Պատմության բնագիրն անաղարտ չէ հասել մեզ։ Մի երկու հատված վերականգնել ենք ձեռագրերի բաղդատությամբ և տեղադրել բնագրի մեջ։ Սակայն կա մի կարևոր ակնարկում, որը պարզ ցույց է տալիս, թե Պատմության բնագիրն այդ մասում պակասավոր է։ Այդ պակասավոր մասը վերաբերում է մեծատուն վաճառական Ումեկի միջադեպին։

Վարդան Արևելցին վկայում է. «Արդ ի վեց հարիւր ինսուն և մի թուին Բաչու-նուինն փոխեաց զիշխանութիւնն Չարմաղանին և էառ զԿարնոյ քաղաք՝ հանեալ անտի զայրն երևելի, մեծատուն և երկիւղած ի տեառնէ՝ զՈւմեկն և զազգականս նորա՝ զորդիս պարոն Յոհաննու զՍտեփանոս և զեղբարսն իւր հինգ»**։

* Վարդան, անդ, էջ 213։

** Անդ, էջ 193։

Կիրակոսն այդ մասին գրում է. «Բայց մեծարեցաւ ի նոցանէ այր մի մեծատոհմ վաճառական, Ումեկ անուն, զոր ինքեանք Ասիլ կոչէին. այր բարեգործ, զոր երբեմն յիշատակեցաք, որ ապրեցաւ յաւերիլն Կարնոյ քաղաքի ի Թաթարէն հանդերձ որդւովն Յովհաննու՝ Ստեփաննոսի և եղբարբ իւրովք»*։

Ընդգծված բառերից պարզ երևում է, որ մեր Պատմագիրը մի ուրիշ տեղ էլ է գրել Ումեկի մասին՝ («զոր երբեմն յիշատակեցաք»)։ Այդ հիշատակությունը պատշաճ կլիներ տեսնել հետևյալ գլուխներում՝ կամ «Վասն աւերման Թէոդուպօլեայ (Կարնոյ քաղաք)», կամ «Վասն ասպատակելոյ նորա ընդ կողմանս Վասպուրականի ի վերայ բազում գաւառաց»։ Սակայն այստեղ էլ չկա, մանավանդ այս երկրորդ գլխում, որ այնքան հարմար կգար նման հիշատակության համար. «Եւ տան հրաման վասն շինութեան քաղաքին Կարնոյ, Թէոդուպօլեայ։ Եւ ժողովեցան ցրուեալքն և ղօղեալքն և զերծեալքն ի զերութենէ, կոչեցին և զեպիսկոպոս քաղաքին զտէր Սարգիս, զոր եբեր իշխանն Շահնշահ՝ որդին Զաքարէի, և չոգաւ։ Եւ սկսան վերստին շինել զաւերեալ և զկործանեալ քաղաքն»**։

Ահա այստեղ է, որ գերությունից ազատված՝ «զերծեալ» «մեծատուն վաճառական», «երկիւղած ի տեառնէ», «բարեգործ» Ումեկն իր անչափ հարստությամբ կարող էր «բարեգործություն» անել, սակայն այստեղ էլ նա չի հիշատակված։ Մնում է մի հետևություն անել, այն է՝ որ «հիշատակություն» պարունակող գլուխը կամ հատվածը պակասում է Կիրակոսի Պատմությունից։

* * *

Ի վերջո կցանկանայինք մի երկու խոսք էլ ասել Կիրակոսի Պատմության հորինվածքի կամ կառուցվածքի մասին։

Կիրակոսն իր պատմագրական երկը խորը մտածված բաժանում է՝ չհաշված Յառաջաբանը, երկու անհավասար մասերի՝ ա. «Նախաշաւիղ»—ներածական մաս և բ. Թաթարների-նետողաց ազգի պատմություն։ «Նախաշաւիղը» իր հերթին նա բաժանում է դարձյալ երկու մասի, ընդ որում առաջին մասը նա «երկօք աշխատութեամբ հաւաքեալ (է) ի նախագրելոց», իսկ երկրորդը գրել է որպես «ականջալուր» և «ականատես»։ «Նախաշաւղի» առաջին մասը, այն, որ հավաքել է ուրիշ հեղինակներից, ընդգրկում է Գրիգոր Լուսավորչից սկսած մինչև Կիլիկիայի Հայկական թագավորությունը և Զաքարյանների հանդես գալը Արևելյան Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների շատ հակիրճ շարադրանքը։ Այս մասում տեղ են գտել նաև զանազան զրույցներ (Գագիկների, Հովհաննես Սարկավագի մասին և այլն) և Ներսես Շնորհալու «Գիր հաւատոյ»-ն որպես վավերագիր։

«Նախաշաւղի» երկրորդ մասը բովանդակում է Լևոնի, նրա անմիջական հաջորդների ու Զաքարե սպասալարի ժամանակաշրջանի իրադարձությունները, ինչպես և Մխիթար Գոշի կյանքն ու գործը։ Իրադարձությունների և սրանց ժամանակագրական շրջանակների մեջ սեպի նման մխրճված են տվյալ նյութի հետ չառնչվող՝ «Համառօտ ճիւսուածք պատմութեանց կողմանցն Աղուանից,

---

* Կիրակոս, անդ, էջ 363։ Վենետ. տպագր. մեջ չիք Յովհաննու՝ Ստեփաննոսի և եղբարբք իւրովք (էջ 210)։

** Կիրակոս, անդ, էջ 293։

րնդ ներքոյ զրուցատրաբար» միջանկյալ հատվածը և «Վասն ելանելոյ թաթար ազգին զօրուն և փախստական առնելոյ զթագաւորն Վրաց» ու «Վասն որ ի սահմանս Գանձակայ անկումն եղև զօրացն» իրար հետ առնչվող, բայց պատմական իրադարձությունների և հորինվածքային տեսագծով նախորդ ու հաջորդ պատմությունների հետ չկապակցվող, խորթ ընդմիջարկություններ։ Եթե «Համառօտ հիւսուածք»-ը մի միջարկություն է, որ կարող է և՛ բոլորովին անջատ գոյություն ունենալ, և՛ նախորդել Պատմությանը, ինչպես «Գիր հաւատոյ»-ն, Կոստանդին կաթողիկոսի գրությունները, «Սահմանք կանոնականք»-ը և Վանականի «Թղթերը», ինչպես և տեղադրվել Պատմության այլ մասերում, ապա թաթարներին վերաբերող այդ գլուխները պետք է տեղադրվեն ոչ թե «Համառօտ հիւսուածքի» և «Վասն Վարդապետին Մխիթարայ» գլուխների միջև, այլ «Վասն որք յետ նորա (Մխիթարայ,—Կ. Մ.-Օ.) կալան զառաջնորդութիւն վանացն» գլխից հետո, որով իրադարձությունների զարգացումը օրինաչափորեն և բնականորեն կապվում է «Վասն սուլտանին Ջալալադնին և կոտորելոյն զզօրսն վրաց ի վեց հարիւր եօթանասուն և չորս թուականին» գլխի հետ։

Մոնղոլները Ջալալ-էդ-դինի տիրապետությունը և իրեն խորտակելուց հետո հաստատում են իրենց մեկուկես դար տևող տիրապետությունն Առաջավոր Ասիայում, մասնավորապես Իրանում, Հայաստանում և Աղվանքում։ Ահա այս նոր ահարկու տիրակալների մասին է, որ Կիրակոսը ծրագրում է գրել իր պատմագրական երկը՝ մտածելով, որ շատերն են գրելու, բայց ոչ ոք չի տալու այն ամենը, ինչ անհրաժեշտ է, որովհետև չարաղետ դեպքերը շատ ավելի արագահաս են քան պատմության շարադրումը («կարծեմք, թէ յոլով ևս զնոյնս պատմեսցեն. և ամենեքեան նուազեալ գտանին յարժանաւորութենէն, զի յաճախ են քան զպատմութիւնս՝ չարիքս, որ եկան կալան զաշխարհս ամենայն»*։

Այստեղից սկսում է թաթար-մոնղոլների ավերածության և պատերազմների տարեգրությունը՝ հասնելով մինչև վերջին գլուխը՝ «Վասն մեծ պատերազմին»։ Պարզ է, որ նա այստեղ պիտի տար մոնղոլական պետության և աշխարհակալության հիմնադիր Չինգիզ խանի սահմանած դահաժառանգության օրենքը, ինչպես և նրա կտակը։

Այս համատարած «թաթարական» մասի մեջ միայն տեղ-տեղ զետեղված են այլևայլ գլուխներ, որոնք վերաբերում են Հայաստանի ներքին կյանքին, կամ վավերագրեր են և Վանականի գրչին պատկանող դավանաբանական երկեր։

Համոզված լինելով, որ Կիրակոսի Պատմության սկզբնագիրը մոտավորապես այս հորինվածքն ու գլուխների դասավորությունն է ունեցել, այնուամենայնիվ մենք անհրաժեշտ գտանք պահպանելու Պատմության ավանդաբար մեզ հասած խորագիրը, հորինվածքն ու գլխակարգությունը։

---

* Կիրակոս, անդ, էջ 231։

# Գ

# ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

*Անցնենք Կիրակոսի Պատմության սկզբնաղբյուրների համառոտ քննությանը։*

*Կիրակոսն իր պատմական երկը շարադրելիս՝ օգտվել է բազմազան աղբյուրներից, որոնք հիմնականում կարելի է բաժանել հետևյալ գլխավոր խմբերի՝ ա.* Գրավոր *և բ.* Բանավոր։ *Գրավոր աղբյուրներն իրենց հերթին բաժանվում են երկու հատվածի a) Կրոնական-եկեղեցական գրականության և b) Պատմագրության։*

## *Ա. ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ*

*Աչքի անցնենք, նախ՝ Կիրակոսի կրոնական-եկեղեցական գրավոր աղբյուրները։*

### *a)* Կրոնական-եկեղեցական գրական աղբյուրներ

*Եկեղեցական գրականություն ասելով՝ մենք հասկանում ենք, առաջին հերթին, Աստվածաշունչը, կրոնա-դավանաբանական երկասիրությունները, եկեղեցու անմիջական ծիսական-արարողական կարիքները հոգացող ստեղծագործությունները՝ արձակ և չափածո, վարքագրական-սրբագրական հուշարձանները և, վերջապես, իրավական հուշարձաններ՝ եկեղեցական ժողովների կանոնները։ Սրանք գրավոր եղանակով են մեզ ժառանգություն մնացել, բայց կան նաև բազմաթիվ եկեղեցական-վարքաբանական զրույցներ, որոնք վանքերի ու այլ սրբավայրերի միջավայրում կենցաղավարել են բանավոր ասմունքի միջոցով և նմանապես նյութ մատակարարել մեր պատմագրությանը, մասնավորապես Կիրակոս Գանձակեցուն, սակայն սրանց վերլուծությունը կտրվի բանավոր աղբյուրների շարքում։*

*Եկեղեցական գրավոր հուշարձանների օգտագործումն էլ Կիրակոսի Պատմության մեջ տարբեր եղանակով է կատարված։ Դրանցից մի երկուսը նա ամբողջությամբ հյուրընկալում է իր Պատմության մեջ, օրինակ՝* **«Սահմանք կանոնականք տեառն Կոստանդեայ», «Թուղթ տեառն Կոստանդեայ», «Վասն կանոնական հրամանացն... Կոստանդեայ», Ներսես Շնորհալու «Գիր Հաւատոյ խոստովանութեան»,** *Վանականի գրչին վերագրվող* **«Խրատ դաւանութեան»** *և այլն, մյուսներն օգտագործում է՝ կա՛մ բովանդակությունը շարադրելով, կա՛մ հենվելով նրանց վրա։ Այս խմբի թվարկածս եկեղեցական գրական հուշարձանները պաշտոնական բնույթ են կրել և այստեղ՝ Կիրակոսի Պատմության մեջ վավերագրերի նշանակություն ունեն։*

*Մեր պատմագիրը, սակայն, հաճախ օգտագործում է նաև այլ տիպի կրոնական սկզբնաղբյուրներ։ Այս դեպքում համարյա բացակայում են դրանցից քաղած ամբողջական հատվածներ։ Կիրակոսը հաճախ վկայակոչում է այդ ստեղծագործությունները՝ ապավինելով յոկ դրանց անառարկելի «ճշմարտությանը», կամ դրանց հեղինակությամբ ցանկանալով հավաստիության դրոշմ տալ իր ասածներին։ Այդպիսի վկայակոչումների թվին են պատկանում Աստվածաշունչ գրքերից կամ օտար և հայրենի հեղինակավոր հայրերի (Հովհան Ոսկեբերան, Բարսեղ Կեսարացի և այլք, Գրիգոր Լուսավորիչ, Սահակ Պարթև,*

Մովսես Խորենացի, Հովհան Օձնեցի և այլք) երկասիրություններից քաղած մեջբերումները։ Ընդհանրապես Աստվածաշնչի բառ ու ոճը, պատկերն ու մտապատկերը, համեմատությունն ու հակադրությունը, առաձն ու ասացվածքը զգալի ազդեցություն են ունեցել ոչ միայն Կիրակոս Գանձակեցու, այլև բոլոր հին ու միջնադարյան հեղինակների ոճական հենքի վրա։ Մտածել, հորինել և գրել բիբլիական բառ ու բանով,— դա քրիստոնյա մատենագրի գերագույն տենչն ու ձգտումն է եղել, նրա հեղինակային իդեալը։ Այդ եղանին նրանք դիմում են մանավանդ այս կամ այն եկեղեցական ականավոր դեմքի նկարագիրը գծագրելիս, օրինակ՝ Վանական վարդապետի բնութագրությունը (Կիրակոս, էջ 344 և հտ.)։ Աստվածաշունչ գրքերից կատարած համառոտ և ավելի ընդարձակ մեջբերումները մենք ընդհանրապես նշել ենք Պատմության բնագրի յուրաքանչյուր էջի տակ։

Ընդհանուր եկեղեցական պատմությունից նա հիշատակում է և վկայակոչում Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմությունն» ու «Քրոնիկոնը» և Սոկրատես Սքոլաստիկոսի Պատմությունը, ընդ որում երկու դեպքում էլ ծրում է նրանց բովանդակությունն ու ծավալը։

Հայկական պատմական միջավայրում ճանաչված եկեղեցական հայրերի դավանաբանական երկերից բանաքաղություններ շատ կան Կիրակոսի Պատմության մանավանդ այն հատվածում, երբ նա կամ ինքը կամ նրա երկի մեջ տեղ գտած մեկ այլ հեղինակ իր դավանաբանական թեզն ապացուցելու համար դիմում է ականավոր հայրերի հեղինակությանը, օրինակ՝ Ներսես Շնորհալու, Վանական վարդապետի գրչին պատկանող ստեղծագործություններում կամ Պատմության մեջ եղած բազմաթիվ վկայակոչումները։ Այստեղ հիշվում են, օրինակ՝ Աթանաս Աղեքսանդրացին, Գրիգոր Լուսավորիչը, Գրիգոր Աստվածաբանը, Գրիգոր Նյուսացին, Բարսեղ Կեսարացին, Աբբա Եփրեմը, Հովհան Ոսկեբերանը, Սեբերիանոսը, Եպիփան Կիպրացին, Դիոնիսիոսը, Մովսես Խորենացին, Ստեփանոս Սյունեցին, Հովհան Օձնեցին և ուրիշները։

Կիրակոս Գանձակեցին իր Պատմության մեջ գործող անձերի, մասնավորապես եկեղեցական հայրերի նկարագիրն ուրվագծելիս՝ հաճախ դիմում է նաև վարքաբանական-վկայաբանական գրականության օգնությանը։ Այդ անում է նա կա՛մ անմիջականորեն, կա՛մ միջնորդաբար, մի այլ հեղինակից քաղելով, երբ այս կամ այն եկեղեցական գործչի մասին հարակցման (կոնտամինացիայի) կարգով պատմվող ընդհանուր վարքաբանական միջադեպերից ու հրաշապատումներից մի երկուսը՝ տեղայնացնելով և ազգայնացնելով, վերապատմում է ազգային եկեղեցական հայրերի մասին։ Ընդհանուր վարքաբանական գրականությունից՝ հարանց վարքերից և սրբագրական այլ հուշարձաններից եկող այդպիսի զրույցներից հիշենք մի երկուսը, օրինակ՝ Աղբրկա որդի Աստվածատուրի, Հովհաննես Գառնեցու, Հովհան Մայրագոմեցու, Հովհան Օձնեցու, Հուսկան որդի Ստեփանոսի և այլ վանականների «հրաշագործ» կյանքի մասին պատմածները։ Հովհան Մայրագոմեցու զրույցը՝ անբան անասունների—արջի ու էշի մասին, իր գուգահեռն ունի ասորական և եգիպտական—սկիթական հարանց վարքերի՝ Պալլադիոս Հելենապոլսեցու կազմած Լավսայիկա (Lausaica. Λαυσαικα) ժողովածուներում։ Այստեղ հերոսը Գերասիմոսն է, իսկ նրան սպասարկող կենդանիները՝ առյուծն ու էշը։ Նույն զրույցի մի այլ ոչ ամբողջական տարբերակ պատմվում է նաև Փավստոս Բուզանդի

*Հայոց պատմության մեջ*: Այս զրույցները, ըստ մեծի մասին, թափառաշրջիկ են և առկա են համարյա բոլոր քրիստոնյա ազգերի հին ու միջնադարյան վարքաբանական ժողովածուների մեջ։*

## b) Պատմագրություն

*Կիրակոս Գանձակեցին ծանոթ է մեր հին ու միջին դարերի (5—12-րդ դդ.) համարյա բոլոր պատմագիրներին ու ժամանակագիրներին՝ ներառյալ նաև Խոսրովին, Շապուհ Բագրատունուն և Վանական վարդապետին, որոնց պատմագիտական երկերը մեզ չեն հասել։ Անցյալի պատմագիրներից նա մոռացության է տվել միայն Զենոբ Գլակ-Հովհան Մամիկոնյանին և Մեսրոպ Վայոցձորեցուն։ Վերջինիս երկասիրությանը ծանոթ է երևում կամ անմիջականորեն, կամ միջնորդաբար Ներսես Պարթևի գուշակության կապակցությամբ (տե՛ս էջ 9, 22, 231 և այլուր)։ Պատմության մեջ անուն առ անուն հիշատակված հայ պատմագիրներից ոմանց նա ուրիշ անգամ չի վկայակոչում, մյուսներին նորից հիշում է, բայց ընդարձակ մեջբերումներ չի անում, օրինակ՝ Հովհաննես Դրասխանակերտցուն, որի մասին գրում է՝ «Սա գրեաց պատմութիւնս գեղեցկայարմարս, և զոր ինչ գործեցին անօրէն ազգն հագարացւոց ընդ աշխարհս ամենայն մեծամեծ չարիս։ Արդ յայսմ վայրի կամ է ինձ սակաւ մի երկրորդել վասն պառակտման չար ազգին Իսմայէլի» (Կիրակոս, էջ 82), և իսկապես, երկրորդում է, հաճախ քաղելով իր տեղեկությունները միջնորդաբար՝ Սամուել Անեցու ժամանակագրության միջոցով։ Նա հիշատակում է նաև Թովմա Արծրունուն և Շապուհ Բագրատունուն, երբ խոսում է Ջափրի և Բուղայի ավերածությունների մասին Հայաստանում՝ «Եւ այլ յոլովակի չարիս անցոյց (իմա՛ Բուղա,—Կ. Մ.-Օ.) ընդ աշխարհս, զոր գտցես ի գիրս Թոմայի և Շապուհոյ և այլոց պատմագրացն» (Կիրակոս, էջ 79)։*

*Կիրակոսը ակնածությամբ հիշատակում է նաև իր «մեծ և հանճարեղ» Վանական վարդապետի պատմագրական երկասիրությունը, որպես սկզբնաղբյուր (Կիրակոս, էջ 8), բայց թե ինչ չափով է նա օգտվել իր վարդապետի պատմագրությունից, հնարավոր չէ ճշտել, քանի որ նրա երկը չի պահպանված։*

*Հավաստելով այն փաստը, որ Կիրակոսն օգտվել է աղբյուրներից, հետաքրքրական է իմանալ, թե ինչ գրական եղաններ է նա կիրառում սկզբնաղբյուրի նյութը քաղելիս կամ մշակելիս։ Այսպես, նա, ինչպես համոզվում ենք, հաճախ չի հիշատակում իր աղբյուրի հեղինակին, այլ սոսկ հենվում է նրա նյութի վրա և շարադրում իր Պատմության համապատասխան դրվագը. հաճախ էլ՝ վկայակոչելով սկզբնաղբյուրի հեղինակին կամ նրա երկը, բառացի մեջբերում է կատարում՝ մերթ ընդ մերթ իր կողմից ավելացնելով մի նոր միջադեպ կամ մանրամասնություն, որ առկա չէ այդ աղբյուրի մեջ։ Այսպիսի դեպքերում, պարզ է, նա այդ լրացումը քաղում է մի այլ աղբյուրից, որը դեռևս մեզ ծանոթ չէ։ Վկայակոչվող և քննաքաղման ենթարկվող պատմագիրները վայելում են Կիրակոսի անսահման վստահությունը։ Վերջիններիս թվին են պատկանում Մովսես Կաղանկատուացին և Սամուել Անեցին և սրա միջոցով նաև Հովհաննես Սարկավագը։*

---

* Փաւստոս Բուզանդ, V, ԻԶ։

Քննության առնենք, որպես օրինակ, այս երկու հեղինակների օգտագործման չափը Կիրակոսի Պատմության մեջ, այսինքն, տեսնենք, թե մեր Պատմագիրը ինչ չափով և ինչպես է օգտվել այդ սկզբնաղբյուրներից իր պատմական երկը շարադրելիս։

* * *

Գանձակեցին իր Պատմության մեջ մի հատուկ միջանկյալ գլուխ է նվիրում Հայաստանի բազմադարյան հարևան Աղվանից աշխարհի պատմությանը՝ «Համառօտ հիւսուածք պատմութեան կողմանցն Աղուանից»։ Հեղինակը շատ դիպուկ է բնորոշել այս հատվածը որպես մի շատ համառոտ հյուսվածք, որի միջանկյալ բնույթը զգալով, ամեն կերպ աշխատում է հիմնավորել այդ գործողությունը՝ վկայակոչելով այն, որ աղվանները մեր «հավատակիցներն» են, «մանաւանդ զի և առաջնորդք նոցա հայալեզուք հայերէնախօսք յոլովք էին. թագաւորք հնազանդք թագաւորացն հայոց... և եպիսկոպոսքն՝ ձեռնադրեալք ի սրբոյն Գրիգորէ և յաթոռակալաց նորա, և ազգն ուղղափառութեամբ ընդ մեզ կապեալ ի կրօնս, վասն այնորիկ արժան է ի միասին լինել յիշատակ երկուց ազգացս»*։

Այս եղանակով հիմնավորելով իր ազգապետական և կրոնապետական տեսակետը, նա «հյուսում է» աղվանների պատմությունը, տեղ-տեղ վկայակոչելով իր սկզբնաղբյուրը՝ «որ գրեաց զՊատմութիւնն Աղուանից» (Կիրակոս, էջ 194), կամ ինչպես կոչվում է Առաջաբանի մեջ՝ «Մովսէս Կաղանկատուացի, պատմագիր Աղուանից» («Կիրակոս, էջ 7)։

Տեսնենք, թե ինչպես է Կիրակոսն օգտագործում իր այս աղբյուրը։ Բերենք մի քանի օրինակ**։ Բաղդատելիս՝ առաջնությունը տալիս ենք Մովսես Կաղանկատուացուն, քանի որ նա է բաղդատվող հեղինակների մեջ հնագույնը։

| Մովսէս Կաղանկատուացի | Կիրակոս Գանձակեցի |
|---|---|
| «Արդ՝ առաջին պատճառ լուսաւորութեան մերոյ է սուրբն Եղիշայ՝ աշակերտ սուրբ առաքելոյն Թադէոսի, որ ձեռնադրեցաւ յԵրուսաղէմ ի ձեռաց սրբոյն Յակոբայ»։ էջ 391 | «Արդ՝ առաջին պատճառ լուսաւորութեան կողմանցն Արևելից առեն զսուրբն Եղիշէ, զաշակերտ մեծին Թադէոսի առաքելոյ, որ... գնացեալ յԵրուսաղէմ առ Յակոբոս եղբայր տեառն և ի նմանէ ձեռնադրեալ եպիսկոպոս»։ էջ 192—193 |
| «Ես Վաչական՝ Աղուանից արքայ, և Շուփհաղիշայ արքեպիսկոպոս Պարտաւայ»։ էջ 98 | «Ես, Վաչագան, արքայ Աղուանից, և Շուփհաղիշոյ արքեպիսկոպոս Պարտաւայ»։ էջ 194 |

Մեջ բերելով այս վկայությունը, Կիրակոսը գրում է՝ «Եւ յետ այսորիկ այս անուն ոչ գտանի ի կարգ համարոյ եպիսկոպոսացն, այլ մեք որպէս և գտաք, եդաք» (էջ 194)։ Եվ իրոք, այս անունը միայն մի անգամ է հիշատակվում «Անուանք հայրապետացն Աղուանից»-ի մեջ։ Շուփհաղիշոյ անունով մի արքեպիսկոպոս է եղել Աղվանքում։ Ընդհանրապես այդ անունը ևս երկու ան-

* Կիրակոս, անդ, էջ 192, իսկ «Հիւսուածք»-ը, էջ 192—201։

** Այստեղ և հետագայում այլ հեղինակների հետ համեմատելիս՝ մեր բաղդատությունները վերաբերելու են ամբողջական հատվածներին, ոճական, դարձվածքային նմանությունները անտեսված են։

*** Մովսիսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1913։

գամ է հիշատակված Մովսես Կաղանկատուացու Պատմության մեջ՝ մեկ Գրիգորիսի նշխարների գյուտի ժամանակ (Մով. Կաղ., էջ 92), մեկ էլ՝ «Սահմանադրութիւն կանոնական ի Վաչականայ Աղուանից արքայէ եդեալ ի ժողովն, որ յԱղուէնն եղև» (էջ 98)։ Այս «Սահմանադրությունից» է քաղում Կիրակոսն իր մեջբերումը։

| Մովսէս Կաղանկատուացի | Կիրակոս Գանձակեցի |
| --- | --- |
| ...«Հայրապետն մեր Երեմիա և Թագաւորն Արսվաղէն... բստ շնորհելոյ նմա (իմա երանելւոյն Մեսրոպայ,—Վ. Մ.-Օ.) յաստուածուստ պարգևին՝ Հայոց և Վրաց եա նշանագիր»։<br>էջ 132 | ...«Եսվաղէն, յաւուրս սորա արար գիր Մեսրոպ երանելի Հայոց, Վրաց և Աղուանից»։<br>էջ 193 |
| «Տէր Երեմիա.—Ի սորա աւուրս արար գիր Աղուանից երանելին Մեսրոպ, որ և Հայոց և Վրաց եա նշանագիր ձանիւ մեծաւ»։<br>էջ 391 | «Տէր Երեմիայ.—Յաւուրս սորա արար Մեսրոպ գիրս Աղուանից մեծաւ ջանիւ»*։<br>էջ 195 |
| «Տէր Աբաս... Եւ առ սա գրեցին ի ժողովոյն Դունայ՝ ասել «Մի բնութիւն աստուածութեան և մարդկութեանն»։<br>էջ 392 | «Տէր Աբաս... Առ սա գրեցին ի ժողովոյն Դունայ՝ ասել «Մի բնութիւն աստուածութեան և մարդկութեան»։<br>էջ 195 |
| «Տէր Դաւիթ, ամս քսան և ութ... Սա օրհնեաց զանօրէն ամուսնութիւնն Ճաքւոյ տեառն. և նոյն իշխանի աշխարհական եղբայրն գիտացեալ՝ հարցանէ զնա և ասէ. «Ուստի՞ գաս, տէր»։ Եւ նա ասէ. «Ի տանէ եղբօր քո»։ Եւ ասէ իշխանն զԴաւիթ. «Լեզուդ, որ օրհնեաց՝ մի խօսեսցի և աչդ չորասցի»։ Եւ առ ժամայն եղև այնպէս և ոչ բժշկեցաւ մինչև ի մահ նորա»։<br>էջ 394—5 | «Տէր Դաւիթ, ամս քսան և ութ։ Սա օրհնեաց զանօրէն ամուսնութիւնն Ճաքւոյ տեառն, և նորին իշխանին եղբայրն աշխարհական հարցեալ՝ ասէ ցնա. «Ու՞ստի գաս, տէր»։ Եւ նա ասէ. «Ի տանէ եղբօր քո»։ Եւ ասէ իշխանն Դաւթի. «Լեզուդ, որ օրհնեաց մի խօսեսցի և աչդ չորասցի»։ Եւ առ ժամայն եղև, և ոչ բժշկեցաւ մինչև ի մահ»։<br>էջ 198 |
| «Եւ եղև իբրև լուան բնակիչք... սկսան ղպատճառ կորստեան իւրեանց զխաղն խաղալ՝ բերէին դդում մի մեծ, նկարէին ի վերայ նորա զպատկեր Թագաւորին հոնաց կանգուն մի յերկայն և կանգուն մի ի լայն. և զտեղի արտեւանացն յօտ** | «Զայս խաքան ծաղր արարին բնակիչք քաղաքին Տփխեաց. առեալ դդում մի՝ նկարեցին զպատկերն խաքանայ ի վերայ նորա կոյր, որպէս թէ աչք նոցա նեղ են և փոքր, և եդեալ զդդումն ի վերայ պարսպին հանդէպ նորա՝ սկսան |

* Կիրակոսի մի շարք ՁՁ մեջ՝ «ձայնիւ» փխ ջանիւ։

** Յօտ, գրվում է նաև հօտ. չունին ՆՀԲ և Առձ. Այստեղ նշանակում է փոս, փոսիկ, փոսորակ։ Ստ. Մալխասյանը (Հայերեն բացատր. բառարան)՝ հիմք ընդունելով Հր. Աճառյանի Գավառական բառարանը, բացատրում է՝ «Գետնի մեջ փորած փոսիկ, որի մեջ երեխաները խաղալիս կակալ կամ վեգ են ձգում»։ Հիմնականում ճիշտ է բացատրված։ Մի քանի գավառներում, օրինակ՝ Գանձակում, Ղարաբաղում և այլն, մանկական այդ խաղը կոչվում է հոտի։ Պատի տակ սովորաբար փորում են մի բռաչափ փոս. երեխաները 10—15 ոտք հեռավորությունից փոսի մեջ ընկույզ, ակողին կամ վեգ են նետում՝ նախօրոք պայմանավորվելով հոտի տիրոջ— հոտապանի հետ զույգ (ջուխտ) է ընկնելու հոտի մեջ, թե կենտ։ Եթե ընկույզի և այլն քանակը համապատասխան է լինում նետողի առաջադրած պայմանին, նա հոտապանից ստանում է նույնքան ընկույզ. եթե չի համապատասխանում, հոտապանը վերցնում է հոտի մեջ եղածը։

մի ծրարեալ, որ ոչ կարէր նշմարել. և գունդի մարուացն յերկս ժպիրհս, և ըղձեղի շնչաւոր քթիցն թիզ մի լայն թուով մազից ալէրնէշակէից, զոր թէ որ կարէր ճանաչել։ Եւ բերեալ եդեալ ի վերայ պարապին յանդիման նոցա՝ աղաղակէին առ զօրսն և ասէին. «Ահաւասիկ կայսր թագաւոր ձեր, դարձարուք երկրպագէք սմա՝ Ջերու խաչան է սա»։ Եւ առեալ դեղարդ ի ձեռն՝ ծակոտէին յանդիման նոցա զգդումն՝ զնմանեցուցեալն ի պատկեր նորա։ Նոյնպէս և զմիւս թագաւորն ձաղէին ծաղր առնէին, այպանէին, պիղծ և արուապղծ կարդային»։

էջ 158—159*

նետաձիգ լինել։ Իսկ նորա տեսեալ զայն՝ բարկացաւ յոյժ, բայց զի ժամանակ ձմեռնային էր, ոչ ինչ կարաց հատուցանել։ Բայց ի գալ գարնան եկեալ պաշարէ զնա, և առեալ զքաղաքն՝ հրամայեաց կոտորել զարս և զկանայս և զմանկունս, և աւերեալ զքաղաքն, առեալ զինչս նորա, գնաց ի քաղաքն իւր»։

էջ 52—53

Մովսես Կաղանկատուացույ և Կիրակոս Գանձակեցուց բերված վերջին բաղդատությունը բառացի չէ, բայց միջադեպի նկարագրությունից պարզ երևում է, որ Կիրակոսը հիշյալ պատմական դեպքը նկարագրելիս՝ աչքի առաջ է ունեցել հենց Կաղանկատուացու Պատմությունը, և այն, ինչ սա երկարաշունչ է վիպում (հմմտ. հտր. II, ԺԱ—ԺԳ), առաջինը, հնարավորության սահմաններում, սեղմում է և հակիրճ հարասում։ Նույնը պետք է ասել նաև Սպրամի և Ներսես Բակուրի մասին Կաղանկատուացու և Գանձակեցու հաղորդած միջադեպի վերաբերյալ (հմմտ. Կիրակոս, էջ 196 և Մովսես Կաղանկատ. էջ 335, 336, 340)։

Մեր բաղդատությունները կարելի է շարունակել և էլ ավելի վկայություններ բերել ապացուցելու համար այն, որ Կիրակոսը՝ Աղվանից պատմության հյուսվածքը տալիս և այլուր, զգալի կախում է ունեցել Մովսես Կաղանկատուացու Պատմությունից, ընդ որում նա թե՛ բառացի հատվածներ է քաղել այդ սկզբնաղբյուրից և թե՛ տեղ-տեղ հակիրճ հարասել է Աղվանից Պատմագրի երկարաշունչ պատմությունները*։ Բավականանանք բերածովս։

* * *

Քանի որ մեր խոսքը վերաբերում է Աղվանից պատմության քննարկածս դրվագին, հարկ ենք համարում մի փոքրիկ լրացում կատարել։

Ինչպես հայտնի է, Մովսես Կաղանկատուացու տվյալները Աղվանքի կաթողիկոսների մասին ընդհատվում են Փառիսոսցի տեր Մովսեսի կաթողիկոսության տարիների հիշատակությամբ**։ Զվկայակոչելով աղբյուրը, Կիրակոսը Աղվանքի կաթողիկոսների շարքը լրացնում է՝ կատարելով հետևյալ քաղվածքը, Մխիթար Գոշի գրչին վերագրված և Ղ. Ալիշանի կողմից «Կաթողիկոսք և դէպք Աղուանից աշխարհին ի մէջ ԺԲ դարու» վերնագրված աշխատությունից։

Մխիթար Գոշ

«Իսկ զկնի Մովսիսի... այրն Աստուծոյ տէր Մարկոս. և ետ նորա տէր Յովսէփ, և ապա միւս տէր Մարկոս, և զկնի

Կիրակոս Գանձակեցի

«Ապա տէր Մարկոս այրն Աստուծոյ. և յետ նորա Յովսէփ, և ապա միւս տէր Մարկոս, և զկնի նորա տէր Ստեփանոս,

* Հմմտ. նաև Մովսես Կաղանկատուացու 392—396 էջերը Կիրակոսի 193—198 էջերի, ընդհանրապես «Համառօտ հիւսուածքի» հետ։
** Մովսես Կաղանկատուացի, էջ 396։

*նորա տէր Ստեփանոս, և ապա տէր Յովհաննէս. և ապա տէր Ստեփանոս կոչեցաւ ի կաթողիկոսութիւն ի տիս պատանեկութեան, զոր և կալաւ զաստիճան հայրապետութեան ամ մի և կէս»*։*

*ապա տէր Յովհաննէս ամս չորս, և տէր Ստեփանոս ամ մի և կէս...»*։*

*Կոշի և Գանձակեցու տվյալների տարբերությունն առաջացել է գրիչների մեղքով. այսպես՝ Կոշի մոտ չեն հիշատակված Հովհաննեսի կաթողիկոսության տարիները, մյուս կողմից Կոշի պարբերության շարունակությունը Կիրակոսի մոտ, ըստ սրա սովորության, հակիրճ է հարասված։*

*Կոշի տվյալներից հետո Աղվանքի կաթողիկոսների շարքը Կիրակոսը շարադրում է արդեն որպես ժամանակակից և ականատես։*

*Հետևյալ սկզբնաղբյուրը, որից Կիրակոս Գանձակեցին մեծապես օգտվում է և ընդարձակ քաղվածքներ է կատարում, կամ որի մանրապատում շարադրանքը յուրովի սեղմում-հարասում է՝ Սամուել Անեցու ժամանակագրությունն է**։*

*Մեր այս Անեցի մատենագիրն էլ՝ Կիրակոսի նման, իր ժամանակագրական երկն սկսում է 4-րդ դարից՝ Տրդատի և Լուսավորչի դարաշրջանից և հասցնում մինչև Բագրատունիների և Արծրունիների թագավորության վերջնական անկումը, Հայաստանի նվաճումը սելջուկների կողմից, մինչև Մելիք շահի տիրապետությունը։*

*Անեցու այս աշխատությունը բավականաչափ առատ նյութ է տվել Գանձակեցու պատմագրությանը. Կիրակոսը, ճիշտ է, միայն երկու անգամ է հիշատակում Սամուել Անեցու անունը (էջ 8, 84), բայց Պատմության մեջ առկա բազմաթիվ բառացի մեջբերումները Անեցու երկից լավագույնս ապացուցանում են այն, որ նա միշտ աչքի առաջ է ունեցել Անեցի ժամանակագրին։*

*Բերենք այստեղ մի քանի ընդարձակ հատվածներ և բաղդատենք դրանք Կիրակոսի Պատմության հետ։*

Սամուէլ Անեցի

*«ՌԼ։ Տէր Կոմիտաս, ամս Ը։ Մեծ պատրիարքն տէր Կոմիտաս շինէ զսուրբ տիկնոջն Հռիփսիմէի զվկայարանն հրաշալի և պայծառ շինուածովք, զի խրթին էր առաջին շինուածն, գտանէ և ի նմին գնշխարս ոսկերաց սրբոյն, և ոչ համարձակեցաւ բանալ զմատանեալն ի սրբոյն Գրիգորէ և ի սրբոյն Իսահակայ, այլ և իւրովն կնքեալ մատանեաւ՝ ամփոփէ անդ»։*

*էջ 79*

*«Ապա երիս սպայս արձակեալ՝ մի ի Հռոմ՝ Յազ անուն և խրատուու Յովէլ, որ կոտորեցին ի Հռոմոց ՀԲ։ Եւ ի*

Կիրակոս Գանձակեցի

*«Յետ տեառն Յովհաննիսի առնու զկաթողիկոսութիւնն տէր Կոմիտաս, ամս ութ։ Սա շինեաց զսուրբ տիկնոջն Հռիփսիմեայ զվկայարանն՝ պայծառ և հրաշալի. զի խրթին էր առաջին շինուածքն. գտանէ ի նմին նշխարս ոսկերաց սրբոյն՝ կնքեալ մատանեաւ սրբոյն Գրիգորի և սրբոյն Սահակայ, և ոչ իշխեաց բանալ, այլ իւրով մատանեաւն կնքեալ ամփոփէ անդրէն»։*

*էջ 53*

*«Ապա արձակեցին զօրս ընդ երիս կողման՝ մի ի Հռոմ՝ Յազ անուն և խրատատու Յովէլ, որք կոտորեցին ի հռոմոց*

---

* Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 174։ Կիրակոս, անդ, էջ 199

** Սամուէլ քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ—Հառաջաբանով, համեմատութեամբ, հավելվածներով և ծանոթություններով Արշակ Տեր-Միքելյանի, Վաղարշապատ, 1893։

Պարսից կողմ արձակէ զՕթման ամիրայ և զՄաւիէ զօրավարն. նոքա հարին զՄիրդատ ԽԲ-աւ, և զՄուշեղ սպարապետն Հայոց իւրով սպայիւն. և ապա տիրեցին բոլոր աշխարհիս Հայոց, Պարսից և Ասորոց, Եգիպտացւոց և Մարաց, Պարթևաց և Պաղեստինացւոց...»։

էջ 81

...«Մարմնաւորապէս, ասաց, զարքայութիւն ի վերայ երկրի. կերակուր պորտոյ՝ և ամուսնութիւն յետ յարութեան... յոյժ ձաղանօք խայտառակեաց զուխտադրութիւն Աբրահամու, որպէս և գրեալ է. «Թլփատեսցի ամենայն արու ձեր յաւուր ութերորդի»։ Իսկ սա ոչ միայն զայն, այլ և զկանայս անգամ, որով զարշելի այպանեաց զնշանակ ուխտին տեառն, այլև ջրով լոկով ողողել հանապազ՝ փոխանակ մկրտութեան աւազանին, և այլ ևս յոլով անարժան և մոլեկան աւանդութիւնս և ծիծաղելիս։ Սա եղև օրէնսդիր պատգամաբեր ամս Ի և կոտորեցին զԲզնունիս, զԱղիովիտ և զՏարօն։ Եւ Մահմետս այս արգել զսուրն և բանիւ խրատու նորա հնազանդեցուցին ինքեանց զմեծ մասն տիեզերաց։ Եւ անմոռաց երդմամբ կնքեաց մուրհակ Հայոց աշխարհիս՝ համարձակ ունել զքրիստոնէութիւն. և վաճառեաց նոցա զհաւատս նոցա, յամենայն տանէ առնել Դ. դրամ և Գ. մոթ խորբալ, և ձիատոպրակ մի, և պարան մի մազէ, և ձեռնարար մի։ Իսկ ի քահանայից և յազատաց, և ի հեծելոց ոչ հրամայեաց առնուլ զհարկըն, և ի տիրելն աշխարհաց՝ կոչեցան ամիրըլմումնիք, որ և յետ Մուհամատայ՝ տիրեցին Ապուպաքր, Օթման Օմար, ամս ԼԸ»։

էջ 81—82

«Արդ յետ մահուան Սմբատայ, որ և Յովհաննէս, ի ՆՂԱ թուին (այլք չունին թիվը) միաբանեալ ազատագունդ զօրացն և իշխանացն յաւէտ ևս պատրիարգին տեառն Պետրոսի. և ժողովեցան առ դուռն մեծափառ կաթուղիկէին՝ ի մայրաքաղաքն Անի և հաստատեն զԳագիկ զեղբօրորդին Յովհաննիսի թագաւոր ի վերայ ինքեանց ի տեղի հօ-

զեօթանասուն հազար։ Եւ ի Պարսից կողմն արձակեցին զՕթման ամիրայ և զՄաւիէ զօրավար. նոքա հարին զՄիրդատ քսան հազարաւ, և զՄուշեղ սպարապետ Հայոց իւրով սպայիւն, և տիրեցին բոլոր աշխարհիս Հայոց, Պարսից և Ասորւոց, Եգիպտացւոց, Մարաց և Պարթևաց»։

էջ 58—59

...«Ասաց՝ Մարմնաւոր լինել զարքայութիւնն ի վերայ երկրի, կերակուր պորտոյ և ամուսնութիւն յետ յարութեանն. և կանանց կոյս մնացելոց հանապազ խառնակութիւն... մեծապէս ձաղանօք զուխտադրութիւնն աստուծոյ՝ որ առ Աբրահամ, զի գրեալ է՝ «Թլփատեսցի ձեր ամենայն արու ութօրեայ»։ Իսկ սա օրինագրեաց. յորժամ կամեսցի թլփատել, յորում հասակի և իցէ, ոչ միայն զարս, այլ և զկանայս անգամ* և փոխանակ լուսաւոր մկրտութեանն... և ջրով լոկով ողողանիլ և սրբիլ, և այլ բազում անարժանս և մոլեկան աւանդութիւնս և ծիծաղելիս։ Սա եղև օրէնսդիր պատգամաբեր ամս եօթն, և կոտորեցին զԲզնունիս, զԱղիովիտ և զՏարօն։ Եւ Մահմետս այս արգել զսուրն, և բանիւ խրատու նորա հնազանդեցին զմեծ մասն տիեզերաց։ Եւ անմոռաց երդմամբ կնքեաց մուրհակ Հայոց աշխարհիս համարձակութեամբ ունել զքրիստոնէութիւն, և վաճառեաց նոցա զհաւատս նոցա՝ յամենայն տանէ առնել չորս դրամ և երեք մոթ խորբալ, որ է ցորեան, և ձիատոպրակ մի և պարան մի մազէ և ձեռնարար մի։ Իսկ ի քահանայից, և յազատաց, և ի հեծելոց ոչ հրամայեաց առնուլ զհարկն, և ի տիրելն աշխարհաց՝ կոչեցան Ամիրմումնիք։ Եւ Ի ամին Մահմետի կալան զիշխանութիւն Իսմայէլի Աբուբաքր, Օթման և Ամր, ամս երեսուն և ութ»։

էջ 59—60

«Արդ յետ մահուանն Յովհաննիսի, որ և Սմբատ, միաբանեալ իշխանաց և զօրացն, յաւէտ և պատրիարքն Պետրոս՝ առ դրանն մեծափառ կաթուղիկէին Անւոյ, կացուցանեն զԳագիկ, զեղբօրորդի Յովհաննիսի, թագաւոր ի վերայ ինքեանց, երդմունս ուխտից կնքեալ միամըտութեամբ ծառայել նմա։ Իսկ նա պատերազմական արիութեանց ոչինչ փոյթ

* «Զի ի հնումն հրամայեաց աստուած թլփատել զամենայն արու յաւուր ութերորդի, իսկ դուք ոչ զարս, այլև զկանայս յորում և իցէ հասակի՝ ամօթալեօք խայտառակէք»։

Պատմութիւն Ղևոնդեայ, աշխ. Կ. Եզեանց, Բ. տպ. Ս. Պետերբուրգ, 1887, էջ 84։

ընդբօր իւրոյ, որ ոչ պատերազմական արութեանց ջանայր, որով վարի իշխանութիւնն՝ մանաւանդ զի առ այնու ժամանակաւ աւելի իմն ի դէպ էր դքաջանալ՝ շփոթումն իմայէլականացն և ի վերայ յառնել սկութացւոցն, որպէս ասացաք յառաջագոյն. ընդ այսու ժամանակաւ կարծի գոլ և յունաց՝ չէր անվրդով, զի ընդ կնոջ ձեռամբն նուաճէր և նոցայն թագաւորութիւնն։ Բայց սա՝ զի ի մանկութենէ ընդ դպրութիւն գրոց վարժեալ էր ի նոսին զբօսնոյր և ի տէրութեան աւուրս, զոր իմացեալ ազգին Յունաց՝ առ իւրեանս կոչէին (այլք՝ կոչեցին) խաբկանօք. յաւէտ ևս ի սադրելոյ իշխանացն, որք երդմամբ հաստատեցին պահել զիշխանութիւն նորա աննենգ ի վերայ իւրեանց (Բ. ձեռ. ինքեանց). և ոչ կացին յուխտին տեառըն. և կատարած գործոյն կորուստ անգիւտ անձանց և այլոց բազմաց եղև, զի յոյնք զգնացեալն ի կղզւոջ արգելին և ի տեղի նորա կատապանս արձակէին ամի ամի։ Իսկ բնակչաց քաղաքին և իշխանաց զմիմեանս յարձակեալ խորամանկութեամբ և ստաբանութեամբ խորհէին զխորհուրդ նենգութեան՝ մատնել զմիմեանս կայսեր՝ բաղբաղելով զձեռն տալն առ հագարացիսն, որք և իշխանացն՝ **անգամ** զհայրապետն և նորա՝ զնոսա. սովին գաղափարաւ դրաբանեալ, զորս յոչ կամս առեալ տանէին ի բնակութենէ իւրեանց։ Իսկ մնացեալքն իբրև զանտէրունչս անկուշեալք կիցս ընկենուին և այսպիսի սարասիւ յերկարեալ ամս ԻԱ։ Յետ որոյ հուր հարաւային բքոյն շարժեալ և եբեր զգազանն մարդախանձ, որ հրդեհեալ բնաջինջ արար զազգս մեր. մանաւանդ զԱնի քաղաք զոր պաշարեալ զաւուրս ԻԵ. և ապա առեալ որպէս ի տեսչութենէ աստուծոյ զ՝ ի յաճախիլն մեղաց մերոց՝ զխնամ տեսչութեան աստուծոյ ի ցասումն բարկութեան շարժէ»...

էջ 108—109

տարեալ, որով աշխարհ վարի, մանաւանդ զի առ այնու ժամանակաւ աւելի իմն էր ի դէպ քաջանալ, քանզի իշխանութիւնն Իսմայէլի շփոթեալ էր. քանզի սկիւթացիք յարեան ի վերայ նոցա, որպէս ցուցաք յառաջագոյն։ Նոյնպէս և յունացն ևս վրդովեալ էր։ Բայց սա զի ի մանկութենէ դպրութեամբ գրոց վարժեալ էր, ի նոսին զբօսնոյր. զոր իմացեալ ազգին յունաց՝ առ իւրեանս կոչեցին խաբանօք, յաւէտ ևս ի սադրելոյ իշխանացն, որք նենգեցին ուխտին, զոր եդին ընդ նմա՝ աննենգ պահել զտէրութիւն նորա ի վերայ ինքեանց. և ոչ կացին յուխտին։ Եւ կատարած գործոյն կորուստ եղև անձանց և աշխարհիս, զի և յոյնք զգնացեալն՝ ի կղզւոջ արգելին, և ի տեղի նորա վերակացուս արձակեալ ամ մի։

Իսկ բնակիչք աշխարհիս զմիմեամբք ելանելով անճոռնի յոխորտանօք, և իմիմեանս յարձակեալ խորամանկութեամբ, և ստաբանութեամբ խորհէին խորհուրդ նենգութեան՝ մատնել զմիմեանս կայսեր՝ բաղբաղեալ զձեռն տալ առ հագարացիսն, որք և իշխանացն անգամ զհայրապետն, և նորա՝ զնոսա. զոր յոչ կամայս առեալ տանէին ի բնակութենէ իւրեանց։ Իսկ մնացեալքն իբրև զանտէրունչս անկուշեալ՝ կիցս ընկենուին. տիրեալ յունաց ամս քսան և մի։ Յետ որոյ հուր հարաւային բքոյն շարժեալ, եբեր զգազանն մարդախանձ, որ հրդեհեալ՝ բնաջինջ արար զազգս մեր, ևս առաւել զքաղաքն Անի. զի պաշարեաց զնա զաւուրս քսան և եօթն, և ապա առեալ կոտորեաց զբնակիչս քաղաքին Անւոյ ոչ ումեք ողորմելով»...

էջ 91—93

Համեմատիր նաև Սամուել Անեցու 84, 87—88, 89, 96, 97—98, 100—101, 103, և 109 և այլ էջերը Կիրիկոսի 62—63, 71, 72, 82, 83—84, 87—88, 88 և ուրիշ էջերի հետ։

Բաղդատված հատվածների մեծագույն մասը, ինչպես տեսնում ենք, բառացի է։ Որոշ հատվածների մեջ կան, այսպես ասած, խմբագրական շտկումներ ոճաբանության տեսակետով. կան նաև կրճատումներ կամ, ընդհակառակն, հավելումներ, որոնք գալիս են ապացուցանելու այն, որ Կիրակոսը այլ դեպքի կամ իրադարձության նկարագրության համար ունեցել է ևս մի այլ

գրավոր կամ բանավոր աղբյուր։ Սակայն բաղդատված հատվածների մեջ մի կարևոր հանգամանք է նկատվում, այն է՝ այս երկու հեղինակների տվյալների մեջ չկան էական, սկզբունքային լուրջ տարբերություններ։

Բացի նշածս սկզբնաղբյուրներից, Կիրակոս Գանձակեցին քաջ ծանոթ է իրեն նախորդող մեր բազմադարյան գրականությանը, որից հաճախ նա տեղեկություններ է քաղում և զետեղում իր շարադրանքի մեջ, կամ հայ դասական հեղինակների ոճի ու գրելաձևի զգալի ազդեցությանն է ենթարկվում՝ նրանցից փոխառնելով կամ նրանց նմանողությամբ կերտելով նորանոր պատկերներ և այլ արտահայտչական միջոցներ։ Նրա ոճի վրա նկատվում է Մովսես Խորենացու, տեղ-տեղ էլ, մանավորապես ներբողների մեջ, Եղիշեի ստեղծագործական ոգու անսքող ազդեցությունը։ Կիրակոսը զերծ չէ, որոշ դեպքերում, նաև Արիստակես Լաստիվերտցու բառ ու բանի ազդեցությունից։

* * *

Կիրակոս Գանձակեցին իր պատմագրական երկը կերտելիս՝ բավականաչափ օգտագործել է իր դարաշրջանի նյութական կուլտուրայի հուշարձանները, որպես պատմական սկզբնաղբյուրներ։ Նկարագրելով նախորդ կամ իր դարաշրջանի հոյակապ շինարարությունը՝ վանքերի, եկեղեցիների և այլն կառուցումները, նա համարյա միշտ հիշում է նաև նյութական միջոցներ տրամադրող «իշխանավորներին», ինչպես նաև անմիջական կառուցողներին՝ ճարտարապետներին, վարպետներին, խոսում է ձեռարվեստի, մանավորապես ասեղնագործության, «ոստայնանկութեան և... նկարակերտութեան» մասին և այլն։

Նա մեծ չափերով օգտվում է նաև վիմական արձանագրություններից, որպես սկզբնաբղյուրից։

Մխիթար Գոշի կյանքն ու գործը, Նոր Գետիկի ամբողջ շինարարությունը ստորագրելիս՝ Կիրակոսը մեծապես օգտվել է այդ վանքի վիմական արձանագրություններից։ Այստեղ հիշատակված են ոչ միայն կառուցված շենքերը, այլև մեկենասն ու շինարարները։ Այդ արձանագրությունների միջոցով կարելի է գրել Նոր Գետիկի վանահայրերի պատմությունը (տե՛ս Հր. Ջանփոլադյանի հետաքրքրական ուսումնասիրությունը՝ «Մխիթար Գոշ»), ինչպես և գաղափար կազմել հարկատվական սիստեմի մասին՝ ինչ հարկեր էին տալիս զավթիչներին։ Արձանագրությունները Կիրակոսի երկի մեջ տեղ-տեղ համարյա բառացի են բերված։ Այս տեսակետից Կիրակոս Գանձակեցին Մովսես Խորենացու հետևորդն է և Ստեփանոս Օրբելյանի նախորդը։

## Բ. ԲԱՆԱՎՈՐ ԿԱՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Գրավոր աղբյուրներից զատ, ինչպես ասացինք, Կիրակոս Գանձակեցին մեծապես արժեքավորել է և օգտագործել բանավոր աղբյուրը՝ ժողովրդական զրույցները, ավանդությունները, ականատեսների և ականջալուրների պատմածները։ Այդ ամենին նա միացնում է նաև իր տեսածն ու լսածը, իր տպավորությունները։ Անձնական տպավորությունները նա սովորաբար նշում է հետևյալ խոսքերով՝ «Զոր լուաք ականջօք մերովք և տեսաք աչօք» (էջ կամ «Աչօք մերովք տեսաք զաւեր և զտառապանս, զոր անցուցին ընդ աշխարհս ամենայն» (էջ 231), կամ «Նոքա (իմա՛ Հովհաննես Գառնեցին և Վարդան Արևելցին,—Կ. Մ.-Օ.) սիրով կապեալ էին ընդ միմեանս... Նա (իմա՛ Վար-

*դանը) ի մխիթարութիւն մեզ պատմեաց ինչ ի վարուց նորա մանուար» (էջ 349) և այլն։*

*Նրա բանավոր աղբյուրները երկու կարգի են, ընդ որում մեկը անորոշ ձևով ակնարկած, մյուսը իսկական անունով նշված։ Առաջինների վկայությունները նա արձանագրում է «ասէին», «ասեն», «համբաւ հանին», «պատմեն», կամ «յօդուած բանի հանգոյն առասպելեաց՝ ասէին» (էջ 322) կամ «զայսոսիկ յոլովք շաղակրատէին», կամ «զսմանէ (Աղբարկա որդի Աստվածատուրի մասին,—Կ. Մ.-Օ.) բազում ինչ առաքինութիւն պատմէին, որք տեսողք լեալ էին» (էջ 183) և այլն։ Երբ համբավի կամ տեղեկության աղբյուրն անծանոթ է, կամ, ըստ Կիրակոսի, ոչ հեղինակավոր, նա փորձում է կասկածի ենթարկել, կամ թե տեղեկության պատասխանատվությունը հեռացնում է իրենից, հայտարարելով՝ «զճշմարիտն մեք ոչ գիտեմք, այս արդարադատին աստուծոյ է գիտելի» (էջ 148) կամ «մեք ոչ գիտեմք, և ոչ ինքեանք ևս» (էջ 272), կամ «թէ ճշմարիտ է և թէ սուտ, մեք ոչ գիտեմք» (էջ 322)։*

*Անվանի մարդկանց բանավոր պատմածները նա ամենայն վստահությամբ և հավատարմությամբ ընդունում է և արձանագրում՝ հաճախ նրանց հասցեին շռայլելով գովասանական խոսքեր։ Բերենք մի երկու օրինակ՝*

*«Զայս (տեղեկություններ Չինգիզ խանի մասին,—Կ. Մ.-Օ.) պատմեաց մեզ Գրիգոր իշխանն, որդի Մարզպանին, եղբայր Ասլան բէկին... յազգէ Մամիկոնէից, զոր իւր փոկ լուեալ էր ի մեծ առնէ միոջէ ի կարի աւագացն, որում անունն էր Ղութուն-Նուին, յաւուր միում յուսուցանել նորա զմանկագոյնսն» (էջ 272—273)։*

*Այս վկայության մեջ բնորոշն այն է, որ Կիրակոսը՝ ցանկանալով ավելի հավաստի դարձնել իր վկայակոչումը, նշում է իր աղբյուրի աղբյուրը և ընդգծում, որ դա վարկպարազի խոսք չէ, այլ լուրջ և դաստիարակչական հանգամանք պարունակող, քանի որ ասված է՝ «յաւուր միում յուսուցանել զմանկագոյնսն»։*

*«Բազում և այլ ինչ պատմէր թագաւորն իմաստասէր (իմա՛ Հեթում,—Կ. Մ.-Օ.) ի խժականացն, զոր թողաք մեք, զի մի աւելորդ թուեսցի» (էջ 372)։*

*«Վասն սորա (Հովհաննես Գառնեցու մասին) բազումք բազում ինչ պատմէին, բայց առաւել սուրբ հարազատն մեր և սքանչելի Վարդան,* որոյ բանքն արժանի էին հաւատարմութեան, *զի նոքա սիրով կապեալ էին ընդ միմեանս։ Եւ մեք մարմնով զնա ոչ տեսաք վասն հեռաւորութեան. նա ի մխիթարութիւն մեզ պատմեաց ինչ ի վարուց նորա մանուար, և ասաց, թէ՝ Ինքն իսկ Յովհաննէս ասաց մեզ» (էջ 349)։*

*Կամ՝*

*«Զայս պատմեաց ճշմարտախօսն այրն (փոքր ինչ առաջ՝ սուրբ այրն. իմա՛ Հովհաննես Գառնեցին,—Կ. Մ.-Օ.) ի հաստատութիւն ուղղափառ հաւատոյ» (էջ 323)։*

*Բաղդատի գրավման մանրամասնությունները նա լսել է գրավման մասնակից Հասան Պռոշից. «Զայս ամենայն պատմեաց մեզ իշխանն Հասան, զոր Պռօշն անուանէին, որդին Վասակայ... որ ականատես և ականջալուր էր իրացս, մեծ պատուով պատուեալ յաչս ղանին» (էջ 384)։*

*Վերը բերված և այլ նման վկայությունները լավագույնս ապացուցում են այն, թե ինչպիսի լրջությամբ և բարեխղճությամբ է Կիրակոսը վերաբերվում իր հաղորդած նյութերի հավաստիությանը։ Հաղորդել սերունդներին միայն*

այն, ինչ բարոյական-դաստիարակչական արժեք ունի, «որ կարողն է իմաստացուցանել զոգէոս... Կարող և ձեռնհաս զնա հաւատալ առանց երկմտութեան և թերութեան»*,—սա է նրա պատմագիտական գերագույն նշանաբանը։

Կիրակոս Գանձակեցու բանավոր ժողովրդական աղբյուրները կարելի է ըստ բովանդակության բաժանել երկու կարգի՝ a) Եկեղեցական-կրոնական զրույցներ և b) Աշխարհիկ-ֆեոդալական զրույցներ: Եկեղեցական զրույցները բանավոր եղանակով մշակվել են վանքերի ու այլ սրբավայրերի շրջապատում կամ նրա գաղափարախոսության անմիջական ազդեցության ենթակա հասարակական խավի մեջ։ Աշխարհիկ զրույցները տարածված են եղել ժողովրդական մասսաների մեջ և ռազմաֆեոդալական դասի շրջաններում։ Եկեղեցական և աշխարհիկ զրույցներն ըստ բովանդակության խիստ տարբեր են միմյանցից։ Եկեղեցականի մեջ դերիշխում է հայրաբանական-սրբագրական աշխարհամերժության իդեալը, աշխարհականն աչքի է ընկնում իր ազգային քաղաքական-ազատագրական երանգներով և աշխարհիկ կենսազգացողությամբ։

## a) Եկեղեցական զրույցներ

Ընդհանուր վարքաբանական մոտիվների և սյուժետավոր պատումների օգով և նմանությամբ հայ եկեղեցական-ժողովրդական միջավայրում ստեղծվել են հայ բնաշխարհի ու նրա պատմահասարակական-քաղաքական դեպքերի ու դեմքերի հետ կապված կրոնա-ժողովրդական մանրապատումներ, որոնցից մի քանիսը վարպետորեն պատմված են Կիրակոս Գանձակեցու Պատմության մեջ։

Ունեցե՞լ է արդյոք Կիրակոսը որևէ գրավոր աղբյուր այդ պատմվածքների համար։ Այդ մեզ հայտնի չէ։ Սակայն նյութի վերլուծությունը, նրա ոգին ու վիպական հորինվածքը մեզ այն եզրակացության են բերում, որ տարբեր խմբագրություններով և տարբեր ծավալով մեր Ժ—ԺԳ դդ. հեղինակների երկերում առկա այդ զրույցները ծագում են ժողովրդական բանահյուսությունից։ Բնորոշն այն է, որ յուրաքանչյուր հեղինակ՝ արձանագրելով իր երկի մեջ այդ զրույցները, յուրահատուկ նրբերանգներ է հաղորդում իր պատմվածքին։ Դրանց շարքին են պատկանում, օրինակ՝ «Օձնեցին և փիշապները» (էջ 70), «Օձնեցին և Հեշմը» (էջ 67—68), Հովհաննես Գառնեցու մասին եղած զրույցները (349—353)։ Առանձնապես ուշադրության արժանի են Հովհաննես Սարկավագի անվան շուրջը հյուսած մի շարք մանրապատումներ։ Այդ զրույցները, օրինակ՝ հաղորդում են մեզ Հովհաննես Սարկավագի Անանուն կենսագիրը (հավանաբար ԺԲ դ.) և Կիրակոս Գանձակեցին։ Հեղինակներիս հաղորդած զրույցների հարևանցի համեմատությունը պարզ ցույց է տալիս, որ այդ զրույցները տարբեր ծագում ունեն։ Այսպես, Անանուն կենսագիրը Հովհաննես Սարկավագի ընթերցասիրության միջադեպը հաղորդում է իր խոսքերով կարճ ու ամփոփ, չոր ու ցամաք, մինչդեռ Կիրակոսը ոչ թե դեպքի հակիրճ բովանդակությունն է տալիս, այլ պատմում է որպես մի հետաքրքրաշարժ զրույց՝ տեղ տալով նաև զրույցների անկապտելի մաս կազմող երկախոսությանը (դիալոգին)։

Ըստ Կիրակոսի՝ Սարկավագը ոչ թե մենակ է մտնում և փակվում քարայրում՝ «առ յոյժ սիրոյ և ըղձից», ինչպես վկայում է Անանուն կենսագիրը, այլ

---

* Կիրակոս, անդ, էջ 4։

ուրիշների հետ («և այլք ընդ նմա»). և երբ բոլորը դուրս են գնում, «նա թաքույց զանձն ի ներքս»։ Ընկերները՝ կարծելով, որ նա էլ է դուրս եկել, փակում են դուռը, ապա ոչ թե «զաւուրս ութ», ըստ Կենսագրի, անցնելուց հետո, այլ ժողովրդական զրույցներին հատուկ անորոշությամբ՝ «անցին աւուրք բազում ի վերայ», որից հետո են գալիս, տեսնում և սքանչանում։ Ապա երբ հարցնում են, թե ինչպես է նա ապրել առանց ուտել-խմելու, նա ցույց է տալիս իր ընթերցած գրքերը և զարմանալի պարզությամբ ասում է՝ «Այս է իմ կերակուր և ըմպելի, զոր կերայ և արբի զաւուրս զայսոսիկ», և ոչ թե, ըստ Կենսագրի ճոռոմ և վերամբարձ արտահայտության՝ «Պարարեալ զանձն ի զբաւսանս զանազան երանգոց և համադամ կերակրոց, որ անդն զանձեալ էին հոգևոր կերակրոց խորտիկք»*։

Կիրակոսի շարադրանքի մեջ ժողովրդի սրամիտ և հյութալի ձայնն է լսվում, մինչդեռ Անանուն կենսագրի մոտ Սարկավագի կյանքից վերցրած այս փոքրիկ կենցաղային դիպվածը պարուրված է սրբագրական խորհրդավորությամբ և սխոլաստիկական վերամբարձությամբ։

Այս տեսագծով էլ պետք է քննության առնել Հովհաննես Սարկավագի մասին պատմած միջադեպերը, որոնցից մեկի բովանդակությունն ընդհանուր առմամբ համապատասխանում է Գանձակեցու և Կենսագրի պատմածներին։ Ասում ենք՝ ընդհանուր առմամբ, որովհետև մանրամասնությունների մեջ նրանք խիստ զանազանվում են իրարից. տարբեր է նաև նրանց շարադրման գեղարվեստական արժեքը։ Հետաքրքրականն այն է, որ նույն այդ միջադեպը վերարտադրող զրույցի մեջ Անանուն կենսագիրը Հովհաննես Սարկավագի հակառակորդ վանականին անվանում է Բարսեղ, մինչդեռ Կիրակոսի մոտ նրա անունը Զոմզոմա-Ստեփաննոս է։ Եթե Պատմագրի մոտ այդ Զոմզոմա-Ստեփաննոսն շատ նուրբ և սրամիտ է իմաստավորված և բնականաբար միահյուսված զրույցի օրինաչափ զարգացման հետ, ապա Բարսեղ անունը Կենսագրի մոտ ոչինչ չի ասում ընթերցողին. նա կարող է, ըստ ցանկության, նաև ուրիշ անուններ ունենալ և նույնպես չկապվել զրույցի բնականոն գեղարվեստական զարգացման հետ։ Կիրակոսի զրույցը միանգամայն գեղարվեստական արժեք է ներկայացնում, մինչդեռ Կենսագրի հաղորդածը վարքաբանական-սրբագրական կաղապարից դուրս չի գալիս**։

Կիրակոս Գանձակեցին և Կենսագիրը վերապատմում են և ուրիշ դիպվածներ Սարկավագի կյանքից։ Եթե Կիրակոսի պատմածները, ընդհանուր առմամբ, կրում են միանգամայն ժողովրդական բնույթ, հարազատ են մեր ժողովրդական ստեղծագործության ոգուն, բառ ու բանին, խոսք ու զրույցին, և արդեն «առակաբար» պատմվում են, ապա նույնը չի կարելի ասել Կենսագրի հաղորդածների մասին։ Ճիշտ է, սրա աղբյուրներն էլ վերջին հաշվով առաջ են եկել ավանդական բանավոր հաղորդումներից, ինչպես անկեղծությամբ խոստովանում է ինքը Կենսագիրը. «Զայս ինչ գրով խնդրեալ իմ, և նոցա, ի բերանոյ առնն, որ ականատեսն էր և սպասաւոր, ստուգեալ՝ գրեցին առ մեզ, զոր գրեցաքս»***, կամ՝ «Այս հաւաստի պատմութիւն պատմեցաւ յաշակերտէ նորին

---

* Ա. Աբրահամյան, Հովհան. Իմաստասերի մատենագրությունը, էջ 120։

** Այս զրույցի գեղարվեստական արժեքի մասին տես առորև։

*** Ա. Աբրահամյանը՝ Հովհաննես Սարկավագի կենսագրության մեջ ճիշտ տպագրելով այս չակերտների մեջ առած պարբերությունը («Հովհ. Իմաստասերի մատ.», էջ 123), իր ուսումնասիրության մեջ փորձում է հետևյալ ձևով «ուղղել» բնագիրը և կետադրու-

կրաւնաւորի սքանչելանշան յերիցս երանեալ վարդապետին Յովհաննու Սարկաւագին», սակայն բանն այն է, որ սա Կիրակոսի նման հարազատորեն չի պատմում լսածը, այլ վերամշակության է ենթարկում՝ ըստ իր հասկացության և ճաշակի՝ ամենուրեք սրբագրական-հրաշագործական կնիքը դրոշմելով շարադրանքի վրա։

## Խ) Աշխարհիկ զրույցներ

Կիրակոս Գանձակեցու Պատմության մեջ կան և մի շարք աշխարհիկ զրույցներ, որոնք, ճիշտ է, առկա են նաև մեր մյուս պատմագիրների երկասիրություններում, բայց դրանք այնտեղ վերապատմված են բոլորովին ուրույն ձևով, անգամ բովանդակության էական տարբերություններով։ Այդ զրույցների շարքից են՝ բյուզանդական կայսր Մորիկի գահակալության դրվագը (Կեղծ Շապուհ Բագրատունի, էջ 3—4, Կիրակոս, 46—48), Գագիկ Բ Բագրատունու կյանքին ու մահվան վերաբերող հատվածները (Կիրակոս, 100—104, Մատթեոս Ուռհայեցի, 180—183, 218—220, 318—321, Սամուէլ Անեցի, 113, 116, 121, Սմբատ, 81—82, 86—87, 89—91, Վահրամ Ռաբունի, 191—194) և աշխարհիկ բնույթ կրող այլ զրույցներ ու ավանդություններ։

Մորիկի գահակալության այս դրվագը ոչ լրիվ պահպանվել է Կեղծ-Շապուհ Բագրատունու Պատմության մեջ, այն էլ միայն զրույցի վերջին մասը, և ամբողջապես Կիրակոսի մոտ։

Մորիկի զրույցի հիմքը պատմական չէ, բայց պատմական-իրական են բյուզանդական գահի համար անվերջ բռնկվող պայքարը, զանազան խմբակցությունների բախումները և գժտությունները։ Որ զրույցը պատմական արժեք չունի, գիտակցում-է և Կիրակոս Գանձակեցին՝ ընդգծելով նրա ժողովրդական-ավանդական ծագումը. «զսա (իմա՛ զՄորիկ,—Կ. Մ.-Օ.) ասեն ի Հայոց, յՕշական գեղջէ և այլք՝ թէ ի Տարօնոյ» (էջ 46), կամ «կէսք ասեն զսա յԱրփսուս գեղջէ Կապպադովկացւոց», «ասեն զնմանէ» (էջ 50)։ Հետևաբար Կիրակոսի ժամանակ ժողովրդի մեջ խոսք ու զրույց է եղել Մորիկի ծագման, հայրենիքի և ոչ ժառանգական իրավունքով բյուզանդական գահը գրավելու մասին։ Եվ իսկապես, ամբողջ հատվածն էլ պահպանել է ժողովրդական զրույցի համն ու հոտը. զգացվում է ժողովրդական անսպառ հումորը, միջադեպի վերին աստիճանի կենդանի նկարագրությունը, մասնակիցների ապրումների փոփոխությունները՝ իրար հաջորդող վերելքն ու վայրէջքը։ Կիրակոսը բառացի չէ գրի առել այդ զրույցը, բայց նա ժողովրդի կենդանի պատմվածքը վերապատմել է՝ աշխատելով նմանվել ժողովրդական պատմելաձևին և պահպանելով ֆոլկլորային հուշարձանի բույրն ու երանգը։

Որ Մորիկի մասին պատմվող զրույցը ժողովրդական բանահյուսական ծագում ունի, դրա լավագույն ապացույցներից մեկն էլ այն է, որ զրույցի տարբեր պատումները պահպանված են թե հայկական բանավոր ստեղծագործության մեջ և թե Հայաստանից դուրս։

Հայկական ժողովրդական բանահյուսության մեջ պատմվում է այդ զրույ-

---

թյունը, որով աղճատում է բնագիրը և միտքն աղավաղում. «Զայս՝ ինչ դրով խնդրեալ իմ, և Ցօքա (բնագրում՝ Ցօցա—Ա. Ա.) ի բերանոյ առնն, որ ականատեսն էր և սպասաւոր առուզեալ գրեցին առ մեզ, զոր գրեցաք». կամ՝ փոքր ինչ ստորև բնագրի «վարդապետին» սրբագրել է անիմաստ «վարդապետէն» (անդ, էջ 19,123)։ Քիչ չեն նման խմբագրական «սրբագրությունները» այս հապշտապ դրած «Հովհաննես Իմաստասերի կենսագրությունը» ուսումնասիրության մեջ։

ցի տարատեսակներից մեկը*։ Սա է այդ հեքիաթի համառոտ բովանդակությունը։

«Հին ժամանակ մի թագավոր է լինում։ Թագավորը մեռնում է անժառանգ։ Մեծամեծները հավաքվում են ու սկսում վեճ ու կռիվ, թե ով պիտի ժառանգի գահը։ Ապա որոշում են մի արծիվ բաց թողնել. ում գլխին որ նստի նրան թագավոր ընտրեն և թագը դնեն գլխին։ Էդպես էլ անում են։

Արծիվը նստում է մի աղքատ գյուղացի երիտասարդի գլխին։ Ուզում են նրան թագավոր օծել. սա աղաչում է, որ էդ բանը չանեն, քանի որ ինքը թագավորացու չէ։ Սրան մի տուն են քցում ու դռները փակում. վերևից մի երդիկ են թողնում, որ թարմ օդ մտնի, չխեղդվի։ Մեկ էլ են բաց թողնում էն արծվին։ Սա պտտում-պտտում, էլի գալիս, երդիկից մտնում, նստում է էն երիտասարդի գլխին։ Էս անգամստիպում են նրան թագավորի գահը բարձրանալ։

Էս երիտասարդը թագավոր է դառնում, բայց չի կարողանում երկիրը կառավարել։ Մտածում է, մտածում ու մի քանի մարդ է ուղարկում իր հոր մոտ և խնդրում է, որ գա, իրեն օգնի, կամ խորհուրդ տա, թե ինչպես ինքը կառավարի երկիրը։

Էդ մարդիկ գալիս են գյուղ, գտնում հորը, երբ նա մշակելիս է լինում բանջարանոցը։ Պատմում են նրան որդու ասածները։ Ծերունին չի ուզում որդու մոտ գնալ, իսկ խորհրդի փոխարեն՝ ման է գալիս բանջարանոցում և հասած մեծ ձմերուկները կտրում, նետում է բանջարանոցից դուրս, իսկ մանր ձմերուկների հողը փխրեցնում է ու ժանգյալներից ազատում։

Էն մարդիկ այլևս պատասխան չեն ստանում և փոր ու փոշման վերադառնում են ու պատմում թագավորին իրենց տեսածը։

Հենց էդ գիշերը թագավորը բոլոր մեծամեծներին կոտորել է տալիս, իսկ փոքր մարդկանց առաջ է քաշում»։

Մենք աշխատեցինք համարյա բառացի վերարտադրել մեր լսածը։

Այս փոքրիկ հեքիաթը շատ նման է Մորիկի զրույցին։ Տարբերությունը չնչին է, ոչ էական։ Եվ իսկապես, տարբերությունն այն է, որ Մորիկի պատումը պատմականացված է, պատմական-իրական լայն աստառի վրա է հենքը զարգացնում։ Այստեղ պատմական է միջավայրը՝ Բյուզանդական գահի շուրջը հաճախ բռնկվող իրադարձությունները, պատմական են բյուզանդական պալատական մեծամեծներն ու պատրիարքը, վերջապես, կայսր Մորիկը. մինչդեռ հեքիաթի մեջ ամեն ինչ հեքիաթային է՝ պատմական իրադարձությունից ու աշխարհագրական միջավայրից հեռու, անհայտ-անորոշ, անանուն... Կա ևս մի չնչին տարբերություն, այն է՝ Մորիկի զրույցի մեջ ծերունին մեծամեծ կաղամբն է կտրում, բանջարանոցից դուրս նետում, իսկ «հեքիաթի» մեջ՝ ձմերուկը։

Թե ինչպես է պատմել ժողովուրդն այս փոքրիկ «հեքիաթը», մեզ հայտնի չէ, քանի որ Հ. Ստեփանյանը, որ ասացող չէ, հեքիաթի միայն մոտավոր բովանդակությունն է մեզ պատմել։ Եթե ժողովրդական ասացողն էլ Հ. Ստեփանյանի նման միայն իմաստին է ուշադրություն նվիրել, իսկ հեքիաթի հորինվածքի գեղարվեստական զարգացումն անտեսել, ապա պիտի ասել, որ Կիրակոսի պատումը գեղարվեստորեն շատ ավելի բարձր է Հ. Ստեփանյանի պատումից։

---

* Պատմել է, ավելի շուտ համառոտ բովանդակությունն է ասել, Կավարտ գյուղացի (Ղափան) Համազասպ Ստեփանյանը, 1957 թ. օգոստոսի 10-ին։

Այսպիսի մի զրույց պատմում են Հայաստանի և Բյուզանդական կայսրության սահմաններից դուրս նաև Եթովպիայում տիգրինա կոչված բարբառով*։ Մեջ ենք բերում այդ զրույցը Ն. Ակինյանի թարգմանությամբ։

«Մարդ մը կար, որուն հայրը վաճառական էր։ Յուր հոր ընկերներն (և) յուր սեփական ընտանիքը իրեն հոգ պատճառեցին, որովհետև անոնք իրարու հետ կկռվեին։ Կար փիլիսոփա մը, վարպետ մը։ Փիլիսոփային մարդիկ ղրկեց ըսելու անոր. իմ ընտանիքս (և) իմ հոր ընտանիքը ինծի հոգ կպատճառին, որովհետև անոնք իրարու հետ կկռվին։ Խորհուրդ մը տուր ինծ։ (Մարդիկ) գացին և ըսին անոր։ Անիկա նստած էր աթոռի մը վրա. ցատկեց, վազեց դուրս. անոնք կնայեին անոր, թե ինչպես հինավուրց տունկ մը կտրեր և մատաղ տունկ մը հողով կպատեր. որևէ պատասխան չտվավ։ Անոնք գացին և ելան (զիրենք ուղարկողին) առջև։

«Ի՞նչ ըսավ ձեզի անիկա», հարցուց անոնց։ «Մեզ պատասխան չտվավ», ըսին անոնք։ «Բայց երբ դուք անոր ըսիք, ի՞նչ ըրավ անիկա»։ Անոնք ըսին և պատմեցին անոր. «Անիկա աթոռի մը վրա նստած էր, դուրս ելավ, հինավուրց տունկը արմատաքի հանեց և նետեց մեկդի, մատաղ բույսը հողով պատեց»։ «Չհասկցա՞ք ուրեմն դուք։ Այնու որ, անիկա հինավուրց տունկը դուրս խլեց և նետեց, ըսել ուզեց. Հորդ ընտանիքը հեռացուր քեզմէ, և երբ մատաղատունկը հողով պատեց, ըսել ուզեց. Առ քո սեփական ընտանիքը և ապրե։ Ինչ խորհուրդ որ ուզեց տալ ինծի մարդը, բարենշան է»։

Եթովպական այս զրույցը միայն շատ ընդհանուր գծերով և ոչ թե, ըստ Ն. Ակինյանի, «զարմանալի» ֆոլկլորային նմանություն ունի Կիրակոսի վերապատմած Մորիկի զրույցի և մենք կասենք՝ նաև հայ ժողովրդական հեքիաթի հետ։ Այստեղ չեն պահպանվել ոչ կոնկրետ պատմական միջավայրը և ոչ էլ գործող անձերը, թեկուզ, ասենք, եթովպական պատմական անցյալից վերցրած, կամ, ինչպես հայկական հեքիաթի մեջ է, գահակալության շուրջը ծագած վեճերի անդրադարձությունները։ Եթովպական պատումը անդրադարձնում է եթովպական հասարակության մեջ իրար դեմ ելնող հին ու նոր կենցաղի, նահապետական ու անհատական ընտանիքների պայքարը։

Բովանդակությամբ իրարից տարբեր բանահյուսական երկու պատումների՝ հայ-բյուզանդականի և եթովպականի, գոյությունը ցույց է տալիս, որ դրանք առաջ են եկել մի ավելի հնագույն զրույցից, որի տարբեր վերսիաներն են հանդիսանում այդ երկուսն առանձին վերցրած, ընդ որում յուրաքանչյուրը՝ ընկնելով մի որևէ կոնկրետ միջավայր, այստեղ կաղապարվում է՝ ըստ տվյալ երկրի, տվյալ դասակարգային հասարակության գույի և գիտակցության։ Այսպիսի կոնկրետ արտահայտություն է գտել այս ընդհանուր գծերով պատմված զրույցը հայ-բյուզանդական միջավայրում՝ վերագրվելով Մորիկ կայսրին. տարբեր կերպով է վերծանված նա եթովպական միջավայրում՝ արտացոլելով հին ու նոր ընտանիքների փոխանցման էտապը։ Եվ որքա՞ն բնական ու տրամաբանական, որքա՞ն իրական-պատմական զարգացում է ստացել դա մեր ժողովրդական բանահյուսության մեջ Կիրակոս Գանձակեցու միանգամայն ժողովրդական վերամշակությամբ։

---

* Enno Littmann. Tigrina-Texte im Dialekte von Tanben, Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, 1902, 211—215. Թարգմանված է Ն. Ակինյանի կողմից «Հանդէս Ամսօրեայ», 1930, V—VI, էջ 364—366։

Բացի վերլուծած Մոռիկյան զրույցից՝ Կիրակոս Գանձակեցին երեք հետաքրքրական զրույցներ է պատմում Անիի Բագրատունի վերջին գահակալ Աշոտյան Գագիկ Բ Շահնշահի մասին։ Այդ զրույցներից առաջինը նա թյուրիմացաբար վերագրում է Կարսի Բագրատունի Գագիկ թագավորին, իսկ երկրորդ և երրորդ զրույցները՝ «միւս Գագիկին» կամ «Գագիկ թագաւորին»։

Զրույցների մյուս տարբերակների մեջ, որոնք պահպանվել են Մատթեոս Ուռհայեցու, Սամուել Անեցու, Սմբատի և Վահրամ Ռաբունու մոտ, Կարսի Գագիկ թագավորը (Աբասյան Գագիկը) մյուս հայ իշխանների հետ գալիս է դյուրահավատությամբ թշնամիների ծուղակն ընկած Գագիկ Աշոտյանին ազատելու բերդարգելությունից, բայց հաջողություն չի ունենում։ Գագիկի արյան վրեժն առնում է սրա զինակից պատանի Ռուբենը՝ Ռուբինյան հարստության հիմնադիրը՝ «նախնին թագաւորին Լևոնի», ըստ Կիրակոսի, կամ Ռուբենի թոռը՝ Թորոսը, ըստ Մատթեոսի Ուռհայեցու, Սամուել Անեցու, Սմբատ Պատմիչի և Վահրամ Ռաբունու։

Աղբյուրների մեջ պահպանված առաջին զրույցը, այն է՝ **«Գագիկ թագավորն ու Մարկոս մետրապոլիտը»**, բովանդակության, ինչպես և նյութի աստիճանական զարգացման տեսակետից բոլորի մոտ հարազատորեն և իրար համապատասխան է հաղորդված, բայց զրույցի գաղափարախոսական հիմնավորումը այդ հեղինակների գրչի տակ տարբեր նպատակադրում է հետապնդել, տարբեր երանգավորում է ստացել։ Եթե զրույցը Կիրակոսի, Սմբատի, Սամուելի և Վահրամի մոտ պահպանվել է ժողովրդական ասքին հարազատ անմիջականությամբ ու պարզությամբ, որպես մի զվարճալի դիպված, որը շոյում է նրանց ազգային պատվազգացությունը, ազգասիրական զգացմունքով է առլցում նրանց սրտերը, ապա նույնը չի կարելի ասել զրույցի Մատթեոսի վերծանության մասին։ Ուռհայեցին ազգայնական-եկեղեցական-դավանական բնույթ ու երանգ է հաղորդել զրույցի վերծանությանն ու գեղարվեստական կատարմանը՝ շարադրանքին։ Ըստ Մատթեոսի, Գագիկ թագավորը՝ տեսնելով Բյուզանդական կայսրի նենգ, թշնամական վերաբերմունքը և լսելով Մարկոս մետրապոլիտի ամբարիշտ արարքի մասին, թշնամությամբ և ատելությամբ է լցված առհասարակ դեպի հույները-հոռոմները, մասնավորապես դեպի «հերձուածող չար և պիղծ հերետիկոս» Մարկոս մետրապոլիտը, որովհետև սա «հայհոյիչ էր յոյժ ազգիս Հայոց և ամենայն շան Արմեն կոչէր» (այս մոմենտը կա և մյուս աղբյուրների մեջ). ատելություն և վայրույթ է տածում նաև «Հոռոմ թագավորի» հանդեպ, որովհետև սա «կամի... զորդիս թագաւորացն Հոռոմ կնքել»։ Ի պատասխան բյուզանդացիների բորբոքած թշնամության՝ Ուռհայեցին, ասես, ներքին բավարարվածություն և գոհունակություն է զգում, երբ գրում է, թե վտարանդի Գագիկ Բ հրամայում է իր զորքերին Կեսարիայի շրջանում «խայտառակել զփառաւոր կանայս Հոռոմոց, և այնու նախատեաց զնոսա» (այսպիսի բան չկա մյուս պատումների մեջ)։ Եվ այդ ամենը կատարելուց հետո, ասում է նա, Գագիկն ուզում է գնալ «առ Աբասլան սուլտանն Պարսից» և սրա օգնությամբ «տիրանալ աթոռոյ թագաւորութեանն տանն Հայոց»։ Այստեղ արդեն խոսք չի կարող լինել մասնակի վրիժառության մասին մի ինչ որ անհատից. այստեղ այդ անզուսպ զգացմունքը դուրս է եկել անհատի ներքին ապրումների սահմանափակ շրջանակից և ընդհանրանալով՝ վեր է ածվել ազգային-քաղաքական բուռն ատելության և վրեժխնդրության։

*Այսպիսի գաղափարախոսական նախադրյալներից և համապատասխան նախապատրաստությունից հետո՝ Ուռհայեցին անցնում է զրույցի շարադրանքին։ Նա ստեղծագործորեն զարգացնում է սյուժետը, զարդարում, ճոխացնում և սրում է հերոսների խոսքն ու զրույցը, Գագիկի սրտալի հրճվանքն ու Մարկոսի կրած տվայտանքները՝ «Եւ ձայն ուժգին և աղաղակ բազում ելանէր ի Մարկոսէն ... և հառաչումն սրտին ելանէր ի խորոց քրձին... և այսպէս չարեաւ սատակեցաւ չար և պիղծ հայհոյիչն»։ «Պիղծ հերետիկոս» Մարկոսին սպանելուց հետո՝ նա կողոպտում է նրա ունեցվածքը (մանրամասն թվարկված են ավարի տեսակն ու քանակը), ապա Մատթեոսը հպարտությամբ և ազգային սնապարծությամբ հայտարարում է՝ «Զայս այսպէս գործեաց Գագիկ ի մէջ հոռոմոց, զոր ոչ այլ ոք համարձակեցաւ գործել ոչ յառաջն և ոչ զկնի»*։*

*Երկրորդ զրույցը, այն է՝ Գագիկ թագավորի սպանության զրույցը, առկա է մեր հիշած բոլոր պատմագիրների երկասիրությունների մեջ, սակայն նրանց հաղորդածները տարբերվում են միմյանցից թե՛ բովանդակությամբ, թե՛ ծավալով և թե՛ յուրաքանչյուրին հատուկ գաղափարական նպատակասլացությամբ։ Մեր հեղինակների պատմածները կարելի է բաժանել հիմնականում երկու խմբի՝ Կիրակոսյան և Մատթեոսյան։*

*Զրույցի տարբեր պատումներն «ասվել» են ժողովրդի մեջ դեռ ևս 11-րդ դարում։ Այսպես Սամուել Անեցին գրում է՝ «Ի սոյն (1025) ամի և այլք ասեն, թէ ի ՇՀԵ (=1026) ամին գնաց թագաւորն Գագիկ ի Տարսուս առ Աբլղարիպ իշխանն Հայոց վասն խնամութեան, և ի դառնալն* մեր *յԱռճիսա՝ կալան զնա իշխանքն յոմնաց և խեղդեցին զնա. Գ եղբարք, որք էին ի միում բերդի, և յինքն Գագիկ ընդ անցանելն առ նոքօք խոնարհեցաւ ի տես նոցա և յողջոյն։* Եւ այլք ասեն, թէ ի յորս կայր և ի բուն գտեալ *Մանտալեանքն՝* տարան ի բերդն Կանդռոսկաւի և անդ սպանին»**։

*Սամուել Անեցու այս խանգար վկայությունից, որի մեջ և թվականն է շփոթված, և գործող անձերը, մի բան աներկբա է, այդ այն է, որ Գագիկի սպանման մասին ժողովրդի մեջ իրարից տարբեր մի քանի զրույցներ են ասվել-պատմվել։*

*Անեցու ժամանակագրության այս վկայության համեմատ՝ մենք ամենայն վստահությամբ կարող ենք ասել, որ Կիրակոսի պատումը պատկանում է զրույցի այն խմբին, որի մեջ պատմված է եղել, թե Գագիկն «ի յորս կայր, և ի քուն գտեալ (զնա)... տարան ի բերդն... և անդ սպանին»։ Կիրակոսը չի հիշում ոչ Մանտալյանների անունը և ոչ էլ բերդինը։ Նրա մոտ Մանտալյանների փոխարեն ասված է «պատահեալ նմա (իմա՛ Գագիկին) արանց յունաց», իսկ Կանդռոսկավի բերդի փոխարեն՝ «բերդ մի»։*

*Զրույցի խմբերի մեջ կա նաև մի այլ հիմնական տարբերություն։ Ըստ Կիրակոսյան խմբի՝ հույները, «հոռոմները» բռնում, սպանում են «արքեալ» Գագիկին՝ առնելով Մարկոս մետրապոլտի սպանության վրեժը՝ «Եւ ասեն հոռոմքն. «Ո՞ւր է մետրապօլիտն մեր Մարկոս»։ «Եւ ընկեցին զնա ընդ պարիսպն բերդին, և մեռաւ»։ Մինչդեռ ըստ Մատթեոսյան խմբի՝ Գագիկն իր զորագնդով խնամության անհաջող հրավերքից վերադառնալիս՝ ճանապարհին ասպատակում է Տարսոնի գավառը, դերեվարում իշխաններին, գալիս է «հազար ա-*

---

*  * Մատթեոս Ուռհայեցի, *նույն, էջ 183։*
** Սամուէլ Անեցի, *նույն, էջ 116։*

րամբ ի դաշտն Առժախառայ (այլք՝ Արժիառոյ), ի բերդն, որ ասի Կիզիստգայ (այլք՝ Կիզիստառ)», որը պատկանում է երեք եղբայր Մանտալյաններին։ Սրանք դավադրությամբ բռնեցին Գագիկին, որն երեք մարդու ուղեկցությամբ դիմում է դեպի Մանտալյանները, և տարան իրենց բերդը, որտեղ «աստուածասպան ազգն Հոռոմոց լարով աղեղան խեղդեցին զթագաւորն Հայոց և կախեցին զնա ընդ պարիսպն զօր մի», ապա թաղեցին։ Վեց ամիս անց Բանիկ անունով մեկը հանեց Գագիկի աճյունը և տարավ «ի քաղաքն իւր և յազգն»։

Մատթեոս Ուռհայեցին՝ ամենայն մանրամասնությամբ նշելով զրույցի գործող անձերին, նկարագրում է մի նշանակալից պատմաքաղաքական իրադարձություն, մինչդեռ Կիրակոս Գանձակեցու պատմածը դուրս չի գալիս իր բոլոր մանրամասներով ժողովրդական բանահյուսության շրջանակներից։ Կիրակոսի զրույցը, ինչպես տեսնում ենք, խիստ տարբերվում է Մատթեոսյան խմբից թե՛ բովանդակությամբ և թե՛ Գագիկի սպանման դեպքի պատճառաբանությամբ և հիմնավորմամբ։

Զրույցի Մատթեոսյան խումբն իր հերթին բաժանվում է երկու ենթախմբի, ընդ որում մեկի ներկայացուցիչը Մատթեոս Ուռհայեցին է, որը զրույցը գաղափարախոսական մշակման է ենթարկում, իսկ երկրորդ ենթախմբի մեջ են մտնում մյուս երեք հեղինակները, որոնց պատումներն էլ որոշ, բայց ոչ կարևոր կառուցվածքային տարբերություններ են պարունակում (տեղանունների, անձնանունների և որոշ մանրամասնությունների գծով)։

Երրորդ զրույցի Կիրակոսյան պատումը միանգամայն տարբերվում է Մատթեոսյան խմբից (Մատթեոս, Սամուել, Սմբատ և Վահրամ)։ Սրանցից յուրաքանչյուրն իր նախորդի՝ երկրորդ զրույցի բնական ու օրինաչափ զարգացումն է հանդիսանում։ Եթե, ըստ Կիրակոսի, Գագիկին հոռոմները բռնում, սպանում են հենց այն պատճառով, որ սա սպանել է Մարկոս մետրապոլտին (վրեժի լուծում), ապա հայերը (նրա նախկին «զինակիրը»—«մանուկ մի փոքրիկ»—«նախնին թագաւորին Լևոնի») լուծում են իրենց թագավորի վրեժը՝ սպանելով մի ուրիշ հոռոմ եպիսկոպոս։ Մյուս կողմից, եթե ըստ Մատթեոսյան խմբի պատումի Գագիկին սպանում են հոռոմ իշխանները՝ Մանտալյան եղբայրները, ապա հայերը՝ Ռուբենի թոռ Թորոսն իր զորագնդով, Գագիկի վրեժն են լուծում Մանտալյաններից՝ կոտորելով նրանց և գրավելով նրանց երկիրը, այսինքն՝ սովորական մի կենցաղային դրվագ ռազմաֆեոդալական դարաշրջանից։

Կիրակոսի զրույցները ժողովրդական զրույցներին հատուկ կենցաղագրական մանրամասնություններով՝ կերուխումի տեսարանով են սկսվում և նույնպիսի կերուխումի նկարագրությամբ էլ ավարտվում։ Այստեղ հենց առաջին զրույցի սկզբից մինչև երրորդ զրույցի վերջը հայ Գագիկ թագավորն ու բարձրաստիճան հոռոմ հոգևորականներն են հանդես գալիս իբրև գործող անձեր, ոխերիմ ախոյաններ, իսկ զրույցների առանցքն է կազմում հայերի ու հոռոմների հակամարտությունը, Մարկոս մետրապոլտի արհամարհալից վերաբերմունքը հայերի հանդեպ, հայերի վրեժը Մարկոսից, ապա «հոռոմների» վրիժառությունը հայերից՝ Գագիկի սպանությունը, և վերջապես, մի այլ բարձրաստիճան հոռոմ հոգևորականի՝ եպիսկոպոսի սպանությունը, որպես այդյան վրիժառության մի գործողություն Գագիկի սպանության փոխարեն։

Մեզ թվում է, թե Կիրակոսի այս երրորդ զրույցը բանահյուսական մի կրկին պատմվածք է առաջին զրույցի, կամ առաջինի մի այլ պատում, որ

փոխարինել է երրորդ զրույցին։ Ինչպես էլ ընդունելու լինենք, դա լավագույն ապացույցներից մեկն է, որ Կիրակոսն այս զրույցն իր բոլոր մասերով քաղել է ժողովրդական բանահյուսությունից։

Մատթեոսյան խմբի մանավանդ երկրորդ և երրորդ զրույցները շատ են տարբերվում Կիրակոսի պատումներից։ Մեր աչքի առաջ ծայր է առնում, աստիճանաբար զարգանում և իր օրինաչափ վախճանին հասնում մի անխառն ռազմաֆեոդալական վիպական ամբողջական հորինվածք, որի նյութը երկու տարբեր ժողովուրդների տիրող դասակարգերի անհաշտ կռիվն է, մի կռիվ, որի մեջ ոչ նվազ դեր է կատարում նաև կրոնադավանաբանական ներհակությունը։

Անհրաժեշտ ենք համարում այստեղ արձանագրել, որ այս խմբի պատումների մեջ ֆեոդալական-եկեղեցական տեսագծով բավականաչափ հաջող գրական մշակման է ենթարկված Մատթեոս Ուռհայեցու պատումը։ Հաջող է նաև Սմբատի պատումը, որի մեջ դավանաբանական մոմենտն ընդգծված չէ հանդես գալիս։

Մեր այս վերլուծությունից կարելի է հանգել միայն հետևյալ եզրակացության, այն է՝ որ ԺԱ—ԺԳ դարերում հայ պատմական-իրական միջավայրում հյուսված են եղել և ասվել-պատմվել են զանազան զրույցներ Բագրատունիների հարստության անկման, հատկապես այդ հարստության վերջին գահակալ Գագիկ Բ-ի հերոսական գործերի և ողբերգական վախճանի, ինչպես նաև Ռուբինյան հարստության հիմնադիրների մասին։ Այդ զրույցները երկար ժամանակ կենդանի ապրել են բանավոր եղանակով՝ բերնից բերան, սերնդից սերունդ, և ապա նրանց բեկորները՝ ի տարբերություն «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի՝ մուտք են գործել և պահպանվել նույն ժամանակաշրջանի պատմագրական հուշարձանների մեջ։ Զրույցները պահպանող հեղինակներից ոմանք վիպում են դրանք ժողովրդական բանավոր հուշարձաններին ավելի մոտ և հարազատ երանգներով, ինչպես Կիրակոս Գանձակեցին, մյուսները գրական մշակության են ենթարկում՝ համապատասխան իրենց դասակարգային հասկացության և պահանջներին (Մատթեոս Ուռհայեցին և մյուսները)։

Կիրակոս Գանձակեցին քննարկածս զրույցները կամ ինքն է քաղել ժողովրդի բերանից և յուրովի պատմել, կամ օգտվել է մի այլ, մեզ անհայտ գրավոր աղբյուրից, որն իր հերթին օգտագործած է եղել ժողովրդականը։ Այսպես թե այնպես դրանց աղբյուրը ժողովրդական բանահյուսությունն է:

Կիրակոսի Պատմության մեջ կան և մի շարք մանր-մունր զրույցներ, որոնց ծագումն, անկասկած, ժողովրդական է, բայց մենք դրանց վրա հարկ չհամարեցինք կանգ առնել՝ ներածականը չծանրաբեռնելու համար։

## Դ

## ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԺԳ ԴԱՐԻ ՄՅՈՒՍ ՊԱՏՄԱԳԻՐՆԵՐԻ ԵՐԿԵՐԻ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Օգտագործելով իր երկասիրության մեջ բազմազան պատմագրական-փաստական, վարքաբանական, կրոնական-դավանաբանական, եկեղեցական-իրավական և այլ սկզբնաղբյուրներ, Կիրակոսն ինքն էլ իր հերթին անսպառ նյութ է տվել իր ժամանակի և հետագա պատմագիրներին, հարստացրել է

վերջիններիս պատմագրական փաստերը նորանոր փաստերով և քաղաքական իրադարձությունների լուսաբանությամբ։ Հետագա սերունդների համար նրա Պատմությունը թաթար-մոնղոլական դարաշրջանի Հայաստանի պատմության ամենահավաստի և արժեքավոր սկզբնաղբյուրների մեջ առաջնակարգ տեղ է գրավել։ Նա այդ շրջանի ամենահեղինակավոր պատմագիրն է։ Շատերն են օգտվել նրա երկասիրությունից՝ բառացի քաղվածքներ կատարելով կամ յուրովի հարասելով նրա պատմածը։

Կիրակոսի պատմագրական երկն օգտագործողներից հարկ ենք համարում այստեղ հարևանցի քննարկման ենթարկել միայն մեկ երկուսին, այն էլ ԺԳ դարից և առաջին հերթին, նրա մտերիմ բարեկամ, սննդակից-աշակերտակից, «հարազատ եղբայր» Վարդան Արևելցուն։

Վարդան Արևելցին իր «Տիեզերական պատմության» մեջ ինքն է վկայում, որ օգտվել է Կիրակոսի Պատմությունից։ «Զոր ինչ արարին ազգն նետողաց ընդ իշխանս և ընդ իշխանութիւնս,—գրում է նա,—որ յայսմ կողմանէ ծովուն մեծի՝ ընդ Պարսս և ընդ Աղուանս, ընդ Հայս և ընդ Վիրս և ընդ աշխարհն՝ Հոռոմոց կոչեցեալ... գրեալ են մանրամասնաբար հայրն մեր և ընդ սուրբս աստուծոյ փառաւորեալն Վանական վարդապետ և հարազատն մեր՝ Կիրակոս վարդապետն՝ հօրն համանման, զոր մեք ոչ համարձակեցաք երեքկնել կամ բազմաբանել, այլ համառօտ բերեալ միայն զթիւ ժամանակին նշանաւոր իրաց և գործոց յիշատակաւք ի լրումն մերոյ գործառնութեանս՝ յոլով ժամանակօք սկսեալ և թերի թողեալ, պատկառելով ի գրողացն պատուոյ, զորս վերագոյն յիշեցաք»*։

Մեծ ակնածությամբ խոսելով իր ուսուցիչ Վանականի և սննդակից Կիրակոսի պատմագրական երկասիրությունների մասին՝ Վարդանը չի համարձակվում «երեքկնել կամ բազմաբանել» նրանց պատմածները, այլ համառոտ մեջ է բերում «միայն զթիւ ժամանակին նշանաւոր իրաց և գործոց յիշատակաւք ի լրումն մերոյ գործառնութեան»,—ինչպես ավելացնում է նա։ Եվ իսկապես, Վարդանը հավատարիմ է մնում իր խոստմանը։ Կիրակոսի երկու ընդարձակ գլուխները Վանական վարդապետի մասին (էջ 243—252, 344—348), նա համառոտում է մի էջի վրա, կամ մի ամբողջ գլխի բովանդակությունը հակիրճ ամփոփում է, զետեղում մի ոչ ընդարձակ պարբերության մեջ։ Ուրեմն անառարկելի ճշմարտություն է, որ Վարդանը ծանոթ է Կիրակոսի երկասիրությանը։

Սակայն ի՞նչ հիմունքներով և ո՞ր աղբյուրից Հ. Ոսկյանը գիտե և վստահ պնդում է, թե Կիրակոսը ծանոթ է Վարդանի պատմական երկին. «Թեև իրեն (իմա՛ Կիրակոսին,—Կ. Մ.-Օ.) ծանոթ եղած է,—գրում է նա,—թե այս մասին (այսինքն՝ թաթարական սպառնալիքի և այլն,—Կ. Մ.-Օ.) Հովհ. Վանական և Վարդան (ընդգծումը մերն է,—Կ. Մ.-Օ.) գրած են պատմական աշխատություններ, բայց համոզված է, թե տեղի ունեցած դեպքերը մեկ կամ երկու գրչով չէին կրնար լիովին բացատրված ըլլալ, ուստի ինքն ալ յուրովսանն ուզած է յուր տեսածն ու լսածն ավանդել»**։ Այս տողերը գրելով՝ Հ. Ոսկյանը վկայակոչում է Կիրակոսից հետևյալը. «Կարծեմ թէ յոլովք ևս զնոյնս պատմեցեն, և ամենեքեան նուազեալ գտանին յարժանաւորութենէն, զի յաճախ են քան զպատմութիւնս՝ չարիքս, որ եկին հասին զաշխարհս ամենայն»***

---

* Վարդան, Պատմ. Տիեզ., Մոսկվա, էջ 192։

** Հ. Ոսկյան, Հովհաննես Վանական, էջ 102—103։

*** Կիրակոս, անդ, էջ 231։

Իրերի ամենահասարակ տրամաբանությունն էլ խոսում է Հ. Ոսկյանի այս մտքի դեմ։ Եվ իսկապես, եթե մի հեղինակ իր գիրքը գրելիս՝ օգտվում է մի այլ հեղինակի հրապարակ հանած աշխատությունից, ապա այս վերջին հեղինակը չէր կարող առաջին հեղինակի դեռ չգրված ու հրապարակված գրքից օգտվել։ Հ. Ոսկյանն այստեղ շփոթել է նաև բացի ժամանակները, էլ չենք ասում երևակայության գյուտ Վարդանի պատմությունը։ Թող ներվի ինձ այս հարկադրված շեղումը։

Վանականի և Կիրակոսի պատմագրական երկասիրություններից Վարդան Արևելցին օգտվում է՝ հակիրճ ամփոփելով նրանց ասածները, երբեմն, հարկ եղած դեպքում, հիշելով, որ այդ մասին «գրեալ են մանրամասնաբար» Վանականն ու Կիրակոսը, կամ «որպէս ցուցանեն ընդարձակ մատենագիրք» (այս մասին փոքր ինչ ստորև)։ Սակայն Վարդանի Պատմության մեջ կան մի շարք, ճիշտ է, ոչ ընդարձակ հատվածներ, որոնք նա համարյա բառացի քաղում է Կիրակոսի Պատմությունից։

**Վարդան Արևելցի**

«Քաջն Հուլաւու էառ զԲաղդատ զկնի հինգ հարիւր հնգետասան ամի շինութեան նորա—ի Ջափրէ և յիսմայելացւոց ի հարիւր ինննուն և չորս թուին հայոց ի վերայ Տիգրիս գետոյ, որպէս ասեն՝ հեռի ի հին Բաբելոնէ եօթն* աւուր ճանապարհ»**։

էջ 197

**Կիրակոս Գանձակեցի**

«...Հինգ հարիւր և հնգետասան ամ էր, յորմէ հետէ շինեցաւ քաղաքն ի Ջափրէ Իսմայելականէ ի ՃՂԴ թուականին հայոց ի վերայ Տիգրիս գետոյ, ի վեր քան զԿատիսբոն, հեռի ի Բաբելոնէ իբր հինգ* աւուր ճանապարհ ի վեր»։

էջ 383

Մարտիրոսաց քաղաքի պաշարման և գրավման սարսափելի նկարագրության մեջ, որ ընդհանուր առմամբ բավականաչափ տարբերվում է Կիրակոսի պատմածից, կա համարյա բառացի մի քաղվածք սրա Պատմությունից՝ միայն շատ համառոտած։

**Վարդան**

«Զի ի սովն կերան զսուրբ և զանսուրբ անասունս, ապա զաղքատսն, ապա զծնունդս իւրեանց և զմիմեանս»։

էջ 197

«Զի խաբէին զնա աստեղագէտք և քուրմք պատկերաց ոմանց՝ Շակմոնիա կոչեցեալ, որ է ասեն աստուած երեք հազար և քառասուն ամաց, կալոց է դեռ այլ ևս երեսուն և եօթն թումանս—որ է թուման տասն հազար, և ապա հանէ, ասեն, միւս Մանդրին անուն»։

էջ 209

**Կիրակոս**

«Կերան զսուրբ և զանսուրբ կենդանիս, և ապա սկսան զմարդիկ ուտել... յորժամ սպառեցան աղքատքն, դարձան ի միմեանս և ուտէին հարք զորդիս... և ոչ գթային ի ծնունդս»։

էջ 385—386

...«Անուն Շակմոնիա, և ասեն, աստուած երեք հազար և քառասուն ամաց. կայ այլ ևս երեսուն եօթն թուման ամս, որ է մին թումանն տասն հազար, և ապա հանէ զնա յաստուածութենէն։ Այլ միւս ևս ոմն որում անուն էր Մադրին։

էջ 371—372

---

* Վարդանի՝ «եօթն» և Կիրակոսի՝ «հինգ» տարբերությունը առաջ է եկել միջին երկաթագիր Ե և Է շփոթությունից:

** Բաղդատի գրավման թվականը Կիրակոսը ճիշտ չէ տալիս: Հուլավուն այդ քաղաքը նվաճել է 1258 թ. փետրվարի 10 (տե՛ս Рашид-ад-дин, Сборник летописей, т. III, էջ 44): Հետաքրքրական է, որ Վարդանը Կիրակոսի սխալ թվագրությունը առանց կասկածի ենթարկելու ընդունում է:

«Եւ էին պարկեշտ ի կերակուր և ի հանդերձ, և ի կուսութիւն, և ի չափաւոր ամուսնութիւն։ Քսան ամաց կին առնել, առեն մինչ ի յերեսուն ամն շաբաթն երեք հետ խառնէին. և անտի մինչև ի քառասուն ամն յամսեանն երեք. և անտի մինչև ի յիսուն՝ տարին երեք, և ընդ յիսուն անցեալ՝ բնաւ առեն ոչ մերձենալ»*։

էջ 210

«Եւ էին պարկեշտք ի կերակուրս և յամուսնութիւնս. առնէին կին ի քսան ամին. և մինչև յերեսուն ամն ի շաբաթն երեք անգամ մերձենան, և մինչև ի քառասուն՝ յամսեան երեք հետ, և մինչև հիսուն ամն՝ ի տարին երեք հետ. և յորժամ անցանի, այլ ոչ մօտին ի նա»։

էջ 372

Կիրակոս Գանձակեցու աղբյուրը թաթար-մոնղոլների կրոնական ընտանեկան և բարոյական նկարագրի մասին Հեթում արքան է՝ «Բազում և այլ ինչ պատմէր Թագաւորն իմաստասէր ի խժականացն, զոր թողաք մեք, **զի մի աւելորդ ումեք թուեսցի**»։ Վարդանը չնչին «խմբագրական» փոփոխություններով քաղում է Կիրակոսի պատմածը և Կիրակոսի ընդգծածս նախադասությունն օգտագործում, որպեսզի իմաստավորի, թե ինչու ինքը բավականաչափ տեղ է հատկացրել իր զրույցին Հուլավուի հետ և թաթար կենցաղին։ «**Թերևս աւելորդ թուիմք**՝ գրելով զայս,—գրում է նա,—**այլ վասն բարեսէր... Հուլաւուին յիշատակի գրեցաք** յօգուտ կամ յօրինակ այլոց, որ գալոց են յետ մեր, ո՞ գիտէ»**։

Կան նաև մի շարք մանր-մունր հատվածներ, որոնք Վարդանը՝ հարասելով, քաղում է Կիրակոսի Պատմությունից, բայց դրանց զուգադրությունը համարում ենք ոչ այնքան անհրաժեշտ։

Կիրակոսի և Վարդանի պատմագրական երկերի մեջ, սակայն, կան ակնբախ տարբերություններ միևնույն քաղաքական և ռազմական իրադարձությունը նկարագրելու և վերծանելու գծով։ Այդ տարբերությունը, ըստ իս, ծագել է երկուսի կողմից օգտագործած տարբեր աղբյուրներից։ Դա մանավանդ ակնառու է դառնում այն դեպքում, երբ Վարդանը խիստ շեղվում է Կիրակոսի շարադրանքից և նկարագրում է իր գրչակից-անդակից ընկերոջը միանգամայն անծանոթ կամ նրա կողմից անտեսված եղելությունները։ Արդյոք այս դեպքում Վարդանի աղբյուրը Վանականի Պատմությունը չէ՞, կամ թերևս մի ա՞յլ մեզ անհայտ պատմագրական երկ, կամ հենց Վարդանի անձնական դիտողություննե՞րը։ Այնուամենայնիվ բերենք մի երկու օրինակ։

Վարդան

«Ի վեց հարիւր իննսուն և մի թուին հայոց Բաչու-Նուինն փոխեաց զիշխանութիւնն Չարմաղանին և էառ զԿարնոյ քաղաք՝ հանեալ անտի զայրն երևելի, մեծատուն և երկիւղած ի տեառնէ, զՈւմեկն և զազգականս նորա՝ զորդիս պարոն Յովհաննու զՍտեփանոս և զեղբարսն իւր հինգ։

էջ 193

Կիրակոս

Կիրակոսը գիտե, որ 691 թ. Չարմաղանին փոխարինում է Բաչու դուրչի (=Բաչու-Նուին), որը գրավում է Կարնո քաղաքը, սակայն Ումեկի պատման մասին այնտեղ խոսք չկա։

«Վասն աշխարհագրին» գլխում նա գրում է՝ «Բայց մեծարեցաւ ի նոցանէ այր մի մեծատուն, զոր ինքեանք Ասիլ կոչէին. այր բարեգործ, զոր երբեմն յիշատակեցաք, որ ապրեցաւ յաւերելն Կարնո քաղաքի ի Թաթարոյն հանդերձ որդւովքն Յովհաննու՝ Ստեփանոսիւ և եղբարբք իւրովք»։

էջ 363

* Մոսկվայի հրատ. մեջ կետադրությունը խառնափնթոր է։
** Վարդան, անդ, էջ 209։

Ինչպես տեսնում ենք, բացի Ումեկի մասին եղած հատվածից, այն էլ ոչ լրիվ, Վարդանի և Կիրակոսի հաղորդումները Կարինի գրավման հետ կապված գործողությունների մասին խիստ տարբերվում են միմյանցից։ Վարդանը ոչինչ չի հաղորդում կոտորածների, ավերածությունների, ավարառության, գերեվարության և գերիների ու գրքերի վաճառքի մասին։ Նա պատմում է միայն Ումեկի և յուրայինների ազատման մասին։ Այն ինչ Կիրակոսը Կարինի գրավման նվիրած գլխում («Վասն առերման Թէոդուպօլեայ») մանրամասն խոսում է այն ամենի մասին, ինչ բացակայում է Վարդանի մոտ, բայց իր հերթին այստեղ նա ոչինչ չի ասում Ումեկի և սրա ազգականների ազատագրման կամ ազատվելու մասին։ Դեռ ավելին, Կիրակոսը Ումեկի և յուրայինների ազատման մասին խոսում է միմիայն 703 թ. (1254) աշխարհագրի կապակցությամբ այսինքն՝ Կարինի գրավումից 12 տարի անց։ Ճիշտ է, Կիրակոսը՝ Ումեկի անունը տալով, անմիջապես ավելացնում է՝ «Զոր երբեմն յիշատակեցաք», բայց և այնպես նրա Պատմության մեջ այլևս Ումեկ անուն չի հիշվում։ Այս հանգամանքը մենք հատուկ ուշադրությա ենք առել վերը՝ Կիրակոսի Պատմության ամբողջականության հարցը քննարկելիս*։

ՈՂԸ (1249) թվականին հայոց և վրաց ավագանին Դավիթ թագավորի գլխավորությամբ ծրագրում է ապստամբել թաթարների բռնակալության դեմ։ Դավաճանությունը բացվում է։ Մոնղոլները դաժան միջոցների են դիմում։ Այդ մասին Կիրակոսը պատմում է բավականաչափ ընդարձակ, իսկ Վարդանը՝ համառոտ։ Ծավալային տարբերությամբ հանդերձ այդ երկու վկայության մեջ կան նաև էական տարբերություններ։

Վարդան

«Եւ ընդ ձեռամբ ածեալ զթագաւորն Դաւիթ և զայլ մեծամեծսն՝ կապեցին և ճատին վճիռ մահու. այլ ի խնամոց վերնոյն արձակեցան ի մահուանէ. սակայն անթիւս կոտորեցին և գերեցին գեօղս և ագարակս և գործեցին խայտառականս ի կանայս ի Հայս և առելի յաշխարհին Վրաց:

Ի վեց հարիւր իննսուն և ինն թուին մեռաւ Աւագն՝ որդի Իւանէի, և թաղեցաւ ի Պղնձավանք ընդ հօր իւրում—այր անազան և պատերազմասէր և աղօթական»:

էջ 194

Կիրակոս

«Եկն և թագաւորն Դաւիթ և այլ իշխանքն, և կապեալ զամենեսեան ուժգին ըստ օրինի իւրեանց ըզձեռս և զոտս բարակ չուանօք, և թողեալ այնպէս կապեալ զերիս աւուրս՝ ձաղէին և անարգէին զնոսա և զբազումս կոտորեցին, և զեւս բազմազոյնս գերի վարեցին՝ զարս և զկանայս և զմանկունս գետամոյն առնէին անթիւ ի բազմութենէ. և այս գործեցաւ ի վեց հարիւր իննսուն և ութ թուին հայոց։

Յետ այսորիկ մեռաւ իշխանաց իշխան Աւագն և թաղեցաւ ի Պղնձահանքն ի գերեզմանի հօր իւրոյ Իւանէի»։

էջ 320—321

Ընդգծված տողերը, ինչպես պարզ երևում է բաղդատությունից, խմբագրված են Վարդանի կողմից, իսկ մի մասն էլ նա քաղել է մի այլ, մեզ անհայտ (դա համենայն դեպս Գրիգոր Ականցին չէ) աղբյուրից, կամ նա իր անձնական տպավորությունները՝ ասածն ու լսածն է հաղորդել։ Միջանկյալ «այլ ի խնամոց վերնոյ արձակեցան ի մահուանէ» նախադասությունը Վարդանի գրչի արգասիք է։ Այս իմաստով Կիրակոսի մոտ ակնարկություն չկա։

---

* Տե՛ս առ, էջ ԼԸ—ԼԹ։

Բացի վերոհիշյալից՝ Կիրակոսի և Վարդանի հաղորդումների մեջ կան նաև այլ զգալի տարբերություններ, օրինակ.

1. Մոնղոլական աշխարհագրի համեմատ՝ Հայաստանի հարկագրումը տեղի է ունեցել՝ ըստ Կիրակոսի՝ 703 թ. (1254), իսկ ըստ Վարդանի՝ 702 թ. (1253)։

2. Ըստ Կիրակոսի՝ հարկադրվում են «ի տասնամենից և ի վեր» (Ըստ Գրիգոր Ականցու՝ «ի ԺԵ տարեկանէն ի վերն») բոլորը «բաց ի կանանց», իսկ ըստ Վարդանի՝ «ըստ գլխոց արանց բաց ի կանանց, և ի բուն ծերոց, և ի մատաղ տղայոց» (էջ 195)։

3. Հուլավուի արշավանքը՝ մուլհեդների նվաճումը և Բաղդադի գրավումը, ինչպես և քրիստոնյաների դրությունը Հուլավուի և Տոխուզ խաթունի ժամանակ տարբեր ձևով են նկարագրված Կիրակոսի (էջ 377—384) և Վարդանի (էջ 195—196) Պատմությունների մեջ։

4. Միջագետքի ,նվաճումը և Մուֆարղինի-Մարտիրոսաց քաղաքի պաշարումն ու գրավումը նույնպես տարբեր մանրամասնություններով են նկարագրված Կիրակոսի և Վարդանի կողմից։ Վարդան Արևելցին այստեղ օգտվել է ինչ որ գրավոր աղբյուրից, «որպէս և գրեցին մանրապատում գրողքն»,—ասում է նա (էջ 198)։ Ովքե՞ր են այդ «մանրապատում գրողքը», ո՞ւմ է ակնարկում։ Մեկը, անշուշտ, Կիրակոս Գանձակեցին է, որից նա հակիրճ հարասել է նրա Պատմության այդ հատվածը և Քիթ Բուղայի զորագնդի ջախջախման պատմությունը («ի դաշտն Թաբորական լերինն» (Կիրակոս) և «առ ստորոտով «Թաբօրական լերինն» (Վարդան, 199)։

Կիրակոսը ոչինչ չգիտե այն մասին, որ Միջագետքում Հուլավուի մոտ է եկել և օրհնել նրան «պատրիարքն հայոց կաթողիկոսն», որ «ի յառնուլն զամենայն աշխարհն Շամայ» Հուլավուի հետ է եղել «մեր պսակաւորն Հեթում, ազատելով ի մահուանէ զքրիստոնեայսն, զեկեղեցականս և զաշխարհականս՝ յամենայն տեղիս լինելով» (Վարդան, 198)։

Կրկնում ենք՝ ո՞ւմ է ակնարկում Վարդանը, «մանրապատում գրողք» ասելով։ Միջագետքն ու Մարտիրոսաց քաղաքը՝ «աշխարհն Շամայ» նվաճելու ժամանակ (1258—1259/60) Վանական վարդապետը այլևս կենդանի չէր, նա իր կյանքին հրաժեշտ էր տվել արդեն 1251 թ., իսկ Կիրակոսի շարադրանքը, ինչպես տեսանք, տարբերվում է Վարդանից թե՛ ըստ ձևի և թե՛ ըստ բովանդակության։ Խոսք չի կարող լինել նաև Գրիգոր Ականցու մասին։ Դրանք էլ իրարից կախում չունեն։ Մնում է միայն մի եզրահանգում, այն է, որ Վարդանն իր ձեռքին ունեցել է մեզ անծանոթ մի ինչ-որ գրավոր աղբյուր կամ թերևս և մի քանի աղբյուրներ, որոնցից նա քաղել է մեր վերը նկատած և դեռ շատ ուրիշ տարբերություններ, որ մենք հարկ չհամարեցինք զուգադրելու, օրինակ՝ Հասան Ջալալի մահը, Աղվանից Ներսես կաթողիկոսի հիվանդությունն ու մահը (Կիրակոս, էջ 259—262, Վարդան, էջ 200—201), որոնց մասին Կիրակոսը տեղեկություն չունի։

Ինչ վերաբերում է Վարդանի պատմածներին Հովհաննես Տուեցու հրաշապատումների ու մահվան մասին (Վարդան, էջ 201—204), ապա պիտի ասել, որ դրանք ըստ նյութի և սյուժետի շատ նման են այն հրաշապատումներին, որ «հարազատ» և «սքանչելի վարդապետն Վարդան», այսինքն՝ Վարդան Արևելցին պատմել է Կիրակոսին՝ վերագրելով այդ ամենը Հովհաննես Գառնեցուն, որը կյանքի վերջում գնում է Հռոմկլա Կոստանդին կաթողիկոսի մոտ, «և անդ եկաց

մինչև փոխեցաւ առ Քրիստոս և թաղեցաւ ի նմին»։ Քանի որ այստեղ այդ գրույցների աղբյուրը՝ պատմողը, բանավոր և գրավոր, միևնույն Վարդանն է, մեզ թվում է, որ Հովհաննեսների մականունները շփոթվել են, կամ պետք է ընդունել, և դա հավանական է, որ քրիստոնեական եկեղեցու կողմից շռեմարանած զանազան կաղապարային բնույթ կրող հրաշապատումները, ըստ պատշաճի, վերագրվում են մեկ այս, մեկ այն «հրաշագործ սրբին»։

Եվ վերջապես, եթե Վարդանը չակնարկեր իր աղբյուրների՝ «մանրապատում գրողք»-ի մասին, թերևս մենք այդ տարբերությունների ամենայն իրավունքով վերագրեինք հենց իրեն՝ Վարդանին, որպես դեպքերին ժամանակակից ականավոր եկեղեցական-հասարակական-գրական դեմքի՝ վարդապետի։

Բացի Վարդան Արևելցուց, ԺԳ դարի հեղինակներից, թվում է մեզ, Մխիթար Այրիվանեցին էլ է օգտվել Կիրակոս Գանձակեցու Պատմությունից՝ քաղելով վերջինից որոշ, համարյա բառացի, հատվածներ։ Բերենք մի երկու օրինակ.

| Մխիթար Այրիվանեցի | Կիրակոս Գանձակեցի |
|---|---|
| ԶՔաղինա, զԹալին և զՄրենի (տպ. զԱրենի) կոտորեցին տաճիկք և գերեցին զՄուշեղ, զՍամուէլ և զայլ ազատազունդ զօրօքն Հայոց կոտորեցան յաւուրս զատկացն յիսմայէլացւոց»։<br>էջ 67—հմմտ. Սամուէլ Անեցի, էջ 89 | «Եւ կոտորումն եղև Քաղինու, Մրենոյ, Թալնայ, ուր սպանան ոգիք եօթն հարիւր և գերեցան հազար և երկու հարիւր։ Եւ Մուշեղ Մամիկոնեան և Սամուէլ այլովք ազատօքն Հայոց կոտորեցան յաւուր զատկացն յիսմայէլացւոց»։<br>էջ 72—հմմտ. Սամ. Անեցի, էջ 89 |
| «Ի Կոստանդնուպօլիս գտաւ տապան մի և գրեալ ի վերայ. «Զի՞նչ օգուտ է ծածկելդ զիս, զի յաւուրս Կոստանդեայ և մօր նորա Հեղինեայ արեգակն տեսանելոց է զիս»։<br>էջ 68—հմմտ. Սամուէլ Անեցի, էջ 90 | «Հրամայեցին բանալ զտապանն, և գտին գրեալ ի նմա՝ «Զի՞նչ օգուտ է ծածկելդ զիս, զի յաւուրս Կոստանդեայ և Եղինեայ մօր նորա տեսանելոց է արեգակն զիս»։<br>էջ 76—հմմտ. Սամ. Անեցի, էջ 90 |
| «Զաքարիա կաթողիկոսն ի միում աւուր ընկալաւ զսարկաւագութիւն, զքահանայութիւն, զեպիսկոպոսութիւն և զկաթողիկոսութիւն»։<br>էջ 70—հմմտ. Սամուէլ Անեցի, էջ 94 | «Զաքարիայ... ի միում աւուր ամենայնիւ արժանաւորեալ՝ սարկաւագութեան և քահանայութեան և կաթողիկոսութեան»։<br>էջ 77—78 հմմտ. Սամուէլ Անեցի, էջ 94 |
| «Խալիֆայ անուանէին, այսինքն է՝ յետնամնաց Մահմետի»։<br>էջ 74 | «Զի խալիֆայն յետնամնաց ասի», էջ 376<br><br>«Այլ խալիֆայ անուանէին, այսինքն՝ յետնամնաց ի Մահմետէ»։<br>էջ 378 |

Մխիթար Այրիվանեցու և Կիրակոսի վերը զուգադրված հատվածներն առկա են նաև Սամուել Անեցու մոտ։ Սրանցից ո՞ր մեկից է Մխիթար Այրիվանեցին քաղել իր տվյալները։ Հետաքրքրականն այն է, որ միևնույն դեպքի շարադրանքը Այրիվանեցու մոտ նման է մերթ Սամուելին, մերթ Կիրակոսին, կամ

ձևով և բովանդակությամբ փոքր ինչ տարբերվում է այդ զույգ աղբյուրների տվյալներից։ Այստեղից հնարավոր է հանգել նաև մի այլ եզրակացության, այն է, որ նա օգտվել է մի երրորդ աղբյուրից, գուցե Վանական վարդապետի Պատմությունից կամ մի այլ դարձյալ մեզ անհայտ աղբյուրից։ Բայց ավելի հավանականն այն է, որ նա՝ տեղեկությունները քաղելով Սամուելից կամ Կիրակոսից, ինքը վերամշակել է, հարասել ըստ իր ճաշակի և հասկացության։

Ինչ վերաբերում է տեղանունների տառադարձության տարբերությանը, ապա պիտի ասենք, որ դա առաջացել է հավանորեն գրիչների անփութության հետևանքով, օրինակ՝ ըստ Կիրակոսի, Մրեն-Մրենի, Սամուելի և Այրիվանեցու մոտ դարձել է Արենի կամ Արենոյ... Անշուշտ, դա Ա և Մ միջին երկաթագիր գրերի շփոթության հետևանք է։

Կիրակոս Գանձակեցու Պատմությունից հետագայում օգտվել են ուրիշ շատ հեղինակներ։ Բայց այստեղ մենք բավականանանք միայն վերը զուգադրած մատենագիրներով։

Ի՞նչ են ասում մեր զուգադրության ակնհայտնի տվյալները։ Բերված իրակությունները ցույց են տալիս, որ Կիրակոսի պատմական երկասիրությունը մեծ հարգ ու համբավ է վայելել ժամանակակիցների շրջանում և հետագայում, համարվել է հայ ժողովրդի պատմության ճշմարտապատում աղբյուրներից մեկը։

## Ե

## ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Առաջին հայացքից թվում է անհարիր, երբ միջնադարյան հեղինակի պատմագրական երկասիրության ուսումնասիրության կապակցությամբ այսպիսի հարց է առաջ քաշվում։ Պատմագրությունը, անկասկած, գիտական դիսցիպլին է և որպես այդպիսին՝ գերազանցապես գործ ունի անողոք տրամաբանված փաստարկների և իրողությունը ճշգրտող վավերական տվյալների հետ՝ հատուկ ուշադրության չանելով կամ նույնիսկ անտեսելով պատկերավոր մտածողություն և բանաստեղծական այլ արտահայտչական միջոցները։ Հերյուրանքը, թեկուզ գեղապաճույճ, նրբերանգ հերյուրանքը, տեղ չպիտի ունենա պատմագրության մեջ։

Խնդիրն այն է, սակայն, որ հին և միջին դարերում հայ մատենագիրները, առանց բացառության, աստվածաբանական-դավանաբանական կրթության հետ միասին ջանադիր ուսումնասիրում էին ճարտասանություն, պերճախոսություն, հռետորություն, իմաստասիրություն և հարակից այլ գիտական-փիլիսոփայական առարկաներ։ Դպրոցական շեմքը թողնելուց հետո էլ նրանք ձգտում էին իրենց գրական աշխատությունների մեջ ստացած կրթության համաձայն՝ պատմական իրադարձությունները, նույնիսկ գիտական լուրջ պրոբլեմները ու սրանց վերլուծությունները շարադրել գեղեցիկ ու պատկերավոր, վանական դպրոցական հիմնարկություններում մշակված բանարվեստի հատուկ կանոնների համեմատ։ «Նրանք կիրառում էին,—ինչպես շատ դիպուկ և տեղին նկատել է Մ. Աբեղյանը,—զանազան հռետորական ձևեր, պատկերավոր տր-

տահայտություններով պերճ լեզու և իրենց գրվածքներին տալիս էին որոշ ոճաբանական ձևավորում։ Այդպես են վարվել մեր պատմագիրների մեծ մասը։ Նրանց գրվածքները երբեմն խառնուրդ են բանաստեղծականի և պրոզայիկի, միևնույն երկի մեջ գրական և արտագրական տարրերը գտնվում են փոխեփոխ իրար կողքի»*։ Այդպես են եղել մեր բոլոր մատենագիրները։ Այդպիսի հատկություններով է օժտված նաև Կիրակոս Գանձակեցու պատմական երկասիրությունը. հետևաբար սա էլ կարող է արժեքավորման ենթարկվել գրականգեղարվեստական տեսագծով։

Կիրակոսի երկը, հարկավ, չի կարող համեմատության դիմանալ ոչ Մովսես Խորենացու Հայոց պատմության, ոչ էլ Եղիշեի Վարդանանց պատմության հոյակապ գրական հուշարձանների հետ, բայց և այնպես քննության առարկա երկի մեջ էլ կան այնպիսի ընտիր ճաշակով և նրբությամբ շարադրված հատվածներ, որոնք կարող են իրենց մերթ հախուռն, մերթ մեղմ հուզականությամբ, ժողովրդական առողջ հումորով և բողկլտող սրամտությամբ, վառ երևակայությամբ և պատկերավոր ոճով գրական-գեղարվեստական հաճույք պատճառել ամենապահանջկոտ ընթերցողին։

Նախքան մեր տեսակետի շարադրանքին անցնելը, տեսնենք, ինչպես է ընկալել մեր բանասիրությունը Կիրակոսի պատմական երկն ամբողջությամբ վերցրած, ինչպես է գնահատվել նրա գրական-գեղարվեստական արժեքը։

Մեր բանասիրության մեջ իշխում է այն տեսակետը, որ Կիրակոս Գանձակեցու երկը գրական տեսակետով ապարժեք կամ ավելի ճիշտ՝ նվազարժեք երկասիրություն է։ Գրական արժեք հասկացության տակ էլ մեր բանասերներից շատերը սովորաբար հասկանում են հեղինակի ոճը։ Այսպես, Ղ. Ալիշանը վենետիկյան հրատարակության Յառաջաբանի մեջ՝ անդրադառնալով այդ հարցին, հետևյալ գնահատականն է տալիս Կիրակոսի երկին. «...Յոճ բանից լեզուին և իմաստից նուաստագոյն (իմա «քան զուսումնակիցն իւր Վարդան»,— Կ. Մ.-Օ.), զի ոչ նրբութիւն և ազդուութիւն է շարաբանութեանն, և ոչ իմաստից վսեմութիւն կամ յանկարծական ինչ սլացք և գեղեցիկ առածք, որպէս է հանդիպել առ միւսոյն (իմա՝ Վարդանայ,—Կ. Մ.-Օ.)։ Թէպէտ ունել ունի և անպաճոյճ հարթութիւն և պարզութիւն պատմածոյն զիւր յարգ, յստակութեամբն և անկճիռն բացայայտութեամբն, միանգամայն և հեռի գոլով ի հետեւակութենէ յետնոցն քան զինքն պատմագրաց»**... «Մանաւանդ զի և ոչ օրինակագիր և ճարտարահիւս արանց են բանք ցանկալիք և ներկուռք, յորս ախորժ է մտաց ինքնաբեր դեգերումն և ներումն. իսկ ի սոսին, ստիպիմք խոստովանել և զայս, զի բազում անգամ տաղտուկ և զզուանս գայ մեզ ժամավաճառն իսկ լինել ի քննութիւն և յընտրութիւն անոճ և անյարչ բանից և բաղայից, որքան և սիրողք իցեմք տոհմային պատմութեան և պատմչի»,—ավելացնում է նա (էջ Թ)։

Շուրջ 40 տարի անց Ղ. Ալիշանը փոքր ինչ սրբագրել է իր այս կարծիքը՝ գրելով «Բավական կիրթ ճաշակ և լեզու ունի սա (այսինքն՝ Կիրակոսը,— Կ. Մ.-Օ.), և կընե պատիվ իր շատ անգամ հիշած և գովված Վանական վարդապետին...» (Հայապատում, 106), կամ խոսելով Կիրակոսի գրքի մասին՝

* Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Երևան, 1944, էջ 3։

** Կիրակոս, Վենետ., 1865, էջ Է։—Հ. Ոսկյանը՝ մեջ բերելով Ղ. Ալիշանի այս խոսքերը, իր կողմից Ալիշանին «ուժ» է տալիս ու «լրացնում»՝ ավելացնելով հետևյալ ընդգծած բառերը՝ «ոչ իմաստից վսեմութիւն կամ գ ե ղ ե ց կ ո ւ թ ի ւ ն կամ յանկարծակի ինչ սլացք և գեղեցիկ առածք»։ Որտեղի՞ց է քաղել Հ. Ոսկյանն ընդգծած բառերը։

*«Թեպետ հատ գիրք մի չէ, բայց բավական հմտությամբ և ախորժելի կարդալու. բաժներն այլ ստուգության ջանքով և հստակությամբ, որով ԺԳ դարու պատմչաց ընտրելագույն կրնա բավիլ» (Հայապատում, էջ 107)։*

*Ղ. Ալիշանին համարյա համամիտ են նաև Դյուլորիեն, Բրոսեն, Ք. Պատկանյանը։ Վերջինս գրում է. «Կիրակոսի ոճը պարզ է և դյուրըմբռնելի, թեև աչքի չի ընկնում հռետորական պերճախոսությամբ, որը հատուկ արժանիք էր համարվում իր ժամանակակիցների աչքում»*։ Մոտավորապես այդ իմաստով և չափանիշով են գնահատում Կիրակոսի երկի գրական արժեքը նաև Գ. Զարբհանալյանը («Լեզուն ալ՝ յուր ժամանակին, ըսենք նաև թե պատմած խեղճ դիպվածոցը՝ արժանավոր է»)**, Հ. Ոսկյանը և ուրիշներ։*

*Կիրակոսի ոճի մասին տարբեր կարծիք ունի Աբր. Զամինյանը։ Նա գտնում է, որ «Կիրակոսի լեզուն իր ժամանակակիցներու լեզվին համեմատությամբ ընտիր է, հին և ընտիր արտահայտություններու հետ ունի նաև աշխարհաբարի բառեր և դասավորություն»***։*

*Կիրակոսի ոճի, ինչպես և գրական արժեքի մասին տարբեր տեսակետ ունի Մ. Աբեղյանը։ Նրա կարծիքով՝ «Կիրակոսի աշխատության վրա կարելի չէ նայել գրական տեսակետով. դա մի կարգավորյալ ամբողջական երկ չէ»... «Նա պատմել է թռիչքներով... Եվ այդ պատմել է նա պարզ, հեշտ հասկանալի ձևով, առանց ձգտելու որևէ ճարտասանական զարդարանքների ու վերամբարձության, կամ որևէ խորիմաստության ու նրբամտության, բայց մեծ մանրամասնությամբ ու սիրով...»։ Այս խոսքերով, նա, կարծես, հաստատում է Ղ. Ալիշանի դիտածը, սակայն վերջինս այդ ամենը բացասական հատկություն է համարում, մինչդեռ Մ. Աբեղյանը շատ ճիշտ եզրակացնում է՝ «Եվ համն էլ հենց այդ հասարակ ու անզարդ, բայց ջերմ սրտով, մանրապատում հաղորդումների մեջ է։ Նրա երկի մեջ կան շատ հատվածներ, որոնք մենակ, առանձին առած շատ գեղեցիկ ու գրավիչ են իրենց պարզությամբ և անկեղծությամբ, երբեմն անգամ իրենց միամտությամբ և հեղինակի կենդանի ապրումներով»****։*

*Մ. Աբեղյանի այս բնութագրությունը հիմնականում ճիշտ է, բայց կոնկրետ չէ, ընդհանուր է։ Բնութագրությունը մեծապես կշահեր, եթե գրականության բազմավաստակ պատմաբանն իր եզրահանգումը կատարած լիներ Կիրակոսի պատմագրական երկի կոնկրետ հատվածների վերլուծության հիման վրա։ Կիրակոսի Պատմության տարբեր հատվածները տարբեր գրական արժեք են ներկայացնում, ոճն էլ տարբեր է ամեն մի առանձին նյութի «շարադրանության» մեջ։*

*Ելնելով մեր այս դրույթից, կարծում ենք, որ նրա Պատմության առանձին հատվածները պետք է առանձին վերլուծության և գնահատության ենթարկել, ապա հենված այդ մասնակի վերլուծության տվյալների ու գնահատականի վրա՝ արժեքավորել Պատմությունն ամբողջությամբ վերցրած։*

*Քննենք նախ՝ Կիրակոսի ոճի հարցը։*

*Նրա ոճի գնահատությունը, մեր կարծիքով, պետք է տարբերակել ըստ շարադրած նյութի։ Պարզենք մեր միտքը։*

---

* „История монголов", вып, втор., *էջ* V.

** Զարբհանալյան, *Պատմություն հայերեն դպրության, Վենետիկ, 1865, էջ 598։*

*** Աբր. Զամինյան, *Հայ գրական. պատմություն, Ա մաս, էջ 204։*

**** Մ. Աբեղյան, *Հայոց հին գրակ. պատմ., գիրք երկրորդ, էջ 195—196։*

Գանձակեցու պատմագրական երկի մեջ բավականաչափ հաջող է լուծված նյութի-բովանդակության և ոճի-գրական ձևի փոխհարաբերությունը։ Եթե այս տեսագծով քննելու լինենք նրա երկասիրությունը, կտեսնենք, որ Պատմությունը բաժանվում է երկու հիմնական և անհավասար մասերի՝ ա. Գրիգոր Լուսավորչից—Տրդատից սկսած մինչև Ռուբինյան հարստության հիմնադրումը և բ. Լևոն Բ-ից մինչև Ապաղայի և Բերքեի պատերազմը (1265/1266 թթ.)։ Եթե առաջին մասը նա հավաքել է «ի նախագրելոց» և բովանդակությամբ շատ հակիրճ է ու սեղմ արձանագրական (պատմական դեմքերի, անունների հաջորդական թվարկում և նրանց իշխանության տարեթվեր—իրականում դա համարյա սովորական մի ժամանակագրություն է) և միայն տեղ-տեղ նա խախտում է սեղմության իր սկզբունքը՝ մեջ բերելով համեմատաբար ընդարձակ և ամբողջական միջադեպեր, ապա երկրորդ մասում նա իրեն միանգամայն ազատ է զգում (բացառություն է՝ Աղվանից միջանկյալ «Հյուսվածքը»), որպես ականջալուր և ականատես, և վիպում է արձակ ու անկաշկանդ՝ ազատություն տալով նաև իր հուզական աշխարհի, ներքին ապրումների բացահայտությանը։

Պատմության առաջին մասը գրված է անարվեստ, պրոզայիկ, աղքատիկ բառապաշարով, տարտամ ու ձանձրալի։ Այստեղ բացառություն են կազմում ժողովրդական բանահյուսության ակունքից եկող զրույցները Մորիկի և Գագիկ Բագրատունու և այլ պատմական-իրական դեմքերի մասին։ Այս զրույցների մեջ Կիրակոսը պահպանել է ժողովրդական ստեղծագործության բառ ու ոճի և հատուկ շարադրանքի պարզությունն ու անմիջականությունը։

Կիրակոսի վիպելու այս ձևի վրա՝ բացի ժողովրդական բանահյուսությունից, բնական ազդեցություն է ունեցել այն դարաշրջանի հիմնական «դասագիրքը» Աստվածաշունչը, որի պատմողական հատվածներն էլ նույն ժողովրդական բանահյուսական աղբյուրից ծագած լինելով, վիպած-ասված են ժողովրդական պարզունակ և քերականական բարդություններից ազատ բառ ու ոճով։ Ըստ կամի՝ բերենք մի հատված. «Եւ գնայր գայր այլազգին՝ և մերձենայր առ Դաւիթ... Եւ ասէ այլազգին ցԴաւիթ. զիարդ շո՞ւն եմ ես, զի ցպով և քարամբք գաս ի վերայ իմ։ Եւ ասէ Դաւիթ. նա և վատթար ևս քան զշուն. և նզովեաց այլազգին զԴաւիթ դիօքն իւրովք։ Եւ ասէ այլազգին ցԴաւիթ. եկ առ իս և տաց զմարմին քո թռչնոց երկնից և գազանաց երկրի։ Եւ ասէ Դաւիթ ցայլազգին. Դու գաս ի վերայ իմ սրով» և այլն (Թագ. Ա, ժէ, 43—45)։

Ինչպես տեսնում ենք, բոլոր նախադասություններն սկսվում են «և» շաղկապով, շատ հակիրճ են և համարյա առանց երկրորդական խոսքերի։

Ժողովուրդը չի սիրում բարդ, խճողված, պարզությունից զուրկ խոսք ու զրույց։ Այս հակիրճ ու սեղմ նախադասությունների մեջ զգացվում է ռիթմական արձակի շեշտը։ Զրույցի հորինվածքի ճկունությունը, դրությունների բնականությունը, հերոսների հոգեբանության աստիճանական զարգացումը և սուր դրսևորումը, ժողովրդական անսպառ առողջ ու վարակիչ հումորը բնորոշ են Կիրակոսի պատումների համար։ Բերենք մի երկու օրինակ։

Ահա «գեղջուկ» Մորիկը կայսերական պալատում. բոլոր պալատականները՝ իշխաններն ու պատրիարքը, բազմել են այնտեղ։ Ում գլխին Մորիկը դնի կայսերական թագը, համաձայն պայմանի, նա՛ է դառնալու թագավոր, իսկ մյուսները պետք է հնազանդվեն նրան։

«Անց Մորիկ ի մէջ և առ զթագն ի ձեռս իւր և սկսաւ շրջել ընդ բազմեալսն։ Իբրև եկն առ առաջինն՝ ուրախացաւ նա, բայց տրտմեցաւ երկրորդն. իբրև

Հ

եթող զնա, դարձեալ կալաւ զնա տրտմութիւն և զընկերն նորա՝ ուրախութիւն։ Եւ այսպէս ըստ կարգի, իբրև շրջեցաւ նա երկիցս և երիցս, տրտմեցոյց զնոսա և ուրախացոյց, անց նստաւ ի վերայ աթոռոյն և եդ զթագ ի գլուխ իւր։ Եւ տեսեալ ամենեցուն՝ տխրացան, բայց զի երդուեալ էին նմա, թէ՝ «Յոյր գլուխ և դնիցես դու, մեք հնազանդիմք նմա», մատուցեալ պատրիարքն՝ ագոյց զկօշիկսն յոտս և երկիր եպագ. Նոյնպէս ամենայն մեծամեծքն երկրպագեցին նմա և ասեն. «Կեցցէ՜ արքայ Մօրիկ»*։

Որպիսի՜ պարզությամբ ու միամտությամբ է ստեղծված զրույցս. որքա՜ն անմիջական ապրումներ, ի՜նչ բնական անցումներ մի հոգեվիճակից մյուսին... Եվ այդ ապրումների՝ հույսի և ակնկալության շղթան հանկարծ կտրվում է... Միջադեպը նոր լուծում է ստանում, երբ խորամանկ գյուղացին՝ խաբելով, «սնոտի յուսով» աղցված պալատականներին, ինքն է գահ բարձրանում։ Անհնարին է այս զրույցը կարդալ ու չզվարճանալ, հաճույք չզգալ։

Զրույցի երկրորդ մասը՝ Մորիկի հոր խրատը և նրա կենսագործումը որդու կողմից նույնպես շատ համով-հոտով և սրամիտ է պատմում մեր հեղինակը**։

Վերցնենք երեք մասից կազմված մի այլ իրական զրույց, որի նյութը մեր պատմական անցյալից է վերցրած և ինչպես ցույց ենք տվել Պատմության սկզբնաղբյուրներին նվիրած գլխում, Կիրակոսը դա քաղել է ժողովրդական բանահյուսությունից, հարկավ, ոչ բառացի։ Ժողովրդական զրույցի բույրը, ժողովրդական ասքի համն ու հոտը, շողշողուն հումորը, խոսակցական-ընտանեկան բառն ու բանը ցայտուն արտահայտություն են գտել այդ մանրապատումների մեջ։ Այդ ամենին պիտի ավելացնել նաև հեղինակի հայրենասիրությունը։

Ահա այդ զրույցների շատ հակիրճ բովանդակությունը։

Վտարանդի Գագիկ Բագրատունին, Անիի վերջին գահակալը, օտարության մեջ թշնամիներով շրջապատված՝ չի կարողանում հանդուրժել լկտի, մեծամիտ ու գոռոզ հոռոմ մետրոպոլիտ Մարկոսի անարգական վերաբերմունքը հայերի հանդեպ և արժանի պատիժն է տալիս նրան։ Այս զրույցի մեջ անբնական, բռնազբոսիկ և շինծու բան չկա, չի երևում անապարծության ոչ մի հետք, չկա նաև ատելություն ընդհանրապես դեպ «հոռոմները»։ Այստեղ Գագիկը պատժում է ամբարտավան, մոլի հայատյաց հոռոմ բարձրաստիճան հոգևորականին, իսկ երբ ինքն է ընկնում «հոռոմների» վրեժխնդրությունից, ապա իր զինակից պատանին առնում է «զվրէժ արեան սպանման թագաւորին..., զոր գործեցին հոռոմք»։

Այս ամենն, իսկապես, արյան վրիժառության մի ակտ է, մի ընդարձակ պատմություն, որի մեջ հանդես են գալիս վրիժառու հայերը, բայց պատմված է այնքան պարզ ու անզարդ, այնքան միամիտ ու անկեղծ, գործողությունն էլ զարգանում է այնպիսի իրական ու կենցաղային պայմաններում, որ արյան վրիժառության կանխամտածվածության նշույլն անգամ չի նկատվում։ Եվ այդ բոլորով հանդերձ զրույցի մեջ ժողովրդական կենսախինդ հումորն ու ծիծաղն է զրնգում։ Այստեղ պատմողն էլ է հրճվում, լսողն էլ, չնայած այն բանին, որ երեք զրույցի մեջ առնվազն չորս մարդ է սպանվում՝ մի թագավոր, երկու բարձրաստիճան հոգևորականներ և մեկ սպասավոր։

* Կիրակոս, անդ, էջ 47—48։

** Անդ, էջ 49—50։

Այսպիսի պատմվածքներ շատ սակավաթիվ են մեր հին և միջնադարյան գրականության մեջ և իրենց բնույթով հիշեցնում են միայն Դերենի, Տաճատ Անձևացու և այլոց արկածները Կեղծ-Շապուհ Բագրատունու մոտ, կամ մի շարք զրույցներ Փավստոս Բուզանդի և Հովհան Մամիկոնյանի Պատմություն-ների մեջ։

Մեջ ենք բերում այդ զրույցը փոքր ինչ կրճատ։

Գագիկ թագավորը կայսրի մոտից վերադառնալիս՝ գալիս է Կեսարիա։ Նրան պատմում են.

«Մարկոս ոմն մետրապօլիտ Կեսարու ունի շուն մի և վասն ատելութեան, որ առ ազգս հայոց ունին հոռոմք, զանուն շանն Արմէն կոչեցեալ է։ Եւ այսպէս ձայնէ զնա, զի զհայք ամենայն ազգ արմենք կոչեն վասն քաջութեան Արամայ Հայկազնոյ։

Գնաց թագաւորն Գագիկ իջևանս առնել առ մետրապօլտին. և նա ուրա-խութեամբ ընկալաւ զնա։ Եւ իբրև ընդ գինիս մտին, ասէ թագաւորն. «Լուեալ է իմ, եթէ ունիս շուն ազնիւ. ցո՛յց ինձ, զի տեսից զնա»։

Ասէ մետրապօլիտն. «Աւասիկ առ դուրս է հանդէպ մեր»։

Եւ ասէ թագաւորն. «Ձայնեա՛, զի գայցէ այսր»։

Եւ նա ձայնէր նմա զայլ շան անուն և ոչ զիւրն։ Իսկ շունն ոչ ընդոստնոյր և ոչ գայր ի ներքս։

Ասէ թագաւորն. «Զի՛ւր անունն ձայնեա՛ նմա»։

Եւ իբրև ձայնեաց՝ «Ա՛րմէն, Ա՛րմէն», վաղվաղակի ի վեր յարեաւ և եկն։

Ասէ թագաւորն. «Ընդէ՞ր ես կոչել դմա զայդ անունն»։

Ասէ մետրապօլիտն. «Զի մանուկ է»։

Եւ հրաման ետ թագաւորն ծառայից իւրոց և ասէ. «Բերէք քուրձ մի մեծ և արկէք անդ զշունն»։

Եւ հազիւ կարացին արկանել։ Եւ կարծէր եպիսկոպոսն, թէ ընդ ինքեան կամի առնել զշունն և բարկանայր սպասաւորաց թագաւորին։

Եւ ասէ թագաւորն. «Արկէ՛ք և զեպիսկոպոսդ, թող տեսից, եթէ մանուկ է շունդ, որպէս ասաց դա»։

Իսկ նա լայր և աղաչէր զթագաւորն։

Իսկ թագաւորն բարկութեամբ ասէ. «Արդ խթանաւ խթեցէք զշունդ, զի կերիցեն զմիմեանս»։

Եւ նոքա խթէին զշունն, և նա առ կսկծի ցաւոյն ժանիւքն և մագլօքն պա-տառ-պատառ եհերձ զնա, մինչև մեռաւ։

Եւ ասէ. «Արդ գիտացի՛ր, եթէ մանուկ է արմէնն»։

Եւ ինքն կողոպտեաց զեպիսկոպոսարանն և այլևս ոչ ետես զկայսրն»*։

Կիրակոսի այս զրույցը նման է երգի, որից բառ չես կարող հանել՝ չխախ-տելով ամբողջականությունն ու եղանակը։

Երկրորդ զրույցի բովանդակությունը շատ սեղմ է հաղորդված։ Բերում ենք համարյա ամբողջությամբ։

Գագիկ թագավորը որսի ժամանակ հարբած հանգստանում է մի ծառի տակ։ Նրա հետ ուրիշ մարդ չկա, բացի «փոքրիկ մի մանուկից»։ Հույները ճանաչում են նրան և բռնում տանում են իրենց բերդը, որտեղ «իբրև սթափեցաւ ի գինւոյ

* Կիրակոս, անդ, էջ 100—101։

անտի, եբաց զաչս իւր և ասէ. «Ո՞ր եմ ես»։ Եւ ասեն հոռոմքն. «Ո՞ր է Մետրապօլիտն մեր Մարկոս»։

Գագիկ Թագավորին գլորում են բերդի պարսպից և սպանում, իսկ մանուկին հույներից գնում է մի հայ վաճառական*։

Երրորդ զրույցը բացվում է դարձյալ որսորդական տեսարանով։ Տարիներ անց «իբրև զարգացաւ մանուկն և եղև այր, գնաց ի սահմանս Կիլիկիոյ արամբ միով որսալ կաքաւս։ Եւ էր անդ բերդ մի, զոր Բարձր բերդ կոչեն։ Եւ էր անդ եպիսկոպոս մի հոռոմ. և եղև ծանօթութիւն առն և եպիսկոպոսին, և եղեն միմեանց սիրելիք. և զբազում աւուրս ուտէին և ըմպէին ի միասին։ Եւ այրն ոչ հանէր ի մտաց իւրոց զիրսն, զոր գործեցին հոռոմք ընդ Թագաւորն Գագիկ, ընդ ազգական նորա։

Եւ եղև օր մի, զի ամենայն պաշտօնեայք եպիսկոպոսին ելեալ էին արտաքս ի բերդէն ի պէտս ինչ գործոյ իւրեանց. և էր միայն եպիսկոպոսն և պատանի մի ընդ նմա։ Եկն այրն որսորդ հուն առ բերդն որսալ կաքաւս, և տեսեալ զեպիսկոպոսն ի պարսպին՝ ձայնեաց առ նա գալ և ի միասին ճաշակել։ Իսկ եպիսկոպոսն զայրն հրաւիրէր գալ ի բերդ անդր, և նա ոչ հաւանէր։ Ապա էջ առ նա եպիսկոպոսն առանց պաշտօնէի։

Իբրև ետես այրն, եթէ միայն գայ եպիսկոպոսն, ծանեաւ, եթէ ոչ ոք կայ ի բերդին, ասէ ցայրն, որ ընդ նմա էր. «Այսօր ի դէպ է մեզ առնուլ զվրէժ արեան սպանման Թագաւորին մերոյ, զոր գործեցին հոռոմք։ Տես, գուցէ առաքիցէ զքեզ եպիսկոպոսն ի բերդ անդր, ջանասջիր առնուլ զնա և ինձ իմացուսցես ի ձեռն նշանի ինչ, զի և ես սպանից զեպիսկոպոսն»։

Եւ իբրև եկն եպիսկոպոսն, մտին ի ճաշել։ Եւ իբրև պակասեաց գինին, ասէ եպիսկոպոսն ցպասաւորն. «Երթ ի բերդ անդր և բեր մեզ գինի, զի ուրախասցուք ի միասին»։

Եւ իբրև գնաց այրն, ետ զհրաման եպիսկոպոսին սպասաւորի նորա։ Եւ իբրև նա խոնարհեցաւ ի կարաս անդր, զի հանցէ գինի, նա կալեալ զոտից նորա, դարձուցեալ ի վերայ գլխոյն՝ խեղդեաց զնա ի գինի անդր և, ելեալ ի պարիսպն՝ նշանակեաց տեառն իւրում, եթէ՝ «Առի զբերդս»։ Եւ սա աստէն ի ներքոյ խեղդեաց զեպիսկոպոսն։ Եւ ինքն մտեալ ի բերդ անդր, բռնացաւ և առ սակաւ-սակաւ աճեցոյց զկալուած իւր, զոր բռնութեամբ և զոր պատրանօք. մինչև տիրեցին նա և որդիք իւր, և թոռունք աշխարհի Կիլիկեցւոց՝ քաղաքաց և գաւառաց։

Սա էր նախնի Թագաւորին Լևոնի, որ ընդարձակեաց զսահմանս իւր քաջութեամբ, զոր յիւրում տեղւոջն ասասցուք»**։

Ահա այսպես բնական ու «անարվեստ», համով-հոտով, անուշ ու հաճելի, ընտանի լեզվով, հաճախ ռամկախառն ոճ ու դարձվածքներ համեմելով, վիպում է նա կենցաղային երանգներ ունեցող նաև մի շարք իրական-պատմական կամ զուտ վիպական միջադեպեր ու զրույցներ, որոնց թվին են պատկանում, օրինակ՝ Հովհաննես Սարկավագ վարդապետի մասին եղած զրույցները, Հովհաննես Գառնեցու հրաշապատումները, «Վասն Դաւթի Մոլորեցուցչի», նաև ստորև քննարկելիք «Վասն դիւին, որ ի կերպարանս կնոջ լեալ, խառնակէր ընդ այր մի» գլուխները և այլն։ Սրանք բոլորն էլ, ինչպես ասել ենք, որոշ չափով առնչվում են ժողովրդական բանարվեստի հետ։

---

* Կիրակոս, անդ, էջ 102։

** Անդ, էջ 102—104։

Կիրակոսի Պատմության մեջ կան իրական-կենցաղային այնպիսի նկարագրություններ, որոնք, զուրկ լինելով վսեմ բանաստեղծական երևակայությունից, գրված են պարզ ու անպաճույճ և գրավում են ընթերցողին իրենց անկեղծությամբ և մարդասիրությամբ։ Դրանց ամեն մի հատվածից զգում ես դյուրահավատ ու միամիտ հեղինակի ջերմ սիրտը, հոգեկան խոր ապրումները։ Այդպես է, օրինակ, ռեալիստական գույներով շատ մանրամասն նկարագրած «Վասն գերութեան վարդապետին Վանականայ» գլուխը։

Վերը քննության առած զրույցներն իրական-պատմական բնույթ ունեն, սակայն Կիրակոսի պատմության մեջ կան ոչ առանց հեղինակի վերամշակության նաև զուտ կենցաղային նովելանման զրույցներ, որոնց մեջ բացի կենցաղային-ընտանեկան բավականաչափ կենդանի ու աշխույժ նկարագրությունից՝ առկա է նաև ԺԳ դարի աշխարհիկ աշխարհազգացության ջունչը, որ պատկերավորման մի երկու թեթև նրբագծիկով ուղղված է եկեղեցական-կղերական մտայնության և կրոնա-փիլիսոփայության դեմ։

Խոսքս Կիրակոսի Պատմության մեջ զետեղված «Վասն դիւին, որ ի կերպարանս կնոջ լեալ, խառնակէր ընդ այր մի» զրույցի մասին է։ Այս զրույցի առկայությունը Կիրակոսի Պատմության մեջ վկայված է Մխիթար Այրիվանեցու* և Զաքարիա սարկավագ Քանաքեռցու** կողմից։

Կիրակոսի աղբյուրը նրա աշակերտակից Հովսեփ վարդապետն է, իր ժամանակին երևելի մի վարդապետ, որը վերաշինել է Թադեոս առաքյալի վանքն Արտազ գավառում։ Հովսեփը զրույցը պատմել է իր անունից Կիրակոսին։

«Զոգայ ես,—ասում է նա,—ի գաւառն Գողթան ի պէտս ինչ իրաց։ Ասացին ինձ ի գիւղ մի, թէ՝ «է աստ այր մի, որ ունի կին դև»։ Եւ մեր անհաւանելով ասացելոցն, չոգաք ի տուն առն և ոչ տեսաք զդևն։ Եւ իբրև հարցաք զայրն, նա ասաց զպատճառն ստուգութեամբ, թէ. «Կին ունէի ես և մեռաւ, և եթող ինձ մանկունս մանունս. և ես նստեալ լայի, թէ՝ ո՞ սնուցանէ ինձ զսոսա»։ Եւ ահա յանկարծակի երևեցաւ կին մի և ասէ. «Մի՛ լար, ես եղէց քեզ կին և սնուցից զմանկունսդ»։ Եւ յայնմհետէ հանապազ է ի տան իմում, և առնէ մեզ կերակուր, և զամենայն պէտս մեր լնու։ Եւ սաստիկ սիրով հարեալ եմ ի սէր նորա, և հանապազ խառնակի ընդ իս։ Եւ զչարաթն ամենայն անգործ կայ և յաւուր հինգշաբթի առնէ մանած երեք լիտր»։

Եւ իբրև հարցի, թէ ուր է այժմ, նա մատամբն եցոյց, թէ.

«Աստնիկ է, և երևի ինձ և մանկանց իմոց և ոչ այլ ումեք. և յոլով ժամանակք են, զի բնակիմք ի միասին»։

Եւ ես յարեայ աղօթել և աւետարան ընթեռնուլ, զի թերևս հալածեսցի ոգին մեղաւոր և պիղծ։ Իսկ նորա ոչինչ փոյթ արարեալ զայնմանէ, այլ նստեալ ծիծաղէր, որպէս այրն պատմեաց։ Եւ մեր ոչ տեսեալ զնա՝ ելեալ գնացաք»***։

Այս փոքրիկ զրույցի՝ մանրապատումի մեջ, որն իր հակիրճ բովանդակությամբ և բնական ու անբռնազբոս երկախոսությամբ մի գեղարվեստական ամբողջություն է ներկայացնում, շատ բնորոշ է դարաշրջանի աշխարհայեցու-

---

* «Յովսէփ վարդապետն շինեաց զգերեզման Թադէոսի առաքելոյն։ Ի Գողթն, դև մի ի կերպս կնոջ կին եղև առն միում զբազում աւուրս» (էջ 82)։

** «Եւ ի Պատմութիւնս Կիրակոսի վարդապետի գրեալ է, թէ ի Գողթան գաւառ դևն եղեալ ի կերպարանս կնոջ՝ խառնակիւր ընդ այր մի»։ Զաքարիա սարկաւագի Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, հատ. Բ, էջ 55—57։

*** Կիրակոս. անդ, էջ 328—329։

թյան բնութագրման համար, մանավանդ վերջին պարբերությունը, որը նոր նրբերանգ է, նոր ըմբռնում նախորդ շրջանի համեմատությամբ։ Եկեղեցու քարոզած միստիցիզմի, ինչպես և սնահավատության սառույցը կոտրվել է։ Եթե հնում կամ խոր միջնադարում աղոթքը, խաչը և ավետարանը ամենազոր զենքերն էին ընդդեմ «չարքերի»—«դևերի», քանի որ սրանք եկեղեցական այդ միջոցների ազդեցությամբ ընկրկում, նահանջում էին ու չքանում (օրինակները բազմաթիվ են ու բազմազան մեր և օտար վարքաբանական-վկայաբանական գրականության մեջ), ապա այս մանրավեպի մեջ «չարքը»՝ «դև» կինը ծաղրում է պաշտպանական այդ միջոցներին դիմող կրոնավորին և տեղից էլ չի շարժվում։ Ինչո՞ւ։ Որովհետև եկեղեցու այդ ամենակարող զենքերից շատ ավելի հզոր է մաքուր սերը, մայրական հոգատարության կարոտ անպաշտպան մանուկների հանդեպ տածած ինքնամոռաց սիրո զգացմունքը։ Սիրո զգացմունքը, սիրո կարոտը շատ ավելի հզոր է ու հավերժական, քան դարեր շարունակ մշակված քրիստոնեական եկեղեցու աշխարհամերժ վարդապետությունը։ Եվ «դև» կինը իր մարդասիրությամբ հաղթում է եկեղեցու անվանի սպասավորին՝ երևելի վարդապետին, «նստեալ ծիծաղէր» աղոթքին ապավինած, եկեղեցական վարդապետության տառին կառչած հոգևորականի վրա։ Ահա թե ինչ տպավորություն է ստացվում քննարկվող մանրապատումից։ Իսկ դա նորույթ է, նոր աշխարհազգացում՝ կապված հասարակական կյանքում կատարված մեծ տեղաշարժերի հետ։

Մանրապատումների, ինչպես և իրական-կենցաղային տեսարանների ու դեպքերի նկարագրության մեջ Կիրակոսի ընդհանրապես պարզ ու անպաճույճ լեզուն ավելի զարդարուն է դառնում և համակվում է ընթերցողին և ունկնդրին ժողովրդական բառ ու բանով, առակ ու առածով. օրինակ՝ «Յերդն եկի, չեկիր, ի դուռն եկի, ապա՞ եկիր» (առած), «Անւոյ հազար և մի եկեղեցին» (երգում) և այլն։ Այսպիսի հատվածներում նրա լեզուն միանգամայն դառնում է ժողովրդական՝ իր շարադասությամբ, հաճախ նաև քերականական ձևերով։

Տեղ-տեղ Կիրակոսի գրիչը, կարծես, թուլանում է, և նա միևնույն դարձվածքը գործ է ածում գրքի զանազան մասերում, օրինակ «զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ» (Ա Կորն., Բ 9,—էջ 75, 337, 344, և այլուր), «զոր լուաք ականջօք մերովք և տեսաք աչօք» (էջ 8), կամ կրճատ՝ «զոր աչօք մերովք տեսաք» (էջ 231), կամ «աչօք մեք ոչ տեսաք» (էջ 322 և այլուր)։

* * *

Կիրակոսը, սակայն, միշտ այսպես պարզունակ ու անպաճույճ չէ վիպում։ Հայրենի աշխարհի ավերածությունը, ժողովրդի տանջալից կյանքը, անխնա կոտորածը տեսնելիս ու նկարագրելիս՝ նրա հոգեկան աշխարհը փոթորկվում է, զգացմունքները հախուռն են դառնում, շարադրանքի երբեմնի ընտանեկան—խոսակցական լեզուն նոր լիցք է ստանում արտահայտչական նոր ձևերով՝ դարձվածքներով, համեմատություններով և հակադրություններով, երևակայությունը թռիչքներ է գործում, և նա կերտում է բանաստեղծական պատկերավոր դրվագներ։ Դրույթիս իբրև ապացույց, բերենք, օրինակի համար, մի հատված «Վասն աւերածոյ աշխարհիս Հայոց և Վրաց ի ձեռն զօրացն» գլխից։

«Եւ նոքա (իմա՛ թաթարները,— Կ. Մ.-Օ.) սփռեալք առ հասարակ ընդ երեսս դաշտաց, լերանց և ձորոց, իբրև զմարախ բազմութեամբ, կամ իբրև զանձրև յորդութեամբ տեղեալ ի վերայ երկրի։ Եւ անդ էր տեսանել այնուհետև

աղէտք տրտմագինք և աշխարհ արժանի ողբոց, զի ոչ երկիր թաքուցանէր զմեռեալսն, ոչ վէմք և ոչ անտառք պահէին զապաստանեալսն, ոչ ամրագոյն շինուածք բերդից և ոչ խոխոմք ձորոց, այլ ամենեքեան արտաքս վարէին զղօղեալս։ Լքանէր անձն արի արանց և լուծանէին ձեռք կորովի աղեղնաւորաց... ձայնք թշնամեացն հալէին զնոսա, և դոփիւնք կապարճաց նոցա ահարեկ առնէին զամենեսեան. աչք իւրաքանչիւր զօրհասն իւր տեսանէր եկեալ, և սիրտ իւրեանց մեռանէին ի ներքուստ. մանկունք խուսափէին առ ծնողս յահէ սրոյն, և ծնողքն հանդերձ նոքօք անկանէին ի վախից, նախքան զընկենուլ թշնամեացն։ .

Անդ էր տեսանել զսուրս յանխնայ կոտորել զարս և զկանայս, զերիտասարդս և զմանկունս, զծերս և զպառաւունս, զեպիսկոպոսս և զերիցունս, զսարկաւագունս և զդպիրս։

Մանկունք ստնդիայք զքարի հարեալք, և կուսանք գեղեցիկ խայտառակեալք և գերեալք։

Ահագին էր տեսիլ կերպարանաց նոցա, և անգութ ազիք յորովայնի նոցա, մի և միոյ մօր արտասուաց ոչ տղորմէին, և յալիս երբէք ոչ գթային, ի սպանութիւնս խրախուսեամբ ընթանային, իբր ի հարսանիս, կամ ի փնարբունս։

Լցաւ երկիրն ամենայն դիակամբք մեռելոց, և ոչ ոք էր, որ թաղէր զնոսա. հատեալ էր արտօսր յաչաց սիրելեաց, և ոչ ոք էր, որ իշխէր լալ զանկեալսն յահէ անօրինացն...

Յափշտակեցան ինչք և ստացուածք, ժլատութիւն բարուց նոցա ոչ երբէք յագեցաւ. խուզեցան տունք և սենեակք ամենայն, և ոչ ինչ մնաց, զոր ոչ առին. շրջէին այսր անդր արագութեամբ, իբրև զայծեմունս, և կեղեքէին, պատառէին իբրև գգայլս. երիվարք նոցա ոչ վաստակէին յընթացս, և ոչ նոքա ձանձրանային ի ժողովել զաւարս...»*։

Նույնպիսի սոսկում ու սարսափ է ազդում նաև Կիրակոսի նկարագրությունը «Վասն մարախին, որ եկեր զաշխարհս»**։

Այսպես է ողբում Կիրակոսը հայրենի երկրի ավերածությունը արտաքին թշնամիների կողմից և բնության տարերային աղետների հետևանքով։ Նրա վիշտն անսահման է, խոր և անսփոփ... Այս տողերը կարելի է համեմատել միմիայն անզուգական Եղիշեի վշտալի նկարագրությունների հետ, որոնց ազդեցությունն անկասկած զգացվում է Կիրակոսի գրչի վրա։ Կիրակոսի ողբը՝ նման լինելով, գուցե և ազդված, Արիստակես Լաստիվերտցու ողբին, որոշ չափով նաև տարբերվում է նրանից։ Եթե Արիստակեսի ողբը հորդ է ու հախուռն՝ համեմված Աստվածաշնչի ողբասացների, մանավանդ Երեմիայի զգայացունց և սրտակեղեք ողբերի պատկերներով, ապա Կիրակոսինը համեմատաբար մեղմ է և նուրբ։

Կիրակոսը անմիջական է և զգայուն ոչ միայն երեմիական ողբերի մեջ, նա ցայտուն է նաև ներբողներ կերտելիս։ Ներբողների մեջ աչքի է ընկնում նրա լավատեսությունը և հայրենասիրությունը։ Բերենք մի փոքրիկ օրինակ մեր մեծ թարգմանիչներին նվիրած նրա ներբողյանից։

«Սոքա ոչ միայն թարգմանիչք, այլ և վարդապետք և ուսուցիչք և մարգարէք պատմողք ապագայիցն...

* Կիրակոս, նույն, էջ 239 – 240։

** Անդ, էջ 359—361։

Սոքա սիւնք եկեղեցւոյ և ամրափակ պարիսպք որդւոց նորա, աշտանակք լուսատուք և ջահք բորբոքեալք՝ ընդհանուր ծաւալելով ընդ ոլորտս տիեզերաց։

Սոքա ատտուածաբանք բանին կենաց և արբուցիչք պասքելոց անձանց, զովացուցիչք տապոյ ջերմութեան բանսարկուին և ջեռուցիչք ցրտացելոց ի հաւատս։

Սոքա երգեցողք ծիծռունք, տատրակք քաղցրախօսք և ողջախոհք, սրբութեան սիրիչք և աղտեղութեան անարգիչք։

Սոքա մանկանց դաստիարակք և երիտասարդաց բարի օրինակք, կուսանաց զարդք և ամուսնացելոց օրէնք, ծերոց սփոփիչք և տկարաց մխիթարիչք, գլորելոց կանգնիչք և մեղուցելոց դարձուցիչք, հեղգացելոց խթանք յարուցիչք և ծրացելոց ի նոյն յօժարացուցիչք, ուսման սիրիչք և ատեցողացն յանդիմանիչք»...*։

Կիրակոսի Պատմության մեջ կան այսպիսի բանաստեղծական թափով վիպած և այլ հատվածներ։ Բավականանանք այսքանով։

Ի՞նչ են ասում որպես նմուշ վերը բերված հատվածները։ Նրանք աներկբա ապացուցում են մեր հիմնական թեզերից մեկը, այն է՝ որ Կիրակոս Գանձակեցին գրչի վարպետ է և կարողանում է իր մտքերն ու հույզերը այնքան պարզ ու պայծառ արտահայտել, որ համակում է ընթերցողին, մեկ-մեկ էլ այնքան է տարվում իր նյութի նկարագրությամբ ու վերլուծությամբ, որ գեղարվեստական հաճույք է պատճառում նրան և ընդլայնում նրա մտավոր հորիզոնը։

## Դ

## ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Երբ խոսք է լինում որևէ պատմագրական հուշարձանի պատմագիտական արժեքի մասին, պետք է պարզել, նախ՝ ի՞նչ նպատակով և ո՞ւմ համար է գրված տվյալ երկը, ինչպե՞ս է հեղինակը ընկալում իրական-պատմական դեպքերն ու իրադարձությունները և ինչպե՞ս է բացատրում դրանք, և երկրորդ՝ ի՞նչ նոր իրադարձություններով կամ արդեն հայտնի իրադարձությունների ի՞նչ նոր լուսաբանությամբ է հարստացնում նա մեր պատմագիտական իմացությունները ու գիտելիքները։

Մարդկային բնության մեջ, ասում է Կիրակոս Գանձակեցին՝ պատասխանելով առաջին հարցին, կա արարչի խնամքով հաստատված մի կիրք, որը քննության է ենթարկում անցյալ իրադարձություններն ու գալիքը՝ «քննասէր լինել իրաց ինչ անցելոց, և կամ ի հանդերձեալն լինելոց» (էջ 3), իսկ դրան հասնել հնարավոր է միայն երկար ջանասիրությամբ և աշխատասիրությամբ, թերևս այդ պրպտումների հետևանքով մի պիտանի բան գտնվի քննասերի փափագը բավարարելու համար։

Այդ ամենը դյուրությամբ չի տրվում մարդուն,—շարունակում է նա,— այլ դրա համար անհրաժեշտ է վարդապետին վայել ջանադիր աշխատասիրու-

* Կիրակոս, անդ, էջ 27—28։

թյամբ ուսումնասիրել ժամանակների ներքին և արտաքին, այսինքն՝ քրիստոնեական և հեթանոսական, պատմությունը, մաքուր մտքով (այսինքն՝ չնախապաշարված) և անաչառ ականջ դնել աղբյուրների վկայություններին՝ «վերին և ներքին աստուածայնոց բանից և գրոց պատմութեանց» (էջ 4), որոնք ի միջնակի են քննախույզին հասցնելու իր նպատակին։ Սակայն Կիրակոսի իմացությամբ՝ դա դեռ այն ամենը չէ, ինչ անհրաժեշտ է պատմագրին։ Որպես քրիստոնյա վարդապետ, նա համոզված է, որ այդ ամենի նախապայմանը «սուրբ հոգին» է—«բան»-ը, որը կարող է իմաստուն դարձնել տգետներին և բանավոր դարձնել անբաններին. նրա կամքով հորինվում և կազմվում է ամեն ինչ՝ թե՛ երևացողը և թե՛ աներևույթը («երևոյթքս և աներևոյթքն»)։

Ինչպես տեսնում ենք, Կիրակոսի պատմափիլիսոփայության հիմքը խարսխված է «logos»-ի—«բանի»—հոգու իդեալիստական վարդապետության վրա։ Հոգին է արարիչը, հոգին է ղեկավարը։ Այլ կերպ էլ չէր կարող լինել։ Կիրակոսն իր դարի զավակն է, այն էլ «րաբունապետ», որ ակտիվ մասնակցություն է ունեցել եկեղեցու հիմքերը քայքայող հոսանքների դեմ։ Այդպես են մտածում և՛ Դավթակ Քերթողը, որը դիմում է նույն հոգուն՝ «աստուածային բանին արուեստաւոր հոգի, յորինեա՛ իմաստիւ զտխրական երգմունս». և՛ Գրիգոր Նարեկացին, երբ դիմում է աստուծուն.

«Եղիցի հոգի քո խառնեալ ի սա,
Տունչ զօրութեան մեծիդ միացի
Ի քո ինձ շնորհեալ ստեղծաբանութիւնս»։

Եվ սրանց նման շատ շատերը մեր և ընդհանուր գրականության պատմության մեջ։

Ի՞նչ նպատակ է, սակայն, հետապնդում Կիրակոսը՝ գրելով իր Պատմությունը։

Կիրակոսը, որպես եկեղեցու անդավաճան սպասավոր, հարկավ, պետք է կրոնական օրինակներով պարզաբաներ իր միտքը։ «Օրէնք են աստուածայինք,—ասում է նա,—ցուցանել հարանց՝ որդւոց, զի ծանիցի յազգ այլ..., զի յայս խրատէր մեծն ի մարգարէս Մովսէս զորդիսն Իսրայէլի և ասէր. «Խոկասցիս ի սոսա ի տուէ և ի գիշերի՝ ի նստել ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի ննջել և ի յառնել» (էջ 4)։ Այս նպատակին օժանդակողները կամ ծառայողները, ասում է նա, «կենդանի արձան թողին զգիրսն յետ իւրեանց» (էջ 4—5), կամ «զյիշատակ բարի զկնի եկելոցս, յօգուտ լսողացն» (էջ 8)։

Այդ հանրօգուտ նպատակներն իրեն առաջադրելով՝ Կիրակոսը միաժամանակ գիտակցում է ծրագրած գործի ամբողջ ծանրությունն ու պատասխանատվությունը և իր ուժերի համեստությունը, ուստի ամենայն անկեղծությամբ խոստովանում է, որ՝ եթե նա ձեռնամուխ է եղել իր այս «ձեռնարկությանը», ապա այդ արել է ինչոր բարոյական մղումով, թերևս «վերին» թելադրանքով, «զի հարկանեն զմեզ միտք մեր ոչ տալ լռութեան զայնպիսի աղէտ տարակուսանաց, զոր կրեաք ականջօք մերովք և տեսաք աչօք» (էջ 8)։

Ահա այսպիսի պարզ գիտակցությամբ՝ «տաժանմամբ» գլուխ բերելով, բարեխղճությամբ ավարտելով իր գործը, նա աղերսում է ապագա սերունդներին՝ «զկնի եկեալսդ», համարել սա «բարեաց նախանձու գործ» և «ոչ աղարտել

զաշխատութիւնս մեր, որպես անուսմունք, և խնչել քթօք և յօնօք պռստել, այլ զիջանել եղբայրաբար» (էջ 10)։

Պատմագրական երկի նպատակն ու խնդիրները, նրանց ուսուցողական-խրատական-դաստիարակչական նշանակությունն ու արժեքը պարզելուց հետո՝ Կիրակոսը ձգտում է լուծել նաև իր երկի ծավալի ու շրջանակների, մասնավորապես սկզբնավորության հարցը, թե որտեղից նա պիտի իր շարադրանքն սկսի։

Նա գտնում էր, որ իր նախորդներն ունեցել են «տեղի ինչ բուռն հարկանելոյ, կամ թագաւոր երևելի և կամ նահապետութիւնք ազգաց յայտնի», իսկ ինքը զուրկ է այդ ամենից, որովհետև «թագաւորութիւնն վաղ ուրեմն բարձեալ՝ Արշակունին և Բագրատունին, և իշխանքն ոչ ուրեք երևեալ Հայկազն»... բայց և այնպես «յոյս մի եղեալ առաջի՝ զաւուրս շնորհ (ակնարկում է՝ Հոգեգալստյան տոնը)... ձեռնարկեցաք ի սմա» (էջ 9)։

Նա իր գործառնության սկիզբն է ընդունում մի նշանավոր պատմակրոնական իրադարձություն՝ Հայաստանի դարձը Գրիգորի միջոցով և Գրիգորի ու Տրդատի մեկնումը Հռոմ՝ «ի տեսութիւն... մեծ թագաւորին Կոստանդիանոսի և սրբոյ հայրապետին Սեղբեստրոսի», ապա ժամանակագրական կարգով թվարկում է Գրիգորի և Տրդատի հաջորդների իշխանության կարգն ու ժամանակները։ Եվ իսկապես, նրա երկի առաջին մասը՝ «սկսեալ ի նմանէ (Գրիգորէ) մինչև առ մեզ սուղ ինչ համառօտիւք» (էջ 10), «երկօք աշխատութեան հաւաքեալ (է) ի նախագրելոց» (էջ 154)։ Լևոն Բ-ից սկսած մինչև 1265/6 թ. (ձմեռ) նա շարադրում է բավականաչափ մանրամասն, որպես ականջալուր, ականատես և գործող անձ։

Սա է Կիրակոսի Պատմության ժամանակագրական շրջանակը, որի մեջ նա տալիս է Հայաստանի բազմակողմանի նկարագրությունը՝ բոլոր քաղաքական-սոցիալական իրադարձություններն ու իրադրությունները կապելով հարևան վրացի և այլ ժողովուրդների պատմության հետ։ Սա է նրա պատմության առանցքը... Ուրեմն, ասել, թե «Կիրակոսն... իր ասելով հայկական քաղաքական մեծություն չլինելու հետևանքով՝ չի կարողացել և հորինել իր երկն իբրև մեկ միություն կազմող ներքին կապակցությամբ շարունակական պատմություն»*, մեզ թվում է խիստ։ Հենց իր ասելով՝ Կիրակոսը գտել է «տեղի ինչ բուռն հարկանելոյ», այն է՝ Հայաստանի առաջին «լուսավորիչներին»— Գրիգորին ու Տրդատին։ Չորրորդ դարի սկզբներին (314—315 թթ.) քրիստոնեությունը պետական կրոն հռչակելը քրիստոնեական պատմագրության տեսագծով նոր դարաշրջանի սկզբնավորություն է, որը սահմանազատում է հեթանոսական անցյալը քրիստոնեական արդիականությունից, հեթանոսական աշխարհըմբռնումը՝ քրիստոնեականից, հեթանոսական կենսախինդ ապրելակերպն ու մտածողությունը՝ քրիստոնեական աշխարհամերժ և երկնատենչ մտայնությունից։

Ավելորդ չէ այստեղ հիշատակել, որ Եվսեբիոսից հետո խոշորագույն եկեղեցական պատմագիր Սոկրատես Սքոլաստիկոսն էլ իր Պատմությունն սկսում է Սեղբեստրոսից և Կոստանդիանոսից («մեծիմաստն Սոկրատէս կորովակի բանիւք,—ասում է Կիրակոսը,—սկսեալ ի սրբոյն Սեղբեստրոսէ... և ի Կոստանդիանոսէ մեծէ»**)։ Այս նմանությունը ձևական չէ, այլ խոր մտած-

* Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք 2, էջ 195։

** Կիրակոս, անդ. Յառաջաբան, էջ 3։

ված, կշռադատված տեսակետ, քանի որ Աղվանից պատմության սկիզբն էլ նա տալիս է՝ ելակետ ընդունելով աղվանների «լուսավորիչները»։

Կիրակոսը «պատմել է,— ասում է Մ. Աբեղյանը,—թռիչքներով, մեկ՝ Արևելքի մասին, մեկ՝ Արևմուտքի, մերթ՝ վրացիների, մերթ՝ թաթարների, երբեմն՝ հայոց եկեղեցական գործերի, երբեմն էլ՝ հայ իշխանների» մասին։

Բայց կարո՞ղ էր Կիրակոսը այլ կերպ գրել։ Նա գրում է մի ժողովրդի հազար տարվա պատմությունը՝ կապված իր հարևան ժողովուրդների հետ. մի ժողովրդի, որը կորցնելով հայրենիքի անկախությունը, ընկնում է մե՛րթ մի նվաճողի, մե՛րթ մի ուրիշի լծի տակ, մե՛կ Արևելքի զավթիչներն են ներխուժում, մե՛կ Արևմուտքի, երբե՛մն Հարավի, երբե՛մն էլ՝ Հյուսիսի։ Այլ կերպ էլ հնարավոր չէր այն պայմաններում գրել, երբ ենթակա ես անակնկալ արհավիրքների։ Մեր դասական պատմագիրներից անգամ Մովսես Խորենացու նման զգաստ ու կուռ մտքի տեր, համաճարեղ պատմագիրը մերթ ընդ մերթ շեղվում է իր ծրագրած նյութից և խոսում է այլ ժողովուրդների նիստ ու կացի, զրույցների և այլ իրադարձությունների մասին։

Գանձակեցու Պատմության նպատակը, ինչպես և աշխատության արժեքի գիտակցումը պարզելուց հետո՝ տեսնենք, թե ինչպես է նա ընկալում իրականպատմական եղելությունները, ինչպես մեկնաբանում մեր երկրում տեղի ունեցած իրադարձությունները։

Կիրակոսը իբրև պատմագիր պատկանում է հոգևոր դասին։ Դասային պատկանելությունը բնորոշում ու բացատրում է նրա պատմափիլիսոփայությունը։ Եկեղեցին ու կրոնական դաստիարակությունն ու կրթությունն իրենց կնիքն են դրել նրա կյանք ու կենցաղի, ամբողջ հոգեկան աշխարհի, մտածելակերպի, անգամ հորինելու ու շարադրելու եղանակի վրա։ Իդեալիստական աշխարհայեցողությունը տիրապետում է նրա հոգեկան աշխարհում։ «Ի սկզբանէ էր բանն և բանն էր առ աստուած, և աստուած էր բանն։ Նա էր ի սկզբանէ առ աստուած։ Ամենայն ինչ նովաւ եղև և առանց նորա եղև և ոչինչ, որ ինչ եղև» (Յովհ., Ա 1)։ Սա է Կիրակոսի աշխարհայեցության այբն ու քեն, սկիզբն ու վախճանը. սրանով է բացատրվում ամեն ինչ թե՛ բնության, թե՛ կենդանական աշխարհում և թե՛ մարդկային հասարակության մեջ։ «Բանը»—նախախնամությունն է շարժում մարդկային հասարակության պատմության անիվը։ Ամեն ինչ աստծու ցանկությամբ ու անմիջական մասնակցությամբ է կատարվում։ Բնական տարերային երևույթներն անգամ (երկրաշարժ, գիսավոր աստղ, կարկուտ, մորեխ, սով, մահտարաժամ և սրանց հակառակ՝ խաղաղություն, բարօրություն, առատություն, շինարարություն, «մորեխասպան» թռչուններ, ինչպես նաև սրբերի հրաշագործություններ, մեռելի հարություն և այլ սնոտիապաշտական բարբաջանքներ) նախախնամության կամեցողությամբ ու տնօրինությամբ են կատարվում։ Բերենք մի երկու օրինակ.

Մարախը «եկեր զաշխարհս Հայոց. ոչ միայն զբոյսս դալարոյ, այլ և զհող երկրի և զաղբս լափէր. և մտանէր ի տունս ընդ երդս և ընդ դրունս, թէ պատահէր ի բաց. զահի հարաւ երկիր...»։ Ժողովուրդը սարսափահար ապավինում է «զամենակարող ձեռն և ի բազուկն հզօր, որ յաչնչէ գոյացոյց զարարածս և ողորմութեամբ իւրով խնամէ զսա միշտ, որ և անհնարինքն հնարաւորք են նմա, և արտասուօք և ուխտիւք հայցէին ի նմանէ բառնալ զպատուհասն յաշ-

---

* Կիրակոս, անդ, էջ 192։

*խարհէ։ Իսկ ողորմածն աստուած խիստ վիրացն եւ սպեղանիս, և որ եհարն, նոյն և բժշկեաց...»։ «Մեք հաւատամք զամենայն գործ լեալ ի խնամոցն աստուծոյ, որ ըստ մեղաց աշխարհի թոյլ տայ գալ պատուհասին, և դարձեալ բժշկէ ողորմութեամբն իւրով, որպէս և կամի. որ և յայս պատուհաս մարախոյս զայս եւ դեղ և սպեղանի զբազմութիւն ձագուցս ծախողի»*։*

*Այսպես է մտածում Կիրակոսը (օրինակները բազմաթիվ են և սփռված ամբողջ Պատմության մեջ), այդպես է մտածել նաև նրա սաներակից Վարդան Արևելցին**, հավանորեն, և նրանց «համաճարեղ» վարդապետը՝ Վանականը և շատ ու շատ ուրիշներ։*

*Այս միևնույն աշխարհայեցողությամբ է Կիրակոսը բացատրում նաև հասարակական երևույթները, quվթողական պատերազմները, ընտանիքի բարքերի վատթարացումը, փչացումը, հասարակական կյանքը կարգավորող նորմերի՝ կարգ ու կանոնի խանգարումը, փլուզումը և այլն, և այլն։ Եվ այս ամենի բացատրության միակ և ամենահզոր միջոցը եկեղեցական այն վարդապետությունն է, որի արմատները հասնում են մինչև վաղ քրիստոնեական-ավետարանական միջավայրը։*

*Այստեղ, այս միջավայրումն է, որ սկիզբ է առնում կատարածաբանական-էսխատոլոգիական այն ուսմունքը, որի համաձայն «վերջին ժամանակները» երևան է գալու Քրիստոսի գլխավոր ախոյանը՝ «որդին կորստեան»—Նեռը և սկսելու է իր պայքարը «իշխանության» համար։ Կատարածաբանական այս վարդապետությունը, որ զանազան երկրներում այլևայլ բովանդակություն է ունեցել և այլևայլ անուններով հորջորջվել, օրինակ՝ խիլիազմ և այլն, մեր գրականության մեջ գոյություն է ունեցել դեռևս Դ-Ե դարերից (Ներսես Պարթևի, ավելի ուշ շրջանից Սահակ Պարթևի, Հովհան Կողեռնի և այլոց տեսիլները)***։*

*Այդ կատարածաբանական տեսիլների—«մարգարեությունների» արտացոլքը մենք գտնում ենք նաև Կիրակոսի Պատմության մեջ։ Տեսնելով հայրենի երկրի ծանր վիճակը՝ պատերազմ, ավերածություն, կոտորած, գերեվարություն և ընտանեկան բարքերի «քայքայում», նա կարծում է, որ այդ ամենը «սկիզբն է երկանց յայտնութեան որդւոյն կորստեան», և վախենում է «մի՞ թուցէ երևեսցի նա ի մերում աւուրս, զի գործք ամենայն որ գործեն այժմ, զնոյն նշանակեն» (էջ 8—9)։*

*Այդ ի՞նչ գործեր են, որ նրան այդպիսի հոռի եզրակացության են բերում։ Դրանք մեծավ մասամբ ուղղված են եկեղեցու և հոգևոր դասի դեմ, այն է՝ «սէր ցամաքեալ և անզգութիւն տիրեալ, աստուածպաշտութիւն նուազեալ և անհաւատութիւն բարձրացեալ, սեղանք և պատարագք լռեալ և քահանայք անողորմ ի տուր անկեալ, կանայք և մանկունք գերեալք և արք դառնամահք լեալ» (էջ 9)։*

*Չկարողանալով բացատրել բարքերի անկման պատճառները՝ նա նորից դիմում է քրիստոնեության «իմաստության հավիտենական աղբյուր» աստվա-*

---

* Կիրակոս, *անդ, 359—361։*

** Վարդան, *Պատմութիւն տիեզերական, էջ 189, 190—191, 212, 215 և բազմիցս այլուր։*

*** *Այդ տեսիլների մանրակրկիտ և խոր վերլուծությունը կապված հայ ազատագրական մտքի պատմության հետ տե՛ս* Աշոտ Հովհաննիսյանի *«Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» մոնոգրաֆիայի ուսումնասիրության մեջ (գիրք առաջին, Երևան, 1957, էջ 13—57 և բազմիցս այլուր)։*

*ծաշունչ գրքերին, մարգարեություններին և դրանց միջոցով իմաստավորում է իրական կյանքում տեղի ունեցած սոցիալական-քաղաքական երևույթները։ «Ժամանակս ի վերջ հասեալ է, և կարապետք Նեռինն գուշակեն զգալուստ որդւոյն կորստեան։ Երկեցուցանեն և զմեզ յայտնութիւնք սրբոց արանց և աստուածազգեստից... և մանաւանդ անսուտ հրաման փրկչին մերոյ և աստուծոյ, որ ասէ՝ «Յարիցէ ազգ յազգի վերայ և թագաւորութիւն ի թագաւորութեանն վերայ»**։*

*Կատարածաբանական այս տեսության կոնկրետացումը նա տեսնում է մեր երկրում, երբ՝ վկայակոչելով Ներսես Պարթևին, ասում է՝ «Մարգարէաբար ազդեաց (իմա՝ Ներսես Պարթևը,—Կ. Մ.-Օ.) վասն կործանման աշխարհիս Հայոց յազգէն նետողաց»**, կամ «բազում ինչ մարգարէացաւ վասն ազգին նետողաց և աւերման աշխարհիս, և վասն Նեռին և նեղութեանցն, որ ի նմանէ ընդ աշխարհս ամենայն»***, կամ «զոր գուշակեաց... Ներսէս վասն ազգին նետողաց և աւերման աշխարհիս Հայոց, այժմ կատարեցաւ յազգէ, որ թաթարն կոչի, զի զբազում ազգս և զաղինս ջնջեաց սա»****։*

*Ինչպես տեսնում ենք, «մարգարեների» ու հայրապետների գուշակությունների ու ազդմունքները Կիրակոսն իրականացված է տեսնում մեր երկրում Նեռի միջոցով, իսկ այս վերջինիս մարմնավորումը, որպես կոլեկտիվ, նետողաց ազգն է համարում, որի «պատմական-կատարածաբանական» «առաքելությունը» «կատարեցաւ յազգէ, որ թաթարն կոչի»։*

*Նեռի կերպարի ու «առաքելութեան» կոնկրետ պատմականացմամբ, սակայն, չեն սպառվում այն սարսափելի իրարանցումներն ու փլուզումները, որ տեղի են ունեցել Հայաստանում, Վրաստանում և Աղվանքում։ Նեռը—«ազգ նետողաց»-ը, որ «այժմ... թաթարն կոչի», միայն արտաքին ազդակն է։ Կիրակոսը կործանման նշաններ է տեսնում նաև երկրի ներսում, նրա հասարակական ընդերքներում։ Ներքին թշնամին քայքայիչ գործունեություն է ծավալում ներքուստ։ Եվ մեր պատմագրի աչքերի առաջ նորից երևում են «աշխարհի կատարածի» տեսարանները. «Կատարած աշխարհիս մօտեալ է, և վասն այնորիկ կարապետք Նեռինն բազմացան, որպէս յառաջագոյն ասաց կենարարն, թէ՝ «Մերձ ի կատարածն յարիցեն սուտ քրիստոսք և սուտ մարգարէք տալ նշանս և արուեստս դիւականս, մինչև մոլորեցուցանել, թէ հնար ինչ իցէ և զընտրեալսն»*****։ Եվ այդ «ընտրյալներին» մոլորեցնողը մեր պատմական իրականության մեջ, ըստ Կիրակոսի, Դավիթ Ծարեցին է, չքավոր և տնանկ ջրաղացպանը, որը կարծում է, թե իր որդիները Սահակ Պարթևի տեսիլքի համեմատ, պիտի վերականգնեն Արշակունյաց հարստությունը, որովհետև, ասում էր նա իր շուրջը հավաքված ժողովրդին, «յԱրշակունեաց ազգէն եմ ես, և պարտ է որդւոց իմոց լինել միոյն թագաւոր և միւսոյն կաթողիկոս»******։*

*Հայրենի աշխարհի «կործանումն յազգէն նետողաց», ինչպես նաև երկրի ներսում օր ավուր ավելացող «ընտրյալների» մոլորեցումը, հասարակության*

---

* Կիրակոս, *անդ, էջ 8, 231։*

** *Անդ, էջ 231։*

*** *Անդ, էջ 22։*

**** *Անդ էջ 9։*

***** *Անդ, էջ 321։*

****** Կիրակոս, *անդ, էջ 328։ Հմմտ.* Աշոտ Հովհաննիսյան, *Դրվագներ և այլն, էջ 290։ Հեղինակը՝ մանրամասն վերլուծելով Դավթի դրվագը Գանձակեցու Պատմության մեջ, արամիտ կռահումներով կապում է այն հայ ազատագրական մտքի պատմության հետ։*

քայքայումը «դերաքրիստոսի» արբանյակների կողմից վհատության գիրկը չեն նետում մեր Պատմագրին։ Նա հոռետես չէ, ընդհակառակը, համակված է լավատեսությամբ. «Վասն զի,—ասում է նա,—յօժարեցաք մեք յիշատակ թողուլ յազգս, որ գալոց են, քանզի ակն ունիմք մեք յուսով փրկութեան ի նեղութենէ աստի, որ պաշարեալս է մեզ» (էջ 271)։ Նեղությունից փրկվելու հույսեր տածողը, ազգին հիշատակ թողնելու ցանկություն ունեցողը չի կարող հոռետես լինել։

Ի՞նչ հույս է այդ, որ լիցք է տալիս մեր Պատմագրին. ո՞ւմ վրա է դնում իր այդ հույսը և ի՞նչ է ակնկալում նա։ Այս հարցերին նա փոքր ինչ մշուշապատ, վերացական է պատասխանում, կարծես, ոչ անմիջականորեն հենց այս կապակցությամբ, այլ միջնորդաբար։ Բայց և այնպես փոխաբերաբար վերծանած նա լրիվ տալիս է այս հարցերի պատասխանը։

Հայոց աշխարհն ավերված է թաթարների կողմից։ «Յամենայնէ թափուր եղեալ», վաղուց կործանված են թագավորությունները (Արշակունի և Բագրատունի), «իշխանքն ոչ ուրեք երևեալ Հայկազնի, բայց թէ ուրեք ուրեք զօղեալք և թաքուցեալք յօտար աշխարհի...»։ Այս սարսափելի իրականության հանդեպ նա չի ընկճվում, վհատվում. «բայց միայն յոյս մի եղեալ առաջի՝ զաւուրս շնորհ և զխորհրդոյս զօրութիւն, զի յայսմ աւուր յորում ձեռնարկեցաք ի սմա, տօն է գալստեան ամենասուրբ հոգւոյն ի վերնատունն ի դասս առաքելոցն՝ հրեղէն լեզուօք հրաշազարդեալ զնոսա ընդ տիեզերս առաքեաց՝ կոչել զամենեսեան ուռկանաւ աւետարանին ի կեանս անմահականս։ Եւ մեք ի նոյն հոգւոյ վստահ եղեալ՝ արկաք զանձինս յաշխատութիւն»*, այլ խոսքերով՝ հույսը «սուրբ հոգին» է, նախախնամությունը**, որը բոլորին կոչելու է «ուռկանաւ աւետարանին ի կեանս անմահականս», իսկ ինքը «ի նոյն հոգի վստահ եղեալ» գրում է իր աշխատությունը, որպես «յիշատակ ապագայիցն» «զկնի եկելոցն», կամ «յիշատակ թողուլ յազգս, որ գալոց են» (էջ 271)։

Այսպիսի հույսերով համակված՝ նա ուզում է իր ազգին օգնած լինել իր վսեմ գործով, քանի որ, ինչպես նկատեցինք վերևում, «օրէնք են աստուածային ցուցանել հարանց՝ որդւոց, զի ծանիցէ յազգ յայլ»։ Նա նկարագրում է որդիներին ի գիտություն՝ «հարանց» լավ ու վատ գործերը, երկրի ավերածությունները, ժողովրդի զանգվածային ջարդերն ու գերեվարությունը և չնայած այդ անչափ մռայլ պատկերին՝ որոշ լուսավոր կետեր է վերհանում ու պատմում երկրի բարօրությամբ և շինարարությամբ մտահոգված իշխանների և հոգևոր հայրերի ախրագործությունների և հանրօգուտ գործունեության մասին (Լևոն Բ, Հեթում, Զաքարյաններ, Հովհաննես Սարկավագ, Մխիթար Գոշ, Վանական և այլք)։

Այս աշխարհըմբռնման տեսադաշտից ելնելով՝ Կիրակոսը խիստ է ու անհաշտ շահասեր ու անձնասեր, ազգուրաց ու դավաճան, ժողովրդական զանգվածներին կեղեքող, գողող ու լկտի, անբարոյական կյանք վարող պերճ մեծավորների, իշխանների հանդեպ։ Նա հարվածում է անգութ շահագործողներին և կարեկցում «հնազանդյալներին»։ Այսպես, օրինակ, նրա գրիչը ցավով արձա-

* Կիրակոս, անդ, էջ 9—10, կամ «արդ և մեք կայցուք խնամոցն աստուծոյ մինչև ինքն այց արասցէ մեզ (էջ 250։)։

** Աշոտ Հովհաննիսյանը (անդ, էջ 390) գրում է՝ «Պատմիչը կողմնորոշվում էր դեպի նախախնամության մատը, սակ կործանում նշմարելով գյուղացիության հուզումների մեջ»։ Ճիշտ նշելով Կիրակոսի կողմնորոշումը դեպի նախախնամության մատը, Ա. Հովհաննիսյանը խիստ սահմանափակում է կողմնորոշման դրդապատճառները միայն գյուղացիության հուզումների իբր թե կործանարար բնույթով։

նագրում է. «Առեալ (իմա՝ մոնղոլները,—Կ. Մ.-Օ) զամենայն յառ և յաւար, ի կոտորումն և ի գերութիւն... զի ոչ ոք էր, որ ընդդէմ կայր նոցա, կամ պատերազմէր ընդ նոսա... զի փախստեամբ փախեաւ թագուհին վրաց, որ Ռուզուդանն կոչէր, ուր և կարաց զերծանել. այնպէս և ամենայն իշխանքն առանձնապահ եղեն ի նոցանէ»*, այսինքն՝ այն «տերերը», որոնք «ի տեառնէ» «հնազանդեալների» պաշտպանության մասին պիտի հոգատար լինեին։ Կամ՝ Ջաղատայի զորագունդը՝ գրավելով Լոռին, սկսում է «կոտորել յանխնայ զարս և զկանայս և զմանկունս՝ աւար առեալ զինչս և զստացուածս նոցա. զտին և զգանձս իշխանին Շահնշահի, որ զրկեալ և կողոպտեալ էր զիւր հնազանդեալսն և անդ կազմեալ տուն գանձուց ամրագոյն, զոր ոչ էր հնար ումեք տեսանել, զի նեղ արարեալ էր զբերան գբին, որ միայն արկանելոյն էր բաւական, իսկ հանելոյ՝ ոչ եւս»**։

Մոնղոլ հարկահանները հարկադրում են ժողովրդին «ի տասնամենից և ի վեր՝ ընդ գրով համարոյ արկանել զամենեսին, բաց ի կանանց»։ Սկսվում է դաժան հարկահավաքը. «Որ ո՛չ կարէր հատուցանել զսակս, մանկունս նոցա առնուին ընդ պարտուցն»։ Եվ այստեղ հասարակ ժողովուրդը փոխանակ պաշտպանություն գտնելու իր հայրենի «տերերից», որոնք գործակցում էին զավթիչներին, ընդհակառակն՝ ենթարկվում է նրանց էլ ավելի դաժան շահագործման և տանջանքների. «Այլ և իշխանքն՝ տեարք գաւառացն, նոցուն գործակից լեալ ի նեղելն և ի պահանջելն վասն իւրեանց շահելոյ: Եւ այսու ոչ բաւականացան, այլ և զամենայն արուեստագէտս, եթէ ի քաղաքս և եթէ ի գիւղս, զամենայն ի հարկի կացուցին... և զի՞ պիտոյ է մանրամասնաբար ասել,—բացականչում է Պատմագիրը,— զամենայն դուռն շահից հատին ի մարդկանէ, և ինքեանք միայն շահէին»***։

Անձնական շահի ու պաշտոնի հետևից են ընկած, ըստ Կիրակոսի, ոչ միայն ազնվականները, ֆեոդալները, այլև բարձրաստիճան հոգևորականները՝ եպիսկոպոսներն ու վանահայրերը, որոնք ոչ այնքան մտածում են իրենց խնամքին հանձնված հոտի հոգևոր բարգավաճման, որքան իրենց անձնական շահի, եկամուտների կուտակման մասին։ Այսպես, երբ հոգևորականությունն ընդհարվում է Զաքարե սպասալարի հետ, «կէսք հաւանեալ էին առնել զխնդիրն, այնոքիկ, որ եպիսկոպոս էին յիշխանութեանն, զի մի անկցին յաթոռոյն, և կէսք՝ ոչ»****։ Այս համաձայնողական, հաշտվողական եպիսկոպոսներին Մխիթար Գոշը հորդորում է վերադառնալ իրենց պաշտոնավայրերը՝ խոստանալով. «Մեք աղաչեսցուք զսա (իմա՝ Զաքարեին,—Կ. Մ.-Օ.) ոչ հանել զձեզ յեկեղեցեաց ձերոց և ի տեղեաց»*****։ Ահա սրանք էին, որ՝ կեղեքելով հավատացյալ հնազանդ ժողովրդին, անչափ հարստություն էին կուտակում, ինչպես, օրինակ, Մատթեոս Ուռհայեցու Դավթակ քորեպիսկոպոսը****** և այլք։

Հասարակ ժողովրդի նման անողոք շահագործումն ու կեղեքումը տեղի էր ունենում ոչ միայն Հայաստանում, այլև հարևան երկրներում, մանավորապես «հղփացած» Վրաստանում, որտեղ «իշխանք զրկէին և կողոպտէին զաղքատս

---

* Կիրակոս, անդ, էջ 254։

** Անդ, էջ 253—254։

*** Անդ, էջ 362—363։

**** Անդ, էջ 176։

***** Անդ, էջ 177,

****** Մատթէոս Ուռհայեցի, անդ, էջ 103։

*և ի զրկանաց անտի գնէին հանդերձս մեծագինս և ազնէին, ուղէին և ըմպէին և մեծամեծս փքային»*։*

*Կիրակոսի ժողովրդասիրության-մարդասիրության լավագույն ապացույցներից մեկն է Նոր Գետիկի վանքի հյուսիսային մուտքի ճակատին՝ սպիտակի վրա կարմիր ներկով գրած արձանագրությունը, որի համաձայն՝ 1260 թ. Կիրակոս վարդապետի խնդրանքով Հովհաննես Արմանեցին ազատում է Գետիկի ժողովրդին հարկից։ Մեջ ենք բերում այդ արձանագրությունը.*

*1. Աստուծով ես տէր Յովհան*

*2. էս Արմանեցի ազատ գրեցի*

*3. զԳետկա ժողովուրդս ի հարկէ որ տափն յաթոռ*

*4. ն յիշխանութեան Գոնցա խաթունին ի խնդրո Կիր-*

*5. ակոս վարդապետին ի հայրութեան Աբրամի վարդապետի**...*

*Վերը բերված և սրանց նման այլ բազմաթիվ արտահայտությունները մեր Պատմագրի ժողովրդասիրության ապացույցներն են։*

*Կիրակոսի պատմահայեցողության մի շարք սկզբունքների մասին մենք հակիրճ խոսել ենք նաև Պատմության աղբյուրներին նվիրած գլխում։ Այժմ անցնենք մեր երկրորդ հիմնական հարցին, այն է՝ ի՞նչ նորություններով է նա հարստացնում մեր պատմագիտական իմացությունները և փաստական գիտելիքները, այլ խոսքով՝ ո՞րն է նրա Պատմության պատմագիտական արժեքը։*

*Կիրակոսի Պատմությունը՝ ըստ նրա բաղադրիչ մասերի, տարբեր պատմագիտական արժեք է ներկայացնում։*

*Առաջին մասը, որպես պատմագիտական բանաքաղություն, ընդհանրապես նվազարժեք է և միմիայն որոշ արժեք ունեն այն տեղեկությունները, որոնք առկա չեն մեր ձեռքը հասած այլ սկզբնաղբյուրների մեջ։ Այդ նույն առաջին մասում զետեղված բանահյուսական ծագում ունեցող համով-հոտով սաված զրույցները (այդ մասին տես նախորդ գլխում), ինչպես նաև մատենագրական ծանոթությունները ու ճշտումները բավականաչափ արժեքավոր են գրական և պատմագրական տեսանկյունով։*

*Պատմության երկրորդ մասը առաջնակարգ նշանակություն ունի ոչ միայն հայ, աղվան և վրացի ժողովուրդների, այլև սելջուկ-թաթարական-մոնղոլական արշավանքների պատմության համար։*

*Մեր բանասերները***, ըստ արժանվույն, մեծ կարևորություն են տվել Կիրակոսի Պատմության մեջ տեղ գտած զանազան կրոնադավանաբանական թղթերին, կանոնագրություններին և շրջաբերականներին, որպես պատմական վավերագրերի****։*

*Բացի վերոհիշյալ վավերագրերից՝ Կիրակոս Գանձակեցու Պատմությունը,*

---

* Կիրակոս. *անդ, էջ 318—319։*

** Հռ. Ջանփոլադյան, *Մխիթար Գոշ և Նոր Գետիկի վանքը, էջ 160—161։*

*** Ղ. Ալիշան, *Գանձակեցու, Վենետ. հրատ. Յառաջաբան, էջ Զ, «Հայապատում», մասն Ա, էջ 107։* Մ. Աբեղյան, *Հայոց հին գրակ. պատմություն, գիրք երկր., էջ 193։* Գ. Զարպհանալյան, *Հայկական հին դպրութ. պատմ., էջ 749։* Հ. Ոսկյան, *Հովհաննես Վանական և այլն, էջ 108 և այլք։*

**** *Դրանք են՝ 1. Ներսես Շնորհալի՝ Գիր հաւատոյ, որը հրատարակում ենք* միայն *Կիրակոսի ԶԶ-ի բաղդատությամբ, 2. Կանոնք ժողովոյն ի Սիս, 3. Վասն կանոնական հրամանաց 4. Թուղթ տեառն Կոստանդեայ շրջաբերական, 5. Սահմանք կանոնականք, 6. Վասն խնդրոյն, որ եղև ի մէջ քրիստոնէից վասն սուրբ հոգւոյն աստուծոյ, 7. Խոստովանութիւն հաւատոյ ուղղափառաց, 8. Խրատ զաւանութեան Վանական վարդապետին։*

անշուշտ, շատ արժեքավոր է հայ-աղվանական եկեղեցու ներքին կյանքի՝ եկեղեցական նվիրապետության, ծիսական խնդիրների, վանական դպրոցների ու դպրության, գիտության ու մատենագրության, արվեստի ու արհեստի, երաժշտության և ճարտարապետության պատմության, տնտեսության ու շինարարության, ինչպես նաև եկեղեցական ժողովների, դավանաբանական պայքարի հայ և հույն, վրացի, հայ և լատին եկեղեցիների փոխհարաբերության պատմության համար։ Այդտեղ հետաքրքրական նյութեր կան նաև հայ և աղվան եկեղեցիների ներսում առաջացած պառակտումների պատմության համար (Սյունյաց եպիսկոպոս Հակոբ, աղվանների կաթողիկոս Բեժգեն, Վահան-Վահանիկ կաթողիկոս և այլք)։

Հայ եկեղեցու վարդապետության և դավանաբանական պայքարի հարցում Կիրակոսը սոսկ սառնարյուն պատմագրող չէ, այլ ակտիվ-գործուն սկզբունքային պայքարող և հայ եկեղեցու դավանաբանության երդվյալ պաշտպան*։

Այս ամենը, ճիշտ է, շատ կարևոր է, բայց միայն դրանով չէ չափվում Կիրակոսի պատմագրական երկասիրության մեծ արժեքը։ Մեզ ժառանգություն մնացած հարուստ հայ պատմագրության մեջ Կիրակոսի այս երկասիրությունը թե՛ ըստ ժամանակի (ԺԲ—ԺԳ դդ.) և թե՛ հարուստ բովանդակության կողմից առաջնակարգ պատմագրական սկզբնաղբյուր է, քանի որ մեզ չեն հասել ո՛չ Հովհաննես Սարկավագի և ո՛չ էլ Վանական վարդապետի պատմական երկասիրությունները։ Սա մի պատմագրական հուշարձան է, որ ընդարձակորեն խոսում է թուրք-թաթարական-մոնղոլական ժողովուրդների, նրանց նվաճումների և նվաճած երկրներում՝ Հայաստանում, Աղվանքում, Վրաստանում և այլուր ստեղծած քաղաքական-վարչական և սոցիալ-տնտեսական պայմանների մասին։

Նրա պատմությունն այս մասում ոչ թե բանաքաղություն է, ինչպես առաջին մասը, այլ հեղինակի տեսածի ու լսածի բարեխիղճ և մանրապատում հաշվետվություն։

Ականջալուր վկայությունները, ինչպես մենք արդեն հիշատակել ենք, երբեմն կասկածի տակ է առնում, ասելով՝ «Մեք ոչ գիտեմք, և ոչ ինքեանք ես», կամ՝ «Թէ ճշմարիտ և թէ սուտ, մեք ոչ գիտեմք», կամ լսելով՝ չի արձանագրում, «Զի մի աւելորդ ումեք թուեսցի» և այլն։ Սակայն երբ նա իրական դեպքի մասին է հաղորդում, իսկույն ավելացնում է՝ «բայց այս եղևստուգութեամբ» (էջ 322)։ Այսպիսի հավաստիացումով է սկսում նա Դավիթ Ծարեցու պատմությունը։

Բայց և այնպես, չնայած իր իսկ հայտարարության՝ «զի մի աւելորդ ումեք թուեսցի», Կիրակոսի մոտ կան այնպիսի անհեթեթություններ, որ տեղ չպետք է գտնեին նրա պատմագրական երկասիրության մեջ։ Այս դեպքում, թերևս, աղբյուրի հեղինակավորությունն է պատկառանք և ակնածություն ներշնչել Պատմագրին, որ առանց կշռադատելու հյուրընկալել է իր երկի մեջ այնպիսի ար-

---

* Գ. Ալիշանը՝ ելնելով դավանաբանական հակոտնյա դիրքերից, հայ եկեղեցու դավանաբանության դրվատումը Կիրակոսի կողմից համարում է «ազգանախանձութիւն», ապա ավելացնում է՝ «Այսպշաւանաց եւ է, զի սովին մոլութեամբ զատանցեալ զոյգ ընդ կանխակալոյ աւանդութեան՝ բաղում ուրեք մարտնչի ընդ ճշմարտութեան (ընդգծումը մերն է,—Կ. Մ.-Օ.) մերթ ընդհարկանելով ընդ յոյնս... և յաճախագոյն եւ ընդ հաւանողս տիեզերական ժողովոյն Քաղկեդոնի... զժողովն երգիծանելով» (էջ Է)։

*տարոց առասպելներ, ինչպիսին են, օրինակ՝ այն երկրի մասին, «ուր կանայք են ի ձև մարդոյ բանականաց և արք ի կերպարանս շանց և են անբանք, մեծք և մազեղք»...* Մեր Պատմագիրն ինքն էլ, կարծես, որոշ չափով հավատացել է լուծին... Եվ կարո՞ղ էր այլ կերպ լինել։ Մեզ թվում է՝ ոչ։ Կիրակոսը, կրկնում ենք, իր դարի հարազատ զավակն է. նա էլ իր սննդակից Հովսեփ վարդապետի նման նույն հոգևոր սնունդն է ստացել, հետևաբար կարող էր հավատալ սնոտի առասպելների, օրինակ՝ «Վասն դիւին, որ ի կերպարանս կնոջ լեալ»։ Դա նրա Պատմության բացասական կողմն է, միաժամանակ նրա դարաշրջանի վանական հասարակության շատ հետաքրքրական ու ցայտուն պատկերը։*

*Կիրակոսի Պատմության ամենագլխավոր և հիմնական արժեքն այն է, որ այստեղ, կարելվույն չափ մանրամասն, նկարագրված են թուրք-թաթարական ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում, Վրաստանում և Աղվանքում տեղի ունեցած քաղաքական, սոցիալական և տնտեսական իրադարձությունները։ Այս դարաշրջանում Հայաստանում վերանում են հայկական մանր թագավորությունները, բազմաթիվ ֆեոդալական տներ և տեղի են տալիս, մի կողմից, սելջուկյան տիրապետությանը և տիրակալությանը, մյուս կողմից, միանում են Վրաստանի վերելքի շրջան ապրող պետությանը։ Վրաց արքաների հովանավորության ներքո Հյուսիս-արևելյան Հայաստանը վայելում է ներքին լիակատար ինքնավարություն, ընդ որում հայկական զորքը վրաց զորքերի հետ միասին՝ Զաքարյանների գերագույն հրամանատարությամբ՝ վանում էին թշնամիներին Մեծ Հայքի սահմաններից դուրս։*

*Սելջուկյան թուրքերի ասպատակություններից հետո՝ հազիվ էր սկսել Հյուսիս-արևելյան Հայաստանը վերականգնել իր սոցիալ-տնտեսական կյանքը, երբ ենթարկվեց Կենտրոնական Ասիայից Առաջավոր Ասիայի վրա տարեբայնորեն արշավող մոնղոլ-թաթարական վաչկատուն ցեղերի ահարկու ներխուժմանը։ Մոնղոլների արշավանքը և տևական տիրապետությունը Արևելյան Հայաստանում, Աղվանքում և որոշ չափով Վրաստանում իր կնիքն է դրել այդ նվաճված երկրների վրա՝ վերափոխելով նրանց ռազմա-վարչական կառավարման ձևը, հարկային՝ հարկադրման և հարկահավաքման սիստեմը, աշխարհիկ և եկեղեցապատկան հողատիրության կարգը և այլն, և այլն։*

*Մոնղոլական տիրապետության շրջանի ճշմարտախոս պատմագիրն է Կիրակոս Գանձակեցին, որի երկասիրությունը մի յուրատեսակ պատմագիտական վավերագիր է, որի մեջ իր արտացոլումն են գտել թաթար-մոնղոլների ոչ միայն ռազմավարչական և սոցիալ-տնտեսական քաղաքականությունը, հարկադրման ու հարկահավաքման սիստեմը (հարկերի տեսակն ու քանակը) այլև նրանց նիստ ու կացը, հավատալիքներն ու սովորույթները և անգամ լեզուն։*

*Պատմության մեջ հատուկ ուշադրություն է առնված ազդեցիկ ֆեոդալական տոհմերի կալվածքների ու կալվածատիրական իրավունքների ատիճանական անցումը մոնղոլ իշխանավորներին՝ նոյիններին, հայ եկեղեցական հաստատություններին և բարձրաստիճան հոգևորականներին, ապա փոքր-ինչ ավելի ուշ՝ առևտրական դասի խոշորագույն ներկայացուցիչներին։*

*Այս ամենը Կիրակոսը նկարագրել է կամ որպես ականատես, կամ որպես ականջալուր, վերջին դեպքում, հարկավ, տեղեկությունները քաղելով վստահելի ու հեղինակավոր մարդկանցից։*

---

* **Կիրակոս,** *անդ, էջ 371։*

Կիրակոսի ուշադրությունից չեն վրիպել նաև Արևմտյան Հայաստանի քաղաքական-սոցիալական իրադրությունները, քաղաքական-եկեղեցական պայքարի դրվագները, ինչպես և Կիլիկյան Հայաստանի, Իկոնիայի ու մոնղոլների փոխադարձ հարաբերությունների նկարագրությունը։

Գանձակեցու հաղորդագրության մեջ առանձնապես հետաքրքրական է և արժեքավոր Հեթում թագավորի երթուղին դեպի Մոնղոլիա և այնտեղից նոր ճանապարհով՝ Միջին Ասիայով դեպի Հայաստան ու Կիլիկիա։ Այս երթուղին, հավանաբար, մոնղոլական դարաշրջանի, թերևս և ավելի վաղ շրջանի, ռազմա-քարավանային-առևտրական տրանզիտային ճանապարհն է եղել, որ կապել է Հեռավոր Արևելքը, Չինաստանը, Մոնղոլիան Առաջավոր Ասիայի երկրների հետ։

«Այն ամենը, ինչ Կիրակոսը հաղորդում է մոնղոլների մասին,—գրում է մեզ ականավոր մոնղոլագետ, պրոֆ.-դոկտ. Գ. Դ. Սանժեևը,—անչափ կարևոր նշանակություն ունի մոնղոլագիտության համար և դա առաջին հերթին ԺԳ դարի մոնղոլական լեզվի պատմության տեսադծով»*։

Ահա հենց այդ իմաստով առանձնակի նշանակություն են ստանում Պատմության հետևյալ գլուխները՝ «Վասն ցուցման կերպարանաց թաթարին, բացայայտութիւն սակաւուք» (էջ 271 և հավ.), «Թէ որպէս եկ թաթարն ապականել զաշխարհս ամենայն» (էջ 231—235) և «Վասն երթալոյն բարեպաշտ թագաւորին հայոց Հեթմոյ առ Բաթոյն և Մանգու ղանն» (364—377)։ Այս գլուխների բովանդակության մեծ մասը վերաբերում է թաթար-մոնղոլների նիստ ու կացին, ընտանեկան սովորություններին, կրոնին ու բարոյական հասկացություններին և լեզվին։ Այստեղ չեն մոռացված անգամ նրանց արտաքին տեսքը և ամուսնական հարաբերությունները։

Թաթար-մոնղոլների արտաքին նկարագրին հատուկ ուշադրություն են դարձրել մեր միջնադարյան մատենագիրներից շատերը (Մովսես Կաղանկատուացի, Ստեփ. Օրբելյան, Վարդան Արևելցի և այլք), բայց ոչ ոք այնքան դիպուկ և ամփոփ չի գծագրել, ինչպես Կիրակոսը և մանավանդ Գրիգոր Ականցին։

Ահա մոնղոլների արտաքին նկարագիրն ըստ Գրիգոր Ականցու.

«Գլուխն մեծ էր իբրև ըզգոմէշու,
Աչքերըն նեղ իբրև ըզձագու,
Քիթն կարճ իբրև ըզկատուի,
Դունչըն մռուփ[1] իբրև ըզշան,
Մէջքն բարակ զինչ մըրջըման[2],
Ոտքերն[3] կարճ զերդ[4] ըզխոզի[5],
Մօրուս բնաւ իսկի[6] չունէին,
Տօլաթ[7] ունէին զերդ առիւծի[8],
Ձայնն ճիչող քան զարծուի[9],
Ուր չի պատմիր[10], անդ գտանիւր[11]։

---

* Մեր խնդրանք պրոֆ. Գ. Դ. Սանժեևը վերանայել է Կիրակոսի Պատմության մեջ բերված մոնղոլերեն բառերը և տեղ-տեղ սրբագրել, ելնելով ԺԲ—ԺԳ դարերի մոնղոլ արտասանությունից, այլ խոսքով՝ հարգելի պրոֆեսորը սիրալիր օգնել է մեզ գրիչների վրիպումները շտկելու գործում, որի համար հայտնում ենք նրան այստեղ մեր անկեղծ շնորհակալությունը։

Կանայք[12] խրեամբ ունէին
Գդականի սուլուլ ի վերս նալի[13],
Ծածկեալ վարագուրով[14] դիպակի.
Երեսքն լայն պեռեքի[15],
Սպանմամն[16] դեղով ծեփէին.
Իժի նման ծնանէին
Եւ գայլապէս[17] կերակրէին.
Մահն ի նոսա խակի չերևիւր,
Վասն այնոր ԳԾ[18] տարի ապրէին։
Այսցեղ էին առաջինքն,
Որ եկին յաշխարհն վերին,
Եւ հաց չուտէին ամենևին[19]»*։

Վիպական շնչով կերտված այս բեկորիկը հիմք է տալիս մեզ ենթադրելու, որ ժողովուրդը ԺԲ—ԺԳ դարերում ստեղծած է եղել ավելի ընդարձակ զրույցներ և վեպեր, որոնք պատկերել են հայ ժողովրդի ազատագրական պայքարը թաթար-մոնղոլական բռնակալության դեմ։ Որ այդպիսի վիպական ժողովրդական ստեղծագործություններ են գոյություն ունեցել մեր միջնադարում, դրա լավագույն ապացույցը Մովսես Կաղանկատուացու, Կիրակոս Գանձակեցու և այլոց երկերում պահպանված այն նկարագրությունն է, որտեղ ծաղր ու ծանակի է ենթարկվում խաքանը**։

Վերը բերված վիպական բեկորիկը Գրիգոր Ականցին կամ քաղել է մի այդպիսի զրույցից կամ վիպերգից, կամ ինքն է գրել՝ ջանալով նմանվել ժողովրդական բանահյուսության բառ ու բանին, նրա արվեստին։

Այս բեկորիկը, անշուշտ, ուշանալոր է, շատ նման մեր անզուգական «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի անարվեստ կամ պրիմիտիվ արվեստով հորինված տաղաչափության, որտեղ «միանում են և մաքուր յամբական ու մաքուր անապեստյան տողեր, և երբեմն նույնիսկ յամբական տողեր ազատ

* Մաղաքիա—Գրիգոր Ականցի. Պատմ. վասն ազգին նետողաց, Պետերբ. էջ 6—7։ Տալիս ենք այլ ընթերցվածները ըստ Երուսաղեմյան հրատարակության (1870)։ 1. մառունջ, 2. մրջմնան, 3. ոտներն, 4. գերթ, 5. խոզի, 6. խսկ, 7. տաւլաթ, 8. զարիւծու փխ գերդ առիւծի, 9. ճչող գերդ արծուի, 10. չպատմէր, 11. գտանէր, 12. կանայքն, 13. սուլուլի վերանալի, 14. չարագուրով, 15. երեսն լայն պեւեքի, 16. սպանմամբ, 17. գայլոյ պէս, 18 երեք հարիւր, 19. ամենևին չուտէին։

Տողատումը մերն է։ Ժողովրդական տարբերակի մեջ, կարծում ենք, անց. անկ. հողն. 3-րդ դեմքը հնչել է՝ ժողովրդ. բարբառների նման՝ ունին փխ ունէին. ծնանին փխ ծնանէին, ապրին փխ ապրէին և այլն։

Մոնղոլների ցայտուն նկարագիրը պահպանված է նաև մի հիշատակարանում, որից քաղում ենք հետևյալը. «Յամս հայկազեան թուաբերութեան տոմարին, յորում էր թիւ համարոյ թուականին ՈՁԵ (1236),.. յարեաւ ազգ մի գաղանաբարոյ և անողորմ և եհեղ բազում արիւն։ Եւ կերպարանն այսպէս. լայնաթիկունք և հաստաբազուկ, և գլուխն մեծ և հեր գլխոյն ուղղորդ և ձարբ. և աչքն նեղ, և ճակատն լայն, և քիթն տափակ, և մուրուքն քսակ, բարքն մարդոյ և քան զգազան անողորմ էին ի վերայ մարդոյ. և բնական անունն նորա Խարա-թաթար։ Թէ կերակուր գտանէր ուտէր, և թէ չգտանէր՝ ոչ քննէր և ոչ խնդրէր կերակուր»։ Տե՛ս Ք. Պ. Նշխարք մատենագրութեան հայոց, էջ 70 և հտվ.։ Հմմտ. Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 457 և Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ և այլն, գիրք առաջին, էջ 245։

** Մովսէս Կաղանկատուացի, Պատմ. Աղուանից աշխարհի, էջ 158—9։
Կիրակոս, անդ, էջ 52—53։

ոտքերի (ազատ տակտերի) խառնուրդով»,—ինչպես բնութագրում է այդ չափը Մ. Աբեղյանը*։

Մոնղոլների մասին Կիրակոսի հաղորդած նյութերի մեջ ոչ նվազարժեք է նաև Չինգիզ խանի ծննդյան առասպելը, որի համաձայն նա «ոչ ծնեալ ի սերմանէ առն, այլ լոյս իմն եկեալ յաներևութից, և մտեալ ընդ յերդ տանն, և ասացեալ մօրն, թէ յղասջիր և ծնցիս որդի ինքնակալ երկրի։ Եւ յայնմանէ անէին ծնեալ զնա»։

Այս առասպելը հին դարերում իր զուգահեռներն է ունեցել համարյա բոլոր կրոնների, թագավորությունների, ցեղերի հիմնադիրների՝ նահապետների առասպելների մեջ։ Տարածված առասպելաբանական մի մոտիվ է, որ այդ տիպի հերոսները գերբնական եղանակով են աշխարհ գալիս և ծնվելով՝ նախախնամության կամքի կատարողներն են հանդիսանում այս աշխարհում (հմմտ. աստվածների ծնունդը, Հիսուս, Ադոնիս... և վերջապես, մեր «ծռերի» ավագագույն սերնդի ներկայացուցիչներ՝ Սանասարն ու Բաղդասարը**։

Կիրակոսի Պատմության ամենաարժեքավոր հատվածներից մեկն է,—ինչպես ասացինք փոքր ինչ առաջ,—«Վասն ցուցման կերպարանաց թաթարին բացայայտութիւն սակաւուք» գլուխը։ Պատմագրին վայել անաչառությամբ, հանգիստ ու անվրդով նա ընթերցողին ներկայացնում է թաթարի կերպարանքը, ապա թևից բռնած մտնում է նրանց «տունը» ու մանրամասն նկարագրում ընտանեկան կյանքը, նիստ ու կացը, սովորությունները։

«Էին տեսլեամբ կերպարանաց դժոխատեսք և ահագնալուր՝ մօրուս ոչ ունելով, բայց ոմանց սակաւ թուով մազս ունելով ի շուրթն կամ ի կզակն. ակն նեղ և արագատես, ձայն նուրբ և սուր, բազմակեացք և տևողք***։

Յորժամ անկանէր, յաճախ ուտէին և ըմպէին անյագ և յորժամ ոչ անկանէր, ժուժկալք էին։ Ուտէին զամենայն կենդանիս՝ զսուրբս և զանսուրբս, և զմիս ձիոյ առաւել մեծարէին. անդամ անդամ յօշեալ և եփեալ, կամ խորովեալ առանց աղի, և ապա մանր կոտորեալ և թացեալ յաղաջուր, այնպէս ուտէին. ոմանք ի ծունր ըստ նմանութեան ուղտուց, և կէսք նստելով ուտէին, և յուտելն հասարակ բաշխէին տէրանց և ծառայից, և յըմպելն զղմուզ կամ զգինի, առեալ մի ոմն մեծ ամանով ի ձեռս իւր, և փոքր բաժակաւ առեալ ի նմանէ՝ ցանէին ընդ երկինս. և ապա յարևելս, յարևմուտս, ի հիւսիս և ի հարաւ, և ապա իւր իսկ ցրուողին զայն սակաւ մի ըմպեալ ի նմանէ՝ մատուցանէր աւագագունին։ Եւ թէ ոք բերէր նոցա կերակուրս կամ ըմպելիս, նախ՝ բերողին տային ուտել և ըմպել, և ապա՝ ինքեանք ուտէին և ըմպէին, զի մի ի մահացու դեղոց ինչ դժրիցին։

---

* Մեր ժողովրդի ոտանավորի մասին տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, Երևան, 1933, էջ 360—370 և «Սասնա ծռեր» խմբագր. Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի, հատ. Ա, Երևան, 1936, էջ ԼԵ—ԼԸ։

** «Սասնա ծռեր», հատ. Ա, էջ 128, 310, Բ, 160 և բազմիցս այլուր։

*** Մոտավորապես այսպես են նկարագրում մոնղոլ-թաթարներին մեր բոլոր պատմիչները։ Ընդհանուրի մեջ բացառություն է կազմում Ստեփանոս Օրբելյանը, որի կարծիքով նրանք են «պատկերով յոյժ գեղեցիկք և լերկք ըստ կանացի դիմաց» (Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան, ի լոյս ընծայեաց... Կարապետ Վ. Շահնազարեանց, հատ. Բ, Փարիզ 1859, էջ 147, տե՛ս նաև ծանոթ. էջ 341)։

Որչափ և կամէին՝ կանայս առնէին, բայց զպոռնիկս ամենևին ոչ ապրեցուցանէին ընդ կանայս իւրեանց. բայց ինքեանք՝ ուր և հանդիպէին այլազգեաց, անխտիր խառնակէին։ Եւ գողութեան առելիք էին, մինչ զի չարաչար մահուամբ սպանանէին»*։

Այսպիսի բովանդակալից և բազմակողմանի ազգագրական նկարագրություններ շատ սակավադեպ են մեր հին և միջնադարյան գրականության մեջ։

Այս ամենը Կիրակոսի Պատմության ըստ ամենայնի դրական կողմն է, նրա անուրանալի արժեքն ու բացառիկ նշանակությունը մեր և ընդհանուր պատմագրության մեջ։ Սակայն մեր հեղինակը դրականի կողքին ունի նաև խոշոր բացեր, ստվերոտ կողմեր, որոնք որոշ չափով նսեմացնում են նրա վայելած հարգն ու հեղինակավորությունը իբրև պատմության սկզբնաղբյուր։

Բացերի շարքին են պատկանում նրա դյուրահավատությունն ու դյուրահավանությունը, անահավատությունը և դավանաբանական կրքոտությունը, տարերային երևույթներով և աղետներով հասարակական կյանքում տեղի ունեցած իրադարձությունների բացատրությունը, կամ հասարակական աղետները հրաշքի միջոցով վերացնելու կամ ապաքինելու եղանակը և այլն։ Ճիշտ է, սրանք ոչ միայն նրա անձնական մտավոր հորիզոնի և գրական երկասիրության ստվերոտ կողմերն են։ Այդ ամենը բնական և օրինաչափական են մեր պատմագրի դարաշրջանի՝ ԺԳ դարի բոլոր հեղինակների համար։ Այդ միևնույն բացերը նկատվում են նաև Վարդան Արևելցու, Գրիգոր Ականցու և մյուսների երկերում։

Կիրակոսի, որպես պատմագրի, բացերից է, այն էլ օբեկտիվորեն խոշոր բացերից, նաև նրա պատմագրական երկի անսիստեմ շարադրանքը։ Նրա Պատմությունը նույնիսկ հարևանցի թերթելիս՝ անմիջապես նկատում ենք, որ նա միևնույն նյութը մի քանի տեղ է կրկնում, կամ մի նյութ, որ նոր է սկսում պատմել, մեկ էլ ընդհատում է, ապա այդ նյութին նորից անդրադառնում մի այլ հատվածում**։ Այդպես են, ըստ իս, օրինակ, թաթարների նիստ ու կացին, սովորույթներին ու լեզվին վերաբերող գլուխները։ Սրանք այնպիսի տպավորություն են թողնում, որ մեր Պատմագիրը այդ գլուխները կանխամտածված ու ծրագրված չի գրել, այլ երբ, ումնից և ինչպես լսել, այնպես էլ հարապատությամբ արձանագրել է։ Այս տեսակետից նրա պատմագիտական երկասիրությունը ամբողջական տպավորություն չի թողնում՝ հատվածներն ու գլուխները ցաք ու ցրիվ են, ժամանակագրական տեսագծով չեն պահպանում իրադարձությունների և դեպքերի հաջորդականությունը։ Կան և այլ ավելի նվազ նշանակալից բացեր, որոնց վրա կանգ չենք առնում։ Դրանց մի մասը կարող է առաջացած լինել գրիչների մեղքով՝ վերջիններիս անուշադրության կամ սխալ վերծանության հետևանքով։

Չնայած վերը թվարկածս թերություններին, Կիրակոսի Պատմությունն, այնուամենայնիվ, մի կարևորագույն պատմագիտական-գրական հուշարձան է, որն ամենայն մանրամասնությամբ նկարագրում է հայ ժողովրդի բազմադարյան պատմության շրջաններից մեկը, տալիս է այդ դարաշրջանի հայկա-

---

* Կիրակոս, անդ, էջ 271—272։ Հմմտ. թաթարների կերպարանքի նկարագրությունը Գրիգոր Ականցու վրձինած պատկերի հետ։

** Կիրակոսի Պատմության հորինվածքի և ամբողջականության հարցը քննարկված է հատուկ գլխում (տես էջ ԼԷ—ԼԹ)։

կան, վրացական և աղվանական հասարակությունների փոխհարաբերությունների անսքող պատկերը։

Կիրակոսը լավ է գիտակցում իր երկասիրության արժանիքները, նրա մատուցած օգուտն ապագա սերունդներին, ուստի հարազատ ժողովրդին կտակելով իր ավելի քան քսանհինգամյա ջանադիր աշխատանքի արգասիքը՝ Պատմությունը, սրտանց ցանկանում է. **«Լիցի սա մեզ արձան գերեզմանի, ոչ ըստ նմանութեան Աբիսողոմեան ձեռին, այլ կենդանի, զի յիշեսցի ի նմա անուն Կիւրակոսի»:**

# ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏՊԱԳԻՐՆԵՐՆ ՈՒ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ

Կիրակոս Գանձակեցու Պատմության քննական-համեմատական բնագիրը կազմելիս՝ մենք մանրամասն բաղդատել ենք Պատմության տպագիրները* Հայկական ՍՍՌ Պետ. Մատենադարանում եղած 30 ամբողջական և թերի ձեռագրերի հետ։ Վերջիններից երկուսը պատառիկներ են։

Հայաստանից դուրս այլևայլ մատենադարաններում, թանգարաններում ու մասնավոր անձերի մոտ պահվող 15 ձեռագրերից 3-ը լրիվ օգտագործված են Ղ. Ալիշանի կողմից Պատմության վենետիկյան հրատարակության մեջ. Լենինգրադի Ասիական թանգարանի ձեռագիրը (Ms. or. № 61) ընդօրինակված է Վենետ. Մխիթ. մի ձեռագրից 19-րդ դ. Փարիզի Bibl. Nat.-ի Հայկ. ձեռ. № 226 էգ. Դյուլորիեն 1851 թ. ընդօրինակել է Մկրտիչ Էմինի սեփական օրինակից (ներկայումս՝ Պետ. Մատենադարանում № 6550, մեր բաղդատ. «Ի» ձեռ.). ուստի վստահ կարող ենք ասել, որ թվարկածս ձեռագրերի ընթերցվածները նույնպես հայտնի են մեզ և օգտագործված մեր կողմից։

Մեր բաղդատական աշխատանքներից դուրս մնացած ձեռագրերից մի քանիսը՝ ըստ ձեռագրացուցակների նկարագրության, ծագում են մի ձեռագրից, այսպես Փարիզի Bibl. Nat-ի № 227-ը էգ. Դյուլորիեն 1851 թ. ընդօրինակել է Վիեն. Մխ. № 124—Գրիգոր Կամախեցու ձեռագրից (1603), որից ծագում են նաև Վիեն. Մխիթ. № 328-ը և Հովհ. Ջամուրճյանի ձեռագիրը։

Ձեռագրերից մի երկուսը՝ ըստ ցուցակ կազմողների՝ թերի են և ուշ դարերի սխալաշատ ընդօրինակություններ։

Հետևաբար, եթե ձեռքի տակ ունենայինք Կիրակոսի Պատմության մեզ հայտնի ձեռագրերից ևս մի քանիսը, օրինակ՝ Վիեն. Մխիթ. № № 124 և 574, Երուս. Հակոբ. № 819 (ըստ Մ. Տեր-Մովսիսյանի) և Լոնդ. Բրիտ. Թանգ. № 5620, ապա մենք բաղդատած կլինեինք բոլոր մեզ հայտնի ձեռագրերը։

Ստորև տալիս ենք Կիրակոսի Պատմության տպագիրների և ձեռագրերի համառոտ նկարագրությունը։

## Ա. ՏՊԱԳԻՐՆԵՐ

Կիրակոս Գանձակեցու Պատմությունն ունեցել է երեք տպագրություն՝ ա. Մոսկվայում, բ. Վենետիկում և գ. Թիֆլիսում*։ Ստորև տալիս ենք նրանց համառոտ նկարագրությունը։

---

* Մոսկվա, 1858 թ., Վենետիկ, 1865 թ. և Թիֆլիս, 1909 թ.—Մոսկովյան բնագրի բազմավրիպակ երկրորդ տպագրությունը։

ա. «Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ ի լոյս ընծայեաց Ոսկան Տէր Գէորգեան Յովհաննիսեանց Երևանեցի. ի Մոսկուա ի տպարանի Արևելյան լեզուաց ճեմարանի տեարց Լազարեանց, 1858»։

Տպագրությունն ունի մի փոքրիկ առաջաբան, որ բերում ենք ամբողջապես.

«Ծանուցումն

Կիրակոս վարդապետ Գանձակեցի՝ որ մի է յազգային Պատմագրաց մերոց՝ ծաղկելոց յերեքտասաներորդ դարու, էր աշակերտ Յովհաննու վարդապետի Տաւուշեցւոյ՝ Վանական մականուանելոյ, և աշակերտակից Մեծին Վարդանայ վարդապետի Բարձրբերդացւոյ։ Սորա է Պատմագիրքս այս, յորում առաջի առնէ նա զպատմութիւն Ազգիս՝ սկսեալ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ և յարքայէն Տրդատայ մինչև ցաւուրս իւր, այն է՝ մինչև ցՀեթում Ա թագաւոր մեր, կամ մինչև ցամ տեառն 1260։ Թէև ի սկզբան գործոյս համառօտիւք անցանէ զպատմութեամբ անցիցն առաջնոց, սակայն զիւրոյ ժամանակին իրս՝ իբրև ականատես նոցին՝ լիով ճառէ, մանաւանդ ի խօսելն զհարուածոցն Թաթարաց։

Վախճան Պատմաբանիս եղև յամի Տեառն 1271 ի վանս Գետկայ՝ ուր (որպէս ինքն գրէ յէջ 129) սնեալ և ուսեալ էր»։

Ապա զետեղված է «Յառաջաբան հեղինակին», էջ ա-ե։

Սրան հաջորդում է Պատմության բուն բնագիրը հետ. խորագրով՝ «Համառօտ Պատմութիւն և ցոյցն անուանց սրբոյն Գրիգորի և որք յետ նորա յաջորդեցին զաթոռ նորա», սկիզբն՝ «Ամենայն գովեստից», վերջ՝ «փոխիւք խորագոմիւք։ Եւ Քրիստոսի յուսոյն մերոյ փառք անլռելի ձայնիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն» (էջ 7—240)։

Ցանկ գլխոց, էջ 241—244։

Գլուխները համարակալում չունեն. չունի նաև «Ցանկ յատուկ անուանց»։

բ. «Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ Համառօտ Պատմութիւն ի սրբոյն Գրիգորէ ցաւուրս իւր լուսաբանեալ։—Պատմագիրք հայոց. Բ. Կիրակոս Գանձակեցի։—Վենետիկ ի տպարանի Մխիթարեանց, 1865»։

Ունի բավականաչափ ընդարձակ «Յառաջաբան», էջ Ա—Ժ։ Ապա հաջորդում է Պատմության բնագիրը հետ. խորագրով՝ «Համառօտ պատմութիւնք ժամանակաց ի սրբոյն Գրիգորէ մինչև ի յետին աւուրս յիշատակեալ», ընդ որում նախ՝ տրվում է «հեղինակի յառաջաբանը»—«Կիրք» և այլն մինչև «անուն Կիրակոսի» (էջ 1—5), ապա «Համառօտ պատմութիւն և ցոյցք անուան սրբոյն Գրիգորի և որք յետ նորա յաջորդեցին»,—սկիզբն՝ «Ամենայն գովեստից»... վերջ՝ «ցանկում խորագոմիւք» (էջ 6—234)։

Տպագիրս ունի «Յաւելուած»՝ «Միւս եւս պատմութիւն սքանչելի վարդապետին Մխիթարայ», էջ 235—243, «Ցանկ գլխոց», էջ 245—247, «Ցանկ անուանց», էջ 249—265։

Պատմության բնագիրը երեք ձեռագրի (Ա, Բ, Գ) բաղդատությամբ և Մոսկովյան տպագրի համեմատությամբ հրատարակության համար պատրաստել է, «Յառաջաբանը» գրել և գիրքը ծանոթագրել վարդապետ Ղ. Ալիշանը։

Պատմության բնագրից «զոր առէ եկեղեցի Հայաստանեայց ուղղափա-

ութեամբ» խոսքից հետո հանված է Ներսես Շնորհալու գրչին պատկանող հանրածանոթ «Գիր հաւատոյ դաւանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ» հետևյալ ծանոթագրությամբ. «Քանզի բազում անգամ տպագրութեամբ հրատարակեալ է և ծանօթ է՝ զանց առնեմք աստանօր զգրով դաւանութեանս, որ և արտաքոյ կարգի պատմութեանն. և ումի վերնագիր զայս. «Գիր հաւատոյ» և այլն (Վենետ. տպ. էջ 69, ծանոթ.)։

Բնագրից հասկանալի պատճառով հանված են և բազմակետերով նշված Մահմեդին և մահմեդականության մասին եղած ոչ դրական ու վայելուչ բոլոր ածականներն ու արտահայտությունները։

Հմուտ և իմաստալի ծանոթագրությունների, նկատողությունների և ճըշտումների կողքին առկա են նեղմիտ ոչ-գիտական դավանաբանական դիտողություններ, բացականչական նշաններ։

գ. Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ: Լուկասյան մատենադարան. Գ.—Թիֆլիս, *1909, էլեքտրաշարժ տպարան օր. Ն. Աղանեանցի։*

*էջ Դ. կա հետևյալը՝ «Կիրակոս Գանձակեցու այս տպագրությունն արտատպված է Ոսկան Տեր-Հովհաննիսյանց Երևանցու 1858 թվին Մոսկվայում հրատարակած օրինակից»։*

«ՁԵԿՈՒՑՈՒՄՆ առաջին հրատարակչի», *էջ I—II, Մոսկովյան հրատարակչի «Ձեկուցման» աշխարհաբար թարգմանությունն է. չի թարգմանված փակագծի մեջ եղած՝ «որպէս ինքն գրէ յէջ 129»։*

*«Ձեկուցմանը» հաջորդում է* «Յառաջաբան հեղինակին», *որ ըստ տնասկզբի գրերի՝ հղում է* «Կիւրակոս». *սկիզբ՝ «Կիրք» (էջ III), վերջ՝ «Կիւրակոսի» (էջ IX)։*

*Ապա հաջորդում է Պատմության բուն բնագիրը հետ. խորագրով՝* «Համառօտ Պատմութիւն ի ցոյցք անուանց սրբոյն Գրիգորի եւ որք յետ նորա յաջորդեցին զաթոռ նորա» *(սկիզբ՝ «Ամենայն գովեստից», վերջ՝ «փոխիւք խորագունիւք։ Եւ Քրիստոսի յաւսոյն մերոյ փառք անլռելի ձայնիւ այժմ և միշտ և յափտեանս յաւիտենից. ամէն» (էջ 1,2—սխալ համարակալմամբ՝ 17—382), «Ցանկ գլխոց», 383—386, «Ցանկ յատուկ անուանց», 387—420։—Անփույթ, բազմավրիպակ հրատարակություն. տե՛ս նաև Ն. Ակինյանի գրախոսությունը՝ «Հանդէս Ամսօրեայ», 1910, էջ 253—254։*

## *Բ. ՁԵՌԱԳԻՐՆԵՐ*

*Անցնենք Կիրակոս Գանձակեցու Հայոց Պատմության Պետական Մատենադարանում պահվող գրչագիր օրինակների համառոտ նկարագրության. ընդ որում այստեղ նշելու ենք միայն այն, ինչ վերաբերում է մեր հեղինակի երկին։ Ձեռագրերը թվարկում ենք ըստ Մատենադարանի ցուցակի համարների՝ նշելով դրանք նաև լատինական այբուբենի տառերով* (a—z), *իսկ վենետիկյան տպագրի հիմք հանդիսացող գրչագիր օրինակները հայերեն մեծատառերով՝ ԱԲԳ, ինչպես նշված է Վենետիկյան հրատարակության մեջ։*

*Մատենադարանում պահվում է ընդամենը 30 ձեռագիր, որոնցից երկուսը պատառիկ։ Դրանք ըստ ընդօրինակության ժամանակաշրջանի հետևյալ պատկերն են ներկայացնում՝ ԺԶ դարից 3 ձեռագիր (մեկ ձեռագիրը ենթադրաբար),*

ժէ դ. ա. կեսից—5, ժէ դ. բ. կեսից —5, ժէ դ. ենթադրաբար —5, ժԸ դ.—8, ժԹ. դ. (1849)—1, ընդամենը 28 ձեռագիր։

Ստորև տալիս ենք դրանց համառոտ նկարագրությունը.

1. a ձեռագիր № 1518 (1670), Կ. 1628

Պատմության խորագիրն է՝ «Համառօտ պատմութիւն ժամանակաց ի սրբոյն Գրիգորէ մինչև ցյետին աւուրս: Արարեալ Կիրակոսի [րնտրեալ] վարդապետի ի մեծահռչակ ուխտն Գետկայ» (1—176ա)։

Հացունեաց խաչի պատմութիւն, 176—189ա։

Պատմութիւն սուրբ խաչին ծիծեռն, 189—191։

41. Լոնդոնի Բրիտանական թանգարանի ձեռագիրը: Or. № 5260—№ 119**.

Թերթ՝ 182—էջ 364։ Նյութ՝ հաստ թուղթ։ Կազմ՝ կաշեպատ տախտակ։ Գրություն՝ միասյուն։ Տող՝ 27։ Գիր՝ բոլորագիր։ Գրիչ՝ Սարգիս։ Ժամանակ՝ ՌՃԺ—1661 թ.։ Հիշատակագրություն՝ թերթ 171բ։

Բովանդակություն: Կիրակոս Գանձակեցու Հայոց Պատմությունը։ 3—5 էջ «Ցանկ է Պատմութե գրիս արարեալ տն Կրկս կրդկսին հայոց, համառօտ բանին շրդել»։

Խորագիրն է՝ «Համառօտ պատմութիւն ժամանակաց ի սրբոյն Գրիգորէ մինչև ցետին աւուրն բեացեալ արարեալ կրկսի բնտրեալ վրդպտի մեծահռչկ ուխտին Գետկայ» (27—171բ)։

---

* Քաղում ենք Ն. Քարամյանի Veszeichniss d. armenischen Hss. d. Königl. Bibl zu Berlin, B. I. Berlin, 1888.

** Տվյալները քաղում ենք՝ A catalogue of the Armenian manuscripts in the British museum by Frederick Cornwallis Conybeare, London, 1913, և Մեսրոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյանի Ցուցակից։

Պատմության վերջին հիշատակագրություն (171բ). «Բայց ով եղբայր այն ինչ զոր ինչ ասս վարեցաւ զպատմութիւն թաթարին» և այլն (Համտ. ձեռ.-ներ՝ ii$^1$p, Երուս. № 493 և այլն)։

Պատմությանը նախորդում են՝ Կոստանդին կաթողիկոսի «Վասն կանոնական հրամանաց», «Թուղթ» և «Սահմանք կանոնականք» (Հավանորեն՝ թերթ 6—26)։

42. Կ. Պոլիս, առ Հ. քհ. Միրյան, № 11

Նոտրագիր, 18-րդ դար. բովանդակություն՝ Պատմութիւն Կիրակոսի Գանձակեցոյ*։

43. Լենինգրադ—Ասիական թանգարան. Ms. Arm. 61.

Թերթ՝ 100։ Նյութ՝ թուղթ։ Կազմ՝ թղթի։ Գիր՝ շղագիր։ Ժամանակ՝ 19-րդ դ.։

Բովանդակություն՝ Կիրակոս Գանձակեցու Պատմությունը։ Ընդօրինակված է Վենետիկի ձեռագրից (?) և բաղդատված մի երկրորդ չհիշված ձեռագրի հետ**։

44.—Լիմ Անապատ.—№ 377—Ե. Լալայանի Ցուցակ ձեռ. Վասպուրականի, № 1353։

Թերթ՝ 122։ Մեծություն՝ 11×8։ Նյութ՝ թուղթ։ Կազմ՝ կաշեպատ տախտակ։ Գիր՝ բոլորագիր։ Տող՝ 18։ Ժամանակ՝ ԺԶ—XVI դար։

Մի գլուխ Կիրակոս Գանձակեցուց***։

45. Պետ. Մատ. № 654 պահպանակ.

Թերթ՝ 2։ Մեծություն՝ 22×18։ Նյութ՝ թուղթ։ Գրություն՝ երկսյուն։ Տող՝ 28։ Գիր՝ նոտրագիր։ Ժամանակ՝ ԺԸ—XVIII դար։

Բովանդակություն.—Պատմությունից մի հատված՝ «Վասն վախճանի մեծ վարդապետին Մխիթարայ», նաև նախորդ գլխի մի մասը։

46. Հովհ. Ջամուռճյանի ձեռագիրը

«Դյուլորիե կհիշե օրինակ մը, որ սեփականություն եղած է Հովհ. Ջամուռճյանի։ Ասկե ծագած ըլլալու է մեր (իմա՝ Վիեն. Մխիթ,—Կ. Մ.-Օ) թ. 328 ձեռագիրը»****, մինչդեռ ըստ Հ. Տաշյանի՝ «№ 124-է օրինակված ըլլալու է այս» (Համտ. աստ № 328-ը,—Կ. Մ.-Օ.)****։

Կիրակոս Գանձակեցու Պատմության քննական բնագիրը շարված վերջացած էր, երբ Մատենադարանը ստացավ պոլսահայ բանասեր Թ. Ազատյանի գրական-գիտական ժառանգության և արխիվի հետ նաև մեր Պատմագրի երկի ևս մեկ ձեռագիրը։ Մատենադարանում դա գրանցված է 9809 համարի տակ։

Քանի որ մենք ներկայումս ի վիճակի չենք օգտագործելու նորագյուտ ձեռագրի տարբեր ընթերցանությունները, հարկ ենք համարում փոքր ինչ հանգամանորեն նկարագրելու այդ ձեռագիրը, որպեսզի ընթերցողը որոշ գաղափար կազմի նաև դրա մասին։

---

* Քաղել ենք Մեսրոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյանի Ցուցակից։

** Նույն տեղից։

*** Նույն տեղից։

**** Հ. Ոսկյան, Հովհաննես Վանական և յուր դպրոցը, Վիեննա, 1922, էջ 109։

***** Հ. Տաշյան, Ցուցակ, էջ 773։

*47. Ձեռագիր № 9809։*

Թերթ՝ 32։ Մեծություն՝ *28,6×20,3։* Նյութ՝ *թուղթ։* Կազմ՝ *լեգերինապատ ստվարաթուղթ։* Գրություն՝ *միասյուն։* Տող՝ *28։* Գիր՝ *նոտրագիր։* Գրիչ, ստացող՝ *չկա։* Տեղ՝ *չկա։* Վիճակ՝ *սկզբից և վերջից թափված թերթեր։* Սկզբնագրերը վերնագրերը՝ *կարմիր թանաքով։* Ժամանակ՝ *ԺԸ վերջ—ԺԹ սկիզբ։* Հիշատակարաններ՝ *չկա։*

*Ձեռագրի պահպանված մասն սկսում է (ձեռ. էջ 13=տպ. 24₃) «...ծի թէոդոսի։ Իսկ արքայն պարսից շապուհ կացոյց»... վերջանում՝ (էջ 76=տպ. 165)՝ «ի կնութիւն կուզ սուլթանի և առին պատանդս ՚ի նմանէ ապա (ձեռագիրն ընդհատվում է)։*

*Նշենք մի երկու ընթերցված՝ տպագրից տարբեր տպ. էջ 24, ձեռ. վասպուրասիկի՝* փխ *Ասպուրակիսի, ՚որ էր որդի՝* փխ *զորդի. տպ էջ 24—25, չիք յանէլի ի գանձս քո՝ գիրք ումք հարիւր և ճառք երկոտասան հազար. էջ 25 ՚Եւ թգրն խոսրով թըրնց ամս Ե... և թագաւորեցուցանէ զվռամշապուհ», որից անմիջապէս հետո՝ իսկ սրն յօհան ոսկէբերան յուղն հարիւր գիրք զանձի և ճառս Բժ-ան ու Իսկ սրն սահակ ...կրգւ (փխ կարգաւք-կարգօք)... կանոնաւ (փխ կանոնական)։ էջ 150₉—₁₀ ՚և խնդրեաց ի նմանէ զգեղարդն. և նա եդ զնա առ թագաւորն. և կոմս գնաց ի ճանապարհն իւր. և յետ ամացս ինչ առեալ տարան զսր գեղարդն ի սուրբ էջմիածին՝։ էջ 150₁₅ ծանր զօրօք՝, 151₁₆ Լօռի քըքի՝, 154₇* ՚վասն թագաւորութեան Լեռնի որ ի կողմանս արևմտից, թէ որպէս յառաջեաց բռնացաւ՝. *155₁₃ ՚Եւ տեսին ազգն տաճկաց զքաջութիւն նորա զօղային ի նմանէ և այսպէս բռնացաւ ի վերայ ամենեցուն ՚(ձեռ. 72), և այլն։*

*Ձունի «Գիր հաւատոյ»-ն։ Ընդհանուր առմամբ մոտ է* stuvwԿ, *բայց ունի նաև ակնբախ տարբերություններ։*

*Ձեռագիրը վարժ գրչի արգասիք չէ. չի փայլում գրագիտությամբ։*

*Ճուրջ չորս տասնյակ ձեռագրերից հնագույն ընդօրինակությունը գալիս է ԺԶ դարի վերջին տասնամյակից (Պետ. Մատ. № 1518—*a *1594 թ., և № 1486—* b, *1597 թ.), այսինքն՝ ականավոր Պատմագրի մահվանից առնվազն երեք դար անց։*

*Պատմության տպագիր բնագրի և ձեռագրերի բաղդատությունը կատարելիս՝ մենք ուշի ուշով և շատ մանրակրկիտ նշել ենք և քննության առել տպագրից տարբերվող բոլոր ընթերցվածները և եկել այն եզրակացության, որ մեզ ծանոթ ձեռագրերը հնարավոր է բաժանել երկու հիմնական խմբերի՝* Մոսկովյան տպագրի խմբի—*Մ. խումբ և Վենետիկյան տպագրի խմբի—*Վ. խումբ։ *Ձեռագրերի ճնշող մեծամասնությունը պատկանում է* Մ. խմբին *(դրանք են՝* a, b, c, d, e, f, g, h, i, i¹, j, k, l, m, n, o, p, q, *թերևս մի երկու ձեռագիր այլուր). ավելի փոքրաթիվ են* Վ. խմբինը *(*s, t, u *(?)* v, w *(?), Ա, Բ, Գ)։*

*Այս խմբավորումով մենք չենք ուզում ասած լինել, որ յուրաքանչյուր խմբի մեջ մտնող ձեռագրերը պատճենահանում են մեկը մյուսին։ Իրականության մեջ այլպիսիները հազվադեպ են։ Նույնիսկ այն դեպքում, երբ հայտնի է, որ մի ձեռագիր ընդօրինակված է մի ուրիշ, մեզ ծանոթ ձեռագրից, մենք դարձյալ հանդիպում ենք առաջինից տարբեր ընթերցվածներ։ Տարբերությունն ընդհանրապես առաջ է գալիս հետևյալ պատճառներից.*

*ա. Գրիչը հաճախ մայր օրինակի սխալը սրբագրում է, կամ ընդհակառակը՝ հմտությունից զուրկ լինելով, ճիշտ գրությունը սխալ է արտագրում*

(*Հմմտ. օրին.՝ մեր* h—№ *6550-ը, որ ընդօրինակված է* f—№ *3069-ից և վերջինիս սխալները սրբագրած)։*

*բ. Ձեռագրի ընդօրինակությունը հաճախ կատարվում է թելադրության եղանակով՝ մեկը թելադրում է, մյուսը՝ գրում։ Այս դեպքում շատ բան բնականորեն կախումն ունի թելադրողի առոգանությունից և գրչի անհատական պատրաստությունից ու լսողական ընդունակությունից (հնչյունների բարբառային արտաբերություններ և այլն)։*

*գ. Մայր հանդիսացող ձեռագրի մեջ երբեմն մի ուրիշի ձեռքով կատարած սրբագրությունները գրիչը մեքենայաբար փոխանցում է իր ընդօրինակության մեջ, որով սկսում է տարբերվել իր «մայր» օրինակից և այսպես շարունակաբար։*

*Չնայած յուրաքանչյուր խմբի մեջ եղած մանր-մունր տարբերություններին, բնագրական տարբեր ընթերցվածներին, ամբողջությամբ մեր վերը հիշված խմբավորումը մնում է անխախտ։ Բերենք մի երկու օրինակ մեր այդ տեսակետը հիմնավորելու համար։*

*Կիրակոսի Պատմության խորագիրն է՝*

*Ըստ* Ա. խմբի՝ «Համառօտ պատմութիւն ժամանակաց... մինչև ցյետին աւուրս (աւուրն) բևացեալ. արարեալ»... (*Այսպես ունին՝* a, b, c, d, e, f g, h, i, i[1], j, k, l, m, n, o, p, q u (*?*). *Լոնդ.* Or. № *5260—119—«մինչև ց[յ]ետին (հմմտ.* k) *աւուրն թևացեալ. արարեալ»... իսկ* u—№ *3518, «մինչև յետինս թւացեալ. արրլ»...)։*

*Ըստ* Վ. խմբի՝ «Համառօտ պատմութիւն ժամանակաց... մինչև յետին աւուրս թուացեալ (բըւացեալ, բւացեալ). ասացեալ»... (*ձեռ-ներ՝* s, t, u, v, *Ա. Բ. Գ.*)։

*Վիեննայի Մխիթարյանների ձեռագրերը՝* № *124 (նաև սրանից ընդօրինակած Փարիզի* № *227),* № *328 ունին* Մ. և Վ. խմբերից *տարբեր խորագիր, այն է՝* «Համառօտ պատմութիւն ժամանակաց... մինչև յետինս բևացեալ. արարեալ»... *Ըստ Հ. Ոսկյանի, այս ձեռագրերը, ինչպես և մեզ անծանոթ* № *574-ը, նաև ընթերցվածներով տարբերվում են վերոհիշյալ խմբերից։ Թերևս այս ձեռագրերը և սրանցից ծագած այլ ձեռագրեր կազմում են մի երրո՞րդ խումբ։*

*Ձեռագրերի հիմնական խմբերը բաժանվում են այլևայլ ենթախմբերի, որոնց այս կամ այն ընթերցվածը տարբերվում է նույն խմբի մյուս ձեռագրերի ընթերցվածից, օրինակ,* b c d g j n o q t u wՎ *ունեն* վասնզիանեան, a e f h k m—վասնզիարեան (fh—վասնզիւրան) փխ *Մ—Թ,* iip[1] *և այլն*—վասնեան. *կամ* bcdgj—խոյերանացի, abdefghnouw—նետրապօլիտ (d *նետրապալիտ)* փխ *մետրապօլիտ,* abcdegjnoq *ազազանդեղոս,* abcdegijkmnoptuvՎ *անզառագիւղ և այլն։*

*Ենթախմբերի ձեռագրերի մեջ կան այնպիսի փոքրիկ փնջեր, երբ մի երկու ձեռագիր՝ իրար շատ նման լինելով (հաճախ բառը կիսատ ընդօրինակված), տարբերվում են նույն ենթախմբի կամ խմբի մյուս ձեռագրերից, օրինակ՝* hijmp (*Մ—Թ, Վ*) *հիւրիոն,* bcd *հիւրւոն,* ii[1]jqp *հիւրոն,* ii[1]jop *հիրիոն,* egn *հիւրոն,* bcdegnoq *հիրոն, կամ* cd *կաղանկանտւացի, անմարմնականս* փխ *անմահականս, յաւնաւք, կարգաւք, արտաւսր (բայց սղօթիւքն), ի տարաւնոյ ի գեղջէն աշտիշատոյ, մանկտիւք,* c *և* d *մեջ բաց թողած տեղեր, օրինակ՝ էջ* $45_{14}$ *—46, 'հաղորդեցի .. (բաց է) եկեղեցեաւ', կամ՝ 'ուխ... ամուսնութե', կամ 'այլ ին...ական իրօք' և այլն։ Այս ձեռագրերին նման են նաև* eg

(օր.՝ արխաբազացուլ, պատօստատորին, գիորդեալ), fh (օր.՝ արխապագացուլ, պատուսաւորին, գեորգեալ), կամ $ii^{1}j$ էջ $67_{7-9}$ չիք 'առաւել սիրէր... որ նոցա առաջնորդք են', էջ $75_{11}$ չիք 'և յետ նորա տէր յովսէփ... 'սա էր յարագածոտանէ', էջ $80_{11-15}$ չիք՝ 'բարեպաշտօն... սատուձալ' և այլն։

Բերենք մի երկու օրինակ Վ-խմբից. stv էջ $6_{6}$ 'ազգիս Հայոց' փխ Հայոց աշխարհիս, էջ $7_{7-8}$ stuvw Կաղկանտուացի, stuvw ԱԲԳ էջ $10_{15}$ չիք 'զաթոռ նորա'. էջ 11 stv ԱԲԳ չիք 'և ամենայն... օրէնսդրութեամբ'. էջ $11_{9}$ աթոռ փխ պատիւ. էջ $30_{7-11}$ stv ԱԲԳ՝ 'աշակերտաց և անտի գնալ ի Վիրս՝ առնէ և նոցա գիրս՝ թողեալ և նոցա վարդապետս՝ դառնալ ինքն ի Հայս և գտեալ զմեծ Իսահակ (ԱԲԳ զմեծն Սահակ) թարգմանութեան պարապեալ'. էջ $23_{10}$ stv ԱԲԳ Մանուէլ և Մամիկոն փխ Մանուէլ Մամիկոնեան. էջ $116_{13}$ stv ԱԲԳ յիմարութեան փխ իմաստութեան և այլն։

Այսպես խմբավորվում են կամ փնչեր կազմում նաև մյուս ձեռագիրները։ Այդ խմբավորումները նշված են էջատակի ծանոթագրությունների մեջ։

Պատմության քննական-համեմատական բնագիրը կազմելիս՝ մենք հիմք ենք ընդունել Մոսկովյան-Թիֆլիսյան տպագրությունը, ելնելով հետևյալից՝

ա. Մեզ մոտ ամենատարածված տպագիրն այս է։

բ. Ձեռագրերի մեծագույն մասը պատկանում է այս խմբին։

գ. Այս խմբի ընթերցվածներն ավելի բնափր են ու ավելի հնատիպ, ընդ որում ձեռագրերի մի մասը՝ հնագույնները և սրանցից ընդօրինակվածները, պահպանել են աւ փխ օ, եւ փխ իւ, եր, եին փխ էր, էին, երբեմն՝ այդ փխ այլ։ Գրության այս ձևերի առկայությունը ԺԳ—ԺԷ դդ. ընդօրինակություններում մեջ մեզ իրավունք է տալիս ենթադրելու, որ ինքը՝ Կիրակոս Պատմագիրը հենց այսպես է գրել իր Պատմությունը, որ ԺԳ դ. դեռևս շատ տարածված է եղել ավանդական ուղղագրությունը։ Սրա ապացույցներից մեկն էլ այն է, որ ինքը՝ պատմագիրն իր անունը Կիւրակոս է հեգում Պատմության Առաջաբանի մեջ։

Քննական բնագրի հիմք չդարձրինք Վենետիկյան տպագիրը հետևյալ պատճառներով.

ա. Ղ. Ալիշանը երբեմն «սրբագրել է» բնագրի այս կամ այն բառը, դարձվածքը՝ ելնելով ոչ թե ձեռագրական տվյալներից, այլ իր անուրանալի գրաբարագիտությունից («Հարկ համարեցաք... ուրեք ուղղել զյայտնի վրիպակս՝ որպէս անկն էր լինել»)։

բ. Վենետիկյան տպագիրը հասկանալի պատճառներով ունի բազմաթիվ կրճատումներ, հապավումներ, մանավանդ այն հատվածներում, որտեղ խոսվում է Մահմեդի և մահմեդականության մասին, կամ քննադատվում է քաղկեդոնական դավանությունը (հարցական, բացականչական նշաններ) և այլն։

Քննական-համեմատական բնագիրը կազմելիս՝ առաջնորդվել ենք «Պատմագիրք Հայոց»-ի խմբագրական մարմնի (Գ. Տեր-Մկրտչյան, Ստ. Մալխասյան, Մ. Աբեղյան, Ս. Կանայեանց) մշակած բնագրաբանական սկզբունքներով՝ բնափր ընթերցվածները զետեղել ենք բնագրի մեջ, իսկ տպագրինը և մյուս ձեռագրերինը համապատասխանորեն բերել էջատակ։

Հակառակ մեր սպասումներին Պատմության կազմածս բնագրի մեջ երևան չեկան նոր ընդարձակ հատվածներ և գլուխներ։ Պատմությունը վերջանում է «փոսիւք խորագունիւք», բառերով, այսինքն՝ անավարտ տպավորություն է թողնում։ Այդպես էլ հասկացել են մի շարք գրիչներ, մի քանի թերթ մաքուր թուղթ

են թողել և խնդրել, որ լավագույն օրինակի հանդիպողները լրացնեն կարծեցյալ բացը։

Պատմության քննական-համեմատական բնագրում վերականգնված են բազմաթիվ փոքրիկ հատվածներ, նախադասություններ, դարձվածքներ, անձնանուններ, որոնք առկա չեն տպագիրների մեջ, կամ մեկում կան, մյուսում չկան։ Այդպիսի սրբագրություններն ու լրացումները միշտ վերականգնում են նախնական բնագիրը, իմաստավորում իրական-պատմական միջադեպը, կամ տրամաբանական կապ հաստատում շարադրանքի մեջ։

Ճշտված են ականավոր մոնղոլագետ պրոֆ. Գ. Դ. Սանժեևի սիրալիր օգնությամբ նաև մոնղոլական բառերն ու տերմինները։

Տպագիրների ու ձեռագրերի բաղդատությունը կատարելիս՝ ինձ աշխատակցել է Պետ. Համալսարանի հայ հին գրականության ասպիրանտ ընկ. Վ. Գևորգյանը, որն ընթերցել է բաղդատվող ձեռագիրը և իր բարեխիղճ ու ջանադիր աշխատանքով նպաստել երևան բերելու կարևոր ընթերցվածը, ըստ այնմ և ընդհանուր գործի հաջողությանը։

Կ. ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

Երևան, 1957 թ.

## ԿԻՐԱԿՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱԾՎԱԾ ՏԱՌԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՑԱՆԿ

1. Ձեռ. a № 1518 (1670), թվ. ՌԽԳ — 1594 — Ստեփաննոս
2. » b № 1486 (1703), թվ. ՌԽԶ — 1597 — Ղազար
3. » c № 6538 (Լազ. 84, թվ ՌԿԵ — 1616 — Հակոբ երեց
4. » d № 3519 (633), թվ. ՌՂԶ — 1647, — Խաչիկ Կաֆայեցի
5. » e № 1901 (1704), թվ. ՌՃԿԹ — 1720. — Թէոդոս
6. » f № 3069 (Գ. 240), թվ. ՌՃԻԱ — 1672, — մի քանի հոգի
7. » g № 2617 թվ. ԺԷ. դր. — անհայտ
8. » h № 6550 (Լազ. 200—Խալ. 246 Մկ. Էմինի սեփական). 1849 թ., — անհայտ
9. » i № 1768 (1705, կար. 1663), ԺԸ դ., Հովսեփ աբեղա Սարգիս
10. » $i^1$ № 1769 (1706). 1664 թ. Տփղիս, Հակոբ քահանա
11. » j № 5587 (898, 285), ՌԿԶ — 1617, Զաքիկ Պողոսի
12. » k № 4684 (Եղյանի), ՌՃԺԷ — 1668, Աբրահամ
13. » l № 2748 (1380), ՌՀԳ — 1624, տարբեր.
14. » m № 1482 (1611, կ 1619), ՌՃԻԵ - ՌՃԻԷ — 1676—78, Գրիգոր
15. » n № 2764 (242) ԺԷ դ., Իգնատիոս
16. » o № 9277, ՌՄԵ — 1756, Բաղդասար երեց
17. » p № 3071 (Գ. 244) Ռ և Ճ — 1651, ՌՃԶ — 1657, Զաքարե—Գրիգոր
18. » q 6575 (76), ԺԸ դ., անհայտ
19. » r № 2939 (1073), 1779—1782, 1796, Մարտիրոս
20. » s № 1899 (1697), ՌՃԻԵ — 1676, Տեր Պողոս
21. » t № 3158 (1013), ԺԷ—ԺԸ դդ., անհայտ
22. » u № 3518 (625), ԺԸ դ., անհայտ
23. » v № 8373 (354), ՌՀԴ – 1625—8, Հովհան դպիր, Գալուստ
24. » w № 4067, ԺԶ դ., անհայտ
25. » x № 2561 (Գ 633), ՌՃԺԳ — 1664, անհայտ
26. » y № 2646, ՌՄԺ — 1761, Ղունկիանոս
27. » z № 1781 (1749), 1756, Գրիգոր աբեղա
28. Մոսկովյան տպագրի հիմքը (անհայտ).
29. Ա }
30. Բ } Վենետիկ, ԺԷ դ.
31. Գ }
32. Վիեննա Մխ. № 124, 1603 թ., գրիչ — Գրիգոր Կամախեցի
33. » № 328, ԺԸ ԺԹ (հավանորեն № 124 ընդօրինակած)
34. » № 574, 1601 թ.
35. Երուսաղեմի ձեռ. № 493, 1778—1780 թ., Եղիա քահանա
36. Երուսաղեմի » № 819, ԺԷ դ.
37. Փարիզի » № 226, 1851 թ. Ed. Dulaurier
38. Փարիզի » № 227, 1851 թ. Ed. Dulaurier
39. Փարիզի » № 228, XIX դ.
40. Բեռլինի » № 52 Ms. or. Quart 607
41. Լոնդոնի » Or. № 5260—N 119, 1661 թ. Սարգիս
42. Կ.-Պոլսի » (Հ. Մկրյանի) № 11, XVIII դ.
43. Լենինգրադի » Ms. Arm. № 61, XIX դ.
44. Լիմանապատի » № 377, ըստ ԼՑՎ № 1353, XVI դ.
45. Պետ. Մատենդ. ձեռ. 654 (պահպանակ), XVIII դ.
46. Հովհ. Զամուռյանի
47. Պետ. Մատենդ. (Թ. Ազատյանի) № 9809, XVIII դ. վերջ.-XIX դ. սկիզբ.

# ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կազմեց՝ Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

## ԲՆԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*1. Մոսկվա, 1858 թ.*

Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ: Ի լոյս ընծայեաց Ոսկան Տէր-Գէորգեան Յովհաննիսեանց Երեւանեցի: Ի Մոսկուա, ի տպարանի Արեւելեան Լեզուաց Ճեմարանի Տեարց Լազարեանց, 1858

*244 էջ (19 × 12.5 սմ.)։ Սկզբում կա «Ձեկուցումն»՝ հրատարակության առթիվ (չհամարակալված թերթ)։ Պատմության բնագիրը, որի մուտքն է կազմում «Յառաջաբան հեղինակին»-ը, գրավում է 1—240 էջերը։ Վերջում՝ «Ցանկ գլխոց», էջ 241—244։*

*Այս հրատարակությունը զուրկ է քննական բնույթից։ Հրատարակիչը չի խոսում նույնիսկ իր օգտագործած ձեռագրի մասին։ «Սոյն հրատարակութեան երրորդ գլուխը Ն. Շնորհալւոյ «Գիր հաւատոյ խոստովանութեանն» է, որ կը պակսի յաջորդ հրատարակութեան մէջ, ինչպէս այս հրատարակութեան մէջ ալ կը պակսին յաջորդին ԺԱ գլուխը և Յաւելուածը»[1] (Ա. Ղազիկյան)։*

*2. Վենետիկ, 1865 թ.*

Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ համառօտ պատմութիւն ի սրբոյն Գրիգորէ ցաւուրս իւր լուսաբանեալ: Վենետիկ, ի տպարանի Մխիթարեանց, 1865: ( = Պատմագիրք Հայոց: Բ: Կիրակոս վ. Գանձակեցի):

*Ժ + 265 էջ (22×14 սմ.)։ Սկզբում կա Ղ. Ալիշանի անստորագիր ընդարձակ «Յառաջաբան»-ը՝ հրատարակության առթիվ, էջ Ա — Ժ։ Պատմության բնագիրը, որ նախորդ հրատարակության «Յառաջաբան հեղինակին» բառերի փոխարեն կրում է «Համառօտ պատմութիւնք ժամանակաց ի սրբոյն Գրիգորէ մինչև ի յետին աւուրս թուացեալ» խորագիրը, գրավում է 1—234 էջերը։ Որպես հավելված՝ «Միւս ևս պատմութիւն սքանչելի վարդապետին Մխիթարայ» երկբայելի բնագիրը, էջ 237—243, որի հեղինակը հիշատակարանում իրեն անվանում է «Կիրակոս Պատմագիր»։ Վերջում՝ «Ցանկ գլխոց», էջ 245—247; և «Ցանկ անուանց», էջ 249—265։*

*«Յառաջաբան»-ում տեղեկություններ են տրվում տպագրության համար օգտագործված օրինակների մասին. «Արժան է աստանօր յաւելուլ յիրաւունս Կիրակոսի և զհանգամանս գաղափարաց գրոց պատմութեանն ի մեր ձեռս հա-*

---

[1] *Հիշյալ հրատարակության մեջ չի պակասում ԺԱ գլուխը, այլ պարզապես ցանկից դուրս է մնացել։ Հ.Ս.Ա.։*

*անլոց. որք երեք միայն էին, և ոչ մին ի նոցանէ հին կամ զգաստ գրչութիւն, որպիսիք էին առ մեզ օրինակքն Վարդանայ պատմութեանն, այլ սոքա նորագիրք ժէ դարու բազմասխալք և թերաբանք. վասն որոյ հարկ համարեցաք ուրեք թողուլ որպէս և էրն և ուրեք ուղղել զկայանն վրիպակս՝ որպէս անկն էր լինել, և զթերի բառն յաւելուլ նոտրացի դրոշմելով, կամ ի փակագծի ամփոփելով զթերին՝ զոր առաք ի Դ օրինակէ. և է սա անսեթևեթ տպագիրն փոքրադիր յՈսկանայ Տէր Գրիգորեան (փխ Տէր Գէորգեան — Հ.Ս.Ա.) Յովհաննիսեանց, ընծայեալ ի լոյս յամի 1858 ի Մոսկուա առանց ինչ բնաւ ծանօթութեան զսկզբնագիր գրոցն. որով՝ թէպէտ և բազում ուրեք ընտիր քան զմերսն երևեցաւ նորա օրինակն, այլ ոչ կարացաք համօրէն վստահ լինել, ոչ գիտելով զչափ հաւատարմութեանն կամ զուղղագրութեան զոր արժանն իցէ համարեալ վարել յիւրում տպագրին. վասն որոյ և ուրեք ի ստորև ի լուսանցս գրոցս նշանակեցաք զտարաձայնութիւն սորա ի մերոցս, որպէս և զմերոց օրինակաց ի նորայոյն, կամ զսխալ սոցա» և այլն։*

*Սույն հրատարակության մասին հաղորդում՝ «Կիրակոս պատմիչ», Բազմավէպ, 1864, էջ 349—350։*

*3. Թիֆլիս, 1909 թ.*

Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ: Թիֆլիս, Էլեքտրաշարժ տպարան օր. Ն. Աղանեանցի, 1909: ( = Ղուկասյան մատենադարան. Գ.):

IX + *1—2 + 17—420 էջ (20×13·5 սմ.), անկանոն համարակալմամբ։ Գրքի շապկի վրա տպագրության տարեթիվը «1910» է։ Արտատպված է 1858 թվականի Մոսկվայի հրատարակությունից։ Սկզբում կա «Ձեկուցումն առաջին հրատարակչի»՝ Ոսկան Հովհաննիսյանցի, էջ* I—II*։ Պատմության բնագիրը, սկսվելով «Յառաջաբան հեղինակին» խորագրով, գրավում է* III—IX *և 1—382 էջերը։ Վերջում՝ «Ցանկ գլխոց», էջ 383—386, և «Ցանկ յատուկ անուանց», էջ 387—420։*

*ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. Ն. Ակինյան,* Հանդէս Ամսօրեայ, *1910, էջ 253—254։*

◊*Մամուլում 1899 թվականին տրված տեղեկությունների համաձայն, Կիր. Գանձակեցու Պատմության մի նոր հրատարակություն էր պատրաստում հայտնի բանասեր Նորայր Բյուզանդացին, ինչպես և, նրանից անկախաբար, Էջմիածնի միաբան Սահակ Տեր-Միքայելյանը* (Լումայ, *1899, գիրք Ա, էջ 292)։*

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամբողջական թարգմանություններ.

1. Histoire d'Arménie, par le vartabied Kiracos de Gantzac, *հանեյալ հրատարակության մեջ.* „Deux historiens arméniens... traduits par M. Brosset", 1-re livraison, Saint-Pétersbourg, 1870, p. 1—194.

*Հրատարակության Հավելվածում (էջ 195—205) Բրոսեն տվել է Կիրակոսի պատմության 6 հատվածների լատիներեն թարգմանությունը՝ կատարված Պետերմանի կողմից, հատվածներ, որոնց 5-ը բաց է թողնված ֆրանսերեն վերոհիշյալ թարգմանության մեջ։ Թարգմանչի նախաբանը լույս է տեսել հաջորդ պրակում* (2-e livraison, Saint-Pétersbourg, 1871, p. I—XXIV: „Notice sur Kirakos et sur Oukhtanès").

2. Киракос Гандзакеци. История [Армении]. Перевод с древнеармянского Т. Тер-Григорьяна. Отв. редактор проф. А. Г. Тер-Матевосян. (Для служебного пользования). Издательство АН Азербайджанской ССР, Баку, 1946. (Академия наук Азербайджанской ССР. Институт истории им. А. Бакиханова).

*1—302 էջ։ Թարգմանչի առաջաբանով և ծանոթագրություններով։*

Քաղվածներ.

1. Aperçu des entreprises des Mongols en Géorgie et en Arménie dans le XIII-e siècle, par M. Klaproth. *Nouveau Journal Asiatique*, t. XII, 1833, p. 273 - 289.

2. Extrait de Kirakos, auteur arménien du XIII-e siècle, relatif principalement au règne de Thamar et de ses successeurs, *հետևյալ հրատարակության մեջ.* M. Brosset, „Additions et éclaircissements à l'Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'en 1469 de J.—C.", Saint-Pétersbourg, 1851, p. 412—437.

3. Les Mongols d'après les historiens arméniens. Fragments traduits sur les textes originaux par M. Ed. Dulaurier. Extrait de l'historien Guiragos. *Journal Asiatique*, 5-e série, t. XI, 1858, p. 192—255, 426—473 et 481—508. *Թարգմանչի նախաբանով։*

*ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ. «Կիրակոս պատմիչ և պարոն Տիւլորիէ», Երևակ, Կ. Պոլիս, 1859, հտ. Ե, էջ 358—365։*

4. [Extraits de Guiragos de Kantzag] *հետևյալ հրատարակության մեջ.* Ed. Dulaurier, „Recherches sur la chronologie arménienne technique et historique", Paris, Imprimerie Impériale, 1859, p. 205, 220, 229—230, 267—268, 280, 319—320, 326, 330—332, 334, 335—338 et 348—349.

5. Extrait de l'Histoire d'Arménie de Guiragos de Kantzag [traduit par Ed. Dulaurier], *հետևյալ հրատարակության մեջ.* „Recueil des historiens des Croisades, publié par les soins de l'Académie des Inscriptions et Belles-lettres. Documents arméniens", t. I, Paris, Imprimerie Impériale, 1869, p. 413—430. *Թարգմանչի նախաբանով։*

6. The journey of Haithon, king of Little Armenia, to Mongolia and Back, a. d 1254—1255, *հետևյալ հրատարակության մեջ.* Emil Bretschneider, „Mediaeval researches from Eastern Asiatic sources. Fragments towards the knowledge of the geography and history of Central and Western Asia from the 13th to the 17th century", vol. I, London, 1910, p. 164—172.

7. Путешествие Армянского царя Гетума к Бату (Батыю) и к Мангу-Хану, в лето армянского счисления 703 и 704. *Сибирский Вестник*, С.-Петербург, 1822, часть 19, стр. 69—84. *Թարգմանիչն է* Д. Б. Аргутинский-Долгорукий.

8. Краткой обзор писателя XIII века Киракоса Гандзакеци о монголах (с переводом нескольких глав его Истории). *Русское Слово*, 1860, № 6, отд. II, стр. 108—124.

9. История монголов по армянским источникам. Выпуск второй, заключающий в себе извлечения из Истории Киракоса Гандзакеци. Перевод и объяснения К. П. Патканова. С.-Петербург, 1874. *Թարգմանչի նախաբանով։*

## ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

*(Կիրակոս Գանձակեցու մասին)*

1. *«Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ», Երուսաղեմ, 1915, էջ 304։*

2. *«Դաւթի բանասիրի Բաղիշեցւոյ ծաղկաքաղ արարեալ ի բազում պատմագրաց» և այլն, հետևյալ հրատարակության մեջ. Վ. Ա. Հակոբյան, «Մանր ժամանակագրություններ* XIII—XVIII *դդ.», հտ. Բ, Երևան, 1956, էջ 344։*

3. *«Պատմութիւն կամ Յիշատակ ինչ ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից, համառօտագրեալ ի սրբազնակատար կաթուղիկոսէն Աղուանից ի տէր Եսայեայ Հասան Ջալալեանց» և այլն, Շուշի, 1839, էջ 8։*

4. *«Զաքարեայ Սարկաւագի պատմագրութիւն», հտ. Բ, Վաղարշապատ 1870, էջ 55—56։ Հտ. Գ, Վաղարշապատ, 1870, էջ 3, 6 և 11։*

5. *«Մաղաքիա Աբեղայի (իմա՛ Գրիգոր Ականցի, Հ.Ա.Ա.) պատմութիւն վասն ազգին Նետողաց», Պետերբուրգ, 1870, էջ 12 և 52։— «Պատմութիւն Թաթարաց Վարդանայ պատմչի, հանեալ ի ձեռագիր օրինակաց Թանգարանի Սրբոց Յակովբեանց», Երուսաղեմ, 1870, էջ 22։*

6. *«Մխիթարայ Այրիվանեցւոյ պատմութիւն ժամանակագրական», Պետերբուրգ, 1867, էջ 37։*

7. *«Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1862, էջ 146—147։ —«Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 192։*

8. *«Վարդան վ. պատմիչ առ Կիրակոս վ. պատմիչ ուսումնակից իւր», հետևյալ հրատարակության մեջ. Ղ. Ալիշան, «Հայապատում», Վենետիկ, 1901, մասն Բ, էջ 470—471։*

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Աբեղյան Ման.**—*«Հայոց հին գրականության պատմություն», գիրք Բ, Երևան, 1946, էջ 192—199։*

**Աբրահամյան Ա. Գ.**—*«Դավիթ Բաղիշեցու տարեգրությունը և նրա արժեքը հայ մատենագրության համար»,* Էջմիածին *1946, № 11—12, էջ 39։*

*Խոսում է Կիր. Գանձակեցու մասին՝ որպես Դավիթ Բաղիշեցու ժամանակագրության աղբյուրի։*

**Ալթունյան Գ.**— *«Մոնղոլները և նրանց արշավանքները ԺԳ. դարում», Վաղարշապատ, 1913, էջ 86—87։*

**Ալիշան Ղև.**— *«Հայապատում», Վենետիկ, 1901, մասն Ա, էջ 106—108։*

**Ակինյան Ն.**— *«Մօրիկ կայսեր հօր խրատը»,* Հանդես Ամսօրեայ, *1930, էջ 364—366։*

*Կիր. Գանձակեցու մի հատվածի մասին է, տպ. Վենետիկ 1865, էջ 23 (ըստ ներկա հրատարակության՝ էջ 49—50)։*

**Աճառյան Հր.**— *«Մի քանի սրբագրութիւններ հայ մատենագիրներու մէջ»,* Արարատ, *1913, էջ 1145։*

**Աճառյան Հր.**— *«Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ», Վիեննա, 1913, էջ 73—83։*

*Նույնն է և հետևյալը.*

**Աճառյան Հր.**— *«Հայերէն նոր բառեր Կիրակոս Գանձակեցւոյն մէջ (տպ. Վենետիկ, 1865)»*, Բազմավէպ, *1914, էջ 301—304։*

**Աճառյան Հր.**— *«Ձեռագրական սրբագրութիւններ հայ մատենագիրների մէջ» (ապակետիպ), Երևան, 1926, էջ 56—57։*

**Աճառյան Հր.**— *«Հայոց անձնանունների բառարան», հտ. Բ, Երևան, 1944, էջ 625—626՝ § 39։*

**Այտնյանց Գր.**— *«Գայթակղիմ»*, Բազմավէպ, *1914, էջ 257—258։*

**Առաքելյան Աշ.**— *«Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն (I դ. մ. թ. ա.—XIV դ.)», Երևան, 1959, էջ 470—472։*

**Դուրյան Եղ.**— *«Պատմութիւն հայ մատենագրութեան, ի վաղ ժամանակաց մինչև մեր օրերն», Կ. Պոլիս, 1885, էջ 64—65։*

**Դուրյան Եղ.**— *«Պատմութիւն հայ մատենագրութեան», Երուսաղեմ, 1933, էջ 237—238։*

**Զամինյան Աբր.**— *«Հայ գրականութեան պատմութիւն», մասն Ա, Նոր-Նախիջևան, 1914, էջ 203—204։*

**Զարբհանալյան Գար.**— *«Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ—ԺԳ դար.)», Բ տպ., Վենետիկ, 1897, 747—751։*

**Թորոսյան Հ.** (Thorossian H.)— „Histoire de la littérature arménienne, des origines jusqu'à nos jours“, Paris, 1951, p. 171.

**Հակոբյան Վ. Ա.** *(հրատ.)— «Մանր ժամանակագրություններ* XIII—XVIII *դդ.», հտ. Բ, Երևան, 1956, էջ 291—292։*

*Մատնացույց է արվում Կիր. Գանձակեցին՝ որպես աղբյուր Դավիթ Բաղիշեցու ժամանակագրության։*

**Ղազիկյան Արս.**— *«Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կեանքի», հտ. Ա, Վենետիկ, 1909, էջ 1293—1304։*

**Մանանդյան Հ. Հ.**— *«Հայաստանի պատմութիւնը թուրք-թաթարական արշաւանքների շրջանում» (վիմատիպ), Երևան, 1922, էջ 106։*

**Մանանդյան Հ. Հ.**— *«Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հտ. Գ, Երևան, 1952, էջ 123—125 և այլն։*

**Մելիքսեթ-Բեկ Լ.** (მელიქსეთ-ბეგი ლ.)—„ძველი სომხური ლიტერატურის ისტორია (სახელმძღვანელო უმაღლესი სკოლისათვის)“, თბილისი, 1941.

*[«Հայկական հին գրականության պատմություն», Թբիլիսի, 1941]։*

**Նազարյանց Ստ.** (Назарянц Ст.)— „Беглый взгляд на историю гайканской литературы до конца XIII столетия“, Казань, 1844, стр. 45.

**Նոյման Կ. Ֆ.** (Neumann C. F.)— „Versuch einer Geschichte der armenischen Literatur“, Leipzig, 1836, S. 189.

**Շահնազարյանց Աս.**—*«Զաքարեան (Երկայնաբազուկ) տոհմի ծագումը», հետեւյալ հրատարակության մեջ. «Շողակաթ, Ս. Էջմիածնի հայագիտական ժողովածու», Վաղարշապատ, 1913, էջ 68 և այլն։*

**Ոսկյան Համ.**— *«Կիրակոս Գանձակեցի»*, Հանդէս Ամսօրեայ, *1922, էջ 89—94 և 214—221։*

*Նոյնն է և հետեւյալը.*

**Ոսկյան Համ.**— *«Յովհաննէս Վանական և իւր դպրոցը», Վիեննա, 1922, էջ 92—101՝ «Կիրակոս Գանձակեցի»:*

**Չամչյան Միք.**— *«Պատմութիւն Հայոց», հտ. Ա, Վենետիկ, 1784, էջ 16: Նույնը՝ հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 210, 233, 236—239 և 271:*

**Պատկանյան Ք.**— *«Հայ պատմագիրների երկասիրութեանց ցուցակը»,* Փորձ, *Դ տարի, 1880, № 1, հավելված, էջ 26—27:*

**Պողոսյան Սեր.**— *«Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի շրջանում,* IX—XIII *դարեր», Երևան, 1958, էջ 306—307: (= Հայ ժողովրդի պատմության 12 պրակով, ուսումնական ձեռնարկ Հայկ. ՍՍՌ բուհերի համար: [Պրակ 4]: Երևան, Երևանի Համալսարանի Հրատարակչություն, 1958):*

**Ջանփոլադյան Հռ.**.— *«Մխիթար Գոշը և Նոր Գետիկի վանքը»,* Աշխատություններ Հայաստանի Պետական Պատմական Թանգարանի, *հտ. Ա, Երևան, 1948, էջ 102, 105—106, 131 և այլն:*

**Սարգսյան Գր.** — *«Դիտողութիւններ 'Հայերէն նոր բառեր'—ուն»,* Բազմավեպ, *1927, էջ 43—46:*

*Հր. Աճառյանի «Հայերէն նոր բառեր»-ի հրատարակության կապակցությամբ դիտողություն է անում Կիր. Գանձակեցու «սաղաւաթ» բառի մասին, էջ 45:*

**Սոմալյան Սուք.** (Somal P. S.)— „Quadro della storia letteraria di Armenia", Venezia, 1829, p. 111.

**Տեր-Մկրտչյան Կար.**— *«Նիւթեր հայ մելիքութեան մասին», պրակ Բ, Էջմիածին, 1914, էջ 20—21 և այլն: Ստորագրված է՝ «Կարապետ եպիսկոպոս»:*

**Փափազյան Վրթ.**— *«Պատմութիւն հայոց գրականութեան (բանահիւսութեան պատմութիւն), սկզբից մինչև մեր օրերը», մասն Ա (սկզբից մինչև* XVII *դարը), Երևան, 1907, էջ 241:*

**Փափազյան Վրթ.**— *«Պատմութիւն հայոց գրականութեան (բանահիւսութեան պատմութիւն), սկզբից մինչև մեր օրերը», նոր տպ., Թիֆլիս, 1910, էջ 196—197:*

**Քերեսթեճյան Պետր.** (Bedros de Constantinople)— „Etude philologique et léxicographique", Londres, 1945, p. 269.

*Կիր. Գանձակեցու «մայի» բառը համարում է մոնղոլերեն «մալ» (արջառ) բառից, իբրև «արջառի տուրք»:*

*(ԽՄԲԱԳԱՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ)— Հայ ժողովրդի պատմություն: Առաջին մաս: Ձեռնարկ միջնակարգ դպրոցի համար: Թույլատրված է Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրության կողմից: Երևան, Հայպետուսմանկհրատ, 1958, էջ 258:*

*(ԽՄԲԱԳԱՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ)*— История Армянского народа. Часть первая. Под редакцией Б. Н. Аракеляна и А. Р. Иоаннисяна. Ереван, Айпетрат, 1951, стр. 185. (Институт истории Академии наук Армянской ССР).

※ *Տե՛ս նաև Կիր. Գանձակեցու Պատմության բնագրի և թարգմանությունների հրատարակություններին առընթեր՝ հրատարակիչների և թարգմանիչների առաջաբանները:*

# ԿԻՐԱԿՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ
# ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԱՑ
# Ի ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԷ ՄԻՆՉԵՒ
# ՑՅԵՏԻՆ ԱՒՈՒՐՍ ԹԵՒԱՑԵԱԼ

# ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԱՑ Ի ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԷ ՄԻՆՉԵՒ ՑՅԵՏԻՆ ԱՒՈՒՐՍ ԹԵՒԱՑԵԱԼ. ԱՐԱՐԵԱԼ ԿԻՐԱԿՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ Ի ՄԵԾԱՀՌՉԱԿ ՈՒԽՏՆ ԳԵՏԿԱՑ

*Կիրք, որ ի բնութեան մարդկան՝ յայս հաստատեալ է խնամօք յարարչէն՝ քննասէր լինել իրաց ինչ անցելոց և կամ ի հանդերձեալն լինելոց։*

*Իսկ այժմ ոչ է հնար այլազգ հասու լինել և իմանալ, բայց թէ բազում աշխատութեամբ և յերկար ջանիւ։*

*Իւծիլ և մաշել տաժանմամբ և յոյժ վաստակօք, զի թերևս գտցէ ինչ պիտանացու, ու կարողն իցէ լնուլ զփափագս ըղձից խնդրողին,*

Վերնագիր

1—4 abcdefghijklmnopqstuvwՎ *համառօտ* (dj *համառաւտ*, g *համառ*, l *համառօտք*) *պատմութիւն* (stvՎ *պատմութիւնք*) *ժամանակաց ի սրբոյն* (d *ի սրբոյ*) *Գրիգորէ մինչև ցյետին* (dfstvw *յետին*, Վh *ի յետին*, u *յետինս* փխ *յետին աւուրս*) *աւուրս* (ijpq *աւուրն*, w *ժամանակիս*) *թևացեալ* (stu *թըւացեալ*, vՎ *թուացեալ*) *արարեալ* (Վ չիք *արարեալ...գետկայ*, stv *ասացեալ*) *Կիրակոսի* (bejqv *Կիւրակոսի*) *ընտրեալ* (stv *մեծ և ընտրեալ*) *վարդապետի* (stuvw *վրդպտի*) *ի մեծահռչակ ուխտն* (ijpq *մեծահռչակ ուխտին*, stv *ի մեծահռչակ սբ ուխտն*, u *ուխտէն*) *Գետկայ* (o *Գետարգել*) *Մ-Թ յառաջաբան հեղինակին*, փխ վերնագրի, l ունի՝ *յառաջաբան և նախադրութիւն պատմագրոց կիրակոսի վարդապետին*, h *Պատմութիւն ժամանակաց կիրակոս վարդապետի*։ Վերնագրից հետո a *ունի «օգնեա՛»*, f—*աւգնեա հոգիդ սբ*, tv—*«օգնեա յօ և զսկսեալս իմ զու կատարեա»*։ efg առորին լուսանցքում ունեն՝ *«հոգի սբ ած հզրտ զսկսեալն իմ հասս աւարտ»*։

5 t չիք *կիրք*, i *գիրք* փխ *կիրք*
5 u չիք *որ*, t *զոր*
5 cdj *ի բնութեանն*, bw *ի բնութենէ*, ghu *ի բնութիւն*
5 gno *այս*, st Վ *յայտնի* փխ *յայս*
5 dv *խնամաւք*
5–6 enotv *արարչէն*, su *արարչին*
6 m *լինիլ*
6 stuvՎ չիք *և*
6 bcdijnopqtwՎ չիք *ի*
6 l *ի հանդերձելոց*
6–7 l չիք *լինելոց*, stuvwՎ *լինելոյ*
8 ch *այժմ* փխ *այժմ*
8 i *յայժմ*
8 *Մ-Թ* a *հնարք*
8 n *այղ*
9 ḿ *յաշխատութեամբ*
9 stvՎ *կամ* փխ *և*
9 npu *երկար*
10 ahfl *իւծեալ*, cdipqj *բիւծիլ*, *բիւծել*, g *իւծիլ*, n *իւծել*, o *հիւծեալ*, t *եւծիլ*
10 i *մաշել*, l *մաշեալ*
10 h *տաժանմամբ յոյժ*
10 adlw *վաստակաւք*
11 o *պիտանացոյ*
11 *Մ-Թ* bdmpq *զփափագս*, o *զփափագ*, w *փափագս*
11 stv *փափագս* (Վ *փափագս*) *ինչ խնդրողին ըղձից*

*Բազմաջան երկօք և ոչ վարկպարազի անցանել ընդ պատմութիւնս ժամանակաց՝ ներքնոց և արտաքնոց։*

*Ակնարկելով և ազդեցութեամն Հոգւոյն, որ կարողն է իմաստնացուցանել զտգէտս և բանաւոր առնել զանբանս։*

*Կարող և ձեռնհաս զնա հաւատալ առանց երկմտութեան և թերութեան.*

*Որով և ամենայն ինչ ըստ կամաց նորա յօրինի և կազմի, երևոյթքն և աներևոյթքն։*

*Սրբապէս մտօք և անչարութեամբ մատուցանել զանձն վերին և ներքին աստուածայնոց բանից և գրոց պատմութեանց, որք կարող են հասուցանել զխնդրողն խնդրելոյն։*

*Քանզի և այս օրէնք են աստուածայինք, «Ցուցանել հարանց՝ որդւոց, զի ծանիցեն, յազգ յայլ»*, որպէս մարգարէն Դաւիթ հրամայէ. զի յայս խրատէր մեծն ի մարգարէս Մովսէս զորդիսն Իսրայէլի և ասէր. «Խոկասցիս ի սոսա ի տուէ և ի գիշերի ի նստել ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի ննջել և ի յառնել»**։ Եւ այսոցիկ՝ որք յօժանդակ են և ձեռն տան, յոլովք են յաստուածայնոց արանց, որք կենդանի արձան թողին զգիրսն յետ*

* Հմմտ. Սաղմ. Հէ. 5, ** Յեսու. Ա. 8, Բ. Օրէնք Զ. 7, ԺԱ. 19.

1 cd *երկուք*, eo *երգօք*
1 tuvwԱԲԳ *անցո· ցանել*, (Վ *անցանել*)
1 ijp *ընդ պատմութիւնն*
2 t *ներքնոցն* փխ *ներքնոց և արտաքնոց*
2 vՎ *արտաքնոցն*
3 no *արկելով ակն*
3 fhno *ազդեցութեամբ*
3 bjls *հոգոյն*
4 tu ԱԳ *զբանս* փխ *զանբանս*
5—6 no *թերահաւատութեան*, u *երկբայութեան* փխ *թերութեան*
7 cdijq *ըստ կա...* (բնդհատված է մինչև '*որք կարող են*' հավանորեն կարմիր թանաքով գրելու համար)
7 o *ըստ կամաւ*
7 h չիք *յօրինի*· l *յաւրինի*, stv *օրինի*
7—8 estuvՎ *երևոյթքս*, w *երևոյթքս և աներևոյթսն*, o *երևոյթք և աներևոյթք*
9 h *սրբասեր*
9 l *մտաւք*
9 stuvwՎ *անաչառութեամբ*
9 b *մատու* փխ *մատուցանել*
10 no *աստուածայնոյ*, Վ *աստուածայնոցն*
10 Մ-Թ *գրոց և պատմութեանց*
10 i *որ* փխ *որք*
10 s *կարողք են*
10—11 dijt *հատուցանել*
11 d *զխնդրաւղն*, oq *զխնդրօղն*
12 c *այն*, j *այս է*
12 ad *աւրէնք*, stvՎ *օրէնք աստուածայինք են*
12 no *աստուածային*, w *աստուածայինս*
12 stvՎ *հարց*
12 h *հարանց և որդւոց*
12 adjo *որդոց*
13 Մ-Թ և մի քանի ՁՁ *ծանիցի*, ip *ծանիցէ*
13 Մ-Թ dvՎ *այլ*· n *այգ*
13 b *ասէ* փխ *հրամայէ*
13 cdgijnopq *այս*
14 pq *մեծն մարգարէն*
14 nostv *մովսէս մեծ մարգարէն*
14 afh *զորդիս*
14 ef *իգի*
14 tvՎ *խրատէր և ասէր*
14—15 no *խոկասցիս սոսա*, q *խոկասցի*
14—15 g չիք '*խոկասցիս... ի գիշերի*'
15 u *ի նոսա*
15 ps *ի նստիլ*
15 n *ի գնալն*, Վ *և ի գնալ*
15 enouw *ի ճանապարհի*
16 no *ի ննջելն և յառնելն*, bcdejpquw *ի ննջել և յառնել*, g *առնել*
16 e *յայսոցիկ*, s *այսոսիկ*, tvՎ *յայսոսիկ*, u *այնոցիկ*
16 bel *օժանդակ*, no *որքան օժանդակ են*, d *յաւժանդակ*
16 no *ի ձեռն տան*
17 gnostuՎ *աստուածայնոց*
17 i *արգա* փխ *արձան*, j *արծա*
17 no *զգիրս*
17 no չիք *յետ*

իւրեանց ամենայն ազգաց։ Որպէս մեծն Եւսեբիոս գերկուս գիրսն եթող՝ զՔրովնիկոնն, սկսեալ ի նախնոյն Ադամայ, զխժական անուանս նահապետացն, զոր գրեցին արտաքինքն՝ համեմատելով ընդ աստուածայնոց արանց պատմութիւնս, և բերեալ հասուցանէ մինչ ի գալուստն Քրիստոսի և այսր, զյոլովից ազգաց նահապետս և զթագաւորս. և զԵկեղեցւոյ պատմութիւնն, սկսեալ ի ծագմանէ արեգականն արդարութեան՝ զժամանակս թագաւորաց, և զառաքելոցն սրբոց քարոզութիւնս, և թէ ո՞ ի նոցանէ զինչ գործեաց, և յոր կողմն չոգաւ իւրաքանչիւր ոք, և կամ, թէ ո՞րպէս վկայեցին. և զեպիսկոպոսաց սրբոց, և զերևելի արանց զգործ և զքաջութիւն. և բերեալ հասուցանէ մինչև յաւուրս Կոստանդիանոսի բարեպաշտի և անդ դադարի։ Եւ ապա մեծիմաստն Սոկրատէս կորովակի բանիւք՝ սկսեալ ի սրբոյն Սեղբեստրոսէ Հռոմայ հայրապետէն և ի Կոստանդիանոսէ մեծէ, անտի մինչև յաւուրս Թէոդոսի փոքու, զարարս և զգործս իւրաքանչիւր թագաւորաց և զեպիսկոպոսաց, և զառաքինեաց և զվատթարաց, զժողովելոց բազմաց եղելոց՝ պիտանեաց և խոտանաց, ընդարձակ և յաճախ պատմութեամբ աւարտէ։

1 Մ-ԹՎ յամենայն
1 cdiq ամենայն ազգաց, որից հետո բաց տեղ է մնացել մինչև տող 4 'պատմութիւնս'
1 Մ-ԹՎ Եւսեբոս, a Եսեբւոս, b և սեբիոս
2 Մ-Թ զքրոնիկոնն, ajp զքրոնիկոմնն, b քրօնիկօնն, o զքրովնիականն
2 o անուանսն
3 h արտաքինք
3 h համառօտելով փխ համեմատելով
3 b ... այսոց փխ աստուածայնոց
3 t աստուածայնոցն
4 jp պատմութիւնսն
4 bmՎ մինչև
4—5 no մինչև ցՔրիստոսի (չիք ի գալուստն)
4—5 t չիք Քրիստոսի
5 bq զոյովից, ij զյոլովի, no յոլովից
5 ijp նահապետսն, l նահապետաց զթագաւորս, no նահապետաց, m զնահապետս
5 dhnot թագաւորս
5 bdl զեկեղեցոյ, h զեկեղեցեաց
6 gow պատմութիւն, stvՎ պատմութիւնս
6 g արդարութեանն
6—7 no ի ժամանակս
7 iՎ զառաքելոց
7 u սրբոցն
7 i չիք 'քարոզութիւնս...սրբոց'
7 Վ քարոզութիւն
7 a ոյ, որ յո
7—8 Մ-Թ ի սոցանէ
8 no ինչ
8 Մ-Թ կողմ
8 l չոգան
8 f չիք կամ
9 l զերևելիս, no երևելի
9 i չիք զգործ, u զործս
10—11 s հասուցանէ ի մեծն կոստանդիանոս բարեպաշտն, tuvw հասուցանէ մեծին Կոստանդիանոսի
10 w չիք մինչև
10 o ի օր փխ յաւուրս
10 Վ մեծին Կոստանդիանոսի
10—11 b բարեպաշտին
11 b չիք 'և անդ դադարի', egnostuv wՎ դադարէ
11—14 cdi բաց տեղ հետևյալի հմր 'և անդ դադարի... իւրաքանչիւր' q 'բարեպաշտի... թագաւորաց'
11 b մեծ իմաստնասէրն, g մեծիմաստ
11 o յոլովակի, Վ կորովի փխ կորովակի
12 u հռովմայ
12 b չիք Հռոմայ հայրապետէն
12 egjlnopstuvՎ հայրապետէ
13 bՎ չիք մեծէ, suvw մեծէ և
13 w մինչև ցաւուրս
13 no չիք յաւուրս
13 sՎ Թէոդոսու
13 sv զարարածս, Վ զարարածս
14 no և ի գործս
14 no առաքինեաց
15 a վատթարաց
15 h զժողովրդոց, t ժողովելոց
15 o բազմութեանց եղելոց
15 i պիտանաց
15 no զիտնականաց փխ պիտանեաց
15 adfhjklmstuvՎ խոտանեաց
15—16 afk ընդյարձակ
15—16 i ընդ յաճախ փխ ընդարձակ և յաճախ
15—16 m ընդ յաճախ և արձակ

Իսկ Հայոց ազգի պատմագիրք յոլովք ցուցին աշխատութիւն. որպէս սքանչելին և կորովամիտն Ագաթանգեղոս, որ թարգմանի բարի հրեշտակ, որ եցոյց հրամանաւ մեծազօր և քաջ արքային Տրդատայ զհանգամանս իրաց եղելոց առ Հայս ի ձեռն սրբոյն Գրիգորի Պարթևի և խոստովանողի Քրիստոսի, զգործս նշանաց և արուեստից և սքանչելագործութեանց, և զպատճառս լուսաւորութեան Հայոց աշխարհիս, գեղեցիկ և պայծառ պատմութեամբ աւարտէ։ Եւ զկնի նորա ամենահարուստն գիտութեամբ և մեծն իմաստութեամբ քան զյոլովս սուրբ այրն աստուծոյ Մովսէս Խորենացի, որ զՀայոց պատմութիւնն շարագրեաց բազմահանճար և յոգնազրուատ բանիւք. համառօտ պատմութեամբ և ընդարձակ մտօք ի նախնի մարդոյն սկսեալ՝ զյոլովից ազանց իրս և զգործս և զարարս, բերեալ մինչև յաւուրս Տրդատայ և սրբոյն Գրիգորի և անտի մինչև ցկատարումն սրբոյն Սահակայ հայոց հայրապետի, և զողբսն ասացեալ ի վերայ աշխարհիս Հայոց՝ անդանօր դադարեցուցանէ։ Եւ յետ նորա սուրբն Եղիշէ, որ պատմէ զքաջութիւն Վարդանայ, թոռին սրբոյն Սահակայ, և զընկերաց նորա, որք յաւուրն Քրիստոսի զանձինս ի մահ եդին և

1 stvՎ ազգիս
1 m պատմութիւնք պատմագրաց
1 no լինին փխ ցուցին
1 stvՎ աշխատութիւնս
2 abcdegjnoq ագադանգեղոս
2 stuv զոր
2 adfh թարքմանի
3 Վ զոր
3 j զհրամանաւ
3 dl մեծազաւր
3 b արքաին
3 o տրդատայ արքային, t քաջ արքայ տրդատ
3 a զհանգամայնս
4 tu չիք և
4 vՎ խոստովանողին
4 b խոստովանող վկաին
4—5 cdiq բաց տեղ հով. հմր 'և խոստովանողի... սքանչելագործութեանց'
5 b չիք քրիստոսի
5 stvՎ զգործսն
5 s զարուեստից
5 sՎ զսքանչելագործութեանց
6 no պատճառս, tvՎ զպատճառ
6 stvՎ ազգիս հայոց փխ Հայոց աշխարհիս
7 svw պատմութեամբք
7 af ամենհարուստն, t ամենաարուեստն (sic)
8 bcdijpq չիք և մեծն իմաստութեամբ, m չիք և մեծն իմաստութեամբ քան զյոլովս, no մեծ իմաստութեամբ

8 k հայրն փխ այրն
8 kno չիք աստուծոյ
8 w Մովէս
8—9 bcdgj Խոյարենացի, iq Խորենացին
9 gՎ պատմութիւն
9—10 fh յոքնազրուատ
10 dl համառաւտ, vՎ և համառօտ
10 u չիք համառօտ պատմութեամբ
10 afklm ընդ յարձակ
10 dl մտաւք
11 i մարդւոյն, t մարդկան
11 ip զյոլով արանց փխ զյոլովից ազանց
11 ip զյարմարս փխ զարարս
12 bcd տրդատա
12 acdj անդի
13 d չիք հայոց
13 Վ հայրապետին
13 stvՎ զողբս
14 tvՎ աշխարհին
14 dl անդանաւր
14 b դադարեցուցանէր
14—16 cdiq բաց տեղ հով. հմր՝ 'Եւ յետ... Սահակայ'
15 o չիք որ
15—16 s զթոռին իսահակայ
16 n զընկերացն, tv ընկերաց
16 st նորին
16 b զանձինս իւրեանց
16 ip եառւն փխ եդին

պսակեցան ի Քրիստոսէ, և զարիական մահ սրբոց Յովսեփեանցն, և զկամաւ տալն զանձինս ի կապանս արքունի նախարարացն Հայոց վասն յուսոյն, որ ի Քրիստոս, և զհամբերող նահատակութիւն սրբոցն Խորենայ և Աբրահամու, զոր ստուգութեամբ ցուցանէ այրն սքանչելի։ Եւ ապա Ղազար Փարպեցի ճարտասան, սկսեալ յաւուրցն սրբոյն Սահակայ, զնոյն տն պատմէ։ Եւ զկնի նորա Փաւստոս Բիւզանդ, որ զեղեալ իրս պատմէ Հայոց աշխարհիս ընդ պարսիկս և ի նոցանէ ընդ մերս։ Եւ Հերակլն ի Սեբիոսէ եպիսկոպոսէ ասացեալ։ Եւ Պատմութիւն սքանչելի առն Կորեան։ Եւ Խոսրով։ Եւ Ղևոնդ երիցու Պատմութիւն, որ զոր ինչ գործեցին Մահմետ և աթոռակալք նորա ընդ աշխարհս ամենայն և առաւել ևս ընդ ազգս Հայոց։ Եւ Թովմայ վարդապետն, պատմագիր տանն Արծրունեաց։ Եւ Շապուհ Բագրատունի։ Եւ տէր Յովհաննէս կաթողիկոս Հայոց։ Եւ Մովսէս Կաղանկատուացի, պատմագիր Աղուանից։ Եւ Ուխտանէս եպիսկոպոս Ուռհայի, որ գրեաց զբաժանումն վրաց ի հայոց ի ձեռն Կիւրիոնի։ Եւ Ստեփաննոս վարդապետ մականուն Ասողիկ։ Եւ Արիստակէս վարդապետ, կոչեցեալն

1 vՎ *մահս*
1 abcdijl *յովսեփանցն*, stՎ *յովսեփեանց*
1 o *հռիփսիմեանցն* փխ *Յովսեփեանցն*
2 gu *կամաւ*, p *կամաւոր* փխ *զկամաւ*
2 wՎ *տալ*
3 l *զհամբերութիւն նահատակաց*
3 i *նահատակութեան*
3 st *սրբոց*, wՎ *սրբոյն*
4 d *աբրաամու*
4 stv *այրն աստուծոյ*, Վ *այրն աստուծոյ սքանչելի* փխ *այրն սքանչելի*
4—5 w *խազար* (sic)
5 o *աւուրցն*
5 cdijq *սահակայ սրբոյն*
5 o *իսահակայ*
5 i չիք *և զնոյն*
6 i *եւ զկնի նորա և զնոյն բիւզանդ*
6 Մ-Թ *փոստոս*, no *փոստ*, u *փոստոս և բուզանդ*, bew *փօստոս*, j *փաւստոս բիզանտ*, p չիք *Փաւստոս*
6 cdj *բիւզանտ*
6 aefgl *զեղեալ եղեալ*
6 l *պատմէ իրս*
7 l *ընդ մեր*, tuvwՎ *ի մերս*, փխ *ընդ մերս*
7—8 ow չիք '*Եւ Հերակլ... ասացեալ*'
7 Մ-ԹՎ *Հերակլ*
7 g *ի սեփիոսէ*
8 i *սքանչելիս*
8 stvՎ *առն սքանչելի*
8—9 cdiq չիք '*սքանչելի առն Կորեան։ Եւ Խոսրով*'
9 Մ-Թgikstv *պատմութիւն*
9 Մ-Թih *որ զինչ*, g *զի զոր ինչ*
9 c *մահմեդ*, v *մահմէտ*
10 bm *աթոռակալքն*
10 nou չիք *ևս*
10 bs *ընդ աշխարհս* փխ *ընդ ազգս*
11 acdjl *թովմա*, bemstuvwՎ *թումա*, *թումայ*, i *թովմաս*, g *թօմայ*
11 stuvwՎ *վարդապետ*
11 stuvwՎ չիք *պատմագիր*
11 w չիք *Եւ Շապուհ*
12 Մ-Թabcdgipqsv և միևնույն գրչագրի մեջ տարբեր ձևերով՝ *յովանէս*, *յովաննէս*, *յօհանէս*, *յոհան*, *յովան*, *յօհաննէս* և այլն։
12 abcdeilqsvw *կաթողիկոսն*, ghnoՎ *կաթուղիկոս*, *կաթուղիկոսն*
12—13 Մ-Թ *Կաղականդացի*, bno *կաղականտուացի*, cd *կաւզանկանտուացի*, jq *կաւզանկանտուացի*, i *մօսէս կօղանկատուացի*, p *կօղանկտուացի* (sic) stuvw *մօսէս կաղկանտվացի*, Վ *կաղկանդուացի*
13 Մ-Թ *Ուրհայի*, bipu *ուռհայեցի*, s *ուռհայոց*, m *ուռհայու*
14 i *զթըղվումն* փխ *զբաժանումն*
14 l չիք *հայոց*
14 Վ *վրաց և հայոց*
14 Մ-ԹՎ afht *կիւրոնի*, bcdegnoquw *կիրոնի*, ijp *կիրիոնի*
14 Մ-Թgijklmnopq *ստեփանոս*
14—15 stvՎ *ստեփաննոս մականուն ասողիկ վարդապետ*
15 Մ-ԹՎ *վարդապետն*, a *վարդապետս*
15 b *մականունն*, i *որ մականուն*
15 a *ասողիկ* փխ *ասողիկ*, i *ասողնիկ*
15 d *ռըստագէս*, Վ *րաստակէս*, Մ-Թ *Ռըստակէս*
15 t չիք '*Եւ Արիստակէս վարդապետ*'

*Լաստիվերտցի։ Եւ Մատթէոս վանաց երէց Ուռհայեցի։ Եւ Սամուէլ քահանայ կաթուղիկէին Անւոյ։ Եւ ապա մեծիմաստ և հանճարեղ վարդապետն անուանեալն Վանական։*

*Որոց փոյթ եղև սոցա իւրաքանչիւր սրբոցս՝ գրով թողուլ զյիշատակ բարի զկնի եկելոցս յօգուտ լսողացն և ի վարձատրութիւն նոցուն սրբոցն՝ անջինջ լինել յիշատակ մինչև յօրն Քրիստոսի։*

*Իսկ մերս ձեռնարկութիւն մի՛ ումեք յանդգնութիւն համարեսցի, այլ առաւել բարեաց նախանձու գործ. զի հարկանեն զմեզ միտք մեր՝ ոչ տալ լռութեան զայսպիսի աղէտ տարակուսանաց, զոր լուաք ականջօք մերովք և տեսաք աչօք, զի ի գլուխ ելին ամենայն սրբոց մարգարէութիւնք, որք յառաջագոյն գուշակեցին վասն նեղութեանցս, որ հանդերձեալ էր լինել և առ մեզ գործովք կատարեցաւ. զոր և ասաց փրկիչն մեր և աստուած մեր Յիսուս Քրիստոս, թէ՝ «Յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն՝ ի թագաւորութեան»*. և «Այն, ասէ, սկիզբն է երկանց»** յայտնութիւն որդւոյն կորստեան, զոր երկնչիմք՝ մի՞ գուցէ երևեսցի նա ի մերում աւուրս.*

* Մատթ. ԻԴ. 7, Մարկ. ԺԳ. 8.
** Մատթ. ԻԴ. 8, Մարկ. ԺԳ. 8.

1 abcdefijklmnopqstuvՎ *լաստիվերցի*
1 abcdfghstuv *մաթէոս*
1 Մ-Թ *Ուրհայեցի*, t *ուռհայի*, Վ *Ուռհացի*
1–2 Մ-Թ *քահանայն*
1–2 Վ *անուն քահանայ*
2 b *կաթողիկէին*
2 g *կաթուղիկոսին անոյ*
2 amuw *յանոյ*, bcdejq *անոյ*, fijklnopv *յանւոյ*
2 no *մեծիմաստն*, stv *մեծիմեծ* փխ *մեծիմաստ* Վ *մեծ*
2 stv *հանճարեղն վարդապետ*, Վ *հանճարեղ վարդապետ*
3 m չիք *անուանեալն*, no *անուանեալ*
4 cdiq բաց թեղ հով հմր *'որոց փոյթ եղև'*
4 j > *որոց փոյթ եղև գրել կարգաւ*
4 abcdjp *և սոցա*, t *նոցա* փխ *սոցա*
4 bcdegijloquw *յիշատակ*, mstvՎ *զյիշատակս, յիշատակս*
5 h *եղելոցս* փխ *եկելոցս*, Վ *եկելոց*
5 dl *յաւգուտ*
5 tvՎ *նոցին սրբոց*
6 stv *ի յիշատակ*
6 dl *յաւրն*, no *մինչև օրն*, ijpq *մինչև յաւուրն* Վ *մինչև ի յօրն*
7 bcdjpq *մեր*
7 u *մի՛ որ* փխ *մի՛ ումեք*
7 w չիք *մի ումեք յանդգնութիւն*
7 s *համարիցի*
7 n *այլ*
8 Վ *բարեացն*
8 abcefghklmwՎ *նախանձոյ*
9 dnopu *լռութիւն*
9 notՎ *այսպիսի*
9 i *աղէտս*
9 Վ *տարակուսանացն*
9 dl *ականջաւք*, o *ականջովք*
9 gip *մերօք*
10 dl *աչաւք*, svwՎ չիք *աչօք*
10 u *պատմութիւնքն* փխ *մարգարէութիւնք*
10 abcdgilopquՎ *որ* փխ *որք*
11 h *նեղութեանց*, tvՎ *նեղութեանցն*, l *եղելութեանցս* փխ *նեղութեանցս*
11 aejs *լինիլ*
12 u *և առաւել* փխ *և առ մեզ*
12 i *գործով*
12 s *կատարեցան*
12 bcdijp չիք *աստուած*
13 Վ *եթէ*
13 dgjnoq *ազգի*
14 g չիք *ի*
14 st չիք *ի թագաւորութեան*
14 uՎ *ի թագաւորութեան վերայ*
14—15 bdfghjl *որդոյն*, no *որդւոցն*
15 Մ-Թghiqu *որ*
15 q *նմա* փխ *նա*
15 l *ազգի* փխ *աւուրս*
15 no *յաւուրս*, stvՎ *ժամանակիս* փխ *աւուրս*

*զի գործք ամենայն, որ գործին այժմ, զնոյն նշանակեն։ Սէր ցամաքեալ, և անգթութիւն տիրեալ, աստուածպաշտութիւն նուազեալ, և անհաւատութիւն բարձրացեալ. սեղանք և պատարագք լռեալք, և քահանայք անողորմ ի սուր անկեալք. կանայք և մանկունք գերեալք, և արք դառնամահք լեալք. զի՛ զոր գուշակեաց այրն աստուծոյ սուրբն Ներսէս վասն ազգին նետողաց և աւերման աշխարհիս Հայոց, այժմ կատարեցաւ յազգէ, որ Թաթարն կոչի. զի զբազում ազգս և զազինս ջնջեաց սա, զոր յիւրում տեղւոջն պատմեսցուք, եթէ տէր կամեսցի։*

*Բայց իւրաքանչիւր ոք յառաջին աշխատասիրացն եգիտ տեղի ինչ բուռն հարկանելոյ, կամ թագաւոր երևելի և կամ նահապետութիւնք ազգաց յայտնի։ Իսկ մեր յայսմ յամենայնէ թափուր եղեալ. զի թագաւորութիւնն վաղ ուրեմն բարձեալ՝ Արշակունին և Բագրատունին, և իշխանք ոչ ուրեք երևեալ Հայկազնի, բայց թէ ուրեք ուրեք զօղեալք և թաքուցեալք յօտար աշխարհի. բայց միայն յոյս մի եղեալ առաջի՝ զաւուրս շնորհ և զխորհրդոյս զօրութիւն, զի յայսմ աւուր, յորում ձեռնարկեցաք ի սմա,*

1 cd 'գործք' բառի տեղը բաց, no զգործք փխ զի գործք
1 p զի ով ոք ամենայն որ գործեն
1 bcdqt գործեն. u ծագին փխ գործին
1 abcdefghiՎ զնոյն
1 nop նշանակին
1 p զի սէր
2 abcdeghstuv նուազեալ
2—3 Վ անհաւատութիւնք
3 djnoq պատարագ
3 Մ-Թ abcd և այլուր լռեալ
4 Մ-Թ il kl ի սուզ
4 Մ-Թ egij անկեալ, d անգեալ, stvՎ արկեալք, w արկեալ
4 bu գերեալ
4 no դառնամահ
5 Վ լեալ
6 ijpՎ յազգէն
7 no թաթար, u տաթարն
7 cdijqstuvՎ զի բազում
7 bՎ ազգ և ազինս, no ազգս և ազինս, stuv ազգ և ազինք (uv ազինս)
7 tvՎ զոր և
7 no իւրում
7—8 bcdeij տեղւոջն, l տեղոջ, stv տեղւոջ
8 l պատմեցից
8 cdi 'տէր' բառի տեղը բաց է։
9 al յիւրաքանչիւր
9 t չիք ոք
9 no առաջին
9 j յաշխատասիրացն, w աշխատասիրեացն
10 l հարկանելոյն
10 cdqi 'թագաւոր' բառի տեղը բաց է
10 Վ կամ փխ և կամ
10 b թագաւորութիւն փխ թագաւոր
10 cd 'նահապետ...' բառի տեղը բաց է
10—11 iq նահապետ քաղաքաց յայտնի փխ նահապետութիւնք ազգաց յայտնի
10—11 jp ազգաց քաղաքաց յայտնի փխ ազգաց յայտնի
10—11 cd քաղաքաց փխ ազգաց
10—11 stwՎ ազգացն
11 stՎ մերս
11 abcdfghstՎ ամենայնէ, no այսմ ամենայնէ
11 cd թարուր
11—12 o չիք 'թափուր եղեալ... բարձեալ'
11—12 w չիք 'զի թագաւորութիւնն վաղ'
11—12 g թագաւորութիւն
12 b բարձեալ է, d բարձեա..., ip բարձաւ..., j բարձաւ
12 Մ-Թ jklqsv իշխանքն
13 acdfg երևել, i երևի ի, no երևելի
13 no երևեալ զօղեալք և թագեալք
13 dl զաւղեալք
13 abcfghijlovw թագուցեալք, tuՎ չիք և թաքուցեալք
14 dl յաւտար, h չիք յօտար, no օտար
14 abcfgl lmow մի յոյս փխ յոյս մի, cdijpq միւս, gnu մի ոյս փխ յոյս մի, stvՎ մերոյս փխ յոյս մի
14 u շնորհն, w շնորհք
14—15 no զխորհրդոյս շնորհ և զօրութիւն
15 cdi զխորհրդոյ, q խորհրդոյ, t զխորհուրդ
15 dl զաւրութիւն
15 gno այսմ
15 lsvՎ աւուրս

*տօն է գալստեան ամենասուրբ Հոգւոյն ի վերնատունն ի դասս առաքելոցն՝ հրեղէն լեզուօք հրաշազարդեալ զմտաւ ընդ տիեզերս առաքեաց՝ կոչել զամենեսեան ուղղափառ աւետարանին ի կեանս անմահականս։ Եւ մեք ի նոյն Հոգի վստահ եղեալ, արկաք զանձինս յաշխատութիւն, որ ի վեր է քան զկար մեր։ Վասն որոյ աղաչեմք զկնի եկեալսդ ոչ աղարտել զաշխատութիւնս մեր, որպէս անուսմունք, և խնչել քթօք, և յօնօք պղպտել, այլ զիջանել եղբայրաբար և ձեզ թողուլ յիշատակ ապագայիցն, զի Քրիստոսի աշակերտացն ամենայն ինչ հաւանութեամբ է, որպէս ուսանիմք ի գրոց։ Այլ մեք բուռն հարցուք զիրէս, զոր սկսաք, և ցուցցուք նախ զանուանս աթոռակալացն սրբոյն Գրիգորի՝ ի նմանէ սկսեալ մինչև առ մեզ սուղ ինչ համառօտիւք. զի լիցի սա մեզ արձան գերեզմանի, ոչ ըստ նմանութեան Աբիսողոմեան քարին*, այլ կենդանի, զի յիշեսցի ի սմա անուն Կիրակոսի։*

## Ա

## Համառօտ պատմութիւն և ցոյց անուանց սրբոյն Գրիգորի և որք յետ նորա յաջորդեցին զաթոռ նորա

*Ամենայն գովեստից արժանի և յիշատակաւ բարեաւ հռչակեալ հայրն մեր հոգևոր և ըստ աւետարանին ծնող սուրբն Գրիգորիոս՝ յետ լուսաւո-*

* Բ Թագ. ԺԸ. 18.

1 dl *տաւն է*, stՎ *տօն էր*
1 ip չիք *ամենասուրբ*, s *ամենասրբոյ*
1 djl *հոգոյն*
1—2 stvՎ *առաքելոց*
2 djl *լեզուաւք*
2 l *հրաշազարդեաց*
2 Մ-Թ չիք *առաքեաց*
2 3 afh *ընդ տիեզերս առաքելոց կոչել*
3 no *զամենեսեանս*
3 m *ի կեանսն յանմահականս*
3 cdijpq *անմարմնականս* փխ *անմահականս*
4 stvՎ *հոգին*
4 el *վստահացեալ*, u *վստահացեալք*
4 ij բաց տեղ հով. ձմր՝ *'վստահ... յաշխատութիւն'*
4 stv *եղեալք*
4 stvՎ *յաշխատութիւնս*
4—5 u չիք *'որ ի վեր է... քան զկար մեր'*
5 b *աղաչեմ*
5 no *զկնի եկելոց*, t *զկնի եկեալքդ*
6 no *աշխատութիւնս*
6 s չիք *մեր*
6 g *ամուսնութիւնք*, os *անյուսմունք*, w *անուսմունս*
6 cdl *քթաւք*, n *թքօք*
6 a *աւնօք*, cdjl *յաւնաւք*, pstuvՎ *յունօք*, i *օնօք*
7 stՎ *ապագայից*
8 j *ուսանեմք*. n *յուսանիմք*
9 lno *ի սուրբ գրոց*
9 n *այղ* (այս ձեռագրում բազմիցս այղ)
9 l *սկսեցաք*
9 dstuvwՎ *ցուցաք*
10 bcdegijnq *աթոռակալաց*
10 n *սրբոյ*
10 cdjpq *գրիգորէ*
10 ijpq *ի սմանէ*
11 djl *համառաւտիւք*
11 t *արձան գերեզման*
12 tԱԳ *աբիսողոման արքին* Վ (Բ) *աբիսողոմ արքայի* փխ *Աբիսողոմեան քարին*
12 cdijpq *ամենայն* փխ *ի սմա*
13 Մ-ԹՎ մի շարք ՁՁ *կիրակոսի*
14 bdj *համառաւտ*
14 tv *պատմութիւնք*
14 b *անցք* փխ *ցոյցք*, fhou *ցոյց*, km *գրոյցք*
14 c *անուանանց*, d *անուանաց*, jpq *անուանցն*, stvՎ *անուան*, no *անուանք*
15 i չիք *որք*, jp *որ*
15 ip չիք *յաջորդեցին զաթոռ նորա*
15 Վ *առաջնորդեցին*, n *աջորդեցին*
15 ipstuvՎԱԳ չիք *զաթոռ նորա*
16 d *ամենագովեստից*
16 bs *արժանին*, p *արժանաւոր*
16 ip *յիշատակ*
16 p *բարեաց*
16 abcdehjmnoqstuvwՎ *հռչակեալն*, i *և հռչակեալ*
17 djln *ծնաւղ*, ճանախ *ծնօղ*
17 bc *սուրբ*

*բելոյ նորա զՀայաստան աշխարհս աստուածգիտութեամբ և ամենայն ուղղափառ կարգօք և օրէնսդրութեամբ, և ձեռնադրելոյ եպիսկոպոսս աւելի քան զչորս հարիւր և երեսուն, գնալ եղև նմա և մեծի արքային Տրդատայ ի Հռոմ ի տեսութիւն նշխարաց սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, և մեծ թագաւորին Կոստանդիանոսի, և սրբոյ հայրապետին Սեղբեստրոսի, դնել ուխտս և դաշինս ի մէջ իւրեանց։ Եւ ընկալեալ մեծաւ պատուով սուրբն Կոստանդիանոս և մեծ հայրապետն աշխարհամուտ դրան՝ մեծարանս արարեալ սրբոյն Գրիգորի, որպէս խոստովանողի և առաքելաշնորհ վկայի Քրիստոսի, տան նմա պատիւ հայրապետութեան, որպէս աթոռակալին Պետրոսի. տան նմա և մասն ինչ ի նշխարաց առաքելոցն, և զահեակ ձեռն Անդրէի առաքելոյ, և այլ ընծայս բազումս և յԵրուսաղէմ զԳողգոթայ՝ զտեղի խաչելութեանն Քրիստոսի, և զսուրբ Յակովբն, և տեղի մի պատարագի ի սնարս սուրբ Յարութեանն։ Ասեն՝ կախեաց կանթեղ մի սուրբն Գրիգոր ի վերայ գերեզմանին Քրիստոսի և խնդրեաց յաստուծոյ աղօթիւք առանց զգալի լուսոյ լուցանիլ ի սուրբ պասեքի տօնին, որ լինի մինչև ցայսօր նշանն։ Նոյնպէս և զմեծն Տրդատ մեծարեալ, որպէս վայել էր նորա քաջութեանն՝ արեամբն Քրիստոսի և հաւատովն, որ ի նա, դաշինս կռեալ, անքակ ունել զսէրն ի մէջ երկուց ազգացս յետ նոցա։*

1 u չիք *զհայաստան*
1 g *աշխարհն*, u *զաշխարհս*
1 ijp *աստուածգիտութեամբն*
1—2 stvՎ չիք *'և ամենայն... օրէնսդրութեամբ'*
2 cdjln *կարգաւք*
2 a *աւրէնսդրութեամբ*, jn *աւրէնսդրութեամբ*, d *յաւրէնսդրութեամբ*
2 ghnwՎ *եպիսկոպոս*
2 i չիք *աւելի*
3 acdefghjqw *զչորք*, buՎ *զչորեք*
3 af *հարեւր*
3 stuvՎ *ընդ* փխ *և*
3 stuv *մեծ*
4 u *ի Հռովմ*
4 bno *նշխարացն*
4 djnt *պաւղոսի*
5 u *արքային* փխ *թագաւորին*
5 cdj *սրբոյն*, tv *սուրբ*
6 ip *ուխտ*
6 n *ի մէնջ*
7 no *սուրբ*, tՎ չիք *սուրբն*
7 no *սուրբ* փխ *մեծ*
7 d *հայրապետն սեղբեստրոս*
7 ij *յաշխարհամուտ*
7 i *դրանն*
7–8 cdijq *մեծարանաւ* փխ *մեծարանս*
9 no *վկային*
9 Մ-Թi *տայ*
9 stuvwՎ *աթոռ* փխ *պատիւ*
9–10Վ *աթոռակալի*
10 bcdegijqstuvwՎ չիք *նմա*, o *ի նմա* փխ *նմա*
10—11 q *ահեակ*
11 cdijmnopqstuvwՎ *առաքելոյն*
11 Մ-Թafijv *բազում*
11 u *բազումս թագաւորին տրդատայ և սուրբ հայրապետին գրիգորի*
11—12 stvՎ *յերուսաղէմ զտեղի խաչելութեանն քրիստոսի զգողգոթա*
11–12 a *զգողգողայ*, bcdstvՎ *զգողգոթա*
12 hmst *և զտեղի*, ip *ի տեղի*
12 bcdefghijknpstu *յակոբն*
12 n չիք *մի*
13 eh *յարութեան*
13 Վ *և ասեն*
13 abcdfgnw *և կանթեղն մի*
13 u *և կանթեղ մի կախեաց*
պահանջութեամբ և յափշտակութեամբ, և այնքան նեղեաց, մինչև զմեռելոցն ի կենդանեացն պահանջել զհարկս։ Եւ հատաւ գիւտ արծաթոյ յաշխարհէս Հայոց, և կոտորումն եղև Քաղիանու, Մրենոյ, Թալնայ, ուր սպանան ոգիք եօթն հարիւր և գերեցան հազար և երկու հարիւր։ Եւ Մուշեղ Մամիկոնեան և Սամուէլ այլովք ազատօքն Հայոց կոտորեցան յաւուրս զատկացն յիսմայելացւոց։

Յայսմ ժամանակի և թուականիս հայոց ՄԻԲ էր Ստեփաննոս դրան երէց, որ բանիբուն ճանաչիւր, եհաս ի կատարումն ամենայն իմաստասիրական և գրամարտիկոս արուեստից՝ հանդերձ հոգևորական առաքինութեամբ։ Էին և վարդապետք աշխարհիս Հայոց ընտրեալք և լուսաւորք՝ տէր Եփրեմ և Անաստաս և Խաչիկ և Դաւիթ Հոռոմայրեցի, և մեծն իմաստասէրն Ստեփանոս Սիւնեցի, աշակերտ Մովսիսի, զոր ի վերագոյնն յիշատակեցաք, որ թարգմանիչ եղև ի յունականէն ի հայ լեզու, և ի վերայ թարգմանութեանն արար և երգս հոգևորս քաղցր եղանակաւ՝ շարականս և կցուրդս և այլ երգս. արար և մեկնութիւն համառօտ՝ աւետարանացն, և քերականին, և Յոբայ, և «Տէր, եթէ շրթանցն գիշերոյ»։

1 stvՎ մինչ զի
1—2 stvՎ զմեռելոց (vՎ մեռելոցն) հարկս ի կենդանեացն էառ, i զմեռելոց, no ի մեռելոցն
2 d զկենդանեացն, fh ի կենդանեաց, o ի կենդանեացն
2 cijp զհարկն
2 ijp պահանջէր, no պահանջէին
3 d յաշխարհս, g աշխարհէս, o աշխարհիս
3 stv կատարումն փխ կոտորումն
3 Մ-Թ քողինու, afhimp քաղինոյ, k քաղինու, Վ Քաղիւնոյ
3 abcdefghj արենոյ (արենո), im յարինոյ, stuvw յարենւոյ, Վ Յարենոյ
3 s Թաշնայ (sic), acd Թալնա
4 b ոգի, f ոգիք չ, g էճ
4 h եօթ, w եւթն
4 notvwՎ գերեցան ոգիք (no հոգիք)
4 abdefghwՎ երկերիւր
5 cmoptuvwՎ այլօք, d այլաւք ազատաւքն
5 Մ-Թ յաւուր, no աւուրս
6 p զատկաց
6 Մ-Թ և մի երկու ՁՁ յիսմայէլացւոց, acdij յիսմայէլացոցն, b իսմաելացոց, f իսմայէլացոցն, h իսմայէլացւոցն, o իսմայէլացւոց, g յիսմայէլացիքն
7 Մ-Թ և մի երկու ՁՁ ի թուականի, bdw ի թվականիս, Վ թուականիս փխ ի թուականիս, o ժամանակի էր թուականն
7 tuvwՎ չիք հայոց
7 Վ երկերիւր քառն և երկու
7 Մ-Թ և մի երկու ՁՁ ստեփաննոս
8 abcdefghtuwՎ հաս
8 tvՎ չիք ի կատարումն
9 mtvՎ գրամատիկոս փխ գրամարտիկոս
9—10 Մ-Թ առաքինութեամբ հոգևորական
10 fh լուսաւորեալք, tvՎ չիք և լուսաւորք
11 abcdefghijkmnoptuvwՎ հոռմայեցին (bd հոռմաեցին, e հոռմայեցի) փխ հոռոմայրեցի
11 cd չիք և
12 Մ-Թ և մի երկու ՁՁ մեծն ստեփաննոս փխ մեծ իմաստասէրն Ստեփանոս
12 acdeopstv ստեփաննոս
12 bcdopwՎ մովսէսի, g մօվսէսի
12 m ի վերոյ, Վ ի վերագոյն, o վերագոյն, p վերագոյնն
12—13 bhostvՎ յիշեցաք
13 ā թարգմանիչք, fghm թարքմանիչ
13 op եղև յունականէն, stvՎ ի յունէն
13 nop լեզուս
13 e չիք և
14 fh թարքմանութեանն, eՎ թարգմանութեան
14 cdijp շարականաւ
15 cd կցորդիւ, ijp կցորդաւ, begstvwՎ կցորդս
15 cd այլ (c այ) երգ, tv չիք այլ
15 cdij չիք արար
15 cistvՎ չիք համառօտ
15 w աւետարանաց, o աւետարանչաց, i աւետարանին
16 bc յոբա, d ոբայ
16 Վ շրթանց

*Ասի վասն սրբոյն Ստեփաննոսի, թէ ի մանկութեանն վարժ և կիրթ էր գրովք սրբովք։ Հանդիպի նմա հակաճառ ասպետն Սմբատ՝ երկարնակ այր։ Եւ թողեալ զնա յանհաւանութեան՝ գնաց ի Հոռոմս. և գտեալ անդ միայնակեաց մի ուղղափառ՝ դադարեաց առ նմա և ուսանէր ի նմանէ։ Եւ լուեալ Սմբատայ, գրէ առ թագաւորն հոռոմոց, թէ Ստեփաննոս հերձուածող, որ հայհոյէ զդաւանութիւնդ ձեր, այդր դադարեալ է առ այս անուն միայնակեցի։ Եւ յոյժ ցասուցեալ թագաւորն՝ խնդրէ զնա ի դուռն։ Եւ խրատ ետ նմա միայնակեացն ասել զինքենէ, թէ՝ «Մուրացիկ եմ թափառական»։ Եւ լուեալ զայն կայսերն՝ շիջաւ ցասումն բարկութեան նորա։ Եւ գտեալ համարձակութիւն Ստեփաննոսի աղաչեաց զկայսրն բանալ նմա զարկեղս գրոց սրբոց։ Եւ գտեալ մատեան մի ոսկետիպ սակս հաւատոյ՝ մատոյց առաջի կայսերն և ընթերցեալ զայն, յղէ զնա ի Հռոմ քաղաք՝ բերել անտի երիս գիրս՝ համաբարբառս այնմ գրոց, յաղագս ճշմարիտ հաւատոյ, զի զաշխարհն յայն կրօնս դարձուցեն։*

1 o *ասի և վասն*
1 b *ներսէսի* փխ *Ստեփաննոսի*
1 eopsu *ստեփաննոսի*
1 e *ի մանկութեան*, iopstvwՎ *ի մանկութենէ*, m *ի մանկութենէն*
1 h չիք *կիրթ*
2 ip *գրօք սրբօք*, stvՎ *սուրբ գրոց* փխ *գրովք սրբովք*
2 cdenop *հակաճառապետն* փխ *հակաճառ ասպետն*
2 stvՎ *հակաճառարան սմբատ* (v *սըմպատ*) *այր երկարնակ*, (չիք *ասպետ*)
3 gjp *անհաւանութեան*, o *անհաւանութեամբ*
3 tՎ *գնայ*
3 opuw *ի հոռոմս*, stv *ի հռոմ*, Վ *ի հռովմ*
4 o *և դադարեաց*
4 svՎ *ուսաւ*, t *լուաւ* փխ *ուսանէր*
4—5 t չիք *և լուեալ*
5 b *սմբատա*, n *սմպատայ*
5 i *և գրէ*
5 t *հռոմոց*
5 i չիք *թէ*
5 abcefpsv *ստեփաննոս*
5 d *հերձուածոր* (sic)
6 stvՎ *զդաւանութիւնս*
6 g *արդ* փխ *այդր*
6 no *որ* փխ *առ*
6—7 abcdefghijknopw *միակեցի* փխ *միայնակեցի*
6—7 t չիք *միայնակեցի...խրատ ետ նմա*
7 *Մ-Թ* և մի քանի ՁՁ չիք *ի դուռն*, no *ի դուռն զնա*
8 fh *միակեացն*
7—8 vՎ *և ետ նմա խրատ*
8 ij չիք *ասել*
8 d *եմ ես*
9 vՎ *կայսեր*
9 o *ի ցասմանէն*
9 o չիք *բարկութեան նորա*
9 vՎ չիք *նորա*
10 aekp *ստեփաննոսի*
10 o *ասէ ստեփաննոսի*
10 i *զկայսերն*
10 n *զարգեղս*
10 stvՎ չիք *նմա*
11 stvՎ *գտին* փխ *գտեալ*, w *գրեալ*
11 d *մատանի* փխ *մատեան*, ij *մանեան* փխ *մատեան*
11 *Մ-Թ* afh և մի երկու ՁՁ *ոսկետուփ*, *ոսկետուփս*, bcdeg *ոսկէտիպ*, s *ոսկետիփ*
11 no չիք *հաւատոյ*
11 stuvՎ *մատոյց* (t *մատուց*) *զայն*
12 *Մ-Թ* *կայսեր*
12 Վ չիք *զայն*
12 stvՎ *զնա ի Հռոմ յղէ*
12 stvՎ չիք *քաղաք*
12 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *բերեալ*
12 af *անդի*
13 i *գիրս երիս*
13 no *հայոց բարբառս* փխ *համաբարբառս*
13 h *ճիշդ հաւատոյ*
14 i *յայնմ*
14 cdijoptuvw *այն*, gs *զայն*
14 cd *կրաւնս*
14 istvwՎ *ի կրօնս*

*Իսկ նորա զգրեանն ի Հռոմայ առեալ՝ անփոյթ զհրաման ինքնակալին արարեալ, գայ ի Դուին քաղաք՝ զիւր աշխարհն նորօք լուսաւորել։ Եւ ձեռնադրէ զնա տէր Դաւիթ եպիսկոպոս Սիւնեաց, ի խնդրոյ Քուրդոյի և Բաբգենի իշխանաց Սիւնեաց։ Եւ զմի ամ կալեալ զաթոռն, սպանեալ եղև ի պոռնիկ կանանց ի Մոզն գաւառի. զորոյ զմարմինն առեալ բերին յԱրկազան սենեակն, և անտի ի Թանատաց վանս փոխեցին ի հանգիստ։*

*Եւ բերեալ զգրեանն երանելւոյն Ստեփաննոսի ի Հռոմայ յեպիսկոպոսութիւնն Սիւնեաց, յերրեակ դասու եպիսկոպոսացն Հայոց կարգեցաւ։*

*Իսկ միայնակեաց ումն, Նոյ անուն, տեսանէր ի տեսլեանն, զի Ստեփանոս զգոգն արեամբ լի առաջի Փրկչին ունէր և ասէր. «Տես, տէր, զայս, զի քո են դատաստանք արդար»։ Եւ ազդեալ միայնակեացն ի գաւառն զգալ բարկութեանն և բողոքէ կալ յաղօթս։*

*Եւ ահա խաւար ի վերուստ անտեսանելի կալաւ զՄոզանն սահման, և զաւուրս քառասուն շարժեցաւ վայրն, և խորասոյզ եղեալ ընկղմեցան կենդանւոյն ոգիք իբրև տասն հազար։ Վասն այնորիկ Վայոց ձոր անուանեցաւ մինչև ցայսօր ժամանակի։ Եւ բազում բժշկութիւնք լինին ի նշխարաց նորա, որք հաւատով ապաւինին ի բարեխօսութիւն սրբոյն, ախտա-*

1 stvՎ չիք *նորա*
1 vՎ *զգրեանս*
1 bd *ի հռոմա*
1 stuvwՎ *անփոյթ արար զհրամանս* (w *զհրաման*) *ինքնակալին*
2 abcdefghmostuw *ի դվին*
2 Վ *քաղաքն*
2 cd *նորոգեալ* փխ *նորօք*, ijp *նորոգեալ լուսաւորէ* (j *լուսաւորել*)
2 stv *լուսաւորեալ*
3 novՎ *սիւնեաց եպիսկոպոս*
3 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *քուրթոյի*, cd *քուրդոի*, fh *քութոյի*, ip *քրդոյ*, stv *քուրդոյ*, Վ *քուրդքոյ*
4 nos *բաբգենոյ*, Վ *Բաբգինի*
4 b *իշխանեացն*, s *իշխանացն*
4 stvՎ *և մի ամ*
4—5 i *սպանեալ եղև պոռնիկ կանանց* (չիք *ի*), m *ի պոռնիկ կնոջէ միոյ*
5 d *մոզին*, t *խոզն* փխ *Մօզն*
5 *մարմինն*, Վ *զմարմին*
5—6 i *յարկազեան*, stvՎ *ի կազեան գաւառին և անտի ի թանատեաց*, uw *յարկազեան*
7 stv *բերին երանելւոյն գրեանս ի հռոմայ* (չիք *Ստեփաննոսի*), Վ *և ի բերելն երանելւոյն զգրեանս ի Հռոմայ* (չիք *Ստեփաննոսի*)
7 abcdefhj *երանելոյն*
7 ab *ի հռոմա*
7 efhop *ստեփաննոսի*
7—8 bcdfioՎ *եպիս/կոպոսութիւն*
7—8 begi *եպիս/կոպոսութիւն*, o *եպիս/կոպոսին*
8 tv *երրեակ*
8 tvՎ *դասս*
8 o *յեպիսկոպոսացն*, tvՎ *հայոց եպիսկոպոսաց*
9 beghՎ *ի տեսլեան*
9—10 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *ստեփաննոս*
10 i *գոգն*, vՎ *լի արեամբ զգոգն*
10 i *առնէր* փխ *ունէր*
11 *Մ-Թ* և այլ ՁՁ *քոյ*
11 beginpstՎ *դատաստանքդ*
11 o *միայնակեցին*
12 tՎ *բարկութեան*
12 o *գալ* փխ *կալ*
13 stuvwՎ չիք *ի վերուստ անտեսանելի*
13 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *սահմանն*
13 suw *զմոզանայ սահման*, tvՎ *զմոզան սահման*, p *զմոզն սահման*
14 stuvw *զաւուրս* ~~*խ*~~
14 stvՎ *տեղն* փխ *վայրն*
14 no *լեալ* փխ *եղեալ*
15 abcdgh *կենդանոյն*, stvՎ չիք *կենդանւոյն*
15 h *տաս*, o *Ժ ռ ք* (*տասն հազարք*)
15 tvՎ *այն* փխ *այնորիկ*
16 np *բժշկութիւն*
16 k *լինէին*
17 i *ի նա ապաւինին*
17 bd *ի բարեխաւսութիւն*, afgh *ի բարեխօսութիւնն*
17 ip *յախտացելոց*, j *ի ախտացելոց*

ցելոց ի պէսպէս ցաւոց և ի հիւանդութեանց. զի ստացուած զփառաւորիչս իւր փառաւորէ աստ և ի հանդերձելումն տալ զպատրաստեալ բարիսն, «զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ»*։

Եւ ապա տէր Եսայի, յԵղապատրուշ գեղջէ, կոչի շնորհօքն աստուծոյ ի պէտս ժողովրդեան իւրոյ ի քահանայութեան և յեպիսկոպոսութեան կարգէ ի հայրապետութիւն արժանապէս ամս երեքտասան։ Եւ յետ վախճանի նորա Իպնդօկլ կողոպտէ զեկեղեցին, և բազում կաշառօք յաջորդէ տէր Ստեփաննոս ամ մի։ Սա էր ի Դունայ։ Եւ յետ նորա տէր Յովաբ ամ մի. սա էր յՈստանէն ի կուրապաղատէն։ Եւ զկնի նորա տէր Սողոմոն ամ մի. սա էր ի Մաքենոցաց վանիցն՝ ծերացեալ յոյժ։ Եւ յետ նորա տէր Գէորգ ամս երիս, որ Խոյլ-Որբուկն կոչէր. սա էր յԱրագածոտանէ։ Եւ յետ նորա տէր Յովսէփ ամս մետասան. սա էր յԱրագածոտանէ ի բնակչաց սրբոյն Գրիգորի։

* Ա. Կորն. Բ. 9.

1 Մ-Թ և մի երկու ՁՁ ի պէսպէս ցաւս և ի հիւանդութիւնս, o և պէսպէս ցաւոց և հիւանդութեանց
1—2d փառաւորիչս
2 tv չիք իւր
2 Մ-Թ հանդերձեալն փխ հանդերձելումն
2—3 Մ-Թ և մի երկու ՁՁ չիք 'տալ զպատրաստեալ... ոչ անկաւ'
4 bn Եսաի
4 ip Եսայի ի Նիգ գաւառէ
4 n յեղապարուշ (sic), suvw յեղապատրոշ, Վ յեղապատրօշ
4 dh շնորհաւքն
4 o քրիստոսի փխ աստուծոյ
5 stv ժողովրդեանս, w ժողովրդեանն
5 d իւրո, stvՎ չիք իւրոյ
5—6 stvՎ ի քահանայութիւն, յեպիսկոպոսութիւն և ի հայրապետութիւն ամս երեքտասան (չիք կարգէ, արժանապէս)
5 g եպիսկոպոսութեանն
5—6 o եպիսկոպոսութեան կարգի
6 abcdefh ի հայրապետութեանն, ijnop ի հայրապետութեան
7 bfghouw իպնդօկլ, i իպանտանդկու, p իպնդանկու, svՎ իպնդօկն, t ի պանդօկն, Մ-Թ և մի քանի ՁՁ իպնդաւկլ
7 cdijp կողոպտէին
7 no եկեղեցին
7 t կառօք (sic)
7 abcdkw յաջորդի
8 eop ստեփաննոս
8 Մ-Թ և մի երկու ՁՁ ի դվնայ, ab ի դվնա, ip ի դուին քաղաքէ
8 Մ-Թ և մի քանի չիք տէր, g տէր մովաբ (sic), Վ տէր յակոբ
9 Մ-Թ և մի շարք ՁՁ սա յուստիանէն, afhm յուստանէն, ijp սա էր յոստան գաւառէ, no սա էր ոստանէն, stuvw սա էր ի ոստանէն
9 abcdfghjmnow կիւռապաղատէն (կիռապաղատէն, կիւրապաղատէն), Վ ի կուրապաղատին տանէն (?), ip ի կուրապաղատէն ապարանից
9 t չիք նորա
9 bcdgjw սողովմոն
9 cd չիք տէր
10 b մաքենացոց, cd մա...նոցաց
10 ijp սա էր ի քաղաքայ (j ի գիւղաքաղաքէն, p ի քաղաքագեղջէն) գառնոյ և կոչեցաւ ի հայրապետութիւն ի մաքենացւոց (p մաքենացոց վանիցն)
10 cd ծերացեալ էր
10 m իսկ յետ փխ եւ յետ
11 c գէորք
11 cdij ամս Ծ
11 Մ-Թ Խոյլ-Որբուկն փխ Խոյլ-Որբուկն, svwՎ խուլ որբուկն, t խուլ և բուկն
11 s կոչիւր
11 bop արագածոտանէ, d արագածոտանէն, c արագածոյտանէն
12—13 ij սա էր արագածոտանէն ի բնակչոց սրբոյն գրիգորի, t չիք 'սա էր յարագածոտանէ'
12 b յօսէփ
11—12 cdijp չիք 'եւ յետ նորա տէր յովսէփ ամս մետասան. սա էր յԱրագածոտանէ'
12 o արագածոտանէ, stvՎ չիք յարագածոտանէ

Իսկ յետ Կոստանդնի կայսեր առնու զԹագն Լևոն, և յետ նորա Կոստանդին և Եռինէ մայր իւր։ Ի սոցա աւուրս կանգնումն եղև պատկերացն ի Հռոմ։

Եւ եղև սոցա տեսանել տապան մի մեծ մարմարեայ, և զարմացան, և հրամայեցին բանալ զտապանն, և գտին գրեալ ի նմա, Թէ՝ «Զի՞նչ օգուտ է ծածկելդ զիս, զի յաւուրս Կոստանդեայ և Եռինեայ, մօր նորա, տեսանելոց է արեգակն զիս»։ Եւ յետ տասն ամի ի միասին Թագաւորելոյ՝ ընկէց զմայրն իւր Կոստանդին և ինքն Թագաւորեաց ամս եօԹն։ Եւ ապա ըմբռնեալ մօրն զորդին՝ փորեաց զաչս նորա և ինքն Թագաւորեաց ամս հինգ։ Եւ յետ նորա Թագաւորեաց Նիկիփոր։ Յաւուրս սորա երկու եղբարք Սահակ և Յովսէփ իմայելացիք կատարեցան վկայուԹեամբ ի Քրիստոս ի Կարնոյ քաղաք յարաց ի ժԵ։ Եւ յետ նորա Թագաւորեաց Միքայէլն։ Յաւուրս սորա սով սաստիկ եղև ընդհանուր։ Յաւուր միում ի քաղաքին Կարնոյ գտին մեռեալ երեք հազար։ Եւ յետ նորա Լևոն։ Սա զպատկերսն ընկէց և շինեաց զԹիւզու և զԱրկադուպօլիս։

Իսկ յետ այրելոյ զիշխանսն Հայոց ի Նախճաւանի, յետ յիսուն և չորս

1 i կոստանդին, Վ կոստանդի
1 i յետ լևոնի փխ յետ նորա
2 v յեռինէ
4 abc մարմարեա
4 h զտապան
5 c եԹէ, d և Թէ, i չիք Թէ, j և եԹէ զինչ
5 fh գործեալ փխ գրեալ
6 cd ծածկեալդ
6 go աւուրս
6 ab կոստանդեա և եռինեա, bo եռինէ. mtv եռինայ
6 s և մօր նորա եռինեայ
6 i մայր նորա
7 o զիս արեգակն, tvՎ տեսցէ զիս արեգակն
7 o չիք և
7 c յետոյ ժ ամ, d յետո ժ ամի
7—8 d ընդէց
8 stvՎ չիք իւր
8 Մ-Թ և մի երկու ՁՁ հինգ փխ եօԹն
8 k չիք ամս
8—9 bcdijp չիք 'Եւ ապա ըմբռնեալ մօրն զորդին՝ փորեաց զաչս նորա, և ինքն Թագաւորեաց ամս հինգ'
9 stvՎ ըմբռնեաց մայրն
9 aefhmno-uvwՎ բրեաց փխ փորեաց
10 e եւ նոցա փխ եւ յետ նորա
10 fhouՎ նոցա փխ նորա
10 Մ-Թ և մի քանի ՁՁ Նիկիփոռ, s Նիկիփօռ
10 uw չիք սորա
10 g աւուրս
10 stvՎ ի սորա աւուրս
11 b յօսէփ, s յօսէփ որք իմայելացիք էին
11 d իմայէլացիկ, g իմայէլացող, ip յիմայէլացոցն, tԱԳ յիմայէլացւոց
12 d ի կարնո
12 bcd չիք քաղաք, tvՎ քաղաքին
12 tv արաց ժե, ijp յարաց ի ժէ, Վ յարաց հնգետասան
12 b միքաէլն, vՎ միքայէլ, s միգայէլ
13 Մ-Թ չիք եղև
13 o ընդհանուր ≈ (աշխարհ), a ընԹհանուր, b ընԹանուր
13 Վ և յաւուր միում
13 cd ի քաղաքէն
13—14 s և ի քաղաքին կարնոյ գտան մեռեալք յաւուր միում
13—14 Վ չիք ի քաղաքին Կարնոյ
14 Մ-Թ և մի երկու ՁՁ գտան
14 Վ մեռեալս
14 abcjtv կարնայ
14 bcij զպատկերս
15 stvՎ ընտրեաց փխ շինեաց
15 t բուզու, vw բիւզու
15 d զարկադուպաւլիս
16 m այրելոյն
16 stvՎ զիշխանս
16 suvՎ չիք հայոց
16 dg ի նախճուանի, ip ի նախչաւան, ns ի նախչուանի, m ի նախջաւանի, ovՎ ի նախջուանի
16 Մ-Թ յիսուն, t ծդ փխ ծդ, ինչպես բոլոր ՁՁ մեջ, noՎ յիսուն չորս (Վ և չորս)

ամի Հայոց մարզպան եղև Աշոտ-Բագրատունի ամս եօթն և տասն. և յետ նորա Սմբատ ամս քսան և երկու. և յետ նորա Աշոտ Մսակերն ամս քսան. և ապա Սմբատ՝ որդի Աշոտայ, որ Աբլաբասն կոչէր, ամս երեսուն և հինգ։ Սա շինէ զսուրբ քաւարանն մեծապայծառ զարդու յՕրազգաւորս, որ արդ Շիրակաւանն կոչի։

Իսկ զիշխանութիւնն Իսմայէլի յետ Աբդլայի առնու Մահադի, և ապա Մուսէ, և յետ նորա Ահարոն, և յետ նորա Մահամադ, և ապա Մահմուն, և ապա Աբուսահակ Մահմետ, և յետ նորա Ահարոն։

Իսկ յետ Յովսեփայ եղև կաթողիկոս տէր Դաւիթ ամս քսան և հինգ. սա էր ի Մազազայ՝ ի գեղջէ Կակաղայ։ Եւ յետ նորա տէր Յովհաննէս ամս քսան և երկու. սա էր ի գաւառէ Կոտայից՝ ի գեղջէ Ովայից։ Յութերորդ ամի սորա չարախօսք ոմանք ի նմին տանէ բանս հայհոյութեան խօսէին զսրբոյն, որք չարամահ սատակեցան նանրալեզուքն, որպէս այնոքիկ, որք առ Նարկեսոսիւն էին, Երուսաղէմի եպիսկոպոսիւ։ Եւ յետ նորա տէր Զաքարիայ. սա էր ի Կոտայս գաւառէ՝ փ գեղջէն Ձագայ. ի միում աւուր ամենայնին արժանաւորեալ՝ սարկաւագութեան և քահանայու-

1 i չիք հայոց
1 b բագրատոնի
1 fh ամս ժե (h հնգետասան)
2 i չիք նորա
2—3 Վ չիք 'սմպատ ամս քսան և երկու։ Եւ յետ նորա աշոտ մսակերն ամս քսան և ապա'
3 n սմպաթ, tv սմպատ որդի աշոտայ
2—3 st չիք 'ամս քսան և երկու... և ապա սմբատ'
2 i մսակեր
3 Վ և յետ նորա փխ և ապա
3 Մ-Թ և մի քանի ՁՁ աշոտոյ
3 Մ-Թ և մի շարք ՁՁ Աբլապասն, abc ofhijp ապլաբասն, no ապլապաս, sv աբլաբանս, tuw աբլաբանսն
3 s կոչիւր
4 stvՎ չիք զսուրբ
4 tvՎ զքաւարանն փխ զսուրբ քաւարանն
4 stuvՎ յերազգաւոր
5 ip շիրակաւան, o շիրակավանս
6 e զիշխանութիւն
6 s իսմայիլի
6 b աօդլաի, tvՎ աբդլայ, g ապդլայի, n ապտլայի
7 m և ապա ահարոն փխ և յետ նորա ահարոն
7 s հարուն փխ ահարոն
7 Մ-ԹՎ և մի երկու ՁՁ մահամատ, no մուհամատ, s մահմատ, t մահմետ
7 svՎ մահմուտ, t մահուտ (sic)
8 ip մահմեդ, no մահմատ, Վ մահմէտ
8 t չիք նորա
8 s հարուն փխ ահարոն
9 ad յովսեփա, s յօսեփայ
9 ip իսկ յետ գէորգայ առնու զկաթողիկոսութիւնն տէր յովսէփ ամս ժա ի գեղջէ ուստի տէր գէորգ էր յետ նորա տէր դաւիթ, հմմտ էջ 75 տ. 11—12
10 abc ի մազազա, ip ի գաւառէ մազազայ
10 abd կակաղա, s ԱԲԳ կաղկաղայ, o կաղաղայ
10 ovՎ չիք տէր
10 Մ-Թ v և մի երկու ՁՁ յոհանէս, a յովհանէս, bip յոհաննէս, g յովանէս
11 Մ-Թ չիք և
11 d ի գաւառէն
11 bd ովաից, fh ջովայից
11—12 Մ-Թ և մի երկու ՁՁ յութերորդի, b և յութերորդ ամի, gno ութերորդ ամի
12 ad չարախաւսք
12 g հայհոյութեանն
13 stvՎ չարամահք
13 stvՎ նանրալեզուք
14 stvՎ որ փխ որք
14 c ներկեսոսիւն, eg նարկեոսիւն, n● կէսնարուսիւն (=նարկոսոսիւն), stv նարկէսոսին, Վ Նարկեսոսիւ
14 ip չիք էին
14 d յեմի, g յերուսաղէմի, svՎ երուսաղեմայ
14 o եպիսկոպոսին
14 Մ-Թ և մի երկու ՁՁ չիք տէր
15 ab ձագա, i ձագուց
16 o ամի փխ աւուր, v յաւուր
16 gi ամենայնիւ, p յամենայնի

*թեան և կաթողիկոսութեան, այր սուրբ և առաքինի ամս քսան և երկու։*

*Ի սորա աւուրս եկաց գլուխ Իսմայէլի այր ոմն անօրէն և աստուածատեաց, Ջափր անուն նորա։ Սա յոյժ մախայր ընդ անունն Քրիստոսի, և զբազումս հրապուրէր յուրացութիւն և զևս բազումս, որք ոչ հաւանէին նմա, սպանանէր դառն տանջանօք։ Բազում չարիս գործեաց նա ընդ աշխարհս, որ ընդ իշխանութեամբ նորա էին, ևս առաւել ընդ աշխարհս Հայոց՝ սպանմամբ և գերութեամբ, քանզի առաքեաց ոստիկան մի Ապուսէթ անուն, որոյ եկեալ կալաւ զիշխանն Տարօնոյ զԲագարատ և զայլս բազումս։ Զոր իմացեալ բնակիչք լերինն Խոյթայ, որ Սասունքն անուանին, եկեալ սպանին զԱպուսէթն, զոր լուեալ Ջափրի՝ բարկացաւ յոյժ և առաքեաց զօրագլուխ մի՝ Բուղայ անուն, թուրք ազգաւ, այր խորամանկ և անօրէն. որ եկեալ աւերեաց զաշխարհս Հայոց՝ զո՛ր խաբէութեամբ և զո՛ր պատերազմաւ, և խաղացոյց ի գերութիւն ի Սամառայ, որ և զՍմբատ ասպարապետն Հայոց խաբէութեամբ տարաւ առ Ջափր։ Եւ նա եդ զնա ի բանտի, զի ուրասցի զՔրիստոս. որ ոչ հաւանեալ հրամանի անօրինին, այլ համարձակութեամբ զՔրիստոս խոստովանեցաւ և պահեցաւ ի նմին բանտի, մինչև անդէն մեռաւ, և զխոստովանողական անունն ժառանգեաց։ Եւ այլ բազումք վկայեցին վասն Քրիստոսի, և մեռան յանօրինէն։*

1 bcds չիք *և*
1 e *կաթողիկոսութեանն*
1 *Մ-Թ* *քսաներկու*
2 g *յաւուրս*
2 s *իսմայիլի*, t *իսմայէլ*
3 *Մ-Թ* և մի շարք ՁՁ *ջամբր*, Վ և մի երկու ՁՁ *ջաբր*
3 sՎ չիք *նորա*
3 t չիք *'անուն նորա... ընդ'*
3—4 i *յանուն քրիստոսի*
4 o *հրաւիրէր* փխ *հրապուրէր*
4 no *ուրացութիւն քրիստոսի*
4 no չիք *զևս*
5 no չիք *նմա*
5 adf *տանջանաւք*
5 vwՎ *և բազում*
6 b *սա* փխ *նա*
6 imst *որք* փխ *որ*
6 no *էին. նորա*
6 tvՎ չիք *նորա*
8 s *արուսէթ*
8 d *որո*, i *յորո*, s *որ* փխ *որոյ*
8 no *զիշխանսն*
8 cd *տարաւնոյ*
8 m *բագարատ*, o *զբագրատ*
9 e *զայլ*
9 c չիք *բնակիչք*
9 bc *խոյթա*, imptuvw *խոթայ*, s *խութայ*, Վ *խօթայ*
9 i *որ առաստունքն* (թերևս *որ սանասունքն*)
9 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *սասունք*
10 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *անուանէին*, i *անուանեն*, t *անուանի*
10 s *զարուսէթն*
10 j *որ* փխ *զոր*
10 *Մ-Թ* և մի շարք ՁՁ *ջամբրի*, Վ *ջաբրի*
11—12 u *խորամանգ*
12 i *եկաց* փխ *եկեալ*
12 es *զորս...զորս*
12 tv չիք *'և զոր'*
13 stuv *զգերութիւն* փխ *ի գերութիւն*, Վ *զգերութիւնն*
13 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *սամարայ*, abՎ *սամառա*
14 n *զոր և*, o *և զոր*
14 afhtv *զսմպատ*, no *ի սմպատ*
14 cd *սպարապետն*, tvՎ *սպարապետ*, m *ասպարապետ*
14 *Մ-Թ* և մի շարք ՁՁ *ջամբր*, Վ *ջաբր*
14 bcd չիք *և*
15 bcdopsw *բանդի*
15—16 *Մ-Թ* չիք *հրամանի*, n *հրամ անօրինին*, o *հրամանի անօրէնին*
16 *Մ-Թ* *համարձակապէս* փխ *համարձակութեամբ*
16 nö *զքրիստոս աստուած*
17 bcdop *բանդի*
17 b *անդէն ի նմին*
17 ijstv *խոստովանական*, Վ *զխոստովանական*
17 egijmopՎ *անուն*
18 ijsuwՎ *այլք*
18 ipnՎ *բազում*
18—19 d *անաւրինէն*, no *անօրինէն*

Եւ զսարկաւագ ոմն՝ ասորի, անուն Նանան, վասն համբաւոյ վարդապետութեան նորա ըմբռնեալ ածին առաջի Ջափրի. և համարձակութեամբ խոստովանեցաւ զՔրիստոս. և տանջեալ զնա և բանտարգել արարեալ յոլով ժամանակս, յետոյ արձակեցաւ խնամօքն աստուծոյ, որ և գրեաց զմեկնութիւն աւետարանին Յովհաննու լուսաւոր բանիւք։ Նոյնպէս և յիշխանացն Հայոց Ստեփանոս անուն, որ Կոնն կոչէր, նահատակութեամբ կատարեցաւ ի Քրիստոս, և բազումք ուրացան զճշմարիտն աստուած վասն երկիւղի մահուն։ Եւ այլ յոլովակի չարիս անցոյց ընդ աշխարհս, զորս գտցես ի գիրս Թումայի և Շապուհոյ և այլոց պատմագրացն։

Ի թուին հայոց ՃՂԴ, և ասորւոց ՌՀԳ, շինեաց Ջափր զԲաղդատ ի վերայ Տիգրիս գետոյ չորս աւուր ճանապարհաւ հեռի ի Բաբիլոնէ։ Եւ ծնաւ կին մի, երեսուն տարի ապրեցաւ, ոչինչ չկերաւ։

Իսկ զկնի մահուան խոստովանողին Սմբատայ առնու զիշխանութիւնն Աշոտ, որդի նորա։ Սա ամենայն նախնեաց վեհագոյն գտաւ, զի զկնի սպարապետութեան իշխանաց իշխան եղև, եւ ապա թագաւորեաց յերկո-

1 i չիք ասորի
1 i ոմն անուն անանուն (sic)
1 kv անունն
1 i վասն համբաւուց
1—2 Մ-Թ և մի երկու ՁՁ վարդապետութեանն
2 stvՎ չիք նորա
2 d ըմպռնեալ
2 Մ-Թ և մի քանի ՁՁ ջամբրի, Վ մի երկու ՁՁ ջաբրին
2 mstvՎ և նա
2—3 stvՎ խոստովանեցաւ համարձակութեամբ
3 egn տանջել
3 Մ-Թ և մի երկու ՁՁ արգել ի բանտ, bcdjm և բանդարգել արարեալ, ip և բանտարգել արարին, o եհար ի բանդ, stv և բանդարգելեալ յոլով, Վ և ի բանդն արգելեալ
3—4 cdij յոլովի
5 Մ-Թ յոհաննու, b յօհաննու
5 Մ-Թ և մի երկու ՁՁ չիք մի ոմն
6 Մ-ԹՎ և մի քանի ՁՁ ստեփաննոս
6 d կոնոն փխ Կոնն
6 s կոչիւր
6—7 stuvwՎ նահատակեցաւ փխ նահատակութեամբ կատարեցաւ
7 d աստուածն, j զճշմարիտ աստուած, ost զքրիստոս աստուած ճշմարիտ, Վ զՔրիստոս ճշմարիտն աստուած, v զքս ճշտ ածն
8 w երկեղի
8 o մահուանէն
8 Վ այլ և
8 i յոլով կարի չարիս անցոյց աշխարհս
8 Մ-Թ և մի երկու ՁՁ ընդ յաշխարհս
8 ijp չիք ընդ
9 bcdtuvwՎ զոր փխ զորս
9 tuvwՎ ի գիրսն
9 b Թումաի, cdegjo Թովմայի, n Թոմայի
9 o ի փխ և
9 stuvwՎ շապուհի
9 m այլ փխ այլոց
9 Վ պատմագրաց
10 bdfh ի թվին, sv ի թվականին, t թվականին, Վ ի թվականին
10 hՎ հարիւր իննսուն և չորս
10 bcdefnopstv ասորոց
10 tv ռհգ, Վ հազար եօթանասուն և չորս, cdj ռճգ
10 Մ-Թ և մի քանի ՁՁ ջամբր, Վ ջաբր
10 Մ-ԹvՎ և մի երկու ՁՁ զպաղտատ, aimosuw զբաղտատ, gh զպաղդատ
11 lp աւուրբ, s աւուրբք
11 abcdefghijkmnopstuvw չիք ճանապարհաւ, որը կա Մ-Թ և Վ մեջ
11 bcdestvՎ ի բաբելոնէ, uw ի բաբիլովնէ
12 bo և ոչինչ
13 stvՎ չիք մահուան
13 a ոմպատա, ftv սմպատայ, bd սըմբատա
13 e զիշխանութիւն
14 iՎ նախնեացն
14 u իսկ փխ զի
15 bcdeisvՎ սպարապետութեանն

*ցունց թագաւորացն յիմայելականէն և ի յունականէն։ Քանզի յետ Ջափրի առնու զթագն Մահմետ. և ապա Ահմատ. ապա Աբդլա. և ապա Մահմետ։ Սա իշխանաց իշխան կացոյց զԱշոտ, և ապա թագ ետ նմա։*

*Իսկ յետ Լևոնի կայսեր առնու զթագն Միքայէլն, և յետ նորա Թէոփիլոս, և զկնի նորա Միքայէլն, և յետ նորա Վասիլն, զսա ասեն ի Տարօնոյ, ի գեղջէ Թլայ։ Սա շինեաց զսուրբ Զօրավարն. սա դարձեալ թագ առաքեաց, Աշոտայ ի վերայ իմայելականին։ Առ Աշոտ գրեաց թուղթ պատրիարքն Կոստանդնուպօլսի Փոտ, և առաքեաց մասն ի տէրունական խաչէն, որոյ պատասխանի գրեաց հրամանաւ Աշոտայ վարդապետն Իսահակ՝ գեղեցիկ և իմաստասիրական։*

*Արդ ի բառնալոյ թագաւորութեանն Արշակունեաց մինչև ցթագաւորութիւնն Բագրատունեաց լինին ամք չորս հարիւր երեսուն և չորս։*

*Ի ՅԼԴ թուականին հայոց թագաւորեաց Աշոտ, ա՛յր երկիւղած յաստուծոյ և բարեպաշտօն, և զարդարիչ եկեղեցւոյ, և սիրող պաշտօնէից աստուծոյ, որ զարդարեաց զեկեղեցիս հայոց մեծաւ զարդուք և պայծառութեամբ, երեսուն երկու ամ իշխանաց իշխան կացեալ, և հինգ ամ թագա-*

1 cdj *երկոցունց*
1 svՎ *թագաւորաց*, i չիք *թագաւորացն*
1 cdj *իմայէլականէն*, o *իմայէլականին*, stv *յիմայէլէն*, Վ *յիմայելէն*
1 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *յունականէն*, o *յունականին*
1 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *ջամբրի*, j *ջամրի*, Վ *Ջաբրի*
2 i *մահմեգ*
2 i *ահմադ*
2 *Մ-Թ*d *Աբդիլայ*, Վ *ապդլայ* ՁՁ ի մեջ հանախ *աբդիալա*
2—3 no *մահմատ*, stvՎ *մէհմէտ*
3 *Մ-Թ* *իշխանացոյց* փխ *իշխանաց իշխան կացոյց*
3 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *եդ* փխ *ետ*
4 Վ *միքայէլ*
4—5 stuvwՎ չիք *'և յետ նորա Թէոփիլոս, և զկնի նորա /միքայէլ*
5 stuvwՎ չիք *միքայէլն*
5 Վ *վասիլ*
6 mnosՎ *գեղջէն*
6 ab *Թլա*
6 bcdistvՎ չիք *զսուրբ*
6 ad *զաւրավարսն*, bcefghmnw *զօրավարսն*, stvՎ *զզօրավարն* փխ *զսուրբ զօրավարն*
6—7 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *ետ* փխ *առաքեաց*, afhm *թագաւորեաց* (af *թգրց*) փխ *թագ ետ*
7 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *աշոտոյ* (d *աշոտո*)
7 h *իմայելականին*
7 vՎ *և առ*
7 bd *թուխթ*, c *թուխտ*
8 bd *կոստանդինուպաւլսի*, egvՎ *կոստանդինուպօլսի*
8—9 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *ի խաչէն տէրունական*
9 d *որո*
9 o *պատասխանեալ* փխ *պատասխանի գրեաց*
9 dijkp *հրամանաւն*
9 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *աշոտոյ*
9 k *վարդապետ*
9 a *իսաակ*
11 fhi *ի բառնալ*
11 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *թագաւորութեանցն*
11—12 g *մինչև ց գ թագաւորութիւնն* ijnop չիք *'մինչև զթագաւորութիւն բագրատունեաց'*
12 efg *նլդ*, Վ *չորեք հարիւր երեսուն և չորս*
13 abcdfijm *որ յլդ*, egstuvw *յգճլ և դ*, nop *որ երեք հարիւր լ և դ*, Վ *որ յերեք հարիւր երեսուն և չորս*, *Մ-Թ* չիք *ի*
13 bf *թվականին*, stuvw *թվին*, Վ *թուին*
13—14 cdo *աստուծոյ*
13—14 g *յաստուծոյ բարեպաշտօն* (չիք *և*)
14—15 ijp չիք *'և բարեպաշտօն...պաշտօնէից աստուծոյ'*
14 cd *եկեղեցոյ*
15 o *աստուծոյ* փխ *հայոց*
15 mnotvՎ *զարդիւք*
16 stv *զամս լբ*, Վ *զամս երեսուն և երկու*
16 m *կոչեցեալ*, ip *եղեալ* փխ *կացեալ*

*տրեալ Հայոց, և փոխեցաւ ի Քրիստոս բարւոք մահուամբ և ճշմարիտ դաւանութեամբ։ Եւ յետ նորա թագաւորեաց որդի իւր Սմբատ ամս քսան և չորս։ Սա վկայութեամբ կատարեցաւ ի Քրիստոս ի Դուին, կախեալ զփայտէ ի Յուսփայ՝ որդւոյն Ապուսեթայ։*

*Իսկ յետ Զաքարիայի առնու զկաթողիկոսութիւնն տէր Գէորգ ի քաղաքագեղջէն Գառնւոյ. սա գերեցաւ յիսմայէլացւոցն. և իշխանքն Աղուանից գնեցին և արձակեցին։ Եւ յետ նորա եկաց կաթողիկոս տէր Մաշտոց ամ մի։ Սա էր այր սուրբ և առաքինի, և լցեալ հանճարով և իմաստութեամբ, բնակէր ի կղզւոջն Սևան մեծաւ ճգնութեամբ, զամս քառասուն հաց ո՛չ եկեր և ջուր ո՛չ էարբ, միահամղերձ և բոկոտն։ Սա կարգեաց զգիրսն, որ ըստ անուան իւրում՝ կոչի Մաշտոց, ժողովեալ զամենայն կարգեալ աղօթսն և զընթերցուածսն ի միասին՝ յարմարեալ յաւելուածով յիւրմէ, որ ունի յինքեան զամենայն կարգս հաւատոյ քրիստոնէութեան, և հասեալ ի ծերութիւն պարարտութեան, հանգեաւ ի Քրիստոս փառաւորապէս։ Եւ եդաւ մարմին նորա ի գերեզմանի ի Գառնի հուպ առ զարմանալի թախտն Տրդատայ. և շինեցին ի վերայ նորա եկեղեցի վայելուչ։ Եւ յետ նորա յաջորդէ զաթոռն տէր Յովհաննէս աշակերտ նորին և ազգային՝ ամս*

1 stvՎ չիք *հայոց*
1 cdgtvՎ չիք *և*
1 *Մ-Թ բարիոք*, np *բարուոք*
1—2 stvՎ *բարի դաւանութեամբ և ճշմարիտ հաւատով* փխ *բարւոք մահուամբ և ճշմարիտ դաւանութեամբ*
2 m *որդին իւր*
2 cdip *նորա* փխ *իւր*, vՎ չիք *իւր*
2 afv *սմպատ*
2 n *ամ իդ*, *Մ-Թ* և մի շարք ՁՁ չիք *և*
3 bcdefghstuvw *դվին*
3 stvՎ չիք *կախեալ զփայտէ*
3—4 inop *ի փայտէ յուսփայ* (ab *յուսփա*)
4 bmstv *յորդւոյն*, cdj *որդոյն*
4 ab*Մ-Թ ապուսաճեա(յ)*, stvՎ *ապուսաճայ*
5 abcdefgno *զաքարիայ*
5 g *զկաթողիկոսութիւն*, stvՎ *զաթոռն* փխ *զկաթողիկոսութիւնն*
5 c *գէորք*
5—6 ip *ի քաղաքագեղջէն*, stvՎ *ի գեղջէն*
6 bcdfgh *յիսմայէլացոցն*, ijpo *իսմայէլացոցն*, t *իսմայէլացն*
7 afht *գնացին* փխ *գնեցին*
7 i չիք *եկաց*, p *առնու* փխ *եկաց*
7 h *կաթուղիկոս*, ip *կաթողիկոսութիւն*
7—8 b *մաշթոց*, ip *մաշտոց ամ մի ի կոտայս գաւառէ յեղվարդ գեղջէ*
8 stvՎ չիք *այր*
8 b *առաքինի լցեալ*
9 n *բանակէր*, vwՎ *և բնակէր*
9 abcdfgh *ի կղզոջն*
9 c *սևանդ*, d *և անդ* (sic)
9 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *սիւան*, ijp *սևանայ*
10 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *արբ*
10 t *բորոտն* փխ *բոկոտն*
11 h *զգիրս նոր* փխ *զգիրսն որ*
11 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *իւրոյ*
11 ij *անուանն*
11 svՎ *ըստ իւր անուան* (vՎ *անուանն*) *մաշտոց կոչի*
11 i *ժողովեաց*
11—12 w *կարգեաց*
12 g *յաղօթսն*, o *զաղօթսն*, stuvՎ *աղօթս*
12 fhstuvՎ *զընթերցուածս*
13 a *ի յինքեանն*, b չիք *յինքեան*, d *յիքեան*, o *ինքեան*
13 *Մ-Թ* և մի երկու ՁՁ չիք *հաւատոյ*.
14 e *ի ծերութիւն*, o *ի ծերութեան*
13—14 t չիք *'և հասեալ... պարարտութեան'*
14 no չիք *պարարտութեան*
15 stuvwՎ չիք *մարմին նորա*
15—16 *Մ-Թ* և մի շարք ՁՁ չիք *'հուպ առ զարմանալի թախտն տրդատայ.*
16 uvwՎ *եկեղեցի վայելուչ*
16 i *վայելուչս*
17 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *յովանէս*, abcd efj *յովաննէս*, hipՎ *յոհաննէս*
17 d *ազգին* փխ *ազգային*

քան և ուխտ։ Սա էր այր իմաստուն և բանաւոր ի քաղաքագեղջէն Գառնւոյ, ուստի սուրբ հայրապետն Գէորգ էր։ Սա գրեաց պատմութիւնս ՝գեղեցկայարմարս և զոր ինչ գործեցին անօրէն ազգն հագարացւոց ընդ աշխարհս ամենայն՝ մեծամեծ չարիս։

Արդ յայսմ վայրի կամ է ինձ սակաւ մի հրկրորդել վասն պառակտման չար ազգին Իսմայէլի. զի հրամայէ փրկիչն մեր և աստուած տէր Յիսուս Քրիստոս, եթէ՝ «Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւերի»*, որպէս սոցայս, զի ի բազումս բաժանեալ տէրութիւնն. զի Սոփարն տիրէր աշխարհին Խորասանու, և Աւալիկն Ապուլթորոսպ ի Բասրացւոց քաղաքին, և Յիսէ Շեխայ որդին ի Պաղեստինէ, և որդին Ապլափոյ՝ ի Դիլմաց աշխարհին, և այլք ոմանք ի տեղիս տեղիս խռովութիւնս յարուցեալ՝ ջանային բռնութեամբ տիրել իրերաց։ Վասն որոյ և դժուարագիւտ եղև անուանք ամբարշտացն։ Բայց յորոց և է՛ ոստիկանք չարք և անմարդիք արձակեալք լինէին յաշխարհս մեր, որպէս գազանաբարոյն Բուղայ և անօրինագոյն Ափշին, որդի յառաջագոյն եկելոյն չարագործին Ապուսեթայ, և կամ և՛ս չարագունին ապականչին Յուսփայ, եղբօր Ափշնոյ,

* Մատթ. ԺԲ. 25, Ղուկ. ԺԱ, 17։

1 Մ-Թ քան ուխտ (չիք և)
1 cdijp ամս իբ փխ ամս քան և ուխտ
1 c բանաւէր, d բանաստեղծ, ip բանագէտ փխ բանաւոր
1 am և քաղաքագեղջէն (և փխ ի), ij ի քաղաքէ գեղջէ.
1 d գառնո, eijs գառնւոյ
2 fh զպատմութիւնս
3 stՎ և մի երկու ՁՁ չիք և
3 bcdfh հագարացոց
4 j մեծամեծ և մեծ
5 go այսմ
5 b կա՛մ էր
5 tՎ չիք սակաւ մի
5 m չիք մի
6 Վ ... փխ չար
6 Մ-Թ և մի քանի ՁՁ ազգի
6 b հրամաէ
6—7 i հրամայէ տէր մեր և փրկիչ աստուածն յս քս
6 stvՎ չիք տէր
7 o անձն
7—8 n յաւարի, t աւարի
8 w չիք զի
8 h ի բաժումս (sic)
8 ijp չիք ի
9 no տէրութիւն
9 h յաշխարհին
9 h ալաւիկն, i ուղիկին, j աւողիկին, stvՎ ապալիկն
9 Մ-Թ և մի երկու ՁՁ Ապուլթորոպ, ij ապաւլթորոսպ, s ապուլթորապ
9 cfhm ի բասրացոց
10 Վ չիք և
10 Մ-Թ և մի երկու ՁՁ որդի
10 abd շեխա
10 s ի պաղեստինի
10 b ապլտըփոյ, c ապըլտփոյ, d ապըլտփո, i ապլափոյ, p ապլափո
11 Վ աշխարհի
11 g խռովութիւնքս, ip խռովութիւն
11 uv չիք տեղիս
12 t չիք որոյ և, vՎ չիք և
13 Մ-Թ և մի երկու ՁՁ անբարշտացն
13 e յորոց է և, gno որոց և է
13 no ոստիկան
13—14 Մ-Թ և մի քանի ՁՁ անմարդի
14 o արձակեալ լինէին աշխարհս
14 a գազանաբարւոյ, Մ-Թ և մի երկու ՁՁ գազանաբարոյ
14 abcՎ բուղա, no պուղայ
15 stv անօրինագոյն ափշինն, Վ անօրինագոյն Ափշին
15 stv յառաջագոյն չարին փխ յառաջագոյն եկելոյն չարագործին
15 Վ առաջագոյն չարին
15 uvwՎ չիք եկելոյն
15—16 Մ-Թ ապսաճիթայ, ah ապսաիճթա(յ), bcdegjnouw ապուսիճթայ, ipstvՎ ապուսիթայ
16 Մ-Թ և մի երկու ՁՁ չիք ապականչին, c օգնականչին, dj աւգականչին, ip օգականչին փխ ապականչին
16 p ուսփայ, tuvwՎ յուսփին
16 p եղբայր

որ սպան զՍմբատ թագաւորն ի Դուին, և թագաւորեցոյց զԳագիկ ոմն ի տանէն Արծրունեաց, զորդի Դերենիկանն, այր բարի և աստուածասէր, որդի քեռ թագաւորին Սմբատայ Բագրատունւոյ։ Սա շինեաց զկղզին Աղթամար, որ ի ծովուն Բզնունեաց, քաղաք թագաւորական և եկեղեցի հրաշազան և պայծառ յօրինուածով։

Այսոքիկ ամենեքեան չար վերակացուք, որ գային յաշխարհս մեր աւերել և եղծանել, մինչև բարձաւ թագաւորութիւն ամիրմումնեացն, և փոխանորդեցին սկիւթացիքն, ո՛չ ելլենախոհքն, այլ բարբարոսականքն. քանզի զբազում ազգս հարեալ հնազանդեցուցին, և ինքեանք իշխեցին, ընդ որս և զիշխանութիւնն տաճկաց հնազանդեցուցին։ Բայց զի զանուանս նոցա ո՛չ ուրեք գտաք գրեալ, վասն այնորիկ և ոչ մեք կարացաք դրոշմել. թուի՛ թէ և ո՛չ ի դպրութիւն կենաց, այլ յարձանս ամբարշտաց։ Վասն այնորիկ լքեալ՝ թողցուք զնոսա իբրև զարանց յուսացելոց և զօրութիւնս իւրեանց, որք խլեցան յարկացն աստուծոյ։

Ի սկսանել թագաւորութեանն Թուրքաց՝ արք յիսուն, հայ ազգաւ, նեղեալք ի նոցունց, ելին յանապատ սպառազինեալք, և եկին ի Մարաշ. գտին այր մի քաջ, Փիլարտոս անուն, հայ, եդին զնա գլխաւոր և, մտեալ ի Կիլիկիա, առին զբովանդակ աշխարհն, յորս էին և Ռուբինեանք՝ սե-

1 s ափշընայ, tvՎ ափշինոյ, f ափշնայ
1 i նսպան
1 abfv զսմպատ
1 abcdjstuvw ի դվին
1 cd զզագին (sic)
2 i յազգէն փխ ի տանէն
2 i որդի
2 Վ դերանկանն
2 no բարեպաշտ փխ բարի
3 a սմպատա, bd սմբատա, ftv սմպատայ
3 abcdefghjkmstu բագրատունոյ, no բագրատունեաց
4 i ախ ամար, o յաղթամար, stvՎ աղթամարայ
5 ip չիք և պայծառ
5 ad յաւրինուածով, g օրինուածով
6 e ամ (ամենայն) փխ ամենեքեան
6 s որք
6 b գային
6 ag աշխարհս
7 abcdefghijpuw յաւերել և յեղծանել
7 bcijՎ թագաւորութիւնն
7 afhk ամիրումիմնեացն, bcdgjnotuv w ամիրիմումնեացն
8 b իսկիւթացիքն, cdijp սկիւթացիք
8 Մ-Թh և մի•երկու ՁՁ ելլենախորհք, m հելլենախոհքն, stvwՎ ելանախոհք փխ ելլենախոհքն
8 a բարբառոսականքն, stvՎ բարբարոսք
9 boՎ բազում
9 g իշխանք փխ ինքեանք, no իշխեցին ինքեանք
10 g զիշխանութիւնսն, stvՎ զիշխանութիւնս, ijp իշխանութիւնն, o զիշխանութիւն
10 m տաճկացն
10 acdefghjmnopuw հնազանդեցին
10 d զանունս, o անուանս, g զանձանս փխ զանուանս
11 Մ-Թ և մի քանի ՁՁ ուրուք
12 benouwՎ ի դպրութեան, g ի դըպրութենէ
12 go արձանս, t յանձինս ամբշտաց փխ յարձանս ամբարշտաց
12 Մ-Թ և մի երկու ՁՁ անբարշտաց, j անբարշտացն, u ամպարշտաց
13 o թողուցուք
14 i որ փխ որք
14 a խլացան
15 Վ իսկ ի սկսանել
15 d թագաւորութիւնն, eg թագաւորութեան
15–16 w նեղեալս
16 b ի նոցին
16 n անապատ, Վ յանապատն
17 t փիլարտանոս
18 abcfh ի կիլիկիայ, d կիլիայ (sic)
18 d յաշխարհն
18 dw որս
18 bc ռոբինեանքն, dgjp ռոբինեանք, e ռոբէնեանք, i ռուբինեանքն, m ռուբենեանք, w ռուբինեանս

*րեալք թագաւորազունքն։ Զի մինչև ցՄելիքշահ սուլթանն գրեալ էր զպատճառս տիրելոյն նոցա մեծիմաստ վարդապետին, որ Սարկաւագն կոչէր, և երկրորդեալ էր Սամուէլ քահանայ, այլ և զհօր նորա զարինախանձին Ալփասլանայ և զնորին հօր և հաւուց, զոր Տուղրիլ բէկ և Մահմուտ և Սալչուկ անուանք են նոցա։*

*Այլ մեք դարձցուք անդրէն ի կարգ ոճոյն, ուստի ելաք, հանցուք արտաքս զմիտս և ասասցուք խրախուսութեամբ. «Նոքա ի ձեռանէ քումմէ մերժեցան, մեք ժողովուրդք և խաշն արօտի քո»*։*

*Քանզի յետ մահուանն Սմբատայ Բագրատունւոյ թագաւորէ Հայոց Աշոտ որդի նորա՝ հրամանաւ Ռոմանոսի կայսեր, յետ եօթն ամի սպանման հօրն, ամս ութ։ Իսկ յետ Վասլի կայսեր թագաւորեաց Լևոն, և ապա Ալէքսն։ Եւ զկնի նորա Ռոմանոս. սա հալածեաց զամենայն կրօնաւորս և զքահանայս հայոց, որք էին յաշխարհին Հոռոմոց, զի ո՛չ հաւանեցան դաւանութեանն Քաղկեդոնի։ Եւ եկեալ յաշխարհս Հայոց յաւուրս Աբասայ, որդւոյ Սմբատայ, հաստատեցին վանորայս՝ զԿամրջաձոր, և զԿապուտքարն ի գաւառին Արշարունեաց, և զհռչականունն Հոռոմոսին կոչեցեալ վանք, և զԴպրէվանք ի Շիրակ գաւառին. շինեցին և եկեղեցի մի յանուն*

* *Սաղ. ՁԷ. 6 ՂԸ. 13.*

1 bcdeioptuvwՎ *սերեալ*
1 d *թվաւորազունքն*, j *թվավորազունքն* (sic), s *թագաւորազունք*
1 *Մ-Թ ցմելիք շահ*, ip *ի մելիքշահ*, Վ *մինչև յայս մելիքշահ սուլթանն*
1 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *սուլտանն*
1—2 stvՎ *զպատճառ տիրելոյ*
2 no *վարդապետի*, Վ *վարդապետն*
2 stvՎ *սարկաւագ*
2 stvՎ *կոչիւր*
3 a *երկրորդել էր*
3 o *հօր*
3 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *զարիւնանախանձին* փխ *զարիւնախանձին*
3—4 b *ալփասլանա*, no *ալփասլանին*
4 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *տուղլուպէկ*, b *տուղուբեկ*, ceosuw *տուղլուբէկ(գ)* g *տոգալուբէկ*, ij *տուղրիլբէկ*, m *տուբղուլպէկ*
4 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *որ* փխ *զոր*
4 suvwՎ *և զոր*
4 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *սարչուկ*, tv *սալչուք*
6 no *անդրէն ուստի ելաք ի կարգս ոճոյն*
6 stvՎ *յոճն կարգի*
7 s *խրախուսթեամբ*
8 c *արաւտի*, n *արօտի նորա* փխ *արօտի քո*
9 uw չիք *յետ*
9 nos *մահուան*

9 a *սմպատա* fhn *սմպատայ*, b *սմբատա*
9 abcdfghjkmsw *բագրատունոյ*, no *բագրատունեաց*
10 no չիք *յետ*
10 bw *եւթն*
11 cd *վասիլ կայսեր*
11 e *կայսերն*
12 s *աէքսն* (sic)
13 cdijp չիք *էին*
13 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *յաշխարհէն*, g *աշխարհին*, n *աշխարհն*, tvՎ *յաշխարհս*
14 eՎ *դաւանութեան*
14 s *որք և եկեալ*
14 aginop *աշխարհս*
14 d *աւուրս*
14 ab *աբասա*, g *ապասա*
15 bcfgh *որդոյ*, d *որդո*
15 a *սմպատա*
15 fhtՎ *զկարմնջաձոր*, v *զկարմրջաձոր*
15—16 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *զկապույտքարն*
16 c *արշաունեաց*, ijop *արշակունեաց*
16 stvՎ *արշարունեաց հռչականուն և զհոռոմոսին*
16 b *զռչականուն* (sic), ipw *զհռչականուն*
17 b *զդպրեվանք*
17 abcdefgjmno *գաւառի*
17 ahk *յեկեղեցի*

ամենասուրբ Աստուածածնին ի վանքն, որ կոչի Սանահին, ի սահմանս Լոռէ քաղաքին, և զի կոչէին զերիցունսն հոռոմոց երէց, անուանեցին զմի վանքն, որ ի Շիրակ՝ Հոռոմոց վանք, որ ցարդ ևս ասի Հոռոմեցի վանք։

Եւ յետ Ռոմանոսի թագաւորէ Կոստանդին՝ որդի Լևոնի, և ապա Ռոմանոս, և զկնի նորա Նիկիփոր, և զկնի նորա Կիռժան։

Իսկ յետ Յովհաննիսի առնու զկաթողիկոսութիւնն տէր Ստեփաննոս ամ մի. և ապա տէր Թէոդորոս ամս մետասան, և ապա տէր Եղիսէ ամս եօթն, և ապա տէր Անանիա Մոկացին ամս քսան և երկու։

Յաւուրս սորա է՛ր եպիսկոպոս մի կողմանցն Սիւնեաց, Յակոբ անուն, որ սկսաւ նորաձևութիւնս առնել խօսից և կարգաց, և այլ միւս եպիսկոպոս, Խոսրով անուն, որ ասէր։ «Ո՛չ է պարտ կիւրակէ ասել զօրն տէրունի. այլ կիւռիակէ, զի հոռոմերէն է. ասէ նոյնպէս և հասարակաց թողուլ, ասէր, զգէսս տղայոց և ո՛չ հատանել մինչև երկայնասցի և պատ առցէ, զի վասն այնորիկ, ասէ, կոչի պատանի. և ապա կտրել հրամայէր, զի վասն այնորիկ, կոչի կտրիճ»։ Եւ ասէր. «Ո՛չ է պարտ եպիսկոպոսի ընծայաբեր լինել եպիսկոպոսապետի, այսինքն՝ կաթողիկոսի, զի աւելի օրհնութիւն

1 no անուն սուրբ
1 nostvՎ սուրբ փխ ամենասուրբ
1 abdfgip ամենասրբուհոյ, c ամենասրբոհոյ, ejuw ամենասրբուհւոյ, h ամենասրբոյ, m սրբուհւոյ
1 Վ աստուածածնին
1 h սնահին
2 cdg լաւռէ
2 bcdeinow քաղաքի
2 stvՎ զերիցունս
3 tuvw չիք ի
3—4 Մ-Թ և մի քանի ՁՁ չիք ասի, w ասի հոռոմեցի վանք, s հոռոմոցի վանք ասի, vՎ հոռոմցի վանք ասի, t հոռոմոց վանք ասին, tԱԳ չիք 'որ ցարդ ևս հոռոմեցի (ԱԳ հոռոմցի) վանք' (ԱԳ վանք ասի)'.
5 ah կոստընդին, b կոստնդին
5 s որդին
6 st նիկիփր
6 stvՎ կիրժան
7 Մ-Թ և մի քանի ՁՁ յովանիսի, ip յոհանիսի, Վ յոհաննիսի
8 stvՎ թէոդորոսն
8–9 a ամս Է փխ ամս եօթն
9 dhs անանիայ
9 Մ-Թ և մի քանի ՁՁ չիք և
10 Մ-Թ և մի քանի ՁՁ ի կողմանցն
11 no խօսից (sic)
12 m անուն խոսրով
12 stv չէ կիւրակէ փխ ոչ է պարտ կիւրակէ, Վ չէ պարտ փխ ոչ է պարտ
12 stuvՎ կիւռակէ, w կիւրակէ փխ կիւռիակէ
13 h հոռմերէն
13 Վ չիք ասէ
13 Մ-Թ և մի երկու ՁՁ նմանապէս, ab cd ննպ (նոյնպէս)
13 e հասակացն, ij զհասակաց, Մ-Թ և մի քանի ՁՁ հասակաց փխ հասարակաց
13 t թողեալ
13 fh ասէ
14 bcd զգէնս փխ զգէսս, ijp զգէսն
14 o տղեոց փխ տղայոց
14 stvՎ չիք տղայոց
14 o պատ առեսցէ փխ պատ առցէ, t պատեսցէ
14—15 stvՎ վասն այն փխ վասն այնորիկ
15 stvՎ չիք ասէ
15 b պապանի փխ պատանի
15 w կոչէ կտրիճ պատանի
15 h քարել փխ կտրել
15 c հրամայէր կտրել, h հրամայեցէր
15—16 u չիք 'կոչի պատանի...այնորիկ ասէ'
15 Մ-Թ չիք զի
16 stvՎ կոչի ասէ
16 h չիք ասէ
16—17 cdm ընծայաբեր լինիլ
16—17 uvՎ չիք 'եպիսկոպոսի ընծայաբեր լինել'
17 Մ-Թ և մի երկու ՁՁ եպիսկոպոսի փխ եպիսկոպոսապետի, m կաթողիկոսի փխ եպիսկոպոսապետի
17 stuvՎ եպիսկոպոսապետի այսինքն կաթուղիկոսի հլու լինել
17 m չիք այսինքն կաթուղիկոսի
17 stvՎ զի աւելի ոչինչ ունի փխ զի աւելի օրհնութիւն ոչ ունի

ո՛չ ունի, ասէ, բայց միայն զանուանակոչութիւնն»։ Եւ այլ այսպիսի անիմաստ բանիւք լցոյց զաշխարհս և խռովութիւն յարոյց ամենայն ուրեք վասն նորաձևութեանն։

Առ որ գրէ թուղթս խրատականս տէր Անանիա՝ ի բաց կալ յանհանճար և յընդունայն բանիցն։ Իսկ նա փոխանակ զղջանալոյ՝ առաւել ևս անամօթեցաւ, զանձն իմաստուն կարծել և զնոսա տգէտս, առ որ հարկաւորի դարձեալ գրել երկիցս և երիցս։ Գրեն և այլ իմաստունս վարդապետք, և յիշեցուցանեն նմա ի գրոց զհանգամանս կարգաց։ Իսկ նա ի նոյն միտս ամբարշտութեան կացեալ՝ քամահէր զամենեքումբք։ Եւ ինքն Յակոբ ապստամբեալ ի կաթողիկոսէն՝ ամրանայր ի բերդն Սիւնեաց. զոր ընդ բանիւք արարեալ կաթողիկոսին՝ գրէ առ տիկինն Սիւնեաց տալ զնա ի ձեռս, զի խրատեսցէ զնա, զի թերևս գայցէ ի զղջումն։ Եվ նոքա ոչ ետուն զնա ի ձեռս նորա, և զնոսա ևս արար ընդ բանիւ կապանաց։ Եւ ի նոյն միտս եկաց մինչև մեռաւ։ Եւ ապա գնաց տէր Անանիա յաշխարհն Սիւնեաց հնազանդել զապստամբսն։ Եւ իբրև լուան իշխանքն Սիւնեաց զգալուստ հայրապետին, ելին ընդ առաջ նորա՝ զմեղանս յանձն առեալ, և ետուն նմա ձեռագիր երդմամբ՝ այլ ո՛չ ևս ապստամբել յաթոռոյ սրբոյն Գրիգորի յազգէ մինչև յազգ։ Եւ ապա ձեռնադրեաց յազգէ նոցա զմի ոմն

1 stvՎ չիք ասէ
1 ovՎ զանուանակոչութիւն
1 t չիք և
1 vՎ այսպէս
1—2t չիք 'այլ այսպիսի... և խռովութիւն'
3 bcdgijmnop նորաձևութեանն
4 bd թուխթս
4 bcdh անանիայ
4—5 cdgijnoptv անհանճար
5 Մ-Թ և մի երկու ՁՁ ընդունայն, Վs յանընդունակ փխ յընդունայն, tv անընդունակ
5 tv բանին
5 e չիք նա
5 d զղջանալո
6 Մ-Թ անամօթացաւ, stvՎ անամօթանայր
6 Մ-Թ կարծեցեալ, stvՎ կարծէր
6 stvՎ տգէտ
7 h երկից
7 stuvw չիք գրել
7 uvw երկիցս և երիցս գրեն
7 Վ իմաստունքն
8 no չիք նմա
8 noՎ հանգամանս
8 st յիւրոց հանգամանս կարգաց փխ ի գրոց հանգամանս կարգաց
9 i չիք միտս
9 Մ-Թ և մի երկու ՁՁ քամահէ
9 i մախացեալ փխ կացեալ
9 bcdefgh զամենեքումբք
10 stvՎ չիք յակոբ
10 h ի կաթուղիկոսութենէն փխ կաթողիկոսէն
11 osvՎ ընդ բանիւ
11 t ընդ պատիւ
12 stvՎ չիք զի
12 stvՎ խրատել զնա
12 no կայցէ փխ գայցէ
12 stvՎ յուզղութիւն փխ ի զղջումն
13 uw չիք զնա
13 t նոսա
14 no մեռաւ մինչև եկաց
14 acdh անանիայ
14 afhm յաշխարհս, m յաշխարհ
15 Վ զապստամբս
15 Մ-Թ աշխարհն սիւնեաց և իշխանքն
15 abcdij իշխանք
16 fh զգալուստն
16 abdfhijkm ընդ յառաջ
16 stvՎ և մեղադրէին անձանց իւրեանց փխ զմեղանս յանձն առեալ
17 stvՎ զի այլ ոչ ապստամբեսցեն
17 mp ապստամբիլ
17 ip սուրբ յաթոռոյն
18 Մ-Թ և մի քանի ՁՁ ազգէ
18 d մինչև ազգ, g մինչև ազգ նոցա, Վ մինչև յազգս
18 dijp ազգէ

արքեպիսկոպոս. որ յառաջն եպիսկոպոսի աթոռ էր Սիւնեացն, զայն պատիւ արարեալ իշխանացն Սիւնեաց, հրամայեաց խաչ տանել առաջի արքեպիսկոպոսին Սիւնեաց, ո՛ր և երթիցէ։

Յետ մահուան տեառն Անանիայի եկաց յաթոռ նորա տէր Վահան ի Բաղաց ամ մի։ Սա դաշնադիր եղև ընդ Վիրս միաբան դաւանութեամբ։ Վասն որոյ ժողովեալ յամուրն յԱնի ի թագաւորութեանն Աշոտայ, որդւոյ Աբասայ, բազում եպիսկոպոսաց և խոստակրօն վանականաց, որք ծանուցեալ հաւաստեաւ զհերձուած կորստական մտաց նորա, զի ետ բերել պատկերս վասն նորոգման աղանդոյն Քաղկեդոնի, և որոշեալ զնա՝ հալածական արարին։ Եւ միաբանեալ նստուցին յաթոռ սրբոյ Լուսաւորչին զՍտեփանոս հարազատ արեան սրբոյ առն աստուծոյ Մաշտոցի, տր ի Սևան կղզւոջ։ Եւ էր սա հետևեալ վարուց նորա. որ եկաց յաթոռ հայրապետութեանն ամս երկու։ Բայց քանզի Վահանիկն դեռ ևս կենդանի էր ի Վասպուրական, հաւանեցոյց զոմանս ի պարզամտացն՝ սուտ զնմանէ կարծել զհամբաւ հերձուածոյ. և վասն այնորիկ զմիջոց աշխարհիս Հայոց լցին նզովիւք։ Իսկ ի հրամանէն աստուծոյ ի միում ամի մեռան երկոքեանն, և ամ մի անվերակացու լեալ։ Ապա հրամանաւ թագաւորին Աշոտայ, որ Ողորմածն կոչիւր, ժողովեալ ընտրելոց արանց և եպիսկոպոսաց սրբոց, կացուցանեն յաթոռն հայրապետական զերանելի այրն աս-

1 Մ-Թ յառաջ եպիսկոպոսի աթոռ էր
1 Մ-Թ չիք որ
1 abfhkm յառաջ, ostv առաջն
1 t որ առաջնորդ էր փխ որ յառաջն եպիսկոպոսի աթոռ էր
1 ip յաթոռ
2 ijopstvՎ սիւնեաց
2 ijp հրամայեաց զայն
2 stvՎ զայն ի պատիւ
1—2 no չիք 'զայն պատիւ...Սիւնեաց'
2 ijmp և հրամայեաց
2—3 abcdefghijmnopuw առաջի (no առաջ) խաչ տանել արքեպիսկոպոսին (gno եպիսկոպոսին)
2 3 stv եպիսկոպոսին
4 bd անանիայի, stvՎ անանիայ
4 ij մահուանն
4 no աթոռ նորա
4-5 ij ի բաղեաց
5 am դաշնագիր
6 kmno ամուրն յանի
6 Մ-Թ և մի քանի ՁՁ անի
6 eՎ թագաւորութեան, nostv թագաւորութիւնն
6 Մ-Թ և մի քանի ՁՁ աշոտոյ, cdj աշոտ
6 c որդո, d որդւո, Վ որդւոյն
7 i սմբատայ փխ Աբասայ, ab աբասա
7 Մ Թ և մի շարք ՁՁ խաչակրօն փխ խոստակրօն
7 v որ
8 v կորստեան փխ կորստական
8 o զի յետ, stvՎ զոր ետ
9 o զնոսա փխ զնա
10 Մ-Թ և մի երկու ՁՁ չիք [սրբոյ, df hnostv սուրբ
11 Մ-Թ և մի քանի ՁՁ զստեփաննոս
11 c սրբո, stvՎ սուրբ
11 ostvՎ չիք աստուծոյ
11 o տէր մաշտոցի
12 Մ-Թ կղզւոջն, cdfghij կղզոջ
12 nô չիք 'և էր սա...նորա'
12—13 stvՎ յաթոռն փխ յաթոռ հայրապետութեան
12—13 cd հայրապետութեանն
13 Մ-Թ և մի շարք ՁՁ չիք դեռ ևս
14 cdinoՎ ի պարզամտաց
14 s ի ձորավանք հաւանեցոյց
14 no զսուտ ի նմանէ
15 fh չիք հայոց
16 Մ-Թ և մի քանի ՁՁ ի հրամանէ, ip իսկ հրամանէ
16 stvՎ աւուր փխ ամի
16—17 Մ-Թ և մի երկու ՁՁ երկոքեան, stv երկոքինն, Վ երկոքին
17 t վերակացու փխ անվերակացու
18 Մ-Թ և մի քանի ՁՁ աշոտոյ, tuvwՎ չիք Աշոտայ
18 tuv չիք որ
18 d ժողովեալն դրելոց փխ ժողովեալ ընտրելոց
18 c ընտրելոց
19 no չիք սրբոց
19 mpstvՎ յաթոռ

*տուծոյ զտէր Խաչիկ, զհարազատ տեառն Անանիայի, մեծի հայրապետին, որ բանիւ վարդապետութեան սանձեաց զբերանս հերձուածողաց, սրբասէր և քրիստոսասէր գոլով, որ կալաւ զաթոռն ամս ինն և տասն։ Եւ զկնի նորա տէր Սարգիս ամս քսան և չորս։*

*Իսկ զկնի Աշոտայ թագաւորէ որդի նորա Սմբատ, որ և Շահնշահ կոչիւր։ Սա ընդ թագաւորելն իւրում, լիր արկեալ պարսպին Անւոյ բարձրաբերձ բրգամբք և լայնատարած տեղօք յԱխուրեան գետոյն մինչև ցԾաղկոցաձորն կոչեցեալ վայր, հիմնարկեաց և զկաթողիկէն պայծառ ի նմին քաղաքի և ոչ կարաց աւարտել, զի եհաս նմա վախճան մահու՝ թագաւորեալ ամս երեքտասան։*

*Յաւուրս սորա սկիզբն եղև շինուածոյ հռչակաւոր ուխտին, որ Մարմաշէնն կոչի, ի քրիստոսասէր իշխանէն Վահրամայ։*

*Եւ յետ նորա թագաւորէ Գագիկ, եղբայր նորա, ամս քսան և ինն։ Սա շինեաց զսուրբ Գրիգորն գերահռչակ ի վերայ Ծաղկոցաձորոյն՝ գաղափար առեալ զհոյակապ սուրբ Գրիգորն, զոր շինեաց հայրապետն Ներսէս. և կատարեցաւ ի հազար ամի մարմնանալոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստո-*

1 stvՎ *հարազատ*
1 d *տեառն տէր*
1 b *անանիաի*
1 bcdijp *մեծ*
2 bstv *վարդապետութեան իւրոյ* (t *իւր*), o *վարդապետութեանն*, m *վարդապետութեամբ*
2 no *հերձուածողացն*
3 j *քրիստոսասէրս*
3 tvՎ չիք *գոլով*
3 o *աթոռն*
3 h *տասն և ինն*
4 i չիք *նորա*
3—4 o չիք *'և զկնի նորա…քսան և չորս'*
5 **Ա-Թ** և մի քանի ՁՁ *աշոտոյ*
5 afv *սմպատ*
5 iuw *շահնշահն*
6 stvՎ *ի* փխ *ընդ*
6 stvՎ չիք *իւրում*
6 cd *լի արկեալ*
6 ip *պարիսպն*
6 abcdefghjmw *անոյ*, ikp *յանւոյ*, stv *յանոյ*
6—7 u *բարձրաբերդ* փխ *բարձրաբերձ*
7 abcdgmo *բրգամբքք*, fijp *բրգամբք*, h *բրգամբ*
7 **Ա-Թ** և մի երկու ՁՁ *տեղեօք* (b *տեղեաւք*)
7 b *յախուռեան*
7 bn *մինչ*
7—8 stuvwՎ *ի ծաղկոցաձորն*
8 i *կոչեալ*
8 **Ա-Թ** չիք *վայր*
8 ip *հիմն էարկ* փխ *հիմնարկեաց*
8 **Ա-Թ** չիք *և*
8 go *զկաթուղիկէին*
8 s *պայծառափառ*
9 b *վաղխճան*, d *վաղջան*
9 no *մահուն*, stvՎ *մահ* փխ *վախճան մահու*
9—10 o *թագաւորելն*
11 agm *յաւուր*
11 d *շինուածո*
11 stvuwՎ չիք *որ*
11—12 gpstuvwՎ *մարմարաշէնն կոչեցեալ* փխ *որ Մարմաշէնն կոչի*
12 n *քրիստոսաշէն*
12 d *վահրամա*
13 m չիք *'ամս քսան և ինն'*, stv *ժթ*, Վ *'ամս ինն և տասն* փխ *ամս քսան և ինն*
14 gimՎ *զսուրբն գրիգոր*
14 cdi *ծաղկաձորոյն*
15 **Ա-Թ** և մի երկու ՁՁ *զխոյակապ*, j *զհոյլակապ*
15 bcdijp *սուրբ հայրապետն* (p *սուրբ հայրապետ*)
16 ijp *կատարեցաւ ռ̅ ամ և մի մարմնանալոյն*, o *ի ռ̅ ամի փրկչին*
16 o չիք *'մարմնանալոյ…քրիստոսի'*
16 n *մերոյ և փրկչին* փխ *մերոյ Յիսուսի Քրիստոսի*
16 p *ք̅ի̅. ք̅ի̅* փխ *յ̅ի̅ ք̅ի̅* (*յիսուսի քրիստոսի*)

մի, և ի Նխէ թուականին Հայոց։ Եւ կին նորա Կատրամիտէ թագուհի աւարտեաց զկաթողիկէն սուրբ, զոր ոչ կարաց կատարել Սմբատ թագաւորն։ Շինեաց և Սմբատ Մագիստրոսն զփափագատես վանքն, որ Բագնայրն կոչի։

Իսկ յետ Կիռժանայ կայսեր առնու զթագն Վասիլն՝ ամս յիսուն թագաւորեալ։ Սա էր այր բարեմիտ, յաւէտ առ ազգս Հայոց, որ և թողեալ զդաւանութիւնն Քաղկեդոնի, մերում ճշմարտութեանս հետևեաց. և եկեալ յաշխարհն Կիլիկեցւոց, մկրտեցաւ ի հայոց ի վանքն, որ կոչի Պաղակծիակ, և ետ վանիցն գիւղս և ագարակս և այլ ինչս բազումս։

Եւ յետ տեառն Սարգսի առնու զկաթողիկոսութիւնն Հայոց տէր Պետրոս ամս երեսուն և ինն։ Եւ յետ Գագկայ Շահնշահի թագաւորեաց որդի նորա Յովհաննէս ամս քսան։

Յաւուրս սորա մեծապատիւ Վեստն Սարգիս զկնի բազում շինուածոյ բերդից և եկեղեցեաց շինեաց և զփառաւոր վանքն զԽցկօնն և զեկեղեցին յանուն սրբոյն Սարգսի, և զՄագաքար վանքն բերդ արարեալ՝ պարսպեաց ամրագոյն, և եկեղեցիս շինեալ ի նմա փառաւորս։

Բայց թագաւորն Յովհաննէս գժտութեամբ լեալ ընդ հայրապետին

1 ij չիք ի
1 h չորս հարիւր քառասուն և եօթ, Վ չորեք հարիւր քառասուն և եօթն
1 bf թվականին, sՎ թուին
1 egi կատարմիտէ, n կատարամիտէ թագուհին
1 s թագուհին
2 afh սմպատ...սմպատ
2 j թագաւոր
3 Մ-Թ և մի երկու ՁՁ զփափակատես, afjkmuw զփափաքատես, d զփափաքատեմ, o զփափկատես
3 j զվանքն
3 Մ-Թ և մի երկու ՁՁ բագնայր
4 Մ-Թ և մի քանի ՁՁ կոչիւր
5 Մի քանի ՁՁ կիռժանեայ (abcd կիռժանա, f կիռժանեայ, egstuv կիռժանայ), h կիռժանեա, Վ Կիռժանայ
5 jp կայսերն, m չիք կայսեր
5 cdiimp վասիլ
5 Մ-Թ և մի քանի ՁՁ յիսուն երկու փխ s̄ (Վ յիսուն)
5–6 m չիք թագաւորեալ
6 g չիք այր
7 ejw զդաւանութիւն, Վ զդաւանութիւնս
7 ip հետևեցաւ
8 gijno աշխարհն
8 aepu կիւլիկեցւոց, bcgj կիւլիկեցոց, dfh կիլիկեցոց, v' կիլիկեցւոցն
8 Մ-Թ չիք ի հայոց ijp ի հայոց վանքն
9 stvՎ վանացն
9 ab գեաւղս, Մ-Թcd գեւղս, thim գեօղս
10 d սարգիսի
10 i նորա փխ տեառն
10 t չիք և յետ տեառն
10 j զկաթողիկոսութիւն
11 Մ-Թ չիք և
11 h ութ փխ ինն
11 b գագկա
11 v շահնշահ
12 Մ-Թ յովանէս, s յոհաննէս
11—12 abcdij յովանէս որդի նորա, egh յովաննէս որդի նորա, uw յովհաննէս որդի նորա
13 abcdefghjno վեստնս, uvw վեստոն
13 d շինուածո, no շինուածոց
14 Մ-Թ և մի երկու ՁՁ զխցկունան, alm զխցկաւան, cdfh զխցկաւնս, ijp զխցկավանս, s զխծկօնս, tvՎ զխցկունս
14 no եկեղեցի (o եկեղեցիս) անուն, sՎ զեկեղեցի
15 Մ-Թ զծայրաքար, i զծռաքար, w զծարաքար
16 b եկեղեցի
16 stvՎ շինեաց
16 vՎ փառաւորս ի նմա, ijp փառաւոր
17 Մ-Թ Յովանէս, abcdef յովաննէս
17 i գժուարութեամբ փխ գժտութեամբ. l գժտութիւն

Պետրոսի, դնէ զնա ի բանտի և զԴէոսկորոս ոմն առաջնորդ սուրբ ուխտին, որ կոչի Սանահին, բերեալ ձեռնադրէ զնա կաթողիկոս փոխանակ Պետրոսի։ Ապա եկեալ Յովսէփ կաթողիկոսն Աղուանից, հաշտութիւն արարեալ ի մէջ թագաւորին և հայրապետին, հանէ զկաթողիկոսն ի բանտէ։

Իբրև տեսին ռամիկ բազմութիւնն քաղաքին Անւոյ, եթէ արձակեցաւ կաթողիկոսն ի բանտէն, ընթացեալ յանդգնութեամբ ի վերայ Դէոսկորոսի, պատառեցին զքօղն յերեսաց նորա յաւուր յայտնութեան տեառն, մինչդեռ օրհնէին զջուրն,—քանզի քօղով վարէին յայնմ ժամանակի կաթողիկոսքն,— և հանին անարգանօք զնա ի քաղաքէն, և կացուցին զՊետրոս յաթոռ իւր։ Եւ գնաց Դէոսկորոս տրտմութեամբ ի Սանահին ի տունն իւր, և անդ եղև վախճան կենաց նորա, և եդաւ հուպ յեկեղեցին։

Եւ յաւուրս իշխանութեանն Զաքարէի և առաջնորդութեան Սանահնին Գրիգոր վարդապետին, որդւոյն Տուտայ, որ էր այր երևելի, առաքեցին բնակիչք քաղաքին Անւոյ առ այր մի քարակոփ ի Սանահինն ի նոյն քաղաքէ, զի յայտնի կամ գաղտնի առցէ մասն ինչ ի նշխարացն Դէոսկորոսի և տարցէ՝ ի քաղաքն. «Զի վասն նորա են, ասեն, այս կոտորուած, որ լինի

1 bcdilno ի բանդի
1 abcdfghjlnopuw զդիոսկորոս (w զոսկորոս)
1 g յառաջնորդ, j առաջնորդ էր
2 Մ-Թ և մի քանի ՁՁ չիք զնա
3 Մ-Թ Յովանէս փխ Յովսէփ
4 Մ-Թ 'ի մէջ կաթուղիկոսին և ի մէջ հայրապետին' փխ ի մէջ թագաւորին և հայրապետին
4—5 bcdno ի բանդէ
6 svՎ ռամիկք և (vՎ չիք և) բազմութիւն, m բազմութիւն ռամկի, Մ-Թ ռամիկ բազմութիւն
6 abcdfghw անոյ, ijl յանւոյ, tv յանոյ
7 bcdjn ի բանդէն
7 s ընթացեալք
7 m չիք ի վերայ
7—8 abcdfhjlpuwՎ դիոսկորոսի
8 cd զքողն, i զքօղս, l զքաւղն
8 Վ երեսաց
8 d յաւուրս այտնութեան
8 no յաւուրս
9 abcdfkl ահնէին
9 d քողով
9 no այնմ, v յայն
9 b ժամանակ
10 abfghnovwՎ զնա անարգանօք, cd ընդ անարգանօք փխ անարգանօք զնա, ijp հանին ընդ անարգանօք ի քաղաքէն արտաքսելոյն անարգանօք (sic) անկաւ քաղաքն մահմետականացն (p մահմեդականացն) ի սուր, և կացուցին
10 ijp չիք զնա
10 Մ-Թ զտէր Պետրոս, imՎ զպետրոս
11 m յաթոռն, no աթոռ
11 abfghln դիոսկորոս
11 Մ-Թ սրտմտութեամբ Դէոսկորոս
11 Մ-Թ և մի երկու ՁՁ ի տուն իւր ի սանահինն, vՎ ի սանահին ի տուն իւր
12 e կենացն
12 cdgijp եկեղեցին
13 egՎ իշխանութեան
13 d զագարէի, oՎ զաքարիայի, stv զաքարիայ
13 cdj առաջնորդութեանն
14 l գրիգորի
14 cdfgh որդոյն, ij որդոյ, l որդւոյ
14 b տուտա
15 abcdefghjltvw անոյ, ikop յանւոյ
15 suvwՎ չիք առ
15 afghtwՎ քարկոփ
15 svՎ ի սանահին
15—16 cd և ի նոյն քաղաքէ
16 t զմասն ինչ
16 Վ ի նշխարաց
16 abcdfhjlnoptw դէոսկորոսի
17 fh առէ
17 b հարուած փխ կոտորուած, cd կոտուած, ip կոտորուածս, no կոտորած, stv կոտորուածք
17 no լինին

*ի քաղաքիս Հանապազ յայլազգեաց. զի թերևս թողութիւն արասցէ քաղաքիս վասն յանդգնութեանն, զոր գործեցին ընդ նա հարքն մեր»։*

*Իսկ այրն երթեալ ի գիշերի, կամեցաւ բանալ զգերեզմանն և առնուլ ի նմանէ մասն ինչ։ Եւ ահաբեկեալ ահիւ մեծաւ՝ ոչ կարաց բանալ զգերեզմանն և երթեալ պատմեաց վարդապետին Գրիգորի։ Եւ նա ասաց. «Ես ոչ համարձակիմ գործել զայդ իրդ, մինչև ժողով բազմութեան բնակչացն Անւոյ այսր գայցեն, և մեք ընդ նոսա պաղատեսցուք, խնդրել զթողութիւն ի նշխարաց նորա»։ Իսկ ասացեալն յապաղէր, զի ոչ ոք արար փոյթ զայնմանէ։*

*Եւ յետ Յովհաննիսի առնու զթագաւորութիւնն Գագիկ, որդի Աշոտայ, ամս երկու։ Արդ յետ մահուանն Յովհաննիսի, որ և Սմբատ, միաբանեալ իշխանաց և զօրացն, յաւէտ և պատրիարքն Պետրոս ժողովեցան առ դրունս մեծափառ կաթողիկէին Անւոյ և կացուցանեն զԳագիկ, զեղբօրորդին Յովհաննիսի, թագաւոր ի վերայ ինքեանց՝ երդմունս ուխտից կնքեալ միամտութեամբ ծառայել նմա։ Իսկ նա պատերազմական արիութեանց ոչինչ փոյթ տարեալ, որով աշխարհ վարի, մանաւանդ զի առ այնու ժամանակաւ աւելի իմն ի դէպ էր քաջանալ, քանզի իշխանութիւնն Իսմայէլի շփոթեալ էր, քանզի սկիւթացիք յարեան ի վերայ նոցա, որպէս ցուցաք յա-*

1 g *այլազգաց*, ip *յայլազգեացն*
2 eghi *յանդգնութեան*
2 *Մ-Թ* *ընդ նմա*
2 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *նախահարքն* փխ *հարքն*, no *հայրքն*
3 acdefghijlnp *գիշերի* փխ *ի գիշերի*
3 t *այր*
4 bl *մասն ինչ ի նմանէ*
4 i *յահաբեկեալ*
4—5 ijp *զգերեզմանն* (j *գերեզմանն*) *և առնուլ ի նմանէ մասն ինչ*
5 stuvՎ *գրիգոր վարդապետին*
5 w *գրիգոր*
6 stvՎ *կարեմ* փխ *համարձակիմ*
6 abcdegjnostuvwՎ *իրս*, p *իր*
6 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *ժողովեալ բազմութիւն*, o *ժողովք բազմութեան*
6 stuvՎ *քաղաքին* փխ *բնակչացն*, o *բնակչաց*
7 abcdefghjlvw *անոյ* (d *անո*), t *այնոյ*, m *յանոյ*, iop *յանւոյ*
7 *Մ-Թ* *խնդրելով* փխ *խնդրել*
7 m *թողութիւն*
8—9 f *զյայնմանէ*, ip *յայնմանէ*, stvՎ *զնմանէ*
10 *Մ-Թ* *Յովանիսի*, e *յովաննիսի*, n *յովանէսի*, o *տէր յովանիսի*
10 g *զթագաւորութիւն*
10 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *աշոտոյ*
10 m *որդին*
11 ip *այլև* փխ *արդ*, j *այլ ի յետ*
11 Վ *մահուան*
11 *Մ-Թ*i *յովանիսի*, e *յոհաննիսի*, n *յովանէսի*
11 afgv *սմպատ*
12 ijp *ընդ իշխանացն*
12 dl *զաւրացն*
12 *Մ-Թ* և մի երկու ՁՁ չիք *ժողովեցան*
13 b *կաթողիկէին*
13 abcdefghlmvw *անոյ*, iknop *յանւոյ*, j *յանոյ*
13 *Մ-Թ* և մի երկու ՁՁ չիք *և*
13—14 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *զեղբօրորդի*
14 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *յովանիսի*, efh *յովաննիսի*
13—14 stvՎ *զգագիկ թագաւոր*, *զեղբօրորդին յովհաննիսի* փխ *զգագիկ*, *զեղբօրորդին Յովհաննիսի*, *թագաւոր ի վերայ ինքեանց*
14 in *յինքեանց*
14 nop *երդումս*
14 stvՎ *և երդմունս արարեալ ուխտից* փխ *երդմունս ուխտից կնքեալ*
15 d *միաբան միամտութեամբ*
15 no *արիութեան*
16 notՎ *արարեալ* փխ *տարեալ*
16 h *աշխարհ*
16 s չիք *զի*
16 d *այն* փխ *այնու*
17 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *էր ի դէպ*, j *զի դիպէր* փխ *ի դէպ էր*
17 d *իշխանքն* փխ *իշխանութիւնն*, n oՎ *իշխանութիւն*
18 m *զի* փխ *քանզի*
18 aefh *սկիւթացիւք*, im *սկիւթացիքն*
18 tvՎ *նորա* փխ *նոցա*
18 l չիք *'որպէս ցուցաք յառաջագոյն'*, no *առաջագոյն*

ցին ուղղապէս վարել զարուեստն նորա յետ վճարելոյն։ Ապա իմաստաւէր ումն, Էաս անուն, ձայն արկեալ առ ինքն կոչել յամենայն ազգաց զիմաստունս՝ զՓենեհէզ Հրեայ, զԳիգան յԱսորւոց, զԱդդէ ի Գամրաց, զՕլոգս ի Յունաց, և զայլս յոլովս։ Եւ սկսեալ Ներքուստ ի վեր թուել զամսն և գտեալ հաստատութեամբ՝ կարգեցին զհինգ հարիւրեակ բոլորն՝ անտարակուսելի օրինակ յաւիտեան. զոր տարեալ առ Յուստի[նի]անոս կայսրն, նա հրամայեալ Իրոնի. և նա Նախանձաբեկ եղեալ վասն արուեստին մեծանձնութեան և իւրն ոչ կոչեցելոյ, կամեցաւ եղծումն ինչ առնել իրացն. փոխեաց զապրիլի հնգետասանն ի վեշտասան, և զվեց ի հինգ, բաղայս յօղեալ, թէ այլն ամենայն ճշմարիտ է, բայց յայսմանէ. այն վեշտասան ոչ ինչ սխալ է, իսկ այն հինգն յիննսունեհինգ ամի հանապազ սխալէ զնոսա՝ ընդ հրեայսն առնելով զզատիկն ի Ներքոյ լրմանն. քանզի շաբաթ ածէ Նոցա հինգն, իսկ վեցն մեզ կիրակէ, որպէս դիպեցաւ և աստ։

Եւ վասն այսպիսի վրիժման հայոց և վրաց առաքէ թագուհին Թամար և սպարապետն Զաքարիայ, զմի ումն ի մեծ իշխանացն վրաց, Նմանապէս և ի հայոց յՆրուսաղէմ, յառաջ քան զզատիկն, տեսանել զճշմարիտն. և այսոցիկ դատավճիռ լուցումն կանթեղին, որ ի սուրբ գերեզմանին Քրիստոսի, զոր ասեն խնդրուածովք սրբոյն Գրիգորի հայոց լուսաւորչի՝ առանց ձեռաց մարդոյ և զգալի հրոյ՝ լուցանիլ հրամանաւ աստուծոյ յամենայն զատկի, որ լինի մինչև ցայսօր ժամանակի։

1 Վ վարել ուղղապէս
1 no արուեստն
2 Մ-Թ արձակեալ փխ արկեալ, no ձայն արկեալ ամենեցուն
2 m առ յինքն կոչեաց, p կոչեալ
3 uՎ զիմաստունս ամենայն (u յամենայն) ազգաց, go ամենայն
3 ah զփենէէս, bcdefgl զփենէհէս, no puv զփէնէհէս
3 no զգիզակ
3 abcfhlstv յասորոց, dgjp ասորոց
4 Վ զեյոքս
4 Մ-Թ և մի քանի ՁՁ այլս յոլովս
4 n հոլովս
4 iuՎ ի ներքուստ
5 o քննել և թուել
5 no զամս
5 no կարգեալ, s չիք կարգեցին
5—6 f զ.չ.եակ, gn զհինկ հարիւրեակն, h զվեց հարիւրեակ
6 ad աւրինակ
7 s չիք առ
7 d ուստինոս, Մ-ԹՎ և ՁՁ յուստինոս փխ Յուստինիանոս
7 egjo կայսր
7 efg հրամայել, s հրամայեալ լինի
7 Մ-Թ Իռինի
7 stu նախանձաբեկեալ
8 l չիք մեծանձնութեան և իւրն
8 bcdegijlptvՎ կոչելո, suԱԲԳ կելո փխ կոչեցելոյ
9 Վ և մի շարք ՁՁ եօթն և տասն փխ հնգետասան
10 Մ-Թ և մի երկու ՁՁ բազքաղայս փխ բաղայս
10 Մ-ԹՎ եղեալ փխ յօղեալ, bd յաւղեալ, stԱԲԳ փոխեալ փխ յօղեալ
10 em չիք ամենայն
11 Մ-Թ չիք 'այն վեշտասան'
11 Մ-Թ ի յիննսուն և հինգ, ԱԲԳ ծե
12 bcdjno սղալէ, p սղխալէ
12 bn զատիկն
13 Մ-Թ և մի երկու ՁՁ ի նոցա հինգ
13 fh չիք մեզ
13 Մ-Թ մեզ վեց
13 Մի երկու ՁՁ կիւրակէ
15 m չիք վասն
15 abcdefghjl թամարն
16 Մ-Թ սպարապետ
16 stՎ նոյնպէս փխ նմանապէս
17 gt երուսաղէմ
17 ab զատիկն
17 no ճշմարիտն
18 no կանդեղին
19 Մ-Թ և մի քանի ՁՁ խնդրուածքով
19 stՎ չիք հայոց
19 dՎ լուսաւորչին
20 g լուծանիլ
20 bcdoՎ հրամանաւն (n հրամաւն)
21 io չիք որ լինի
21 l չիք ժամանակի

*Բայց զվերակացութիւն քաղաքին տաճիկք ունէին, հարցին ցքրիստոնեայսն, թէ՝ «Ե՞րբ իցէ զատիկն ձեր»։ Պատասխանեցին, որ ի յունաց և յայլոց ազգաց, թէ՝ «Յայսմ կիրակէի»։ Իսկ որ ի հայոց էին, ասացին. «Ոչ յայսմ կիրակէի, այլ ի միւս կիրակէի»։ Իսկ որ տաճիկ վերակացուն էր քաղաքին՝ այր իմաստուն էր, հրամայեաց շիջուցանել զամենայն լոյսս, որ էին ի տաճարի անդ, և փակեալ զդուրսն, կնքեալ մատանեաւ իւրով, և ոչ ումեք հրամայեաց մտանել ի ներքս, տեսանել, թէ որ ազգն իցէ ճշմարիտ։*

*Եւ իբրև անց օրն այն և եղև երեկոյ, և սպասէին լուցման կանթեղին, և իբրև ոչ լուցաւ, հրամայեաց իշխանն անարգանօք հանել զամենեսեան և զանխիւ մեծաւ, իբրև զոգէտս և զստուս, բայց ի հայոց։ Եւ իբրև անց շաբաթն, և եկն միւս կիրակէն, զոր ասէին հայք զատիկ, մինչդեռ ի պաշտաման և յաղօթս էին ի տասներորդ ժամուն՝ ազդումն եղև ամենեցուն, և վաղվաղակի լուցաւ կանթեղն առանց ձեռաց։ Եւ եղև ուրախութիւն մեծ հայոց։ Եւ առեալ զան հարին այլոց ազգաց և զովէին ˜ամենեքեան զիմաստութիւն և զհաւատն հայոց ևս առաւել ազգն տաճկաց, և անարգէին ձաղէին զլոյնս յամենայն քաղաքս, որ ընդ իշխանութեամբ տաճկաց։ Տեսին զայն և արքն առաքեալք ի թագաւորէն Վրաց և ի զօ-*

1 o *տաճիկք որ ունէին*
1 n *հարցի*, o *էհարց*
1—2 a *ցքրիստոնեայս*, Վ *ցքրիստոնեայս*
2 gi չիք *ձեր*
2 ijmpstuՎ *որք*
3 dnoՎ *ի այլոց*, eg *ի յայլոց*
3 abdefghijmnp *կիւրակէի*
3 m *որք*
3—4 no չիք '*իսկ որ ի հայոց... կիրակէի*', stՎ *իսկ ազգն հայոց* փխ *իսկ որ ի հայոց էին*
3—4 Վ *ասեն* փխ *ասացին*
4 b *կիւրակէին*, efghu *կիւրակէի*. sՎ չիք *կիրակէի*
4 b *կիւրակէի*, efghnop *կիւրակէին*, l չիք *կիրակիի*, cdu *կիրակէին*, stՎ *այլ միւս կիրակէն*
4 lm չիք *տաճիկ*
4—5 no *վերակացու էր*, stՎ *իսկ վերակացու տաճիկն այր իմաստուն էր*
5—6 ip *ամենայն լոյսն*
6 Վ *կանթեղս* փխ *լոյս*
6 Վ *փակել*
6 cd *դուռսն*, gl *զդրունսն*, n *զդրունս*, o *զդուռն*
6 bdegnp *կնքեաց*, ostuՎ *և կնքեաց*, l չիք *կնքեալ*
7 stՎ չիք *ոչ*
7 d *ի ներքոյ*, ip *ի ներս*, o չիք *ի ներքս*
7—8 *Մ-Թ* չիք *թէ որ ազգն իցէ ճշմարիտ*
7 i *տեսանէր*, *թէ յորոյ ազգի*, o *ազգի*
9 fh *անցաւ*, iops *էանց*
9 a *աւր*, d *աւրն*
9 fh չիք *այն*
9—10 o *կանդեղին*
10 *Մ-Թ* չիք '*և իբրև ոչ լուցաւ*'
10 bd *անարգանաւք*
11 g *ոգեւոր*, o *զօտարս* փխ *զստուս*
11 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *բա՛ց*
12 iops *էանց*
12 abehjn *կիւրակէն*, dp *կիւրակին*
12 o *ի միւս*
12—13 o *մինչ ի տեղի պաշտաման*
13 e *յաղօթսն*
13 cՎ *ժամու*
14 o *կանդեղն*
15 bcdegnou *առ զան* փխ *առեալ զան*, pstՎ չիք *առեալ*
15 st *հարին զլոյնս* (t *զլոյսն*), ԱԳ *հարին զլոյնսն*
16 ijp *զիմաստութիւն հայոց և զհաւատն*
15—16 uՎ չիք *ամենեքեան զիմաստութիւնն և*
15—16 stՎ *գովէին զազգս հայոց և զհաւատս նոցա*
16—18 l չիք '*և անարգէին...ընդ իշխանութեամբ տաճկաց*'
17 st *անարգանօք* փխ *անարգէին*
17 imp *զլոյնսն*, t *զլոյսս*
17 cdip *քաղաքաց*
18 ip *նորա էին* փխ *տաճկաց*
18 j *տաճկաց էին*

*րավարէն, և եկեալ պատմեցին, զոր տեսին։ Եւ խնդաց մեծ զօրավարն Ջաքարէ, և ամենայն հայեարն, որ էին ի զօրուն. և առաւել ևս հաստատէին յուղիղ հաւատն հայոց։*

*Յայսմ ամի եղև աւարտ հռչակաւոր և խնդատես եկեղեցւոյն Գետկայ, զոր շինեաց վարդապետն Մխիթար իւր միաբանօքն՝ ձեռնտուութեամբ Վախթանկայ Խաչենեցւոյ՝ տեառն Հաթերքոյ, և եղբարց իւրոց՝ Գրիգորոյ, և Գրիգորիսի, և Խոյդանայ, և Վասակայ, և այլոց իշխանաց բարեպաշտաց, որոց Քրդին՝ Դաւթի և Սադունին, նաև քոյր սոցա, որում անուն էր Արզու խաթուն, կին Վախթանկայ Հաթերքեցւոյ։*

*Սա բազում ինչ օժանդակ եղև, արար և վարագոյր գեղեցիկ՝ դատերօք իւրովք՝ ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց, ի մազոյ այծից կակղագունաց՝ ներկեալ պէսպէս և զանազան, գործ քանդակակերպ և նկարեալ պատկերօք, ճշգրտագոյն հանուածովք՝ տնօրինականօք փրկչին և այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսողսն։ Եւ որք տեսանէին, օրհնութիւն տային աստուծոյ, որ ետ կանանց իմաստութիւն դստայնանկութեան և հանճար նկարակերտութեան, որպէս առ Յոբն ասացաւ, որ ոչինչ ընդհատ էր ի կազմուածոյ խորանին, զոր արարին Բեսելիէլ և*

1 dj *զաւրավարէն*
1 ip չիք *զոր տեսին*, stՎ *տեսչնն*
1 dj *զաւրավարն*, u *զօրավարն հայոց*
1—2 l *և խնդացին ազգն հայոց և մեծ զօրավարն զաքարէ*
2 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *հայք* փխ *հայեարն*, afhjno *հայերն*
2 l չիք *և ամենայն հայեարն, որ էին ի զօրուն և առաւել ևս*
2 ip *որ էին ընդ նմա ի զօրուն*, o *որ է*
2 eo *ևս առաւել*
2—3 l *և հաստատեցին ի հաւատս ուղիղս* (չիք *հայոց*), o *ուղիղ*
4 g *յայս*, i *յայնմ*, no *այսմ*
4 hno *եկեղեցոյն*
5 stuՎ չիք *Մխիթար*
5 Վ *միաբանօք*
6 *Մ-Թ վաղթանկայ*, bcdjn *վաղթանգայ*, eu *վախթանգայ*
6 abcdfghjno *խաչենեցոյ*
6 h *գրիգորիոյ*, no *գրիգոր* փխ *գրիգորոյ*
7 ip *գրիգորիոսի*
8 abcfghlnot *որդոց*
8 *Մ-Թ Քրթին*, b չիք *քրդին*
8 l *դաւթին*
8 fh *սադունի*, no *ադունին* փխ *սադունին*
8 *Մ-Թ նոցա*
8 s *քուէր* փխ *քոյր*
8—9 *Մ-Թ* և մի երկու ՁՁ չիք *որում անուն էր*
9 *Մ-Թ Վաղթանկայ*, be *վախթանգայ*, c *վաղթանգայ*
9 abcfghjno *հաթերքեցոյ*, d *հաթերքեցոյ*, lstՎ *հաթերքոյ*
10 ad *աւժանդակ*, gՎ *յօժանդակ*
10 n *վարաքոյր*
10—11 Վ *դատերովք*
11 nop *իւրօք*
11 op *տեսողացն*
12 Վ *այծիցն*
12 oՎ *կակղագունից*
12—13 o *պէսպէս գունով և գործ արկեալ կերպ պատկերաց ճշմարտագոյն*
12—13 af *կանդակակերպ*, e *քանդակերպ*, ԱԲԳ *գանդակերպ* (Վ *գընդակերպ*. ծան. «*թերևս և քանդակակերպ*»), n *կանակեալ կերպ պատկերաց*
13 cdijp *հարուածովք* փխ *հանուածովք*
13 df *տնաւրինականաւք*
15 abcdfhjk *ա̅հու̅թի̅ն*, *ա̅հու̅ի*, *ա̅հնու-թիւն*, o *զօրհնութիւնս*
15 eg *կանաց*
15 o *զիմաստութիւն*
15—16 abcdnopu *ստայնանկութիւն*
16 i *առ սուրբն* փխ *առ Յոբն*, p *առ որ*
17 sՎ *ոչինչ* փխ *որ ոչինչ*, t *ինչ* փխ *ոչինչ*
17 bcdegn *ի կազմածոյ*
17 c *բեսէլէլ*, d *բերսելէլ*, ijp *բերսելիէլ*, o *բելսելիէլ*

*Եղիաբ*, թէ ոչ յանդգնութիւն է ասելս, զի նոյն Հոգի էր, որ շարժէր զնոսա և զսոսա։ Եւ ո՛չ միայն այս եկեղեցւոյս արար ծածկոյթ, այլ և այլոց եկեղեցեաց՝ Հաղբատայ և Մակարայ վանից և Դադի վանից, քանզի յոյժ սիրող էր եկեղեցեաց բարեպաշտ կինն։*

*Եւ արարին նաւակատիս եկեղեցւոյն մեծապէս խմբիւք։ Անդ էր և եպիսկոպոսն Հաղբատայ՝ Յովհաննէս, առաջինի և սուրբ այր, և այլ բազմութիւն քահանայից և պաշտօնէից։ Եւ օծեալ կնքեցաւ եկեղեցին յանուն սրբոյ Աստուածածնին։*

*Շինեցաւ և գաւիթ եկեղեցւոյն գեղազարդ և կոփածոյ վիմօք։ Յոլով ձեռնտու եղեն մեծ զօրավարն Զաքարէ և եղբայրն իւր Իւանէ. քանզի նոքա ունէին զիշխանութիւն գաւառին, և յոյժ սիրէին զսուրբ վարդապետն, քանզի Զաքարէ խոստովանութեամբ որդի էր նորա հոգևոր։ Եւ ընծայեցին եկեղեցւոյն սահման ջրաղարձիւք՝ լեռնէ ի լեառն, և բով մի յԱրքասաձոր և զՋօրոձոր ի նահանգին Բջնոյ, և զԱշաւա ի գլուխ վանիցն։*

*Շինեցին և ինքեանք գիւղ մի մերձ ի ծովակն փոքրագոյն անհնարին խորութեամբ և անուանեցին զգիւղն յանուն ծովակին Տղրկածով, քանզի բազումք կային ի նմա մօրասէր և տղմասէր սողունք, և այլ միւս*

* Հմմտ. Եկլ. ԼԶ. 1.

1 Մ-Թ Եւիաբ, i Եւյաբ
1 o անդգնութիւն
1—2 stՎ թէ նոյն հոգւովն և զսոսա
1 n հոգին
1—2 mu չիք 'որ շարժէր', stՎ չիք 'որ շարժէր զնոսա'
2 i որ և զսոսա
2 Մ-Թ չիք միայն
2 ghnop եկեղեցոյս, m եկեղեցւոյս միայն
2 cd չիք արար ծածկոյթ
2 ijp այլևայլ, no չիք այլ և
3 o եկեղեցեացն
3 no հաղբաթայ
3 efgu մակարավանից
3 Վ վանիցն
3 Մ-Թ և մի երկու ՁՁ դադի վանաց
4 o կինն այն, stՎ տիկինն փխ կինն
5 hno եկեղեցոյն
5 d խմպիւք, i խմբօք
6 n հաղբադայ, o հաղբաթայ
6 Մ-Թ Յոհաննէս, fh յոհաննէս
6 no առաքէին փխ առաքինի
7 adl աւծեալ
7 tno անուն
8 Մ-Թ սուրբ
9 Վ գաւիթն
9 hno եկեղեցոյն
9 bcde ghnopuՎ գեղեցկազարդ, a գեղեցազարդ
9 a կոփուոյ, fhl կոփուածոյ, no կոփածու
9 ad վիմաւք
9 oՎ յոլովք
10 Մ-Թ զօրավարքն, dj զաւրավարն

10 n զաքարիէ
10 Վ եղբայր
11 n իշխանութիւն
11 Մ-Թ և զսուրբ վարդապետն յոյժ սիրէին, stՎ յոյժ սիրէին զվարդապետն
12 o զաքարիա
12 ip խոստովանութեան
12 stՎ նորա հոգևոր որդի էր
12 g ընծայեսցին (sic), n ընծաեցին
13 hno եկեղեցոյն
13 Մ-Թ և մի քանի ՁՁ ջրաղարձովք, g ջրաղարձօք
13 g ի լեռնէն ի լեառն, i ի լեառնէ ի լեառն
13 im յապասաձոր, l յարքասաձորն
14 Մ-Թ զՋօրաձոր, d զօրոձոր, e զգորոյ ձոր, no զգորոյ ձոր, s զխորաձորն, Վ զՇորաձոր ԱԲԳ Ղորաձորն
14 cd զաշաւա, fh զաշաւայ, ip զաշօա, stu զօշաւայ, Վ զՕշավա
14 Մ-ԹՎ և մի քանի ՁՁ վանացն
15 acdgj գեւղ, b գեաւղ, fhmno գեօղ
15 acgj զգեւղն, b զգեաւղն, d զգեղն, fhmn զգեօղն, o գեօղն
16 d տղրակածով, t տղրածով
17 stՎ քանզի բազումք (t բազում) մօրասէր և տղմասէր սողունք կային
17 Մ-Թ ի նա փխ ի նմա
17 cd մաւրասէր, ip մօրասէրք և տղմասէրք
17 Մ-Թ և մի քանի ՁՁ սողուն

*ևս փոքրագոյն գիւղ՝ ներքոյ վանիցն, զոր Ուռեղանջ անուանեցին։ Շինեցին և այլ մատրունս յանուն սրբոց առաքելոցն և սրբոյն Հռիփսիմեայ։*

*Եւ ինքն քանզի սիրէր զանապատ և զամայութիւն, արար իւր տուն բնակութեան բացագոյն ի վանիցն։ Շինեաց և անդ փոքրագոյն եկեղեցի մի փայտակերտ՝ յանուն սուրբ Հոգւոյն։ Եւ ի ժամանակի ծերութեան, ի գլուխ վանիցն յաջմէ կողմանէ շինեաց եկեղեցի մի շիրիմ գերեզմանի իւրոյ, կրով և վիմօք մածուցեալ սրբագործ, յանուն Համբարձմանն Քրիստոսի։*

## ԺԵ

### Թէ ոյք էին, որք երեւելիք էին յաշակերտաց նորա։

*Բազումք էին, որք աշակերտեցան ի նմանէ վարդապետական բանին, քանզի համբաւ իմաստութեան նորա հռչակեցաւ ընդ ամենայն տեղիս։ Եւ գային առ նա յամենայն կողմանց, քանզի՝ ըստ անուանն իւրոյ՝ մխիթարէր զամենեսեան. քանզի էր նա մխիթարական, որպէս զԲառնաբաս, և նշանաւոր ի մէջ ժողովրդոց, որպէս զԱնտոն. և բանք նորա արդիւնականք լի շնորհօք. և ամենայն ոք փափագէր տեսանել զնա և լսել ի նմանէ։ Վասն այսպիսի համբաւոյ բազումք, որ էին ի կարգի վարդապետաց, ծածկէին զինքեանս և գային, ի կարգի աշակերտաց կալով՝*

1 *Մ-Թ*n *գեօղ*, acdgjl *գեւղ*, b *գեաւղ*
1 *Վ ի ներքոյ*
1 m չիք *զոր*
1 st*Վ ուրեղանէջ*, (*ԱԳ ուրեղանէջ*)
1 no *առացաւ անուն նորա* փխ *անուանեցին*
1—2 l չիք *շինեցին*
2 l *միտրունս* փխ *մատրունս*
2 no *անուն*
2 no *սուրբ*
2 gt*Վ առաքելոց*
2 n *հեռփսիմեայ*
3 no *անապատ*
3 st*ԱԲԳ զանամայութիւն*
4 t *բազոյց* փխ *բացագոյն*
4 *Մ-ԹՎ* և մի քանի ՁՁ *վանացն*
5 no չիք *մի*
5 no *անուն*
5 acghjlno *հոգոյն*
5 bcdgju*Վ ծերութեանն*
6 no *վանացն*
6 g *աջմէ*
7 n *գրով և դիմօք մեծացուցեալ* փխ *կրով և վիմօք մածուցեալ*
7 t *անուն*
7 c *համբարձման*
*Մ-Թ* և մի քանի ՁՁ *քրիստոսի աստուծոյ մերոյ, օրհնելոյ* (afkl *ահնելոյն*) *յաւիտեանս ամէն*
9 l *վասն թէ ոյք*
9 o *արք երեւելիք աշակերտք նորա*
9 bcdst*Վ յաշակերտս*, n *աշակերտս*, glp *յաշակերտաց*
10 a *աշակերտան* փխ *աշակերտեցան*
10—11 bdijp չիք *բանին*
11 t *հռչակաւորեցաւ*
11—12 no *տիեզերս* փխ *տեղիս*
12 no *գային*
12 d *անուննն*, no չիք *ըստ անուանն իւրոյ*, *Վ ըստ անուան*
13 n *զամենեսեանն*, p *զամէն*
13—14 *Մ-ԹՎ բառնաբաս*
14 bcdegj *ժողովոց*, o *ժողովրդեանն*, stu*Վ ժողովրդեան*
14 abceglm *զանտոնն*, ot*Վ անտոն*
14—15 ijp *արդիւնաւորք*
15 g չիք *լի*, st*Վ և լի*
15 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *փափաքէր*
15—16 *Մ-Թ* և մի երկու ՁՁ չիք '*և լսել ի նմանէ*'
16 os *որք*
16—17 bd *ի կարգի վդպ*, cn *ի կարգի վրդպդ*, *ԱԲԳ վարդապետ* (*Վ վարդապետաց*)
17 o *և ծածկէին*
17 g *զինքեանց*
17 i չիք *և գային* no *և կային*

*ուսանէին ի նմանէ և առնուին վերստին հրաման։ Եւ բազումք յաշակերտաց նորա հասին ի պատիւ վարդապետական։ Բայց երկուք ոմանք ի նոցանէ իմաստնագոյնք էին քան զայլսն, որք կարող էին և զայլս օգտեցուցանել. առաջնոյն՝ Թորոս անուն, ի սահմանացն Մելիտինոյ Հայոց, հայր նորա հայկազն և մայր նորա ասորի, այր հեզ և խոնարհ, առաքինի և աղքատասէր յոյժ, ասպնջական օտարաց և առատ ի տուրս, որ զժամանակս կենաց իւրոց բարւոքապէս վարեալ՝ ի ծերութիւն պարարտութեան յաւելաւ առ հարս իւր և կայ՝ թաղեալ ի հռչականոյն վանքն Հաղբատ, ի գլուխ վանիցն, ի գերեզմանս եպիսկոպոսացն և վարդապետացն, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի, և աղօթք սորա պարիսպ հաւատացելոց։*

*Եւ երկրորդին՝ Վանական անուն, այր սուրբ և պարկեշտ և յամենայն գործս բարիս յառաջադէմ, ողջախոհ և զգաստ յամենայնի և վարդապետական բանիւ քան զամենեսին, որ ի ժամանակին էին, գերազանցեալ, ծննդական մօք և յարմար բանիւք։ Վասն որոյ բազումք դեգերէին առ նա ուսման աղագաւ ո՛չ միայն վարդապետական բանի, այլ ամենայն կեանք նորա և շարժումն անգիր օրէնք էին տեսողացն։ Եւ զայս ո՛չ թէ ականջալուր միայն ասեմ, այլ և ականատես, զի բազում ժամանակս կացաք մեք առ նմա ի վարժս կրթութեան ի սահմանս Տաւուշ բերդոյ,*

1 i *ուրանայլին* փխ *ուսանէին* n *յուսանէին*
1 p *առնէին*
1 p *բազում*
1 o *աշակերտաց*
2 *Ա-Թ* *երկու*
3 af *որք իմաստնագոյնքն*, bcdehnop ՑՍՎ *որք իմաստնագոյնք*, t *որք իմաստնագոյն*, g չիք *'ի նոցանէ իմաստնագոյնք'*
3 g չիք *էին քան զայլսն*, op *զայլս*
3 k *որ*
3 s *կարողք*, Վ *կարօղ*
3 t *այլս*
3 ad *աւգտեցուցանել*, h *օգտացուցանել*
4 ip *առաջինն*, l *յառաջագոյն*, t *առաջագոյն*
4 *Ա-Թ* և մի երկու ՁՁ *մելտենւոյ*, cdj *մելիտենոյ*, hilostՎ *մելտինոյ*, m *մելտենոյ*
5 abcdefghijlmnopstuՎ *հայկական* փխ *հայկազն*
5 cdegjnstuՎ *մայրն* փխ *մայր նորա*
5 cdegh *և առաքինի*
6 abcdfghjmp *և ասպնջական*
6 ad *աւտարաց*
7 *Ա-Թ* *բարիոքապէս*, gip *բարւոք այսպէս*, jl *բարիոք այսպէս* (l չիք *այսպէս*), o *բարիոք ապա* փխ *բարւոքապէս*
7 abcdefghpu *և ի ծերութեա*
7—8 *աւելաւ*, ijmp *յաւելեալ*
8 Վ *հարսն*
8 l *վանք*
9 *Ա-Թ*Վ *վանացն*
9 mst *եպիսկոպոսաց և վարդապետաց*
10 abcdfhjkl *աՀնութբ*
10 abcefghjmn չիք *եղիցի*
10 g *պարիսպն հաւատացելոց* փխ *հաւատացելոց*, n *աղօթիւք... հաւատացելոցն*, a *հաւատացելոցն*
11 p *երկրորդն*
11 g *ամենայն*
12 g *առաջադէմ*
12 go *ամենայնի*
13 Վ *զամենայն*
13 g *ի ժամանակ*
13 no *գերագոյն* փխ *գերազանցեալ*
14 *Ա-Թ* չիք *բազումք*
15 g *յուսման*
15 ip *վարդապետութեան բանի*
16 ad *աւրէնք*
16 g *տեսողաց*
16—17 *Ա-Թ* *ոչ թէ միայն ականջալուր ասեմ*, Վ *ոչ եթէ միայն*
17 *Ա-Թ* *ականատես իսկ եմ*
18 *Ա-Թ* չիք *մեք*
18 *Ա-Թ* և մի երկու ՁՁ *առ նա*, dijp *առաջի նմա*
18 no *տարուշ բերդոյ* (sic)

յանապատի անդ, զոր ստացաւ իւր բնակութիւն և աղբիւրաբար արբուցանէր ամենեցուն զբանն վարդապետական։

## ԺԶ

### Վասն վախճանի մեծ վարդապետին Մխիթարայ, որ Գոշն կոչի:

Սա երանելիս, զոր վերագոյն ասացաք, զընթացսն կատարեալ և զհաւատս պահեալ, եհաս ի խորին ծերութիւնն։ Եւ իբրև ետես նա, եթէ տկարացաւ ի զօրութենէ մարմնոյ և հանդերձեալ է այնուհետև յաւելուլ առ հարսն իւր, կոչեաց նա զբնակիչս ուխտի վանիցն Նորն Գետկայ, որ ընդ նմա ժուժկալեալ էին յամենայն աշխատութիւնս վանիցն և եկեղեցւոյն, և օրհնեաց զնոսա և զաշակերտս իւր յանուն տեառն. և զմի ոմն ի նոցանէ ընտրեալ՝ Մարտիրոս անուն նորա, որ աշակերտեալ էր նմա և ընտանի էր նմա, կացոյց զնա առաջնորդ նոցա. մանուկ տիօք, բայց կատարեալ իմաստութեամբ, այր քաղցրաձայն յերգս պաշտամանն, և առատամիտ ընթերցող, և երագ ի գրչութիւն. նմա հրամայեաց իշխել նոցա։ Եւ գրեաց կտակ առ մեծ հազարապետն Իւանէ, եղբայրն Զաքարէի, և յանձնեաց ի նա զվանսն և զառաջնորդն. և ինքն

1 o անապատի
1 eg բնակութիւնն
1 h աղբիւր բարի փխ աղբիւրաբար
1–2 b ուսուցանէր փխ արբուցանէր
2 s ամենեցունց
2 suՎ զբան
2 p վարդապետականն
3 Մ-Թ վասն վարդապետին վախճանի մեծին Մխիթարայ՝ որ Գոշն կոչի
3 bn վաղխճանի, cdp վաղջանի, o վաղճանի
3 cj մեծի
3 n կոշն, o կօշն
3 inops կոչիւր, l կոչէին զնա
4 Մ-Թ Երանելիս այս, ilp այս երանելիս
4 abcdefghm վերագոյնն, jl վեհագոյնն
4 ip զընթացս, n զնթացն
5 ilpstՎ զհաւատսն
5 bcdegstuՎ ծերութիւն, ծերութեան
5 bhlstuՎ թէ
6 bdego տկարացաւ նա
6 stՎ յամենայն զօրութենէ մարմնոյն, ip մարմնոյն
6 Մ-Թ չիք այնուհետև
6 n աւելուլ
7 bcdegijnopstՎ առ հարս
7 stՎ ուխտին
7 bcdegijstՎ վանաց
7 iostՎ նոր
8 bcegiopstuՎ որք
8 bopst ժուժկալեալք
9 stuՎ վանից
9 ho եկեղեցոյն
9 Մ-Թ և մի երկու ԶԶ զաշակերտսն
9 abcefghijkmnopuՎ իւրեանց փխ իւր, l չիք իւր
10 d ընդրեալ
10 stՎ չիք նորա
11 Մ-Թ աշակերտ և ընտանի էր նմա, ahlm աշակերտ էր նմա և ընտանի էր նմա
11 ad ընդանի, c զընդանի, ip ընտանի էր ինքեան փխ ընտանի էր նմա
12 bcegՎ տիովք, n դիօք փխ տիօք
12 no կարի փխ կատարեալ
13 ip երգս
13 Վ պաշտաման
13 st ընթերցման, Վ յընթերցման փխ ընթերցող
13 stՎ արագ
13 o արագ ի գրչութեան, ip երագ ի գրչութեան
14 u յիշել փխ իշխել
15 no յանձնեցին
15 stՎ զվանս

փոխեցաւ յաստեացս առ Քրիստոս՝ ալևորեալ և լի աւուրբք։ Եւ վերակացու վանիցն Մարտիրոս հանդերձ միաբանօքն գեղեցկապէս յարդարեաց զպատշաճս թաղմանն նորա հոգեկան և մարմնական պիտոյիւք, և տարեալ հանգուցին զնա առաջին դրան եկեղեցւոյն փոքրագունի, որ կայ ի գլուխ վանիցն յարևմտից կողմանէ։ Եւ մինչև ցայսօր գերեզմանն նորա օգնէ ցաւագնելոց, որք հաւատով ապաւինին յաղօթս նորա, և զհող տեղւոյն հանապազ տանին ի պէտս հիւանդաց մարդոյ և անասնոյ, զի աստուած զփառաւորիչս իւր փառաւորէ կենդանութեամբ և մահուամբ։

Դէպ եղև երբեմն, զի պաշտօնեայք նորա գային գրաստուք՝ բարձեալ գինի ի պէտս վանիցն։ Վրացի ոմն, Բասիլա անուն, եկեալ՝ բռնութեամբ կամէր առնուլ ի նոցանէ ի գինւոյ անտի, զի գործակալ էր նա Իւանէի ի վերայ մայրոյն, որ պահէր զտեղի իշխանի նորա։ Եւ պաշտօնեայքն ասեն ցնա. «Մի՛ նեղեր զմեզ, քանզի Գոշին եմք»։—Զի այսպէս կոչէին զնա մականուամբ, քանզի հեղգագոյն եկին ալիք նորա։—Իսկ թշուառականն անարգեաց զնոսա և զԳոշն հայհոյութեամբ։ Եւ իբրև եկն յայն տեղի, որ յիշէր զանուն նորա ձաղանօք, անդէն վաղվաղակի համրացաւ, և կապեցաւ լեզու նորա, և թիւրեցան շրթունք նորա, և այնպէս եկաց զրա-

1 i չիք յաստեացս
1 n չիք և
1 fh աւուրբք
1–2 h և վարկեցաւ (sic)
2 stՎ միաբանօք
2–3 stuՎ յարմարեաց փխ յարդարեաց
3 fh զպատշաճ թաղման, imoՎ թաղման
4 fghjnostՎ առաջի
4 n եկեղեցւոյ, gho եկեղեցոյն
5 i չիք ի
5 b յարևելից փխ յարևմտից
Վ կողմանէ վանացն
5 dn ցայսաւր
5 j գերեզմանն
6 abd աւգնէ
6 i ամենայն ցաւագնելոց, Վ ցաւագնելոցն
p յաղօթ
7 acdefghn տեղոյն
7 Մ-Թ և մի երկու ՁՁ տանեն
7 i մարդոց և անասնոց, op ի մարդոց և անասնոց
8 d փառաւորիչս
8 i ի կենդանութեանն, m ի կենդանութեան և ի մահուան
9 b պաշտաւնեայք, d պաշտաւնեայք
9 Մ-Թ և մի երկու ՁՁ գրաստօք, dn գրաստաւք, h գրաստունք, stՎ գրաստիւք
10 ij վրաց ոմն
10 Մ-ԹՎ և մի երկու ՁՁ բասիլիա, fh վասիլաս
11 bcdfhgno ի գինոյ
11 cdfh անդի
11 h գործեալ էր փխ գործակալ էր
11 n իւհանէի
12 cdijnoptuՎ իշխանի
12 Մ-Թ պաշտօնեայքս, cijp պաշտօնեայք նորա, d պաշտաւնեայք նորա
13 stՎ ասէին
13 n ցնոցա փխ ցնա, sՎ չիք ցնա
13 c մի՛ նեղէք
13 Մ-Թ քանի փխ քանզի
14 stՎ զի փխ քանզի
14 cdj հեղագոյն
14 ijp ելին փխ եկին
14 g հեղգագոյն էին ալիք
15 stՎ հայհոյեաց փխ անարգեաց
15 stՎ չիք հայհոյութեամբ
15 go այն
15—16 diop տեղին
16 stՎ անարգանօք փխ ձաղանօք
16 gh համարեցաւ փխ համրացաւ
17 Մ-Թ չիք 'և թիւրեցան շրթունք նորա'
17 no նոյնպէս

զում աւուրս, մինչև հառաչանօք խնդրեաց թողութիւն։ Եւ ամենայն որ, որ տեսանէր զայրն, գովէին զծառայն աստուծոյ։

Եւ եթող նա յիշատակ և արձան գերեզմանի գիրս իմաստախոհս յօգուտ ուսումնասիրաց՝ Համառօտ մարգարէութեանն Երեմիայի՝ գեղեցկագիր կարգօք, և սուղ ինչ կանոնս վասն սպասաւորելոյ մարմնոյ և արեան տեառն, թէ որպէս պատշաճ իցէ, կամ որպիսի կարգօք, և գիրք մի՝ Ողբք ի վերայ բնութեանս՝ ի դիմաց Ադամայ առ որդիս նորա, և ի դիմաց Եւայի առ դստերս նորա. և գիրք մի՝ Յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց, ի խնդրոյ մեծ զօրավարին Զաքարէի և եղբօր իւրոյ, և այլ թուղթս խրատականս։ Եւ եղև վախճան նորա ի ՈԿԲ թուականին ։

## ԺԷ

### Վասն որք յետ նորա կալան զառաջնորդութիւն վանիցն:

Փառաւորեցաւ վանքն և հռչակաւոր եղև անուամբ սուրբ վարդապետին և իմաստութեամբ Մարտիրոսի առաջնորդի, քանզի այր շինարար էր։ Շինեաց և այլ ժամատուն անտաշ վիմօք՝ մածուցեալ կրով, հաստահեղոյս որմօք, փայտակերտ վերնայարկօք, որ յետ ժամանակաց փլաւ վերնա-

1 stuՎ ամս փխ աւուրս
1 bdn հառաչանաւք
1 mnostuՎ զթողութիւն
1 st ամենեքեան փխ ամենայն որ
1 Վ չիք որ
1—2 s որք տեսանէին
3 stՎ արձան (Վ յարձան) և յիշատակ
3 Մ-Թ մտախորհս, a ի մտախոհս, lm մտախոհս
3—4 dn յաւգուտ, e յօգուտս, gop օգուտ
4 no իմաստախոհաց, stՎ իմաստասիրաց փխ ուսումնասիրաց
4 l մեկնութիւն մարգարէութեանն, es մարգարէութեան
4—5 h գեղեցկագիր
5 abcn կարգաւք, d կարկաւք
5 no սակս սպասաւորելոյ
6 adefghijl արեանն
6 h թէպէտ փխ թէ որպէս
6 cdn կարգաւք
7 tՎ ողբ
7 t մարդոյ փխ Ադամայ
7 no ի դիմաց առ որդիս նորա, p և առ որդիս
7 h չիք ի
8 p և առ դստերս
8—9 abcdfghno յայտարարութեան, ijklmp յայտարարութեան և ուղղափառութեան
8—9 nostՎ ուղղափառ հաւատոյ
9 bcijnpՎ հերձուածոց
9—10 ad զաւրավարին
10 b եղբօր նորա, st եղբօր իւրոյ իւանէի
10 b թուխթս, d թուխտս
11 bd վաղճան
11 dgj ի վեց հարիւր կբ, hՎ ի վեց հարիւր վաթսուն և երկու
11 d թվականին, i թուականին հայոց, tՎ թուին
12 l վասն թէ որք
12 o և առին փխ կալան
12 Մ-Թ առաջնորդութիւն փխ զառաջնորդութիւն վանիցն, bcdegijlnp զառաջնորդութիւնն (չիք վանիցն) stuՎ զառաջնորդութիւն վանացն
13 Մ-Թ հռչակեցաւ փխ հռչակաւոր եղև անուամբ, afhlm հռչակեցաւ անուամբ
14 Մ-Թ չիք և
14 bcdijp մարտիրոս
15 abcdefghՎ չիք և
15 n վիմաւք
15 o և մածուցեալ
15 s կրօք, tՎ կրովք
16 bd որմաւք, n որ մտօք փխ որմօք
16 Վ և փայտակերտ
16 adn վերնայարկաւք
16 m բլաւ

*յարկն. շինեաց և գրատուն մի գեղեցկաշէն յարկօք՝ արուեստաւոր ունելով զհիւսն Մխիթար, որ ի բազում իրս աշխատ եղև եկեղեցեացն և վանիցն։*

*Եւ բազում եղբարք ժողովեցան վասն հռչականուն տեղւոյն, և բազմաց եղև տեղի սննդեան և ուսման. որ և մեք իսկ սնեալ և ուսեալ եղաք ի նոյն վանս։*

*Սկսան շինել և այլ եկեղեցի մի հինգ խորանօք, կոփածոյ և տաշած վիմօք, գմբեթաւոր և գեղեցիկ շինուածով. և իբրև ընդմիջեցաւ եկեղեցին՝ խափանումն եղև յոլով ժամանակս, քանզի եկն սուլտանն Խորասանայ, Ջալալադինն կոչեցեալ, և եհար զզօրս հայոց և վրաց, և աւերեաց զբազում գաւառս։ Վասն այսր պատճառի և այլ յոլովից մնաց անաւարտ։ Ցետոյ այր ոմն, Գրիգոր անուն Կապալեցի, որ յառաջն արդիւնաւորեալ էր ի շինումն եկեղեցւոյն, վերստին ի ձեռն առեալ՝ աւարտեաց զնա ի ՈՂ թուականին։*

*Վախճանեցաւ և Իւանէ, եղբայր Զաքարէի, և թաղեցաւ ի Պղնձահանքն, ի դուռն եկեղեցւոյն, զոր շինեաց ինքն, առեալ ի հայոց՝ վրացի վանս հաստատեաց։ Եւ մինչ մեռանէր նա, յանձնեաց զորդի իւր և զտուն յիշխան ոմն իւր սնուցած և փառաւորած Գրիգոր անուն, զոր Տղայն կոչէին։*

1 d *գրատտուն* (sic), stuՎ *վերնատուն* փխ *գրատուն*
1—2 g *արուեստաւորելով*, no *արուեստիւք ունելով*
2 t չիք *ի*
2 n *աշխատեալ եղև*
2 d *յեկեղեցեացն*, g *եկեղեցեաց*, stՎ *եկեղեցեաց և վանից*
4 t *ժողովրդոցն* փխ *ժողովեցան*
4 i *անուն* փխ *հռչականուն*
4 acdefhn *տեղոյն*
5 n *սննթեան*
5 n *յուսման*
5 no *յուսեալ*
6 lu *վանսն*
7 stuՎ չիք *այլ*
7 Վ *եօթն* փխ *հինգ*
7 bdn *խորանաւք*, ip *խորանաւ*
8 stՎ *շինուածովք*
8 inp *ընդմիջացաւ*
9 o չիք *եկն*
9 n *սուլթանն*, Վ *սուլդանն*
9 no չիք *խորասանայ*, stՎ *խորասանու*
10 Մ-Թ *Ջալալատինն*, h *ջալատինն*, n *ջալալդինն*, o *ջալադինն*, stՎ (ԱԲԳ) *սալահատինն* փխ *Ջալալադինն*
10 dl *զզաւրս*, m *զզօրսն*, o *զօրս*
10 m *զվրաց*

11 stՎ *այսորիկ* փխ *այսր պատճառ*
u *այս*
11 no *և այլոց մնաց*
11 fh *անյաւարտ*
12 ip *յետ այսր ոմն գրիգոր*
12 stՎ *այլ* փխ *այր*
12 Վ չիք *անուն*
12 d *կապալից*
12—13 tՎ *արդիւնաւոր էր*
13 gh *եկեղեցոյն*
13 stՎ *ձեռնարկեալ* փխ *ի ձեռն առեալ*
13 kno չիք *ի*
14 dj *ի վեց հարիւր դ*, ghՎ *ի վեց հարիւր իննսուն* (g *նբսուն*)
14 d *թվականին*, ipՎ *թուին*
15 bn *վաղխճանեցաւ*, cd *վաղջանեցաւ*, Վ *վաղճանեցաւ*
15 n *իւհաննէ*
15 s *զաքարիայի*, *զաքարէ*
15—16 afh *պղնծահանքն*, cdj *պղնձահանգն*
16 hn *եկեղեցոյն*
16 o *որ*
17 h *վրանս* փխ *վանս*
17 Մ-Թ *արար* փխ *հաստատեաց*
17 e *և մինչդեռ*, g *և մինչդեռ կենդանի էր նա* փխ *մինչ մեռանէր նա*, stՎ *մինչև*
17 sfՎ չիք *և զտուն*
18 dgij *իշխան*
18 Մ-Թ չիք *փառաւորած*

Սա խնդրեաց յԱւագէն, յորդւոյն Իւանէի, զվանքն Գետիկ՝ իւր տեղի գերեզմանի։ Եւ վասն յոյժ սիրելոյ զնա՝ ետ նմա։ Գնեաց գիւղ մի ի նմանէ, Վաշխէ անուն, մերձ յԱղստև, ետ զայն ի վանքն, և այլ բազում արդիւնս, և գրեանս, և խաչս, և անասունս։ Շինեաց և հրաշազան եկեղեցի մի՝ երեքխորանի, մերձ ի գաւիթս եկեղեցւոյն, շինուած զարմանակերտ, և անուանեցաւ եկեղեցին յանուն սրբոյն Գրիգորի։ Նա և այլ յոլով շինուածք եղեն ի նմա. և բազմացան քահանայք և պաշտօնեայք և մանկունք ուսումնականք. և կալեալ Մարտիրոս զառաջնորդութիւնն ամս քսան՝ եթող կամաւորաբար։ Եւ կալաւ յետ նորա Մխիթար ոմն, և այլ սա, և նա, Յովսասփն, և այլք սակաւօրեայ, և Աբրահամ վարդապետն։ Եւ ապա տէր Յովհաննէս Արմանեցին, որ և Հաղարծնին էր առաջնորդ, և ձեռնադրեցաւ եպիսկոպոս յեօթնհարիւր հինգ թուականին։ Սա շինեաց ի Հաղարծինն զսեղանատունն երևելի՝ սրբատաշ վիմօք, և ապա գնաց ի մեծ աթոռն ի Հաղբատ. և յեօթնհարիւր երեք թուին Խաչատուր վարդապետն և եղբայր իւր Բարսեղն շինեցին եկեղեցի մի երեքխորանի, հանդէպ վանիցն, գմբեթաւոր, յանուն սրբոյն Գէորգեայ։

1 no աւագէն
1 cd յորդոյն, fgh որդոյն, st յորդւոյն աւագէ, Վ յորդւոյն Իւանէի յԱւագէ
1 ip յիւր
1 stՎ ի տեղի իւր
2 d յոյժ սիրոյ զնա, Վ սիրելոյն
2 j գնաց փխ գնեաց
2 abd գեաւղ, fhno գեօղ, g գեղ
3 d աղստև, e յաղքստև, ijp յաղստևայ
3 c և ետ
3 stuՎ արդիւնս արար
4 t չիք և...և
4 Վ չիք և
4 m եկեղեցի մի հրաշազան
5 o մերձ ի գաւիթ
5 hn եկեղեցոյն
5 stՎ շինուած
stՎ անուանեցին
6 tՎ չիք եկեղեցին
6 no այն փխ յանուն
6—7 Մ-Թ շինուածք յոլով
7 b պաշտոունեայք, dn պաշտաւնեայք
Վ Մարտիրոսն
aefghp զառաջնորդութիւն
8 Մ-Թ քառասուն փխ քսան, ինչպէ ունին ՁՁ մեծ մասը
9 Մ-Թ չիք Եւ
9 Մ-Թ և այլ նա
10 bgu յովասաքն, m յովասափ
10 Մ-Թ և այլ սակաւօրեայ, ip այլք սակաւօրեայք
10 n աբրամ
10 Վ չիք և
11 Մ-Թ Յովհաննէս, ef յովաննէս, gno յովանէս, p յօհաննէս
11 ip արամանեցին, mno արմանեցի
11 o չիք և
12 Մ-Թ ի յութհարիւր հինգ, abcdjklm ի չե, g էճե, ի եօթ, Վ յեօթն հարիւր և հինգ
12 c թվականին
12—13 i ի հաղարծնին, o զհաղարծինն
13 Վ սեղանատուն
13 o չիք երևելի
14 degn յաթոռն
14 Մ-Թ Հաղբատ փխ ի Հաղբատ, n յաղբաթ
14 Մ-Թ յութհարիւր երեք, abcdjklm յՆԳ, g ի էճգ, hՎ յեօթն (h եօթ) հարիւր և երեք
14 abcdfg թվին
15 Վ եղբայրն
15 mstՎ բարսեղ
15 Մ-Թ և մի քանի ՁՁ շինեաց
15 p ի հանդէպ
16 ip չիք գմբէթաւոր, n կմպեթաւոր
16 m որ յանուն, n անուն
16 dlo գէորգայ

## ԺԲ

### Վասն սուլտանին Ջալալադնին և կոտորելոյն զզօրսն Վրաց ի վեց հարիւր եօթանասուն և չորս թուին:

*Յառաջ ասացեալ ազգն Հիւսիսոյ արևելից, որ Թաթարն անուանէր, ի նեղ էարկ զսուլտանն Խորասանայ զՋալալադինն, և եհար զզօրս նորա, և տապալեաց զաշխարհս նորա։ Եւ հանին զնա փախստական ընդ աշխարհն Աղուանից. և եկն նա ի քաղաքն Գանձակ և առ զնա։ Եւ կուտեաց իւր զօրս անթիւ ի պարսից և ի տաճկաց և ի թուրքաց և եկն յաշխարհս Հայոց։*

*Զայն տեսեալ Իւանէի, ազդ առնէ թագաւորին Վրաց և ժողովէ զօրս բազումս՝ կալ ընդդէմ սուլտանին։ Եւ հպարտութեամբ մեծամեծս փքանային, և դաշինս եդեալ էին, եթէ յաղթեսցեն նմա, զամենայն հայ մարդ ի կրօնս վրաց դարձուսցեն, որք ընդ իշխանութեամբ նոցա, և զընդդիմացեալսն՝ սրով բարձցեն։ Զայս խորհուրդ խորհեցան ոչ աստուծով, և դաշինս կռեցին, և ոչ նորա հոգւով զայս խորհեցան, և զտէր ոչ հարցին, որ տուիչն է յաղթութեան ում և կամի։*

*Եկն ապա սուլտանն ի գաւառն Կոտայից։ Գնաց և Իւանէ զօրօքն Վրաց*

1 n սուլթանին, z սուլթանն
1 dm ջալալատնին, h ջալադնին, n ջալալթնին, st ԱԲԳ ջալահատնին (Վ ուղղել է՝ Ջալալադնին)
1 begi կոտորելոյ
1 h պարսից փխ վրաց
1 i զզօրն
1 z սուլթանն ջալալադին կոտորեաց զվրացիքն
2 cj ի վեց հարիւր հդ, dg ի դհհդ, Մ-Թ ի ոհդ թուականին, fhi չիք ի ոհդ
3 z չիք յառաջ ասացեալ, Վ յառաջասացեալ
3 fn հիւսուսոյ
3 i յարևելից
3 Մ-Թ և մի երկու ՁՁ թաթար
3 n կոչիւր, z կոչի, Վ անուանիւր փխ անուանէր
4 bcdefghjnstՎ ի նեղ արկ
4 nz սուլթանն
4 Մ-ԹՎ զՋալալատին, h զջալադին, st զաալահատին փխ Ջալալադինն
5 m զաշխարհս նորա տապալեաց
5—6 dmstՎ յաշխարհն, k ընդ աշխարհս
6 ips էառ
7 m չիք իւր
7 bdn զաւրս
7 m չիք անթիւս, z զօրս իւր անթիւս
7—8 st զօրս անթիւս կալ ընդդէմ սուլտանին, և զօրքն էր ի պարսից և ի տաճկաց և ի թուրքաց և եկն յաշխարհս հայոց ժողովեալ զօրս բազումս և հպարտութեամբ
7 Վ զօրս անթիւս և զօրքն էր ի պարսից...
7 b քուրթաց
8 gn աշխարհս
9 z ժողովեցաւ
9 bdn զաւրս
10 z սուլթանին
10—11 cdijnostuzՎ փքային
11 Մ-Թ թէ
11 n աղթեսցեն
11 degij զամէն մարդ հայ, nopu մարդ հայ, stՎ չիք մարդ, z հայս փխ հայ մարդ
12 cn ի կրաւնս
12 d նոցա էին, i նոցա է (sic)
12—13 i ընդդիմացեալսն, m ընդդիմադարձսն, o զընդդիմացօղսն
13 stՎ խորհուրդս
13 ip և ոչ
14 g դաշինս կռեցեն, o դաշինս դրեցին, z դաշինս կարեցին
14 abcdfgh հոգով, j հոգովն
15 z ում կամի նա յաղթէ
16 cijpz սուլտանն (z սուլթանն) ջալալադին, d սուլտանն ջալալատին
16 Մ-Թ և մի երկու ՁՁ կուտայից, i կոտէից, z կուտէից
16 Վ գնաց Իւանէ (չիք և)
16 a զորաւքն, b զաւրօքն, dn զաւրաւքն

և կայր հանդէպ նոցա ի վերոյ. և տեսեալ զնոսա՝ զանգիտեաց, զետեղեալ ի՛ տեղւոջն։ Իսկ սուլտանն՝ յառաջ վարեալ զզօրս իւր, գայր հանդէպ նոցա։ Եւ իբրև զայն ետես իշխան մի յաւագացն վրաց, Շալուէ անուն նորա, և եղբայր իւր Իւանէ, արք քաջք և անուանիք, և յաղթողք ի պատերազմի, ասեն ցայլ զօրսն. «Դուք կացէք մնացէք վայր մի, և մեք երթեալ խառնեսցուք ի նոսա. եթէ դարձուսցուք զոմանս ի նոցանէ յետս, մե՛ր է յաղթութիւն, եկայք և դուք. ապա թէ նոքա մեզ յաղթիցեն, փախերուք դուք և ապրեցուցէք զանձինս ձեր»։

Եւ իբրև խառնեցան նոքա, սկսան կոտորել զզօրս սուլտանին։ Իսկ զօրն վրաց այնմ ուշ ոչ եդին, այլ փախեան ի տեղւոջէ անտի, մինչև այր զընկեր ի փախուստ ո՛չ գիտէր։ Եւ երթեալք առանց ուրուք հալածելոյ ամենեքեան ի վախից ՝ի վայր մղեալք՝ ի ձոր անդր լնուին ի գլուխս քաղաքագեղն Գառնւոյ։ Եւ իբրև տեսին զայն զօրքն սուլտանին, զհետ մտեալ՝ զբազումս կոտորեցին և զայլս գահավէժ արարին։

Եւ եկեալ սուլտանին ի գլուխ ձորոյն՝ ետես զայն ողորմ տեսիլն, զի իբրև զդերբուկս քարանց կուտեալ կային անդ բազմութիւն մարդկան և երիվարաց, շարժեաց զգլուխ իւր և ասէ. «Այս գործ ոչ մարդոյ է, այլ աստուծոյ միայն, որ կարողն է ամենայնի»։ Եւ դարձաւ դիակապուտ առնել

1—2 stՎ զետեղեաց ի տեղւոջն և զանգիտեաց
1—2 z ի տեղւոջն զետեղեաց
2 cefhno ի տեղոջն
3 Վ չիք և
3 p և իբր
3 st շաւէ (sic), Վ Շալւէ
4 mzՎ չիք նորա
4 m եղբայրն իւր
4 n աղթողք
5 bd զաւրսն, uՎ զօրս
6 z ընդ նոսա
6 g դարցեսցուք
6 Մ-Թ և մի քանի ՁՁ ի նոցանէ զոմանս
7 j յաղթութիւնն
7 z զկնի մեր փխ և դուք
7 n չիք թէ
7—8 stuՎ չիք 'ապա թէ… փախերուք դուք'
7 mn յաղթեցին, o յաղթեսցեն, z զմեզ յաղթեսցեն
9 Վ չիք Եւ
9 Մ-Թ և մի երկու ՁՁ կոտորելով զօրս սուլթանին
10 d զաւրն, n զաւրսն
10 o այնմ յուշ ոչ եդեն փխ ոչ եդին, u ոչ յուշ եդին, Վ ոչ ուշ եդին
10 bcdegh ի տեղոջէ
10 achj անդի
11 inoՎ ի փախուստն
11 Վ չիք և
11 Վ երթեալ

12 no ի վախից վայ (sic) մղեալք, z ամենեքեան վախից, Վ ի վախիցն
12 tuՎ մխեալք
12 Վ ի ձորն
13 b քաղաքագեաւղն, g քաղաքագիւղն, inop քաղաքագեօղն, cdejmu քաղաքագիւղն, z քաղաքագիւղին, stՎ քարագիւղին
13 Մ-ԹՎ և մի քանի ՁՁ գառնոյ
13—14 no չիք 'տեսին…զհետ մտեալ'
13 z սուլթանին
14 stՎ մտին
14 cdijnopz բազումս
14 p գահավէժս
14 Մ-Թ առնէին փխ արարին
15 z սուլթանին
15 u չիք 'և եկեալ սուլտանին'
15 st չիք 'և եկեալ…ի գլուխ'
15 s չիք ձորոյն
15 abcdefghiՎ տեսիլ, j ողորմ տեսիլ, o ողորմատեսիլ, t տես…
16 Մ-Թ զբերդուկս, mo զերբուկս
16 st կուտեալք
16 stՎ բազմութիւնք
16—17 h մարդկանն, z մարդկանց, Վ երիվարացն
17 stՎ գործս
17—18 stՎ այլ միայն աստուծոյ, i յաստուծոյ
18 z չիք միայն
18 bcdefhijp յամենայնի

*զանկեալսն, և աւերեալ զբազում տեղիս՝ գնաց ի քաղաքն Տփխիս. և ձեռնտու եղեն պարսիկքն, որ ի նմա, և առ զքաղաքն և զբազումս կոտորեաց, և զն՛ս բազումս բռնադատէր թողուլ զքրիստոնէութիւն և հաւանիլ խաբեբայ և մոլար ուսմանն տաճկաց։ Բազումք այնուհետև յերկիւղէ մահուանն զանգիտեալ՝ փոխանակէին զճշմարտութիւնն ընդ ստութեանն, և այլք յանձն առեալ զմահ քաջութեամբ, քան զկեանս խղճիւ, զվկայական անուն ժառանգեալ՝ ելին յաշխարհէս բարի անուամբ։*

*Եւ ապա հրաման ետ, որք հաւանին և որք ոչ, ո՛չ հարցաքննութիւն առնել, այլ բռնութեամբ զամենեսին թլփատել։ Եւ այսպէս բռնաբար երկուց ոմանց կալեալ զձեռանէ մարդկան ի հրապարակի անդ և միւս ոմն առեալ սուր՝ հատանէր զմաշկ առնացի անդամոյն. և ընդ կանայսն խառնակէին զազրալից պղծութեամբ։ Եւ ընդ ամենայն տեղիս, ուր և գտանէին խաչ կամ եկեղեցի՝ կործանէին և քակէին։ Զայս ոչ միայն ի Տփխիս, այլ և ի Գանձակ, և ի Նախճաւան, և յայլ տեղիս գործէին։*

*Մի ոմն յաւագացն, որ և մայր սուլտանին կին էր նորա, Օրղան անուն, սա բազում չարչարանօք նեղէր զբնակիչս քաղաքին Գանձակայ՝ ո՛չ միայն զքրիստոնեայսն, այլ և զպարսիկսն՝ հարկապահանջութեամբ*

1 z *անկեալսն*
1 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *աւերել*
1 stՎ *քաղաքս* փխ *տեղիս*
1 stՎ չիք *քաղաքն*
2 u *ձեռնատու*
2 no *պարսիկք ի նորա*, uՎ *պարսիկք*
2 z *որ ընդ նմա*
2 ips *էառ*
2 sՎ *գնա* փխ *զքաղաքն*
2 bc *բազումս*
2—3 z *և կոտորեաց ի քրիստոնէից*
3 n *բազում*
3 bcdejnpՎ *զքրիստոնէութիւնն*
3—4 bcdfhj *հաւանել*, egno *հաւանեալ*, t *լինել* փխ *հաւանիլ*
4 dՎ *ուսման*
4 f *և բազումք*
4—5 u *յերկեղէ*
5 b *մահուան*
5 st *զանգիտեալ*, z *փոխանակէին զանգիտեալ*
5 h *զճշմարտութիւն*
5—6 cdejmՎ *ընդ ստութեան*
6 Վ *այլքն*
6 *Մ-Թ*Վ և մի երկու ՁՁ *առին*, ijp *առեալք*
6 Վ *խղճին*
7 dՎ *անունն*
7 stuՎ *մահուամբ* փխ *անուամբ*
8 i *հրամայեաց* փխ *հրաման ետ*
8 abcefghjmo *հաւանինն*
9 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *զամենեսեան*
9 no *բռնակալութեամբ* փխ *բռնաբար*
9—10 uՎ *յերկուց*
10 stuՎ *կողմանց* փխ *ոմանց*
10 u *կապեալ* փխ *կալեալ*
10 t չիք *զձեռանէ*
10 abcdefghmno *մարդկանն*
10 g *ի հրապարակին*
10 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *միւսն* փխ *միւս ոմն*
11 z չիք *առեալ*
11 no չիք *զմաշկ*
11 abcdfhkmu *զկանայսն*, ijp *զկանայս*, no *կանայսն* փխ *ընդ կանայսն*
12 t *զազրելի*, Վ *զազրալի*
13 s *խաչս կամ եկեղեցիս*, t *եկեղեցիս*
13 Վ *և զայս*
13 t չիք *ոչ*
13 n *ի դպխիս*
14 z չիք *այլ*
14 n *ի կանծակ*
14 *Մ-Թ* *Նախջաւան*, g *Նախչաւան*, no *Նախչուան*, stՎ *Նախջուան*, u *Նախճուան*, z *Նախիջևան*
15 Վ *Եւ մի ոմն*
15 z *սուլթանին*
15 bcdn *աւրղան*, g *ուրղան*, ijp *արղան*
16 abdn *չարչարանաւք*
16 tՎ *նեղէր զքաղաքն գանձակ* փխ *նեղէր զբնակիչս քաղաքին Գանձակայ*
17 ip *զքրիստոնեայս*
17 *Մ-Թ* *զպարսիկս*, g *պարսիկսն*, ip *պարսիկքն*, j *զպարսիկն*

*բազմաւ։ Եւ սպանաւ ինքն ի նմին քաղաքի ի մուլհեղաց, որք սովոր են նենգութեամբ սպանանել զմարդիկ։ Մատեան առ նա ոմանք՝ մինչդեռ գայր ընդ փողոց քաղաքին, իբր թէ զրկանս կրեալ իցէ նոցա յումեքէ, և առ նա մատեան տալ իրաւունս։ Ցուցին նմա թուղթ ի ձեռին ունելով՝ աղաղակեցին և ասեն. «Դա՛տ, դա՛տ»։ Եւ իբրև զտեղի առ նա և կամէր հարցանել, թէ ո՞յր իցէ նեղեալ զնոսա, նոքա սատի և անտի յարեան ի վերայ նորա, և սրով, զոր ունէին ի ծածուկ, խոցոտեալ սպանին զնա։ Եւ այսպէս բարձաւ չարն չարեաւ ի միջոյ։ Եւ զսպանողսն նորա հազիւ կարացին սպանանել նետիւք, զի զբազումս խոցոտեալ փախեան ընդ մէջ քաղաքին. զի այսպէս սովոր են առնել ազգն այն, որ բնացեալ են յամուր տեղիս, զոր Թուն և Թանչահ կոչեն, այլ և ի մայրիսն Լիբանանու. առնուն զգինս արեան իւրեանց յիշխանէն իւրեանց, զոր պաշտեն փոխանակ աստուծոյ, և տան յորդիս և ի կանայս իւրեանց. և ինքեանք երթեալ, ուր և առաքէ իշխան նոցա, բազում ժամանակս դեգերին ի կերպս կերպս եղեալ, մինչև պատեհ ժամանակ գտցեն սպանման, և ապա սպանանեն, զոր և կամին։ Վասն այնորիկ երկնչին ի նոցանէ ամենայն իշխանք և թագաւորք և տան հարկս նոցա։ Եւ սաստիկ կատարողք են հրամանաց իշխանին իւրե-*

1 stuՎ չիք *ինքն*
1 z *նոյն* փխ *նմին*
1 *Մ-Թ մուլհիտացն*, i *ի մուլհըդացն*, mn *ի մուլհետաց*, j *քաղաքի մուլհեղաց*, p *ի մուլհեղացն*, st *ի մահեղաց*, u *ի մալհեղաց*, Վ *ի մլհեղաց*
1 *Մ-Թ սրով* փխ *սովոր են*, stuzՎ *սովոր էին*
2 stuՎ չիք *նենգութեամբ*, n *նենկութեամբ*
2 *Մ-Թ սպանանեն*, n *սպանա* (sic)
2 ij *զմարդիկք*
2 3 c *մինչդեռ ընդ փողոս* (sic) *քաղաքին գայր*,
3 ip *գայր նա*, o *կայր* փխ *գայր*
3 e *ընդ փողոցս*, no *ի փողոց*, z *զփողոց*, Վ *ընդ փողոցն*
3 stՎ *կալեալ* փխ *կրեալ*
3 st *նոքա*, Վ *նա* փխ *նոցա*
3 no *ումեք է*
3 bcd չիք *և*
4 i *թուղթն*
4—5 no չիք *'ցուցին նմա...աղաղակեցին'*
5 ips *զտեղի էառ*
6 *Մ-Թ ո իցէ* փխ *ոյր իցէ*
6 s *բայց նոքա*
6 ac *անդի*
7 *Մ-Թ* և մի քանի ՁՁ չիք *նորա*
7 Վ *սրովն*
7 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *խոցեալ*
8 *Մ-Թ չարն* փխ *չարն չարեաւ*, abcd ijmp *չարաւ*, fgh *չարու*
8 abcdefghmoՎ *զսպանողս*, t *զսպանողն*
9 no *սպանանել զնա նետիւք*
9—10 ij *բազումք* (j *զբազումք*) *խոցոտեալ փախեան ընդ մէջ քաղաքին*
9—10 *Մ-Թ խոցեալ փախեան ի մէջ քաղաքին*
10 o *սովոր էին*
10 gho *բնացեալ էին*
11 do *Թիւն և Թանչահր*, ijp *Թանչահր* u *Թուն ի Թանչահ*, Վ *Թունի Թանչահ*
11 stuz չիք *ի*, z *զմայրիսն*
12 abcefhju *յիշխանէ*, gino *իշխանէ*
13 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *որդիս և կինս*, bcd *յորդիս*, ab *ի կինս*, efgh *յորդիս և ի կինս*, ijp *յորդիս և ի կինս*
13 *Մ-Թ նոքա* փխ *ինքեանք*
13 afghno *երթալ*
14 i *ժամանակաց*
14 st *ի կերպս եղեալ*
15 *Մ-Թ ժամանակս*
15 abcdfu *սպանեն*, h *և ապականեն* փխ *և ապա սպանանեն*, z *սպանցեն*
15 stՎ *զորս կամին*
16 g *երկնչէին*
16 z չիք *ի նոցանէ*
16 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *թագաւորքտան*
17 z *հրամանին իշխանաց*

*անց, զոր խնչ և ասէ՝ մինչ ի մահ անձանց իւրեանց ոչ խնայէին։ Եւ այսպէս զբազում մեծամեծս սպանանէն նոքա, որք ոչ հարկին նոցա, որպէս և զայս ամբարիշտս։*

## ԺԹ

### Վասն կորստեան սուլտանին Ջալալադնի եւ բառնալոյ նորա յերկրէ:

*Յետ գործելոյ նորա զայս չարիս՝ գնաց նա ի քաղաքն Խլաթ, որ է յաշխարհին Բզնունեաց։ Եւ էր նա ընդ իշխանութեամբ Աշրափ սուլտանին, և ետ պատերազմ ընդ նմա, և առ զնա։ Էր անդ և կին սուլտանին, դուստր Իւանէի, Թամթա անուն, զոր վերագոյն յիշեցաք, առ զնա իւր ի կնութիւն, չոգաւ և աւերեաց զբազում գաւառս յիշխանութենէն սուլտանին Հոռոմոց, զոր Ալադինն կոչէին։ Ապա միաբանեալք սուլտանքն Աշրաֆն և Քէմլն, եղբայր իւր, որ իշխէր կողմանցն Եգիպտոսի, և Ալադինն. կոչեցին իւրեանց օգնական և ի զօրացն Հայոց, որ յաշխարհին Կիլիկեցւոց, և ի Փռանկացն ծովեզերեայց, և եկին տալ պատերազմ ընդ Խորազմեց-*

1 ehitՎ *մինչև*
1 Մ-Թ և մի շարք ՁՁ *խնայել*, n *խնաել*
2 Վ *բազում*
2 d *որ ոչ հարկին*, g *հարկին ա՞յ*, f *հարկեն*, h *հարկանեն*
3 Մ-Թ *ամբարիշտ*, z *ամբարիշտս*, *այս եղև ոհդ թվականին հայոց*
4 n *սուլթանին*
4 adm *ջալալատնի*, Վ *Ջալալատնին*, st *սալահատնին* փխ *Ջալալադնի*, ho *ջալադնին*, n *ջալալդնին*
4—5 Մ-Թ չիք *նորա յերկրէ*, stՎ *բառնալոյն նորա յերկրէ*, z չիք *Վասն կորստեան... յերկրէ*, d *երկրէ*, o *ի յերկրէ*, t *յերկրէն*
6 z *նոցա զչարիս* փխ *նորա զայս չարիս*
6 g *նորա* փխ *նա*
6—7 Մ-Թ և մի քանի ՁՁ *ի քաղաքն խլաթայ աշխարհին*, stՎ *որ է խլաթ յաշխարհին*, abefghm *որ յաշխարհին*, z չիք *'որ... բզնունեաց'*
7 Մ-Թ և մի երկու ՁՁ *աշրաֆ*, ijp *աշրաք*, no *աշրաքին*
7—8 tՎ *իշխանին* փխ *սուլտանին*, z *սուլթանին*
8 m չիք *'և ետ... առ զնա'*, n *բազում պատերազմ*, Վ *պատերազմն*
8 ipstՎ *էառ*
8 mՎ չիք *և*
8 mz *սուլթանին*, n չիք *սուլտանին*
9 efg *թամթայ*
9 z չիք *'զոր... յիշեցաք'*
9 abcdefgm *վերագոյնն*
9 ih չիք *առ*, ips *էառ*
9—10 bcdegimnopuzՎ *կնութեան* փխ *ի կնութիւն*
10 abcdfghm *յիշխանութենէ*, no *իշխանութենէն*
10 z *սուլթանին*
11 d *ալատինն*, o *ալաթինն*, st *սալահադինն* փխ *Ալադինն*
11 abcdefghjmnou *միաբանեալ*
11 Մ-Թ *սուլտան*, z *սուլթանքն*, Վ *սուլդանքն*
11 ip *աշրաքն*
12 Մ-Թ *Քէմլ*, no *քէմալն*, s *գէլմն*, t *քէլմն*
12 Մ-Թ *ի կողմանս* փխ *կողմանցն*, fk *իշխէր կողմանս*, z չիք *կողմանցն*
12 st *զսալահադինն* փխ *Ալադինն*, ԱԲԳ *զալադինն*, Մ-ԹՎ *Ալադին*
13 Մ-Թ և մի շարք ՁՁ *կոչեցին և*, Վ չիք *և*
13 adjn *աւգնական* (j *յաւգնական*)
13 Մ-Թ և մի քանի ՁՁ *կիւլիկեցւոց*, dtghj *կիւլիկեցոց*, c *կիլիկեցոց*
14 adhkm չիք *ի*
14 Մ-Թ և մի երկու ՁՁ *փռանգացն*, i *Ֆրանկացն*, p *Ֆռանգացն*, Վ *ի ֆռանկաց*
14 abcdefghjmnop *ծովեզերայց*, Վ *ծովեզերեաց*, z *կոչեցին ի կիլիկիայ զօրքն հայոց և Ֆռանգաց ծովեզերեայց*
14 ac *խորեզմեցոյն*, b *խորեզմեցւոյն*, dfgh *խորազմեցոյն*, no *խորազմեցւոցն* stuՎ *խորազմացւոցն*, z չիք *ընդ խորազմեցւոյն*

*ույն Ջալալադնի։ Եւ իբրև եկին մօտ առ միմեանս, զանգիտեցին երկոքին կողմանքն և ոչ իշխէին խառնիլ ընդ իրեարս։ Ապա քրիստոնեայքն, որ ի Հայոց և Փռանկաց, խրախուսեալք յաստուած, դիմեցին ի վերայ նոցա։ Եւ էին թուով սակաւք, պակաս քան զհազար մի, և զօրութեամբն Քրիստոսի հարին զզօրսն և ի փախուստ դարձուցին։ Եւ զայն տեսեալ զօրացն տաճկաց՝ յարձակեցան և նոքա. և հարին կոտորեցին զբազումս մինչ ի մուտս արևուն։ Ապա հրաման ետուն սուլտանքն ոչ պնդել զհետ փախստէիցն, իբր այն թէ հաւատակիցք նոցա իցեն։ Եւ դադարեցին ի պնդելոյ զհետ նոցա։ Իսկ սուլտանքն, զի արք բարեպաշտք էին, ոչ ապերախտք լինէին առ զօրն քրիստոնէից, զի գիտացին, թէ ի ձեռն նոցա ետ տէր զյաղթութիւնն։*

*Ապա դարձան մեծաւ ուրախութեամբ յաշխարհն իւրեանց. և ընդ որ անցանէին ընդ քաղաքս և ընդ գաւառս, ելանէին ընդ առաջ նոցա պարուք և ծնծղայիւք և գովասացութեամբ ընդունէին։*

*Իսկ Ալադինն իբրև եկն ի Կեսարիա Կապադովկացւոց, ամենայն բազմութիւն քաղաքին՝ հանդերձ քրիստոնէիւքն և քահանայիւք իւրեանց, խաչիւք և ժամահարօք, իբրև աւուր միոյ ճանապարհ ելին ընդ առաջ նո-*

n *առ միմիանս*, z *առ միմեանց*
1 afhm *զանգիտացին*
1 g *երկոքեան*
2 jo *խառնել*
2 dj *իրարս*
2 stՎ *որք*
3 Մ-Թ *Փռանգաց*, ipz *Ֆռանգաց*
3 ip *խրախացեալք* փխ *խրախուսեալք*, s *խրախուսեցան*, z *խրախոյս եղեալ զաստուած*
3—4 g *նորա* փխ *նոցա*
4 no *թուովք*
4 h *սակաւուք*
4 st *նուազ*, Վ *նուազք քան* փխ *պակաս քան*
4 st չիք *մի*
4 ad *զաւրութեամբն*
5 cdjp չիք *ի*
6 n *արցակեցան*
6 z չիք *հարին*
6 cd *և կոտորեցին*
7 Մ-Թ *զի* փխ *մինչ*, bstՎ *մինչև*
7 g *արևին*, stՎ *արևու*
7 Մ-Թ և մի երկու ՁՁ *արևուն էր*
7 z չիք *'մինչ ի մուտս արևուն'*
7 Մ-Թ և մի երկու ՁՁ *հրամայեցին* փխ *հրաման ետուն*
7 Մ-Թ և մի երկու ՁՁ *պնդիլ*
8 Մ-Թ և մի երկու ՁՁ *փախուցելոցն*
8 Վ *իբրև*
8 k չիք *ի*
9 z *սուլթանքն*
9 dgh *բարեպաշտ*
9—10 h չիք *էին ոչ ապերախտ առ զօրն*
9—10 Մ-Թ և մի քանի ՁՁ *ոչ ապերախտ լինէին*
10 ijp *առ զօրքն*, stuՎ *զօրուն*, z *առ զօրսն*
10 z չիք *թէ*
10 Վ *ի ձեռս*
11 g *յետ* փխ *ետ*
11 no չիք *տէր*
12 abceu *յաշխարհ*, d *յաշխարհս*, fgz *աշխարհ*
12 g *իւրոց*
13 ip *ընդ քաղաքս և ընդ գիւղս և ընդ գաւառս*, z *ընդ գիւղս* փխ *ընդ գաւառս*
13 abdfhijkm *ընդ յառաջ*
13—14 p *պարօք*, zՎ *պարիւք*
14 n *ծըծղայիւք* z չիք *և ծնծղայիւք*
14 z *գովասանութեամբ*
15 bijp *կապպադովկեցւոց*, c *կապպաթովկեցոց*, dm *կապպադովկացւոց*, etՎ *կապադովկեցւոց*. fh *կապադոկացոց*, n *կապադովկեցոց*, o *կապադովկացոց*, z չիք *Կապադովկացւոց*
16 g *բազմութիւնն*
16 z չիք *հանդերձ քրիստոնէիւքն և*
16 b *քահանայիւքն*
16 g *իւրոց*, z չիք *իւրեանց*
17 s *խաչօք*, z *և խաչիւք*
17 notՎ *ժամահարիւք*
17 z չիք *'և ժամահարօք... ճանապարհ*
17 Մ-Թ և մի երկու ՁՁ *յաւուր*
17 abcdefghikm *ընդ յառաջ*

րա։ Իբրև մօտ եղև սուլտանն, բազմութիւն տաճկաց ոչ տային թոյլ քրիստոնէիցն խառն ինքեանց հպիլ յերկրպագութիւնն սուլտանին, այլ յետս կոյս մղեցին զնոսա։ Եւ նոքա եկին ի բլուր մի հանդէպ բանակին։ Իբրև եհարց սուլտանն, թէ ովք են նոքա, և գիտաց, թէ քրիստոնեայք են, ինքնին իսկ մեկնեցաւ ի զօրէն միայն, և գնաց ի մէջ նոցա, և հրամայեաց հարկանել զժամահարսն, և պաշտել բարձրաձայն։ Եւ այնպէս եմուտ նոքօք ի քաղաքն, և ետ նոցա պարգևս, և արձակեաց յիւրաքանչիւր տեղիս։

Իսկ Ջալալադին սուլտանն դարձաւ մեծաւ ամօթով յաշխարհն Աղուանից՝ ի բերրի և յարգաւանդ դաշտն, որ կոչի Մուղան, և անդ զետեղեալ՝ կամէր զօր ժողովել։ Ապա թաթարն, որ եհան զնա փախստական յերկրէ իւրմէ, զհետ մտեալ նորա՝ տարաւ վարեաց զնա մինչև յԱմիթ. և անդ եհար զզօրս նորա սաստկապէս։ Կորեաւ և անօրէն իշխանն ի նմին պատերազմի. և թէ որպէս ոմանք ասեն՝ երթայր հետիոտս փախստական. դիպեալ նմա առն միոջ և գիտացեալ, թէ նա է, սպան զնա փոխանակ արեան մերձաւորի իւրոյ, զոր սպանեալ էր նա յայլում աւուր։ Եւ այսպէս բարձաւ չարն չարեաւ։

1 Մ-Թ նոցա, tՎ նմա փխ նորա
1 Վ և իբրև
1 z սուլթանն
1 bcgu բազմութիւնն, ijp զբազմութիւն
1 oՎ տաճկացն
2 fh խառն ընդ ինքեանց, z խառնիլ ընդ ինքեանց
2 Մ-Թ և մի երկու ՁՁ յերկրպագութիւն, z հուպ երկրպագել սուլթանին
2—3 h յետ կոյս, m ի յետս կոյս
3 z չիք իբրև
4 o չիք սուլտան
4 z և իբրև գիտաց
4 z որ փխ թէ
4—5 Մ-Թ և մի երկու ՁՁ ինքն իսկ
5 n ի զօրոյն, o ի զօրացն, Վ ի զօրուէն
5 z չիք միայն
6 m բարձրաձայն պաշտել
6 dipz բարձր ձայնիւ փխ բարձրաձայն
7 Մ-Թ չիք նոքօք, bd նոքաւք, ip նոքօք եմուտ, stՎ նոքօք եմուտ այնպէս
7 Մ-Թ և մի քանի ՁՁ առաքեաց փխ արձակեաց
7 g իւրաքանչիւր
9 Մ-ԹՎ Ջալալատին, afh Ջալալադինն սուլտան, o Ջալադինն
9 i յաշխարհ, o աշխարհ
10 a բրրի, k բռի (sic)
10 Մ-ԹՎ և մի քանի ՁՁ մողան, n մուղղան, t մուղ (sic)
11 o ժողովել զօր
12 Մ-ԹՎ և մի երկու ՁՁ յերկրէն
12 Մ-Թ տարեալ վարեաց, stՎ տարաւ վարելով (tՎ վարեալ)
13 degjptzՎ յամիթ քաղաք, no Տիգրանակերտ փխ յամիթ
13 dj զզաւրս, g զօրս
13 no չիք նորա
13—14 no անօրէնն չարեաւ (չիք իշխանն)
14 Մ-Թ և մի երկու ՁՁ թէ ի նմին
14 z որպէս ասէն ոմանք
14 bd հետիոտս
15 h ի փախստական
15 Մ-Թ և մի քանի ՁՁ դիմեալ
15 ij նորա փխ նմա
15 pstՎ եսպան, u նա եսպան
15 stuՎ չիք արեան
16 o իւրովին փխ իւրոյ զոր, sՎ որ, t չիք զոր
16 g սպանանեալ էր
16 bcdegnopz նորա փխ նա, stՎ զնա
16 g յայլումն, no այլում
17 g յաւուր, o վայրի փխ աւուր
17 z նոյնպէս փխ այսպէս
17 abcdgj չարն չարաւ, stuՎ չարն ի միջոյ փխ չարն չարեաւ

## Ի

### Թէ ո՛րպէս եղ բարարն ապականել զաշխարհս ամենայն:

*Ամենայն բանք պատմութեանս մերոյ և նախաշաւիղ, որ մինչև ցայս վայր էր, վասն ազգիս այսորիկ էր, զոր շնորհօքն աստուծոյ հանդերձեալ եմք ճառել. կարծեմ թէ և յոլովք ևս զնոյնս պատմեսցեն, և ամենեքեան նուազեալ գտանին յարժանաւորութենէն. զի յաճախ են քան զպատմութիւնս՝ չարիքս, որ եկին կալան զաշխարհս ամենայն. զի ժամանակս ի վերջ հասեալ է, և կարապետք նեռինն գուշակեն զգալուստ որդւոյն կորստեան: Երկեցուցանեն և զմեզ յայտնութիւնք սրբոց արանց և աստուածազգեստից, զոր հոգին սուրբ հցոյց նոցա ի զգուշութիւն ապագայիցն, և մանաւանդ անսուտ հրամանն փրկչին մերոյ և աստուծոյ, որ ասէ՝ «Յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն ի թագաւորութեան վերայ, և այն, ասէ, սկիզբն է երկանց»*: Այլ և սրբոյն Ներսիսի հայրապետին մերոյ, զոր մարգարէաբար ազդեաց վասն կործանման աշխարհիս Հայոց յազգէն նետողաց, զոր աչօք մերովք տեսաք զաւեր և զտառապանս, զոր անցուցին ընդ աշխարհս ամենայն: Եւ եղև պատճառ ելից նոցա այսպէս.*

*Քանզի յաշխարհին հեռաւոր հիւսիսոյ յարևելից, զոր կոչեն ի խժա-*

* Մատ. ԻԴ. 7,8. Մար. ԺԳ. 8—9:

1 z *վասն ելանելոյ* փխ *թէ որպէս եղ*
1 c *ղաղարն* փխ *թաթարն*, z *թաթարին*
1 m *և ապականեաց*, z *և ապականելոյ*
1 c *զյաշխարհս*, g *աշխարհս*, m *զաշխարհ*
2 m չիք *ամենայն*
2 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *մերոյ պատմութեանս*
2—5 z չիք *'Ամենայն…նուազեալ'*
2 i *զոր*
3 sՎ *ցայսօր* փխ *ցայս վայր*, t *ցայսր* u *ցայսօր վայր էր*
3—4 t չիք *'վասն… ճառել'*
3 Վ չիք *էր*
3 bd *շնորհաւքն*
3 sՎ *քրիստոսի* փխ *աստուծոյ*
4 fhՎ *կարծեմք*
4 st չիք *թէ և*, euՎ չիք *և*
4 Վ *յոլով*
5 i *նուազեալք*
5 n *յարժանաւորութենէ*, no *գտցեն արժանաւորութենէն*
5—12 z չիք *'գտանին…այլև'*
5 Վ *յաճախեն* փխ *յաճախ են*, n *աճախ են*
6 m *որք*
6 g *աշխարհս*
6—7 g *զժամանակս*
7 i *գուշակէին*
8 bcdfgh *որդոյն*
8 hno *երկուցանեն*
9 imstu *աստուածազգեցից*, no *աստուածազգեց ից*ն
9 stuՎ *սուրբ հոգին*
9—10 no չիք *'զոր հոգին… ապագայիցն'*
9 e *զգուշութիւնն*
10 g *հրամանի*
10 չիք *և*
12 g *սրբոյն գրիգորի և ներսէսի*
12 *Մ-Թ*Վ և մյուս ՁՁ *ներսէսի կամ ներսեսի*, մի քանիսը միայն՝ *ներսիսի*
12—13 z *սուրբ հայրապետն ներսէս զոր*
13 ijp *ասաց ազդեաց*
14 g *ազգէն*, i *յազգէ*
14 ad *աչաւք*, i *աչօքն*
14 ipz *զաւերումն*
15 g *տառապանս*
15 d *ընդ յաշխարհս*
15 o չիք *եղև պատճառ*
16 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *յելից* փխ *ելից*
17 gi *աշխարհին*, Վ *աշխարհն*
17 f *հիւսւսոյ*
17 efhjՎ *արևելից*
17 il *կոչէին*
17 o *զոր ի խուժական լեզուն* (չիք *կոչեն*)

*կան լեզուն Ղարաղրում, ի սահմանս Ղատիայ, բարբարոս ազգացն բազմութիւն որ անդ են՝ անգիտելիք և անթուելիք բազմաց, գլուխ Թագաւորացն ունելով ազգն, որ կոչի Թաթար,— որում անուն էր Չանգզ ղան։*

*Դէպ եղև մեռանիլ նմա, և յառաջ քան զվախճանն՝ կոչեաց զզօրսն ամենայն և զերիս որդիս իւր, զոր ունէր, և ասէ ցզօրսն. «Ես աւասիկ մեռանիմ. զմի յորդւոց աստի իմոց՝ զոր կամիք, ընտրեցէք ձեզ թագաւոր, փոխանակ իմ»։ Եւ նոքա ետուն պատասխանի. «Զոր միանգամ կամք քո ընտրեսցեն, նա լիցի մեր թագաւոր, և նմա ծառայեսցուք միամտութեամբ»։ Յայնժամ ասէ ցնոսա. «Ես ասեմ ձեզ զբարս և զգործս որդւոց իմոց երեցունց։ Այս անդրանիկ որդիս իմ Չաղատայ. սա այր պատերազմող է և զօրաւէր, բայց հպարտ է բնութեամբ և մեծ քան զպատահեալ բախտն։ Իսկ երկրորդ որդիս իմ, նմանապէս յաղթող է ի պատերազմունս, բայց ռիշտ է բնութեամբ։ Իսկ կրտսեր որդիս իմ, շնորհաւոր է ի մանկութենէ իւրմէ, և առատ բարոյիւք, և մեծատուր ի ձիրս, և յորմէ հետէ ծնաւ սա ինձ, օր ըստ օրէ յաւելաւ փառք իմ և մեծութիւն։ Արդ ահա ասացի ձեզ զամենայն ստուգութեամբ, ում և կամիք, պագէք երկիր յերեցունց աստի»։*

1 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *ղարուղրում*, z *ղարուղրիմ*
1 h *ղատրիայ*
1 a *բարբառոս*
2 stՎ *բազմութիւնք*, z չիք *բազմութիւն*
2 *Մ-Թ* *անդէն* փխ *անդ են*
2—3 *Մ-Թ* *թագաւորաց*
3 m *ազգքն որք կոչին*
3 mՎ *Թաթարք*
4 *Մ-Թ*Վ և մի երկու ՁՁ *չանկզղան*, m *չանգզ խան*, no *չանկզխան*, z *չնգզ խան*
5 bdefghijnouzՎ *մեռանել*
5 c *զվաղՋան*, d *զվաղճան*, n *զվաղխճան*
6 m *որդիսն*, stuՎ *զորդիս*
6 nstuzՎ չիք *իւր*
6 eop *ահաւասիկ*, Վ *աւանիկ*
7 d *յորդոց*, cd *որդոց*, f *մի զորդոյ*, h *մի զորդոց*, km *մի զորդւոյ*, p *որդւոց*, st *ԱԲԳ* *զմի որդի*
8 stՎ *պատասխանի ետուն*
9 d *ընտրեցեն*
9 imnopz *մեզ*
10 no չիք *ձեզ*
10—11 noz *զբարս որդւոց* (z *որդւոցն*) *իմոց և զգործս նոցա* (z *երիցանցն*)
10 afhkm *զգործ*, g *և գործ*
10—11 Վ *զգործս երեցունց որդւոցս*
10 acdfgh *որդոց*
11 degku *երիցունց*, jpst *երիցանց*
11 egno *չալատայ*, z *չաղատայ անուն*
11 m չիք *սա*
12 ad *զաւրաւէր*
12—13 i *և մեծ պատահեալ քան զբախտն*, z *զբախտն պատահեալ*, no *բախտին*
13 *Մ-Թ* *որդին իմ*, abcdefghu *որդի*, k չիք *որդիս իմ*
13 hstՎ *նոյնպէս*
13 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *յաղթող* փխ *յաղթող է*
13—14 c *ի պատերազմեաց*, d *ի պատերազմինս*, p *ի պատերազմի*, no *այր պատերազմող է* փխ *յաղթող է ի պատերազմունս*
14 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *ռիժղ*, Վ *ռիժտ*
14 *Մ-Թ* և մի շարք ՁՁ *կրսեր*
14 dknstu *շնահաւոր*
15 g *բարւոք*, i *բարուոք*, p *բարուօք*, j *բարիոք*, m *բարուք*, no *և հաւատ* (փխ *առատ*) *բարոյիւք*
16 a *օր ըստ աւրէ*, b *աւր ըստ օրէ*, d *աւր ըստ աւրէ*
16 *Մ-Թ* *մեծութիւնս*, i *մեծութիւն իմ*, e *մեծութիւնն*
16 i չիք *արդ*
16 no չիք *ահա*
17 g *ամենայն*
17 d *յում*
17 i *կամէք*
17 cdegk *յերիցունց*, nost *երեցունց*, ip *երից աստի*, z *երիցանցս պագէք երկիր և նոքա*

Եւ նոքա մատուցեալ երկրպագեցին կրտսերոյն, որում անուն էր Հոքթա խաղան, և հայրն եդ զթագն ի գլուխ նորա և մեռաւ։

Իսկ նա իբրև առ զիշխանութիւն թագաւորութեան, զօր գումարեաց անթիւ բազմութեամբ, իբրև զաւազ ծովու անհամար ի բազմութենէ, զիւր սեպհական ազգն, զոր մուղալ թաթարն անուանեն, և զխաղրաց, և զհոնաց, և զղատիացիս, և զանկիտամս, և զայլ բազում ազգս բարբարոսաց, աղխիւք և բանակօք, կանամբք և որդովք իւրեանց և խորանօք, և բաժանեաց զնոսա յերիս առաջս. զմինն ընդ կողմն հարաւոյ առաքեաց, գլխաւոր վերակացու կարգեաց յիւրոց հաւատարմաց և ի սիրելեաց. և զմիւսն ընդ արևմուտս, և զորդի իւր ընդ նոսա, և ի կողմանս հիւսիսոյ. և զերրորդն ընդ արևելս հիւսիսի, և վերակացու կարգեալ յաւագացն զայր մի, որում անուն էր Չարմաղուն, այր խորագէտ և իմաստուն, և յաջողած ի գործս պատերազմի, պատուէր տուեալ նոցա, աւերել քանդել զամենայն աշխարհս և զթագաւորութիւնս տիեզերաց, և ոչ ևս դառնալ առ նա՝ մինչև բովանդակեսցեն զամենայն աշխարհս նուաճել ընդ տէրութեամբ նոցա։ Եւ ինքն անդէն զետեղեալ յաշխարհին, ուտելով և ըմպելով, զբօսանաց և շինութեան պարապեալ՝ անհոգ յամենայն կողմանց։

1 iz պագէք յերկիր (z երկիր), st երկրպագին, z պագին, Վ երկիր պագին
1 Մ-ԹՎ և մի երկու ՁՁ կրտսերոյն, d կրտսերւոյն, u կրտսերուն
2 cd հոգքթա
2 fh ղաղան, s ղան փխ խաղան, tԱԲԳ խանաղան (sic) (Վ Հոքթա-խան ղան)
2 d զթագն, g և թագն, no զթագ իւր ի գլուխն փխ զթագ ի գլուխ նորա
3 g չիք նա
3 ips էառ զիշխանութիւն
3 bcdegՎ թագաւորութեանն, no չիք թագաւորութեան
3 ad զաւր
4 ip չիք ծովու
18—19 abcdefhjp *անդ տուն գանձուց ամրագոյն կազմեալ զոր*
ip *բերան*

*որ միայն արկանելոյն էր բաւական, իսկ հանելոյ ոչ ևս։ Սպանին և զաներսն Շահնշահին, և ինքեանք խոյզ արկեալ ամենայն ամրոցաց գաւառին՝ զո՛ր պատրանօք և զո՛ր բռնութեամբ առին զբազումս. զի տէր մատնէր ի ձեռս նոցա։*

*Այսպէս արարեալ և ընդ այլ քաղաքսն, ընդ Դումանիս և ընդ Շամշոյլտէ և ընդ մայրաքաղաքն Տփխիս, առեալ զամենայն յառ յաւար ի կոտորումն և ի գերութիւն, ասպատակ սփռեալ ընդ ամենայն կողմանս անխընայ յարձակմամբ և յափշտակութեամբ և կոտորմամբ, զի ոչ ոք էր, որ ընդդէմ կայր նոցա, կամ պատերազմէր ընդ նոսա։ Վասն այսորիկ աներկիւղ էին յամենայն կողմանց, զի փախստեամբ փախեաւ Թագուհին Վրաց, որ Ռուզուդանն կոչէր, ուր և կարաց զերծանել։ Այսպէս և ամենայն իշխանքն անձնապահ եղեն ի նոցանէ։*

## ԻԶ

### Վասն անկանելոյ ի ձեռս նոցա իշխանին Աւագին։

*Իսկ իշխանն մեծ՝ որդին Իւանէի, որ Աւագն կոչէին, իբրև ետես զայն ամենայն բազմութիւն թշնամեացն, որք լցին զաշխարհս ամենայն, ամրացաւ և նա ի բերդն ամուր, որ կոչի Կայեան. եկին և ամենայն բնակիչք գաւառին, ամրացան և նոքա շուրջ զբերդովն։ Իբրև գիտացին զօրքն այ-*

1 afhm *ակն արկելոյն*, *Մ-Թ* և մի երկու ՁՁ *արկելոյն*, փխ *արկանելոյն*
1—2 no *զաներն*
2 egip *շահնշահի*
2 i *խուզարկեալք*, j *խուզարկեալ*
2 p *արկեալք*, os *արարեալ* փխ *արկեալ*
2 i *յամենայն*, no *զամենայն*
2—3 st Վ *քաղաքին և գաւառին*
3 ad *պատրանաւք*
4 st Վ *գնոսա ի ձեռս նոցա*
5 j *քաղաքն*, st Վ *քաղաքս*, u *աղքատսն* փխ *քաղաքսն*
5 n *տումանիս*, o *տուումանիս*
5—6 bcdegjp *սամշոյլտէ*, fhst *շամշուլտէ*, i *սամշուիլտէ*, no չիք 'Շամշոյլտէ և ընդ մայրաքաղաքն'
6 bcj *զամենայնն*, d *զամենեսեանն*
6—7 *Մ-Թ զամենայն աւար և կոտորեաց, զասպատակ իւր սփռեալ*, gijm *յառ աւար*, st *առ զաւար* (t *աւար*), Վ *առ յաւար*, h *ապատակս*, i *յասպատակ*
7—8 *Մ-Թ յանխնայ*
7—8 *Մ-Թ արձակմամբ*, no *անխնա արկեալ զսուրն կոտորելով և յաղտակուք* (sic)
8 t չիք '*և յափշտակութեամբ և կոտորմամբ*'
8 d չիք *որ*
9 Վ *այնորիկ*
9—10 m *աներկիւղք*
10 o *էր* փխ *էին*
10 d *ամենայն*
10 abefghno *թաքեաւ*, cdijpu *թագեաւ* փխ *փախեաւ*
11 i չիք *որ*
11 m *ռուզուդան*, t *ռուզդանն*
11 *Մ-Թ զերծանիլ*, no *կարացին զերծանել*
12 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *եռանձնապահ*, no *առանձնապահք*, ipst Վ *անձնապահք*
13 t *անկելոյ*, u *անկանելոյն*
13 ijp *մեծ իշխանն աւագ*, Վ *Աւագի*
13 u *ի ձեռաց իշխանին*
14 *Մ-Թ զոր*
14—15 *Մ-Թ զամենայն* փխ *զայն ամենայն*
15 st Վ *բազմութիւնս*
15 o *որ*
15—16 a *ամրուցաւ*, fm *ամրոցաւ* (sic) no *և նա ամրացաւ*
16 d *բերթն*
16 *Մ-Թ կայան*
16 t Վ *բնակիչքն*
17 no *գաւառի*
17 *Մ-Թ զբերդաւն*
no *զօրն*, ad *զաւրքն*

*յազգեաց, թէ անդ ամրացաւ իշխանն, մի ոմն ի նոցունց գլխաւորացն, որում անուն էր Ոտուղատայ, առեալ զօրս բազումս, եկն պաշարեաց շուրջ զբերդովն։ Եւ առհասարակ լցաւ աշխարհն ի զօրաց այլազգեաց, զի ի նմա գաղթեալ էին յամենայն կողմանց վասն ամրութեան վայրացն։*

*Ածին շուրջ զստորոտով բերդին որմս յամենայն կողմանց, յղէին պատգամս առ Աւագն՝ գալ ի հնազանդութիւն ծառայութեան նոցա և մի՛ երկնչիլ։ Եւ բազում անգամ յղէին, և զնոյն բանս ասէին։ Իսկ նորա կամեցեալ շահել զմիտս նոցա, տայ զդուստր իւր նոցա և ինչս բազումս, զի թերևս թուլասցին ի պաշարմանէն։ Իսկ նոցա առեալ զայն՝ և՛ս պնդութեամբ խնդրէին զնա։ Իսկ որ շուրջ զբերդովն և որք ի ներքս սկսան նեղիլ ի ծարաւոյ։ Ապա տարան զձի և զամենայն անասունս իւրեանց ի ձեռըս թաթարին, զի թողացուսցեն ոմանց ի նոցանէ երթալ բերել ջուր աղխի իւրեանց։ Եւ նոցա յանձն առեալ՝ դիմեցին բազմութիւն մարդկան ի ջուր անդր. և նոցա արգելեալ զերթալսն զջրէ, և ոչ սպանին զոք, այլ ասէին նոցա իջուցանել զընտանիս իւրեանց և կեալ ի մէջ նոցա։ Եւ նոցա առ վշտին ակամայ իջուցեալ զնոսա, և նոցա արբուցեալ ջուր, արգելին ի մէջ իւրեանց և առին զկանայս, որոց ցանկացան, և սպանին զարս նոցա. և զկէսս թողին առ արանց իւրեանց։*

*Իսկ Աւագն իբրև ետես, թէ ոչ թուլանան նոքա ի պաշարմանէ և ի-*

1 g *ի նոցանէ*, stuՎ չիք *նոցունց*
2 m չիք *որում անուն էր*
2 m *տուղատայ*
2—3 Մ-Թ *զբերդաւն*, stՎ *եկն և պաշարեաց զբերդն*
3 i *յաշխարհն*
3 abcehimpu *ի զօրացն*, no *զօրն*
3 Վ *այլազգեացն*
3—6 no *գաղթեալ եկին զօրն այլազգեաց և տեսին զամրագոյն. ըղէին* (o չիք *ըղէին*) *պատգամս առ յաւագն*
4 a *է*, Մ-Թ և մի Երկու ՁՁ *էր*
4—5 a չիք '*էին յամենայն...կողմանց*'
4 ahm *վայրեացն*
5 Վ *և ածին*
5 Մ-Թ չիք *բերդին*
5 m *զորմսն*, t *յորմս*
5—6 cdijp *յղէին ամենայն պատգամս*
6 no *ծառայութիւն*, s *ի ծառայութիւն և ի հնազանդութիւն*
7 d *երկնչել*
7 no *ըղէին* (o *յղէին*) *և առ նոյն*
7 Մ-Թ և մի շարք ՁՁ չիք *բանս*
8 t *նորա* փխ *նոցա*
8 o *զդուստրն* փխ *զդուստր իւր*
8 no *և այլ ինչս*
9 no չիք *ի*
10 Մ-Թ և մի երկու ՁՁ *զնոսա* փխ *զնա*
10 Մ-Թ չիք *որ*
10 Մ-Թ *զբերդաւն*
10 o *ի ներքո*
11 bcdegnopu *տան* փխ *տարան*
11 pt *անասուն*, m *անասունսն*
11—12 f *ի ձեռն*
12 Մ-Թ և մի երկու ՁՁ չիք *ոմանց*, not *զոմանց*
12 s *երթեալ*
12—13 o *երթալ ըմպել ջուր և բերել ախից*
12—13 Մ-Թ և մի շարք ՁՁ *ախի*, no *ախեց*
13 bcegno *մարդկանն*, ip *բազմութիւն մարդկանց*
13-14 m *ի ջուրսն*, no *ի ջուրն*
14 mno չիք *անդր*
14 Մ-Թ և մի քանի ՁՁ չիք *զջրէ*, no *ի ջրոյ*, p *ի ջրէ*, st *զերթալն ի ջրէ*, ԱԲԳ *զերթեալն* (Վ *զերթալն*) *ի ջրէ*
15 n *ասեին*
15 ac *զընդանիս*, m *զընտանիսն*, no *զ[ը]նտանիս նոցա*
15 Մ-Թ և մի քանի ՁՁ *եկեալ* փխ *կեալ*, d *և կալ*
16 mop *յակամայ*
16 d չիք *և նոցա*
16 o չիք *ջուր*
17 bcdegjstuՎ *զկանայսն*, o *կանայսն*
17 Վ *որոյ*
17 h *սպանէին*
18 Մ-ԹՎ *առ արս*, st *առ այրս*
19 st *թուլացան*, o *թուլան* (sic)
19 ip չիք *նոքա*
19 no *ի պաշարմանէն*

կոտորելոյ, կամեցաւ զանձն իւր տալ ի ձեռս նոցա, զի թերեւս սակաւիկ մի դիւր լիցի մարդկանն։ Եւ առաքեաց զԳրիգորն, զոր Տղայն կոչէին գզուանօք, յազատացն խաչենոյ, զվերակացու տանն իւրոյ, յառաջ քան զինքն երթալ հանդիպիլ գլխաւորին նոցա, զոր Չարմաղումն կոչէին, որ հարեալ էր զխորանն իւր առ ափն ծովուն Գեղարքունւոյ։ Զոր իբրեւ լուաւ մեծ նուինն, ուրախացաւ յոյժ և առաքեաց վաղվաղակի առ Իւանէ, որ պաշարեալ էր զնա, փութով առ ինքն հասուցանել և այլ մի նեղել զբնակիչս բերդին և գաւառացն։ Եւ նորա առեալ զԱւագն՝ վաղվաղակի հանդիպի նմա։ Եւ իբրեւ ետես զնա, ասէ ցնա. «Դո՞ւ ես Աւագն»։ Նա պատասխանի ետ, թե՝ «Ես եմ»։ Ասէ ցնա մեծ զօրապետն. «Եւ ընդէ՞ր ոչ եկիր վաղվաղակի առ իս, իբրեւ եկի ես ի սահմանս երկրի քո»։ Պատասխանի ետ իշխանն և ասէ. «Մինչդեռ հեռին էիր, և կենդանի էր հայր իմ, նա ծառայեաց քեզ բազում պատարագօք. և իբրեւ մեռաւ հայր իմ, ես ծառայեցի քեզ՝ ըստ իմում կարողութեան. և այժմ իբրեւ եկիր յաշխարհս իմ, ահաւասիկ եկի առաջի քո. որպէս հաճոյ է քեզ, արա՛ ընդ իս»։ Ասէ ցնա զօրապետն. «Ասեն ի խօսս առակաց, թէ՝ Ցերդն եկի՝ չեկիր, ի դուռն եկի՝ ապա եկիր»։ Եւ հրամայեաց նմա նստել ի ստորեւ քան զամենայն մեծա-

1 Վ ի կոտորելոյն
1 no չիք իւր
1 t գեռեւս փխ թերեւս
1 cijo սակաւ մի
2 Մ-Թ դիւրութիւն լիցի
2 Մ-ԹՎ մարդկան, ijp մարդկանցն
2 n կոչեին
2—3 ad գզուանաւք
3 g յազատեացն, st ազատացն
3 u զվերակացուս
3 dՎ տան
4 Մ-Թ և մի երկու ՁՁ գլխաւորի
4 stՎ որ փխ զոր
4 Մ-Թ Չարմաղան, մյուսները Չարմաղունն
5 hm զվրանն փխ զխորանն
5 Վ չիք իւր
5 o չիք ծովուն
5 Մ-Թ և մի երկու ՁՁ գեղարքունեայ, bcds գեղարքունոյ, h գեղաքունոյ
6 n մեծն նուինն
6 Մ-Թ ուրախ եղև յոյժ, afh լցաւ ուրախութեամբ մեծաւ յոյժ, m ուրախացաւ մեծաւ յոյժ
6 g իտուղատան, Վ Տուղատան
7 ip չիք ՙպաշարեալ էր զնա՚
7 m առ յինքն
7 n նեղեալ
8 Մ-Թ և մի երկու ՁՁ նորա
9 Մ-Թ հասուցին առ նա փխ հանդիպի նմա
9 o չիք և
9 n զնա փխ ցնա
9—10 n պատասխանեաց փխ պատասխանի ետ, o և նորա ասացեալ թէ ես եմ
10 st չիք մեծ
10 d զաւրապետ, g զօրապետ
11 no չիք առ իս
11 m չիք ես
11 stՎ ի սահմանս ձեր փխ ի սահմանս երկրի քո
12 no չիք մինչդեռ հեռին էիր, puՎ հեռի, i [հեռ]ի
13 abcdefghjmu զքեզ
13 Մ-Թ չիք բազում
13 ad պատարագաւք, s ընծաեօք, n o ընծայիւք, stՎ պարգեօք փխ պատարագօք
13 uՎ չիք և
13 stՎ հայրն
13 Մ-Թ ik և մի երկու ՁՁ ծառայեցից
14 fhiopsՎ կարողութեանս
14 Մ-Թ և մի երկու ՁՁ մտեր փխ եկիր
14 ep չիք իմ
14—15 eu ահաւասիկ, stՎ ահաւադիկ կամ առաջի քո
15 d չիք որպէս
16 b առակացս, o առաջնոց փխ առակաց
16 cdg յերթն, p երթն
17 Մ-Թ i նստել փխ նստել ի ստորև (i ստոր, p խոստր)

*մեծս, որք նստէին առաջի նորա. և հրամայեաց ճաշ մեծ առնել ի պատիւ նմա։*

*Եւ բերին յոլովութիւն մսոց ի սուրբ և յանսուրբ անասնոց, անդամ անդամ յօշեալ և եփեալ, և խմուզս ի կաթանէ ձիոց՝ ըստ սովորութեան իւրեանց՝ բազում տիկս, և արկին առաջի, և սկսան ուտել և ըմպել։ Իսկ Աւագն և որք ընդ նմա, ոչ ուտէին և ոչ ըմպէին։ Ասէ ցնա զօրապետն. «Վասն ո՞րոյ ոչ ուտէք և ոչ ըմպէք»։ Ասէ ցնա Աւագն. «Քրիստոնէից ոչ է սովորութիւն ուտել զայս կերակուր և ըմպել զայս ըմպելիս, այլ միս ի սուրբ կենդանեաց՝ մեր զենեալ, և գինի առ ի յըմպել»։ Եւ հրամայեաց զայն տալ նոցա, զոր և խնդրեաց։*

*Եւ ի վաղիւն նստոյց զնա ի վերոյ յոլովից մեծամեծացն. և այսպէս օր ըստ օրէ յաւել ի պատիւ նմա, մինչև ի բուն մեծամեծացն կարգի նըստուցանել զնա։ Եւ հրամայեաց ամենայն զօրուն ոչ մարտնչել ընդ բերդսըն և ընդ քաղաքսն, որ ընդ իշխանութեամբ նորա էին։ Եւ բազում դիւրութիւն եղև յաշխարհի նորա, և բազում գերիս ազատս արձակեցին վասըն նորա. և զամենայն աշխարհ նորա ետ նմա, և այլ ևս աւելի, և անքակ սէր հաստատեաց ընդ նմա։ Եւ առեալ զնա և զամենայն զօրն՝ չոգաւ ի վերայ քաղաքին Անւոյ։*

1 Մ-Թ *մեծամեծացն նկրքոյ*, ip *մեծամեծսն*
1 Մ-Թ և մի երկու ՁՁ *որ*
1 nop *նստեին*
1 cdj *հրամայեաց նմա*
1—2 dp *նմա ի պատիւ* փխ *ի պատիւ նմա*
3 Մ-Թ *ի սրբոց և յանսրբոց*
4 acd *յուշեալ*
4 no *խումզս*, s *խմզս*, t *խըմզս*, Վ *խըմըզս*
4 Մ-Թ *ձիոյ*, e *ձիւոց*, n *ձիոյց*
4 cdg *ըստ սովորութեանն*
5 Մ-Թ *բազմապատիկս* փխ *բազում տիկս*
5 abcdef hijmpu *յուտել և յըմպել*
6 a *ընպէին*, b *ըմբէին*
6—7 acdegjmu չիք *'ասէ ցնա զօրապետն... ոչ ուտէք'*
6—7 lfh *ասէ զօրավարն ցաւագն ընդէր ոչ ուտէք և դուք. ասէ*, ip *եհարց ցնոսա զօրապետն թէ ընդէր չուտէք և ըմպէք ասէ*
7 stՎ *թէ ընդէր* փխ *վասն որոյ*
7 h *քրիստոնէաց* (sic)

8 jp *կերակուրս*
8 a *ընպել զայս ընպելիս*, bcjstuՎ *զայս ըմպելի*
8 e *միսս*
9 Մ-Թ jՎ *կենդանեացն*
9 stՎ *զենել* փխ *մեր զենեալ*
9 a *յընպել*, Վ *ըմպել*
10 d *զոր խնդրեաց*
11 t *մեծամեծաց*
11 Մ-Թ և մի քանի ՁՁ չիք *այսպէս*
12 ijp *բուռն* փխ *բուն*, tՎ չիք *բուն*
13 p *յամենայն*
13 h չիք *ոչ*
13 Մ-Թ և մի երկու ՁՁ *մարտնչիլ*
13—14 h *բերդս*
15 t չիք *եղև*, Վ չիք *եղև* (Վ խմբ. մուծել է՝ *արար*)
15 c *աշխարհի*
15 bcds *զբազում*
15 d *ազատեցին* փխ *ազատս արձակեցին*
16 bcdijmptՎ *աշխարհն*
16 d *եառուն*
17 bd *զաւրն*, i *զօրսն*
18 bcd hmt *անոյ*, ijp *յանւոյ*

## ԻԷ

### Վասն քաղաքին Անւոյ, թէ որպէս մատնեցաւ տէր ի ձեռս նորա:

*Քաղաքս այս Անի լցեալ էր բազմութեամբ մարդկան և անասնոց և պարսպեալ ամրագոյն պարսպօք։ Եւ եկեղեցի բազում կայր ի նմա, մինչ ի կարգ խօսից երդման այսպէս երդնուին՝ «Անւոյ հազար և մի եկեղեցին»։ Եւ յոյժ փարթամ էր քաղաքն ամենայն իրօք, վասն որոյ յղփութիւնն յամբարտաւանութիւնած զնոսա, և ամբարտաւանութիւնն՝ ի կործումն, որպէս սովոր է առնել ի սկզբանց և այսր։ Առաքեաց Չարմաղունն դեսպանս առ նոսա գալ նմա ի հնազանդութիւն։ Եւ որք գլխաւորքն էին ի քաղաքին ոչ իշխեցին պատասխանի առնել պատգամին առանց հարցանելոյ զիշխանն Շահնշահ, քանզի ընդ իշխանութեամբ նորա էր քաղաքն։ Իսկ ամբոխ քաղաքին և ռամիկքն սպանին զպատգամաւորսն։ Եւ զայն տեսեալ զօրքն այլազգեաց, ի բարկութիւն բրդեցան և պաշարեալ զքաղաքն յամենայն կողմանց՝ կանգնեցին փիլիկուանս բազումս արուեստագիտութեամբ և, մարտուցեալ ընդ քաղաքին զօրեղապէս՝ առին զնա։ Այլ և ոմանք յիշխանաց քաղաքին ձեռնատու եղեն առ թշնամիսն՝ զապրուստ անձանց շահելով. և նոցա կոչեալ արտաքս ի քաղաքէն զբազմութիւնն, խոստացան ոչինչ առնել նոցա չար։*

*Եւ իբրև ելին արտաքս առ նոսա ամենայն բազմութիւնն, բաժանեցին զնոսա յինքեանս և սուր ի վերայ եդեալ՝ կոտորեցին առհասարակ անողորմաբար՝ սակաւ կանայս և մանկունս թողեալ և արս արուեստաւորս, զոր վարեցին ի գերութիւն։ Եւ ապա ինքեանք մտեալ ի քաղաքն, առին*

1 bcdfhm *անոյ*, ip *յանւոյ*, j *այնոյ*, k *յանոյ*
1 d *մատնեցաւ զնա*
1 ip *նոցա*
2 i *յայս*
2 imp *յանի*
2 bcdՎs *անասնոյ*
3 dt *պարսպաւք*
3 c *եկեղեցիք*
3 h *մինչև*
4 is *երդմանն*
4 p *երդման առէին այսպէս երդնուին*
4 abefhjkm *անոյ*, ip *յանւոյ*
5 ad *իրաւք*
5 h *վասն այսր*
5 b *յղբութիւնն*
5–6 d չիք *'յամբարտաւանութիւն ած զնոսա'*, p *ամբարտաւանութիւն էած զնոսա*, is *էած*
6 ams *ամբարտաւանութիւն*, d *յամբարտաւանութիւնն*
7 abchjpՎ *յիսկզբանցն*, d *իսկզբանցն* Մ-Թ և մի երկու ՁՁ *յիսկզբանց*
7 Մ-ԹՎ և մյուս ՁՁ *չարմաղան*
8 bcdՎ *որ*
9 d *պատգամ*
9—10 s *իշխանին շահնշահի*
10 p *է* փխ *էր*
12 ij *այլազգեացն*
12 Մ-Թ և մի երկու ՁՁ *դրդեցան*
12 h *քաղաքն*
13 tՎ *կանդնեցուցին*
13 k *փիլիկվանս*
13 fhm *բազմարուեստ գիտութեամբ*, ijp *արուեստս գիտութեամբ*, Մ-Թ *բազում արուեստագիտութեամբ*
14 d *այլ ոմանք*, c *յոմանք*
14—15 Վ *յիշխանացն*
15 stՎ *ձեռնտու*
15 ist *անձանցն*, Վ *անձանց իւրեանց*
16 m չիք *ի քաղաքէն*, t չիք *ի*
16 Մ-Թ և մի երկու ՁՁ *բազմութիւն*, ip *զբազմութիւն*
16—17 m *խոստացան նոցա*
17 Մ-Թ և մի երկու ՁՁ *առ նոցա*, ip չիք *նոցա*
19 stՎ *զամենեսեան առհասարակ*
20 st ԱԲԳ *սակայն* փխ *սակաւ*
20 ip չիք *արս*, s *զարս*
20 a *արուեստս* փխ *արուեստաւորս*, bcdijpstՎ *արուեստագէտս*
21 h *ի գերութիւնս*
21 Մ-Թ և մի երկու ՁՁ չիք *ինքեանք*

*զինչս և զստացուածս ամենայն, կողոպտեցին և զամենայն եկեղեցիս, աւերեցին և քանդեցին զամենայն քաղաքն, եղծին և ապականեցին զփառս վայելչութեան նորա։*

*Անդ էր տեսանել տեսիլ ողորմագին. առհասարակ կոտորեալք ծնողքն և ծնունդք ընդ նոսին դիզեալք ի վերայ միմեանց՝ իբրև զդերբուկս քարանց կուտեալք. քահանայք և սարկաւագունք և պաշտօնեայք եկեղեցականք, ծերք և տղայք և հասակաւ մանկունք և երիտասարդք և կուսանք շատք. ըստ աւետարանին բանի, եթէ՝ «Մատնիցիք ի սով և ի գերութիւն»*. Նոյն հրաման եհաս ի վերայ սոցա, զի ցիր և ցան անկեալք ընդ երեսս դաշտացն, արբեալ երկիրն յարենէ և ի ճարպոյ վիրաւորացն. փափուկ մարմինք աճառովք լուացեալք, սևացեալք և այտուցեալք. և այնոքիկ, որ ոչ էին ելեալ արտաքս քան զդուռն քաղաքին, բոկ և հետի ընթացեալք ի գերութիւն, և որք հաղորդէին ի պատուական մարմնոյ և յարենէ որդւոյն սատուծոյ, ուտէին զմիս անսուրբ և հեղձուցիկ և ըմպէին ի կաթանէ ձիոց պղծոց. կանայք պարկեշտք և ողջախոհք մատնեալք ի խայտառականս ճակաճան և վաւաշ մարդկան. կուսանք սուրբք, որք ուխտեալ էին սատուծոյ սրբութեամբ պահել զմարմինս և անախտ զհոգիս, պղծեալք պէսպէս պոռնկութեամբ և ապականեալք անկարգութեամբ։ Եւ այսպէս եղև զրաւ գործոյն։*

* Հմմտ. Երեմ., ԼԲ, 36:

1 Մ-Թ զինչսն և զստացուածս
1 Մ-Թ և մի քանի ՁՁ նոցա և փխ ամենայն, abc hijmp ամէն
1 Մ-Թ զամենայն փխ և զամենայն
2 Մ-Թ և աւերեալ
2 Մ-Թ bcdm չիք և
3 Վ վայելչութեանն
4 s զտեսիլս ողորմագինս
4 abcdfhjk ողորմագինք
4 s ծնօղքն
5 hijmps ծնունդքն
5 Մ-Թ և մի երկու ՁՁ զբերդուկս փխ զդերբուկս
6 m կուտեալ ընդ երեսս դաշտացն
6 Մ-Թ և մի քանի ՁՁ չիք սարկաւագունք
6—9 Մ-Թ և մի քանի ՁՁ չիք 'եկեղեցականք... եհաս ի վերայ սոցա, զի'
9 m չիք 'ընդ երեսս դաշտացն'
10 d յերկիրն, m երկիր
10 Մ-Թ և մի երկու ՁՁ վիրաւորելոցն
10 ceijp tuՎ մարմինքն և
11 akm աճառովք, ih աճառավ, ijp օճառովք
11 fh լուցեալ, ԱԲԳ լուցեալք
11 ijm որք ոչ, ԱԲԳ որոց փխ որ ոչ
11 Մ-Թ և մի երկու ՁՁ չիք էին, tuՎ ելեալ էին
12 Մ-Թ և մի քանի ՁՁ յարտաքս
12 stՎ հետիոտս
13 m արեան
13 bcdfh որդոյն
14 st հեղձուցիչք, ԱԲԳ հեղձուցիչ
14 a ընպէին
14 e ձիւոց
14—15 ip չիք 'և ըմպէին ի կաթանէ ձիոց պղծոց'
15 st ի խայտառական
16 ijp վաւաշոտ մարդկան (ip մարդկանց)
16 h որ
16 ps ուխտեալք
17 st չիք սրբութեամբ, Վ (սրբութեամբ)
17 bcd զոգիս
18 Մ-Թ և մի քանի ՁՁ պոռնկութեամբք, stu չիք պոռնկութեամբ
18 d ապականութեամբ անկարգս, ip անկարգութեամբք, u անարգութեամբ

## ԻԸ

### Վասն աւերածին Կարուց:

Այս քաղաքս՝ իբրև եւես, զոր ինչ գործեաց Թաթարն ընդ բնակիչսն Անւոյ, փութացաւ և աճապարեալ տարաւ զբանալի քաղաքին ընդ առաջ նոցա, զի թերևս խնայեսցեն ի նոսա։ Իսկ նոքա, քանզի խանձեալ էին աւարաւ և ոչ յումեքէ ունէին երկիւղ, զնոյն անցս և ընդ նոսա անցուցին, որպէս ընդ Անի, յափշտակութեամբ ընչից և ստացուածոց, և կոտորմամբ բնակչացն, և աւերմամբ քաղաքին՝ անզարդացուցեալ զվայելչութիւն նորա և գերի վարեալ զբնակիչս նորա։ Եւ սակաւ սինլքորս թողեալ՝ գնացին ի բաց, զոր յետոյ եկեալ զօրք սուլտանին Հոռոմոց՝ զզերծեալսն ի Թաթարէն վատնեցին ի գերութիւն և ի սուր անողորմաբար. ըստ գրեցելումն, թէ՝ «Ահ, գուբ և որոգայթ ի վերայ ձեր, բնակիչք երկրի, որ փախիցէ յահէն, անկցի ի գուբն, և որ ելանիցէ ի գբէն՝ ըմբռնեսցի յորոգայթն*», և որ փախիցէ յայնմանէ՝ «Հարցէ զնա օձ»**։ Այսպէս եղև տառապեալ բնակչացն Կարուց։

Նոյն զօրքն առին և զքաղաքն սուրբ Մարի, զոր սակաւ ամօք յառաջ առեալ էր զնա ի տաճկաց Շահնշահի և Աւագին. և զեռ ևս կարկատեալ էին,

* Եսայի, Ի՛Ի, 17—18: ** Ժողով., Ժ. 8:

1 ip կարուց և որ ինչ գործեցաւ ի նմա, st կարուցն (որից հետո հի- շատակգր.՝ ո՛հ, ո՛հ, վա՛յ է ինձ), Վ աւերածի Կարուցն
2 Մ-Թ և մի երկու ՁՁ այս քաղաք
2 tՎ որ ինչ
2 iopstՎ բնակիչս
3 ikp յանւոյ, no անուոյ
3 iostՎ փութացան
3 o յաճապարեա
3 abcde gh jkn optuՎ տարան
3 n զքաղաքն բանալեօք
3 acd gh jkm ընդ յառաջ
4 d խնայեցին
4 no չիք ի նոսա
4 no նախանձեալ
5 ga ումեքէ
5 n ունեին
5 p յերկիւղ
5 t նորա փխ նոսա
6 abcd ընդանի Մ-ԹՎ և մի քանի ՁՁ ընտանի, փխ ընդ Անի
6 h յափշտակութեան
7 stՎ բնակչաց
7 stՎ քաղաքաց
7 io անզարդացուցեալ, no անզարթացուցեալ
8 cdijo չիք 'և գերի վարեալ զբնակիչս'
8 o նոցա փխ նորա
8 cdijpstՎ չիք նորա
8 ip սինլքոր
9 d զաւրք, h զօր, i զօրքն, st ԱԲԳ զամք փխ զօրք (Վ զօրք)
9 d սուլթանին, Վ սուլդանին, no սուլտանի
9 no Հոռոմոց
9 mՎ զերծեալսն, no զերծալսն
10 n վատնեց, s մատնեաց, tՎ մատնեցին փխ վատնեցին
10 Մ-Թ և մի երկու ՁՁ ընդ փխ ըստ
10 di աՀա փխ աՀ
11 Մ-Թ և մի քանի ՁՁ որոգայթք
11 Մ-Թ և մի երկու ՁՁ բնակիչ
11 cdijp թէ, sՎ և որ փխ որ
11—13 t չիք 'յահէն...փախիցէ'
11 no աՀէն
12 no գուբն փխ ի գուբն
12 bcdegijnop գրոյն
12 stuՎ անկցի փխ ըմբռնեսցի
12 iՎ յորոգայթ, j որոգայթ, no որոգայթն
13 ad աւձ
13 Մ-Թ և մի երկու ՁՁ բնակչաց տառապելոց
15 Մ-Թ նոյնպէս փխ նոյն
15 ab defghjmno զօրք
15 Մ-Թ չիք և
15 ad ամաւք
15 g առաջ, no չիք յառաջ

*յանկարծակի եհաս ի վերայ նոցա մի ոմն յաւագաց զօրօք բազմօք, որում անուն էր Ղարա Բահատուր, և վաղվաղակի առ զնա, և զոր ինչ եգիտ ի նմա՝ յափշտակեաց։*

*Եւ իբրև այս այսպէս գործեցաւ ընդ աշխարհս ամենայն, ապա հրաման ետուն մնացորդացն, որ ապրեալ էին ի սրոյ անտի և ի գերութենէ, գնալ յիւրաքանչիւր տեղիս՝ ի գիւղս և ի քաղաքս, և շինել յիւրեանց անուն, և ծառայել նոցա։ Եւ սկսաւ երկիրն առ սակաւ սակաւ զշինութիւն առնուլ։*

*Բայց աստուած որպէս սովոր է ի ժամանակի բարկութեան զողորմութիւն յիշել, զոր և աստ արար, զի «Ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ և ոչ ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ»*, զի ժամանակն ամառնային էր, յորում ասպատակեցին նոքա ի մեզ, վասնակն չև ևս էր հընձեալ կամ ժողովեալ ՚ի շտեմարանս. և նոքա՝ եկեալ ուղտօք և անասնովք, կերան և կոխեցին զամենայնն։ Իսկ մերձ յեղանակն ձմեռնային՝ իբրև գնացին նոքա ի դաշտն, որ կոչի Մուղան, յաշխարհն Աղուանից, քանզի անդ կային զձմեռնային ժամանակն, և ապա զարունն սփռէին ընդ կողմանս կողմանս. մարդիկն, որ մնացին է սրոյ անտի, մերկք էին և առանց կերակրոյ, ի հասկից անտի անկելոց և կոխելոց լնուին զպէտս իւրեանց. և ձմեռն ոչ ցուրտ եղև սաստիկ, որպէս յայլ ժամանակսն, այլ կակուղ և*

* Սաղ., ՃԲ, 10։

1 a *աւագացն*, m *աւագաց*, cdegijpst սՎ *յաւագացն*, no *աւաքացն*
1 bdn *զաւրօք բազմաւք*
1—2 op *ով անունն էր*
2 *Մ-Թ Ղարապահատուր*, beg *զարա բահադուր*, no *խարապահատուր*, s *զարա բահտուր*
2 ips *էառ*
2 ah չիք *և*
2—3 dp չիք *ի*, ist չիք *ի նմա*
3 n *յապշտակեաց*
4 dp չիք *այս*, Վ *այսպէս այս*
5 st *մնացորդաց*
5 o *որք*
5 a *անդի*
5 n *ի գերութենէ անտի*, o չիք *ի գերութենէ*; t *ի գերութիւն*
6 a *ի գեաւղս*, b *ի գեաւղ*, cdgj *ի գեւղս* (k *գեղս*), fhimյn *ի գեօղս*
6 stՎ *յագարակս* փխ *ի քաղաքս*
6—7 n *շինել իւրեանց անուն*, ԱԲԳ *անուն*, Վ *տուն*
7—8 gno *շինութիւն առնել*, stՎ *շինիլ և զշինութիւն* (Վ *շինութիւն*) *առնուլ*
10 no չիք *ըստ*
10 no *մեզ տէր*, Վ *տէր* փխ *մեզ*
11 *Մ-Թ*k *ըստ անօրէն*
11 *Մ-Թ ժամանակս*
11—12 h *ամառային*, no *ամարային*
12 o *որում*
12 i *զմեզ նոքա*, m *և նոքա*
12 o չիք *ի*
13 s *յիշտեմանս* (sic), u *յըշտեմարանս*
13 ad *ուղտաւք*, tՎ *ուղտիւք*
13 *Մ-Թ* չիք *անասնովք*, aimnops *անասնօք*
14 *Մ-Թ զամենեսեան*, gjopՎ *զամենայն*
14 *Մ-Թ ձմերային*, efghkm *ձմերնային*, n *ձեմեռնային*
16 *Մ-Թ զձմերային*, gho *ձմեռնային*, n *ձմեռնային*, eikm *զձմերնային*
16 stՎ *ընդ զարունն*
16 n չիք *ընդ*, o *ի* փխ *ընդ*
16—17 g *ընդ կողմանս մարդիք*
17 ikp *մարդիկքն*. o *և մարդիկն որք*,
17 h *մարդկան*
17 m *որ մնացեալ էին*
17 a *անդի*
18 stu *կերակրոց*
18 a *անդի*
18 cd *անդելոց*
18 g *իւրոց*
19 g *ձմեռ*
19 n *ոչ եղև ցուրտ սաստիկ*
19 *Մ-Թ ժամանակս*

*ըստ միտս։ Եւ զի ոչ ունէին եզինք՝ որ գործէին զերկիր, և ոչ սերմանք՝ զոր ցանէին, ի գալ գարնանւոյն ի հրամանէ աստուծոյ երկիրն բուսոյց ինքնեակս, որ բաւական էր լնուլ զպէտս մարդկան. այլ և ընդ ամենայն կողմանս լիութիւն եղև հացի, որով ապրէին փախուցեալքն ի տեղիս։ Այլ և անողորմ ազգն վրաց բազում գութս և խնամս ցուցանէին երթելոցն առ նոսա պանդխտանալ։ Եւ այսպէս ողորմածն աստուած մխիթարեաց զվշտագնեալսն։*

## ԻԹ

### Վասն յուղարկելոյ զիշխանն Աւագ առ խաղանն յԱրեւելս:

*Իբրև սակաւ ինչ ժամանակք անցին ի վերայ, առաքեցին զԱւագն առ արքայն իւրեանց, զոր ղանն կոչէին, ընդ հեռաւոր ճանապարհս յարևելս հիւսիսոյ. քանզի այսպէս առնէին զամենայն մեծամեծս, զոր կամէին պատուել, առ նա առաքէին, և հրամանաւ նորա առնէին՝ զոր ինչ և գործէին, քանզի սաստիկ հրամանակատարք էին արքային իւրեանց։ Այլ և ինքն իշխանն յօժարեաց գնալ, զի թերևս ինչ դիւր լիցի իւր և երկրին։ Եւ ամենայն ոք աղօթս մատուցանէր վասն նորա առ աստուած խաղաղութե-*

1 *Մ-Թ* չիք *և ըստ միտս*, i *ոչ ըստ միտս*, st *ընդ միտս*
1 Վ *եզինս*
1 s *սերմնս*
2 abcdefghijnopstՎ *զոր եթէ* փխ *զոր*, m *զի*, u *զոր թէ*
2 *Մ-Թ*Վ *գարնան*, c *գարնայնոյն*, eg *գարնանայնոյ*, no *գարնանոյն*, st *գարնանն*
2 *Մ-Թ ի հրամանէն*, i *հրամանաւն*, stՎ *հրամանաւ*
3 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *ինքն եկս*, g *ինքեանս*, o *ինքն ընդ ինքեան*. stuՎ *իննեակս*
3 no *որ բաւական էր մարդկան լնուլ պէտս* (o *զպէտս*, չիք *մարդկան*), h *ի պէտս*
3 cdefghj *մարդկանն*, ip *մարդկանցն*
4 i *որք* փխ *որով*
4 n *ապրեին*
4 m *ի տեղիս տեղիս*
5 j *բազումք*
5 Վ *գութ*
5 d *ցուցանէր*
5 bdihn *երթալոցն*, st *երթացելոցն*
6 d *պանտխտանալ*
6 Մի երկու ՁՁ *աստուած ողորմած*
7 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *զվշտանգեալսն*, d *զվիշտ անկեալսն*, o *զվշտանկեալսն* stՎ *զվշտագնացքն*

8 nop *ուղարկելոյ*
8 no *աւագին*
8 csՎ *ղանն*, not *խանն*
8 no *արևելս*
9 g *ժամանակք ինչ*, s *ժամանակ*, z *սակաւ ժամանակաց էին ի վերայ*
9 n չիք *առաքեցին*, o *տարան* փխ *առաքեցին*
9 i *աւագն*
10 noz *խանն*
10 n *կոչեն*
11 ab *հիւսիւսոյ*, f *հիւսւսոյ*, i *ի հիւսիսոյ*
11 o *զորս*
11 n *կամեին*
12 n *առաքեին*, sՎ *յուղարկէին*, t *ուղարկէին* փխ *առաքէին*
12—13 b *գործէի*, n *գործեին*
13 n *եին*
13 z չիք *այլ*
14 d *իշխան*
14 ad *յաւժարեաց*
14 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *իւրն և երկրին*, n *իւր յերկրին*, o *իւր երկիրն*
15 n *ամ* of (sic) փխ *ամենայն ոք*
15 ad *աղաւթս*, o *յաղօթս*, t չիք *աղօթս*
15 *Մ-Թ* և մի շարք ՁՁ *նմա*, b չիք *նմա*, st *վասն նմա*
15 z *զի խաղաղութեամբ*

*ամբ դարձուցանել զնա այսրէն, զի ինքն բարի էր բնութեամբ և առաւել ևս զի յուսային, թէ գալստեամբն նորա շահեսցին ինչ։*

*Իսկ նորա երթեալ՝ յանդիման լինէր մեծի արքային, և ցուցանէր նմա զգիրս զօրագլխաց իւրոց, և յիշեցուցանէր զպատճառս գալոյն առ նա, թէ ի ծառայութիւն եկեալ է նմա։ Իբրև լսէր զայն մեծ արքայն, սիրով ընդունէր զնա, տայր նմա և կին ի թաթար ազգէն և ուղարկէր զնա յիւր աշխարհն. գրէր և առ զօրավարսն իւր տալ ի ձեռն նորա զիւր աշխարհն և նուաճել զամենայն ապստամբսն. որ և եղև իսկ։*

*Զի իբրև եկն նա յաշխարհն իւր, և արարին զօրագլուխքն զհրամանս արքային իւրեանց, եկին ի հնազանդութիւն ծառայութեան նոցա՝ Շահնշահ, որդի Զաքարէի, և Վահրամ իշխանն, և որդին իւր Աղբուղայն, և Հասան, որ Ջալալն կոչէին, իշխան կողմանցն Խաչենոյ, և այլք բազումք, և զիւրաքանչիւր երկիր տային նոցա, և առ ժամանակ մի ներումն։*

*Եւ ապա սկսան հարկապահանջութեամբ և երթևեկութեամբ և զինուորութեամբ նեղել զնոսա. սակայն թէպէտ այսու ամենայնիւ, և որ առաւել քան զայս էր, նեղէին զնոսա, բայց զոք ոչ սպանանէին։ Եւ իբրև անցին ամք ինչ, նեղացաւ ի նոցանէ իշխանն Աւագ, զի կարի ժլատք էին, և ոչ կարէր զամենեսին՝ ըստ միտս նոցա՝ հաճել, զի ոչ միայն բաւակա-*

1 z չիք *զնա*
1 z *և* փխ *զի*
1 iu *բնութեամբն*
2 pstՎ *եթէ գալստեամբ*, o *գալստեան*
2 o *ինչս*
3 o *մեծ*
3 t *արքայի*, z *թագաւորին* փխ *մեծի արքային*
4 p *յիշեցուցանէր նմա*
4 g *զպատճառ*, t *պատճառս*
4 n *յեցուցանէր զպատճառ* փխ *յիշեցուցանէր զպատճառս*, o *և ցուցանէր զպատճառ գնալոյն*
4 i չիք *'յիշեցուցանէր...գալոյն'*
4—5 i *զօրագլխոց իւրոց առ նա ի ծառայութիւն եկեալ նմա*, no *ի ծառայութե [ե]կեալ է առ նա*, z *ի տոյ առ նա*
5 aefh *զայս*, z չիք *զայն*
6 stՎ *և տայր նմա կին*
6 stՎ *ազգէ*
6 abcdejsՎ *յուղարկէր*
6—7 cd *յաշխարհն*, k *յիւր աշխարհս*
7 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *զօրավարն*, d *զաւրավարսն*, no *զօրաւորսն*
7 fstu *ի ձեռս*, Վ *տալ զնա ի ձեռս նորա*
7 st չիք *զիւր աշխարհն*, Վ չիք *զիւր աշխարհն*
7—9 z չիք *'զիւր աշխարհն... եկն նա'*
8 n *աբստամբսն*
8 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *որ եղև*

9 b չիք *նա*
9 a *աշխարհն*, bcd *յաշխարհ*, no *աշխարհ*
9 Վ *զօրագլուխք*
10 no *ի ծառայութիւն* փխ *ի հնազանդութիւն ծառայութեան*
10 stzՎ չիք *նոցա*
10—11 o *շահնշահն*, z *որդի զաքարէի շահնշահ*
11 Վ *վահրամն*
11 *Մ-Թ*Վ և մի քանի ՁՁ *աղպուղայն*
11 d *հասն* (sic), i *հասանն*
12 n *կոչէին*
12 cdz *իշխանք*
12 a *խաչենւոյ*, stՎ *խաչենայ*
12 no *այլ*
12—13 s *զիւրաքանչիւրոց*
14—15 ijp չիք *'և երթևեկութեամբ և զինուորութեամբ'*
15 z չիք *թէպէտ*
15 fh չիք *որ*
16 z չիք *էր*
16 *Մ-Թ* չիք *զոք*
16 n *սպանանէին*
17 ehjnopuzՎ *նեղեցաւ*
17 i չիք *իշխանն աւագ*
17 n *էի* փխ *էին*
18 ip *զամենեցուն*, j *զամենեսեան*
18 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *ընդ միտս*
18 f չիք *նոցա*
18 no *հաճութեամբ շահել* փխ *հաճել*
18 n *բաւականանային*, Վ *ոչ բաւականային*

*նային ուտելով և ըմպելով, այլ և պահանջէին երիվարս և հանդերձս մեծագինս, զի կարի յոյժ ձիասէրք էին։ Վասն այսորիկ և քաղեցին զձի յամենայն երկրէն, և ոչ ոք իշխէր համարձակ պահել ձիս կամ ջորիս, բայց թէ ի ծածուկ ուրեք վասն հարկի զինուորութեան, զի ուր և գտանէին յափըշտակէին և աւելի ևս, յորում գտանէին զնշանն իւրեանց, զի զամենայն անասուն իւրեանց և զոր առնուին, իւրաքանչիւր զօրագլուխ իւրով նշանով կնքէր՝ խարելով ի մի անդաման, և թէպէտ գնէին ի նոցունց, և այլ ոք հանդիպէր յայլմէ գնդէ, առնուին ի նոցանէ և պատժէին զնոսա, իբրև զգողս։ Եւ զայս ոչ միայն մեծամեծ մարդիկն առնէին, այլ և փոքունքն ևս, և մանաւանդ աւելի ևս առնէին զայս, յորժամ մեռաւ զօրավարն զօրուն, որում անուն էր Չաղատայ։ Քանզի սպանին զնա գիշերի, որ մուլհեդքն անուանին. և վասն այսորիկ կոտորած սաստիկ եղև գերւոյն, որ էր ի զօրուն։ Եւ այրս այս բարեկամ էր Աւագին. իբրև մեռաւ նա, բազում թշնամիք յարեան ի վերայ նորա։*

*Յաւուր միում ի տան Աւագին ոմն ի նոցունց ոչ ի կարի աւագացն եկն ի խորանն, ուր նստէր Աւագն։ Եւ իբրև ոչ վաղվաղակի յարեաւ ընդ առաջ նորա, վարոցօք երիվարին, որ էր ի ձեռին նորա, ծեծեաց զգլուխ նորա։*

1 tՎ *կամ* փխ *և*
1 n *ըմբելով*
1 t *հանդերձ*
2 m *ձիաւորք* փխ *ձիասէրք*
2 z *այնորիկ*
2—3 n *ամենայն յերկրէն*, Վ *երկրէ*
3 d *ոչ ոք էր որ իշխէր*
3 z *ոչ ոք էր որ պահէր համարձակ*
3 Վo *զձիս և զջորիս*. z *ձիս և ջորիս*
3—4 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *բայց եթէ ի*, t *բայց ի*, no չիք *ի*
4 Վ *հարկին*
4 bcf *զինուորութեանն*
4 m *զի և ուր*
5 d *առ աւելի ևս*, m *յաւելի ևս*, z *առաւել ևս*
5 z *զնշանս*
5—6 stu Վ չիք *'զի զամենայն անասուն իւրեանց'*
6 g *անասունս*, n *յանասունն*
6 z չիք *իւրեանց*
6 o *առնէին*
6 ad *զաւրագլուխ*, u *զօրագլխով*
6 m *իւրում*, oz *իւր*
6 oz *նշանովն*, p *նշանաւն*
7 z *խարովելով*
7 bcdegipu *յանդաման*, z *անդամս՝ ձիոյն կամ ջորոյն*
7 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *դնէին* փխ *գնէին*
8 t *գնդին*
8 ip *առնէին* փխ *առնուին*
8 cd *պատէին*, ijp *զրպարտէին* փխ *պատժէին*
9 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *մեծամեծքն* փխ *մեծամեծ մարդիկն*, afhipstu *մարդիկքն*, m *մեծամեծքն միայն*
10 gn չիք *ևս*
10 z չիք *'և մանաւանդ... զայս'*
10 c *առաւել ևս*, dp *աւել ևս*
10 z *սոյն գործէին* փխ *առնէին զայս*
10 bcegjstu *զօրավար*, n *զօրաւար*
10 d չիք *զօրուն*
10—11 z *իսկ յորժամ մեռաւ զօրավարն չաղատայ անուն*
11 ó *չատաղայ*, Վ *Չաղատա*
11 bcdjopstuՎ *ի գիշերի*
11—12 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *մուլհիդք*
12 *Մ-Թ*Վ *անուանէին*
12 no չիք *եղև*
12 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *գերոյն*
13 ad *զաւրուն*, bcegjopz *զօրուն* փխ *ի զօրուն*
13—15 cdijpz չիք *'իբրև մեռաւ նա... ի տան աւագին'*
13—14 begnosu *թշնամիք բազումք յարեան նմա* փխ *բազում թշնամիք յարեան ի վերայ նորա*
15 bmz *ոմն մի*, stՎ *մի ոմն*
15 cdfhijuz *ոչ կարի*, Վst չիք *'ոչ ի կարի աւագացն'*
15 i *յաւագացն*
16 z *իբրև աւագ ոչ*
16 stՎ *ել* փխ *յարեաւ*
16 abcdefghijkmn *ընդ յառաջ*
17 ijp *վարուցօք*, no *վարացուքն*, stՎ *վարոցիւք*
17 abcijmnpuzՎ չիք *էր*

Ջայն տեսեալ սպասաւորաց իշխանին, բարկացեալ ընդ անարգանս իշխանին՝ տեառն իւրեանց, յարեան հարկանել զայրն։ Եւ իշխանն արգել զնոսա, թէպէտ զայրացեալ էր։ Եւ երթեալ առն այնորիկ, որում անուն էր Ջոչ-Բուղա, առեալ ընդ իւր և այլ ընկերս՝ կամեցաւ ի գիշերին սպանանել զիշխանն։ Եւ նորա գիտացեալ՝ փախեաւ մազապուրծ առ Թագուհին վրաց, զի դեռ ևս ապստամբ էր նա՝ գաղթեալ յամրագոյն տեղիս աշխարհին Վրաց։

Եւ առաւել ևս զայսպիսի անկարգութիւնս վասն այնորիկ գործէին, զի մեծ զօրավարն, որ գլուխն էր ամենեցուն, զոր Չարմաղունն կոչէին, համրացեալ էր ի դիւէ և ի ցաւոց. բայց զիշխանութիւնն ոչ էին բարձեալ ի տանէ նորա, զի կին նորա և որդիք՝ հանդերձ գործակալօք տանն նորա, վարէին զիշխանութիւնն. զի խաղանն այսպէս հրամայեաց, թէ և մեռանի, զոսկերս ևս շրջեցուցանել ընդ զօրսն, զի կարի յոյժ աջողած է այրդ և շնորհաւոր։

Եւ իբրև փախեաւ Աւագն, տրտմեցան մեծամեծքն, և մեղադիր եղեն առն այնմիկ, և յղեցին դեսպանս զկնի նորա՝ մի՛ ապստամբիլ ի նոցանէ, և երդնուին նմա ոչինչ առնել նմա չար, և ետուն զաշխարհս նորա ի ձեռն Շահնշահի, իբր թէ եղբայր նոցա իցէ. և զայս առնէին վասն առաւել հա-

1 p սպասաւորացն
1 bstՎ բարկացան
1- 2 bcgijopsuzՎ չիք իշխանին
2 cj հարկանելն
2 no իշխան
2 ip արգելեաց
3 Մ-Թ և մի երկու ՁՁ գնացեալ այրն, c երթեալ այրն այն, no երթեալ այնորիկ ուրումն անուանէր (o անուն էր)
4 Մ-Թ և մի երկու ՁՁ ջոջպուղա
4 abcefgh jnpuz չիք ընդ
4 z կամեցան
4 dno չիք ի գիշերի, sՎ ի գիշերի
5 h գիտեցեալ
5 abcdefghnp մազապուր, stuՎ չիք մազապուրծ
5 z Թագաւորն փխ Թագուհին
6—7 cdijpz չիք 'զի դեռ ևս... աշխարհին Վրաց'
6 tՎ գայթեալ փխ գաղթեալ
6 sfՎ ամրոցս փխ տեղիս
6—7 ftuՎ յաշխարհին
8 tՎ այսպիսի
8 hiz անարգութիւն փխ անկարգութիւնս
8 Մ-Թ և մի երկու ՁՁ վասն այն, z եա այնորիկ
9 ad զաւրավարն
9 mՎ գլուխ
9 z որոյ անունն մաղանն փխ Չարմաղունն
9 b չարմաղան

10 c չիք էր, z եղև փխ էր
10 no ի դիւէն
10 t և ցաւոց
10 gՎ զիշխանութիւն
11 siz չիք 'զի կին... տանն նորա'
11 ijp որդիքն
11 ad գործակալաւք
11 adfghj տան նորա, o չիք՝ տանն նորա
12 o վարէին նոցա իշխանութիւնն, z այլ վարէին
12 o խախանն, z խանն
12 ip պատուիրեաց փխ հրամայեաց
12 o թէ մեռանի
13 abcefhjmnop զոսկերսն
13 o չիք ևս
13 cdegijpstuzՎ ընդ զօրուն
13 beign յաջողած, o յաջողակ
13 oz էր
13 n այրն, o այրն այն
14 dsu շնահաւոր, h նշանաւոր
15 t փախաւ
15 p մեծամեծքն մեղադիր եղեն, Վ. մեծամեծք
16 abcfgh առնն, ijp այնմիկ առն
17 akz երդուին, nopՎu չիք նմա
17 ip առնել նորա, z առնել յայնմհետէ
17 b առնել չար (չիք նմա)
17 bcegijp զաշխարհն, fh զաշխարհ
17 deg ի ձեռս
18 bcdijostu նորա փխ նոցա
18 no չիք առաւել

*ւատարմութեան։ Իսկ Աւագն գրեաց թուղթ և առաքեաց առ խաղանն, թէ՝ «Ի ծառայութենէ քումմէ ոչ եմ ելեալ, այլ ի սպանմանէ փախուցեալ եմ, և անսամ քո հրամանիդ»։*

*Եւ մինչ նա յամէր զգալն և մնայր պատասխանւոյ մեծ թագաւորին, սորա զգանձն նորա, որ թաքուցեալ կայր ի բերդորայն, զամենայնն հանին՝ խոյզ արկեալ։ Եւ դարձեալ պատգամս յղէին մի զկնի միոյ առ Աւագն գալ առ նոսա, զի երկնչէին յարքայէն իւրեանց։*

*Եւ իբրև եկն Աւագն ի զօրն, իսկոյն եհաս հրաման ի խաղանէն առ զօրսն իւր, զի մի՛ ոք փչխեսցէ չար ինչ առնել Աւագին, և թուղթ՝ առ Աւագն, և պարգևս նմա, գալ համարձակ և մի՛ երկնչիլ։ Ապա մեծարանս արարեալ նմա, հանին արտաքս ի զօրէն զարսն, որք կամէին սպանանել զնա։ Եւ առաքեցին զնա և զոմն մի գլխաւոր՝ Տօնղուս-աղա անուն, ընդ նմա, որ եկեալ էր հարկս պահանջել յամենեցունց հրամանաւ ղանին, առ թագուհին վրաց Ռուզուդան, գալ ի հնազանդութիւն մեծի արքային։*

*Որոց երթեալ առ նա՝ յորդորեցին զնա կալ ի հնազանդութեան մեծ արքային և մի՛ երկնչիլ։ Եւ առեալ ի նմանէ զօրս՝ եկին առ առաքիչսն պայմանաւ և սիրով խաղաղութեան՝ թագուհւոյն կալ ի հնազանդութեան*

1 Վ *հա/ւատարմութեանն*
1 *Մ-Թ* չիք *և առաքեաց*
1 nost *ղանն*, Վ *խանն*
2 no չիք *քումմէ*
2 cdijnop չիք *ի*
3 gijstuՎ *քում* փխ *քո*
4 i *համարէր* փխ *յամէր*, no *ամէր*, p *յամառէր*
4 dfhj *պատասխանոյ*
4 btuՎ *մեծի*
5 fhՎ *զգանձ*
5 *Մ-Թ*Վ և մի քանի ՁՁ *թագուցեալ*
5 Վ *ի բերդորայս*
5 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *զամենեսեան*, Վ *զամենայն*
6 i *ի սայլ*, stuՎ *ի խոյզ*
6 m *առաքէին* փխ *յղէին*
6 bdegijnopu *մի զմիոյ կնի*, c *մի զմիոյ զկնի*, m *մի զմիոյ* (չիք *կնի*)
7 d *երկնէին* փխ *երկնչէին*
8 stՎ *եկն* փխ *եհաս*
8 cd *խաղաղանէն* (sic), Վ *յարքայէն* փխ *ի խաղանէն*
9 stՎ չիք *իւր*
9 m *մի ոք չար ինչ իշխեսցէ առնել*
9 b *թուխթ*, Վ *թուղթս*, ip *թուղթ գրեն առ աւագն*
10 bcdejnou *գալ նմա համարձակ*, m *կալ համարձակ*, g *գալ նա*
10 fhiՎ *մի երկնչել*
11 Վ չիք *նմա*
11 ip *ի զօրացն*
11 no չիք *զարսն*
11 no չիք *զնա*
12 *Մ-Թ* և մի երկու ՁՁ չիք *'առաքեցին զնա և'*
12 ip *գլխաւորացն*
12 acd *տաւնղուս աղա*, ij *տոնղուզ աղա*, o *տունղուս աղա*, pՎ *տօնղուզ աղա*
12 m *անուն նորա*
12 m չիք *ընդ նմա*
12—13 stՎ *որ եկեալ էր ընդ նմա*
13 o *նոցունց* փխ *յամենեցունց*
13 m չիք *ղանին*
14 p չիք *վրաց*
14 i *ռուզուղանն*
15 m *յորոց*
15 a *երթալ*
15 acdfgijkmnopst *ի հնազանդութիւն*
15—16 bcdegijopstuՎ չիք *մեծ արքային*, afgk *մեծի արքային*
16 aefstՎ *երկնչել*
16 ip *եկն*
16—17 u չիք *'երկնչիլ...ի հնազանդութեան'*
16 ip *առաքիչն*
17 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *պայմանաւոր սիրով խաղաղութեամբ*, st *պայմանաւ և սիրով խաղաղութիւն*
17 abcdgh *թագուհոյն*
17 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *կեալ*
17 nostՎ *ի հնազանդութիւն*

*հանդերձ որդւովն՝ Դաւթաւ մանկամբ, զոր նորընծայ թագաւորեցուցեալ էր, և նոցա ոչ առել ուխտին։*

## Լ

### Վասն կոտորածին որ ի կողմանս Խաչենոյ, եւ վասն բարեպաշտ իշխանին Ջալալին:

*Ցուցաք սակաւիկ մի համառօտիւք, որ ինչ գործեցաւ ընդ աշխարհս ի մոլեկան զօրացն, որ թաթարն կոչի։ Ասասցուք արդ և վասն կողմանցն Խաչենոյ և որ ինչ անդ գործեցաւ։ Քանզի ընդ ամենայն կողմանս սփռեալ էին զասպատակս իւրեանց, այլ և վիճակաւ ևս բաժանեալ, հասին անդ ոմանք ի գլխաւորացն զօրու ծանու և զինու և ամենայն աղխիւ բանակին, գերեցին և սպանին զբազումս՝ որ յարձակ վայրսն։ Ապա մարտիւք մարտեան և ընդ գաղթականսն, և որ յամուր վայրսն, զոմանս խաբէութեամբ և զկէսս բռնութեամբ իջուցին, էր՝ զոր սպանին, և էր՝ զոր գերեցին, բայց յոլովքն այն էին, որ ամրացեալ կային յանկասկած վայրսն, զոր վասն դժուարութեան տեղւոյն Հաւախաղաց կոչէին, որք ապաստանեալ յամուրսն, անկասկած կային։*

*Բայց քանզի ի տեառնէ էր բեկումն, յեղակարծում ժամու գաղտագողի ելեալ՝ մտին յամուրսն, և սրոյ ճարակ ետուն զբազմութիւնն, և զկէսն գահավէժ արարին։ Եւ ի բազմութենէ անկելոցն ծածկէր երկիրն, և արիւնն առու ելեալ՝ իբրև զջուր երթայր, և ոչ յոք խնայեցին. և ոսկերքն ևս յետ բազում ժամակաց իբրև զդերբուկս քարանց կուտեալ երևէին։*

1 acdfhu որդովն, st որդւովք
1 Մ-Թ և մի երկու ՁՁ չիք մանկամբ
1 i զոր նոր ընծայեցուցեալ
1 Մ-Թ և մի երկու ՁՁ թագաւորեցուցեալ էր մանուկ տիօք
2 a առեալ
2 i ուխտին իւրոյ, p ուխտին իւրեանց
3 d խաչենայ
3 Մ-Թ և մի երկու ՁՁ բարեպաշտի
4 stu Ջալալադնին, Վ Ջալալդօլայ
5 z ...ուաք փխ ցուցաք
5 Մ-Թ գրեցաւ փխ գործեցաւ
5 o չիք ի
5—6 l չիք 'ցուցաք սակաւիկ...թաթարն կոչի' o ցուցաք փոքր ի շատէ որ ինչ գործեցաւ ընդ աշխարհս մոլեկան զօրացն թաթարաց. ասասցուք
5—6 s ի մոլորական փխ ի մոլեկան
6 ip կոչէին
6 m չիք արդ, no ասասցուք ևս կողմանցն
7 l գործեցաւ ի մոլեկան զօրացն որ թաթարն կոչէին, քանզի
7—8 n սփռէին, o սփռին ասպատակս
9 Մ-Թ չիք ոմանք
9 Մ-Թ ախիւ, t ախտիւ
10 stՎ զբազումս սպանին
11 d ամուր
12 l զկէսն
12 ahlm և էր զորս, st որ․․․որ, Վ որ գերեցին
12 d գերեցուցին
13 s որք ամրացեալք
13 Մ-Թ և մի երկու ՁՁ վայրս
14 cefghjlo տեղոյն
14 s ապաստանեալք
15 o աւուրցն փխ յամուրսն
16 n քանի տեառն էր
16 ijpx և յեղակարծում
16—17 no ժամու ելեալ մտին գաղտագողի զամուրսն
17 Մ-Թ և մի երկու ՁՁ եղեալ, s ելեալք
18 egnos զկէսսն
18 n չիք ի
18 jt անկելոյն
18 h երկիր, no զերեսս երկրի, x զերկիրն
19 Մ-Թ և մի քանի ՁՁ եղեալ, Վ եղեալ—ԱԲԳ ելեալ, ijnopx առաւելեալ փխ առու ելեալ
19 Մ-ԹՎ և մի երկու ՁՁ յոչ ոք, g ոչ ոք
20 Ա-Թ չիք ևս
20 Մ-Թ զբերդուկս փխ զդերբուկս
20 x կուտակեալ

*Զոգան և ի վերայ բարեպաշտ իշխանին Հասանայ, զոր Ջալալն կոչէին։ Քուերորդի էր սա մեծամեծ իշխանացն Զաքարէի և Իւանէի, այր բարեպաշտ և աստուածասէր, հեզ և հանդարտ, ողորմած և աղքատասէր, ճգնող յաղօթս և ի խնդրուածս, իբրև զայնս, որ յանապատս կային. զպաշտօն տունչեան և գիշերոյ անխափան կատարէր ուր և լինէր՝ իբրև զվանորայսն. և զյիշատակ յարութեան Փրկչին յաւուր միաշաբաթւոջ յոտանաւոր տքնութեամբ անցուցանէր անքուն. և էր յոյժ քահանայասէր և ուսումնասէր և ընթերցող աստուածային կտակարանացն։*

*Այլ և բարեպաշտուհի մայր սորա, յետ մահուան առն իւրոյ Վախթանկայ, զոր Տանկիկն կոչէին, կարգաւորեաց զերեսին որդիսն իւր՝ զՋալալն և զԶաքարէ և զԻւանէ, չոգաւ նա ի սուրբ քաղաքն Երուսաղէմ և զամս բազումս անդ կացեալ մեծաւ ճգնութեամբ՝ զարմացուցանէր զամենայն տեսողսն և զլսողսն. քանզի ծախեալ զամենայն գոյս իւր՝ զոր ունէր, յաղքատս և ի կարօտեալս՝ նման Հեղինէի, կնոջն Աբգարու, և ինքն ձեռագործաւ իւրով կերակրէր։ Եւ անդէն մեռաւ, զոր աստուած փառաւորեաց զփառաւորիչն իւր՝ լոյս կամարաձև կացեալ ի վերայ գերեզմանին առ ի յորդորել զայլս ի նոյն բարեգործութիւնս։*

1 d չոքան
1 defh չիք և
1 Մ-Թ բարեպաշտի
1 x որ
2 Մ-Թ սա քուեր որդի էր
2 n իշխանին
2 bstՎ զաքարէ և իւանէ
3 b չիք 'հեզ և հանդարտ, ողորմած և աղքատասէր'
4 afhklm չիք ի
4 abcdefgh jmpux զայնսն, l զայն
4 Մ-Թ և մի երկու ՁՁ յանապատսն, ij ի յանապատս, o անապատս
5 Մ-Թ և մի քանի ՁՁ տըւընջեան
5 dj յանխափան
6 dj զվանորեայսն
6 Վ յիշատակ
6 p յարութեանն
6 h յաւուրս
6 abe ghklnoՎ միաշաբաթոջ
6—7 ihost ոտանաւոր, i յոտնակաց, l յոտնակացութեամբ
7—8 no չիք 'և էր յոյժ... ուսումնասէր'
8 bcdegjp կտակարանաց
9 Մ-Թ բարեպաշտ տիրուհի՝ փխ բարեպաշտուհի
9 Մ-Թ նորա
9—10 bcdegjx վախտանգայ, no վաղտանքայ, pt վաղթանկայ, u վախդանգայ
10 g տանտիկն, ijpx թանկիկն, n տանկէքն, stՎ տօնկիկն, u տօնիկն

10 stՎ զերիս
10 abcdefhl որդիս
11 l զաքարէ, o զաքարէն
11 cdgikx յերուսաղէմ
12 ip չիք զամենայն
12—13 c լսողսն, p զտեսօղսն և զլսօղսն, stuՎ չիք 'և զլսողսն'
13 cdjpu ծագեալ փխ ծախեալ, x ծածկեալ
13 cd գոյթս x գութս փխ գոյս
13—14 Մ-Թ յաղքատսն և ի կարօտեալսն, no գօյս իւր և լցոյց զաղքատս և զկարօտեալս, p առ աղքատս և ի կարօտեալս
14 abdefghmnostu հեղանէի, ijpx հեղանի, l հեղենէի, Մ-Թ և մի երկու ՁՁ հեղինեայ
14 c աբգարա, d արկարու
14—15 Մ-Թ և մի երկու ՁՁ ձեռագործիւ, hostՎ ձեռագործով
15 s կերակրիւր
15 stՎ և անդ
15 st և փխ զոր
15—16 dim զփառաւորիչսն, noՎ զփառաւորիչս
16 m զի լոյս
16 s գերեզմանի նորա, tՎ գերեզմանին իւրոյ
16—17 d յորդորեցուցանել
17 u զայլսն
17 Մ-Թ բարեգործութիւն, n բարեգործութեան

*Այս իմաստուն իշխանս՝ իբրև ետես զյարձակումն անօրինացն, ամրացոյց զընակիչս իւրոյ աշխարհին ի բերդն, որ կոչի Խօխանաբերդ՝ ըստ բարբառոյն պարսից։ Եւ իբրև եկին պաշարել զնա, տեսին, զի ոչ էր հնար առնուլ զամուրսն, կոչեն զնա սիրով խաղաղութեան առ իւրեանս։ Եւ նա իմաստաբար հաճեաց զմիտս նոցա։ Յետոյ չոգաւ և ինքն առ նոսա բազում ընծայիւք։ Եւ մեծարանս արարեալ նմա, տան զաշխարհն իւր ի ձեռս նորա՝ այլ ևս յաւելուածով, և հրամայեն նմա ամի ամի երթալ զկնի նոցա ի գործ պատերազմի և միամտութեամբ կալ ի հնազանդութեան նոցա։ Իսկ նա խոհեմաբար կարգաւորեաց զաշխարհ իւր, որ ինչ մարթ էր առնուլ ի պէտս երթևեկացն, որ գային առ նոսա, թէ կերակուր և թէ այլ ինչ, ինքն առնոյր և պահէր և յիւրմէն յաւելուածով տայր նոցա, յորժամ գային առ նա, և ոչ նեղէին զաշխարհն, բայց թէ առ նա գային։ Իսկ յայլ աշխարհս զայս ոչ առնէին, այլ ուր և հասանէին, ամենայն ուրեք նեղէին զնոսա։*

## ԼԱ

### Վասն եկեղեցւոյն զոր շինեաց:

*Շինեաց եկեղեցի մի գեղեցկազարդ յօրինուածով զմբեթարդ երկնանման տաճար փառացն աստուծոյ, ուր հանապազ պատարագի գառն աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի, ի վանքն, որ կոչի Գանձասար,*

1 Մ-Թ չիք *իշխանս*, abcdefghjnoux *իշխան*, m *իշխանն*, stՎ *այրս*
1 bdՎ *զարձակումն*, nop *արձակումն*
1 Վ *անօրինաց*
2 stuՎ *զընակիչսն*
2 o *իւր*
2 abcdegil *խաւխանաբերդ*, fhnop *խաւխանայաբերդ*, Վ *Խօխանա-բերդ* Մ Թ *Խօխանաբերդ*
2 Մ-Թ և մի երկու ՁՁ *ընդ*
3 Վ չիք *Եւ*
4 no *խաղաղութեամբ*
5 enox *իմաստնաբար*, fhl *իմաստութեամբ*
5 p *հաճեցաւ միտս*
6 nostՎ *զաշխարհս*
6 ix չիք *իւր*
7 o *ի ձեռն*
7 t չիք *նորա*
7 ip *միամիտ* փխ *ամի ամի*
7 g *երթեալ*
8 Մ-Թ, h և մի երկու ՁՁ *կեալ*, no *գալ* փխ *կալ*, i չիք *կալ*
8 Մ-ԹՎ *ի հնազանդութիւն*
9 Մ-Թ *զաշխարհս*, n *աշխարհ*
9 o *և որ ինչ*
10 no *առնել*
10 Մ-Թ և մի երկու ՁՁ *երթևեկաց*, d *երթևեկիցն*
10 st *որք*
10 i *գայինն*, x *կային* փխ *գային*
10 Մ-Թ *կարգաւոր* փխ *կերակուր*
11 m *յինքն*
11 go *իւրմէ*, k *իւրմէն*
11 o *աւելուածով*
11 stՎ *յորժամ որ*
12 stՎ *զաշխարհս*
12—13 no *այլ աշխարհս*, ijp *յայլ* (p *այլ*) *աշխարհն* (i *յաշխարհս*)
13 Մ-Թ և մի երկու ՁՁ *տանէին* փխ *առնէին*
13 Վ *այլ և ուր*
13 cdj *նեղեալ էին* փխ *նէղէին*
15 cdh *եկեղեցոյն*, g *եկեղեցոյ*
16 stՎ *յօրինուածովք*
16 Մ-Թ և մի քանի ՁՁ *զմբեթայարդ*, cj *զմբեթարթ*, f *զմպեթյարդ*, o *զմբէթաարկ*, ip *զմբէթայարկ*, tuՎ *զմբեթազարդ*
16—17 Վ *և երկնանման*
17 Վ *փառաց*
17 Մ-Թ և մի երկու ՁՁ *քրիստոս գառն*
18 d *յաշխարհի*

*հանդէպ Խօխանաբերդոյ, ի տեղի շիրմի իւրեանց. և յոլով ամս աշխատ եղեն ի նմա։*

*Եւ իբրև առ զաւարտումն, արար նաւակատիս մեծահանդէս առ ի յօրհնել զեկեղեցին։ Անդ էր և կաթողիկոսն Աղուանից տէր Ներսէս բազում եպիսկոպոսօք, այլ և մեծ վարդապետն Վանական յոլով բաբունիւք։ Անդ էին և սուրբ վարդապետքն Խաչենոյ Գրիգորիս և տէր Եղիայ՝ հարազատք միմեանց, զոր զարդարեալ էր աստուած երկու մարդով. և փոխեցան յաստեացս առ Քրիստոս և կան ի պահեստի յաստուածափառ տանն Խադայի. առաջինոյն ի թուիս ՈՁԷ և Եղիայի ՈՂԸ. և օրհնեցին զեկեղեցին բազում քահանայիւք, որ ասէին զթիւ երիցանցն եօթն հարիւր։*

*Եւ իբրև կնքեցաւ օծմամբ, ճաշ մեծ յօրինեալ. ինքնին իսկ ձեռօք իւրովք պաշտէր զբազմեալսն և տուրս տուեալ ըստ իւրաքանչիւր պատուոյ առատութեամբ՝ արձակէր զամբոխն։ Եւ եղև այս ի ՈՁԹ թուին հայոց, յաւուր մեծի տօնի Վարդավառին։*

*Շինեաց և կին նորա Մամքան զգաւիթն հրաշալի ի դուռն եկեղեցւոյն, և ինքն զանձն ամենայն առաքինութեան տուեալ՝ ճգնէր հանապազ պահօք և աղօթիւք և ընթերցասիրութեամբ, և կայր ի պատուիրանս տեառն ի տուէ և ի գիշերի ըստ գրեցելումն։*

1 bcde *խաւխանաբերդոյ*, afhilnop *խաւխանայ բերդոյ*, g *խաւխանայ բերդոյն*, sՎ *խօխանաբերդին*. t *խօխանաբերդի*, *Մ–Թ Խօխանայ բերդոյ*
3 ips *էառ*
3 afhl *զյաւարտումն*, o *աւարտումն*
3 n *մեծահանդէսս*, o *մեծամեծս* փխ *մեծահանդէս*
3—4 abcdfjklm *առ ի յահնել (յահել, յահրնել)*, gՎ *առ ի օրհնել*
4 i *զեկեղեցիս*
4 no *զտէր*
5 ad *եպիսկոպոսաւք*
5 *Մ–Թ բաբունիք*, g *բաբունօք*, ijklmst *ռաբունիւք*, no *բաբունապետօք*
6 t *վարդապետն*
7 st *որ*, Վ *զորս* (*ԱԲԳ որ*)
7 b *կրկին* փխ *երկու*, g *յերկուց*, *Մ–Թ երկուց*
7—8 h *փառացն* փխ *փոխեցան*, no *փոխեցաւ*
8 Վ *ի պահեստ*
8 stՎ *ի տանն աստուածափառ*, e *յաստուածազարդ*
9 bpՎ *ի թուին*, cd *ի թուոյ*, e *ի թուականի*, m *ի թուականիս*, no *ի թուիս*
9 *Մ–Թ* չիք *և Եղիայի ՈՂԸ*, Վ *ի թուին վեց հարիւր ութսուն և հինգ և Եղիայի ի վեց հարիւր իննսուն և ութ*
9—10 *Մ–Թ* և մյուս ՁՁ. բացի ip-ից չիք *'օրհնեցին զեկեղեցին'*
10 Վ *երիցանց*
11 ad *աւծմամբ*
11 ad *յաւրինեալ*, no *օրինեալ*
11 i *ինքն իսկ*, j *և ինքնին իսկ*, x չիք *իսկ*
11—12 no *իւրօք*
13 m չիք *առատութեամբ*
13 c *զամբոխսն*, stu *զամբոխ*, *ԱԲԳ զամբոխէր* փխ *զամբոխն և եղև*
13 Վ *որ եղև*
13 bcdfgiklnopux չիք *ի*
13 beginopx *թուականին*, cdu *թվականին*
14 o *աւուր*
14 afl *տօնին*
15 ip *մամքայն*
15 l *ի դուռ*
15—16 cgh *եկեղեցոյն*
16 no *առաքինութեամբ*
16 lno չիք *տուեալ*
17 abd *պահաւք*
17 dl *աղաւթիւք*
17 afhlm *իսկ կայր* bcdegilnopstuxՎ *խոկայր* փխ *և կայր*
17 Վ *զպատուիրանս*
17 k չիք *տեառն*
18 i չիք *և ի գիշերի*

# ԼԲ

## Վասն ցուցման կերպարանաց թաթարին բացայայտութիւն սակաւ:

*Վասն զի յօժարեցաք մեք յիշատակ թողուլ յազգս՝ որ գալոց են, քանզի ակն ունիմք մեք յուսով փրկութեան ի նեղութենէ աստի, որ պաշարեալս է զմեզ, սակաւիկ մի ցուցցուք քննասիրաց զկերպարանս և զխօսս նոցա։*

*Էին տեսլեամբ կերպարանաց դժոխատես և ահագնալուր՝ մօրուս ոչ ունելով, բայց ոմանց սակաւ թուով մազս ունելով ի շուրթն կամ ի կլափն. ակն նեղ և արագատես, ձայն նուրբ և սուր, բազմակեացք և տևողք։*

*Յորժամ անկանէր, յաճախ ուտէին և ըմպէին անյագ, և յորժամ ոչ անկանէր, ժուժկալք էին։ Ուտէին զամենայն կենդանիս՝ զսուրբս և զանսուրբս, և զմիս ձիոյ առաւել մեծարէին, անդամ անդամ յօշեալ և եփեալ, կամ խորովեալ առանց աղի, և ապա մանր կոտորեալ և թացեալ յաղաջուր, այնպէս ուտէին. ոմանք ի գուճս՝ ըստ նմանութեան ուղտուց և կէսք նստելով ուտէին, և յուտելն հասարակ բաշխէին տէրանց և ծառայից, և յըմպելն զղմուզ կամ զգինի, առեալ մի ոմն մեծ ամանով ի ձեռս իւր և փոքր բաժակով առեալ ի նմանէ՝ ցանէր ընդ երկինս, և ապա յարևելս, յարևմուտս, ի հիւսիս և ի հարաւ, և ապա իւր իսկ ցրուողին զայն սակաւ*

1 o *ցուցումն*
1 no *կերպարանք*, Վ *կերպարանացն*
1 *Մ-Թ բացայայտնութիւն*, sՎ *բացայայտութիւն սակաւ*, z չիք *բացայայտութիւն սակաւուք*
2 no *թողուլ յիշատակ*
2 g *ազգս*
2 ih *գայցեն* փխ *գալոց են*
2—4 z չիք *'վասնզի... զմեզ'*
3 cdijp չիք *մեք*
3 Վ *յուսովք*
4 cdijp *ցուցաք*
4 otՎ *քննասիրացդ*, ijp *քննկալս իրաց*, z չիք *քննասիրաց*
4 ad *խաւսս*
6 m *էին տեսիլ կերպարանաց նոցա դժոխայէս*
6 a *մայրուս*, b *մուրուս*, cd *մորուս*
7 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *սակաւ ոմանց*, bcdijnopstuՎ *սակաւուց ոմանց*
7 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *թուելով*, stՎ չիք *'թուով մազս ունելով'*
7 stՎ *կամ ի կլափն կամ ի շուրթս*
8 *Մ-Թ և* մի քանի ՁՁ *ձայն*
8 n *բազմակեաց*, o *բազմակեաց և տևող*
9 a *ընպէին*, o չիք *'և ըմպէին'*
9 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *յորժամ* փխ *և յորժամ*
10 dz *ժուժկալեալք*
10 z *լինէին* փխ *էին*
10 d *զսուրբ*
10—11 no *սուրբս և անսուրբս*
11 stՎ *զմիսն ձիոյն*, e *ձիւոյ*
11 aih *յանդամ յանդամ*
11 ad *յաւշել* փխ *յօշեալ*
11 stzՎ *և կամ եփեալ և*, d *եփել*
12 d *խորովել*
12 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *կտրեալ*, stՎ *կտրտեալ*
12 m *թաղեալ* փխ *թացեալ*
12—13 g *աղաջուր*, stuՎ *յաղաջուրն*
13 h չիք *ի*, no *ընդ* փխ *ի*
13 i *գումս* (sic), no *կուճս*, stՎ *գուճ*
13 o *նման* փխ *ըստ նմանութեան*
13 no *ըղտուց*
13 h *կէսքն*, ij *կէս*
15 cdijp *զգինի* (p *գինի*) *կամ զղմուզ* (c *զխմուզ*), no *զմուզ և*
15 mnosiՎ *ի ձեռն*
16 *Մ-Թ*Վ և մի երկու ՁՁ *բաժակաւ*
16 *Մ-Թ*Վ և մի քանի ՁՁ *ցանէին*
16 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *յերկինս*, jnop *ընդ յերկինս*
16—17 *Մ-Թ* և մի երկու ՁՁ չիք *յարևելս*. no *և արևելս և արևմուտս ի հիւսիսի և հարաւ* (o *զհիւսիս և զհարաւ*), p *յարևելս յարևմուտս ի հիւսիս և ի հարաւ*, ai *հիւսիսս*, b *ի հիւսիւսի*
17 Վ *ցրողին*

*մի ըմպեալ ի նմանէ՝ մատուցանէր աւագագունին։ Եւ թէ ոք բերէր նոցա կերակուրս կամ ըմպելիս, նախ՝ բերողին տային ուտել և ըմպել, և ապա՝ ինքեանք ուտէին և ըմպէին, զի մի ի մահացու դեղոց ինչ դժրիցին։*

*Որչափ և կամէին՝ կանայս առնէին, բայց զպոռնիկս ամենևին ոչ ապրեցուցանէին ընդ կանայս իւրեանց. բայց ինքեանք՝ ուր և հանդիպէին այլազգեաց, անխտիր խառնակէին։ Եւ գողութեան ատելիք էին, մինչ զի չարաչար մահուամբ սպանանէին։*

*Եւ պաշտօն ինչ ոչ գոյր առ նոսա, կամ երկրպագութիւն, բայց ստէպ զանուն աստուծոյ յիշէին յամենայն իրս. զայս թէ զէ՞ն աստուծոյ գոհանային, և կամ թէ զա՞յլ ոմն աստուած կոչէին՝ մեք ոչ գիտեմք, և ոչ ինքեանք ևս։ Բայց սովորաբար զայս ասէին՝ զարքայն իւրեանց ազգակից աստուծոյ. զերկինս առեալ աստուծոյ իւր բաժին և զերկիրս տուեալ խաղանին. զի ասէին զՉանգզ ղանն, զհայր խաղանին, ոչ ծնեալ ի սերմանէ առն, այլ լոյս իմն եկեալ յանհերևութից, և մտեալ ընդ երդ տանն, և ասացեալ մօրն, թէ՝ «Յղասջիր և ծնցիս որդի ինքնակալ երկրի»։ Եւ յայնմանէ ասէին ծնեալ զնա։*

*Զայս պատմեաց մեզ Գրիգոր իշխանն, որդի Մարզպանին, եղբայր Ասլանբէկին, Սարգսի և Ամիրային, յազգէ Մամիկոնէից, զոր իւր իսկ*

1 a *ընպեալ*, d *ըմտեալ*, im *ըմպել*
1 im *և մատուցանէր*, o *ապա մատուցանէր*
1 o չիք *նոցա*
2 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *կերակուրս ինչ* h *կերակուրս ինչս*, o *կերակուր կամ*
2 a *ընպելիս*
2 i *յուտել*
2 a *ընպել*, ij *յըմպել*
2 befghm *կամ* փխ *և*
3 a *ընպէին*
3 *Մ-Թ մահացու* փխ *ի մահացու*
3 d *դեղաց*, no *դեղ ինչ*, u *մահու դեղոց*
3 cdij *դժրինեն* (sic), eg *դրժիցին*, no *դժրեցին*, p *դժրիցեն*, stu *ԱԲԳ դրժից* (sic) (*Վ դրժիցին*)
4 no չիք *և*
4 no *պոռնիկս*, su *զպոռնիկսն*
5 n *ապրեցուցանեին*
5 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *որ ընդ* փխ *ընդ*
5 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *իւրեանց կանայս*
6 abcdefijmpu *յայլազգեաց*, hk *յայլազգաց*
7 o չիք *մահուամբ*
7 n *սպանանեին*, stՎ *սատակէին* փխ *սպանանէին*
8 hm *ի նոսա*
9 adfhuՎ *զանունն*
9 no *յիշեն*
9 g *ամենայն*, no *զամենայն*
9 ip *յաստուծոյ*
10 n *կոչեին*
10–11 bcdginp *այլ ոչ ինքեանք ևս*
11 *Մ-Թ*Վ և մի քանի ՁՁ *զի արքայն*, այլ ՁՁ *զայս ասէին*, *զի ասէին զարքայն*
11 u *առնէին* փխ *ասէին*
11 stՎ *ազգային* փխ *ազգակից*
12 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *աստուած*,
12 l *իրը* փխ *իւր*
12 t չիք *զերկինս...բաժին*,
12 afh *երկիր*, o *զերկիր*
13 no չիք *զի ասէին...խաղանին*
13 h *զչանգզղան* (sic), abcdu *զչանգըզ ղանն* (u *խանն*), *Մ-Թ զՉանկզ ղան*, Վ *զՉանկզխանն*
13 z չիք *զհայր խաղանին*
13 ip *ի սերմանց*
14 afghno *անհերևութից*
14 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *ընդ յերդ*, a *երթ*, cd *յերթ*, stՎ *երդս*
15 no *ընդ մօրն*
15 mՎ *ծնցես*
15 gin *յերկրի*
16 o *նա*
17 i *մարզպանի*
17 ip *եղբօր*
18 *Մ-Թ*Վ և մի երկու ՁՁ *ասլան պէկին*
18 d *սարգիսի*
18 d *մամիկոնենից*, stuՎ *մամիկոնէիցն*

*լուեալ էր ի մեծ առնէ միոջէ ի կարի աւագացն, որում անուն էր Կուխթունունին, յաւուր միում յուսուցանել նորա զմանկագոյնսն։*

*Եւ յորժամ ոք մեռանէր ի նոցանէ, կամ սպանանէին, է՛ր զոր բազում աւուրս շրջեցուցանէին ընդ խրեանս, քանզի մեռեալ դիւի՝ խօսէր անդուստ բազում բարբաջմունս, և է՛ր զոր այրէին, և զկէսն թաղէին յերկրի խոր փոսիւք, և ընդ նմին դնէին զզէնն իւր և զհանդերձն, և զոսկի և զարծաթ, որ ինչ բաժին իւր էր։ Եւ թէ ի մեծաց ոք լինէր, ի ծառայից և յաղախնեայց ևս դնէին ընդ նմա ի գերեզմանի, զի սպաս կալցի առէին նմա. այլ և ձի ևս, զի առէին անդ պատերազմ սաստիկ լինել։ Եւ զոր յիշատակ կամէին առնել մեռելոյ, ճեղքէին զփոր ձիոյն և քարշէին ընդ այն զամենայն միսն առանց ոսկեր. և ապա զփորոտին և զոսկերսն այրէին հրով, և կարէին զմորթ ձիոյն, իբրև թէ զամենայն մարմինն ունիցի։ Սրեալ փայտ մի մեծ, հարեալ ընդ որովայնն և հանեալ ընդ բերանն, այնպէս վերացուցանէին ի ծառ կամ ի բարձրաւանդակ տեղի ինչ։*

*Այլ և կանայք նոցա կախարդք էին և զամենայն ինչ հմայէին. և առանց հրամանի կախարդացն և դիւթիցն ոչ երթային ի ճանապարհ ուրեք, բայց թէ նոքա հրամայէին։ Այլ և խօսք նոցա խժականք և անծանօթք*

1 **Մ-Թ** և մի երկու ՁՁ *յառնէ*. stՎ *յառնէ միոջէ մեծէ և*
1-2 **Մ-Թ** և մի երկու ՁՁ *զուխթու նուին*, jp *զոթուն նուին*, no *զուգու նուին*
2 **Մ-Թ** *նոցա*, no չիք *նորա*
2 o *զմանկունսն*, stՎ *զմանկագոյնս*
3 h *ոչ* փխ *ոք*
3 mstՎ *որ* փխ *զոր*
4 m *դիւին*, no *ընդ դիւի*
4 ad *խաւսէր*
4 d *անդ սուտ* փխ *անդուստ*, m *անդրէն* o *անդուստ անպատեհ*
5 **Մ-Թ** և մի քանի ՁՁ *զկէս*, bcd *զկէսս*, no *կէսս*
5 i *երկրի*
5—6 cdijp *ի խոր փոսիւք*, stՎ *խորափոսիւք*
6 **Մ-Թ** *զզէնն* փխ *զզէնն իւր*, b *զէնն իւր*, stuՎ *զզէնս իւր*
6 m *զհանդերձսն*, **Մ-Թ** *զհանդերձ*, n *հանդերձս*
6 stՎ *զոսկին և զարծաթն*
7 oz *զոր*
7 ip *որ ինչ նորա բաժինն էր*,
7 no *մեծ ոք*, z *ի մեծամեծաց*
7 **Մ-Թ**Վ *յաղախնեաց*, abcdefghj *յաղախնաց*
8 no *կալցեն*, p *կալցէ*
8 n *ասեն*, o չիք *առէին*
9 **Մ-Թ** *ձիս* փխ *ձի ևս*, a *ձինս*, f *զձինս*, stuՎ *զձի ևս*
9 n *ասեին*
9 h *լինէր*, m *լինիլ*, n չիք *լինել*
9 Վ չիք *և*
9 n *կամեին*
10 stՎ *առնելոյ*
10 **Մ-Թ**Վ *մեռելոց*, t *զմեռելոց*
10 n *ճեղքեին*
10 e *ձիւոյն*
10 f *քաշէին*
10 i *զմիսսն*, m *զմիսն*
11 nostuՎ *զոսկերս*
11 bcdegjstuzՎ *կարեալ*, no *կարել*, h *նկարէին*
12 stՎ *զմորթն*
12 e *ձիւոյն*
12 jmop *իբր թէ*
12 m *ամենայն մարմին*
12 no չիք *մի*
13 abcdfghijkmp *յորովայնն*
13 aefhn *վերացուցանէ*, g *վերակացուցանէ*
14 **Մ-Թ** *տեղւոջ* փխ *տեղի ինչ*
15 z չիք *'և զամենայն ինչ հմայէին'*,
16 h *հրամանաց*, o *նոցա հրամանի*
16 sՎ *կախարդաց և դիւթից*
16 t չիք *'և առանց... ի ճանապարհ'*
16—17 i *երթային ուրէք*
16—17 t չիք *'պարհ ուրեք...հրամայէին*
17 suՎ չիք *թէ*
17 Վ չիք *և*

ի մէնջ. քանզի կոչէին զանունն աստուծոյ՝ թանգրի, և զմարդ էրէ, հարան, և զկին՝ էմէ, ափջի, և զանուն հօր՝ էչկա՛, և զմայր՝ աֆա, և զեղբայր՝ աղա և զքոյր՝ աֆանի, և զգլուխ՝ թիրօն, և զաչս՝ նիտուն, և զականջս՝ չիֆին, և զմօրուս՝ սախալ, և զերես՝ յիւզ, նիուր, և զբերան՝ աման, և զատամն՝ սխուր, սիդուն, և զհաց՝ օթմակ և զեզն՝ օֆար, և զկով՝ ունէն, և զոչխար՝ ղոյնա, և զգառն՝ ղուրղան և զայծ՝ իման, և զձի՝ մօրի, և զջորի՝ լօսա, և զուղտ՝ թաման, և զշուն՝ նօխայ, և զգայլ՝ չինա, և զարջ՝ այտֆու, և զաղուէս՝ հօնֆան, և զնապաստակ՝ թաբլղայ, թուլայ և զհաւ՝ թախեա, և զաղաւնի՝ ֆօֆուչին, և զարծուի՝ բուրֆուի-ղուշ, և զջուր՝ ուսուն, և զգինի՝

1 iՎ զանունն, n անուն
1 abcm թնգրի, eg թընգրի, no թընկրի, dz թէնկրի, sՎ թանկրի, t թանգրի, (մոնղոլ. тэнгэр, тэнгэри (երկինք), тэнгри)
1 Մ—ԹՎ և մի երկու ՁՁ զմարդն
1 c հերէն, eg հարան, ip հարան. էրէ, (îstu երէ), no էր, Վ էրէ (մոնղ. эрэ)
2 Մ—Թ մի քանի ՁՁ զկինն
2 Մ—Թ cno չիք էմէ, bdpstuՎ եմէ (մոնղ. эмэ, эм)
2 nz ափչի, o ափշիշ
2 o չիք 'հօր՝ էչկա', u էշկա, ԱԲԳ էշքա, Վ էջքա (մոնղ. эцэгэ, эцигэ)
2 n հօր աքա և մօր տիչքա և եղբայր, o մօր տիչքայ և եղբայր (մոնղ. ека, ака աւագ եղբայր)
2 stՎ զմօրն, u զմօր
2 sՎ զեղբայրն, tz զեղբօրն
3 n քոյր
3 g աքաչի (մոնղ. эгэчи, эгч—մեծ քոյր)
3 Մ—Թ զգլուխս, no գլուխ, z զգլխոյն
3 Մ—Թ kmt թիւրօն, a թիւրաւն, cd թիրաւն, n թիրոնի, o թիրօնի (մոնղ. туруун, тэргуун)
3 z զաչիցն
3 f նետաւն, h նիւտօն, stՎ նիտօն (մոնղ. нидун)
3 Մ—Թ զականջսն
3 enou չիք, st ջիք, Վ ջիքին (մոնղ. чикин, чик)
4 c զմաւրուս, d զմորուս (մոնղ. сахал)
4 Մ—Թu և մի քանի ՁՁ յիօզ, b յիոզ, dg յիւազ
4 Մ—Թ և մի քանի ՁՁ չիք նիուր, c յուզնիւր. d յի. ազնիւր (մոնղ. ниур)
4 no բերան, Վ զբերանն (մոնղ. аман)
4—5 Մ-Թ և միերկու ՁՁ չիք սիդուն. ijp զատամն սխուր և զատամունսն (j զատամն) սիդուն, Վ զատամն սիդուն -սխուր (մոնղ. шидун, шуд(эн))
5 a աւթմակ, bcdijp աթմակ, m աթմաք, f օթմաք, no օդմէք (կալմակ. öтмäк, մոնղ. отмак)
5 z զեզինն
5 Մ-Թ և մի երկու ՁՁ աքար, cd աւքար, ijnop օգար (մոնղ. укэр)
5 o զկովն յունէն (մոնղ. униэ, унаа)
6 no խոյնա, Վ ղօյնա, ij գնոյնա (sic) (մոնղ. копин)
6 no զառն
6 dstuz ղուզան (մոնղ. хурга, хурган)
6 z չիք 'զայծ իման' (մոնղ. имаган, эмаа(н))
6 cdnoz մաւրի (մոնղ. мори)
6 acdeghjno լաւսա (լաւսայ), bfstuՎ լուսա z չիք 'զջորի լօսա' (մոնղ. лу'о'са)
7 d թամուն (մոնղ. тэмээн)
7 Մ-ԹՎ և մի քանի ՁՁ նօխա փխ նօխայ, acdij նաւխա, efhp նաւխայ, g նաթղայ, z այի-խա փխ նօխայ (մոնղ. nokai нохой)
7 ef չինայ, Վ զինա (մոնղ. чано, чана)
7 Վ զարջն
7—8 stu չիք՝ և զշուն... այտքու'.
7 z չիք 'զարջ՝ այտքու' (մոնղ. утэчэ)
8 Մ-Թ և մի երկու ՁՁ հօքան, aefhno հաւքան. bՎ հոնքան, cdj հաւընքան (մոնղ. унэгэн, унэг)
8 Մ-Թ և մի երկու ՁՁ թապլղայ, ip թափլղայ, b բաթյղայ (sic), z չիք՝ զնապաստակ թաբլղայ
8 Մ-Թ և ՁՁ մեծ մասը չիք թուլայ (մոնղ. таулай~тулай)
8 no չիք՝ հաւ թաղեա'... քուչա, efg թախեայ (մոնղ. такия, тахия)
9 Մ-Թ և մի երկու ՁՁ կօկաչա, acdfhj գաւգաչա (գաւգաչայ), beg գօգաչա (գօգաչայ), ip գոգարչա (գօգարչա), st գօգաչեա (= մոնղ. kökerчін)
9 stuՎ զարծիւ
9 Մ-Թ և մի քանի ՁՁ չիք բուրքուէ, t ղուշ բուրքուի (մոնղ. бургед; бургут, бургэд)
9 Վ զջուրն
9 no ուսու, st սուն (մոնղ. усун, ус)

տարասու(ն), *և զծով՝* ճաուր-տանգըզ, *և զգետ՝* մօրան-ուլանու, *և զթուր՝* իօլտու *և զաղեղ՝* նըմու, *և զնետ՝* սըմու, *և զթագաւոր՝* մելիք, *և զպատրոն՝* նուին, *և զմեծ պատրոն՝* եքա նուին *և զերկիր՝* էլ, իրկան, *և զերկինք՝* գօգայ, *և զարեգակն՝* նարան, *և զլուսին՝* սարա, *և զաստեղս՝* սարղա, ճուտուտ, *և զլոյս՝* օտուր, *և զգիշեր՝* սոյնի, *և զգրագիր՝* բիթիքչի, *և զսատանայ՝* բառաճուր, էլէպ *և զայլ այսպիսի խժական անուանս, զոր ի բազում ամաց մեզ անծանօթ, իսկ այժմ ակամայ ծանուցեալ։ Եւ գլխաւորք երևելիք, որք յառաջադէմք էին, այսոքիկ են. առաջին մեծ, որ գլուխ և հրամանատու էր ամենայն զօրուն, Չարմաղուն-նուինն, այր իրաւարար և դատաւոր. և որք աթոռակիցք էին նորա՝ Իսրար-նուինն, Ղութուն-նուինն, Տութուն-նուինն և Չաղատայն, որ զօրավարն էր զօրուն, զոր սպանին մուլհեդքն։ Եւ այլ բազում գլխաւորք էին և անթիւ զօրք։*

1 *Մ-Թ Վ* և ՁՁ *տարասու* (մոնղ. тарасун, дарасун)
1 z չիք *'տարասուն... ուլանու'*
1 *Մ-Թ* և մի շարք ՁՁ չիք *նաուր*
1 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *տանկըզ,* st*Վ տանղըզ (տանգզ)* fh *տանգլըզ տանղըզ նաւտուր,* u *տանգըզ նաւտուր* (մոնղ. на'ур, բուրք-մոնղ. мангис)
1 ij *զգետս,* no *զգետն*
1 *Մ-Թ* և մի քանի ՁՁ չիք *մօրան,* st *ուլանու մօրան* (մոնղ. мөрэн)
2 *Մ-Թ Վ* և մի շարք ՁՁ *խօլտու,* abd *խաւլտու,* n *խօլու,* o *թօլու* (մոնղ. iлду, исолту)
2 *Մ-Թ Վ* և մի երկու ՁՁ *զաղեղն*
2 s *նմօ, ԱԲԳ* t *նմօ, Մ-Թ Վ և ՁՁ նմու* փխ *նըմու* (մոնղ. нуму)
2 fh *նետ*
2 afhm *սըմու,* egijnopstuz*Վ սմու* (մոնղ. суму)
2 *Վ զթագաւորն*
3 *Մ-Թ զմեծ պարոն՝ նուին* փխ *զպատրոն նուին, և զմեծ պատրոն՝ եքա նուին*
3 *Մ-Թ Վ* fh և մի երկու ՁՁ *զմեծ պարոն,* stu*Վ զպարոն,* ip *զմեծ պարոնսն... զպարոնսն*
3 i *եքեայ,* no *էքա*
3—4 z չիք *'զերկիր... գօգայ, և'*
3 *Մ-Թ* և ՁՁ մեծ մասը՝ չիք *իրկան* (մոնղ. иргэн=*ժողովուրդ)*
4 acdj *գաւգայ,* o *գօքայ,* st*Վ գօգ,* u *գօգայ գուքոյ* (մոնղ. köke—*կապոյտ երկինք)*
4 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *նառան,* no *նուրան* (մոնղ. жаран)
5 z չիք *զլուսին՝ սարա* (մոնղ. сар, саран*)*
5 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *սաղըա*
5 *Մ-Թ* և մի շարք ՁՁ չիք *հուտուտ, Վ հուտուտ~սաղըա* (մոնղ. hадун(?))
5 alg *աւտուր,* bcdijpz *ատուր* (մոնղ' едўр—*օր).*
5—6 no չիք *'և զգիշեր... բառահուաէ,*
5 akm *գրագիր*
6 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *բառահուաէ* փխ *բառահուր էլէպ.* bcdegijp *բառահուռ* (չիք *էլէպ*)*.* *ԱԳ*t *զբառէլէպահուռ* (sic) u *բառահու ռէ լէպ*
6—9 z չիք *'և զայլ... զօրուն'*
6 no *լեզուք խժական անուանս,* p *անուանս*
6—7 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *զոր ի բազմաց* փխ *զոր ի բազում ամաց*
7 *Մ-Թ ծանուցեալք,* p *յակամայ ծանուցեալ,* no *մեզ ծանուցեալ*
8 *Մ-Թ* 'և մի երկու ՁՁ *առաջինն և մեծ և գլուխ, որ* փխ *առաջին մեծ, որ գլուխ և*
8—9 i *հրամանատարն,* j *հրամանատուրն*
9 *Մ—Թ* և մի երկու ՁՁ չիք *ամենայն*
9 *Մ-Թ Չարմաղան, Վ Չարմաղան,* no *չարմախա*
9 z *էր այր*
9—10 i չիք *'այր իրաւարար...նուինն և'*
10 stuz*Վ որ*
10 *Մ-Թ* չիք *էին*
10 no *նմա* փխ *նորա*
10 cdj *իսրարար*
10 s*Վ նուին... նուին*
10 cdjpz չիք *Ղութուն-նուինն*
11 fh չիք *Տութուն-նուինն,* n *տուտու նուինն*
11 o չիք *որ*
11 st*Վ զօրագլուխն* փխ *զօրավարն*
11—12 *Մ-Թ մլհիտքն,* m *մուլհիդքն,* no stuz *մուլհետքն*
12 z *և բազում զօրք անթիւք*
12 m չիք *զօրք,* no *զօրօք*

## ԼԳ

### Վասն Ռաբանին Ասորւոյ

*Նախախնամողն աստուած, որ զամենեցուն կեալն կամի, նա մարդասիրութեամբ իւրով երևեցոյց այր մի ի մէջ նոցա՝ երկիւղած և աստուածապաշտ, ասորի ազգաւ, որ հայր անուանեալ էր արքային նոցա, զոր խաղանն կոչէին, անուն նորա Սիմէօն, զոր Ռաբան-աթա կոչէին. ռաբանն ասորերէն՝ վարդապետ և աթայն թաթարերէն՝ հայր։ Սա իբրև լուաւ զանխնայ կոտորումն քրիստոնէից՝ որ ի զօրաց թաթարին, մատուցեալ առ խաղանն՝ խնդրեաց ի նմանէ թուղթ առ զօրսն իւր, զի մի այնմհետէ առ հասարակ կոտորեսցեն զանմեղ մարդիկ, որք ոչ պատերազմին ընդ նոսա, այլ թողուլ զնոսա, զի ծառայեսցեն նմա։ Իսկ նա զնոյն ինքն առաքեաց մեծ և երևելի շքով՝ գրեալ հրովարտակ առ զօրագլուխսն իւր, զի ամենեքեան անսայցեն հրամանի նորա։*

*Եւ նա եկեալ, բազում ինչ նպաստ եղև քրիստոնէից՝ թափելով ի մահուանէ և ի գերութենէ։ Շինեաց և եկեղեցիս ի քաղաքս տաճկաց, ուր ոչ իշխէին անուանել զՔրիստոս, և՛ս առաւել ի Թաւրէժ և ի Նախճաւան քաղաքի, ուր առաւել թշնամիք էին քրիստոնէից, զի ոչ իշխէին յայտնի երև-*

1 Մ-Թ Ռպանին, m ռապանին
1 cginou ասորոյ, dj ասորայ, fh ասորոց, p ասորւոց
1 ipu ասորոյ (p ասորւոց) և որ ինչ եղև
2 b Նախախնողն
2 ip աստուած որ ոչ անտես առնէ զարարածս իւր այլ զամենեցուն, u ամենեցուն
2—3 Մ-Թ և մի երկու ՁՁ մարդասիրութեամբն, z մարդասէրն
2—3 z չիք 'որ... իւրով'
3 Մ-Թ ի մէջ նոցա այր մի, no զայր
ipu չիք մէջ, hj ի մէնջ փխ ի մէջ
3 z չիք 'այր մի... երկիւղած և'
3—4 no աստուածապաշտք
4 z ասորի մի
4 z չիք ազգաւ
4—5 z անուանէին արքայի խաղանին
5 abcdefghknost ·որ
5 Մ-Թ Ռպան Աթա, z չիք 'զոր ռաբան աթա կոչէին', Վ չիք 'անուն նորա... կոչէին'
5—6 Մ-Թ չիք 'ռաբանն ասորերէն վարդապետ և աթայն թաթարերէն' հայր'. abcdm կոչէին ռապանն, h չիք աթայն
5—7 su չիք 'անուն... թաթարին'
6 m հայր ասի
6 Մ—Թ չիք սա
6—7 z չիք զանխնայ
6—7 no անխնայ կոտորելն
6—7 Վ չիք սա իբրև... թաթարին'
7 z չիք 'որ ի զօրաց թաթարին'
8 stՎ ղանն փխ խաղանն
8 no չիք ի նմանէ
8—9 cdijpz չիք առ հասարակ
9 n զի մի մարդիկ
9 t զմեղ փխ զանմեղ մարդիկ
9 d մարդիկք, к մարդիկս
9 z ընդ ինքեանս փխ ընդ նոսա
10 l չիք զի
11 e հրովարտակաւ, z ետուն փխ հրովարտակ
11 Մ-Թ և մի երկու ՁՁ զօրագլուխս, ipstՎ զօրագլուխն
12 b անսասցեն
13 m չիք ինչ
14 t և գերութենէ
14 dz և շինեաց
14 z եկեղեցի
14 n ի քաղաքն
14 tuՎ որ փխ ուր
15 stՎ իշխէին զքրիստոս անուանել, i յիշէին փխ իշխէին
15 bd քրիստոս
15 b ևս աւելի
15 Մ-Թ և մի երկու ՁՁ Թարվեժ, deij Թօրէժ, fh Թաւրէզ
15 Մ-Թ Նախճավան, ag Նախչաւան, cjmp Նախջաւան, dn Նախչուան, ost Նախջուան, z Նախիջևան
15—16 st քաղաքին, Վ չիք քաղաքի, z մայրաքաղաքին
16 cdijp չիք յայտնի

ւիլ կամ շրջել քրիստոնեայք, թո՛ղ թէ եկեղեցի կամ խաչ կանգնել։ Իսկ նորա կանգնեալ խաչ և եկեղեցի, և ժամահար հնչեցուցանել ի տուէ և ի գիշերի, և յայտնապէս տանել զմեռեալս ի թաղումն խաչիւք վառելովք և աւետարանաւ և պաշտամամբ. որպէս օրէն է քրիստոնէից. և զընդդիմացեալսն մահու վախճանէր։ Եւ ոչ ոք իշխէր հակառակ կալ հրամանի նորա, այլ և ամենայն զօրք թաթարին պատուէին զնա որպէս զարքայն իւրեանց, և առանց նորա ոչինչ խորհէին կամ առնէին։

Եւ մարդիկ նորա վաճառականք, որք ունէին զտամղա նորա, այսինքն՝ զնշան և զգիր, համարձակութեամբ շրջէին ընդ ամենայն աշխարհս, և ոչ ոք իշխէր մերձենալ առ այնոսիկ, որք ասէին զանունն Ռաբանին։ Այլ և ամենայն զօրագլուխք թաթարին ընծայ մատուցանէին նմա յաւարէ իւրեանց։

Եւ ինքն էր այր պարկեշտ վարուք, նոյնպէս ի կերակուրս և յըմպելիս, յաւուրն միանգամ ճաշակէր ընդ երեկս սակաւ ինչ կերակուր։ Այսպէս այց արար աստուած ժողովրդեան իւրում ի նժդեհութեան անդ ի ձեռն առնս այսորիկ։ Եւ զբազումս մկրտեաց նա ի թաթարէ անտի, և ամենայն ոք վասն սքանչելի վարուց նորա և մեծաշուք պատուոյն զարհուրէր և դողայր ի նմանէ։

1 Մ-Թ և մի երկու ՁՁ երեել կամ շրջել
1 do եկեղեցիս, st եկեղեցի շինել, Վ եկեղեցիս շինել
1—2 z իսկ ի ժամանակս սորա եղև կանգնել
2 stՎ եկեղեցիս
2 ip ժամահարս հնչեցուցեալ
3 i զմեռեալ
3 b ի թաղել
3 Մ-Թ խաչիւ փխ խաչիւք վառելովք, n խաչիւք և վառելօք, o խաչիւք և վառեալ լապտերօք, st խաչիւք, Վ խաչիւք աւետարանաւ.
4 bj պաշտամամբք, cdeg պաշտմամբք, hop պաշտմամբ, st և մոմեղինօք և պաշտամամբ, Վ և մոմեղինօք և պաշտմամբ
4 Վ օրէնն
4—5 a զընդդիմացեալսն, no ընդդիմացեալս
5 Մ-Թ հակառակիլ փխ հակառակ կալ, z կալ. հակառակ, հակառակ կեալ
5 Վ հրամանին
6 Մ-Թ և մի երկու ՁՁ չիք պատուէին
7 Մ-Թ և մի երկու ՁՁ իւրեանց ունէին
8 i ուտէին փխ ունէին
8 d զտամղան, gm զտամղայ, i զտամղայ, s զտաղմա, z զխարլխ փխ զտամղա
8 t չիք այսինքն
8—9 z չիք ՙզտամղա... զգիր՚
9 i զնշանն
9 Վ համարձակ շրջէին
9 p ընդ յամենայն աշխարհն, u աշխարհն
10 no որք ոչ փխ ոչ ոք
10 no այնոցիկ, stՎ նոսա z ի նոսա փխ առ այնոսիկ
10 m տա՛յին փխ ասէին
10 i չիք զանունն, Մ-Թ զանուն
10 Մ-Թ Ռապանին
11 n զօրագլուխ
11 h և ընծայ
11 h չիք նմա
11 h կամ յաւարէ
11 o անուանէ փխ յաւարէ
13 st չիք էր
13 ipu չիք այր
13 no վարիւք
13 h նմանապէս փխ նոյնպէս
13—14 a յընպելիս
14 abdefghijm յաւուր, z օրն
15 z իւր
15 Մ-Թ ի նեղութեան փխ ի նժդեհութեան
15 Մ-Թzm անտի
16 bcdj առն, z չիք առն
16 z բազումք մկրտեցան ի թաթարէ
16 oz չիք նա
16 adfghj անդի
17—18 z զարհուրէին և դողային

Եւ յորժամ եղև այս գծագրութիւնս, որ յայսմ վայրի, ի ՈՂ թուականի Հայոց, ի թագաւորութեանն Հայոց, որ ի կողմանս Կիլիկեցւոց, Հեթմոյ բարեպաշտի, և ի զօրավարութեանն եղբօր իւրոյ Սմբատայ քաջի, և իշխանաց իշխանի Կոստանդնի հօր նորա, և ի կաթողիկոսութեանն սուրբ աթոռոյն Գրիգորի՝ Կոստանդեայ ծերունւոյ և առաքինւոյ, որ նստէր ի Կլայն Հռոմայական, և յարքեպիսկոպոսութեան տեառն Բարսղի, եղբօր թագաւորին Հեթմոյ, զոր պահէին փոխանորդ սուրբ աթոռոյն կաթողիկոսութեան, և յԱղուանից կաթողիկոսութեան տեառն Ներսիսի հեզոյ և մարդասիրի, որ յայս աւուրս նստէր ի վանքն, որ կոչի Խամշի, ի գաւառն Միափորի, և յարքեպիսկոպոսութեան եղբօր որդւոյ նորա Յովհաննիսի՝ նոր ձեռնադրեցելոյ, և ի բռնակալութեան հանուրցս Թաթարին, և ի ժամանակի կենաց մերոց ամս քառասուն պակաս կամ աւելի։

## ԼԴ

### Վասն առման Թէոդուպօլեայ

Արդ ի սկսանել ՈՂԱ թուականին հայոց, գայր հասանէր հրովարտակ ի խաղանէն առ զօրս և զօրագլուխս, որ յարևելս, զօրավար և առաջնորդ

1 no չիք եղև
1 bcdefghijstuՎ գծագրութիւն, no զայս գծագրութիւն
1 յայս, hno այսմ
1 bcd թվականին, ghՎ ի վեց հարիւր իննսուն (g նսուն) թուականին փխ ի ող թուականին հայոց, z ի ող թուականին էր հայոց
2 Մ-Թ ի հայոց թագաւորութեանն
2 z չիք 'որ ի կողմանս կիլիկեցւոց'
2 Մ-Թ և մի երկու ՁՁ կիւլիկեցւոց, abj կիւլիկեցոց, cfh կիլիկեցոց, stu կիլիկեցւոցն
3 eg ի զօրավարութեան, Վ ի զօրապետութեան
3 i եղբօրն, no չիք 'եղբօր իւրոյ', t եղբայր
3 afhnՎ սմպատայ
3—4 o չիք 'Սմբատայ քաջի և իշխանաց իշխանի'
3—4 abcej յիշխանաց իշխանի, g իշխանացն իշխանի, m յիշխանաց յիշխանի
3—4 ip չիք 'և իշխանաց... հօր նորա'
4 bcg ի կաթողիկոսութեանն
4 o չիք սուրբ
4—5 z չիք 'սուրբ աթոռոյն Գրիգորի
5 abcdigh ծերունոյ, e ծերոյն, no ծերունոյն
5 abcdgh առաքինոյ
5—6 Մ-ԹՎ հռոմէական (bd հռոմաական), m հռոոմէական
6 d արքեպիսկոպոսութեան
6 bdno տէր փխ տեառն, z չիք տեառն
6 cdijno Բարսեղի
7 o չիք փոխանորդ
8 d աղուանից, ijp աղուանից կաթողիկոսի
8—11 z չիք 'և յԱղուանից... և ի'
9 Մ-Թ յաւուրս փխ յայս աւուրս. no այս աւուրս, u յայսմ աւուրս
9 u ի գաւառին
10 kՎ յարքեպիսկոպոսութեանն, u եպիսկոպոսութեան
10 cdfg որդոյ, e որդւոյն
10 ipu իւրոյ փխ նորա
10 Մ-Թac յովանիսի, b յովհանիսի, d յովանիցի, st տէր յովանիսի, Վ տէր Յովհաննիսի
10 Մ-Թ և մի երկու ՁՁ ձեռնադրելոյ
11 i չիք և
11 z չիք հանուրցս
11 abefghk no չիք ի
11 m և ժամանակ
12 cdijp կամ աւելի և պակաս, z չիք 'պակաս կամ աւելի'
13 b թէոդուպաւլեայ, cdij թէոդուպաւլեայ, aefgnu թէոդուպօլեայ, h թէոդուպօլսեան o թէոդուպօլսեայ որ Կարնոյ քաղաք, mo թէոդուպօլսեայ, stՎ թէոդուպօլեացն
14 u ի տեսանել փխ ի սկսանել
14 Մ-Թ և մի երկու ՁՁ ող. a ո. որդի իննսներորդի առաջներորդի, e զճ-որդի իննսներորդի առաջներորդի, g զճ-երորդի ձ-երորդի առաջներորդի i ո-երորդի ի գ-երորդի առաջներորդի, hjnpuՎ վեցհարիւրերորդի իննսներորդի և առաջներորդի, s't ող-երորդի, mnsmo ողա
14 bcd թվականին, m թուականիս
14 stՎ հրովարտակն
15 stՎ չիք որ
15 bd զաւրավար

*կացուցանել փոխանակ Չարմաղանին, որ ՝համբացեալ էր, զոմն մի ի զօրացն՝ Բաչու-ղուրչի անուն. նմա անկեալ վիճակն առաջնորդութեան, քանզի հմայիւք վարէին։*

*Արդ իբրև առ նա զիշխանութիւնն, իսկոյն զօր գումարեաց յամենայն ազգաց, որ ընդ ձեռամբ նորա, և գնաց յաշխարհն Հայոց, որ ընդ իշխանութեամբ սուլտանին Հոռոմոց։ Եւ հասեալ ի Կարին գաւառ՝ պաշարեաց զԹէոդուպօլիս, որ այժմ կոչի Կարնոյ քաղաք, և նստեալ շուրջ զնովաւ՝ առաքեաց առ նոսա դեսպանս գալ նոցա ի հնազանդութիւն։ Եւ նոքա ոչ կամեցան գալ, այլ անարգանօք դարձուցին զպատգամաւորսն, և ինքեանք ելեալ ի պարիսպն՝ նախատէին զնոսա։*

*Իսկ նոքա իբրև տեսին, եթէ ոչ ողջունեցին զխաղաղութիւն, յամենայն կողմանց բաժանեալ զպարիսպ քաղաքին զխաւորացն, զի փլուսցեն առ հասարակ։ Եւ նոցա փոյթ յանձին կալեալ՝ կանգնեցին փիլիկուանս բազումս և կործանեցին զպարիսպն և մտեալ ի ներքս՝ սրոյ ճարակ զամենեսեան տուեալ անողորմաբար. և յափշտակեալ զինչսն և զստացուածսն՝ հրով այրեցին զքաղաքն։ Եւ զի յոյժ բազմամբոխ էր քաղաքն ի ժամանակին յայնմիկ՝ լցեալ քրիստոնէիւք և տաճկօք, այլ և ամենայն գաւառն անդր հաւաքեալ էր։*

*Անթիւ գոյին անդ կտակարանք աստուածային գրոց՝ մեծամեծաց և փոքունց. զայն առեալ այլազգեացն՝ ծախէին քրիստոնէիցն, որ ի զօրուն*

1 em *չարմաղանին,* s *չարմաղանունոյն* (sic)
2 Վ *Բաչու Թուրչի*
2 t *արկեալ վիճակ,* Վ *վիճակ*
4 a *իբր,* iops *իբրև էառ* (i *է* փխ *էառ*)
5 gn *աշխարհն*
6 Վ *սուլղանին*
6 i *կոտին* փխ *Կարին*
6—7 stՎ *պաշարեաց զնա, որ այժմ կոչի Թէոդուպօլիս* փխ *պաշարեաց զԹէոդուպօլիս, որ այժմ կոչի Կարնոյ քաղաք*
7 ip *կարնոյ քաղաք որ է առզրում*
7 s չիք *'որ այժմ կոչի Կարնոյ քաղաք'*
8 p *և առաքեաց*
8 o *առ նա*
8 Վ *զդեսպանս առ նոսա*
8 stՎ չիք *նոցա*
9 ip չիք *գալ,* Վ *գնալ*
9 ad *անարգանաւք*
9 stՎ *զդեսպանս(ն)* փխ *զպատգամաւորսն*
10 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *ելեալք*
10 no *ի պարսպէն*
11 Վ *թէ*
11 ip *ի խաղաղութիւն* փխ *զխաղաղութիւն*
11 s *զնոսա խաղաղութեամբ*
11—12 g *ամենայն*
13 *Մ-Թ յանձինս,* go *անձին*
13 o չիք *կանգնեցին*
13—14 d *փիլիկուն*
15 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *զամենեսին*
15 mstuՎ *տուեալ զամենեսեան*
15 d *յիշատակեալ* փխ *յափշտակեալ*
15 ip *զինչս*
16 b *և հրով*
16 f չիք *յոյժ*
16 *Մ-Թ բազում ամբոխ*
16 t չիք *էր*
17 *Մ-Թ* և մի շարք ՁՁ *ի ժամանակին յայնմիկ քաղաքն*
17 մի երկու ՁՁ *քրիստոնէիւք տաճկօք*
17 cd *տաճկաւք*
17 d *այլ ամենայն և,* Վ *և այլ*
18 d *գաւառքն*
18 p *անդ էր* փխ *անդր*
18 cd *հաւաքեալ*
19 nostuՎ չիք *անդ*
20 k *փոքուց*
20 j *զքրիստոնէիցն,* Վ *քրիստոնէից*
20 cd *ի զաւրուն*

էին, զյաճախագինն ընդ դոյզն գնոց։ Եւ նոցա խնդութեամբ առեալ, սիռէ֊ին յիւրաքանչիւր գաւառ, բաշխելով յեկեղեցիս և ի վանորայս։ Այլ և ի գերելոց անտի զբազումս գնեցին՝ զարս և զկանայս և զմանկտի. զեպիս֊կոպոսս և զքահանայս և զսարկաւագունս՝ որքան հնար էր, գնեցին իշ֊խանքն քրիստոնեայք Աւագն և Շահնշահն, և Աղբուղայն, որդին Վահրա֊մայ, և Գրիգոր խաչենեցի՝ Դօփին որդի, որ էր այր երկիւղած, ի տեառնէ և զօրք նոցին, որոց վարձահատոյց Քրիստոս եղիցի. և զամենեսեան ազատ արձակեցին, թողլով ի կամս անձանց՝ ուր և կայցեն։

Եւ ո՛չ միայն թէ զքաղաքն Կարնոյ աւերեցին, այլ և զբազում գա֊ւառս յիշխանութենէ սուլտանին հոռոմոց։ Եւ սուլտանն ոչինչ կարաց օգ֊նել, քանզի ղօղեալ թաքուցեալ էր յերկիւղէ նոցա. այլ և վախճանեալ ևս ասէին զնա։ Իսկ զօրն թաթար, իբրև գործեաց նա զայս իր, դարձաւ բա֊զում աւարաւ և խնդութեամբ յաշխարհն Աղուանից, ի կայս ձմերոցի իւրոյ, յարգաւանդ և ի բերրի դաշտն, որ կոչի Մուղան, և անդ ձմերեաց։

1 Մ-Թ զյաճախագիրն, m զյաճախա֊գինսն, no յաճախագինն
1 i գնող
1 Մ-Թ տանէին, fh բերէին, m տա֊յին փխ սիռէին
2 ijp յիւրաքանչիւր գաւառի, mno իւրաքանչիւր գաւառ, stՎ գա֊ւառս
2 g եկեղեցիս
2 i ի վանորայսն, o և վանորայս
3 afh անդի
3 egijp զմանկտիս
3—4 Վ զեպիսկոպոսունս
4—5 m իշխանքն գնեցին, n ɔ գնացին փխ գնեցին
5 m քրիստոնեայք
5 Մ-Թk Աղուպղան—Աղպուղան, bcd egjnptuՎ աղպուղայն, h աղբու֊լան
6 gi խաչենցի
6 abgn դաւփին, e դաւթին, cdj գաւ֊փին, i գօփին, h դոփին, suՎ դու֊փին
6—7 t չիք 'Դօփին որդի…զօրք նոցին'
6 jՎ որդին
6 h չիք որ
6 Մ-Թ չիք ի տեառնէ, no ի տեառն
7 e զօրքն, dn զաւրք
7 h վարձահատոյցք, Վ վարձահա֊տոյց նոցա
7 a քրիստոսի, im լիցի քրիստոս, o եղիցի քրիստոս
8 i ազատս արարեալ արձակեցին
8 i զկամս փխ ի կամս
8 gn դայցեն փխ կայցեն
9 b ոչ թէ միայն
9 Մ-ԹՎ և մի քանի ՁՁ կարնայ, ip կարին, j կարնին. no զկարնոյ քաղաքն
9 Մ-Թ և մի երկու ՁՁ բազում
9—10 afh գաւառ
10 g իշխանութենէ, ijp յիշխանութե֊նէն
10 stՎ չիք հոռոմոց
10 m սուլտանին հոռոմոց աւերեցին
10 d սուլտան
10—11 adj աւգնել
11 ad ղաւղեալ
11 Մ-ԹՎ և մի քանի ՁՁ թագուցեալ
11 no երկիւղէ, u յերկեղէ
11 b վաղխճանեալ, c վաղջանեալ, d վաղճանեալ
12 no ասէին նմա
12 Մ-Թ և մի երկու ՁՁ զօրքն թաթա֊րին
12 abegjnou իբրու
12 ms չիք նա
12 o զայն
12—13 s չիք բազում
13 Մ-Թ և մի քանի ՁՁ աւարով, d աւարավ
13 g աշխարհն
13 st ձմեռոց, u ԱԲԳ ձմերոց
13 Վ իւրոց
14 no արգաւանդ
14 a բերդք փխ բերրի
14 Մ-Թk և մի երկու ՁՁ մաղան
14 t ձմեռեաց

# ԼԵ

## Վասն պատերազմին, որ եղեւ ընդ սուլտանն եւ ընդ թաթարն

*Մինչդեռ զետեղեալ յապահովս նստեալ կայր զօրն Թաթար ընդ դաշտըս ամենայն Հայոց և Աղուանից, գայր դեսպանս ի Ղիաթադին սուլտանէն՝ խրոխտ և սպառնական բանիւք՝ որպէս սովորութիւն է տաճկաց, եթէ՝ «Այսպէս համարեցայք դուք աւերմամբ քաղաքի միոյ, եթէ յաղթեցաք նմա և զօրութեան նորա. քաղաքք իմ անթիւք են ի բազմութենէ, և զօրաց իմոց չիք համար։ Արդ կա՛ց մնա՛ դու, ուր ես, և ես ինքնին եկեալ՝ տեսից զձեզ մարտիւք պատերազմաց»։ Եւ այլ բազում բանիւք, որ նման է սոցին, մեծամեծս փքայր։ Եւ զայս ևս ասէր պատգամաւորն, եթէ՝ «Հանդերձեալ է սուլտանն զձմեռն, որ գալոց է զկնի ամարանս, ի դաշտի աստ Մուղան ձմերել կանամբք և զօրօք»։*

*Իսկ նոցա լուեալ՝ ոչ ինչ ըմբոստացան, կամ խրոխտս ինչ խօսեցան ընդդէմ նոցա, այլ միայն զայս պատասխանի ետ գլխաւորն նոցա Բաչու-նուինն, եթէ «Մեծամեծս բարբառեցայք, սակայն ում աստուած տացէ, նորա լիցի յաղթութիւն»։*

*Եւ այսպէս մի զմիոյ կնի գային դեսպանքն փութացուցանել զնոսա ի*

1 t *սուլթանն* Վ *սուլղանն*
1 e *ընդ սուլտանին և ընդ թաթարին*, z *ընդ սուլթանին հայոց* (sic) *և ընդ թաթարին*, no *ընդ սուլտանին*
2 ad *զաւրն*, i *զօրս*, jpz *զօրն թաթարին*
2—3 i *ընդ դաշտն*, d *ընդ դաշտսն*
3 z *հայոց և ամենայն աղուանից*
3 h *դեսպանն*, nՎ *դեսպան*
3 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *ղիաղատին*, (Վ *Ղիաթատին*), *ԱԲԳ զիաթատին*, z *սալադին* փխ *Ղիաթադին*
3—4 z *սուլթանէն*
5 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *համարեցիք*, dfhnostՎ *համարեցաք*, z *հրամայեցաք*
5 fh չիք *դուք*
5 j *աւերմամբք*, no չիք *աւերմամբ*
5 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *իմոյ*, փխ *միոյ*
5 no *դուք ընդ քաղաքի միոյ*, d *քաղաքին*
5 s *թէ*
5 m *յաղթեցիք*, u *յաղթեցայք*
6 m չիք *նմա և*
6 no *զօրութիւն*
6 m *իմոյ* փխ *նորա*
6 d *քաղաք*, z *անհա քաղաքք*
6 dfh *անթիւ*
6 n չիք *ի*
6—7 z *անթիւ են ի զօրաց և զօրաց իմոց*

7 hstՎ *մնաց*
8 gno *զքեզ*
8 stՎ *մարտիւ*
8 m *բանք*
8 m *որք նման էր*, tu չիք *է*
9 stՎ չիք *ևս*
9 b *պատգամաւորքին*
9 Վ *թէ*
10 k *զձմերն*
10 fhm *գալոցն է*
10 i *ամարանոյ*, z *ամարայնի*
10 fh *ի դաշտն*
10 *Մ-Թ* և մի երկու ՁՁ չիք *Մուղան*
11 a *ձմերնել*, ns *ձմեռել*, *Մ-Թ ձմերիլ*
12 stuՎ *նորա* փխ *նոցա*
12 cijp չիք *ինչ*, dz չիք *ոչ ինչ*
12 d *ըմպոստացան*, stuՎ *ըմբոստանայր*
12 m *խրոխտ*
12 dj *խաւսեցան* stՎ *խօսեցաւ*
13 i *գլխաւոր*, t *գլխաւորացն բաչունինն* փխ *գլխաւորն նոցա Բաչունուինն*
14 ino *բարբառեցաք*
14 *Մ-Թ սակայն եթէ*
14 z չիք *աստուած*
15 stՎ *զյաղթութիւն նմա լիցի*
16 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *մի զկնի միոյ*
16 stu *ԱԲԳ գայր* (Վ *գային*) *դեսպանք*
16 no *զնա* փխ *զնոսա*

մարտ։ Իսկ նոցա ոչինչ շտապեալ, այլ մեղմով գումարեալ զզօրս իւրեանց և որք ընդ ձեռամբ նոցա, եկեալ յաշխարհս Հայոց, ի խոտաւէտ վայրս ամենայն աղխիւ, գիրացուցեալ զերիվարս և ապա մեղմով մօտ հասեալ, ուր էր բանակ սուլտանին։ Քանզի և նա ի վեր էր եկեալ ի տեղւոջէ իւրմէ յաշխարհն Հայոց, որ ընդ իւրով իշխանութեամբ, հուպ ի քաղաքագիւղ մի, զոր Չման-կատուկն անուանեն, անթիւ բազմութեամբ, կանամբք և հարճիւք, ոսկւով և արծաթով, և որ ինչ սպասք էին նորա մեծութեանն, զամենեսեան ընդ իւր բարձեալ՝ բերեալ էր. այլ և զբօսանաց աղագաւ՝ սնուցեալ երէս վայրի և յայլոց սողնոց բազումս, մինչև ի մկունս և ի կատուս, զի այնպէս աներկիւղ կամէր զինքն ցուցանել զօրացն։

Իսկ զօրավարն Բաչու՝ ըստ խորագէտ իմաստութեանն իւրեանց, բաժանեալ զզօրս իւր ի բազում առաջս ի ձեռն գլխաւորացն քաջաց և զեկամուտ զօրսն, որ յազգաց ազգաց ի նոսա եկեալսն՝ ցրուեալ, զի մի՛ նենգ ինչ գործեսցեն, և ընտրեալ յամենեցունց զարիսն և զքաջս, յառաջապահս կարգեալ ինքեանց, որք երթեալք հանդիպեցան զօրաց սուլտանին և մարտուցեալք՝ ի փախուստ դարձուցին զնոսա։ Փախեաւ և սուլտանն

1 o *ի մարտս*
1 sՎ *զզօրսն իւրեանց և զօրս*
2 j *ընդ ձեռամբն,* z *ընդ նոցա ձեռամբ*
2 g *աշխարհս,* m *յաշխարհն*
2 no *և* փխ *ի*
2 c *վայր*
3 *Ա-Թ*Վ և մի քանի ՁՁ *ախիւ,* t *ախտիւ*
3 m *զերացուցեալ*
4 z *սուլթանին*
4 bcdefh *ի տեղոջէ*
5 g *աշխարհն*
5 *Ա-Թ քաղաքագեղ,* g *քաղա՛քագեւղ,* n *քա՛ղաքագեօղ*
6 *Ա-Թ* և մի երկու ՁՁ *զոր ասի*
6 *Ա-Թ* և մի երկու ՁՁ *չմանն կատուկ,* abegno *չմանն կատուկն,* cdj *չիմանն կատուկն,* ip *չիման գատուկն,* z *չիման գետուկ,* m *չման կետուկ*
6 g *անուանեալն*
6 n *անթիւք*
6 hno *կանամբ*
6—7 m *հարճօք*
7 bcdfgh *ոսկով*
7 Վ *մեծութեան*
7—8 bcd *զամենայնն,* pՎ *զամենայն,* no *ամենայն*
8 *Ա-Թ բերէր*
8 nop *և այլ*
9 *Ա-Թ* և մի քանի ՁՁ *էրէս,* z *էրէ,* Վ *երէ*
9 dfghip *այլոց*
9 no *մինչև մկունս և զկատուս,* s *մինչև զմկունս և զկատուս*
10 b *կամեցաւ*
10 no *զինքն կամէր աներկիւղ ցուցանել զինքն* (o չիք *զինքն*) *ի զօրացն,* Վ *կամէր ցուցանել զինքն*
11 ip *հզօր զօրավարն*
11 no չիք *ըստ*
11 efghtՎ *իմաստութեան,* no *իմաստութեամբն*
11 no *իւրով,* tՎ *իւրոյ*
12 *Ա-Թ* և մի երկու ՁՁ *բազում յառաջս* փխ *ի բազում առաջս,* gm *ի բազում յառաջս*
12 *Ա-Թ ի ձեռս գլխաւորաց,* fhՎ *ի ձեռն գլխաւորաց*
12 h *քաջացն,* t *քաջաց և զեկեալս*
13 ip *զնոսա* փխ *ի նոսա*
13 *Ա-Թ* և մի չորք ՁՁ չիք *եկեալս*
13 bstՎ *ցրուեաց*
14 ad *ընդրեալ*
14 gno *ամենեցունց,* z *զամենեցունց*
14 fh *արիսն,* no *զարս*
14 *Ա-Թ* և մի երկու ՁՁ *զքաջսն*
14—15 bcdgno *առաջապահս*
15 fht *յինքեանց*
15 b *երթեալ*
15 Վ *զօրացն*
15 a *սուլտան,* n *զսուլտանին,* z *սուլթանին*
16 z *սուլթանն*

մազապուր՝ թողեալ զկահ և զկարասի անդէն ի տեղւոջն։ Եւ սոցա զհետ մտեալ՝ կոտորեցին անխնայ զզօրսն, որոց ճարակ տուեալ, և ապա դարձան ի կապուտ անկելոցն։

Իբրև եկն բուն բանակն, տեսին զի փախուցեալ էր սուլտանն, և հաբեալ զօրք նորա։ Ապա սկսան ասպատակ սփռել ընդ կողմանս կողմանս յաւարի առնուլ, և քանդել զբազում գաւառս, և ժողովել ոսկի և արծաթ, և հանդերձս մեծագինս, և ուղտս, և ձիս, և ջորիս, և անթիւ անասունս։ Եկին պատեցին զքաղաքն Կեսարիա Կապադովկացւոց, և պատեալ պաշարեցին զնա, և զի ոչ եղեն ձեռնտու բնակիչքն՝ առեալ բռնութեամբ, ի սուր սուսերի մաշեցին զբնակիչսն, և յափշտակեալ որ ինչ ի նմա, և թողեալ ամայի զքաղաքն՝ եկին ի Սեբաստիա. և զի յառաջագոյն ձեռնտու էին լեալ բնակիչք քաղաքին առ նոսա և ընդ առաջ երթեալ ընծայիւք և պատարագօք, մարդոյ ոչ մեղան, այլ յափշտակեալ յաւարէ քաղաքին մասն ինչ, յիւրեանց անուն գրուեալ զքաղաքն, վերակացուս կացուցեալ՝ դարձան։

Եւ եկին պաշարեցին զԾզնկայն և բազում մարտիւք մարտեան ընդ նմա. և բնակիչք քաղաքին բազում հարուածս հասուցեալ ի վերայ զօրացն թաթարին։ Ապա սկսան խաբէութեամբ արտաքս կոչել՝ սիրոյ աղագաւ, և

1 Մ-Թ և մի երկու ՁՁ մազապուրծ
1 n զզահ, o զկահս
1 o զկարասիս
1 cdefh ի տեղոջն, st ի տեղւոջ
1 n ընդ հետ
2 bdeijp յանխնայ, stՎ զզօրսն անխնայ
4 Վ իսկ իբրև, m իբրև եկին
4 Մ—Թ ի բուն բանակն
4 stՎ չիք բուն
4 stՎ եսես
4 z սուլթանն
5 b ասպատակս
5 ijp և սփռեալ
5 Մ-Թ ընդ կողմանս փխ ընդ կողմանս կողմանս
6 Մ-Թ և մի քանի ՁՁ ի քանդել, ipst և քանդեալ, z առ ի քանդել
6 abcdij ժողովեալ
6—7 stzՎ զոսկի և զարծաթ և զհանդերձս մեծագինս
7 stz զուղտս, զձիս և զջորիս և զանթիւ անասունս
7 Վ եւ եկին
8 afh կապադովկեցոց, bdՎ կապադովկացւոց, c կապպադովկեցոց, enpt կապադովկեցւոց, go կապադովկացոց, ij կապադովկեցւոց
8 stՎ չիք պատեալ
9 Մ-Թ և մի քանի ՁՁ չիք և
9 Մ-Թ և մի քանի ՁՁ ձեռնատու
9 cdijpz չիք բռնութեամբ, m այլ բռնութեամբ փխ առեալ բռնութեամբ
10 d մաշեաց մաշեցին (sic), o մատնեցին
10 stՎ զբնակեալսն
10 Մ-Թ չիք ինչ
11 bc սեբաստիայ, d սեբաստ
11 Մ-Թ և մի քանի ՁՁ չիք և
11 g ձեռնատու
11 Մ-Թ և մի քանի ՁՁ լեալք
11—12 st ԱԲԳ չիք ՙյառաջագոյն... առ նոսա, և ընդ՚ (Վ մուծել է Մ տպ.-ից)
12 acdfhij ընդ յառաջ
12 ad պատարագաւք
13 c յօտարէ, d յաւտարէ փխ յաւարէ z օտարէ
13 Մ-Թ քաղաքն
13 Մ-Թ չիք մասն
13 Վ մասն ինչ յաւարէ քաղաքին
13—14 g իւրեանց, o իւր, Վ յիւրեանց անունն
14 fgh գրուել, Վ գրուեալ
14 Մ-Թ վերակացուս դարձուցեալ զքաղաքն դարձան փխ վերակացուս կացուցեալ դարձան. no վերակացուս կարգեալ դարձան
15 cdijp և եկեալ
15 st զերզնկայն
15 stՎ մարտիւք բազում
16 cdijp հարուածս էր (cd է) հասուցեալ (j հատուցեալ), no հասուցին
16 bcՎ զօրաց, ad զաւրաց
17 b սկսան արտաքս կոչել խաբէութեամբ, c սկսեալ
17 z իբր սիրոյ

նոցա հաւանեալ եկին, քանզի ոչ ունէին ուստեք օգնական։ Որոց սուր ի վերայ եդեալ, կոտորեցին առ հասարակ զարս և զկանայս, և սակաւ մանկունս և աղջկունս ապրեցուցեալ՝ վարեցին ի գերութիւն և ի ստրկութիւն։

Եւ այսպէս բազում գաւառս և աշխարհս աւերեալ և գերեալ, եկին ի քաղաքն, որ կոչի Տիւրիկէ։ Իբրև գիտացին բնակիչքն, եթէ անհնար է զդէմ ունել նոցա պատերազմաւ, կամաւ ձեռնտու եղեն նոցա. յորոց առեալ ինչս բազումս, թողին զքաղաքն առանց վնասու և դարձան բազում աւարաւ և մեծաւ խնդութեամբ ի կայս ձմերոց իւրեանց, որ ի Հայս և որ յԱղուանս, ողջանդամ և առանց վնասու, զի ի տեառնէ էր խորտակումն ամենայն ազգաց և կործանումն նոցա։ Բայց քրիստոնեայքն, որք էին ընդ նոսա զինուորեալք, զբազումս ազատեցին ի գերելոցն, ո՛ր յայտնի և ո՛ր ի ծածուկ, զքահանայս և զկրօնաւորս. մանաւանդ մեծամեծ իշխանքն՝ Աւագն և Շահնշահն, Վահրամ և որդի իւր Աղբուղայն, և խաչենեցիքն՝ Ջալալն Հասան, և զօրք իւր, և ազգականքն, և Գրիգոր, Դօփին, որդի, մօրաքուեր որդի Ջալալին, և այլ իշխանքն և զօրք նոցին ըստ կարի իւրեանց։ Եւ այս եղև ի ՈՂԲ թուականիս հայոց։

## ԼՁ

## Վասն թագաւորին հայոց Հեթմոյ եւ զոր ինչ գործեցաւ

Իբրև այս գործեցաւ, Հեթում արքայ, որ աշխարհին Կիլիկեցւոց և այնոցիկ նահանգաց իշխէր, յորժամ ետես, եթէ պարտեցաւ սուլտանն

1 m յուստեքէ, o ուստեքէ
1 ad աւգնական, o օգնութիւն
1 abcfghjmՎ յորոց
2 z զայրս
3 stz զաղջկունս
3—4 Մ-Թ և մի երկու ՁՁ չիք և ի ըստրկութիւն, Վ ի գերութիւն և ստըրկութիւն
5 eginpsz զբազում
5 Մ-Թ և մի քանի ՁՁ զաշխարհս
6 o զիւրիկէ
7 m չիք պատերազմաւ
7 bcdijp և կամաւ
7 bcdegijnopz առ նոսա փխ նոցա, stՎ նմա
7 dՎ որոց
8 e զինչս
8 fh բազում
9 z չիք մեծաւ
9 s ձմեռոց, t ձմեռոցի
10 no զի տեառն էր
10 z կործանումն փխ խորտակումն
11 Վ ազգացս
11 noz չիք և կործանումն նոցա
11 ijptՎ որ փխ որք
12 o որն...և որն, s զորս... և զորս
13 e կրօնաւորս
14 Վ Աւագ և Շահնշահ
14 e և Վահրամն, p Վահրամն
14 cdmp որդին
14 Մ-Թ և մի երկու ՁՁ ադպուղէն, bcdeijnpt ադպուղայն, m ադպուղա, o ադպուղան
15 b ջալալն և հասան, Վ ջալալն և հասանն, inpst ջալալ հասանն
15 m' զօրքն
15 abcdghimpՎ ազգականք
15 Վ Դուփին, Թ Դոփին
15—16 a մաւրքուեր, d մաւրքըւեր, b մօրքվեր, c մօրքըւեր, eghijmnop stՎ մօրքուեր
16 stՎ չիք որդի
16 stՎ իշխանք, i այլ իշխանք
17 inop չիք ի
17 h ի վեց հարիւր իննսուն և երկու
17 b թվականին, d թվոկանիս, ip թուականին, st ի թվականին հայոց ողբ, Վ ի թուին հայոց վեց հարիւր իննսուն և երկու
18 z չիք 'վասն թագաւորին...գործեցաւ'
18 i որ ինչ
18 st ԱԲԳ գործեցաւ (Վ գործեաց) անդ
19 stՎ այս ամենայն
19 Վ արքայն
19 dm յաշխարհին, stՎ չիք աշխարհին
19 Մ-Թ և մի երկու ՁՁ կիւլիկեցւոց, bdgj կիւլիկեցող, cfh կիլիկեցոց
20 d նահանկացն, egՎ նահանգացն
20 nostՎ թէ
20 z սուլթանն, Վ սուլդանն

*առաջի նոցա, առաքեաց առ նոսա դեսպանս և պատարագս արժանաւորս՝ դնել նոցա ընդ նմա ուխտ խաղաղութեան, և նմա կալ նոցա ի հնազանդութեան։ Որք եկեալ ի մեծ դուռն, յանդիման եղեն Բաչու-Նուինին և Ելթինայ խաթունին, կնոջ Չարմաղունին և այլ մեծամեծ աւագանւոյն՝ միջնորդութեամբ իշխանին Ջալալին։ Եւ իբրև լուան զպատգամս արքային, տեսին և զընծայսն, խնդրեցին ի նմանէ տալ ի ձեռս նոցա զմայր սուլտանին, զկին և զդուստր, որք գաղթականութեան աղագաւ անդ փախուցեալ էին։*

*Եւ իբրև լուաւ արքայ Հեթում, յոյժ տրտմեցաւ և ասէ. «Լա՛ւ էր ինձ, եթէ զորդի իմ՝ զԼևոն, խնդրեալ էին յինէն, քան թէ զնոսա»։ Այլ քանզի երկնչէր ի նոցանէ, զի մի՛ մեծ չարեաց պատճառ լիցի այն, յակամայ կամաց ետ ի ձեռս նոցա, այլ և ընծայս բազումս այնոցիկ, որ եկեալ էին տանել զնոսա, որք բերեալ ցուցին Բաչուին և այլոց գլխաւորացն։ Որք իբրև տեսին՝ ուրախ եղեն և մեծարանօք յարգեցին զդեսպանսն արքայի, և կարգեցին նոցա ռոճիկս և երիվարաց նոցա՝ զժամանակս ձմերանն, զի ի լինել գարնանոյն ընդ նոսին երթիցեն յաշխարհն իւրեանց։ Հաստատեցին և սէր ընդ արքայի, ետուն և գիր ըստ դենին իւրեանց, զոր էլ-տամղայն կոչէին։*

1 ip *նորա* փխ *նոցա*
1 Վ *դեսպանս առ նոսա*
1 h *պատրիարգս* փխ *պատարագս*
2 z *դնել նմա*
2 z չիք *ընդ նմա*, stՎ *ուխտ ընդ նմա*, ijp *ուխտս*
2—3 afhkmnostՎ *ի հնազանդութիւն*
3 stՎ *որ*
3 dz չիք *ի*
3 st *դիւան* փխ *դուռն*
3 j *և յանդիման*
3 d *բաչու նուին*, no *Բաչու-Նուինն*, s *բաչուին* փխ *Բաչու-Նուինին*, t *բաչունին*
4 p *ևս ելթինա*, Վ *Ելթինայ*
4 Մ-Թk և մի երկու ՁՁ *չարմարուին*, abcdfghm *չարմաղուին*, eijp *չարմաղանին* ԱԲԳ *չարմուղին*, z *չարմաղու խանին*
4 tՎ չիք *և այլ*
4 abcdefghijknopՎ *աւագանոյն*
5 s *ջալալ իշխանին*
5 eՎ չիք *և*
6 e *և տեսին*
6 ip *զընծայն*
6 no *ի նմա* փխ *ի նմանէ*
6—7 Մ-Թ և մի երկու ՁՁ *սուլթանին*
7 Վ *և զկին*
7 ctՎ *գաղտականութեան*, mno *գաղթականութեամբ*
7 ms *փախուցեալք*
9 o չիք *լուաւ*
9 Վ *արքային*
10 t *զորդին*
10 no *լևոն*
10 stՎ *խնդրէին*
10 i չիք *թէ*
10 i չիք *քան թէ*, z *զի* փխ *քան թէ*
11 i չիք *մի՛*
11—12 no չիք *կամաց*, stՎ *ակամայ կամաւ*
12 h *զընծայս*
12 m չիք *այնոցիկ*
12 mz *որք* փխ *որ*
13 Մ-Թ և մի երկու ՁՁ *եկեալ* փխ *բերեալ*
13 ip չիք *բաչուին*, mt *բաչունին*
13 d *գլխաւորաց*
14 ad *մեծարանաւք*
14 noՎ *զդեսպանս*
14 moՎ *արքային*, z *յարքային հեթմոյ*
15 stՎ *ձմեռանն*
15 a չիք *ի*
16 Մ-Թ և մի երկու ՁՁ *գարնան*, achՎ *գարնայնոյն*, e *գարնանայնոյն*, ijp *գարնան ժամանակն*, m *ի լինիլ գարնանոյ*
16 e *յաշխարհ*, g *աշխարհս*
17 noՎ *ընդ արքային*
17 Մ-Թ a *ընդ դենին*
17 z չիք *'ըստ դենին իւրեանց զոր'*
17 Մ-Թ *ելտամղայն*, fh *էլտամղան*

Եւ այսպէս սպառէին՝ մնալով եղանակին գարնան, յորում միւսանգամ երթիցեն ի վերայ սուլտանին և աշխարհի նորա։

## ԼԷ

### Վասն Կոստանդեայ իշխանին Լամբրօնի, եւ զօր ինչ գործեաց նա ընդ աշխարհն Կիլիկեցւոց

Արքայն Լևոն մինչ կենդանի էր, էր բերդ մի ի նորա աշխարհին յոյժ անառիկ, որում անուն էր Լամբրոն։ Եւ իշխանն, որ տիրէր բերդին, ապըստամբեաց ի նմանէ, որում անուն էր Հեթում։ Եւ նա բազում անգամ ջանացեալ ոչ կարէր նուաճել զապստամբն։ Ապա յետոյ խորամանկութեամբ խաբեալ զնա խնամութեան աղագաւ, որպէս թէ տացէ զդուստր եղբօր իւրոյ՝ որդւոյ նորա Օշնի ի կնութիւն, ըմբռնեալ զնա և զորդիս նորա չարչարեալ, ետուն ի նա զամրոցն։ Եւ նորա առեալ՝ ետ ի նմա զմայր իւր զտիկնաց տիկինն և գրեաց նզովս՝ «Ո՛չ ևս տալ զնա այլ ումեք իշխանին, բայց միայն արքունի լիցի, զի հանապազ, ասէ, տեարքն նորա ապստամբ են լեալ վասն ամրութեանն»։

Իբրև վախճանեցաւ Լևոն, և թագաւորութեան նորա իշխէր դուստրն Զապէլ, Կոստանդին իշխանաց իշխանն ընդ իւր միաբանեալ զկաթողի-

1 abcdijmnp յեղանակին գարնայնոյ, efh յեղանակին գարնանայնոյ, go գարնանոյ
1 z չիք եղանակին
1 Մ-Թ որ փխ յորում, k զոր
1—2 z չիք միւսանգամ
2 z սուլթանին
2 am յաշխարհի, no զաշխարհ, z չիք 'և աշխարհի նորա'
3—4 z չիք 'վասն Կոստանդեայ... Կիլիկեցւոյ'
3 Մ-Թ abno իշխանի
3 Մ-Թ լամբրոնին, dg ի լամբրաւնին, ijp ի լամբրոնին, o լամբռոնին, stՎ լամբրոնոյ
4 d գործեացն փխ գործեաց նա
4 b ընդ աշխարհ km ընդ յաշխարհն, npstՎ ընդ աշխարհս, o նա աշխարհին
4 aegmnp կիւլիկեցւոց, bdj կիւլիկեցոց, c կիլիկեցոց
5 abcdghi արքայ
5 bcdigkm կենդանին էր, a կենդանից
5 Մ-Թ km և մի երկու ՁՁ բերդ փխ էր բերդ
5 d ի նոսա, փխ ի նորա
5 d յաշխարհին, no չիք 'ի նորա յաշխարհին'
6 dt անառակ փխ անառիկ
6 dkp յորում
6 d լամբրաւն, a լամբաւն
6 bcdgnp տէր էր փխ տիրէր
6 Մ-Թ և մի քանի ՁՁ բերդոյն
8 i խորամանգութեամբ
9 cd ի խնամութեան, ip իբր խնամութեան
10 bcdhj որդոյ f յորդոյ
10 adjno աւշնի
10 bcdegijmnopst ի կնութեան, Վ կնութեան (չիք ի)
10 a ընբռեալ, d ըմպռնեալ
11 fh չիք ի նա
11—12 Մ-Թ ետ զնա ցմայր իւր տիկնաց տիկինն, anop ետ, z չիք իւր, bcj noՎ տիկնանց cdjՎ տիկին
12 Մ-ԹՎ և մի երկու ՁՁ ոչ ես այլ տալ զնա ումեք իշխանի (Վ իշխանի ումեք). m չիք զնա, no չիք այլ, st իշխանի ումեք
13 bd տայրքն, j տեայրքն, Վ տեարք
13 stՎ ապստամբք
14 h լծեալ փխ լեալ
14 eg ամրութեան
15 Մ-Թ athu թագաւորութեանն
15 Մ-Թ ae դուստրն նորա, bcdfghijm դուստր նորա, tՎ չիք նորա
16 no զաբէլ
16 bcdeiij իշխան
16 e կաթողիկոսն

կոսն Յովհաննէս և զայլ իշխանսն՝ Թագաւորեցոյց զորդին իւր. զՀեթում, մանուկ տիօք, ածեալ զնա այր դստերն Լևոնի փոխանակ որդւոյ բռնձին, զոր ըմբռնեալ եղին ի բանտի։ Կամեցաւ Թիկունս օգնականութեան իւր առնել զորդին Հեթմոյ՝ զԿոստանդին համանուն իւր, զորդին Հեթմոյ, զանէրն իւր. և տայ ի նա զԼամբրոնն՝ զսեփականն իւրեանց, և եդ զնա Թագադիր որդւոյ իւրոյ։ Իսկ նա յետ աւուրց ինչ՝ ըստ հայրենի սովորութեանն իւրեանց՝ ապստամբեաց ի քուերորդւոյ իւրոյ՝ յարքայէն Հեթմոյ։ Եւ թէպէտ շատ ջանաց Կոստանդին, հայրն արքայի, և ինքն իսկ արքայ, ոչ կարաց ածել զնա ի հաւանութիւն հնազանդութեան, զի ձեռն ետ նա ի սուլտանն Հոռոմոց և այսպէս կայր ապստամբ։

Իբրև փախեաւ սուլտանն Հոռոմոց ի Թաթարէն, արքայն զամենայն գիւղս և զանդաստանս Լամբրոնին առար ի ներքոյ հրամանաց իւրոց, և միայն մնաց նմա բերդն, որ ապստամբեալ էր։ Ապա յղեաց Կոստանդին դեսպանս առ արքայն՝ խնդրել զհաշտութիւն և տալ զորդիս իւր արքայի ի ծառայութիւն, և ինքն մնալ ի բերդին։ Եւ արքայ ոչ կամեցաւ։ Երկիցս և երիցս յղեաց, և արքայ, և հայր իւր նոյնպէս ոչ կամեցան։

Ապա գնացեալ Կոստանդնի ի Կոնն, առեալ զօրս սուլտանին Հոռոմոց, որք յայնժամ թշնամիք էին արքայի, զի ետ զմայր սուլտանին Հոռո-

1 Մ-Թ gm յոհաննէս, efhno յոհաննէս, ip յովաննէս, stՎ չիք Յովհաննէս
1 fh իշխանս
1 g Թագաւորացոյց
1 bcdegij զորդի
1 no հեթում
2 ad տիաւք, bgtՎ տիովք
2 dj այս փխ այր, i այրս
2 no դստեր
2 cfh որդոյ
2 Վ բրինձին
3 a ընբռնեալ
3 bcdfghijkpsz ի բանդի (k ի բանի)
3 Մ-Թ Թիկունս օգնութեան, ad աւգնականութեան, nop ի Թիկունս օգնականութեան
4 t հեթումոյ
4 m համանուն
4 bcdijp չիք 'զԿոստանդին համանուն... Հեթմոյ'
4—5 Վ զաներն
5 no զնա փխ ի նա
5 Մ-Թ զլամբրոն
5 Մ-Թ զսեպհական. ad զսեփհական, ceijkp զսեփհականն, fh զսեփական
6 bcdfg որդոյ
6 Մ-Թ jno չիք ինչ
6 Վ սովորութեան
7 ip ապստամբեցաւ
7 cdigh որդոյ
7 z ի քեռորդւոյ, Մ-Թ և մի քանի ՁՁ ի քուեր որդւոյ
7 abcdeighmz Վ յարքայէ, no արքայէ
8 bcdegijstՎ հայր
8 ijstՎ արքային
9 m կարացին
9 noz ի հնազանդութիւն փխ ի հաւանութիւն հնազանդութեան
9 ijp զնա փխ նա
10 z սուլթանն
10 stՎ կայր նա
11 k սուլտան, z սուլթանն
11 abcdfghmnop արքայ
12 afhimp զեօղս, b զեաւղս, cdgjk զեւղս
12 Մ-Թ ijpno լամբրոնի
13 Մ-Թ afhz մնաց նա ի բերդն
13 Մ-Թ afhz յոր փխ որ
14 Մ-Թ և մի երկու ՁՁ առ արքայ
14 no զորդին
14 Մ-Թ i չիք արքայի
15 d ի բերդն
15 Վ արքայն
16 stՎ իսկ արքայն և հայրն ոչ կամեցան
16 Մ-Թ և մի երկու ՁՁ նմանապէս, փխ նոյնպէս
16 mstՎ չիք իւր նոյնպէս
17 Մ-Թ և մի երկու ՁՁ Կոստանդին
17 bcd ի կաւնն, fh ի կոնն
17 Վ և առեալ
17 bcgijm զզօրս, d զզաւրս
17 z սուլթանին
17—18 b չիք հոռոմոց
18 t յորժամ փխ յայնժամ
18 bstՎ արքային
18 cdip զի ետ արքայ
18 bcdegijnopstՎ չիք հոռոմոց

*մոց ի Թաթարն, գայ յեղակարծ ժամու, մինչդեռ ցրուեալ էին զօրքն արքունի յիւրաքանչիւր տեղիս, և մտեալ յաշխարհն՝ աւերեաց զբազում աւանս և գաւառակս այրմամբ և սպանմամբ և գերութեամբ, զբազում քրիստոնեայս կոտորեալ և կողոպտեալ և այսպէս բազում չարիս անցուցեալ ընդ աշխարհն քինահանութեամբ։*

*Իսկ արքայ՝ իբրև ետես զայն չարիս, ժողովեալ զզօրս իւր, արիութեամբ հասեալ ի վերայ բազմութեանն՝ սրոյ ճարակ ետ զամենեսին։ Եւ փախեաւ միայն ապստամբ իշխանն և սակաւք ընդ նմա։ Այսպէս եօթն անգամ հարաւ ի նմանէ, ապա եմուտ յամրոց իւր և ոչ իշխէր համարձակիլ յաջ կամ յահեակ։*

## ԼԸ

### Վասն թագաւորութեանն Դաւթի

*Բազմահնար և խորամանկ ազգն նետողաց յոլով անգամ յղեցին առ Թագուհին վրաց Ռուզուդան գալ առ ինքեանս, կամ տալ զորդի իւր զԴաւիթ մանուկ զօրօք առ նոսա։ Իսկ նա զայս ոչ արարեալ՝ տայ սակաւ զօրս. և ի ձեռն Աւագին, որդւոյն Իւանէի, որ էր ընդ Թաթար զօրուն, յղէ առ նոսա ասելով. «Մինչ չև է եկեալ դեսպանն իմ, զոր յղեցի առ խաղանն, արքային ձեր, ոչ կարեմ գալ առ ձեզ»։*

*Իսկ նոքա իբրև հարին զսուլտանն հոռոմոց՝ զփեսայ նորին, և առին զյոլովս ի քաղաքաց նորա, առաքեցին առ նա պատգամաւորս՝ զիշխանն Վահրամ, գալ նոցա ի հնազանդութիւն։ Եւ նա ի գալն եբեր ընդ իւր զոր-*

1 eijnopstzՎ *յեղակարծում*, g *յեղակարկար*
1 *Մ-Թ* afhmt *մինչ* փխ *մինչդեռ*
1 nopsz *ցրուեալք*
1 nop *զօրք*
2 nop *արքունին*, t *արքային*
2 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *աւարեաց*
3 t *գաւառս* փխ *աւանս*
3 g *այրմամբ և աւերմամբ*
3 *Մ-Թ* fjm *բազում*
4 stՎ չիք *'և կողոպտեալ'*
4 st *զբազում*
5 d *ընդ յաշխարհն*
5 o *քինահարութեամբ*
6 stՎ *արքայն*
6 h չիք *իւր*
6—7 h *ուրախութեամբ* փխ *արիութեամբ*
7 ipՎ *զամենեսեան*
8 ip *զապստամբ*
8—9 m *և անգամ* փխ *եօթն անգամ*
9 tՎ *յամրոցն*
9 t չիք *իւր*
9—10 abcdefghjno *համարձակել*
10 dz *և կամ*
11 efg *Թագաւորութեան*
12 *Մ-Թ*amz *խորամանգ*
12 afh *ազգ*
13 cj *յինքեանս* o *առ ինքն*
14 fh *զօրօք իւրովք*, d *զաւրաւք*
14 h *արար* փխ *արարեալ*
14 s *այլ տայ*
14—15 ad *զաւրս*
15 *Մ-Թ* afhms *աւագ* փխ *Աւագին*
15 cdfgh *որդոյ*, abijnopՎ *որդւոյ*, m *որդւոյն իւրոյ իւանէի*
15 a *զաղար* փխ *Թաթար*
16 d *դեսպան*
16—17 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *խաղան արքային*, no *զխանն արքայ*
19 efgh *զյոլով* no *զյոլովս քաղաքացն*
19 bcdefghjno *ի քաղաքացն* (no չիք *ի*)
19 no *պատգամաւորսն*
20 d *Վահրամայ*
20 fh *նա և* փխ *եւ նա*
20 stՎ *ի գալն իւր*
20 cdijp չիք *ընդ իւր*

զի Գիորգեայ Լաշայի՝ թագաւորին վրաց, զեղբօր Ռուզուդանայ թագուհւոյ, զոր յղեալ էր զհետ դստերն իւրոյ առ սուլտանն Հոռոմոց դաւով, զի կոթուսցէ զնա, զի մի նենգ ինչ գործեսցէ թագաւորութեանն. և էր առ սուլտանին յարգելս։

Եւ բերեալ Վահրամայ, ծանոյց թաթար զօրուն, թէ՝ «Որդի արքայի մերոյ է և տարապարտ զրկեալ է ի տէրութենէ իւրմէ»։ Իսկ նոքա հակառակ հօրաքեռ իւրոյ թագաւորեցուցեալ զնա՝ հրամայեցին ըստ օրինի քրիստոնէից՝ օծանել զնա, և կալ ամենայն իշխանաց հօր նորա նմա ի հնազանդութեան, և նստել ի Տփխիս քաղաքի։ Եւ առեալ զնա մեծամեծ իշխանացն, որք էին հնազանդ թաթարին, Աւագին, որ զօրավարն էր, և Շահնշահի՝ որդւոյ Զաքարիայի, և Վահրամայ և որդւոյ իւրոյ Աղբուղային, տարեալ ի Մծխիթայ, կոչեցին և զկաթողիկոսն վրաց և օծին զնա թագաւոր։ Եւ էր անուն նորա Դաւիթ։

Իսկ հօրաքոյր նորա Ռուզուդան՝ իբրև լուաւ զայն, փախեաւ յԱփխազէթ և ի Սուանէթ որդւովն իւրով միւս Դաւթաւ, և յղեաց դեսպանս առ միւս զօրագլուխ թաթարին, որում անուն էր Բաթու, ազգական ղանին, որ իշխէր ի վերայ այնց զօրաց, որք էին ի Ռուզք, և յՕսէթք, և ի Դարբանդ, քանզի

1 cst զէորգայ, d զիաւրգեայ, nop զիօրգայ, Վ Գիորգայ
1 Մ-Թ և երկու ՁՁ շալայի
1 stՎ արքային փխ թագաւորին
1 ijkmnop եղբօր փխ զեղբօր
1 Մ-Թ զեղբօր որդի Ռուզուդանայ, փխ զեղբօր Ռուզուդանայ
1 abcdefgh թագուհոյ, Վ թագուհւոյն
2 t իւր
3 g թագաւորութեան
3—4 d սուլտանին մաւտ փխ առ սուլտանն
4 bd արգելս
5 ip արքային
6 Վ հակառակք
7 ad հաւրաքեռ, m հօրաքեռն
7 b իւր
7 fh թագաւորացուցանել
7 fh հրամայեցէն
7 ad ըստ աւրինի, no չիք ըստ օրինի
8 ad աւծանել
8 h չիք և
8—9 afhkm ի հնազանդութիւն
9 Մ-Թ և մի քանի ՁՁ նստեալ, ms նստիլ, fh և նաել փխ և նստել
9 no քաղաքին
9—10 tՎ իշխանաց, no քաղաքաց և իշխանաց
10 ip հնազանդք
10 fh թաթարի, m թագաւորին փխ թաթարին
10 fh և աւագին
10—11 no թաթարին որ. զօրավարն էր աւագին և շահնշահի
11 cdfghk որդոյ
11 cfhnops զաքարէի, tՎ զաքարէ
11 bsdfhk որդոյ
11 Մ-Թ bcefgijpՎ աղպուղին, bmno աղպուղային, h ալպուղին
12 Մ-Թ մեծխիթա, a մեծխիթայ
12 ip կաթողիկոսն
12 bd աւծին, t օծեցին
13 t չիք նորա
14 k հօրաքեռ
14 fh չիք նորա
15 Մ-ԹՎ և մի շարք ՁՁ սոնէթ, f սուանեթ, ijp սուանէթ, no սովանեզ, h տանէթ (sic)
15 acdfh որդովն
15 no չիք միւս.
15 stՎ դաւթիւ
15 no չիք դեսպանս
15 ijp առ միում
16 no խանին
17 Մի քանի ՁՁ այնոց
17 abdep յռուսք, cfhij յռուզք, g ըռուսք, m ըռուզք, kstՎ ռուզք, no ուռուսք (օ ռուզուսք)
17 abcd յաւսեթք, gj յաւսէթք, no յօսեզք, st յօսէտք
17 f ի դարպանդ, g ի տարպանտ, st և ի դարբանք (sic) և յօսէտք, Վ և ի դարբանդ և յօսէթք
17 dj քան, փխ քանզի

*նա էր յետ ղանին, կալ նմա հնազանդ։ Եւ նա հրամայեաց նմա նստել ի Տփխիս, և սոքա ոչ ընդդիմացան, քանզի ընդ ատուրս ընդ այս մեռեալ էր ղանն։*

## ԼԹ

### Վասն կոչելոյն ի մեծ դուռն զկաթողիկոսն Աղուանից զտէր Ներսէս

*Մինչդեռ զետեղեալ նստեալ կայր զօրն Թաթար ի ձմերոցս ի դաշտս Հայոց և Աղուանից, Ռաբանն Ասորի, զոր վերագոյն յիշեցաք, լուաւ վասն կաթողիկոսին Աղուանից և ծանոյց Էլթինայ խաթունին՝ կնոջ Չարմաղունին, որ վարէր զիշխանութիւնն նորա յետ համբառնալոյն, եթէ՝ «Գլխաւորն քրիստոնէից կողմանցս այսոցիկ գաղտութեամբ նստեալ կայ և ոչ տեսանէ զմեզ»։ Յղեցին առ նա, եթէ՝ «Ընդէ՞ր դու միայն ոչ տեսանես զմեզ. ե՛կ վաղվաղակի առ մեզ. և թէ կամաւ զայդ ոչ առնես, յակամայ ածցուք զքեզ նախատանօք»։*

*Իսկ նա, քանզի նստէր ի գաւառն Միափորոյ, ի վանքն, որ կոչի Խամշի, և էր ընդ իշխանութեամբ Աւագին, առանց զնա հարցանելոյ ոչ իշխեաց երթալ, զի մի՛ ծանր թուեսցի երթն նորա։ Թաքեաւ ի նոցանէ և ասաց պաշտօնէիցն պատճառել, թէ ոչ է ի տան, այլ երթեալ է առ Աւագն։ Եւ նոքա երկիցս և երիցս յղեցին սպառնալեօք գալ առ նոսա։*

*Ապա հրաման առեալ յԱւագէն, չոգաւ առ նոսա ի դաշտն Մուղանու ընծայիւք ըստ կարին, բայց ոչ հանդիպեցաւ անդ Ռաբանն, զի գնացեալ էր*

1 n չիք *նմա*
1 imnops *նստիլ*
2 abce *ընդ աւուրսս*, ip *ընդ աւուրսն*
2 ip *ընդ այնոսիկ*, m *ընդ այս*
3 dna *խանն*
4 c չիք *զտէր*
5 Վ *Եւ մինչդեռ*
5 cdj *զետեղեալս*
5 m չիք *նստեալ*
5 d *Նաւր*
5 z *Թաթարին*
5 st *ի ձմեռոցս*
5 cdjpstzՎ *ի դաշտն*
6 c *ռաբան*, z *ռապանն*
6 fgi *վերագոյնն*
6 z չիք *'զոր... յիշեցուք'*
7 s *Էլթինա*
7 distՎ *կնոջն*
7—8 *Մ-Թ* և մի շարք ՁՁ *չարմաղունին*, stՎ *չարմուղանին*
8 m *զոր*
8 cdegjzՎ *զիշխանութիւն*
8—9 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *գլխաւոր*, t *գլխաւորքն*
9 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *գաղթութեամբ*, z *գայթակղութեամբ*
10 z *և յղեցին*
10 cijpstz *թէ*
11 *Մ-Թ* aeno *եթէ* փխ *և թէ*
11 g *տեսանես* փխ *առնես*
11 Վ *ակամայ*
12 abd *նախատանաւք*
13 *Մ-Թ* *ի գաւառին ի* փխ *ի գաւառն*
13 *Մ-Թ* afhmno *միափորի վանքն միւսըն՝ միափորոյ ի վանքն*, st *միաբորոյ ի վանքն*
14 tz չիք *զնա*
14—15 p *իշխէր*
15 gz *երթալն*, t *երթեալ*
15 mՎ *երթ նորա*
15 bcdgijpstzՎ *թագեաւ*
16 a *պատճառեալ*
16 fh *եթէ*
16 fh *աւագին*
17 i *յղեցին երկիցս և երիցս* p *յղեցին սպառնալեօք երկիցս և երիցս*
17 ad *սպառնալեաւք*
18 z *առ նա* փխ *առ նոսա*
19 ab *ընձայիւք*, cij *ընծայեօք*, z *ընծայօք*, d *ընծայեաւք*
19 s *ըստ կարի իւրում*, tՎ *ըստ կարի իւր* փխ *ըստ կարին*
19 o չիք *անդ*
19 *Մ-Թ* *ռպանն*, z *ռապանն անդ*, bdefgh *ռաբբանն*
19 z չիք *զի*

նա ի Թուրէժ. այլ գնացեալ ի մեծ դուռն, յանդիման լինի Ելթինայ խաթունին։ Եւ նորա սիրով ընկալեալ զնա, մեծաւ մեծարանօք պատուեաց՝ ի վերոյ նստուցեալ ամենայն մեծամեծացն, որք հաւաքեալ էին առ նա յաղագս հարսանեաց որդւոյ նորա Բօրա-Նուինի. քանզի առեալ էր նորա զդուստր ուրումն մեծի՝ Ղութուն-Նուին կոչեցելոյ կին որդւոյ իւրոյ. և զդուստր իւր տուեալ էր կին միւս աւագագունին՝ Ուսու-Նուին կոչեցելոյ։ Եւ տօն մեծ էին առ նոսա աւուրքն այնոքիկ ուրախութեան հարսանեացն։ Վասն որոյ ասէ ցկաթողիկոսն՝ «Ի շնորհաւոր աւուր եկիր»։ Եւ նա իմաստաբար պատասխանեաց, թէ՝ «Եւ ես իսկ ընտրեցի զաւուրս զայսոսիկ ուրախութեան ձեր և ապա եկի»։

Իսկ նա յանձնեաց զնա և զպաշտօնեայս իւր յեղբարս իւր՝ ի Սագեղաղայն և ի Գորգոզն, որք էին քրիստոնեայք հաւատով, նորոգ եկեալ յաշխարհէն իւրեանց՝ մինչ ինքն հոգասցէ զհոգս հարսանեացն զաւուրս ուրախութեան։ Որք առեալ մեծաւ պատուով պատուէին զնա։

Եւ իբրև սակաւ մի պարապեցաւ ի հոգոցն, ետուն նմա պարգևս և էլ-տամղայս, զի մի՛ ոք նեղեսցէ զնա, ետուն նմա մողալ թաթար առաջնորդ, որ տարեալ շրջեցոյց զնա յաշխարհն Աղուանից ի վիճակ իւր, զի. յոլով

1 Մ-ԹՎ թարվէժ, e թօրէժ, g թաւրէզ, n զավրէժ, z շահաստան փխ Թաւրէժ
1 Վst և փխ այլ
1 n լինիլ, oz լինել
1 st էլթինա, z ելթինա
1—2 Մ-Թ և մի երկու ՁՁ խաթունի
2 no նոքա փխ նորա
2 fh ընկալաւ
2 fhՎ և մեծաւ
3 noՎ ի վեր
3 p յամենայն, t չիք ամենայն
4 cdfgh որդոյ
4 Մ-Թ և մի երկու ՁՁ բաւրա նուինի, bdjno բաւրա նուինի, cg բուրա նուինի, st բորայ նուինի
4 stՎ չիք նորա
5 s ուրեմն
5 Մ-Թ Ղութան նուին, cdijpz ղութու նուին.
5 hsՎ կոչեցեալ
5 t չիք 'ուրումն... որդւոյ իւրոյ'
5 dfh որդոյ
6 Մ-Թ չիք կին
6 c ուսուր նուին, ip որ (p զոր) ուսուռ նուին կոչիւր, z ուռուս նուին
6 no կոչեցեալ
7 bd տաւն
7 ip յաւուրսն յայնոսիկ, z աւուրսն, no աւուր այնմիկ
7 j այնոքիւկ
7 Մ-Թ ուրախութեամբ
8 h վասն այսր
8 Մ-ԹՎ և մի երկու ՁՁ շնահաւոր
8 ip օր
8—9 dnoz իմաստնաբար
9 d ընդրեցի, c ընտրեցին (sic)
9 eg զաւուրսս, z զօրս
11 m զպաշտօնեայսն իւր, no եւ ցպաշտօնեայսն իւր
11 acfg յեղբայրս, hno եղբայրս, ip յիւր եղբօրն (p եղբօրսն (sic) իւրում, mstՎ յեղբարսն
11—12 z սատխ աղայն, Վ Սագեղաղայն
12 d որք ին, z որք ի փխ որք էին
12 impz քրիստոնեայ
12—13 g աշխարհէն
13 m զհոգ
13 stՎ հարսանեաց իւրոց
13—14 bcdjՎ ուրախութեանն
14 ip չիք որք
14 f չիք պատուով
15 g սակաւիկ
15 cdijpz չիք մի
15 mz իբրև պարապեցաւ սակաւ
15 g պարապեաց
15 o ի հոգսոյն, z ի հոգոյն, st ի հոգուցն (sic)
16 b էլ տամայս, z եառլխ փխ էլ-տամղայս
16 Մ-Թ adfhmz զնոսա փխ զնա
16 Վ և ետուն
16 bcdefghijmnopstz ԱԲԳ մօվալ թաթար (Վ Մողալ-թաթար).
17 h սիրեալ փխ տարեալ
17 no չիք զնա
17 afh աշխարհն
17 z իսկ փխ զի, h զի ի յոլով

ժամանակք էին, որ ո՛չ նա և ո՛չ որք յառաջ քան զնա, ո՛չ իշխէին շրջիլ ընդ վիճակեալս իւրեանց յաղագս արիւնարբու և գազանաբարոյ ազգին տաճկաց։ Իսկ նորա շրջեալ ընդ վիճակեալսն՝ դարձաւ անդրէն խաղաղութեամբ ի տեղի իւր, ի վանսն Խամշի։

## Խ

## Վասն ապստամբելոյ նոցա ընդ կողմանս Վասպուրականի ի վերայ բազում գաւառաց

Դարձեալ ի մտանել ամին երկրորդի փախուցանելոյ զՂիաթադին սուլտանն, խաղացին գնացին ընդ կողմանս Բզնունեաց, ի քաղաքն Խլաթ, և առեալ զնա՝ տան ի ձեռս Թամթայ՝ քուեր Աւագին, որ էր յառաջ տէր լեալ քաղաքին, մինչ կին էր նա Աշրափ Մելիքին, և գերեցաւ ի խորազմեցի սուլտանէն Ջալալադնէն. և ի նոցունց դարձեալ առաւ գերի և առաքեցաւ առ ղանն, և եկաց անդ զյոլով ամս։

Եւ իբրև առաքեաց Թագուհին վրաց Ռուզուդան զիշխանն Համադօլայ դեսպան առ ղանն, և ի դարձին իւրում Համադօլայն խնդրեաց ի ղանէն զԹամթի և եբեր ընդ իւր հրովարտակօք ի ղանէն. զի՝ զոր ինչ լեալ իցէ նորա, մինչ կին էր Մելիք Աշրափին, տայցեն ի նա։

Եւ նոքա արարեալ զհրամանս արքային իւրեանց. տան ի ձեռս նորա զԽլաթ և զգաւառսն՝ որ շուրջ զնովաւ, և ինքեանք ապստամբ սփռեալ ընդ կողմանս կողմանս ի Միջագետս Ասորւոց, յԱմիթ և յՈւռհայ և ի Մծբին

1 h են
1 d որոք, h և որք (չիք ոչ), st՝Վ և ոչ այլ ոք
1 abcefghjstzՎ շրջել
2 stՎ ի վիճակս, z ընդ վիճակս
2 Վ արեանարբու
2 Մ-Թ կատաղի փխ գազանաբարոյ, cdj գազանաբարու
2 cdijmp յազգէն
3 t չիք 'իսկ նորա... դարձաւ'
3 h ընդ վիճակեալս
4 g ի տեղիս
4 o չիք իւր
4 Մ-Թ mno ի վանս; st ի վանքն
5 eijkmnop ապստամբելոյն
5 Մ-Թ e նորա փխ նոցա
7 hipst փախուցելոյ
7 Մ-ԹՎ am զղիադատինն, cdj զղիադին, f զղիադատին
7—8 f սուլթանն
9 p տան զնա
9 st ի ձեռն
9 Մ-Թ և մի քանի ՁՁ Թումթեայ
9—10 h որ յառաջ տէր լեալ էր, o տիրեալ փխ տէր լեալ
10 stՎ քաղաքին այն
10 m աշրափին, n աշրաք
10—11 stՎ ի խորազմենի
11 bcdegjmnpՎ ջալալադնէ, fh ջալալադնէն
11 no դարձաւ
11—12 ԱԲԳ ոզեցաւ փխ առաքեցաւ
12 no յոլով ամս
13 i ռուզուդանն
13 Մ-Թ և մի երկու ՁՁ համադուլայ, bcdgj համադաւլայ, eipsՎ համադօլայ, o համադոլոյ
14 e դեսպանս, sՎ դեսպանութեամբ
14 Մ-Թ և մի երկու ՁՁ համադուլայն, abdgj համադաւլայն, ceimops համադօլայն, Վ Համադօլան
15 ip զԹամթայ
15 st հրովարտակով
15 no ի խանէն
16 h մինչև
16 nostՎ տացեն
16 st նմա փխ ի նա
17 stՎ արարին
17 no հրամանս
18 mo զգաւառն
18 no չիք որ
19 Մ-Թ և մի շարք ՁՁ ասորոց, cdjp յասորոց, m յասորւոց
19 Մ-Թ և մի քանի ՁՁ յուրհայ, cdj և ի յուրհայ, k և ուրհայ, o ուռհայ, Վ յՈւռհա

*և ի Շամբին երկիրն, և յայլ բազում գաւառս, դարձան ունայն. զի թէպէտ ոչ ոք եւ ընդդէմ նոցա պատերազմաւ, սակայն վասն տօթոյն ամառայնոյ բազումք ի նոցանէ խորշակահար լեալ, մեռան՝ մարդ և երիվար։*

*Եւ*եկեալ ի տեղի իջաւանի իւրեանց, դադարեցին զաւուրս ձմերայնոյն։ Եւ տան հրաման վասն շինութեան քաղաքին Կարնոյ՝ Թէոդուպօլեայ։ Եւ ժողովեցան ցրուեալքն և զօղեալքն և զերծեալքն ի գերութենէ. կոչեցին և զեպիսկոպոս քաղաքին՝ զտէր Սարգիս, զոր եբեր իշխանն Շահնշահ որդին Զաքարէի, և շոգաւ։ Եւ սկսան վերստին շինել զաւերեալ և զկործանեալ քաղաքն։*

## ԽԱ.

Վասն կանոնական հրամանաց կաթողիկոսին Հայոց Կոստանդեայ

*Իսկ առաջինի կաթողիկոսն Հայոց Կոստանդին իբրև ետես զաւեր աշխարհիս Հայոց և զտառապանսն, զոր կրէին ի հարկահանացն և ի զօրաց թաթարին, և մտախոհ եղեալ իմացաւ, եթէ մեղքն են այսմ ամենայնի պատճառ, զի ամենայն մարդ խնամով ի չարիս խոկայր գործել զհաճոյս կամաց իւրոց։ Զի կարգ ամուսնութեան սուրբ օրինացն բարձաւ, և հեթանոսօրէն արիւն ընդ արիւն խառնէին՝ զազգականսն առնելով. և զո՛ր կամէին թողուին, և զո՛ր կամէին առնուին. և պարկեշտութեան պահոց փոյթ*

1 i *ի շամբի*
1 Վ *և դարձան*
1 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *յունայն*
2 *Մ-Թ* agijm *ընդ նմա* փխ *ընդդէմ* · *նոցա* fh *ընդ նոսա*.
2 nop *ոչ ոք կարէր դէմ ունել նոցա պատերազմաւ*
2—3 abcdefghjnopՎ *ամարայնոյ*, st *ամառայնոյ*
3 stՎ *խորշակահարք եղեալ* (Վ *լեալ*)
3 o *մարդ և անասուն* փխ *երիվար*
4 no *ի տեղւոջէ իւրեանց* փխ *ի տեղի իջաւանի իւրեանց*
4 acdhjmpstՎ *իջեւանի*
4—5 *Մ-Թ ձմերայնոյն*, ago *ձմերայնն*, bcdeijnp *ձմերանն*, fh *ձմերային*, st *ձմեռան*, Վ *ձմերան*
5 bcdgjn *կարնայ*
5 abcegijp *թէոդուպօլեաց*, fh *թէոդուպօլսեայ*, d *թէոդուպաւլեաց*, stՎ չիք *թէոդուպօլեայ*
6 m *ի գերութենէն*, no չիք *զերծեալք ի գերութենէ*
7 *Մ-Թ* և մի երկու ՁՁ չիք *և*
7 pstՎ *զեպիսկոպոսն*
7 d *խաշնշահ* փխ *Շահնշահ*
8 Վ *Զաքարէ*
8 Վ չիք *և*
8 d *չոքաւ*
8 stՎ չիք *սկսան*
8 s *շինեալ*, tՎ *շինեաց*
8 no չիք *զաւերեալ և*
10 g *հայոց կոստան*
10 *Մ-Թ* և մի չորք ՁՁ *կոստանդնի*, stՎ չիք *կոստանդեայ*
11 m չիք *կոստանդին*
11 g չիք *ետես*
11 stՎ *զաւերն*
11—12 Վ *աշխարհին*
12 q չիք *և*
12 noՎ *տառապանսն*, g *զտառապանս*
12 e *ի զօրացն*, l *ի զաւրաց*
13 l *մտախորհ*
13 g *իմացան*
13 mtՎ *թէ*
13 mq *յայսմ*
14 o չիք *մարդ*
14 stՎ չիք *ի չարիս*
14 t *ի գործեալ*, Վ *ի գործել*
15 no *զհաճոյս կամաց սրտից*
15 al *աւրինաց*, elhmp *օրինաց*
15 no *բարձաւ սուրբ օրինացն*
15—16 al *հեթանոսաւրէն*
16 stՎ *ընդ արեան*
16 pqstՎ *զազգականս*
16 ae *առնլով*
16 sՎ *զորս*
17 e *թողնուին*, ighklmnpq *թողէին*, e *թողուլ*
17 sՎ *զորս*
17 lp *առնէին*, o *առնուլ*
17 t *պարկեշտութեամբ*

և կայ փառաւորեալ և փառաւորի ի բնութեանն աստուածութեան, ի զօրութեանն, ի կամսն, յիմաստութեանն, ի գործն, ի մեծութեանն, և մանաւանդ յանհասութեանն, և յանասելի ողորմութեանն։

Հայր անծին, որդի ծնեալ ի Հօրէ, անախտ և անմարմին, բնութենակից Հօր նախ քան զժամանակս։ Հոգին սուրբ բղխումն ի Հօրէ, և երևումն յորդւոյ, ո՛չ ըստ որդւոյ ծննդեամբ, այլ յառաջ եկեալ աղբիւրաբար, ինքեան միայնոյ քննելի օրինակն, և յարարածոց անգիտելի. միշտ ընդ Հօր որդի և Հոգի. Հոգի որպէս Հօր, նմանապէս և որդւոյ. ոչ փոխեալ Հայր յորդի, կամ որդի ի Հոգի, կամ Հոգի յորդի և ի Հայր։

Հայր ունելով զանձն և զանուն Հայրական, և որդի ունելով զանձն և զանուն որդիական, և Հոգի ունելով զանձն և զանուն Հոգիական, անդրադարձութիւն ոչ ունելով կամ փոփոխումն անուանցն և անձանցն, այլ Հայր միշտ Հայր. որդի միշտ որդի, Հոգի միշտ Հոգի. յոր Հաւատամ։

Յայսմանէ և ի սիրոյ եկեալ որդւոյն անձամբ չափ՝ աւետեօք Հրեշտակապետին Գաբրիէլի ի կոյսն Մարիամ՝ որ սուրբ էր Հոգւով և մարմնով, և ի պատճառս փրկութեան մերոյ մարդացեալ ի նմանէ, սահմանաւ բնութեանս մերոյ՝ Հոգի, միտք, շունչ, մարմին, որ ինչ և է կատարեալ մարդ մեղուցեալ բնութեանս Ադամայ, ուստի Մարիամն էր. զոր առեալ աստուածագործեաց առանց շփոթման և այլայլման, անքնին և անճառելի խառնմամբ, և եղև յերկուց կատարեալ բնութեանց՝ յաստուածայնոյն և ի մարդկայնոյն՝ մի անձնաւորութիւն կատարեալ, անայլայլելի և անբաժա-

1 Մ-ԹՎ և մի երկու ՁՁ ի բնութեան
1 bcd յաստուածութեանն, efhm յաստուածութեան, ijp չիք աստուածութեան
1—2 ad ի զաւրութեանն, bc և ի զօրութեանն, eՎ ի զօրութեան
2 st յիմաստութիւն, Վ յիմաստութեան
2 Մ-ԹՎ և մի երկու ՁՁ ի մեծութեան, st ի մեծութիւն
3 Մ-Թ և մի երկու ՁՁ յանհասութեան, jnop անհասութեանն
3 Մ-Թ և մի երկու ՁՁ ողորմութեան
4—5 cdnՎ բնութիւնակից
5 ad հաւր
5 i և նախքան
5 b զժամանակն
6 cd որդոյ, fh յորդոյ, ijm որդւոյ
6 bcdfhijm որդոյ
6 m այլ ընդ առաջ
6 f աղբերաբար
6—7 m ինքեան միայնոյ անքննելի
7 ad աւրինակն
7 Վ արարածոց
7 ad հաւր
8 h որդի և հոգի որպէս հօր
8 bstՎ հոգին
8 ad հաւր
8 Վ նոյնպէս
8 bcd որդոյ, fh յորդոյ
8 fh ոչ փոփոխեալ
8—9 cdjmp հայր որդի
9 m որդի հոգի կամ որդի հոգի և հայր
10 bcdj զանունն
11 bcdj զանունն
11 Վ որդիական անուն
11 bcdj զանունն
12 lp չիք և անձանցն
13 sՎ և հոգի
14 cdfh որդոյն
14 d աւետաւք, n աւետօք
15 bcdh հոգով
16 Մ-Թ և մի երկու ՁՁ ի պատճառս փխ և ի պատճառս, dip և պատճառս
17 no և ի մարմին
17 stՎ կատարեալն
18 bcdejk բնութիւնս
18—19 abcdefhij աստուած գործեաց (efh ած գործեաց)
19 a շփոյթման
19 ijp և անքննին
19 Մ-Թ և ՁՁ անքննին
20 stՎ խառնմամբն
20 Մ-Թ և մի երկու ՁՁ եղև փխ և եղև
20 inop յաստուածայնոյ, j յաստուածայնոցն, m աստուածայնոյն
21 Մ-Թ և մի քանի ՁՁ մարդկայնոյ
21 no բաժանելի փխ անբաժանելի

նելի բնութեամբ, ո՛չ փոփոխելով մարդկային թանձր և յօդական բնութիւնն յանյօդ և պարզական բնութիւն աստուածութեանն, զիւրն կորուսանելով. և ո՛չ պարզ և անմարմնական բնութիւնն աստուծոյ խառնելովն ընդ բնութեան մարմնոյ, վրիպեաց յիւրն յաւէտ պարզութենէ, թէպէտ և ասի յաղագս անքակ միութեանն՝ անմարմնոյն մարմնանալ, և բանին թանձրանալ։ Մնաց միածին մի որդի, մի անձն, մի Քրիստոս, և ճշմարտապէս յերկուց միացեալ՝ մի բնութիւն, մի կամք, մի ախորժակք, մի գործ, մի ծնունդ կուսութեամբ, մի մայր առանց հօր, որ և նախ քան զյաւիտեանս առանց մօր ծնեալ։

Եւ խոստովանիմ զմայրն Էմմանուէլի՝ աստուածածին մինչև յաւիտեան, և զԷմմանուէլն աստուած մինչև յաւիտեան. նովին մարմնովն և որ զհետ ծննդեան։ Զամենայն տնօրինականսն խոստովանիմ գործ աստուծոյ, զխոնարհագոյնսն, զբարձրագոյնսն, և զկիրսն անքամքասելի, զոր վասն մեր կրեաց, ո՛չ բաժանեմ, այլ մի յատուկ ասեմ ի տէրն իմ. և ո՛չ իմանամ չփոթումն. և նզովեմ զիմացողն և զասողն չփոթումն։

Եւ նոյնպէս զկիրք խաչին՝ խոստովանիմ աստուծոյ խաչ և մահ, ոչ էական բնութեան ասեմ մահ, կամ ի մարմնոյն բաժանումն, այլ զի բնութեամբ միացեալ յաստուածութիւն և աստուածացեալ, աստուած խոստովանիմ, որով մեռաւ անմահն, զբանական հոգին աւանդելով ի ձեռս հօր։

Աստուածութիւն ո՛չ բաժանեալ ի հոգւոյն և ի մարմնոյն, միաւորեալ

1 ip *բնութեամբ և անորոշելի անձնաւորութեամբ ոչ փոփոխելով*
1 Վ *փոխելով*
1 no *օթական* փխ *յօդական*
1—2 afhkm *բնութիւնան,* ejnpstՎ *բնութիւնս*
2 acdefhjkmno *անյօդ* (d *անյաւդ*)
2 c *աստուածութիւնն,* stՎ *աստուածութեանն բնութիւն*
2—3 stՎ *ոչ կորուսանելով*
3 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *բնութիւն*
4 beij *բնութեանն,*
4 no *զիւրն*
4 Վ *պարզութենէն*
5 no չիք *ասի*
5 Վ *միութեան*
6 t *մտաց* փխ *մնաց*
6 st *միածինն*
7 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *բնութիւն* փխ *մի բնութիւն*
7 dijp *մի ախորժակ*
8 s *որ եղև*
10 h չիք *և*
10 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *էմանուէլի* abcdm *եմմանուէլի*
11 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *զէմանուէլն,* abedm *զեմմանուէլն*
11 stՎ չիք *և զէմմանուէլն աստուած մինչև յաւիտեան*
12 Վ *տնօրինականս*

12 no *խոստովանի*
13 afhstՎ *զխոնարհագոյնս*
13 stՎ *զբարձրագոյնս.*
13 abefh *անքանքասելի*
13 stՎ *որ*
14 *Մ-Թ բաժանումն*
14 o *այլ միշտ* փխ *այլ մի*
14 i *ասեմ զի տէրն*
15 Վ *զչփոթումն*
15 n *նզովիմ*
15 b *զասաւղն*
15 ostՎ չիք *և նզովեմ զիմացողն և զասողն չփոթումն,*
16 h *և նմանապէս*
16 ij *կիրք*
16 i *խաչն*
16 t *որ* փխ *ոչ*
17 Վ *բնութեանն,* no *բնութեամբ*
17—18 be *այլ զիմ բնութիւն,* cdjnopstՎ *այլ զիմ բնութիւնն* փխ *այլ զի բնութեամբ*
18 bcdejstՎ *յաստուածութիւնն*
18 a *յաստուած*
19 afhkm *ի ձեռն*
19 stՎ *հօր աստուծոյ*
20 stՎ *եւ աստուածութիւն,* cd *աստուածութիւնն*
20 no *բաժանեալ հոգւոյն,* cdgh *ի հոգոյն*

անքակելի, ըստ որում և զդժոխս աւերէր Հոգւովն, և զմահ սպանանէր, և մարմինն լուծանէր զապականութիւն որպէս զաստուած և զաստուծոյ մարմին. ընդ ամենայն գերեզմանս արձակելով ճառագայթս, յարուցանելով զբազումս, գիտելով զսահմանեալ ժամանակաւն ի լանջս երկրի՝ հզօրագոյն Թուովն յառնէր, ո՛չ միայնաբար ըստ Յունանու ի ձկանէն, այլ լրմամբ Հոգւոցն մահակուլ, որ յԱդամայ ի դժոխոց, և յոլովիւք մարմնովք հողացելովք ի գերեզմանաց՝ ելանէր կուսութեամբ անլոյծ կնքոյն ի գերեզմանէն, որպէս յարգանդէն Մարիամու, և վերացեալ մտանէր յերկինս կուսութեամբ անճեղքելիս, որպէս ի վերնատունն դրամբք անբացիւք. զի յայտ լիցի, եթէ ի վեր է քան զբնութիւն մարմնոյ. զի մարմնոյ բնութիւն՝ մահկանացու, ապականացու և ախտալի է, թէ յատկացի ըստ ինքեան, և ընդ մարմին ոչ կարէ մտանել անծանօթապէս. այլ տէրունականն և տէրն լիով ունելով զճշմարիտն մարդ՝ իւրով սահմանովն, սակայն շողացեալ և փայլատակեալ աստուածութեամբն՝ ներգործէր զվայելչականսն բանին, զոր շօշափեցին ձեռօք դասք առաքելոցն, և տեսին երանելի աչօք զանտեսակն տեսակացեալ։ Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

Հաւատամ ի նոյն յերրորդութենէն եղեալ յոչէից զեղեալքս ամենայն, և զԱդամ պատկերեալ բարւոյն և յանցանօք լուծեալ ի մահ անձնիշխան կամօք, և ի նոյն արարչէ վերստին նորոգեալ, տնտեսութեամբ միոյն միածնի՝ կամօք Հօր և Հոգւոյն։

1 fhՎ անքակտելի
1 Վ և ըստ որում և
1 no դժոխս
1 cdejno աւարէր
1 Մ-Թ և մի երկու ՋՋ հոգովն
1—2 st չիք 'հոգւովն... լուծանէր'
1 c սպանէր
2 fhst մարմին
2 o ապականութիւն
2—3 st մարմինն
3 st որ արձակելով
3 fh ճառագայթեցուցանելով փխ ճառագայթս յարուցանելով, fh ԱԲԳ չիք յարուցանելով
4 bcdefhnop ժմկն, ժամանկն, ij զժամանակն, stՎ ժամանակսն
4—5 fh ի լանջս և ի հզօրագոյն
4 fh չիք երկրի
5 d Թուվովն
5 i չիք յառնէր, st առնէր
5 cj յովնանու, d յովաննու, i յովհաննու
5 h ի ձկանէ
6 cd հոգոցն, fost հոգւոյն, h հոգոյն
6 stՎ ի դժոխս
7 Մ-Թ և մի երկու ՋՋ ի գերեզմանացն
7 stՎ կնքօք, փխ կնքոյն
8 h և վեցեալ փխ վերացեալ
9 p դրամբ
10 bfh թէ փխ եթէ
10 stՎ մարդոյ փխ մարմնոյ
11 a անապականացու, m ապականացու մահկանացու
11 n ախտելի, o աղտելի
11—12 Մ-Թ և մի երկու ՋՋ ընդ ինքեան
12 i և ընդ նմին փխ ընդ մարմին, m ըստ մարմնոյ
12 bd անծանաւթապէս
12 t տէրունական
13 Վ իւրովն
14 stՎ զվայելչականն
15 Մ-Թ չիք ձեռօք, d շաւշափեցին ձեռաւք
15 Վ առաքելոց
16 i չիք գալոց է
16 acestՎ մարմնով
16 d փառաւք հաւր
16—17 in ի դատել
17 n կենդանիս
17 ah թագաւորութեան
17 b վաղխճան, cd վաղջան, Վ վաղճան
18 abcdehՎ երրորդութենէն
19 cdfhj բարոյն
19 ad յանցանաւք
19 fh ի մահն
20 m յարարչէ
20 fhՎ նորոգել, st նորոգիլ
20 o չիք միոյն
21 ad կամաւք
21 cdh հոգոյն

*Հաւատամ ի համօրէն յարութիւնն բանականացս որ յԱդամայ ի նոյն զօրութենէ ստեղծողին և նորոգողին։*

*Հաւատամ յարդար իրաւունս յաւուրն դատաստանի ըստ արժանեաց, և ի հատուցումն յաւիտենական կենաց և տանջանաց։*

*Այս է մերոյս հաւատոյ համառօտ խոստովանութիւն, և ամենայն ուղղափառաց, որոց մանաւորեսցէ՝ զմեզ տէր ի շնորհս ողորմութեան իւրոյ, սովիմբ կեալ յաշխարհի անարատ կենցաղավարութեամբ և բարի գործովք, և այսու դաւանութեամբ երթալ առ Քրիստոս՝ յոյսն մեր և վստահութիւն, և արժանի լինել տեսանել համարձակութեամբ զերանելի և զամենասուրբ զերրորդութիւնն, յերիս անձինս յատկացեալս, և ի մի աստուածութիւն և տէրութիւն և ի թագաւորութիւն փառաւորեալ։ Եւ արժանացուսցէ զմեզ և զամենայն ճշմարիտ հաւատացեալս անճառ բարեացն և անպատում ուրախութեանցն, «զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց աստուած սիրելեաց իւրոց»**։

*Արդ զայս դաւանութիւն յոլով մասն աշխարհի ունի և պահէ սրբապէս քաղաքավարութեամբ, զոր պարտ է յամենայն քահանայագործութեան տալ զայս դաւանութիւն մեծի քահանայապետին և պահանջել յայնցանէ, զորս ձեռնադրելն կամին։*

*Եւ ապա յանուանէ նզովէ զգայլսն ապականիչս՝ զամենայն հերեսիովտայսն՝ հարիւր յիսուն և ինն հերձուած մինչև ցայսօր ժամանակի և այլք, որ լինին նման սոցա. և դաւանել զամենայն ուղղափառսն, զհովիւսն եկե-*

* Ա. Կորն. Բ. 9

1 m *ի յարութիւն համօրէն,* cd *համաւրէն,*
1 cd *յարութիւն*
1 *Մ-Թ* և մի երկու ՁՁ չիք *որ*
2 ad *զաւրութենէ*
2 d *նորոգաւղին*
3 cdij *հաւատամք*
3 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *արդար յիրաւունս,* cd *արդար իրաւունս*
3 *Մ-Թ* և մի քանի ՁՁ *աւուրն*
3 Վ *դատաստանին*
4 bcdip չիք *ի*
4 stՎ *տանջանաց և կենաց*
5 st *մերոյ*
5 f *հաւատոց,* ip *հաւատոյ մերոյ*
5 ad *համառաւտ*
6 i *յորոց,* st *որով*
6 *Մ-Թ* և մի քանի ՁՁ չիք *իւրոյ*
8 stՎ *գնալ* փխ *երթալ*
8 stՎ *յոյսն* (st *յոյս*) *ամենեցուն և մեր վստահութիւն*
8—9 m *վստահութեամբ արժանի լինիլ*
10 fh *զերրորդութիւն*
10 dj *յերեկս* փխ *յերիս*
10 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *յանձինս*
10 p *յատկացեալ*
10 jk չիք *ի*
11 m *արժանաւորեցուսցէ*
12 mstՎ *հաւատացեալսն*
12—13 Վ *ուրախութեանց*
13 stՎ *զայն* փխ *զոր*
14 fh *տէր* փխ *աստուած*
15 st *այս* փխ *զայս*
15 Վ *դաւանութիւնս*
15 stՎ *աշխարհիս*
16 af *ամենայն*
18 bcdijp *զոր*
18 Վ *ձեռնադրիլն*
19 bcdeh *ապականիչսն,* inopՎ *ապականիչ,* j *ապականիչն*
19—20 abcd *հերեսիոտայսն,* s *հերետիկոսայսն,* t *հերետիկոսայսն,* Վ *հերետիկոսականսն*
20 *Մ-Թ* *և մյուսն* չիք *և*
21 bcdeijՎ *որք*
21 m *նմին* փխ *նման*
21 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *զհովուանի,* ah *զհովանի,* stՎ *զհովիւս*
21 h *եկեղեցոյ,* Վ *եկեղեցւոյն*

*ղեցւոյ, որք ընդ ճշմարտութիւն առաջնորդեցին հօտին Քրիստոսի և յարօտըս կենսաբերս սնուցին։*

*Եւ ապա իջանէ Հոգին յայնպիսի սեղանն սրբութեան և հանգչիցի յընծայեալն յայն, որ գիտէ ճանաչել զօտարսն և զընտանիսն, որպէս զգիտնականս և զիմաստունս հովիւս կացուցանել, որ կարասցէ ի կեանս կոչել զարժանիսն կենաց, այսինքն՝ առ աստուած ածել. զի այս է պարիսպ պահպանութեան խաչիւ և արեամբ գնեալ հաւատացելոց, ո՛չ միայն ի չարեացն ի բաց կալ, այլ և բարեացն զհետ երթալ ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն։*

*Գրեաց և մեծ վարդապետն Վանական, թէ որպէս մարթ է խոստովանել, և կամ ասել զսուրբ Հոգին ի Հօրէ և յորդւոյ։*

## ԾԲ

### Խրատ դաւանութեան Վանական վարդապետին

*Հոգւովն խօսել զհոգւոյն՝ հոգևորացն է գործ. իսկ եթէ ոք և որ ի ձեռն հաստատութեան իցէ յօժար առ ի քաղել ամարան խզուզին հանդիպել սիրելի է, և թէ հասկի, բայց թէ չնչիցէ հոգի անօսր Եղիայումն՝ ընթացի բանն, և փառաւորեսցի մի աստուածութիւն յերիս անձինս՝ միմեամբք երև-*

1 bdՎ *ճշմարտութիւնն*, e *ճշմարտութեան*, m *որք ճշմարտութեամբ*, no *զճշմարտութիւնն*
1 ad *հաւտին*, f *ի հօտին*, h *ի հօտն*
1—2 m *ի յարօտս*
3 fh չիք *սեղանն*
3—4 bcd *յընծայելն*
4 a *զընդանիսն*, st *զօտարն և զընտանին*, Վ *զաւարտն* փխ *զօտարն* Վ *զընտանին*
4—5 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *զգիտականսն և զիմաստունսն*, bcdeijnop *զգիտնականն*, stՎ *զգիտնական և զիմաստուն*
6 stՎ *զարժանիս կենացն*
6 no չիք *առ*
6 d *զի ասէ*
6—7 fh *ամրութեան* փխ *պահպանութեան*
7 h *հաւատալոց*
7 a *ի չարեաց*, bcei *ի չարացն*
7 afhi չիք *ի*
8 no *գալ* փխ *կալ*
8 e *երթեալ*
8—9 i *որում փառք*, n *որում վայել է փառք*, o *որում վայել է փառք իշխանութիւն և պատիւ*
9—10 no չիք *՚յաւիտեանս...մեծ վարդապետն՚*
10 abcdefhj *վանականն*
10—11 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *խոստովանիլ*
11 t *հոգին հօրէ և որդւոյ*, fh *յորդոյ*, j *ի յորդւոյ փառք յաւիտեանս ամէն*, i *յորդւոյ և նմա փառք այժմ և յաւիտեանս յաւիտենից ամէն*, p *ի որդւոյ փառք յաւիտեանս ամէն*
11 no չիք *՚վանական... յորդւոյ՚*
12 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *վանական վարդապետին*, no չիք *՚խրատ դաւանութեան վանական վարդապետին՚ ամբողջ գլուխը*, d *վանական վարդապետին է ասացեալս*, i *վարդապետի*, stՎ *խրատ դաւանութեան վանական վարդապետին*
13 abedfh *հոգովն*
13 ad *խաւսել*, i *խօսեալ*, m *խօսիլ*
13 cdh *զհոգոյն*
13 bcdeijpsfՎ չիք *գործ*
13 bcdeijpst *ԱԲԳ ի ձորն* փխ *ի ձեռն*
14 stՎ *է* փխ *իցէ*
14 ad *յաւժար*
14 stՎ *ամառան*
14 cdikmՎ *հանդիպիլ*
15 ij *հասակի*
15 ad *անաւսր*, s *անօսր ե* (s Ձ-ն այստեղ ընդհատվում է. կորել հանել են երեք թերթ՝ վեց երկսյուն էջեր, այսինքն՝ մինչև էջ 344 տող 9 *՚զօրացուցչութիւն՚* ներառյալ)։
15 i *եղացումն*
16 b *աստուածութիւնն*
16 d *յերինս*
16 ip *միմեանցն ելեալ*, t *միմիամբ*

եալ, որպէս լոյս ի լուսոյ. զի եթէ արարածականս այսպէս և հուր՝ ոչ փակի յիւրական ընտանեաց և յայլոց, զիա՞րդ անեղ արարչականն ի միմեանց և յարարածս, թէ և մեք ոչ կարեմք գիտել. վասն զի երեք անձնական բաժինս տալ ոչ զօրէ ի յօդ, ի հուր, ի ջուր և ի գինի, վասն նրբամասնութեանն. և զի այսք հարկելիք են, թէ և անհարկելիք թուին, և անապուսելի՝ ապուսելիք, ո՞րչափ ևս առաւել միտք մի՛ ժտեսցի յանեղ, յանարար, յանսահման, միաւնական սուրբ երրորդութիւնն, ոչ գոլ որով եզերիցի, կամ տեղի, ուր դնիցի, համիմացութեամբ ճանաչել. այլ զոր գիրք աստուածաշունչ առթէ եկեղեցւոյ, զոր սկսանելի է, իմացումն իմացական՝ իմացողին, որպէս անունդ ելով և կերակուր, ուրեմն մտաց, հրեշտակական էութիւնքն՝ և նոցա արարչականն, զի իմանալին իմացութեամբ իմացողապէս իմանայ զիմացական իմացումն։ «Արդ միտ դի՛ր դու քեզ,—ասէ նախամարգարէն Մովսէս,—հայեա՛ յանձն քո»*։ Խրատէ և Փիլոնիոս, թէ՝ «Քոյով երրորդութեամբդ իմա՛ ի մարմին քո, որ է հոգի և միտք և բան»։ Նոյն օրինակ և Պօղոս գրէ մեզ. «Մի է աստուած հայր, և մի տէր Յիսուս Քրիստոս, և մի սուրբ հոգի։ Զնոյն աւանդէ սուրբ ժողովն Նիկիայ. «Հաւատամ ի մի աստուած հայր, և ի մի տէր Յիսուս Քրիստոս, և ի մի սուրբ հոգի»։ Իսկ Յովհաննէս Մկրտիչ միութիւն խոստովանի բնութեանն՝ զհայր և զհոգի ազն դնէ, այսինքն՝ բան և որդւոյ ունել, ասէ, զհայր և զհոգի։

Աթանաս «Երեք ենթակայ, ասէ, կամ երեք դէմ»։ Աստուածաբանն

* Բ. Օրէնք. Ը. 11

1 abcdehjՎ զի թէ. m չիք եթէ
1 h այլ փխ այս, ip չիք այս
2 d յիւական (sic)
2 a յընտանեաց, cd ընդանեաց, Վ ընտանեացն
2 d այլոց
3 abcdejmՎ երեսք փխ երեք
3—4 fh բանին փխ բաժինս
4 bd զաւրէ
4 j և ի յօդ
4 Մ-Թ և մի երկու ՁՁ նրբամասնութեանս, i նրբաձևութեանն
5 i և զի հարկանելիք են, Վ եւ զի այս հարկելիք թուին փխ և զի այսք հարկելիք են, թէ և անհարկելիք թուին
5 e անապուսելիք, fh անապուսել, ապուսելիք, t ապուսելիք Վ անապուսելիք, փխ անապուսելի՝ ապուսելիք
7 bcdet երրորդութիւն
8 fh կամ իմացութեամբ փխ համիմացութեամբ
8 acdefmՎ ճանաչիլ
8 e առիթէ
9 h եկեղեցոյ
10 e էութիւնք
11 t արարչական իմացումն, Վ արարչականք
11 i զի իմանողին
11 fh իմացութեան
11—12 t չիք 'զի... զիմացական'
13 fh հայեա'ց
13 fh անձն քո
13 m չիք խրատէ, Վ և Փիլոնիոս խրատէ
14 fhՎ հոգի, միտք
14 i սոյնպէս և օրինակն փխ նոյն օրինակ և, p սոյն
14 ad աւրինակ
15 tՎ չիք աստուած
16 bcdfj զնոյնն
16—17 tՎ չիք 'Զնոյն աւանդէ... ի մի սուրբ հոգի'
16 i Նիկիոյ
16 bcdej հաւատ ի մի
17—18 e յովաննէս
18 Մ-Թ բնութեան, fh բնութեանս
18 Ա ազգն
19 cdfh որդւոյ
19 t զորդի փխ զհոգի, Վ և (հօր) զորդի փխ զհոգի
20 h երրորդն ենթակայ
20 cdij դէմն
20 cde աստուածաբան

*Գրիգոր ասէ. «Երեք անձն, կամ երեք երես, կամ որ քեզ սիրելի է, զայն ասա։ Ինքն աստուած՝ որ էն, ասէ՝ որ է ոչ սկսեալ, և ոչ դադարի»։ Գրիգոր Աստուածաբան, և Բարսեղ, և Գրիգոր Նիւսացի՝ «Անծին և ծնեալ, և ելումն», որում հետևի ամենայն ուղղափառ եկեղեցի։ Յովհան Ոսկեբերան՝ «Արմատ, բոյս և բողբոջ»։ Պօղոս՝ «Զհայր էութիւն, ասէ, և զորդին՝ նկարագիր, զհայր՝ լոյս և զորդին՝ ճառագայթ»։ Աթանաս՝ զորդին նկարագիր, ասէ, հօր, և զհոգի՝ որդւոյ, որ է հօր և որդւոյ. ինքն տէր զհայր՝ հոգի ասէ։ Եւ Լուսաւորիչն Գրիգոր զորդի հոգի ասէ, և ամենայն գիրք աստուածաշունչ զհոգի հոգի ասեն։ Պօղոս՝ «Զհայր աներևոյթ ասէ, և զորդի պատկեր աներևութին». յայտ է թէ՝ հոգի պատկեր է հօր և որդւոյ. զի մի է էիցն նկարագիր և պատկեր. ըստ այնմ, թէ՝ «Արար աստուած զմարդն ի պատկեր իւր»*, զի էիցն մի պատկեր է, մին սկզբնատիպ միոյ մարդոյն, միոյ բնութեան, և երից անձանց, միոյ աստուածութեան. ամենայն հին և նոր կտակարանք վկայեն։ Եւ զի հայր անսկիզբն և անպատճառ է, ինքն իսկ ասէ ցԱբրահամ՝ «Իմ էն երդնում քեզ». և ցՄովսէս՝ «Ես եմ էն», որպէս ասել՝ թէ «Ոչ յումեքէ, և զի որդի և հոգի ի հօրէ». Ովսէէ ասէ՝ «Հոգի իմ և բանն ի միջի քում»։ Եւ ինքն տէր ասէ. «Հողմ ուր կամի շնչէ, այլ ոչ գիտես գայ կամ յո երթայ. նոյնպէս և ամենայն ծնեալն ի հոգւոյն»։ Վասն որոյ և սուրբն Եպիփան Կիպրացին ասէ. «Հոգի հայր և ի նմանէ որդի և հոգի»։ Զի հայր անսկզբնութեան է անուն. և երեքն անսկիզբն են ի ժամանակէ։ Հոգի ասելն անմարմնութեան է նշան, և երեքեանն անմարմին. որդի ասելն՝ գոյացութեան*

* Ծնն. Ա. 27, ** Յովհ. Գ. 8, *** Համտ. Յովհ. Դ. 24

1 ip չիք *երեք անձն կամ*
1 Վ չիք *ասէ*
1 Վ *ի քեզ*
1 i *որ սիրելի է քեզ*
1 fh *զայն առ*
2 Վ *էնն*
3 Վ *աստուածաբանն*
3 Վ *Նիւսացին*
4 i *հետևին*
4 *Մ-Թ Յոհան Ոսկեբերանն*, i *ոսկիբերան*
5 *Մ-Թ զորդի*
7 tՎ *էութեանն աստուծոյ հօր (ԱԲԳ, հայր)*
7 cd *զորդի* փխ *զհոգի*
7 cdfhij *հոգի որդոյ... որդոյ (հ որդւոյ)*
7 ad *հաւր... հաւր և որդոյ*, Վ չիք *'որ է հօր և որդւոյ'*
7 i *տէրն*
8 i *լուսաւորիչն մեր*
8 tՎ *զորդին*
8 mՎ *աստուածաշունչք*
9 t չիք *հոգի*
9 i *զորդին*
10 bcdfh *որդոյ*
10 *Մ-Թ երիցն* փխ *էիցն*
11 *Մ-Թ ըստ որում*
12 fh *երիցն* փխ *էիցն*
12 df *մինն*
13 m *ամենայն գիրք հին և նոր*
14 Վ *ասէր*
15 *ԱԲԳ իմէն (Վ յիմ էն)*
15 p *երդումն քեզ*
15 b *ցմօսէս*
15 afhm *ես իմ էն*, cdejpՎ *եսեմ իմ էն*
15 i չիք *էն*
15—16 p *ասել թէ որպէս ոչ յումեքէ*
15 i չիք *ասել*
16 i չիք *և հոգի*
16 dՎ *բան*
17 Վ *տէրն*
17 abe *գիտէ*
18 h *նմանապէս*
18 i *յամենայն*
18 e *ծնեալ*
18 ch *հոգոյն*
18 *Մ-Թ* չիք *'վասն որոյ և սուրբն եպիփան Կիպրացին ասէ. «Հոգի հայր և ի նմանէ որդի և հոգի'*
20 Վ *երեք են*
20 Վ չիք *են*
21 abcdejՎ *երեքեան*
21 cdej *մարմին* փխ *անմարմին*
21 abcdfhij *և գոյացութեան*

*և բնութեան է նշան. և զի երեք գոյացութիւն և մի բնութիւն են։ Որդի ի Հօրէ ասի, Հայր յորդւոյ ոչ ասի, զի սա ի նմանէ է, և ոչ նա ի սմանէ. որդի և Հոգի ի Հօրէ ասի. Հայր ի նոցունց չասուի, որդի և Հոգի ի Հօրէ ասուի. ոմն ծննդեամբ և ոմն ելողութեամբ։ Որդի բղխումն ասի, և Հոգի բղխումն ասի։ Որդի ել ասի ի Հօրէ, և Հոգի ել ասի. Հայր Հոգի ասի, բայց որդի չասի. Հոգի ո՛չ Հայր ասի, ո՛չ որդի, որդի ի Հօրէ և Հոգի ի Հօրէ և յորդւոյ։*

*Հայր արմատ, որդին բոյս, Հոգին ի յարմատէն, ի բուսոյն բողբոջ։ Հայր գո՛յ, որդին բերան, Հոգին շունչ։ Հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նորա։ Եւ թէ՝ «Առաքումն քո դրախտ նռնենեաց» և թէ՝ «Փըչեաց յերեսս նոցա և ասէ. Առէ՛ք զՀոգին սուրբ**։ Հայր անձն, որդին գոյացութիւն, Հոգին բազուկ, և ի բազկէն մատն։ Ես մատամբն աստուծոյ հանեմ զդևս»**։*

*Որդի ի Հօրէ, և Հոգի ի նոցունց,— ասէ սուրբն Եպիփան,— որդի ի Հօրէ ելանէ և Հոգի ի Հօրէ և յորդւոյ ելանէ։ Որդի ի Հօրէ առնու, նմանապէս և Հոգի յորդւոյ առնու։ Ասէ ինքն տէրն. «Յիմմէ անտի առնու և ուսուսցէ ձեզ****. և որդի ի Հոգւոյն առնու, ըստ այնմ՝ «Որ ի նմայն ծնեալ է, ի Հոգւոյն սրբոյ է»****։ Երեք արեգական լոյս է, ամենայնիւ մի օրինակ, անհաս, անճառ, անձև, անորակ, անքանակ, անսահման։ Բայց մինն որ զմեր բնութիւնս էառ, բանն մերովս երևի, և նովաւ ճանաչի Հայր և Հոգի։ Որդի ծնեալ ասի, որ թարգմանի յումեքէ, ումել, և ել ասի, որ թարգմանի ոչ զումեք ունել, զի ոչ ումի զանձն Հօր, և ոչ զանձն Հոգւոյ, այլ զիւր*

* Հմմտ. Յովհ., Ի, 22. ** Ղու, ԺԱ, 20. *** Հմմտ. Յովհ., ԺԶ, 15. **** Մատթ., Ա, 20.

2 c *յորդոյ*, dfh *որդոյ*, ij *որդւոյ*
2 i *զխոսս* փխ *զի սա*
3 Վ *ասի ի հօրէ*
3 cdijptՎ չիք *'հայր ի նոցունց չասուի, որդի և հոգի ի հօրէ ասուի'*
3 abfm *ասի* փխ *ասուի*
4 c *բխումն*
4—5 Վ *հոգի բղխումն* փխ *հոգի բըղխումն ասի*
5 Վ *ասի և հոգի ել ի հօրէ,* փխ *և հոգի ել ասի*
6 *Մ-Թ* և մի երկու ՁՁ *ասուի*
6 Վ *և ոչ որդի*
6 bcfh *յորդոյ*
7 *Մ-Թ որդի*
7 fhipՎ *ի յարմատոյն*
7 Վ *ի բուսէն*
8 *Մ-Թ հոգի*
8 Վ *հոգին շունչ, որդին բերան, հայր գոյ*
9 *Մ-Թ*k *զօրու*" փխ *զօրութիւնք նորա*, im *զօրութիւնք նոցա*
10 *Մ-Թ հոգի*
11 *Մ-Թ բազուկ, և հոգի՝ ի բազկէն մատն*, t *հոգին բազուկ և բազկէ մատն*
11 abefh *մատամբ*, d *մատեամբ*
13 abՎ *հոգի ի յորդւոյ, և ի հօրէ ել*
14 djp *առնէ* փխ *առնու*
15 *Մ-Թ ի յորդւոյ*, cfh *յորդոյ*
15 fh չիք *'ասէ ինքն տէր... առնու.'*
15 Վ *յիմէ*
16 *Մ-Թ* չիք *որդի*
16 cfh *հոգոյն*
16 *Մ-Թ ըստ որում* փխ *ըստ այնմ*
16 eijՎ *թէ որ ի նմայն*
16 ij *ծնեալն է*
17 ch *հոգոյն*
17 cdՎ *արեգակն*
17 ad *աւրինակ*
18 f *անհաս, Վ անճառ, անհաս և անձև*
18 Վ *մին*
19 m *բնութիւնսն*
19 t *մերովք*
20 *Մ-Թ ասել ունել*
20 fh *թարքմանի*
20 *Մ-Թ* չիք *և ել ասի*
21 *Մ-Թ ասել, ունել*
21 cdfh *հոգոյ*
21 t չիք *'ունել...զիւր*

որդիականն։ Հոգի եւ ասի ի Հօրէ և յորդւոյ, զի ոչ ունի զանձն Հօր և զանձըն որդւոյ, այլ զիւր Հոգիական անձն։

Այս երեք անուն հաւասար նշան երից անձանցն, ոչ մի միոյ վերոյ, և ոչ մի միոյ ներքոյ. այլ հաւասար միմեանց ամենայնիւ։ Ոչ բնութեան նշան երից մի՛ լիցի ումեք իմանալ այնպէս, այլ նշան երից անձանց և մի բնութեան. ոմն Հայր, զի ոչ յայլմէ հօրէ է և ոմն որդի, զի ի Հօրէ է. և ոմն Հոգի, զի ի Հօրէ և յորդւոյ։ Հայր անծին ասի, զի ո՛չ յումեքէ է. և որդի ծնեալ, զի ի Հօրէ է. Հոգի ոչ ասի որդի կամ ծնեալ, զի մի՛ երկու եղբարք թուեսցին. և ոչ երկուորի ընդ որդւոյ, զի մի՛ դուստր կարծիցի. և ո՛չ յորդւոյ միայն, զի մի՛ թոռն համարիցի։

Դու ընդէ՞ր ծանրանաս, ո՛վ իմաստուն և ճշմարիտ հաւատացեալ, երկու պատճառ իմանալ։ Բարսեղ հարցանէր զեղբայր իւր զԳրիգոր. «Զի՞նչ է սկիզբն սկզբանն»։ Եւ նա ասէ. «Առաջին պատճառն երկրորդ պատճառին»։ Ո՛վ սիրելի, ո՞ւմ այլ ումեք իցէ պատճառ Հայր և որդի, եթէ ո՛չ Հոգւոյ իւրոյ»։ Գրիգոր Աստուածաբանն զՊղատոնի բանն առնու, որ գրեալ է, «Որպէս խառնարան յեղեալ, զեղեալ, զխառնն և զեղեալն ասել՝ խոտէ, բայց զառաջինն և զերկրորդ պատճառն ասել՝ հաւանի»։ Դու ընդէ՞ր ըմբոստնուս խոստովանողդ ի յերկու պատճառն, զի ոչ եթէ անուանքս կարգս զանազանէ զմի բնութիւն, այլ և այլ նշան է անձանցն երից ի մի բնութիւն, զի սահման և կարգ խոստովանութեան հաւատոյ՝ անխառնակ և անշփոթ մնասցէ. մի աստուածութիւն, որ զամենայն ըստ կարգի և սահմանաւ յօ-

1—2 t չիք 'որդիական... հոգիական անձն'
1 cdfh յորդոյ
2 cdfh որդոյ
2 j հոգիականն
3 m այսպէս երեք անուն,
3 Մ-Թ անուանք
3—4 Մ-Թ ոչ միոյ միոյ ի վերոյ և ոչ միոյ միոյ ի ներքոյ
4 Մ-Թ ի ներքոյ
4—5 Մ-Թ բնաւ նշան երիցութեան
5 tՎ երիցն
5 m չիք ումեք
5 Մ-Թ միոյ
6 Մ-Թ չիք հօրէ
6 Մ-Թ ոմն փխ և ոմն
6 t չիք 'ոմն որդի... ի հօրէ է'
6—7 cdjp չիք 'և ոմն հոգի, զի ի հօրէ և յորդւոյ', dfh յորդոյ
7 cdjp զի ի հօրէ և յորդոյ (dj յորդւոյ, p որդւոյ)
7 abehՎ չիք է
7 h ասէ
7 i ումեքէ
7 mt չիք է
7 abՎ չիք է
8 k չիք 'զի ի հօրէ... ծնեալ'
8 Մ-Թ չիք որդի կամ
9 i զի փխ զի մի՛
8 i ԱԲԳ երկու որդի փխ երկուորի
9 cdfh որդոյ
10 cfh յորդոյ, diՎ որդւոյ
10 i զի թոռն մի՛ համարիցի
12 e պատճառս
12 m զեղբայրն
12 abcdefhjm գրիգոր
13 abcdefhjkm ի սկզբանն
13 i պատճառէն
14 t չիք ոչ
14 c հոգոյ, ip որդւոյ փխ հոգւոյ, fh հոգի
15 bcd աստուածաբան
16 Վ խառնարանն
16 ip եղեալ
16 Մ-Թ զխառն
16 Վ և զեղեալ ասելն
17 Մ-Թ զառաջինն
17 Վ պատճառ ասելն, i ասելն
17—18 a ընբոստնուս, ip ըմբոստանաս
18 Վ զերկու պատճառն
18—19 cdem զանազանի
19 Վ բնութիւնն
19 Մ-Թ յայլ և այլ. այլ փխ այլ և այլ bcdjmp յայլ և յայլ
19 Վ նշանակ փխ նշան
19 Մ-Թ-Վ անձանց
19 Վ երիցն
20 bcdm աստուածութիւնն

րինեալ է. զի մի՛ ի միտս խոստովանողին խառնակութիւն և շփոթումն անկցի։ Քեզ ասեմ, որ լսողդ ես, զիա՞րդ քո միտքդ ի քեզ կայ, և յայլում միտք ծնանի։ Եթէ զայս ոչ իմանաս ընդէ՞ր քննես վասն աստուծոյ և ընդդիմանաս գրոց. եթէ, զլոյսդ, որ ի խելս քո ծագէ, և զհանճար, որ յերի կայ բանիդ և զբղխումն սրտիդ ո՛չ կարես տեսանել և զոլորեալն ի ձայնդ, աստուծոյ հակառակ և գրոց՝ մի՛ ջանար իմանալ ինչ։

Եւ դարձեալ ասեմ՝ բանդ քո ի մտա՞ցդ է, թէ ի հոգւոյդ։ Թէ ի մտա՞ցդ է առանց հոգւոյդ՝ անհոգի է քո բանդ. և թէ ի հոգւոյդ է առանց մտացդ՝ անմիտ է քո բանդ. ապա թէ ի հոգւոյդ է և ի մտացդ, հոգևոր և մտաւոր է քո բանդ, որպէս և է. ապա թէ շնչաւոր իմացիւք է քո բանդ, վայրապար է։

Զաստուծոյ բնութեանն միութիւն և զանձին բաժանումն, մարմնական օրինակաւ մի՛ տեսաներ, զի մի՛ գայթակղիցիս. զհո՛գին եթէ ի հօրէ միայն ասիցես ել և բղխումն, անբան է հոգին. և թէ յորդւոյ միայն ասիցես, օտար սկիզբն է. իսկ եթէ ի հօրէ և յորդւոյ ասիցես, ճշմարիտ է, որպէս և է։ Եւ զոր օրինակ հայրութիւնն աստուծոյ ո՛չ է մարմնական, և ոչ որդիութիւնն, նոյնպէս և ո՛չ ելողութիւնն։ Բառ է, զաւառի սովորութեամբ ասեն. այս անուն յայս բանէ ի դուրս եկն ողջ, ի յայս իրացս բաժանեցաւ ողջ, ոչ յիւրմէն ի տեղն մնաց, և ոչ յայլոց ի հետ եբեր, և ո՛չ յայլոց կլտրեաց, և ո՛չ յայլոց հատաւ. թէպէտ ողջ ասա, թէպէտ յստակ ասա, թէպէտ պարզ ասա։

2 d լսաւղդ
2 acdej միտք
2 Մ-Թ այլում
3 t չիք ոչ, Վ իմանաս ոչ
4 p լոյսդ
4 i ի խելքդ ծագէ
4—5 aefhk ԱԲԳ յերիկամի, b զհանճար երիկամի cdjm որ ի յերիկամի, ip որ ի երիկամի, p ի երիկամի բղխումն փխ որ յերի կայ
5 aefhjmp բղխումն, b քխումն սըրտիտ, cd բխումն սրտիդ
5 Մ-Թ չիք և
6 ip չիք իմանալ
7 i եւ դարձեալ բունուոր ասեմ (sic), p եւ դարձեալ պունուոր ասեմ (sic)
7 b բան քո
7 i թէ ի մտացլ է
7—8 tՎ չիք ՚ի մտացդ է, թէ ի հոգւոյդ՚
8 cdfh հոգոյդ... հոգոյդ, e ի հոգւոյդ է
8 cd հոգոյդ
8 Վ առանց մտաց
8—9 m չիք ՚և թէ ի հոգւոյդ... քո բանդ՚
9 e անմիտք
9 fh ի հոգոյդ
9 abՎ ի հոգւոյդ և ի մտացդ, cd ի հոգոյդ և ի մտացդ
9 efh ապա թէ ի հոգւոյդ (h հոգոյդ) և ի մտացդ է
10 bcdej բանսդ
11 abcdfhj բնութեան
12 abd աւրինակաւ
12 Մ-Թ մի մի՛ փխ մի՛
12 Մ-Թ մի՛ գայթագղիցիս, c մի՛ գայթագղեսցիս, Վ մի՛ գայթակղեսցիս
12 abcdhkmp հոգի, Վ հոգին
13 p միայնակ
13 c բխումն
13 Վ եթէ
13 cfh յորդոյ
14 ad աւտար
14 Վ իսկ թէ
14 cfh յորդոյ
14 tՎ չիք ասիցես
15 ad աւրինակ
15 ah հայրութիւն
16 aefhՎ որդիութիւն
16 eՎ ելողութիւն
16 ԱԲԳ զաւառի փխ զաւառի
16 tՎ սովորութիւն
17 tՎ չիք ասեն
17 abfh բարժանեցաւ
18 d այլոց
29 ijp չիք թէպէտ պարզ ասա

Այսպէս Հոգի ի Հօրէ և յորդւոյ, ո՛չ ինքն պակասէ ինչ և ո՛չ ի նոցանէ Հատած։ Լի՛ կատարեալ աստուած Հայր, լի՛ կատարեալ աստուած որդի, լի՛ կատարեալ աստուած Հոգի սուրբ. մի աստուածութիւն կատարեալ յերիս անձինս Հաւասար ամենայնիւ։

Այս է խոստովանութիւն ուղղափառ եկեղեցւոյ։ Սուրբն Դիոնեսիոս զելողական անունն ի վերայ երրորդութեանն Հաւասար դնէ՝ Հօր և որդւոյ և Հոգւոյ, այսպէս ասելով, «Ելողական անուն, իմաստնացուցիչ, զօրացուցիչ, կենդանացուցիչ», և որ յայս ոճիս է. և դարձեալ՝ իմաստնացուցչութիւն, զօրացուցչութիւն, կենդանացուցչութիւն, և որ այլ ըստ այսմ։

Դարձեալ աղաչեմ զքեզ մի՛ կարծեր աստուծոյ անուն ըստ բնութեան, այլ ըստ խնամոցն՝ որ առ մեզ։ Ապա թէ ո՛չ՝ լոյս ասի աստուած և կեանք. զի՞նչ կամիս ասել, այսպիսի՞ լոյս և կեանք, որպէս և մեք տեսանեմք և կեանք. կամ զքո Հոգւոյդ անունն և զէութիւնն կարե՞ս գիտել. այս խոստումն Հանդերձելոցն է, յորժամ յայտնի այն, «զոր ակն ո՛չ ետես, և ունկն ո՛չ լուաւ, և ի սիրտ մարդոյ ո՛չ անկաւ, զոր պատրաստեաց աստուած սիրելեացն»*։ Աստ մի՛ խնդրեր աւելի, զի մի՛ յամենայնէն անկանիցիս։

## ԾԳ

### Վասն վախճանի սուրբ վարդապետին Վանականայ

Աստուածահաճոյ և մեծ վարդապետն Վանական՝ Հասեալ ի բարւոք ծերութիւնն, ալևորեալ և լի աւուրբք՝ ըստ օրինակի նահապետին Աբրահա-

* Ա. Կորն. Բ, 9.

1 i այս փխ այսպէս
1 cfh յորդոյ, d որդոյ
1 c ոչ ինչ պակասէ
2 afh աստուածահայր
3 Մ-Թ և մի երկու ՁՁ չիք կատարեալ
4 Վ ամենայն ամենայնիւ
5 h եկեղեցոյ, tՎ հաւատոյ փխ եկեղեցւոյ, i այս է ուղղափառ խոստովանութիւն եկեղեցեաց
5 abdefhm դիոնեսիէս, c դիոնէսիոս
6 Վ երրորդութեան
6 cdfh որդոյ և հոգոյ
7 Վ անունն
7 Վ մի երկու ՁՁ իմաստացուցիչ
7 bcdijp չիք զօրացուցիչ, tՎ չիք 'զօրացուցիչ, կենդանացուցիչ'
8 cdj ոճովիս է
8 Վ և մի երկու ՁՁ իմաստացչութիւն, ip իմաստչութիւն
9 Վ և մի երկու ՁՁ զօրացչութիւն, t չիք զօրացուցչութիւն
9 Վ և մի երկու ՁՁ կենդանացչութիւն
9 h սմա փխ այսմ, m յայսմ
10 hkm զձեզ փխ զքեզ
10 afhkm մի կարծիք
10 Վ զաստուծոյ անունն
11 e չիք աստուած
11—12 Մ-Թ կեանք. որպէս մե՞րս՝ զի տեսանեմք և կեանք, ո՛չ, զի ոչ փխ կեանք. զի՞նչ կամիս ասել. այսպիսի՞ լոյս և կեանք, որպէս և մեք տեսանեմք և կեամք, կամ
12 ah մեք տեսանինք, ij մեք տեսանէմք և կեամք, km որպէս մեք տեսանիմք և կեանք, p տեսանիմք և կեամք, st միք տեսանեմք և կեանք
13 Մ-Թ և մի երկու ՁՁ ո՛չ, զի ոչ փխ կամ
13—14 cd խորհուրդն փխ խոստումն, ijp խորհուրդ
14 afhm յայն
15—16 stՎ սիրելեաց
16 afh մի՛ խնդրիր
16 abfmՎ յամենէն, i յամենայնէ
17 bcd վաղջանի, no վաղճանի
17 no չիք սուրբ
17 egtՎ վանականին, o վանականի
18 bcdfhjlnՎ բարւոք
18—19 begiopՎ ծերութիւն, cdlst ծերութեան, j ծերութեանն
1 abd աւրինակի
6 b աբրաամու

մու, առ տէր փոխեցաւ, զընթացս կատարեալ և զհաւատս պահեալ ուղղափառ խոստովանութեամբ, որ ի սուրբ Երրորդութիւնն և ի տնօրէնութիւնն Քրիստոսի։ Ի տղայական տիոցն աստուածագործ ծառայութեամբ կեցեալ, բազում քրտունս և աշխատութիւնս ցուցեալ ի բանն վարդապետական, բազում որդիս ի փառս ածեալ, և ազգի ազգի ճգնութիւնս կրեալ, և ըսպանեալ զանդամս երկրաւորս, ըստ խրատու առաքելոյն՝ զմարմինն ի խաչ հանեալ կարեօք և ցանկութեամբքն հանդերձ։ Զի նման էր այրն աստուծոյ անօսրաթև թռչնոյն մեղուի, որ՝ թռչելով ի վերայ բազում և ազգի ազգի ծաղկանց, ժողովէ ի նոցանէն զպիտանին և զօգտակարն ի պէտս ինքեանց և ի կերակուր, և ի բժշկութիւն թագաւորաց և ռամկաց։ Նոյնպէս և սա յանձն իւր հաւաքեալ զամենայն սրբոցն զվարս և զառաքինութիւնս, անկանէր զգործ խորսխին ի պէտս անձին իւրոյ և յայլոց օգուտ. քանզի ստացեալ ունէր զարդարութիւնն Աբելի, և զգեղեցկութիւնն Սեթայ, և զյոյսն Ենովսայ, և զհաւատն Ենովքայ, և զկատարելութիւնն Նոյի, և զհաւատն և զգործն Աբրահամու, և զհնազանդութիւնն Իսահակայ, և զաստուածատեսութիւնն Իսրայէլի, և զողջախոհութիւնն Յովսեփու, և զհամբերութիւնն Յոբայ, և զհեզութիւնն Մովսիսի, և զնախանձն Փենեհեսի, և զկուսութիւնն սրբութեան Յեսուայ, և զանմեղութիւն յստակմտութեանն Սամուէլի, և

1 o զընթացս իւր, stՎ զընթացսն
2 Մ-Թ և մի քանի ՁՁ երրորդութիւն
3 o աստուածածառայութեամբ, i պայծառութեամբ փխ ծառայութեամբ
4 Մ-ԹՎst կացեալ փխ կեցեալ
5 bcdenpstՎ և բազում
6 abcdehjlmno զերկրաւորս
6 t առաքելոցն
6 stՎ և զմարմինն
7 abd կարեաւք
7 noՎ ցանկութեամբ
7 stՎ սուրբն փխ այրն
7 g սոցա փխ աստուծոյ
8 a աննօսրաթև,
8 stՎ սրաթռիչ փխ անօսրաթև
8 Մ-Թst թռչնոցն
8 h ի վեր
9 stՎ ի նոցանէ
9 ad զաւգտակարն
10 hm նմանապէս
11 d հաւաքեալ
11 Վ սրբոց
11 g առաքինութիւնս
11—12 bdm անգանէր, eg անագանէր, o ագանէր, stՎ արկանէր
12 ost խարսխին
12 fghi այլոց
12 bd աւգուտ
13 g զարդարութիւն
13 no յաբելի, i հաբելի
13 Մ-Թ և մի երկու ՁՁ զգեղեցկութիւն
14 Մ-ԹՎ և մի երկու ՁՁ զհաւատն
13—14 t չիք 'Սեթայ... զկատարելութիւնն'
15 n աբրաամու
15 efh զհնազանդութիւն
15 tՎ սահակայ
15—16 c զածութիւնն, e զաստուածտեսութիւն
16 a իղի, bcd իլի, h եղիայի փխ Իսրայէլի
16 b յօսեփու, s յովսեփայ
16 afh զհամբերութիւն
17 afh զհեզութիւն
17 acdjՎ մովսէսի, b' մօսէսի
17 ip զնախանձայոյզն,
17 c փենէեզի, abd փենէեսի, ipstՎ փէնէհեզի, n բէնէեսի
17 Վ չիք և
17 abdfghl զկուսութիւն, t զհեզութիւնն փխ զկուսութիւնն
18 abdgl սրբութեանն, sՎ չիք սրբութեան
18 d յեսուեայ
18 noՎ զանմեղութիւնն
18 cdegh յստակմտութեանն, no յստակմտութեան, Վ յիստակմտութեանն, ip յստակութեանն
18 n սամուէլի

զխոնարհութիւնն սրտին Դաւթի, և զիմաստութիւնն Սողոմոնի, և զհամարձակութիւնն Եսայեայ, և զվրէժխնդրութիւնն Եղիայի, և զախտակցութիւնն Երեմիայի. ըստ Դանիէլի և Եզեկիէլի ի գերութիւն երթեալ ընդ ժողովրդեանն աստուծոյ, ըստ Զօրաբաբելի և Յեսուայ նորոգող լեալ տաճարի աստուծոյ, ըստ Պտղոմեայ բազում գրեանս հաւաքեալ յազգաց և ի լեզուաց. Յովհաննու նման յանապատի բնակեալ և տեառն հրամանաւ զապաշխարութիւն քարոզեալ, ի հին և ի նոր կտակարանս վայելեալ. Պետրոսի հանգոյն զտէրն որդի աստուծոյ դաւանեալ և գլուխ եկեղեցւոյ լեալ։ Ընդ որդւոցն Որոտման զհոգևորն որոտացեալ և աստուծաբանեալ, ընդ Պօղոսի և յընդհանուրս սերմանեալ զկենաց բանն և գրով հաստատեալ. ընդ վարդապետս եկեղեցւոյ հանդիսացեալ և զգայլսն վանեալ. կիսոց կաթն ջամբեալ և կատարելոցն զհաստատուն կերակուրն։

Արդ նա որ զայս ամենայն բարիս ստացեալ ունէր յանձին, ինքն առնէր և այլոց զնոյն վարդապետէր, առ տէր փոխեցաւ, զբնութեանս պարտն հատուցեալ։ Եւ եղև վախճան նոր այսպիսի օրինակաւ։

Ի վանսն՝ զոր իւր իսկ շինեալ էր, որ կոչի Խորանաշատ վասն յոլով եկեղեցեացն, որ ի նմա, ընկալաւ զանունն, որ կայ հանդէպ Երգեվանից բերդին և ի թիկանց Գարդմանայ, առնէր նա շինուածս երևելիս, զաւիթ

1 Ս-Թ և մի քանի ՁՁ զհեզութիւն սրբութեան փխ զխոնարհութիւն
1 i չիք սրտի, j սրտի
1 g զիմաստութիւն
1 Ս-ԹՎ և մի երկու ՁՁ սողովմոնի, b սաղոմոնի
1—2 Վ զհամարձակութիւն
2 n յեսայեայ
2 Ս-Թ և մի երկու ՁՁ զվրէժխնդրութիւն
2 af զախտակցութիւն
3—4 t չիք 'ըստ... ըստ'
3 h չիք և Եզեկիէլի, st ըստ եզեկիէլի
3—4 no 'երթալ ժողուրդեանն (sic) p գնացեալ փխ երթեալ
4 amn յեսովայ, b յեսովա
4 beijnop տաճարին
5 t գրեան
5 dno հաւագեալ
5 abedfhjlmnotՎ չիք ի
6 Ս-Թ Յովաննու, gn յովաննու,
8 a հանգւոյն
8 b չիք 'և գլուխ եկեղեցւոյ լեալ'
8 ghno եկեղեցոյ
9 abedfghno որդոցն
9 t որոտմանց
9 nop և զհոգեորն
9 Ս-Թ որ ոտացել փխ որոտացեալ, stՎ որսացեալ փխ որոտացեալ no աստուածաբան լեալ
10 e ըստ Պօղոսի
10 Ս-Թ և մի երկու ՁՁ ընդ հանուրս, bcd յընթանուրս, st յընթհանուր, Վ յընդհանուր
10 h զկենարար բանն, no կենաց բանն
11 ghno եկեղեցոյ
11 st կիսոցն
12 t չափեալ փխ ջամբեալ
13 no չիք նա
13 ij չիք զայս
13 bcdi զամենայն փխ զայս ամենայն
13 fh բարութիւնս
13 n յանձն, o զանձն
13 Ս-Թegl յանձին իւրում
13 l ինքն ունէր
14 m այլոց վարդապետէր, st այլոց ուսուցանէր փխ այլոց զնոյն վարդապետէր
14 Վ չիք զնոյն
14 iopstՎ զբնութեան
14 iՎ զպարտսն, o պարտսն, st պարտս, p զպարտ
15 b վաղխճան, cd վաղջան, Վ վաղճան
15 adn աւրինակաւ
16 imp ի վանքն
16 h չիք իւր
16 Ս-Թ չիք իսկ
16 stՎ էր շինեալ
16 Վ և վասն
18 abcdefghmnstՎ գարդմանոյ
18 ho երևելի

*շինելով ի կոփածոյ վիմաց ի դուռն մեծ եկեղեցւոյն, զոր իւր իսկ շինեալ էր. և զբան վարդապետութեանն ուսուցանէր այնոցիկ, որ ժողովեալ էին առ նա յամենայն գաւառաց։*

*Յաւուրս սուրբ աղուհացիցն հիւանդացաւ նա հիւանդութիւն, որ և մեռաւ իսկ։ Եւ նախ քան զաւանդել սուրբ հոգւոյն իւրոյ ի ձեռս աստուծոյ ըստ գրեցելոյն՝ կոչեցեալ զեղբարսն, քաղցր և ախորժ բանիւ մխիթարէր զնոսա և աղաչէր կալ հաստատուն ի կարգս և ի կրօնս ուղղափառութեան և աստուածապաշտութեան։ Եւ ապա քաղցր շնչմամբ մաքուր հոգին արձակեցաւ ի կապանաց մարմնոյն, արեգ ամսոյ ի տասն՝ ըստ նոր յեղանակի ճշմարտութեան, և յութ և տասն մարտի, ըստ հռոմայեցւոցն, երկու օրով յառաջ քան զգարնանամուտն, յաւուր շաբաթու, յորում աւուր յիշատակ էր երանելւոյն Կիւրղի Երուսաղէմի հայրապետին, որ զընթերցուածսն կարգեաց և զԿոչմանն գիրսն գրեաց և զվկայութիւն սրբոյն Օրէնդի և վեց եղբարցն իւրոց, որք նահատակեցան ի Մաքսիմիանոսէ ամբարշտէ։ Նոցին վարուցն լեալ հետևող, վասն այնորիկ և յիշատակի նոցին արժանացաւ։*

*Եւ ժողովեցան անթիւ բազմութիւնք ի թաղումն նորա, և մեծաւ սգով և տրտմութեամբ ողբային յոյժ, զի զրկեցան ի լուսաւոր վարդապետութե-*

1 k *ի կոփածու*
1 cdghn *եկեղեցոյն*, i *մեծի եկեղեցւոյն*
2 hՎ *վարդապետութեան*
2 Մ-Թ *ժողովէին*, no *որք ժողովեալ էին*
4 i *աւուրս*
4 stՎ չիք *սուրբ*
4 Մ-Թ չիք *նա*
4 m *հիւանդութիւն մեծ*
4–5 t չիք *հիւանդութիւն, որ և մեռաւ*
4—5 l *մեռաւ նա իսկ*
5 e չիք *քան*
5 afh *զյաւանդել*, d *զաւանտել*
5 cdn *հոգոյն*
5 stՎ չիք *իւրոյ*
5 gn *ի ձեռն*
6 stՎ *ըստ գրեցելումն*
6 o *կոչեալ*
6 n *զեղբայրսն*
7 Մ-Թ և մի երկու ՁՁ *կեալ* փխ *կալ*, stՎ *հաստատուն կալ*
7 Վ չիք *և*
8 cdj *յաստուածպաշտութեան*, n չիք *'և աստուածպաշտութեան'*
8 Մ-Թ և մի երկու ՁՁ *հոգւոյն*
9 Մ-Թ *արեգի*, stՎ *յարեգ ամսոյ տասն*, ijlm *ամսոյն*
9—10 l չիք *'ըստ նոր... ճշմարտու'-թեան*, cd *յեղանակ*, efgh *յեղանակի*, p *եղանակ*, Վ *եղանակի*
10 bcdg *ճշմարտութեանն*
10 Մ-Թ *մարտի ի տասն և ութ*, h *ի տասն և ութ մարտի*, abnopst *ի ժը մարտի*, eg *ի ժբ* (փխ *ժը*) *մարտի*
10 Մ-Թ և մի երկու ՁՁ չիք *'ըստ հռոմայեցւոցն*, bcdgnop *հռոմայեցոցն*, h *հռովմայեցոցն'*
10 Մ-Թ *ութ* փխ *երկու*, d *բս*
10 l չիք *'երկու օրով... զգարնանամուտն'*
11 Վ *զգարնանամուտ*
11 ijp *յորում (j աւուր) էր յիշատակ*
12 Մ-Թ stՎ չիք *երանելւոյն*, abcdfghij no *երանելոյն*
12 dj *յերուսաղէմի*, stՎ *երուսաղեմայ*
12 st *հայրապետի*
12 Մ-Թ և մի քանի ՁՁ *զընթերցուածն*
13—14 l չիք *'և զվկայութիւն... Մաքսիմիանոսէ ամբարշտէ'*
13 no *որէնդի*
13—14 acjoՎ *եղբարց*, h *զվեց եղբարց*, n *եղբայրց*
14 Մ-Թ *թագաւորէ* փխ *ամբարշտէ*
14 ip *նոցունց*
15 Մ-Թ և մի երկու ՁՁ *վարուց*
14 l չիք *'տէ։ Նոցին... արժանացաւ'*
15 dgj *յիշատակ*, ip *յիշատակաւ*, no *յիշատակի*
15 abcdfghjm *նոցուն*, ipstՎ *նոցունց*
15 o *արժանաւորեցաւ*
16 h *ժողովոցն* (sic)
16 n *բազումք թաղումն*
17 abcdՎ *վարդապետութենէ*

*նէն երանելւոյն և ի հոգեշահ բանիցն։ Եւ տարեալ թաղեցին զնա ի գլուխ վանիցն յարևելից կուսէ, մօտ ի փոքրագոյն եկեղեցին, ուր էին գերեզմանք աղքատացն, զի ինքն այսպէս հրամայեաց։*

*Անդր էր և եպիսկոպոս գաւառին տէր Սարգիս բազում վարդապետօք և երիցամբք։ Ձոգաւ և կաթողիկոսն Աղուանից տէր Ներսէս, և եպիսկոպոսն տէր Յովհաննէս յետ միոյ աւուր յիշատակի նորա. և ողբացեալ և լացեալ յոյժ ի վերայ գերեզմանի նորա, և մխիթարեալ զեղբարսն որ անդ՝ դարձան յիւրաքանչիւր տեղիս։*

*Եւ կալաւ զառաջնորդութիւն վանիցն եղբօրորդի նորա Պօղոս քահանայ, և զվարդապետական ուսումն՝ Գրիգորիս վարդապետն, նորին աշակերտ և ազգական։*

*Եւ այս եղև ի թուին եօթն հարիւր։ Արդ աղօթիւք նորա տացէ աստուած խաղաղութիւն ամենայն աշխարհի և մեզ մասն ի յարութեան նորա և ի պսակին։*

## ԾԴ

### Վասն Յովհաննիսի Գառնեցւոյ

*Այր ոմն առաքինի, զարմանալի վարուք, գործող պատուիրանացն աստուծոյ և լծաբարձ ի մանկութենէ, արժանացեալ քահանայական պատուոյ, կուսակրօն, Յովհաննէս անուն, ի քաղաքագիւղէն Գառնւոյ, ուր զարմանալի սարաւոյթն է Տրդատայ, ի սուրբ ուխտէն Այրիվանաց։ Սա ի մանկական*

1 abcdfghst *երանելոյն*
1 a *վանիցն* փխ *բանիցն*
1 t *ի գլուխս*
2 ijp չիք *ի*
2—3 stՎ *գերեզմանքն աղքատաց*
3 l *այնպէս*
4 stՎ *եպիսկոպոսն*
4 jstՎ *վարդապետիւք*
5 afh *երիցամք*, g *երիցամբքն*
5 o *չոքաւ*
5 cdijp չիք *տէր*
6 Մ-Թ *Յոհաննէս*, cehp *յոհաննէս*
6—7 no չիք *և լացեալ*
7 m չիք *յոյժ*
7 sՎ *զեղբարս*, t *զեղբայրս*
9 bcdno *զառաջնորդութիւնն*
10 fglst *վարդապետական*
10 cip *գրիգոր*
10 ilstՎ *վարդապետ*
12 aijkm *չ̅ թուին*, bcdf *չ̅ թվին*, l *յչ̅ թուին*, h *յեօթ հարիւր թվին*, n *յեւթն հարիւր թվին*, Վ *յեօթն հարիւր թուին*, eg *յչ̅ճ̅ թվին*
12 i *աղօթք*, n *աղաւթիւք*
12 fh *տէր աստուած*, l *տէր աստուած տացէ*
13 abcefghijlnstՎ չիք *ամենայն*
12—14 d չիք *'Արդ աղօթիւք նորա… ի պսակին'*
13 g *յարութիւնն*
13—14 i *ի յարութեան նորա եղիցի ամէն*
13—14 no չիք *'և մեզ մասն… ի պսակին'*
15 i *վասն յոհաննէս վարդապետին գառնեցւոյ է պատմութիւնս*, p *վասն յովհաննէս գառնեցւոյ վարդապետին պատմութիւն*, l *վասն մահուան յովաննէս գառնեցւոյ*
15 Մ-Թ *Յովանիսի*, em *յովաննիսի*, n *յովհանիսի*, o *յովհաննէսի*, p *յովհաննէս*, Վ *Յովհաննու*
15 bcd *գառնեցոյ*, osՎ *գառնեցւոյն*, h *գանձակեցոյ* փխ *գառնեցւոյ*
16 stՎ *և զարմանալի*
16 ctՎ *վարիւք*
16 Վ *պատուիրանաց*
18 Մ-Թ *Յովանէս*, abcdefjlmnop *յովաննէս*, i *յոհաննէս*, st *յոհանէս*
18 cdfj *ի քաղաքագեւղէն*, ip *ի քաղաքագեղէն*, stՎ *ի գիւղաքաղաքէն*
18 Մ-ԹՎ և մի քանի ՁՁ *գառնոյ*
19 Մ-Թ և մի երկու ՁՁ չիք *է*
19 ip *այրիվանացն*
19 ip չիք *սա*
19 stՎ *ի մանկագոյն*

տիոցն արհամարհեալ զամենայն ինչ կենցաղոյս, լքեալ զազգ և զտուն, յանապատ տեղիս բնակէր. սիրէր առանձին լինել և անզբաղապէս խօսել ընդ աստուծոյ՝ տուեալ զինքն ազգի ազգի ճգնութեան, պահոց և աղօթից գետնատարած անկողնօք և անհանգիստ աշխուժութեամբ՝ շրջելով ի տեղւոջէ ի տեղիս և լուսաւորելով զպատահեալսն։

Տուան նմա և շնորհք բժշկութեանց, զի ձեռն դնելով և աղօթելով՝ բըժշկէր զբազում ախտաժէտս։ Խնդրէին ի նմանէ և գիր պահպանման անձանց իւրեանց, և նա անյապաղ տայր ամենայն խնդրողացն։ Եւ զայս ո՛չ միայն հաւատացեալքն առնէին, այլ և բազումք յանհաւատիցն։ Եւ նա գրելով զանուն սրբոյ երրորդութեանն և խորհրդական բանս աղօթից, տայր նոցա։ Եւ նոցա առեալ հաւատով՝ կապէին յանձինս իւրեանց։

Վասն սորա բազումք բազում ինչ պատմէին, բայց առաւել հարազատըն մեր և սքանչելին Վարդան վարդապետն, որոյ բանքն արժանի էին հաւատարմութեան, զի նոքա սիրով կապեալ էին ընդ միմեանս։ Զի մեք մարմնով զնա ոչ տեսաք վասն հեռաւորութեան, նա ի մխիթարութիւն մեզ պատմեաց ինչ ի վարուց նորա մասնաւոր և ասաց. թէ՝ «Ինքն իսկ Յովհաննէս ասաց մեզ. թէ՝ «Չոգայ ես ի սուրբ քաղաքն Երուսաղէմ երկրպագել տնօրինական տեղեացն, և յամեցի անդ աւուրս՝ իջաւան կալեալ ի սուրբն Յակոբ։

1 stՎ արհամարհեաց
1 stՎ ինչս
1 stՎ զազգս
2 ip առանձին տեղիս
2 m լինիլն
2 imo խօսիլ
3 h ընդ սոցա փխ ընդ աստուծոյ
4—5 al ի տեղւոջ, bcdefghi տեղոջէ (չիք ի), jnpst տեղւոջէ (չիք ի)
5 cdj տեղիս (չիք ի)
6 st տուաւ
6 cdfh նմա շնորհք
6 h բժշկութեան
6 stՎ զի միայն
6 stՎ չիք և աղօթելով
7 fho զամենայն փխ զբազում
8 d յանյապաղ
8 ip զամենայն, st չիք ամենայն
8 Վ խնդրողաց
9 d անհաւատիցն, Վ յանհաւատից
9 Մ-Թ և մի երկու ՁՁ նաև փխ Եւ նա
10 ij զանունն
10 hn սուրբ, o ամենասուրբ
10 eՎ երրորդութեան
10 no չիք աղօթից
11 o չիք և նոցա, stՎ նոքա փխ նոցա
12 ip վասն որոյ, n չիք սորա
12 io չիք բազումք
12 n բազումք փխ բազում
12 b պատմեցին
12—13 Մ-Թ և մի քանի ՁՁ սուրբ հարազատն փխ հարազատն
13 Մ-Թ և մի երկու ՁՁ սքանչելի վարվարդապետն Վարդան, tՎ չիք վարդապետն
13—14 stՎ չիք 'հաւատարմութեան... կապեալ էին'
14 Մ-Թ և մի երկու ՁՁ և մեք փխ զի մեք
15 bcdstՎ հեռաւորութեանն
15 t նաև փխ նա ի
15—16 t մխիթարութիւն մեր պատմէր
16 b չիք 'մասնաւոր'
16—17 Մ-Թ Յովանէս, cdefilmnp յովաննէս, t յոհաննէս
17 n չիք ասաց մեզ
17 cd յեմ, j յերուսաղէմ
17 lo երկիրպագանել
18 Մ-Թ տնօրինականացն փխ տնօրինական տեղեացն, o տնօրինական տեղիսն, stՎ տնօրինական տեղեաց
18 Մ-Թ տնօրինականացն Քրիստոսի աստուծոյ մերոյ փխ տնօրինական տեղեացն
18 Մ-Թ աւուրս ինչս, o աւուրս բազումս
18 lm իջաւանս, nostՎ իջեան
18 i իջաւանել փխ իջաւան կալեալ
18—19 histՎ ի սուրբ յակոբն (i յակոբ, st յակօբն)

Եւ ի գիշերի միում կանխեալ նախքան զհարկանել ժամուն աղղարարի, որ յաղօթս զարթուցանէր զամենեսեան. և մինչդեռ աղօթէի ի սուրբ եկեղեցին, վարդապետն, որ իշխանն էր սուրբ Յակոբայ, կոչեաց զիս և ասէ. «Ե՛կ, լո՛ւր զարմանալի իրս, զոր պատմէ քահանայս իմ մանկագոյն»։ Եւ իբրև չոգայ առ նա, կոչեաց զերէցն, որ ետես զտեսիլն զարմանալի, և ասէ. «Արդ ասա՛, զոր յառաջագոյն պատմեցեր ինձ, զի լուիցէ և սա»։ Եւ երէցն սկսաւ պատմել, թէ՝ «Նախ քան զգալդ ձեր յեկեղեցիս՝ էի ես յաղօթս ի վերնատան սուրբ եկեղեցւոյն, և յանկարծակի նկարեալ պատկերն Գաբրիէլի հրեշտակապետի, որ կայ հանդէպ պատկերի ամենասրբուհւոյ աստուածածնին, բարբառեցաւ և ասէ. «Ուրախ լեր բերկրեալդ, տէր ընդ քեզ»*. «Օրհնեալ ես դու ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո»**։ Սկսան և ամենայն սրբոց նկարեալ պատկերքն զնոյն բարբառել ցմեծ ժամս՝ «Ուրախ լեր բերկրեալդ, տէր ընդ քեզ»*...

Եւ իմ զարմացեալ՝ փառս ետու աստուծոյ և քննեալ գտի տոմարական արուեստիւ, զի երեսուն էր այն օր արեգ ամսոյ, և եօթն ապրիլ ամսոյ, և հնգետասան նիսանայ։ Վկայէ այս տեսիլ և ցուցմունք հրաշիցս՝ հայոց անսուտ տօնին, որ ասեմք զօր աւետեաց սուրբ կուսին յերեսուն արեգի, և ապրիլի եօթն, և հնգետասան նիսանու և ոչ որպէս հակառակին

* Ղու. Ա. 28. ** Ղու. Ա. 42

1 e կանխել, t կախեալ փխ կանխեալ
1 fh կանխեալ քան, Մ-Թ յառաջ փխ նախ
2 stՎ յաղօթսն
2 acdefh զամենեսին, n զամենեցուն
2 cd աղօթէին, ip աղօթեաք
3 Մ-Թ և մի երկու ՁՁ սրբոյն
3 acdefhijlmnop յակոբին, n ակոբին
4 e զզարմանալի իրս
4 o չիք իմ
5 d զէրէցն
5 o որ տեսեալ էր զտեսիլն
6 d առաջագոյն
6 stՎ պատմեցերն
7 aijp զգալն
7 ijpstՎ յեկեղեցին
7 hstՎ ես էի
8 c ի վերնատանն, d ի վերնատունն, fh ի վերնատուն, stՎ ի սուրբ վերնատուն
8 dh եկեղեցոյն, stՎ չիք եկեղեցւոյն
9 stՎ չիք պատկերի
9 acdfh ամենասրբուհոյ, no ամենասուրբ
10 nՎ բերկրեալ
10—11 no տէր ընդ քեզ և այլն
11 acd աՀլ ես, fjkl աՀնեալ ես
11 acdf աՀլ է, jkl աՀնեալ է,
11 Մ-Թ և մի երկու ՁՁ յորովայնի
12 l չիք և
12 i սրբոցն
12 no պատկերն
12—13 no չիք 'ցմեծ ժամս... ընդ քեզ', stՎ չիք 'ուրախ լեր... ընդ քեզ'
14 o և իմ իմացեալ փխ և իմ զարմացեալ
14 sՎ չիք գտի
14—15 Մ-ԹՎ տօմարական, ailmn տումարական,
15 m արուեստին, no արհեստիւ, stՎ արուեստիւ գտի
15 ad աւր,
15 i արեգի
15—16 stՎ ապրիլի փխ ապրիլ ամսոյ
15—16 j ամսոյն, l չիք ամսոյ
16 ef Ժէ, Մ-Թ և մի քանի ՁՁ հնգետասան, cdpst Ժէ Վ եօթն և տասն
16 pstՎ նիսան ամսոյ փխ նիսանայ
16 Մ-Թ տեսիլս հրաշից փխ տեսիլ և ցուցմունք հրաշիցս, d տեսիլս, hՎ հրաշիցն
17 i չիք տօնին
17 o ասեմ զօր աւետեացն, stՎ զաւետիք փխ զօր աւետեաց
17—18 acdekl յԼն արեգ, Լ արեգի, no յերեսուն արեգի
18 acdel յէ ապրիլ ամսոյ, no յեօթն ապրիլի, ijmst է (յէ) ապրիլի, noՎ եօթն ապրիլի
18 Մ-Թ և մի երկու ՁՁ չիք 'և հնգետասան (cdijpstՎ Ժէ եօթն և տասն) նիսանայ (stՎ նիսան ամսոյ)

այլ ազգք, և մանաւանդ յոյնք՝ ասելով ի քսան և հինգն մարտի՝ անխորհուրդ»։

Զայս պատմեաց ճշմարտախօս այրն ի հաստատութիւն ուղղափառ հաւատոյս։

Դարձեալ միւս ևս սմին հանգոյն, զոր պատմեալ է սուրբ այրն այն Յովհաննէս։

«Էի ես, ասէ, ի կողմանս Յորդանան գետոյ՝ աղօթելով ի տեղւոջ մկրտութեան տեառն և սրբոյն Յովհաննու Կարապետի»։ Եկին առ իս արք երեք, տաճիկ տոհմաւ, և խնդրէին զկնիք սուրբ մկրտութեանն։ Եւ ես յապաղէի տալ յայլում աւուր, և կամ առցեն յայլոց, զի տեսանէի զնոսա արս խուժադուժս և համարէի կեղծաւորիլ։

Եւ որ աւագն էր ի նոցանէ, պատմեաց ինձ և ասէ. «Մեք ի Զանգիանայ եմք, ի քաղաքէ Պարսից, և եմք մուղրի դենիւ։ Շինեցաք մեք մինարայ մեծ և գեղեցիկ և պատրաստեցաք, որ ինչ պէտք են նաւակատեացն։ Եւ ելի ես ի ծայր գմբեթին ըստ դենին տաճկաց տալ զանարժան ձայնն։ Եւ ահա տեսի յարևելից կուսէ զերկինս պատառեալ և զվայրն լի անբաւ լուսով, և թագաւոր մի ահեղ և զարմանալի՝ յաթոռ փառաց նստեալ, և շուրջ զնովաւ բազմութիւն լուսեղինաց, որք օրհնէին զնա անճառելի ձայնիւ։ Գային նմա յերկրպագութիւն ամենայն ազգք քրիստոնէից իւրաքանչիւր առաջնորդօք ուսմանն, որք զարդարեալ էին երևելի փառօք. և

1 cdijnop այլ ազգ, stՎ այլազգիքն
1 Մ-Թ stՎ մարտի ամսոյ փխ մարտի
1—2 Մ-Թ չիք անխորհուրդ
3 Մ-Թ ճշմարտախորհն, ijp ճշմարտախոհն այն (j այնր), stՎ ճշմարտախոհ այրն աստուծոյ
3 cdij և հաստատութիւն
4 cdjp հաւատոյն
5 cd ամին փխ սմին
5 stՎ պատմեաց
5 lՎ այրն աստուծոյ
5 Մ-Թ d Յովանէս, aceflpm յովաննէս
7 cdijp տեսի ես փխ էի ես, stՎ ես էի
7 cdefh ի տեղոջ
8 Մ-Թ Յովանու, acdeflm յոհաննու, Վ յովհաննու
8 Վ կարապետին
8—9 d արագ գ
9 o ազգաւ փխ տոհմաւ
9 eՎ մկրտութեան
10 Մ-Թ յայլում աւուր տալ, i չիք յայլում աւուր
10 t չիք 'յայլում աւուր... տեսանէի'
10 ijnosՎ և կամ թէ
10 sՎ յայլոց առցեն
11 cdijp չիք արս
11 n կեղծաւորել, oՎ կեղծաւորեալ, st կեղծաւորեալս
12 c և որ օգնէր, d և որ աւգնէր փխ և որ աւագն էր
12 Մ-Թ Զանկիանայ, a գիանգիանայ, o զանգիանու
13 n մենք (sic)
13 acdefh մեք փխ եմք, l չիք եմք
13 i մուղրիք, l մողրի
13 Մ-Թ մեզ փխ մեք, o չիք մեք
13—14 acde մանիրայ, fkm մնիրայ, nop մինարէ, stՎ մինարայ մի մեծ
14 cdehijnopՎ էին փխ են
15 fh գմպեթին
15 Վ ի ծայրն
15 m ընդ դենին, o ի ծայր մինարին ըստ դենին իւրեանց տալ
15 st զանարժանն ձայն
16 afh տեսանեմ, st տեսի ես
16 stՎ բացեալ փխ պատառեալ
16 o ի վայրն
16 i չիք լի
17 s ի վերայ աթոռոյ
17—18 t չիք և շուրջ
18 stՎ բազմութիւնք լուսեղինացն
18 i չիք որք
18 acdf ահնէին, k աւրհնէին
18 o անլռելի փխ անճառելի
19 sf Վ և գային առ նմա (Վ նա)
19 a յերկրպագութիւնն, no չիք յերկրպագութիւն
19 o չիք ամենայն
19 cdjn ազգ
20 Մ-Թ չիք ուսմանն, no առաջնորդք յուսմանն

յորժամ երկրպագէին նմա, ընդունէր զողջոյն նոցա։ Ի վերջոյ եկին այլ ազգ մի, որ կարի առաւել էին փառօք քան զառաջինսն, և առաջնորդքն նոցա կարի զարմանալիք։ Եւ յորժամ եկին և երկրպագին Թագաւորին, նա յարեաւ յաթոռոյն ընդ առաջ նոցա, և համբուրեաց զնոսա՝ առաջնորդօքն իւրեանց, և մեծարեաց քան զամենայն ազգսն։

Եւ մինչ ես հիացեալ կայի զարմացմամբ և ապշեալ, եկն առ իս ի վեր այս աւագ որդի իմ և ասէ. «Ընդէ՞ր յամեցեր, զի քեզ մնան ամենայն ժողովուրդն»։ Հայեցաւ և սա յարնելս, և ետես զնոյն տեսիլ, և եկաց յիմարեալ։ Ապա իբրև կարի յամեցաք, նեղացաւ ամբոխն ընդ յամելն մեր. եկն ել այս կրտսեր որդի իմ և մեղադրէր մեզ վասն յամելոյն մերոյ։ Եւ քանզի անցեալ էր տեսիլն ի գալ սորա, պատմեցաք սմա զպատճառն յամելոյն և զիրս տեսլեանն, և իսկոյն կամեցաք ի բարձանց անտի քարոզել զՔրիստոս ճշմարիտ աստուած և զմեզ քրիստոնեայս։ Սա արգել զմեզ և ասէ. «Որովհետև այդպէս է, իմաստութեամբ գործեսցուք. թէ այժմ քարոզեմք մեք զՔրիստոս, իսկոյն սպանանեն զմեզ ամբոխս տաճկաց և դնեն բարուրս, թէ վասն յանցանաց իրիք սպանաք, և ո՞վ գիտէ զմէնչ, այլ երթիցուք, տացուք նոցա զկերակուրսն, զոր պատրաստեցաք, և ապա մեք երթիցուք ի սուրբ քաղաքն Երուսաղէմ և անդ լիցուք կատարեալ քրիստոնեայք ի ձեռն կնքոյ աւազանին, և մանաւանդ յայնց քրիստոնէից,

1 istՎ զողջոյնն փխ զողջոյն նոցա
1 h ի վերջացեալ եկին (sic)
1 stՎ եկն
2 ad փառաւք, o փառքն
2 stՎ առաջնորդն
2 fh չիք նոցա
3 ip չիք կարի
3 imstՎ զարմանալի
3 d երկրպագութիւն, ehoՎ երկիր պագին, m երկրպագեցին
4 Մ-Թ և մի շարք ՁՁ չիք յաթոռոյն
4 acdefh ընդ յառաջ
4 Վ զնա փխ զնոսա
4 ad առաջնորդաւքն
4—5 s համբուրեաց զառաջնորդն նոցա և փխ համբուրեաց զնոսա՝ առաջնորդօքն իւրեանց և
4—5 Վ չիք 'առաջնորդօքն իւրեանց'
5 h մեծարեցաք, ip մեծարեաց զնոսա
6 d մինչես ես (sic), i մինչև
6 no զայրացմամբ փխ զարմացմամբ
6 stՎ զարմացեալ էի հիացմամբ
6 Մ-Թ և մի երկու ՁՁ ափշեալ
6 d առնիս փխ առ իս
7 fh չիք այս
7 stՎ որդիս
7 ip յամեցար
7 i զքեզ փխ զի քեզ
8 acdefhjmno ժողովն փխ ժողովուրդն
8 Վ առաւել ես փխ յարնելս
9 cjnՎ նեղեցաւ
9 a յամբոխն
10 i եկն և այս, no եկն այս
10 d կրտսեր, Մ-ԹՎ և մյուս ՁՁ կրսեր
10 pstՎ որդիս իմ
10 aefh մեզ, de Վ մեր փխ մերոյ
11 i զտեսիլն
11 no մեք սմա
11 acdejnostՎ զպատճառ
12 i յամելոյն մերոյ, j յամելոյն մեզ
12 no չիք 'և զիրս տեսլեանն', t զերիս փխ զիրս
12 a անդի
12—13 n և իսկոյն ի բարձանց անտի կամեցաք քարոզել, d ի բարձրանց
13 iop աստուած ճշմարիտ
13 stՎ քրիստոնեայս նորա
14 ip արասցուք, o շարժեսցուք փխ գործեսցուք
15 stՎ մեք քարոզեմք
15 hmstՎ ամբոխն, no ամբոխ
15—16 o տաճկացն
17 d և տացուք, m երթեալ տացուք
17 no չիք նոցա
17 no զկերակուրն, stՎ զկերակուրս
18 m չիք մեք
18 stՎ երթիցուք մեք
18 cdijkՎ յերուսաղէմ
18—19 t չիք կատարեալ քրիստոնեայք, ip քրիստոնեայս
19 o սուրբ աւազանին
19 Մ-Թ և մի քանի ՁՁ այնց

զոր դուք ասէք, եթէ կարի խնդութեամբ ընկալաւ զնոսա Թագաւորն և նշանակեցաւ ձեզ ի տեսլեանն, եթէ ազգն Հայոց էին այնոքիկ, որք վիճակ հասին Թադէոսի և Բարդուղիմէոսի և սրբոյն Գրիգորի»։

Եւ մեր ունկնդիր եղեալ բանից սորա, իջաք առ նոսա՝ ոչ ինչ պատմելով ումեք։ Թողաք զամենայն գոյս մեր՝ զշարժուն և զանշարժուն, և եկաք յԵրուսաղէմ, և աղաչէաք զաստուած պատահիլ մեզ այն ազգի, որ փառաւորք էին ի տեսլեաննն։ Եւ եցոյց մեզ աստուած զքեզ, և զնոյն նշան տեսաք ի վերայ քո։ Արդ աղաչեմք զքեզ, տո՛ւր մեզ զկնիքն Քրիստոսի և արա՛ զմեզ կատարեալ ծառայս աստուծոյն քո»։

Եւ իմ տեսեալ զյօժարութիւն նոցա, և թէ ի տեառնէ է կոչումն, մկրտեցի զնոսա ի սուրբ գետն Յորդանան յանուն Հօր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ, և հաղորդեցուցի զնոսա ի պատուական մարմին և արիւն որդւոյն աստուծոյ։ Եւ ողջունեալ զմեզ, ելին ի քաղաքէն՝ գնալ ի մեծն Հռոմ ի տեսութիւն գերեզմանի սուրբ առաքելոցն Պետրոսի և Պօղոսի՝ ի փառս Քրիստոսի»։

Ասէր և զայս նոյն սքանչելին Յովհաննէս, եթէ՝ «Արք քառասուն, հայ ազգաւ, չոգան յանապատն Սինայ, ի լեառն, ուր երևեցաւ աստուած Մովսիսի և ետ զտախտակսն քարեղէնս, յոր գրեալ էին տասն պատգամքն, երկիր պագանել աստուծոյ և տեսանել զսուրբ տեղիսն։

1 j կար, mstՎ չիք կարի
2 mstՎ մեզ փխ ձեզ
2 stՎ ազգն այն՝ հայոց էր
2 ip նոքա փխ այնոքիկ, stՎ չիք այնոքիկ
3 m թադէոսի առաքելոյն
3 afhՎ բարդողիմէոսի, en բարթողիմէոսի
3 m չիք և սրբոյն Գրիգորի, stՎ և գրիգորի լուսաւորչի
